Հայկազեան համալսարան
Խ. Աբովեանի անուան հայկական պետական
մանկավարժական համալսարան

Հայութեան տեղաշարժերը եւ փոխակերպումները 20րդ դարուն եւ 21րդ դարու սկիզբին

(29-30 Յունիս 2022ի եւ 27-29 Յունիս 2023ի
գիտաժողովների զեկուցումներ)

Խմբ.՝ դոց. Էդգար Յովհաննիսեան,
պրոֆ. Խաչատուր Ստեփանեան,
դոկտ. Անդրանիկ Տագէսեան

Երեւան-Պէյրութ
2025

Բովանդակութիւն

Էդգար Յովհաննիսեան **Խաչատուր Ստեփանեան** **Անդրանիկ Տագէսեան**	Երկու խօսք	
Փրոֆեսոր Սրբուհի Գէորգեան	Ողջոյնի խօսք	
Վեր. Փոլ Հայտոսթեան	Գիր ողջոյնի	
	Գիտաժողովներուն յայտագրեր	11
Shant Estepan **Hilda Bairamian**	Understanding Change and Transformation in Society: The Key to Effective Change Management in Organizations	17
Յակոբ Չոլաքեան	Արեւմտահայերէնի քերականական եւ գործառութային փոխակերպումները (1900-2020)	25
Հայկանուշ Մեսրոպեան	Հայ ժողովրդի բռնի տեղահանութիւնները պատճառ՝ լեզուամշակութային արժէքների խաթարման (Դաշտային դիտարկումներ)	37
Վաչագան Գրիգորեան	Տեղաշարժերը 20րդ դարի հայ գրականութեան մէջ	47
Vahram L. Shemmassian	Transitions and Transformations of Musa Dagh Armenians from the Second Half of the 19th- to the Early 21st Century	63
Քլոտ Արմէն Մութաֆեան	Armenians in Carpathian Europe Since 1900	79
Թեհմինէ Մարտոյեան	Զմիւռնիայի հայերը տարագրութեան եւ հայրենադարձութեան խաչմերուկում	89
Խաչատուր Ստեփանեան	Քաղաքակենտրոնացման եւ քաղաքային կեանքի փոխակերպումների առանձնայատկութիւնները Խորհրդային Հայաստանում 1920-30ականներին	107
Անի Ֆիշենքճեան	Սուրիահայերու տեղաշարժերը 1946-2010ականներուն (կրթական մարտահրաւէրներ եւ հնարաւորութիւններ)	115
Վահէ Սարգսեան	Վրաստանի հայ բնակչութիւնը Ի. դարի երկրորդ կէսին եւ ԻԱ. դարի սկզբին	143

	(Փոխակերպման ազդեցութիւններ եւ մարտահրաւէրներ)	
Կարէն Մկրտչեան	Տեղաշարժերը եւ ընկերային-կրթական խնդիրները Իրանի հայօճախում, 1979-2020ին	169
Տիգրան Ղանալանեան	Հայկական սփիւռքի ներքին տեղաշարժերի պարբերացումը ըստ փոխակերպումների (1945ից մինչեւ մեր օրերը)	191
Վեր. Փոլ Հայտոսթեան	Հայ Աւետարանական Եկեղեցիին փոխակերպումները (Դիտարկումներ)	199
Էդգար Յովհաննիսեան	Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը 1920-30ականներին. տարագրութիւն, վերակազմութիւն, փոխակերպում	207
Raffi Zohrab Gergian	Transformations in the Armenian Religious Space	217
Yeghia Tashjian	Molding A Foreign Policy: The Evolution of Armenia's Foreign Policy (1991-2020)	235
Tigran Yegavian	Strengths and Weaknesses of the Armenia - Diaspora Relationship	251
Յարութ Սասունեան	Սփիւռքը համախմբելու նոր փորձ. Սփիւռքի խորհրդարանի ձեւաւորմամբ եւ անոր նախադէպերը	267
Յակոբ Թադէոսեան	Հայրենասիրութեան ընկալման ու դրսեւորումների ընկերա-հոգեբանական փոխակերպումները յետ-պատերազմական Հայաստանում (ԹԹ)	279
Լիլիթ Յովհաննիսեան	Հայկական Հարցի դիւանագիտական բովանդակութեան փոխակերպումները 1878-1923ին՝ հայաստանեան պատմագիտութեան լուսաբանմամբ (1991-2022)	291
Վիլէն Մնացականեան	Տնտեսական քաղաքականութեան փոխակերպումը Հայաստանում, ծրագրային եւ շուկայական տնտեսութեան ժամանակաշրջաններում	321
Համառօտ կենսագրութիւն յօդուածագիրներու		361
Մամուլի հաղորդագրութիւն		371

Երկու Խօսք

Հայկազեան համալսարանի եւ Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) գործակցութեան առաջին արդիւնքներէն եղաւ կազմութիւնը գիտական յանձնախումբի մը, որ ձեռնարկեց միատեղ գիտաժողովներու կազմակերպութեան: Յանձնախումբը ծրագրեց եւ կազմակերպեց «Հայութեան տեղաշարժերը եւ փոխակերպումները 20րդ դարուն եւ 21րդ դարու սկիզբին» գիտաժողովներու շարքը, որոնց առաջինը տեղի ունեցաւ 29-30 Յունիս 2022ին, ՀՊՄՀի, երկրորդը՝ Հայկազեան համալսարանին մէջ, 27-29 Յունիս 2023ին, իսկ երրորդը կը ծրագրուի կայացնել մօտիկ ապագային:

Այս գիտաժողովներով շեշտը դրուեցաւ հայութեան վերջին 120ամեայ իրականութեանց հետեւանքով գոյացած եւ արդէն իսկ առկայ խնդիրներու քննարկման ու դէպի ապագայ նայելու հրամայականին վրայ, ելակէտ ունենալով պետականութեան փաստը:

Գիտաժողովներուն ընթացքին նկատելի դարձան Հայաստան-Սփիւռք թիւրիմացութիւններու, երիտասարդ սերունդ եւ աւանդական մօտեցումներու բախման, հայ իրականութեան վարումի, ապագայի ծրագրաւորումի խնդիրներուն հրատապութեան զգացողութիւն-գիտակցութիւնը եւ լուծումներու անհրաժեշտութեան պարագաները: Ընդգծելի էր հայութեան եռամիասնութեան՝ Հայաստան-Արցախ-Սփիւռք կառոյցներու կառավարման-ներկայացուցչականութեան եւ փոխգործակցութեան նուիրուած տեսլական եւ քննական համապատկերը: Ջերմ, ազատ, անմիջական միջավայր մէջ քննարկումներուն եւ վերլուծումներուն, միտքերու բիւրեղացումին մասնակցեցան գիտաժողովին ներկայ հիւրեր, երիտասարդներ, որով բարձրաձայնուած խնդիրները հանրայնացուեցան եւ քայլ մը եւս առնուեցաւ հանրութիւնը առաւել մասնակից դարձնելու նման հրատապ հարցերու արծարծման:

Զոյգ այս գիտաժողովները որոշակիօրէն յստակ դարձուցին հայ իրականութեան անելիքներուն ծիրը եւ խթան կը հանդիսանան որ շարքին երրորդը աւելի նպատակաուղղուած յառաջադրանքներով գործադրուի:

Երկու գիտաժողովներին մասնակցել են 38 զեկուցողներ Հայաստանից եւ Սփիւռքից, որոնց ներկայացրած թեմաները կարելի է բաժանել 3 հիմնական ուղղութիւնների.- 1) Փոխակերպումներ Սփիւռքում, 2) Փոխակերպումներ Հայաստանում, 3) Հայութեան տեղաշարժեր, որոնք էլ իրենց հերթին կարելի է դասակագել հետեւեալ թեմատիկ ուղղութիւնների մէջ. **ա) Տեսական հարցեր** (Տեղաշարժեր եւ փոխակերպումներ. տեսական դաշտ, գործընթացներ), **բ**) **Հայութեան ներքին եւ արտաքին տեղաշարժեր** (Փոխակերպման գործընթացի փուլեր, պարբերացում, արցախցի բռնի տեղահանուածների փոխակերպում, քաղաքայնացումի եւ քաղաքային կեանքի, յիշողութեան եւ հասարակական-քաղաքական,

համարկումի, ինքնութենական, հայրենասիրութեան ընկալման եւ դրսեւորումների ընկերահոգեբանական, հայ քաղաքական մտքի փոխակերպումներ ու մարտահրաւէրներ), **գ) Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններ (**Հայաստանի Հանրապետութիւն-Սփիւռք փոխյարաբերութիւնների, արտաքին քաղաքականութեան, Սփիւռքի ներկայացուցչականութեան փոխակերպումներ), **դ) Կրթութիւն եւ մշակոյթ** (Լեզուամշակութային արժէքների, հայ արձակի, արեւմտահայերէնի, հայատառ թուրքերէն գրականութեան ազգապահպան-մշակութաբանական արժէքաւորման եւ Հայոց Ցեղասպանութեան ուսուցման փոխակերպումներ (անցեալ, ներկայ եւ նոր ուղղութիւններ), **ե) Հոգեւոր-կրօնական կեանք** (քահանայագործման, Հայ Աւետարանական Եկեղեցու, Հայ Առաքելական Եկեղեցու հաստատութենական աշխարհիկացման, հայ կրօնական ճարտարապետութեան փոխակերպումներ), **զ)**, **Տնտեսական ոլորտ (**Տնտեսական քաղաքականութեան փոխակերպումը Հայաստանում ծրագրային եւ շուկայական տնտեսութեան ժամանակաշրջաններում):

Այս գիրքը կ'ընդգրկէ ներկայացուած 39 զեկոյցներէն 20ը, որոնց վրայ կու գայ աւելնալու Շանթ Ստեփանի եւ դոկտ. Հիլտա Պայրամեանի “Change and Transformation in Society: The Key to Effective Change Management in Organizations” տեսական ուսումնասիրութիւնը:

Հատորը կ'ընդգրկէ նաեւ համառօտ կենսագրականը զեկուցաբերներուն, յայտագրերը զոյգ գիտաժողովներուն, այդ առթիւ հրապարակուած մամլոյ հաղորդագրութիւնները եւ երկու համալսարաններու ռեկտորի ու նախագահի ողջոյնի խօսքերը՝ գիրքին հրատարակութեան առթիւ:

Հատորը յաւելեալ խթան կը հանդիսանայ հայ իրականութեան վերջին 120 տարին հայ պետականութեան եւ համաշխարհային նորագոյն զարգացումներու լոյսին տակ քննականօրէն ուսումնասիրելու եւ հայութեան այժմէական ու ժամանակակից օրակարգ յառաջացնելու ծրագրաւորումներուն:

Շնորհակալութիւն՝ գիտաժողովի մասնակիցներուն, այս հատորին աշխատակիցներուն, եւ բոլոր անոնց ու ի մասնաւորի տիար Յարութ Պորոնոզեանին, որոնք այլեւայլ ձեւերով սատար կանգնեցան եւ իրականութիւն դարձուցին զոյգ այս գիտաժողովները, յառաջիկայ երրորդ գիտաժողովն ու այս հատորը:

Դոկտ. Էդգար Յովհաննիսեան
Պրոֆ. Խաչատուր Ստեփանեան
Դոկտ. Անդրանիկ Տագէսեան

Ողջոյնի Խօսք

Հայութեան տեղաշարժերով պայմանաւորուած հասարակական-քաղաքական փոխակերպումները գնալով աւելի են հետաքրքրում գիտական շրջանակներին: Դրան զուգահեռ քննարկուող հարցերի շրջանակը ոչ միայն ակադեմիական հատաքրքրութիւն է առաջացնում, այլեւ մի շարք հիմնախնդիրների կիրառական լուծումներ կարող է առաջադրել: Իսկ այս ոլորտում մեզ հետաքրքրող հիմնախնդիրները բաւականին լայն են ու բազմաշերտ թէ ինստիտուցիոնալ, թէ կոնցեպտուալ, թէ սոցիալ-մշակութաբանական, թէ պետա-իրաւական առումներով: Հայոց եկեղեցու, համահայկական բազմաթիւ այլ հասարակական-քաղաքական կառոյցների, Հայկական մշակոյթի, Հայ ինքնութեան, Հայութեան աշխարհընկալման, Հայոց Ցեղասպանութեան եւ Հայկական պետականութեան հանդէպ մեր ընկալումների յարափոփոխ ընթացքի ուսումնասիրութիւնն ու դրա գնահատումը եւ արդիական է եւ գնահատելի: Հարցերի այս շրջանակի քննարկումը մեզ հնարաւորութիւն կը տայ առաւել պատրաստ դիմագրաւել գալիք փոխակերպումներին:

2022 եւ 2023 թթ. Երեւանում եւ Բէյրութում Հայկազեան համալսարանի եւ Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի նախաձեռնութեամբ տեղի ունեցած վերոնշեալ խնդիրներին նուիրուած զոյգ գիտաժողովները իրենց բարձր մակարդակով անմիջապէս գրաւեցին մասնագիտական շրջանակների ուշադրութիւնը:

Վերջին 120 տարուայ տարատեսակ փոխակերպումները, որոնք ապրեց կամ իր վրայ զգաց հայ ժողովուրդը բազմաշերտ քննարկման են ենթարկուել գիտաժողովների մասնակիցների կողմից: Փաստացի փորձ է արուել գնահատական տալու նշուած ժամանակաշրջանում հայ իրականութեան մէջ տեղի ունեցած հոգեբանական, ժողովրդագրական, կենցաղային, հաղորդակցական փոխակերպումների պատճառներին, ընթացքին եւ հետեւանքներին: Ճիշտ է, գիտաժողովի քննարկումները չեն յաւակնում լինել գիտական վերջնական ճշմարտութիւններ, սակայն դրանք մեծապէս օգտակար կարող են լինել հայ ժողովրդի ապագայի տեսլականի մշակման եւ կիառութեան մէջ դնելու տեսանկիւնից:

Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր,
Հոգեբանական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գէորգեան

Գիր Ողջոյնի

Խաչատուր Աբովեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի եւ Հայկազեան Համալսարանի համատեղ գնահատելի ջանքերով եւ սերտ համագործակցութեամբ Երեւանի եւ Պէյրութի մէջ գումարուած երկու գիտաժողովներու թեմաները կրնան նոյնը եղած ըլլալ, սակայն մէկ իսկ տարին բաւարար է, որ պայմանները փոխուին եւ կացութիւնները զարգանան՝ նպաստաւոր թէ աննպաստ ուղղութիւններով: Ազգերու եւ երկիրներու երկարամեայ պատմութիւնը արժեւորելը հսկայական ջանքի կարօտ է, սակայն երբեմն մէկ օրն իսկ կրնայ որոշիչ դեր խաղալ, փոխել դրոյթներ կամ գոնէ վերանայիլ մեր դիտանկիւնները:

Մինչ կ'ուսումնասիրենք անցեալը՝ այս պարագային անոր 120 տարիներու յաճախ օրհասական փուլերը, եւ երբեմն ալ պանծալի յաղթանակները, կարեւորութեամբ նկատի կ'առնենք հետեւեալ կէտերը.-

- **Հայկական տեղաշարժերու եւ փոխակերպումներու ընթացքին մէջ հարկ է յիշել**, որ մեր անմիջական շրջապատը կամ ամբողջ աշխարհը չեն մնար հաստատ ու անփոփոխ: Շատ յաճախ կը կարծենք, թէ հայը իր հասած վայրերուն ու վիճակներուն մէջ պարտի սահունութեամբ պահպանել իր ինքնութիւնը, հաստատութիւնները, կենցաղն ու հաւատարմութիւնները: Սակայն պէտք է գիտակցիլ, որ օրինակ՝ Պէյրութը, ուր հայութիւնը ընդհանրապէս հաստատուեցաւ 1920ականներուն, ժամանակի ընթացքին քանի մը հանգրուաններով փոխակերպուած է, մինչ հայութիւնը ջանացած է պահպանել կայուն ինքնութիւն մը, շարունակական կապ մը անցեալի հետ եւ զանոնք օգտագործել իբրեւ գոյատեւման ու զարգացման հիմք: Հետեւաբար, հայու շրջապատի տեղաշարժերն ալ պէտք է ուշադրութեամբ դիտարկել եւ գնահատել անոնց ազդեցութիւնը մեր վրայ: Այս փոփոխութիւնները կրնան միաժամանակ բերել թէ՛ կորուստներ, թէ՛ ձեռքբերումներ, եւ զանոնք դիմակայելու համար անհրաժեշտ է հայկական ճկունութիւնը եւ ինքնաճանաչումը:
- **Հայոց պատմական հողը ունի ձայն ու պատգամ**, նոյնիսկ եթէ այժմ մեր վերահսկողութեան տակ չէ: Ուստի, տեղաշարժերու պատմութիւնը պէտք է դիտարկել նաեւ անոր խոր արմատներով ու պատմական պատգամով՝ չանտեսելով անոր խորքային նշանակութիւնը:
- **«Քաղաքականութիւնը հնարաւորի արուեստն է»**, ըսած է Պիզմարք: Կրնայ այդ մէկը ճիշտ ըլլալ քաղաքական գործիչներու համար, սակայն ժողովուրդի մը համար առաջնային է կառչիլ իր

պատմական հիմքերուն, որոնց վրայ կը վերածնի իր միասնական ապրելու կամքը, յատկապէս՝ արժանապատիւ ու ազատ ապրելու իրաւունքը: Քաղաքական աշխարհը, իր հերթին, պէտք է իր ռազմավարութիւնը յարմարեցնէ այս պատմական հիմքերու ամրութեան կամ թուլութեան:

- **Ո՞վ է պատասխանատուն ռազմավարութեան մշակման համար**, որ պիտի նպաստէ մեր անվտանգութեան, հզօր պետականութեան, ազգային ինքնութեան, կրթական համակարգի, ռազմական, լեզուական, բարոյական, ընկերային, տնտեսական եւ այլ կարեւոր ոլորտներու զարգացման: Այս ակնկալութիւնը կրնայ պահ մը ուղղուիլ պետութեան, պահ մը՝ սփիւռքին, երբեմն ալ՝ արտաքին ուժերու: Սակայն անհրաժեշտ է, որ սփիւռքի ռազմավարութիւնները ունենան պատմական, գիտական, քաղաքական, դիւանագիտական, հոգեմտաւոր եւ մշակութային խորք, որ պիտի գերազանցէ Երեւանէն սկսող սահմանները եւ պիտի երաշխաւորէ ընդհանրական հայկականութեան գոյութիւնը: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետութեան զարգացման գործընթացին մէջ, ժամանակակից քաղաքական մտածողութեան կողքին կարեւոր տեղ պէտք է գրաւէ պատմութեան՝ հողի, ժողովուրդի, մշակոյթի եւ հայկական հոգիի անբաժանելի դերը:
- **Գիտաժողովները պէտք է յանգին յստակ եզրակացութիւններու եւ առաջարկներու**: Պատմութենէն դասեր քաղելու ընթացքին պէտք չէ մասնակի մօտեցում ցուցաբերել եւ ոչ ալ սահմանափակուիլ ներկայ պայմաններով: Պէտք է ընթանալ յարգալիր ազատութեամբ եւ բարի կամքով՝ առանց մտահոգուելու, թէ ո՛վ պիտի գոհանայ կամ դժգոհի մեր հետեւութիւններով:
- **Շնորհակալութիւն կը յայտնենք** Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնին եւ անոր աշխատակիցներուն, մեր Մանկավարժական Համալսարանի հայրենի գործընկերներուն, գիտաժողովներու հիւրերուն, հովնաւորողներուն, ինչպէս նաեւ Արցախեան ձայնի ներկայութեան համար՝ մեր քննարկումներուն մէջ:

Մենք այսօր կանք, որովհետեւ կը կանգնինք դարաւոր մշակոյթի, քրիստոնէական հաւատքի եւ պատմութեան ամուր հիմքերուն վրայ: Պարտինք այդ լրջութեամբ շարունակել:

Վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեան, Նախագահ
Հայկազեան համալսարանի

Զոյգ գիտաժողովներու յայտագրեր

Ա. Գիտաժողով, (Երեւան, 29-30 Յունիս, 2022, Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ ռեկտորատի դահլիճ)

Ա. օր գիտաժողովի, 29 Յունիս

9.00-9.30	Գիտաժողովի մասնակիցներու գրանցում
9.30-10.00	Բացման եւ ողջոյնի խօսքեր՝ Փրոֆ. Խաչատուր Ստեփանեան Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ ռեկտոր հ. գ. դ., փրոֆեսոր Սրբուհի Գէորգեան Հայկազեան համալսարանի նախագահ, վերապատուելի դոկտոր Փոլ Հայտոսթեան Հայկական սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի տնօրէն, դոկտոր Անդրանիկ Տագէսեան Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ պատմութեան եւ հասարակագիտութեան ֆակուլտէտի դեկան, պ. գ. թ., դոցենտ Էդգար Յովհաննիսեան

Ա. նիստ.- նիստավար՝ փրոֆ. Խաչատուր Ստեփանեան

10:00-10:15 Դոկտ. Էդգար Յովհաննիսեան	*Գաղթաշխարհից՝ Սփիւռք. հայկական սփիւռքի փոխակերպման գործընթացները*
10:15-10:30 Հայկանուշ Մեսրոպեան	*Հայ ժողովրդի բռնի տեղահանութիւնները լեզուա-մշակութային արժէքների խաթարման պատճառ*
10:30-10:45 էլինա Մխիթարեան	*Փախստականների, ներքին տեղահանուած անձանց եւ վերաբնակիչների տեղաշարժերը ղարաբաղեան հակամարտութեան համատեքստում*
10:45-11:00 Դոկտ. Անդրանիկ Տագէսեան	*Տեղաշարժեր եւ փոխակերպումներ. տեսական դաշտը*
11:00-11:30	Քննարկում
11.30-12.00	Սուրճի ընդմիջում

Երկրորդ նիստ, նիստավար՝ դոկտ. Լիլիթ Յարութիւնեան

12:10-12:25 Դոկտ. Յասմիկ Ստեփանեան	*Հայատառ թուրքերէն գրականութեան ազգապահպան-մշակութաբանական արժէքաւորումը*
12:25-12:40, Փրոֆ. Խաչատուր Ստեփանեան	*Ուրբանիզացիան եւ քաղաքային կեանքի փոխակերպումները Խորհրդային Հայաստանում 1920-30ականներին*
12:40-12:55, դոկտ. Մխիթար Գաբրիէլեան	*Ինքնութեան պահպանման առօրէական մոդէլներն ու պրակտիկաները ըստ 1829-30ի էրզրումեան գաղթի նիւթերի*
12:55-13:10, Դոկտ. Գագիկ Ժամհարեան եւ Գայիանէ Ղազարեան	*Հայ Առաքելական Եկեղեցու քահանաների առօրեան յետպատերազմեան տարիներին (1946-1954)*
13:10-13:25, Տաթեւիկ Արշակեան	*Հայկական ինքնահրատ մամուլի ազդեցութիւնը հայաստանեան հանրային ոլորտի փոխակերպման գործում Ի. դարավերջին*
	Քննարկում
13.30-14.15	Ճաշի ընդմիջում

Երրորդ նիստ, նիստավար՝ Դոկտ. Անդրանիկ Տագէսեան

14:15-14:30 Դոկտ. Լիլիթ Յարութիւնեան	*Syrian Armenians in Armenia: Integration and Prospects*
14:30-14:45 Դոկտ. Թեհմինէ Մարտոյեան	*Բնաջնջում եւ տարագրութիւն. Յունաստանում վերաբնակեցուած զմիւռնիայի հայերի յիշողութիւնները*
14:45-15:00 Դոկտ. Վահէ Սարգսեան	*Հայերի ծուլումը եւ ինքնութեան փոխակերպումները Վրաստանում 1920-1930ականներին*
15:00-15:15 Դոկտ. Քնարիկ Աւագեան	*Սիրիայի հայերի տեղաշարժը արտերկիր (2012-2018 թթ.)*
15:15-15:30 Դոկտ. Կարէն Մկրտչեան	*Իրանահայութեան տեղաշարժերը եւ հասարակական-քաղաքական փոխակերպումները ԻԱ. դարասկզբին*

15:30-15:45 Դոկտ. Տիգրան Ղանալանեան — *Հայկական սփիւռքի ներքին փեղաշարժերի պարբերացումը (1945ից մինչեւ մեր օրերը)*

15:45-16:00 — Քննարկում

19.00 — Ընթրիք

Բ. օր գիտաժողովի, 30 Յունիս

Չորրորդ նիստ նիստավար՝ Դոկտ. Էդգար Յովհաննիսեան

10:00-10:15 Դոկտ. Էդիկ Մինասեան — *1920ի թուրք-հայկական պատերազմի եւ Հայոց Յեղասպանութեան քեմալական ծրագրի իրականացման արձագանգները հայկական մամուլում*

10:15-10:30 Եղիա Թաշճեան — *Proclaiming the Third Republic and Molding A Foreign Policy: The Evolution of Armenia's Foreign Policy towards the Diaspora, Turkey and Artsakh (1991-2022)*

10:30-10:45 Դոկտ. Հայկ Մխոյեան — *Ախալցխայի 1917-18ի ինքնապաշտպանութիւնը համայնքային ինքնութեան համատեքստում*

10:45-11:00 Անուշ Յովհաննիսեան — *Soviet 'Paradise': The Bitter Experience of Armenian Repatriates to Soviet Armenia (1920-1960s)*

11:00-11:15 Նաթան Պետրոսեան — *Հայ քաղաքական մտքի փոխակերպումը 1985-1994ին*

11:15-11:30 — Քննարկում

11.30-12.00 — Սուրճի ընդմիջում

Հինգերորդ նիստ
Նախագահող՝ դոց. Էդգար Յովհաննիսեան, փրոֆ. Խաչատուր Ստեփանեան, դոկտ. Անդրանիկ Տագէսեան

Գիտաժողովի արդիւնքների քննարկում, ամփոփում, գիտաժողովի փակում

Բ. Գիտաժողով, (Պէյրութ, 27-29 Յունիս, 2023, Հայկազեան Համալսարանի դահլիճ)

Ա. օր գիտաժողովի Երեքշաբթի, 27 Յունիս

Պաշտօնական բացում գիտաժողովի

Հիւր բանախօս՝
Փրոֆ. Խաչատուր Ստեփանեան
«20րդ դարու տեղաշարժերով պայմանաւորուած հայութեան փոխակերպման գործընթացին փուլերը»

Բ. օր գիտաժողովի Չորեքշաբթի, 28 Յունիս

8:45–9:00 Արձանագրութիւն մասնակիցներու եւ հիւրերու

Ա. նիստ, Մշակութաբանական փոխակերպումներ. գրականութիւն եւ լեզու
Նիստավար՝ դոկտ. Անդրանիկ Տագէսեան

9:00–9:30 Փրոֆ. Վաչագան Գրիգորեան — *Ի. դարի հայ արձակի փոխակերպումներ*

9:30-10:00 Դոկտ. Յակոբ Չոլաքեան — *Արեւմտահայերէնին փոխակերպումները՝ 1900-2020ին*

10:00–10:20 Քննարկում

10:20–10:30 Դադար

Բ. նիստ, Հայօճախներու/ենթախումբերու փոխակերպումներ, Ա. Նիստավար՝ դոկտ. Էդգար Յովհաննիսեան

10:30–11:00 Փրոֆ. Քլոտ Արմէն Մութաֆեան — *Հայերը կարպատեան Եւրոպայի մէջ 1900էն իվեր*

11:00–12:00 Շնորհանդէս — Փրոֆ. Քլոտ Արմէն Մութաֆեանի *Jérusalem et les Arméniens jusu'à la conquête ottomane (1516)* գիրքին

12:00–12:10 Դադար

12:10–12:40 Փրոֆ. Վահրամ Շէմմասեան — *Մուսա լեռան հայերու փոխակերպումները*

12:40–1:10 Դոկտ. Լուսինէ Սահակեան — *Ի. դարում համշէնահայերի արտագաղթերը. ինքնութենական փոխակերպումներ*

1:10–1:30 Քննարկում

1:30–3:00 Ճաշի դադար

Գ. նիստ, Հայօճախներու/ենթախումբերու փոխակերպումներ, Բ. Նիստավար՝ դոկտ. Արմէն Իւրնէշլեան

3:00–3:30 Դոկտ. Կարէն Մկրտչեան — *Տեղաշարժերը եւ ընկերային-կրթական խնդիրները Իրանի հայօճախում՝ 1979-2020*

3:30–4:00 Դոկտ. Անի Ֆիշենկճեան — *Սուրիահայերու տեղաշարժերը՝ 1946-2010. փոխակերպման մարտահրաւէրներ*

4:00–4:20 Քննարկում

4:20–4:30 Դադար

Դ. նիստ, Հաստատութենական փոխակերպումներ. Ա. Հայ Եկեղեցին, Նիստավար՝ փրոֆ. Խաչատուր Ստեփանեան

4:30–5:00 Վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեան — *Հայ Աւետարանական Եկեղեցիին փոխակերպումները*

5:00–5:30 Դոկտ. Հրաչ Չիլինկիրեան — *Հայ Եկեղեցւոյ հաստատութենական աշխարհիկացումը (ԺԹ.-ԻԱ. դար)*

5:30–5:50 Քննարկում

6:00 Փակում գիտաժողովի Բ. օրուան

Հինգշաբթի, 29 Յունիս, Գ. օր գիտաժողովի

8:45–9:00 Արձանագրութիւն մասնակիցներու եւ հիւրերու

Ե. նիստ, Հաստատութենական փոխակերպումներ. Հայ Եկեղեցին, Բ. Նիստավար՝ դոկտ. Խաչիկ Մուրատեան

9:00–9:30 Դոկտ. Ռաֆֆի Չերչեան — *Փոխակերպումներ հայ կրօնական ճարտարապետութեան մէջ*

9:30–10:00 Դոկտ. Էտկար Յովհաննիսեան — *Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը 1920-1930ական-ներին. տարագրութիւն եւ փոխակերպում*

10:00–10:20 Քննարկում

10:20–10:30 Դադար

Զ. նիստ, Հասկացութենական/ընկերաբանական փոխակերպումներ. պատմագրութիւն եւ տնտեսութեան
Նիստավար՝ Եղիա Թաշճեան

10:30–11:00 Դոկտ. Լիլիթ Յովհաննիսեան	*Հայկական Հարցի դիւանագիտական փոխակերպումները* 1878–1923 շրջանին, *հայաստանեան պատմագիտութեան լուսաբանմամբ (1991-2022)*
11:00–11:30 Վիլէն Մնացականեան	Տնտեսական քաղաքականութեան փոխակերպումը Հայաստանում ծրագրային եւ շուկայական տնտեսութեան ժամանակաշրջաններում
11:30–11:50	Քննարկում
11:50–1:30	Ճաշի դադար

Է. նիստ, Հասկացութենական/ընկերաբանական փոխակերպումներ. կրթութիւն եւ հայրենասիրութիւն
Նիստավար՝ փրոֆ. Վաչագան Գրիգորեան

1:30–2:00 Դոկտ. Խաչիկ Մուրատեան	*Հայոց Ցեղասպանութեան ուսուցման փոխակերպումներ (անցեալ, ներկայ եւ նոր ուղղութիւններ)*
2:00–2:30 Դոկտ. Յակոբ Թադէոսեան	*Հայրենասիրութիւն. ընկալման եւ դրսեւորումների ընկերահոգեբանական փոխակերպումներ*
2:30–2:50	Քննարկում
2:50–3:00	Դադար

Ը. Նիստ, Պետութենական/իրաւական փոխակերպումներ. Սփիւռք եւ Հայաստան
Նիստավար՝ դոկտ. Անդրանիկ Տագէսեան

3:00–3:30 Յարութ Սասունեան	*Սփիւռքի ներկայացուցչականութեան փոխակերպումներ. Սփիւռքահայ խորհրդարանի մեկնարկման ծրագիր HyeID կառոյցի միջոցով*
3:30–4:00 Տիգրան Եկաւեան	*Հայաստանի Հանրապետութիւն-Սփիւռք փոխյարաբերութիւններու փոխակերպումներ*
4:00–5:00	Քննարկում, եզրակացութիւններ: Գիտաժողովի փակում

UNDERSTANDING CHANGE AND TRANSFORMATION IN SOCIETY: THE KEY TO EFFECTIVE CHANGE MANAGEMENT IN ORGANIZATIONS

Shant Estepan
Shant.Estepan@haigazian.edu.lb
Hilda Bairamian
hilda.bairamian@haigazian.edu.lb

Change is the process of becoming different from a previous state, whether in thought, behavior, structure, or function. It can be intentional or unintentional, gradual or sudden, and can occur at individual, organizational, or societal levels. Scholars have defined change in various ways, with Kurt Lewin (1947) describing it as a three-stage process of unfreezing, moving, and refreezing, highlighting the transformation from an existing state to a new equilibrium. Similarly, Kotter (1996) emphasized change as a structured process that requires vision, communication, and leadership to be effective. Bridges (2004) further differentiated change from transition, arguing that while change is situational, transition is the psychological process people undergo to adapt to change.

Closely related to change is the concept of transformation, which refers to a fundamental and irreversible shift in form, nature, or function. While change may be incremental or temporary, transformation implies a deep and lasting alteration. Mezirow (1991) defined transformation as a profound reconfiguration of perspectives, where individuals or societies undergo a paradigm shift in thinking and behavior. In contrast to ordinary change, transformation often disrupts established norms, creating a new identity or way of functioning. Organizations, for example, may change by adopting new policies, but true transformation occurs when their culture, values, and operations are fundamentally redefined (Anderson & Ackerman Anderson, 2001). Similarly, societies that experience revolutions or major ideological shifts undergo transformation rather than mere change, as the previous structures are often dismantled rather than modified (Kegan, 2009).

Societies often undergo change naturally due to cultural evolution, economic progress, or technological advancement. However, in some cases, change is not organic but enforced, meaning it is imposed by external or internal forces rather than emerging from within. Enforced change can be political, economic, social, or technological, and it often stems from shifts in governance, external interventions, or regulatory mandates. According to

Foucault (1977), power plays a crucial role in enforcing societal changes, as institutions impose new norms and values that reshape people's behaviors and perceptions. Scott (1998) further emphasized that institutions shape change through regulatory, normative, and cognitive pressures that force adaptation.

Forced societal change can lead to both positive and negative consequences. When change is imposed without considering local contexts and cultural sensitivities, it often results in resistance, conflict, or instability. Social theorists such as Bourdieu (1984) suggest that when dominant powers enforce change, social groups may struggle to adapt, leading to social fragmentation. Freire (1970) similarly warned that imposed change often isolates individuals when it does not engage them as active participants in their own transformation. However, when enforced change aligns with societal needs and is implemented through inclusive policies, it can drive progress, as seen in structural reforms that improve governance, human rights, or economic conditions (Sen, 1999).

Change is a fundamental aspect of both societies and organizations, shaping the way individuals, institutions, and industries evolve over time. While societal change is often driven by cultural, political, and technological forces, organizational change is influenced by market dynamics, competitive pressures, and internal restructuring. The way societies adapt to transformation—whether through gradual evolution or enforced shifts—offers valuable insights into how organizations can navigate their own change processes. Just as societies require leadership, inclusivity, and adaptability to sustain transformation, businesses must employ structured change management frameworks to align people, processes, and technology effectively. By understanding the broader forces of change at a societal level, organizations can implement more informed, strategic, and sustainable approaches to transformation, ensuring resilience in an ever-evolving global landscape.

In today's fast-paced and ever-evolving business landscape, organizations must continuously adapt to maintain competitiveness and operational efficiency. Change is an inevitable part of organizational growth, driven by factors such as technological advancements, market pressures, regulatory updates, and internal restructuring. To remain resilient and agile, organizations must adopt well-structured change management strategies that help them navigate these transformations effectively. Without a structured approach, change initiatives risk failure due to resistance, misalignment, or lack of stakeholder buy-in (Cameron & Green, 2020).

Effective change management and organizational development have emerged as critical disciplines in business strategy. Organizations must recognize that change is not merely a one-time event but an ongoing process that requires adaptability and foresight. Successful transformation efforts hinge

on a clear vision, effective leadership, and the right methodologies to ensure smooth transitions and long-term sustainability.

This article explores various change management frameworks, including McKinsey's 7-S Model, Kotter's 8-Step Model, Lewin's Change Management Model, and the ADKAR framework, highlighting their distinct approaches and practical applications (Kotter, 2012; Hiatt, 2006; Waterman, Peters, & Phillips, 1980). It examines the pivotal role of leadership, employee engagement, organizational culture, and continuous learning in ensuring the success of change initiatives. Furthermore, it explores the differences between small and large organizations, planned versus transformational change, and the impact of technology on organizational development (Burnes, 2004). By understanding these frameworks and their underlying principles, organizations can strategically implement and sustain change while minimizing resistance and maximizing efficiency.

Change management frameworks serve as structured roadmaps for organizations to plan, implement, and sustain change effectively. Each model addresses specific challenges such as resistance, resource allocation, and leadership alignment, ensuring that the transformation process is both predictable and manageable (Cummings & Worley, 2018). While some models, like McKinsey's 7-S, focus on diagnosing organizational alignment, others, such as Kotter's 8-Step Model, provide a step-by-step approach to executing change (Kotter, 2012). Understanding these differences allows organizations to choose the most appropriate model based on their unique needs and circumstances.

The McKinsey 7-S Model is a widely recognized diagnostic tool for assessing organizational effectiveness. It categorizes an organization's components into "hard" elements (strategy, structure, systems) and "soft" elements (shared values, style, staff, skills) (Waterman, Peters, & Phillips, 1980). This framework emphasizes the interdependence of these elements, making it more about assessing alignment than prescribing direct actions. The model is often used in diagnosing inefficiencies before implementing change initiatives.

John Kotter's 8-Step Change Model offers a process-driven approach to managing transformation. It emphasizes creating urgency, forming a guiding coalition, developing a vision, and achieving short-term wins to maintain momentum (Kotter, 2012). Kotter's model is widely adopted in organizations looking for a structured roadmap to implement change effectively.

Kurt Lewin's Change Model simplifies change management into three key phases: Unfreeze, Change, and Refreeze (Lewin, 1951). This model is particularly effective for organizations undergoing single major transformations, as it provides a clear structure to break old habits, implement new behaviors, and solidify changes into the organizational culture. The ADKAR Model focuses on the individual experience of change, recognizing that

successful organizational transformation requires personal adaptation (Hiatt, 2006). It outlines five key steps: Awareness, Desire, Knowledge, Ability, and Reinforcement. Unlike broader frameworks like McKinsey's or Kotter's, ADKAR prioritizes employee resistance management, making it an ideal tool for organizations struggling with buy-in at the individual level.

Leadership plays an indispensable role in the success of change initiatives. Across all frameworks, effective leaders are seen as the primary drivers of transformation, setting the vision and inspiring commitment among employees (Yukl, 2013). By fostering trust, transparent communication, and motivation, leaders create an environment where employees are more willing to embrace change. Kotter's emphasis on building a guiding coalition and McKinsey's inclusion of leadership style as a core element both underscore the critical impact of leadership on change management.

Strong leadership also involves balancing strategic direction with employee well-being. Change can be disruptive, and leaders must actively mitigate uncertainty through clear communication, coaching, and recognition of employee concerns (Bass & Riggio, 2006). Organizations that prioritize leadership development are more likely to sustain change initiatives over the long term.

Equally important to organizational change is employee engagement. Employees are the backbone of any transformation effort, and their active involvement significantly reduces resistance and increases buy-in (Kahn, 1990). Frameworks like Kotter's stress the importance of empowering employees by removing barriers, while learning enterprises prioritize continuous skill development (Senge, 1990). By incorporating feedback loops, training, and inclusive decision-making, organizations can cultivate a sense of ownership among employees, ensuring the long-term success of change initiatives.

Cultural alignment is another critical factor in change management. McKinsey's 7-S Model highlights shared values as a foundational element, while Lewin's "Refreeze" stage ensures that new behaviors and processes become embedded into an organization's culture (Waterman, Peters, & Phillips, 1980; Lewin, 1951). Without cultural adaptation, even the most well-planned change efforts risk failure due to misalignment with existing values and norms. Companies with strong, adaptive cultures are more resilient and better equipped to handle transformation, making cultural integration a key success factor in change management strategies (Kotter & Heskett, 1992).

The role of technology in change management is another distinguishing factor across frameworks. Agile enterprises and transformational change models emphasize the use of technology to drive innovation and adaptability (McAfee & Brynjolfsson, 2017). Companies like Amazon and Tesla leverage automation, artificial intelligence, and data analytics to remain competitive. In

contrast, older models such as Lewin's or McKinsey's, while effective, focus more on structural and human elements, reflecting a pre-digital era mindset. The growing influence of technology underscores the need for organizations to incorporate digital transformation into their change strategies.

Furthermore, change management frameworks must consider the psychological impact of transformation on employees. Organizational change can induce stress, anxiety, and uncertainty, making it crucial to implement support mechanisms such as mentorship programs, counseling, and resilience training (Bridges, 2009). By addressing emotional and psychological factors, organizations can enhance employee well-being and reduce resistance to change.

Continuous learning and development play a vital role in successful change management. Organizations that foster a culture of learning empower employees with the skills needed to adapt to new processes and technologies (Senge, 1990). Training programs, workshops, and knowledge-sharing platforms enable employees to stay informed and engaged throughout the change process.

Organizations must also integrate feedback mechanisms into their change management strategies. Regular surveys, focus groups, and one-on-one discussions help organizations gauge employee sentiment and identify areas requiring improvement. By actively listening to employees, organizations can refine their strategies to enhance effectiveness and address concerns proactively.

A key challenge in change management is sustaining momentum beyond the initial implementation phase. Many organizations experience "change fatigue," where employees become disengaged due to frequent, poorly managed transformations (Reeves & Deimler, 2011). To counter this, organizations should celebrate milestones, acknowledge achievements, and provide continuous reinforcement to maintain enthusiasm and commitment.

Finally, successful change management requires alignment between organizational goals and individual incentives. Employees are more likely to embrace change when they see clear personal benefits, such as career growth, skill development, or performance-based rewards. Aligning individual and organizational interests ensures that change initiatives gain traction and deliver sustainable results.

Ultimately, organizations must recognize that change is an ongoing journey rather than a one-time initiative. Long-term sustainability depends on a combination of strategic vision, leadership commitment, cultural adaptability, and employee engagement. As industries evolve and technologies advance, organizations that embrace structured change management frameworks will be better positioned to navigate uncertainty and thrive in a dynamic business

environment (Kotter, 2012). By carefully selecting and adapting the right framework to their unique circumstances, businesses can drive innovation and maintain long-term success in an ever-changing world.

Change models in organizations VS in society		
Aspect	**Change in organizations**	**Change in society**
Trigger of change	Internal dysfunction, external threats	Geo-political disturbances
Stakeholders	Internal public (employees, managers) and external public such as shareholders	Activists, media, citizens, businesses, political parties, government
Scope	Organizational culture, focused on internal processes and structures	Public at large affected such as institutions, communities, government, cultural norms
Leadership role	Developed and implemented by executives, HR team members and/or change agents	Political leader's role or contribution, NGOs' policies, activists' actions, Community decision-makers and organizers
Change model used	Kurt Lewin's change model, Koter's 8-step model, ADKAR model, Mc-Kensy 7S model of change, etc.	Kurt Lewin's Model (adapted), diffusion of innovation (Rogers Model), Social movement theory, political process model
Resistance to change	Resistance from within often from employees, fear of the unknown, loss of job, comfort zone	Resistance from culture, tradition, tribal culture, ideological groups, political parties, institutions
Speed of change	Often can be fast within months or a year, relatively fast	Very slow can take years or even decades
Communication strategies	Open internal communication, workshops	Education, media campaign, social media, political protests and advocacy
Sustainability of change	Managerial trainings, modified and adaptable processes, leadership commitment	Need for legal backing and public support, cultural adaptation to sustain
Measurement of success	Financial performance, employee motivation and satisfaction, efficiency improvement	Legal reforms, public policy changes, shifts in social norms
Challenges	Insufficient resources, poor planning, lack of buy-in	Political opposition, economic constraints

References:

D. Anderson & Ackerman L. Anderson (2001), *Beyond Change Management: Advanced Strategies for Today's Transformational Leader,* Jossey-Bass/Pfeiffer.

B. M. Bass & R. E. Riggio (2006), *Transformational Leadership* (2nd ed.), Lawrence Erlbaum Associates.

P. Bourdieu, (1984), Distinc*tion: A Social Critique of the Judgement of Taste*, Harvard University Press.

W. Bridges (2004), *Transitions: Making Sense of Life's Changes* (2nd ed.), Da Capo Press.

B. Burnes (2004), Mana*ging Change: A Strategic Approach to Organisational Dynamics* (4th ed.), Prentice Hall.

E Cameron & M. Green (2020), *Making Sense of Change Management: A Complete Guide to the Models, Tools, and Techniques of Organizational Change* (5th ed.), Kogan Page.

T. G. Cummings & C. G. Worley (2018), *Organization Development and Change* (11th ed.), Cengage Learning.

M. Foucault (1977), Dis*cipline and Punish: The Birth of the Prison*, Pantheon Books.

P. Freire (1970), *Pedagogy of the Oppressed*, Continuum.

R. A. Heifetz, A. Grashow & M. Linsky (2009), *The Practice of Adaptive Leadership: Tools and Tactics for Changing Your Organization and the World*, Harvard Business Press.

J. M. Hiatt (2006), *ADKAR: A Model for Change in Business, Government, and Our Community*, Prosci Learning Center Publications.

W. A. Kahn, "Psychological Conditions of Personal Engagement and Disengagement at Work," *Academy of Management Journal*, 33(4):1990, pp. 692–724.

R. Kegan (2009), *In Over Our Heads: The Mental Demands of Modern Life*, Harvard University Press.

J. P. Kotter & J. L. Heskett (1992), *Corporate Culture and Performance*, Free Press.

K. Lewin, "Frontiers in Group Dynamics: Concept, Method, and Reality in Social Science; Social Equilibria and Social Change," *Human Relations*, 1(1):1947, pp. 5-41.

A. McAfee & E. Brynjolfsson (2017), *Machine, Platform, Crowd: Harnessing Our Digital Future*, W. W. Norton & Company.

J. Mezirow (1991), *Transformative Dimensions of Adult Learning*, Jossey-Bass.

M. Reeves & M. Deimler, "Adaptability: The New Competitive Advantage," *Harvard Business Review*, 89(7-8):2011, pp. 134–41.

W. R. Scott (1998), *Organizations: Rational, Natural, and Open Systems* (4th ed.), Prentice Hall.

P. M. Senge (1990), *The Fifth Discipline: The Art and Practice of the Learning Organization*, Doubleday.

A. Sen (1999), *Development as Freedom*, Knopf.

R. H. Waterman, T. J. Peters & J. R. Phillips, "Structure Is Not Organization," *Business Horizons*, 23(3):1980, pp. 14-26.

G. Yukl (2013), *Leadership in Organizations* (8th ed.), Pearson.

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ԵՒ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ ԱՐԴԻՒՆԱՒԷՏ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ՎԱՐԵԼՈՒ ԲԱՆԱԼԻՆԵՐ

(ԱՄՓՈՓՈՒՄ)

Շանթ Ստեփան
Shant.Estepan@haigazian.edu.lb
Հիլտա պայրամեան
hilda.bairamian@haigazian.edu.lb

Փոփոխութիւնը՝ մտայնութեան, վարուելակերպի, կառոյցի կամ գործառոյթի մը նախորդ իրավիճակէն տարբեր դառնալու գործընթացն է: Անիկա դիտաւորեալ կամ ոչ-դիտաւորեալ կրնայ ըլլալ: Կրնայ դանդաղ կամ յանկարծակի պատահիլ եւ առնչուիլ անհատի, կազմակերպութիւն-ընկերութեան թէ հաւաքականութեան:

Փոփոխութեան այս հասկացութեան մօտ այլ հասկացութիւն մըն է փոխակերպումը, որ կ'առնչուի ձեւի, բնոյթի, կամ գործառոյթի արմատական անվերաշրջելի անցումի մը:

Եթէ փոփոխութիւնը կրնայ կուտակային կամ ժամանակաւոր ըլլալ, ապա փոխակերպումը խորունկ եւ երկարաժամկէտ տեւողութեան բնոյթ կը կրէ:

Այս սահմանումներու հիմամբ, ուսումնասիրութիւնը կը ներկայացնէ փոփոխութեան եւ փոխակերպման տարբեր տեսութիւններ, որոնք կ'առնչուին տնտեսական ընկերութիւններու թէ հաւաքականութիւններու: Հուսկ, ան կը ներկայացնէ բաղդատական աղիւսակ մը տնտեսական ընկերութիւններու եւ հաւաքականութիւններու փոփոխութեան ու փոխակերպումներու իւրայատկութիւններուն:

ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ (1900-2020)

Յակոբ Չոլաքեան
hagopcholakian@hotmail.com

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Չեկոյցը նուիրուած է արեւմտահայերէնի քերականական եւ գործառութային փոխակերպումներուն, որ կ'երեւին 1900-2020 թուականներու միջոցին: Արեւմտահայերէնը - նկատի ունինք գրական տարբերակը, կեդրոն ունենալով Կ. Պոլիսը - արդէն անցած էր գրական երկու սերունդներու բովէն: Զարթօնքի սերունդը, ուր գերիշխող ներկայութիւն եղան ռոմանթիքները, անոր տուաւ գրական լեզուի հանգամանք, իսկ իրապաշտ սերունդը զարգացուց զայն՝ ձերբազատելով գրաբարեան անհարկի ձեւերէն:

1900ականներուն գրական հրապարակ իջաւ Արուեստագէտ կամ Գեղապաշտ սերունդը:

- Այս սերունդը գաւառը բերաւ մեր գրականութեան ու ազատեց արեւմտահայ գրականութիւնը միայն պոլսահայ ըլլալէ (Մ. Մեծարենց, Դ. Վարուժան, Սիամանթօ, Ռ. Զարդարեան եւ այլք):
- Քերականօրէն լեզուն աւելի կանոնակարգուեցաւ. բառամթերքը հարստացաւ գրաբարով եւ բարբառներով (համեմատել Վարուժանի *Հեթանոս երգեր* եւ *Հացին երգը* գործերը): Մուշեղ Իշխան գրելով այս սերունդի լեզուի մասին՝ կ'ըսէ. «*Գեղապաշտ գրողները արեւմտահայերէնը կը հասցնեն այնպիսի՛ ճոխութեան եւ գեղեցկութեան մը, որ իր նախընթացը չէ ունեցած*»[1]:
- Արեւմտահայերէնը դեռ երկար ճանապարհ ունէր կտրելիք՝ ըլլալու համար բովանդակ արեւմտահայութեան խօսակցական լեզուն: Հեռաւոր վայրեր տակաւին դպրոց չունէին: Բարբառախօսութիւնը, թրքախօսութիւնը, քրտախօսութիւնն ու արաբախօսութիւնը տակաւին չէին յաղթահարուած:

Ա.- ՍՓԻՒՌՔԸ (ՄԻՆՉԵՒ 1960ԱԿԱՆՆԵՐ)

1915-22ի Ցեղասպանութիւնն ու ցրուումը հիմնովին փոխեցին արեւմտահայերէնի զարգացման պայմանները: Կազմաւորուեցաւ Սփիւռքը: Այդուհետեւ արեւմտահայերէնը դարձաւ Սփիւռքի կարեւոր մէկ հատուածին լեզուն, որ իր վրայ վերցուց հայապահպանութեան պայքարի գլխաւոր լծակի դերը:

ա.- արեւմտահայերէնը եւ արեւմտեան Սփիւռքը

Պոլիս եւ գաւառի մէջ հայկական կրթութիւն ստացած երիտասարդներ անցան Արեւմուտք, յատկապէս Ֆրանսա եւ ԱՄՆ:

- Ամերիկահայ գրողները շարունակեցին մեր գաւառական գրականութեան աւանդութիւնները, գրականին բերին բարբառային արտայայտչամիջոցներ, նոր բառեր եւ վերապրեցուցին կորուսեալ հայրենիքի պատկերը (Համաստեղ, Վահէ Հայկ, Բենիամին Նուրիկեան, Արամ Հայկազ):
- Ֆրանսահայ գրողները ֆրանսական գրականութեան նուաճումներէն ետ չմնալու նախանձախնդրութեամբ՝ բերին լեզուի թարմութիւն, ձեւի եւ բովանդակութեան մեծ նորութիւններ: Անոնք շարունակեցին Գեղապաշտ սերունդի լեզուական նուաճումները: Անոնք բերին հայու պատկերը այս նոր միջավայրին՝ Սփիւռքի մէջ, դէմ յանդիման գտնուելով հայապահպանման գլխաւոր խնդիրներուն (Շահան Շահնուր, Վազգէն Շուշանեան, Շաւարշ Նարդունի, Կարապետ Փոլատեան, Բիւզանդ Թոփալեան եւ այլք):

Արեւմուտքի մեր գրական շարժումները ընդհատուեցան առաջին սերունդով, որովհետեւ հայերը հոն ցրուած էին, խիտ համայնքներ չէին կրցած ձեւաւորել ու չկրցան դպրոցաշինական մեծ արշաւներ կազմակերպել. հայախօսութիւնը ընդհատուեցաւ, օտարախօսութիւնը ծաւալեցաւ: Այս միջավայրին մէջ արեւմտահայերէնի պահպանութեան եւ դպրոցաշինութեան նոր թափը կը սկսի 1960ականներուն:

բ.- Արեւմտահայերէնը եւ արեւելեան Սփիւռքը

Արեւելքի հայ գաղթականութիւնը ցրուած էր Իրաքի, Սուրիոյ, Լիբանանի, Յորդանանի, Պաղեստինի, Եգիպտոսի եւ Կիպրոսի մէջ:

Վերապրողները ջանք չեն խնայեր ապահովելու հայերէնի կենսագործունէութեան գլխաւոր միջոցները՝ դպրոց, մամուլ, հրատարակութիւններ, գրադարաններ: Հարիւրաւոր դպրոցներ սկսան գործել այս տարածքին մէջ[2]: Հայերէնախօսութիւնը նախ դպրոցով կրնար ապահովուիլ: Այս մասին դեռ 1919ին կը գրուի. «*Յաւալի է այն երեւոյթը, որուն ականատես կ'ըլլանք ամէն օր: Քիչ չէ թիւը կայտառ, վառվռուն հայ փոքրիկներուն, որոնք, ցաւալի՛ իրողութիւն, հայերէն չեն կրնար խօսիլ: Ասոնք, հայութեան ապագայ սերունդը, զրկուած են իրենց մայր լեզուէն եւ թողուած են ասդին-անդին թափառական... Մեծ է փոկոսը չափահաս կիներու եւ այրերու, որոնք բացարձակապէս անտեղեակ են հայերէնին: ...Պէտք է մեր ազգային մարմինները լուրջ նկատողութեան առնեն թրքախօսութիւնը եւ միջոցներ ստեղծեն զայն դարմանելու: Բոլոր թրքախօս մանուկները պէտք է դպրոց ղրկուին: ... Իւրաքանչիւր հօր, մօր պարտականութիւնն է նախ եւ առաջ իր տղուն, աղջկան հայերէն սորվեցնել*»:[3]

Դպրոցները մեծ դեր ունեցան թրքախօս, արաբախօս, քրտախօս ու բարբառախօս նոր սերունդը արեւմտահայերէնին բերելու գործին մէջ: Եկեղեցիները, միութիւններն ու ակումբները հայերէնի ուսուցման ու տարածման մէջ նոյնպէս դեր ունեցան:

Առաջին քսանամեակին Պոլիսը շարունակեց դասագիրքեր մատակարարել, Երուսաղէմի պատրիարքարանը, Զմմառի, ապա Անթիլիասի դպրեվանքերը, Վենետիկի Մուրատ-Ռաֆայէլեանը ուսուցիչ հասցուցին:

1922-60՝ հիմնուեցան բազմաթիւ երկրորդական վարժարաններ, գլխաւորաբար Հալէպ, Կիպրոս, Պէյրութ:

Այս շրջանակին մէջ գործեցին վերապրողներէն Լեւոն Շանթը, Վահան Թէքէեանը, Յակոբ Օշականը:

Հայատառ թրքերէն մամուլն ու գրականութիւնը վերացան:

Փաստօրէն գաղթականութեան պայմաններէն ծնունդ առաւ արեւմտահայերէնը կրող սփիւռքեան առաջին սերունդը: Հոս է, որ կարելի է ըսել, թէ արեւմտահայերէնը յարութիւն առաւ ու յետագայ սերունդներուն փոխանցուելու իրաւունք ձեռք բերաւ:

Արեւմտահայերէնի շարունակականութիւնը կախեալ է սփիւռքահայ դպրոցէն:

գ.- Արեւմտահայերէնի լեզուական որակները

Սփիւռքի մէջ գրաւոր արեւմտահայերէնը ցուցաբերեց զօրաւոր աւանդականութիւն մը, խօսքը կը վերաբերի ինչպէս ուղղագրութեան, այդպէս ալ բառագիտութեան եւ քերականութեան ըստ ամենայնի ընդունելի օրինաչափութիւնները պահպանելուն մէջ: Մինաս Թէօլէօլեան կը գրէ. «*Մեր լեզուն պահեց իր գեղեցկութիւնն ու թարմութիւնը՝ հայ քերթողին ու գրագէտին վճռական հակազդեցութեամբ*»[4]:

Ան մերժեց խորհրդային իշխանութիւններու կողմէ հաստատուած նոր ուղղագրութեան եւ յետագային անոր բարեփոխուած կանոնակարգը: Խորհրդային հրատարակութիւնները Սփիւռքի մէջ վերահրատարակուեցան աւանդական ուղղագրութեամբ:

Մեր երկու գրական լեզուներու մերձեցման դէմ կանգնած մեծագոյն խոչընդոտը նկատուեցաւ նոր ուղղագրութիւնը, որ լիովին կը կտրէր նոր հայերէնը անոր դասական եւ միջին որակներէն:

- Արեւմտահայերէնը, օգտուելով հայերէնի բառակազմութեան լայն հնարաւորութիւններէն, կը հարստանար նոր բառաշարքերով: Այստեղ արեւմտահայերէնը փաստօրէն կը հակադրուէր արեւելահայերէնին, նկատի ունիմ Խորհդային Հայաստանի մէջ կենսագործուող արեւելահայերէնը, ուր դեռ Գրիգոր Արծրունիի օրերէն օտարաբանութիւնները, այս պարագային՝ միայն ռուսերէնի

միջնորդութեամբ, մեծ ու անզսպելի թափով երեւցան արեւելահայ լրագրութեան, դասագիրքերու եւ գիտական գրականութեան մէջ:

- Արեւելահայ շրջանակներ արեւմտահայերը կը մեղադրէին լեզուական մաքրամոլութեամբ: Ասիկա երբեք ճշմարիտ չի կրնար ըլլալ, որովհետեւ հոն ուր հնարաւոր չէ՝ արեւմտահայերէնը գործածած է ու կը գործածէ օտարամուտ բառերը, ինչպէս նկարչութեան, այդպէս ալ երաժշտութեան, մարմնամարզի, գրականութեան, լրագրութեան եւ զուտ գիտական՝ բժշկական, երկրաչափական գրականութեան մէջ՝ մեթր, մղոն, քիլօ, ամբիոն, ակադեմիա, բիւրօ, ֆութպոլ, քրոնիկ, ստամոքս, տրամա, միթինկ եւն.:
- Արեւմտահայերէնը գիտական մասնագիտական բնագաւառներու լեզու ըլլալու պատեհութիւն չունեցաւ, բայց ան բծախնդրութեամբ կը կիրարկուէր հայկական բոլոր հաստատութիւններէ ներս իբրեւ պաշտօնական գրագրութեան ու ատենագրութեան լեզու: Այդպէս էին եկեղեցական, կրթական, մարզական, բժշկական-բարեսիրական, կալուածոց, շինարարական, դատաստանական մարմիններու ատենագրութիւնները: Ամէնօրեայ մամուլը ունէր մարզական, կնոջական, առողջապահական, գիտական սիւնակներ, կային առանձին մասնագիտացուած պարբերականներ, յատկապէս կնոջական, մարզական, բժշկական եւ արուեստի թեքումներով:
- Քերականութիւնը դպրոցական ձեռնարկներէ անդին չանցաւ: Յովհաննէս Գազանճեանէն ետք Շանթի, Թէօլէօլեանի, Սիմոն Սիմոնեանի, Զարեհ Մելքոնեանի, Եդուարդ Տասնապետեանի, Մկրտիչ Մկրտիչեանի քերականութիւնները մեծ խորացումներ չունեցան: Մամուլը եւ առանձին անհատներ շարունակեցին խօսիլ լեզուի կիրառական իրականութիւններուն մասին զուտ գործնական նպատակներով՝ լեզուի մէջ երեւցող երկձեւութիւններն ու սխալագրութիւնները քննութեան առարկայ դարձնելով: Այդպէս եղան Հայր Արսէն Ղազիկեանի, Շաւարշ Նարդունիի, Բենիամին Թաշեանի, Արտաշէս Տէր Խաչատուրեանի եւ այլոց ուղեցոյցները[5]:
- Արեւմտահայերէնը չյաջողեցաւ քերականական կանոնակարգում ու միօրինականացում տարածել: Աւանդականութիւնը պահեց այլաձեւ հոլովումներու, զարտուղի բայերու երկար շարքերը: Բայական համակարգին մէջ խայտաբղէտութիւնը շարունակուեցաւ: Արեւելահայերէնի մէջ եթէ ներգործական բայերը ամբողջապէս ունեցան ու-ով կրաւորական՝ ծռել-ծռուել, ազատել-ազատուել, արեւմտահայերէնը պահեց գրաբարաձեւ կրաւորական չէզոքը՝ ծռել-ծռիլ, ազատել-ազատիլ: Հակառակ խօսակցականին մէջ անձի տրական հոլովի անցումին՝ գրականը պահեց հայցական հոլովով խնդիրը եւն.:

դ.- Արեւմտահայերէնի լեզուական կեդրոնները

Արեւելքի գաղութներուն մէջ գրաւոր լեզուի ու մշակոյթի կեդրոնի հանգամանք ձեռք բերին կարգ մը քաղաքներ: Գլխաւորաբար քաղաքական պայմաններու բերումով կեդրոնի այդ հանգամանքը անցաւ քաղաքէ քաղաք կամ երկրէ երկիր, ինչպէս Եգիպտոս՝ Գահիրէով, ապա Սուրիա՝ Հալէպով եւ վերջապէս Լիբանան՝ Պէյրութով: Հալէպը կրկին աշխուժացած էր 1920էն ետք: Այստեղ կեդրոնացած էին մեր ամէնէն աշխուժ տպարանները, մամուլը, կրթական լաւագոյն հաստատութիւնները, թատրոնը եւն.:

Պոլիսը նախաեղեռնեան իր աւանդութիւններով եւ աւիշով շարունակեց մնալ արեւմտահայերէնի պահպանման ու զարգացման կարեւորագոյն կեդրոններէն մէկը:

1946-48ի մեծ հայրենադարձութիւնը բնականաբար արեւմտահայերէն խօսողներու մեծ թիւ մը պակսեցուց Սփիւռքէն, նոյնիսկ ճակատագրական դեր ունեցաւ կարգ մը գաղութներու գոյատեւման մէջ՝ խաթարելով անոնց բնական զարգացումը:

Պալքանեան երկիրները մտան Խորհրդային պլոքի մէջ, ու հոն խաթարուեցաւ արեւմտահայերէնի ընթացքը:

Հայրենադարձութիւնը հրաշալի առիթ մըն էր, որ հրապարակի վրայ դրուին երկու գրականներու մերձեցման եւ ուղղագրութեան նոյնացման խնդիրները: Բայց հակառակն էր որ պատահեցաւ, հայրենադարձ բազմաթիւ գրողներ իրենք փոխեցին լեզուն, անցան արեւելահայերէնին եւ նոր ուղղագրութեան:

Արեւմտահայերէնը իբրեւ կենդանի գրական լեզու տեղ չունէր հայրենի իրականութեան մէջ, պաշտօնապէս կը դիտուէր իբրեւ «բարբառ»:

Բ.- ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՎԵՐՋԻՆ 60 ՏԱՐԻՆ

ա.- Արեւմտահայերէնի ուսուցման ու պահպանման ծանր պայմաններ եւ մարտահրաւէրներ

1950-60ականներուն նոր տեղաշարժեր նկատուեցան մեր կեանքին մէջ.

- Մերձաւոր Արեւելքի երկիրները համաշխարհային Բ. պատերազմէն ետք մտան անկախութեան դարաշրջան եւ բոլորն ալ կրթական ասպարէզին մէջ հետապնդեցին ազգային ծրագիրներ:
- Նոր պայմաններուն մէջ եւ կրթական գերատեսչութիւններու պահանջքներուն առջեւ մեր դպրոցները պարտաւորուեցան հրաժարիլ իրենց նախկին ծրագիրերէն, որոնք 90 տոկոսով հայերէն էին: Հայերէնաւանդ բոլոր նիւթերը՝ հայոց պատմութիւն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն, գիտութիւն եւն. դուրս մնացին միասնական ծրագիրէն. հայերէնին վերապահուեցաւ շաբաթական չորս

պահ ուսուցում: Պահ մը նոյնիսկ կրօնագիտութեան նիւթին համար զլացուեցաւ հայերէնը:

- Մեր բոլոր դպրոցները, սեփական ըլլալով հանդերձ, մտան պետական կրթական ընդհանուր համակարգին մէջ եւ պարտաւորուեցան կրթական գերատեսչութեան ծրագիրերը իրագործել նախակրթարանի, միջնակարգի եւ երկրորդականի մէջ:
- Ասիկա ընդհանուր դժգոհութիւն յառաջացուց յատկապէս հայաշատ երկիրներու հայոց մէջ՝ Եգիպտոս, Սուրիա, Իրաք, ու ծայր առաւ արտագաղթ մը, նաեւ կեդրոնացում մը Լիբանանի մէջ, ուր համայնքապետսական վարչակարգի բերումով համայնքները ունէին մշակութային ինքնավարութիւն, հետեւաբար եւ կրթական ծրագիրերուն մէջ՝ համեմատաբար լուրջ առանձնաշնորհումներ:
- 1970ական քաղաքացիական պատերազմն ալ Լիբանանէն եւս արտագաղթի մեծ ալիք ստեղծեց: Շատ գաղութներ խամրեցան ու դպրոցներ փակուեցան:
- Պետական առաջնահերթութիւնն ու պարտադիր կիրարկումը արեւմտահայերէնի պահպանման ու զարգացման համար նոր աղէտի մը վերածուեցան: Սերունդ մը ետք պիտի անդրադառնայինք, որ հայերէնի բառամթերքը մեծապէս աղքատացած է, որովհետեւ աշխարհագրութեան, երկրաբանութեան, մարդակազմութեան, թուաբանութեան, երկրաչափութեան հիմնական եզրերը անծանօթ պիտի մնային նոր սերունդին համար:

բ.- Ուսուցման հնարաւորութիւններու նոր ռազմավարութիւն

Այս պատկերը, եթէ պարտադիր եղաւ Արեւելքի մեր դպրոցներուն համար, յետագային, պետական կրթական ծրագիրերը իրագործելու պատճառաբանութեամբ, կամովին որդեգրուեցաւ նաեւ հին ու նորակազմ գաղութներուն կողմէ՝ Լիբանան, Պոլիս, Արեւմուտք: Բնականաբար կրճատուեցաւ արեւմտահայերէնի կենսագործունէութեան շրջանակը գրեթէ ամէն տեղ:

- Արեւելքի մեր կրթական շրջանակները այս սահմանափակումներու բերած սպառնալիքները կամաց-կամաց սկսան յաղթահարել նոր մարտավարութիւններով: Դիմեցին աշակերտական արտադասարանային ձեռնարկներու, պատի թերթերու, հարց-պատասխան մրցումներու եւն., մարզանքի, երաժշտութեան եւ գծագրութեան դասապահերը այդ նպատակին ծառայացնելու: Դասագիրքերը փոխելու եւ արդիականացնելու խնդիր ելաւ, մինչ մեր դասագիրքերը նուազագոյնը կէսդարեայ կեանք ունէին եւ չէին գոհացներ: Մեծ գաղութներ իրենք նախաձեռնեցին ատիկա՝ միշտ նկատի առնելով պաշտօնապէս դասացոյցերէն դուրս մնացած

դասանիւթերու բառամթերքը, ինչպէս Կարապետ Ճուհարեանի *Մրգասպան* եւ Յակոբ Չոլաքեանի *Հայերէնի դասագիրքս* շարքերը:

- Հայերէնի ուսուցումը անհրաժեշտ նկատուեցաւ յետ նախակրթարանեան շրջանին մէջ եւս: Քերականութեան դասերը կ'աւարտէին Ը. կամ Թ. կարգերուն: Վերի չորս կարգերը յատկացուած էին հայ գրականութեան պատմութեան՝ զարթօնք, իրապաշտներ, արուեստագէտներ եւ սփիւռքահայ գրականութիւն: Ստեղծուեցան հայոց լեզուի եւ գրականութեան համադրեալ ձեռնարկներ, ուր լեզուի ուսուցումը շարունակուեցաւ մինչեւ ԺԲ. կարգ:
- Սուրիոյ մէջ կրթական նախարարութեան ընձեռած նոր արտօնութիւններով նախակրթարանները եղան միջնակարգ, իսկ միջնակարգերը՝ երկրորդական: Գրեթէ բոլոր համայնքները ունեցան իրենց երկրորդական վարժարանները: Ասիկա հրաշալի առիթ մըն էր հայեցի դաստիարակութիւնն ու հայերէնի ուսուցումը հասցնելու դպրոցականի մինչեւ 18 տարեկանը:
- 1960ականներուն հայերէնի ուսուցչակազմ հայթայթելու լուրջ տագնապ առաջացաւ: Սփիւռք հասան Երեւանի Պետական համալսարանէն, Մանկավարժականէն շրջանաւարտ սփիւռքահայ ուսանողներ, երբ տակաւին արեւմտահայերէնի առանձին ուսուցում չկար Հայաստանի մէջ: Ուսուցչակազմերը համալրեցին, Պէյրութի Սան Ժոզէֆ համալսարանի եւ Հայկազեան գոլէճի կողքին, Պէյրութի ՀԲԸՄի Երուանդ Հիւսիսեան եւ Համազգայինի Հայագիտականները, Հալէպի Մխիթարեան հայագիտական երկամեայ դասընթացքները, իսկ 1996էն իվեր՝ Հալէպի Համազգայինի Հայագիտական հիմնարկը, որ տակաւին կը գործէ, Անթիլիասի հայագիտականը եւն.:

Գ. ԴՊՐՈՑԱՇԻՆԱԿԱՆ ՆՈՐ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՒ ՆՈՐ ՀՆԱՐՔՆԵՐ

ա.- Դպրոցաշինական նորագոյն արշաւը

ա.- 1950ականներէն ետք որոշ խտութեամբ համայնքներ սկսան ձեւաւորուիլ արաբական ծոցի երկիրներուն, Աւստրալիոյ, Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Քանատայի մէջ: Հոս եւս հրատապ հարցի վերածուեցան հայեցի դաստիարկութեան եւ հայերէնի ուսուցման խնդիրները: Դպրոցաշինական մեծ արշաւ մը սկսաւ 1960ին Քուէյթի Ազգային վարժարանի հիմնումով, որուն հետեւեցաւ 1962ին Լոս Անճելըսի Ֆերահեան վարժարանը: Տասնեակ վարժարաններ բացուեան Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Քանատայի եւ Աւստրալիոյ մէջ: Այստեղ եւս դպրոցները հետեւեցան Արեւելքի դպրոցներու օրինակին եւ ծրագիրերուն: Հայերէնի ուսուցիչներն ու պաշտօնէութիւնը մեծ մասով Մերձաւոր Արեւելքէն ներգաղթեալներ էին: Սկսան գործել բազմաթիւ միօրեայ վարժարաններ եւս:

բ.- Խորհրդային Միութեան փլուզումէն եւ Հայաստանի անկախացումէն ետք մեծ թիւով ընտանիքներ Հայաստանէն արտագաղթեցին արտասահման, մանաւանդ դէպի Ամերիկայի Միացեալ Նահանգներ: Այստեղ հայերէնի ուսուցման առջեւ նոր խնդիրներ ծառացան: Նոյն դասարանին մէջ կային երեք կարգի աշակերտներ՝ արեւմտախօս, արեւելախօս եւ անգլիախօս: Դպրոցներուն կը մնար յաղթահարել այս դժուարութիւնները. ուղղագրութեան եւ քերականութեան ուսուցումը արդիւնաւէտ չէր կրնար ըլլալ:

Այս իրողութիւնը ոմանց միտքին մէջ ստեղծեց Միացեալ հայերէնի գաղափարը (ուղղագրութիւն եւ քերականութիւն), ոմանք հետապնդեցին այդ տեսլականը՝ փորձելով գտնել համախոհներ թէ՛ Սփիւռքի եւ թէ Հայաստանի մէջ: Երկու գրականներու համատեղ կենսագործունէութիւնը այդպիսի մօտեցում կը թելադրէր:

գ.- Շուտով նկատուեցաւ, որ մանաւանդ Միացեալ Նահանգներու մէջ, հայ աշակերտութեան հսկայ թիւ մը հայկական վարժարան չի յաճախեր՝ գլխաւորաբար կրթաթոշակ չկարենալ վճարելու համար: Արեւելքի մէջ մեր աշակերտները մեծամասնութեամբ հայկական վարժարան կը յաճախեն ու նկատուած է, որ աշակերտութեան գոնէ 40 տոկոսը ձրիավարժ է: Լիբանանի մէջ պատկերը փոխուած է. հայ աշակերտութեան շուրջ 40% արտահոսք նկատել կը տրուի: Դպրոցը պիւտճէական բացը գոցելու զանազան աղբիւրներ ունի, գոնէ վերջին կէս դարուն՝ կրթաթոշակի համար տուն ղրկուած աշակերտ չենք ունեցած հոն: Ամերիկայի մէջ այս հարցը լուծել հնարաւոր չէ եղած: Ահաւասիկ, այս իրադրութենէն ելլելով, Գաբրիէլ Ինճեճիքեան, որ եղաւ Ամերիկայի առաջին ամէնօրեայ դպրոցի հիմնադիրը, նոր ելք մը գտաւ. օգտուիլ ամերիկեան չարթըր դպրոցներու հնարաւորութենէն: Հոս ուսումը ձրի է, բայց չափով մը ապահովուած է քու կրթական ծրագիրդ: Այս ծրագիրը չքաջալերուեցաւ:

դ.- Մեր թեմական, կուսակցական եւ միութենական մարմինները ամէն ջանք թափեցին, որ եկեղեցին ու ակումբը ներգրաւեն նոր սերունդը իրենց սահմաններէն ներս, թէ՛ հայկական կրթութիւն ունեցողն ու թէ՛ օտարախօսը: Այդպէս էր Մերձաւոր Արեւելքի մէջ, ուր ակումբն ալ հայերէնախօսութեան դպրոց էր. «Թրքերէն խօսողին հայերէն պատասխանէ» կարգախօսը չենք մոռցած: Եւ յաջողեցաւ: Մեր օրերուն, մեր սերունդի արտադպրոցական կեանքի կեդրոնները չեն յաջողած այդ գետնի վրայ: Հիմա չկայ նախկին մարտավարութիւնը, թէ՝ «սպաներէն, ֆրանսերէն, արաբերէն եւ անգլերէն խօսողին հայերէն պատասխանէ»: Նոյնիսկ եկեղեցական ու միութենական պարբերականները, յայտարարութիւններն ու ատենագրութիւնները արդէն երկլեզուեան են, այսինքն՝ հայերէն եւ միւս գերակայ լեզուն. կարգ մը պարագաներու հայերէնը առհասարակ բացակայ է:

ե.- Արեւելքի մէջ՝ արտագաղթի, իսկ ընդունող երկիրներու մէջ՝ ցրուածութեան հետեւանքով համախումբ ապրելու պայմաններ չենք կրցած

ապահովել: Սա սփիւռքեան երեւոյթ է: Ամէն տեղ հայ կայ: Նորահաս սերունդներ զրկուած են հայկական միջավայրէ: Խառն ամուսնութիւնը, եթէ Արեւմուտքի մէջ աւելի յաճախ երեւցող երեւոյթ էր, այսօր յատուկ է ամբողջ Սփիւռքին՝ Սուրիոյ, Եգիպտոսի, Լիբանանի, ամէն տեղ: Եւ բնականաբար ընտանիքներէն հետզհետէ դուրս կը մղուի հայերէնը:

դ.- Գերակայ լեզուներու ազդեցութիւնը հետզհետէ կը մեծնայ խօսակցական արեւմտահայերէնին մէջ, անմիջապէս կը զգաս, թէ արեւմտահայերէն խօսողը ինչ գերակայ լեզուի շրջանակէ կու գայ՝ սպաներէն, անգլերէն, ֆրանսերէն, արաբերէն, թրքերէն: Բայց փաստ է, որ ատիկա գրեթէ չ'արտացոլուիր գրական լեզուին մէջ, վկայ՝ մեր աշխարհասփիւռ թղթային թէ առցանց մամուլը, ուր խստագոյնս կը պահպանուի գրական լեզուի կանոնակարգը քերականութեան եւ շարահիւսութեան մէջ:

Այսուհանդերձ՝ օտարախօս հայ զանգուածներու հետզհետէ մեծնալը կը նուազեցնէ հայ մամուլի ու հրատարակութիւններու դերը եւ արեւմտահայերէնի կենսագործունէութիւնը ընտանիքներու, ակումբներու, հանրային շրջանակներու եւ նոյնիսկ եկեղեցւոյ մէջ: Լեզուն կը շարունակէ նահանջել:

Վերջին յիսնամեակին առաւել եւս շեշտուեցաւ լեզուի վտանգուած ըլլալու հանգամանքը: Արեւմտահայերէնը դասուեցաւ մեռնող լեզուներու կարգին: Լեզուի պահպանման, ուսուցման ու տարածման աւանդական միջոցները՝ դպրոց, եկեղեցի, ակումբ, թղթային հրատարակութիւններ անբաւարար նկատուեցան: Նոր մարտավարութիւններու փնտռտուքներ սկսան[6]:

բ.- Լեզուի պահպանման նոր մարտավարութիւններ

ա.- Այս ահազանգը նոր թափ տուաւ լեզուի պահպանութեան մեր համազգային ճիգերուն: Հետզհետէ աւելցան տեսալսողական նիւթերը, առցանց դասաւանդութիւնները, առցանց մամուլն ու հրատարակութիւնները: Պէտք է կարեւորութեամբ նշել հաղորդակցութեան առցանց միջոցները, zoomով դասաւանդութիւնները, մանաւանդ դիմատետրը, ուր մեր հայրենակիցները ամէն օր հայերէն կարդալու բարեպատեհ առիթը կ'ունենան, ոչ միայն կարդալու, այլեւ գրելու: Կրնամ հաստատել, որ դիմատետրի միջոցով շատեր բարելաւած են իրենց գրաւոր խօսքը: Այստեղ մտահոգիչ է լատինատառ հայերէնի օգտագործումը: Կը խորհիմ, որ մեր մանկապարտէզներէն տառաշարի գործածութիւնը հիմնական վարժանք պէտք է նկատուի, նուազագոյնի իջեցնելով գեղագրելու աւանդական եղանակը: Մանուկը հայատառ գրելու վարժեցնել:

- Պէտք է յատուկ նշել, որ առցանց մամուլը հիմա շատ աւելի ներգործուն դեր կ'ունենայ մեր ընթերցողներուն վրայ եւ հասանելի է բոլորին[7]: Կ'ուզեմ յատկապէս առանձնացնել գրական թերթերը՝ *Հայերէն պլոք, Կանթեղ* եւն.: Ասոնք գրական հարթակներ են: Հոս տասնեակ-տասնեակ տղաք ու աղջիկներ հանդէս կու գան իրենց գրութիւններով:

Անոնք փաստօրէն հանդէս կու գան նախկին տասնամեակներուն այնքան սիրուած աշակերտական պարբերաթերթերու փորձին փոխարէն: Ասիկա ծափահարելի նախաձեռնութիւն մըն է:

գ.- Անհրաժեշտութիւններ

- Արեւմտահայերէնը երբեք չունեցաւ լեզուի բարձրագոյն կոմիտէ մը, որ համակարգէր լեզուն, միօրինակութիւն ստեղծէր, լեզուական սայթաքումները նշէր: Տասնամեակ մը առաջ մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի հովանաւորութեամբ ստեղծուեցաւ Արեւմտահայերէնի Պաշտպան յանձնախումբը, որուն շուրջ երեսուն անդամները ելեկտրոնային նամակագրութեամբ տարբեր հարցեր կը քննարկէին: Արմենակ Եղիայեան եւ Յակոբ Չոլաքեան[8] հարցերուն գիտական պատասխաններ տալու վիճակուած էին: Ասոնք մնացին քննարկման ծիրին մէջ: Արեւմտահայերէնը տակաւին կը շարունակէ պահել հինէն ժառանգուած ուղղագրական երկձեւութիւններ, հոլովման եւ խոնարհման համակարգերուն մէջ ընդհանուր շեղումներ կամ տարբերակային երեւոյթներ, որոնց յաճախ կ'անդրադառնան առանձին լեզուակիրներ ու քննարկման նիւթ կը դարձնեն դիմատետրի վրայ:
- Արեւմտահայերէնի բառարանագրութիւնը տակաւին չունի բառարան, որ օգնէ ընթերցողին բառին ուղղախօսական, իմաստաբանական եւ քերականական յատկանիշերը տեսնելու, ուր նշուին բառի հոլովման եւ խոնարհման բոլոր յատկանիշերը: Օրինակ՝ հայր բառը՝ օ ներքին հոլովում, հօր, հօրմէ, բայց գործիականը՝ հայրով, օրինակ՝ սկսիլ բայը, աններածանց՝ սկսիլ, բայց սկսայ, -ար, -սաւ, -անք, -սաք, -սան, հրմ.՝ սկսէ, սկսէք:
- Արեւմտահայերէնի ուսուցումը ներկայիս տեղ ունի Հայաստանի բարձրագոյն ուսումնական հաստատութիւններուն մէջ, գլխաւորաբար արեւելահայերէն-արեւմտահայերէն զուգադրական քերականութիւն անուան տակ: Որոշ դպրոցներ եւս ունին այդ դասանիւթը: Ի հակադրութիւն անցեալին՝ այնտեղ հաստատուած սփիւռքահայ գրողները կը գրեն արեւմտահայերէն, գիտական մամուլը տեղ կու տայ նաեւ աւանդական ուղղագրութեամբ գրուած յօդուածներու: Ես բազմաթիւ անգամներ ձայն բարձրացուցած եմ այն մասին, որ արեւմտահայերէնը ազգային արժէք է, հետեւաբար անոր պատշաճ ուսուցումը, աւանդական ուղղագրութեամբ, տեղ գտնէ հանրակրթարանի դասագիրքերուն մէջ, որպէսզի դպրոցականը նուազագոյնը սահուն կարդայ ու հասկնայ արեւմտահայերէնը, ճիշտ այնպէս ինչպէս կ'ընենք Սփիւռքի մէջ:
- Շատ մը միօրեայ վարժարաններ անհրաժեշտաբար ամէնօրեայ դպրոցի վերածուելու ամբողջական պայմաններ ունին՝ աշակերտութիւն, շէնքային ենթահող, աճող համայնք. պէտք չէ տնտնալ:

- Կը խորհիմ, թէ լրատուական առցանց մամուլի կողքին մեծ հետաքրքրութիւն պիտի ստեղծեն՝ առցանց մամուլի կիրառական դաշտին մէջ առնուած խոհանոցը, մարմնամարզը, բժշկութիւնը: Պարզապէս նախաձեռնութիւն է պէտք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

- Արեւմտահայերէնը, իր կազմաւորման սկիզբէն, գրական եւ ընդհանուր խօսակցական լեզու ըլլալու համար ծանրագոյն դժուարութիւններու մէջէն անցաւ:
- Եթէ ատենին ան յաղթահարեց թրքերէնը, յետագային, Սփիւռքի մէջ, անոր փոխարէն արեւմտահայերէն խօսակցականը ինկաւ այլ գերակայ լեզուներու ազդեցութեան տակ:
- Արեւմտահայերէնը միշտ դիտուեցաւ հայապահպանութեան պայքարի հիմնական կռուան, ու այդ պատճառով անոր ուսուցման եւ պահպանման գործը չկորսնցուց իր այժմէականութիւնը:
- Արեւմտահայերէնի ուսուցման գլխաւոր կռուանը հայ դպրոցն է՝ ամէնօրեայ եւ միօրեայ. ասոնց կ'աւելնան նաեւ հեռակայ ուսուցման նորագոյն հնարաւորութիւնները:
- Գրական արեւմտահայերէնին յատուկ է լեզուական աւանդականութիւնը, ան պահեց աւանդական ուղղագրութիւնը, նոյնպիսի սկզբունքներով մօտեցաւ բառակազմութեան եւ քերականական կարգերուն:
- Այսպէս թէ այնպէս՝ արեւմտահայերէնը կը շարունակէ իր գոյութիւնը: Չենք գիտեր, թէ որքան կը կազմէ հայախօսներու տոկոսը, կամ որքանը կրնայ գործածել գրականը, բայց ատիկա կը շարունակէ իր գոյութիւնը:

WESTERN ARMENIAN GRAMMATICAL AND FUNCTIONAL TRANSFORMATION, 1900-2020

(SUMMARY)

Hagop Tcholakian
hagopcholakian@hotmail.com

Western Armenian in the Diaspora did not have a place among the dominant languages of the countries where they lived, but as the main lever of Armenian preservation, its teaching in community private schools was privileged, and it remained the spoken, literary and ritual language (next to Grapar) of the Western Armenians of the Diaspora, keeping and developing its linguistic traditions of the pre-genocide period. Under these conditions, the functional scope of Western Armenian has gradually narrowed, but it continues to be of living value to an important proportion of Diaspora Armenians. At present, audio-visual and Internet possibilities are widely used in addition to traditional teaching methods.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՏՃԱՌ՝ ԼԵԶՈՒԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐԻ ԽԱԹԱՐՄԱՆ (Դաշտային դիտարկումներ)

Հայկանուշ Մեսրոպեան
mesropyanhaykanush@gmail.com

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Լեզուաբանական ուսումնասիրութիւնները հաւաստում են, որ հայերէնի տարածքային տարբերակները՝ բարբառները, կազմաւորուել են հայոց լեզուի զարգացմանը համընթաց եւ գոյութիւն են ունեցել հայոց լեզուի պատմութեան ողջ ընթացքում: Գէորգ Ջահուկեանն այդ մասին գրում է. «*Հայերէնի բարբառների հնչիւնական, քերականական եւ բառապաշարային յատկանիշերը ձեւաւորուել են հայերէնի պատմութեան ողջ ժամանակաշրջանում՝ պատմական փուեալ պայմաններից կախուած ուժեղանալով, թուլանալով կամ նոյնիսկ ընդհատուելով եւ պատմական փուեալ պայմաններում տալով բարբառային փուեալ խմբաւորումները*»[1]:

Մինչեւ առաջին համաշխարհային պատերազմը հայերէնի բարբառների տարածման սահմանը Աւստրօ-Հունգարիայից, Ռուսաստանի եւ Թուրքիայի արեւմտեան կողմերից հասնում էր մինչեւ Հնդկաստան ու Ճաւա կղզի: 1915ից լիովին փոխւում են հայերէնի բարբառների աշխարհագրութիւնը եւ լեզուական համապատկերը: Դատարկուած Արեւմտեան Հայաստանից Արեւելեան Հայաստան են ներգաղթում բազմաթիւ արեւմտահայեր եւ հիմնում են նոր բնակատեղիներ կամ հատուածաբար բնակութիւն հաստատում արեւելահայերով կամ 1827-28ի ռուս-պարսկական պատերազմից յետոյ ներգաղթած արեւմտահայերով բնակեցուած վայրերում: Բարբառախօս բնօրրանից տարագրուած հայութեան հոծ զանգուածներ սփռւում են աշխարով մէկ՝ աստիճանաբար մոռանալով մայրենի բարբառը:

Ըստ այսմ՝ հայերէնի բարբառները բաժանւում են երկու հիմնական խմբի՝ ա) կորուսեալ բարբառներ եւ բ) կենսունակ բարբառներ:

Հայերէնի մի շարք բարբառների կորստի հիմնական պատճառը հայրենազրկումն է: Այդպիսի բարբառներից են՝ Կեսարիայի, Արաբկիրի, Մալաթիայի, Սեբաստիայի, Վանի, Երզնկայի, Տիգրանակերտի, Շապին-Գարահիսարի, Ակնի, Նիկոմիդիայի, Զեյթունի, Հաճընի, Մարաշի, Խարբերդի, Շատախի, Մոկսի, Ոզմի, Չմշկածագի, Խոտորջուրի, Եւդոկիայի, Նախիջեւանի, Ագուլիսի, Ցղնայի,Շամախու եւն. բարբառները:

[1] Գէորգ Ջահուկեան, *Հայ բարբառագիտութեան ներածութիւն*, Հայկ. ՍՍՀ Գիտութիւնների ակադեմիա, Երեւան, 1972, էջ 25:

Բարբառները կորցնում են իրենց լեզուական համապատկերը նաեւ գրական լեզուի կամ աւելի զօրեղ բարբառի ազդեցութեամբ (Երեւանի, Թիֆլիսի,Կոզէնի, Արէշի, Հաւարիկի, Գանձակի եւն.), մոռացւում են, երբ բարբառակիրները տարբեր պատճառներով պարզապէս դադարում են իրենց բարբառով խօսել (Սուչաւայի, Առտիալի, Ռոդոսթոյի, Մեղրիի, Ջուղայի): Բնօրրանի մի շարք բարբառախօսներ էլ Թուրքիայում թուրքերէնի եւ քրդերէնի ազդեցութեամբ մոռացել են մայրենին (Տրապիզոնի, Ադանայի եւն.):

Կենսունակ բարբառները կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) բարբառներ, որոնք հաղորդակցութեան միջոց են իրենց բուն տարածքներում (Արարատեան, Պոլսի, Համշէնի, Քեսապի), բ) բարբառներ, որոնք կենսունակ են բնօրրանից դուրս (Մուշի, Սասունի, Կարնօ, Նոր Նախիջեւանի, Խոյի, Ղարաբաղի)[2]:

Յօդուածում ներկայացնում ենք հայերէնի բարբառների ներկայ իրավիճակը՝ Թուրքիայում կատարած մեր հարցումների հիման վրայ: Նշենք, որ 2012-14՝ բարբառագիտական դաշտային աշխատանքներ ենք կատարել Թուրքիայի Հանրապետութեան եւրոպական մասում (Ադրիանապոլիս, Ռոդոսթօ, Մալկարա, Չորլու, Քոջաէլի, Օւաճըք, Սիլիւրի եւն.), Ստամբուլում, Բութանիայում (Նիկոմիդիա, Բուրսա, Նիկիա), Լեռնային եւ Դաշտային Կիլիկիայում (Սուեդիա, Տարսոն, Մերսին, Այնթապ, Հալֆետի, Ադանա, Եդեսիա, Ադիաման եւն.), Արեւմտեան եւ Կենտրոնական Փոքր Ասիայում (Չանաք Քալէ, Կապադովկիա, Գամիրք, Գոնիա, Էսկիշեհիր, Նիւշեհիր, Աքսարայ, Աֆիոն Գարահիսար, Կեսարիա, Նիկտէ եւն.), Անքարայում, Ալանիայում, Կարինում, Երզնկայում, Ամասիայում, Մալաթիայում, Վանում, Մուշում, Բայազէտում, Կարսում, Արդահանում, Իգդիրում, հարցումներ ենք կատարել Արեւմտեան Հայաստանի գրեթէ բոլոր բնակավայրերի լեզուական իրավիճակի մասին եւ կատարել ենք գրառումներ :

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ Ի. ԴԱՐԱՍԿԶԲԻ ԱՇԽԱՐՀԱԿՈՐԾԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԻԶԱԿԷՏՈՒՄ

Ի. դարում հայ ժողովրդի զանգուածային տեղահանութիւնները, բնօրրանի սահմանների խեղաթիւրումը, ուծացման քաղաքականութիւնը պատճառ են դառնում ժողովրդագրական պատկերի աղճատման՝ մեծ վնաս հասցնելով նաեւ հազարամեակներով կերտուած ոչ-նիւթական ժառանգութեանը: Ցեղասպանութիւնը պատճառ է դառնում հոգեբանական խեղման, բարդոյթաւորման, մշակութային աւերածութիւնների, լեզուական, տեղանուանական, անուանահամակարգային եւ այլ կորուստների:

Յատկապէս վտանգւում են հայերէնի տարածքային տարբերակները: Կորցնելով լեզուակիրներին եւ հաղորդակցական միջավայրը՝ մի շարք

[2] Մանրամասն տե՛ս՝ Հայկանուշ Մեսրոպեան, *Հայերէնի տարածքային տարբերակների գործառական միտումները,* Հանրապետական գիտական նստաշրջանի նիւթեր, «Էլդորադօ», Գիւմրի, 2011, էջ 197-209:

բարբառներ կորցնում են լեզուական նախկին պատկերը, մոռացւում կամ անհետանում են: Իսկ դա նշանակում է լեզուամտածողութեան խաթարում, դարձուածքների եւ պատկերաւոր արտայայտութիւնների գունազրկում, ծածկալեզուային եզակի միաւորների կորուստ, բառապաշարի աղքատացում: Հայկական բարձրաւանդակի բնիկների մի մասն էլ, կեանքը փրկելու գնով, հրաժարւում է ազգային ինքնութիւնից՝ լեզուից եւ կրօնից: Այս մասին Հրաչեայ Աճառեանը գրում է. «*Ամբողջ Արեւմտեան Փոքր Ասիան, սկսած Քասթամունիի մօտերքից մինչեւ Զիլէ, այստեղից հարաւ՝ մինչեւ Կեսարիա եւ Կեսարիայից հարաւ-արեւելք՝ մինչեւ Սսի ու Այնթափի վրայով մինչեւ Եփրատ, այս սահմանագծից արեւմուտք՝ մինչեւ Մարմարայի, Արշիպելագոսի եւ Միջերկրականի ծովեզերքները գտնուած բոլոր հայերը թրքախօս դարձան*»[3]: Արեւմտահայերի մի ստուար զանգուած էլ դառնում է քրդախօս[4]: Խարբերդցի Համաստեղն այդ մասին ցաւով գրում է. «*Բարբառը ներկի մը պէս կը կորսնցնէ իր խաս գոյները*»[5]:

Յետեղեռնեան արեւմտահայութիւնը բաժանւում է երկու հիմնական խմբի՝ 1) բնօրրանում մնացածներ եւ 2) բնօրրանից տեղահանուածներ:

ԲՆՕՐՐԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԵՒ ԼԵԶՈՒԻ ՄԱՍԻՆ

Պէտք է ասել, որ բնօրրանում մնացածների լեզուական, ընկերային-տնտեսական, քաղաքական, կրթական հարցերը հիմնականում անտեսուած են եւ հայութեան համընդհանուր հիմնախնդիրների մաս չեն կազմում: Ըստ մեր դիտարկման՝ ամէնատխուր հայերը գաղթական չդարձած, հայրենիքի ու աշխարհի կողմից մոռացուած, Ստամբուլից հեռու ապրող հայերն են: Նրանք տառապում են անօգնական ու անտեսուած լինելու բարդոյթով, հայ տեսնելիս ջերմօրէն ոգեւորւում են, արցունքոտուելու աստիճան անկեղծանում: Այդպիսի հայերից իմացայ, որ Թուրքիայում կան բազմաթիւ հայահոծ բնակավայրեր, որոնց բնիկները, գաղթից ու մահից խոյս տալու համար, ընտրել են կրօնափոխութիւնը. ինչպէս օրինակ՝ Թուրքիոյ հանրապետութեան Նեմրութի ստորոտում գտնուող Ադիամանի Քիահթայի մօտակայ Նարնջի, Կարադութ, Սասուն գաւառի Արխունդ, ինչպէս նաեւ Սեւերէկ, Համշէն եւն. հայերը:

Թուրքիայում մնացածների մի մասը պահպանել է հայկական ինքնութիւնը, հայերէնախօս քրիստոնեայ է, հիմնականում ունի հայկական անուանահամակարգ: Այդպիսիք հիմնականում բնակւում են Ստամբուլում, նաեւ Ալեքսանդրէթի միակ հայկական գիւղում՝ Սամանդաղի Վագըֆում: Ինչպէս յայտնի է, Մուսա լեռան միւս հինգ գիւղերի (Եողունօլուգ, Քապուսիէ, Խտրպէկ,

---

[3] Հրաչեայ Աճառեան, *Հայոց լեզուի պատմութիւն, 2-դ մաս*, Հայպետհրատ, Երեւան, 1951, էջ 260:

[4] Գոռ Երանեան, *Էջեր հայ-քրդական պատմութիւնից, մաս Ա., Քրդախօս հայեր, հայատառ քրդերէն տպագիր գրքեր*, «Մատենադարան» հրատ., Երեւան, 2024:

[5] Համաստեղ, *Նամականի*, Երեւան, 2003, էջ 258:

Հաճի Հապիպլի, Պիթիաս) բնակիչները, տեղափոխուել են Լիբանանի Այնճար աւանը՝ որտեղ հաղորդակցւում են արեւմտահայերէնով կամ արաբերէնով, աւագ սերունդը՝ Սուեդիայի բարբառով: Ըստ թուրքահայ լեզուաբան Սեւան Նիշանեանի՝ ներկայումս Թուրքիայում արեւմտահայերէն գրական լեզուից բացի, հայերի շրջանում գործառում է ամէնաքիչը երեք բարբառ՝ 1) Արդուինի Հոփա եւ Բորչկա շրջանների 23 գիւղերում՝ Համշէնի բարբառը, 2) Հաթայի Սամանդաղի շրջանի Վագըֆլը գիւղում՝ Սուեդիայի եւ յարակից Քեսապի բարբառը եւ 3) Չանղըրըղից Ամասիա եւ Արդուին ձգուող տարածքում՝ շատերին անյայտ բոշայ կամ լոմ կոչուող քոչուորների լեզուն[6]:

Բնօրրանի հայերից են հայաստանաբնակներիս անյայտ անուանի երգիչներ տիգրանակերտցի Օննիկ եւ Արա Դինքչեանները, քրդերէն երգերով յայտնի Արամ Տիգրանը, բայազէտցի Կարապետէ Խաչօն եւ շատ-շատերը:

Այս խմբում կան զգուշաւոր հայեր, որոնք որպէս վահան ընտրել են օտար անուանահամակարգ, ունեն եղեռնով պայմանաւորուած հոգեբանական տագնապ, ազգային պատկանելութեամբ համակուած վնասի կամ վտանգի վախ: Այդպիսի հայեր կան Մուշի Մոնգոգ, Հասբէթ Քալեսի, Աժմանակ, Սեւերէկի Գիւլ-Բաբ, Ալան Մուսխան, Ալանխօս, Եդեսիայի Ֆըռֆըռլի, Ռեջի, Օմառլի Քիլիսէ, Արտամէդ (50 տոկոս՝ հայերէն չիմացող), Դիարբեքիրի Դէր Խան, Դէր Խոստէ, Լիջէ, Վանի Նարեկ (Եմիշլիք, քրդախօս, ոմանք հայերէն գիտեն), Հասան Չելեբի (80% թրքախօս կամ քրդախօս մահմեդական, մօտ 2 տոկոսը հայերէն գիտի), Ադիամանի Քիահթա (ե՛ւ քրիստոնեայ, ե՛ւ մահմեդական մօտ 500 հայ, որոնք հայերէն գիտեն, սակայն խօսում են յատկապէս տանը):

Բնօրրանում մայրենի բարբառով է հաղորդակցւում մահմեդական համշէնահայութիւնը: Նրանք անձնական նախաձեռնութեամբ են զօրավիգ դառնում ազգային ժառանգութեանը: Այս առումով գնահատելի է արդուինցի Հուրիէ Շահինի ազգանպաստ գործունէութիւնը: Նա հեղինակն է *Asimilasyon politikasi dilleri nasil yok ediyor* (Բռնաճուլման քաղաքականութիւնը ինչպէ՞ս է ոչնչացնում լեզուները)[7], *Hamşetsnak Lizu Kidanutun* (Համշէներէնի քերականութիւն)[8], 3000-բառանոց բառարանի, ինչպէս նաեւ *Ateş Kizili* (Հրէ կարմիրը)[9]վիպակի, *Aşkin rengi* (Սիրոյ գոյնը)[10] բանաստեղծական ժողովածուի եւ հրապարակախօսական մի շարք յօդուածների: Հարատարակիչն է *Hamşetsu*

[6] Huriye Şahin, *Hamşetsnak Lizu Kidanutun (Hamşince Dil Bilgisi)*, Maltepe-Ankara, 2018, էջ 90:

[7] Huriye Şahin, *Asimilasyon Politikasi Dilleri Nasıl Yok Ediyor, Özel Olarak Ermeni Tarihi ve Hamşen (Hemşin) Ermenileri, Yayin Evi, Yolda Kitap*, Maltepe-Ankara, 2014:

[8] Huriye Şahin, *Hamşetsnak Lizu Kidanutun (Hemşince Dil Bilgisi)*, Maltepe-Ankara, 2018:

[9] Huriye Şahin,*Ateş Kizili, Yayin Evi*, Ankara, 2012:

[10] Huriye Şahin, *Aşkin Rengi, Yayin Evi*, Ankara, 2018:

Gor (Համշէնցու Գոր)[11] ամսագրի, մշակել է համշէներէնի դասաւանդման կրթական ծրագիր՝ օժանդակելով մայրենի լեզուի պահպանութեանը: Հուրիէի դասագրքի ազդագրում կարդում ենք. «*«Համշէնցակ լիզու գիտանութուն»: Այս խորագիրով Անգարայի «Իզան» հրատարակչական մատենաշարէն լոյս տեսաւ համշէնահայ մանկավարժ եւ Համշէնի բարբառի հետազօտիչ Հուրիէ Շահինի վերջին գիրքը: Շահին այս հրատարակութիւնով յոյս ունի, որ վերջ դրած կ'ըլլայ համշէնցիներու ազգագրական յատկութիւններու մասին արտադրուած շինծու տեսութիւններուն*»[12]: Հուրիէի ղեկավարած «Հոփա» միութիւնը դիմել է Թուրքիայի ազգային կրթութեան նախարարութեանը՝ բարբառը որպէս երկրորդ լեզու գրանցելու եւ դպրոցում ուսուցանելու արտօնութիւն ստանալու համար:

Մտահոգիչ է այն, որ հնագոյն գիր ունեցող ժողովրդի մի հատուածը ստիպուած է գրել ու հրատարակել թուրքատառ հայերէնով: Բարեբախտաբար, Յակոբ Մարթայեանը, Քեմալ Աթաթուրքի պատուէրով ժամանակակից թուրքերէնի այբուբէնն ստեղծելիս, ի մտի ունենալով մաշտոցեան այբուբէնը, ստեղծել է ı (ը), c (ջ), ş (շ), ç (չ) եւ այլ տառեր, որոնց միջոցով հնարաւոր է դառնում վերարտադրել հայերէնի հնչիւնական համակարգը:

Մայրենիի պահպանմանը նախանձախնդիր է նաեւ Մահիր Օզքանը, որը Ստամբուլի «Արաս» հրատարակչութեամբ հայկական 24 հեքիաթների եւ պատմուածքների գիրք է տպագրել՝ *Hemşin öyküleri, Համշենեան պատմուածքներ, Hamşetsnag hekiyaner, Համշէնցնակ հէքիաներ* վերնագրով, նաեւ Համշէնի բարբառով թարգմանել է Անտուան դը Սենտ-Էքզիպերիի «Փոքրիկ իշխանը» (*Bidzig Pirens*), հեղինակել *Hamşentsnag, Համշէնցնակ, Hamşenahayeren, Համշէնահայերէն, Hemşince* ինքնուսոյցը[13]: Իր գրառած հեքիաթների մասին («Ջատուի հեքիաներ՝ 1. Մոմի, 2. Աղջիկ, 3. Հալիւոր», «Արչի հեքիա», «Մէկ սունով բադ էլլի չի», «Տատրած», «Հելւայ ու հաց», «Սեւ ձովուն անէծքը») Մահիր Օզքանը ասում է. «*Սա հեքիաները իմ մայրիգէն, դադիին դադին ինձի հասած հեքիաներ են եւ իմ աբրած, իմ գեանքան էգած հեքիաներ ... Անկէ ես ինձի դեսայ՝ համշէներէնով հեքիա կրուի գու, գարելի է. առաջ մը կիդէի՝ համշէներէնը խօսելու լիզու ա, կիրուշի լիզու չէ*»[14]:

Չնայած բռնաձուլման քաղաքականութեանը՝ համշէնահայերը ներփակ կեանքի շնորհիւ կարողանում են պահպանել լեզուն: Դրան նպաստում են նաեւ ժամանակակից հեռահաղորդակցութեան միջոցները, որոնց կիրառմամբ նրանք գործուն կապ են հաստատում ռուսաստանաբնակ հայրենակիցների հետ: Հուրիէ Շահինը ասում է. «*Ուսումնասիրելով արեւմտահայերէնը*՝

---

[11] *Hamşetsu Gor*, "Egemen Kültürün Asimilasyonu ve Birey Üzerindeki Etkisi," Maltepe-Ankara, 2014:

[12] https://www.facebook.com/photo?fbid=2460843704097391&set=a.65586071792 90.

[13] facebook.com/photo/?fbid=10161641895057150&set=a.10150810033602150 :

[14] Տե՛ս՝ hetq.am/hy/article/65006?fbclid=IwAR10TTAZ2h4LtCpJVDphdbC99OrACyxcXj :

հասկացայ, որ համշէնահայերէնը հայոց լեզուի բարբառներից մէկն է, դասական հայերէն է»[15]: Ըստ նրա՝ Արդուինի նահանգում ապրում է մօտ 25,000, Զաքարիայում եւ Դիւզջէում՝ շուրջ 1000 հայախօս հայ, իսկ Ստամբուլում՝ մօտ 1000 հոգի: Ռիզէում ապրող շուրջ 100,000 հայը, չնայած թրքախօսութեանը, գործածում է բազմաթիւ հայերէն բառեր: Ըստ Շահինի՝ Թուրքիայում գուցէ 200,000 թուրքախօս համշէնահայեր լինեն[16]:

Թուրքիայում քանակապէս մեծ խումբ են կազմում *դէօնմէ*, այսինքն՝ հաւատափոխ հայերը, որոնք ծնողներից լսել են ահասարսուռ պատմութիւններ, վախով են կրում իրենց ազգային պատկանելութիւնը, բայց եւ իրենց երեխաներին գաղտնի փոխանցում են հայ լինելու իրողութիւնը՝ որպէս ազգային ժառանգութիւն: Հայաշատ Ստամբուլից հեռու բնակուող թուրքախօս, քրդախօս, արաբախօս, ասորախօս ծպտեալ հայերին հետաքրքրում է հայկական ամէն ինչ, ուզում են հասու լինել հայոց պատմութեանն ու մշակոյթին, սակայն չեն կարողանում յաղթահարել լեզուական պատնէշը: Որոշ ծպտեալ հայեր իրենց երեխաներից թաքցնում են հայ լինելը՝ նրանց հոգեբանական տագնապի չենթարկելու համար: Էդիրնէի Մըյըկ թաղամասում ապրող թրքախօս հայերը չցանկացան ներկայանալ որպէս հայ, չնայած հարեւաններն այդ մասին ինձ տեղեկացրել էին: Անքարայում հայ են համարում մեծահարուստ գործարար Ռահմի Քոչին:

Հարցումների ընթացքում պարզեցինք, որ շատերը ճանաչում են այսպէս կոչուած բարեգութների, որոնք ապաստան են տուել հայ որբերի: Ըստ տեղեկատուների՝ «որբերի ծնողները մեռել էին կամ երեխաներին թողել, փախել էին»: Որբերի ու որբանոցների աննախադէպ քանակից կարելի է ենթադրել, որ անչափահասների աքսորը պետականօրէն կամ գուցէ ներքին կարգով հրահանգուած չի եղել: Ազգային արմատից զրկուածները յետագայում ենթարկուել են խառնամուսնութիւնների, որոնց թոռները գիտակցում են իրենց կիսով չափ հայ լինելը: Ի տարբերութիւն ծպտեալ հայերի՝ խառնածին հայերը, այսինքն՝ *քարշը-քարըշըկ*ներն ու *կրմանջի*ները, վտանգի զգացողութիւն չունեն: Խառնածին հայեր կան Մուշում (մօտաւորապէս 50 տոկոս), Տարօնի դաշտի Խորոնք, Քասուր, Փորգով, Չենգելի, Հացիկ գիւղերում, Էրզրումում (40 տոկոս), Ամասիայում (50 տոկոս) եւ այլուր:

Ըստ մեր հարցումների՝ հայերէն չիմացող հայեր են բնակւում Ադիամանի Թեփէ Բաղ թաղամասում եւ Բեսնի գիւղում, Ադանայի Գազի Փաշա թաղամասում (5 ընտանիք), Սեւերէկում (5 տոկոս), Կեսարիայի Թալաս թաղամասում, Մալաթիայում (5 տոկոս հայերէն իմացող հայ, մի այլ

[15] Յասմիկ Մարտիրոսեան, «Ռադիօլուր», skubi.net/stypendium2019_en.html?fbcl :
[16] Նոյն:

տեղեկատու վկայեց 10 տոկոս մահմեդական եւ քրիստոնեայ հայերէնախօս հայերի մասին), Մալաթիայի Ակչադաղ եւ Բույուկ Չիմիշ գիւղերում[17]:

Թուրքիայի եւրոպական մասի Կըյըկքէօյ, Կրկրարելի, Ուսկիւպ, Վիզէ, Չուքագպինար, Դեմիրքէօյ, Իգնիադա, Սիսլիոբա, Բէյանդիք, Լիմանքէօյ եւ անգամ ամէնախուլ փոքրիկ բնակավայրերում հայերի մասին հարցումներ կատարելիս ամէնուր լսեցինք. «*Մինչեւ առաջին համաշխարհային պատերազմը եղել են, սակայն հիմա չկան, գնացել են*»: Գնացած հայերը թողել են իրենց ստեղծած նիւթական եւ մշակութային արժէքները եւ բռնել աշխարհի բազմազան ու բազմատանջ ճանապարհները:

ՀԱՅՐԵՆԱԶՈՒՐԿ ՀԱՅԵՐԻ ԼԵԶՈՒՆ

Եղեռնից վերապրածները ցրուել են աշխարհով մէկ՝ իրենց հետ տանելով անօտարելի մի ժառանգութիւն՝ մայրենի լեզուն: Բնօրրանից զրկուածների մի մասին բախտ է վիճակուել նոր բնակավայրերում որոշակի փոփոխութեամբ պահպանելու բարբառը, միւս մասին այդ էլ չի վիճակուել: Գաղթականները Արեւելահայաստանում երբեմն իրենց բնակավայրերը հիմնել են բացառապէս համագիւղացիներով: Նման վայրերում լեզուական հարստութիւնը պահպանուել է նախնական վիճակով՝ ժամանակի պահանջով առաջացած մասնակի փոփոխութիւններով հանդերձ:

Ունենք լեզուական այսպիսի համառօտ պատկեր. ա) բարբառներ, որոնք գոյատեւել են որոշ փոխակերպումներով (Մուսա Լեռ, Սասուն եւն.), բ) բարբառներ, որոնք մեզ են հասել միայն գրքերի միջոցով՝ գրաւոր աղբիւրներով (Հաճըն, Զէյթուն եւն.), գ) բարբառներ, որոնք ընդելուզուել են այլ բարբառների եւ յառաջացրել նոր խօսուածքներ: Այսպէս՝ Կարինի տարածքի բնակիչների մեծ մասը տեղաշարժւում է դէպի Ջաւախք՝ համալրելով Կարնոյ բարբառի՝ նախորդ դարում հիմնադրուած Ախալցիխէի, Ախալքալաքի խօսուածքները: Ջաւախքի Հեշտիա, Թորիա, Ուժմանա, Դիլիֆ եւ Փոկա գիւղերում բնակութիւն են հաստատում բարբառախօս մշեցիներ: Մշեցիների եւ բագրեւանդցիների մի խումբ ապաստանում է Ապարանի, Մարտունու, Թալինի բնակավայրերում՝ պահպանելով Մուշի բարբառի խօսուածքները: Սասունի բարբառին՝ Գելեգուզանի, Հերթինի, Տալուորիկի, Հազզոյի խօսուածքներով, եւս յաջողւում է փրկուել կորստից: Այն հաղորդակցութեան միջոց է դառնում Թալինի եւ Աշտարակի շրջանի՝ բացառապէս սասունցիներով բնակեցուած գիւղերում: Սասունի բարբառի տարբեր խօսուածքներ միաւորւում են Իրինդ գիւղում:

---

[17] Մայրենի լեզուն չիմացող հայրենակիցներն ազգային արմատներին հաղորդակցւում են հայ հեղինակների թուրքալեզու գրականութեան, կայքերի, բլոգըրների եւ այլ միջոցներով: Այս առումով ներկայումս մեծ ներդրում են կատարում Բելգիայում բնակուող Յովսէփ Հայրենին՝ «Yukari Firat Ermenileri 1915 ve Dersim», «1915 Baglaminda Kurt - Ermeni Tarih Muhasebesi ve Guncel Tartismalar» կայքէջերով, յունաստանաբնակ Սեւան Նիշանեանը իր՝ «Türkiye'nin Ermeni Coğrafyasi» կայքէջով, Արիս Նալչին եւ այլք:

Մայրենի բարբառը կորցնում են Զէյթունի, Մարաշի, Հաճընի, Եւդոկիայի, Արաբկիրի, Խարբերդի, Երզնկայի, Չմշկածագի, Տիգրանակերտի, Ոզմի, Մոկսի, յետագայ անբարենպաստ զարգացումների հետեւանքով՝ Ագուլիսի հայերը: Բուլղարահայ գաղութում մոռացւում է Ռոդոսթոյի բարբառը: Վասպուրականցիները, ինչպէս նաեւ խութեցիները առանձին բնակատեղի չեն ստեղծում եւ շարժւում են տարբեր ուղղութիւններով: Լայնածաւալ ընթացքը պատճառ է դառնում Վանի հանրութեան մասնատման եւ բարբառի մահացման՝ բարբառային յատկանիշերի որոշ երանգներ թողնելով այլ խօսուածքներում: Վանեցի Յարութիւն Թուրշեանը բառարանագրել եւ կորստից փրկել է իր մայրենին: Բառարանի առաջաբանում նա գրում է. «*Իմ ծննդավայրը, որ հազարամեակներ շարունակ շողշողացել է ոչ միայն հայոց պատմութեան մէջ, այլեւ դրանից էլ շատ առաջ, այսօր սոսկ երազ ու յուշ է դարձել նրա հարազատ զաւակների համար: Վանեցին այսօր կայ ու բազմանում է, եւ այս բառարանը Վանի յուշարձանն է, այդ ժողովրդի բազմերանգ լեզուի յուշարձանը*»[18]:

Երեւանի Արաբկիր թաղամասում վերահաստատուած արաբկիրցիների լեզուն, ենթարկուելով գրական արեւելահայերէնի ազդեցութեանը, ամբողջովին ձուլւում է:

Բարբառների կորստեան պատճառ է դառնում նաեւ տարբեր վայրերի գաղթականների՝ մէկ բնակավայրում ապրելը: Ժամանակի ընթացքում առաջանում է գրական հայերէնի ազդեցութեանը ենթարկուած խօսակցական լեզուի մի նոր որակ՝ ներառելով միքանի խօսուածքներ եւ Արարատեան բարբառի լեզուատարրեր: Այդպիսի բնակավայրերից են՝ Ապարան, Թալին, Ծաղկասար, Ծաղկաշէն, Հնաբերդ, Շէնաւան, Վարդենիս, Օհանաւան եւն.: Մօտ խօսուածքներից առաջացած միատարրութիւն է գրանցուած Աշտարակի Ագարակ, Ձորափ, Ակունք գիւղերում, որտեղ Վանից, Բիթլիսից, Կարկառի Ծոկու գիւղից բռնագաղթուածների խօսուածքները միաձուլւում են:

Սակաւաթիւ են այնպիսի բնակավայրերը, որոնցում յաղթող է հանդիսացել խօսածքներից մէկը՝ ներառելով միւս խօսուածքները: Այսպէս՝ Բագաւանից՝ Դիադինից, Մուշից, Ալաշկերտից եւ Կոփից տեղահանուածները միաւորւում են Վարդենիսում՝ ընդհանուր ճանաչելով Դիադինի բարբառը՝ լեզուական որոշակի տարրեր ներմուծելով յաղթած խօսուածքի մէջ:

Կան բնակավայրեր, որտեղ տարբեր բարբառակիրներ հանդիպելով՝ պահպանում են իրենց խօսուածքները՝ առաջացնելով բառապաշարային եւ փոխըմբռնման այլ խնդիրներ: Ազգագրագէտ Արմէնուհի Ստեփանեանը, անդրադառնալով ներգաղթածների եւ տեղացիների լեզուամտածողական փոխընկալմանը, գրում է. «*Մայր էթնոսի ներսում ... հայերէնի երկբարբառ տարբերակուածութիւնը մղուեց առաջին պլան՝ խոչընդոտելով*

[18] Յարութիւն Թուրշեան, *Բառարան Վանի բարբառի*, Երեւան, 2018, էջ XIX:

հայրենադարձների ու տեղացիների մերձեցման գործընթացին»[19]: Աշտարակի Աւան գիւղում բնակութիւն են հաստատել Սասունի Իշխանաձորից, ինչպէս նաեւ Խութ-Բռնաշէնի Շէն, Շընիստ, Փիջոնք, Դաշտադէմ եւ Թաղավանք գիւղերի եղեռնազարկ հայեր՝ բնակավայրը բաժանելով միմեանցից խօսուածքներով տարբերուող երեք թաղամասերի՝ սասունցիների, խութեցիների եւ Մշոյ գուարսցիների:

Ներկայումս մեծ վտանգ է սպառնում Ղարաբաղի բարբառին: Արցախից տեղահանուածները, բնակութիւն հաստատելով հիմնականում ՀՀ, ՌԴ տարբեր վայրերում, ստիպուած են մայրենի բարբառը գործածել միայն ընտանեկան միջավայրում: Ի խնդիր մայրենի բարբառի պահպանութեան՝ մեծ ջանքեր է գործադրում ԼՂՀ գիտութեան վաստակաւոր գործիչ, բարբառագէտ Արմէն Սարգսեանը, որի բարբառային մատենաշարում օրըստօրէ ամբարւում է Արցախի բարբառային հարստութիւնը[20]:

Նշուած լեզուաւորակներն այսօր ՀՀում կրում են գրական արեւելահայերէնի ճնշող ազդեցութիւնը: Կապի եւ հաղորդակցութեան բազմաթիւ միջոցներ ազդում են բարբառային բառապաշարի վրայ՝ պատճառ դառնալով յատկապէս դարձուածային միաւորների մոռացման:

Այսպիսով, հայ ժողովրդի բռնի տեղահանութիւնները պատճառ են դառնում ոչ միայն մարդկային եւ նիւթական անդառնալի կորուստների, այլեւ լեզուամշակութային արժէքների խաթարման, հայերէնի տարածքային մեռնող տարբերակների հետ անհետանում են ժողովրդական պատկերաւոր ընկալումները, դարձուածքները, բանահիւսական ժառանգութիւնն ու

---

[19] Արմէնուհի Ստեփանեան, «*Հայրենադարձների ու տեղացիների փոխընկալման լեզուական դրսեւորումները*», *Հայ ժողովրդական մշակոյթ, պրակ 12*, ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ հրատ., 2004, էջ 151:

[20] Տե՛ս՝ Արմէն Սարգսեան, *Արցախեան հանելուկներ*, Ստեփանակերտ, Դիզակպլիւս, 2002. նաեւ նոյնի՝ *Արցախեան աւանդութիւններ*, Ստեփանակերտ, Դիզակպլիւս, 2007. նաեւ նոյնի՝ *Շաղախի ենթաբարբառը Հադրութի ենթաբարբառի միջավայրում*, Ստեփանակերտ, Դիզակպլիւս, 2009. նաեւ նոյնի՝ *Արցախի բանաձեւային բանահիւսութիւնը*, Ստեփանակերտ, Դիզակպլիւս, 2009. նաեւ նոյնի՝ *Արցախեան առակներ*, Ստեփանակերտ, Սօնա, 2011. նաեւ նոյնի՝ *Արցախեան զուարճախօսութիւններ*, Ստեփանակերտ, Վաչագան Բարեպաշտ, 2014. նաեւ նոյնի՝ *Ղարաբաղի բարբառի դարձուածաբանական բառարան*, Երեւան, ԷդիթՊրինտ, 2017. նաեւ նոյնի՝ *Մատենագիտութիւն Արցախի բանահիւսութեան գրառման եւ ուսումնասիրութեան*, Երեւան, Էդիթ Պրինտ, 2019. նաեւ նոյնի՝ *Ղարաբաղի բարբառի բառարան*, Էդիթ Պրինտ, 2019. նաեւ նոյնի՝ *Արցախի բանահիւսութիւնը*, Երեւան, Էդիթ Պրինտ, 2019. նաեւ նոյնի՝ *Արցախի ժողովրդագիտութիւնը. Ազգագրութիւն, հտր. 1-15*, Ստեփանակերտ, Էդիթ Պրինտ, 2019, 2020, 2021, Երեւան, Արմաւ, 2022-2024. նաեւ նոյնի՝ *Մատենագիտութիւն Արցախի ազգագրութեան ուսումնասիրութեան*, Երեւան, Էդիթ Պրինտ, 2020. նաեւ նոյնի՝ *Этнография Нагорного Карабаха* (Լեռնային Ղարաբաղի ազգագրութիւն), Ստեփանակերտ, Էդիթ Պրինտ, 2021. նաեւ նոյնի՝ *Հադրութի բառուբան*, Երեւան, Արմաւ, 2023 եւն.:

բանաձեւումները, ծածկալեզուն, իսկ ձուլուող բարբառներն ու խօսուածքները անվերադարձ կորցնում են լեզուական ժառանգութիւնը եւ նրանց կրողների հետքերը:

FORCED UPROOTINGS OF THE ARMENIAN NATION: A CAUSE OF THE CORRUPTION OF ITS LINGUO-CULTURAL HERITAGE (FIELD OBSERVATIONS)

(SUMMARY)

Haykanush Mesropyan
mesropyanhaykanush@gmail.com

Until the Armenian Genocide of the early twentieth century, the Armenian language had several dozens of Armenian dialects. With rare exceptions all of the dialects which were practiced in the Ottoman Empire disappeared after the Armenian Genocide.

The paper is an overview of the status of the current Armenian dialects. It notes that by and large most of the Eastern Armenian dialects still exist and are practiced by their native speakers. The author examines the western Armenian dialects, and explains that most of them disappeared, while others were carried by their native speakers until the older generation passed away, while their offspring in the Diaspora shifted to either literary Western Armenian or to a non-Armenian language. Other dialects are still practiced since their bearers settled in groups (like Anjar), and the new generation still uses the dialect alongside literary western Armenian. Some of these dialects which were carried by their speakers to Eastern Armenia had three different tracks: a) if the carriers of a dialect settled in groups, then the dialect survived, b) if the carriers were dispersed, the dialect did not survive, c) if a group of practioners of a dialect settled with another group using a different dialect, then these dialects were either mixed with each other and formed a hybrid dialect, or one of them imposed itself on the other.

Alongside the Armenians of the Republic of Armenia and the Armenians of the Diaspora, the paper focuses on the dialects of those Armenians who did not leave their native lands. According to the author, a large number of these Armenians had to shift to Turkish, causing the death of their dialect. Others who were converted to Islam initially preserved their dialect, but in time, fewer and fewer of their offspring spoke these dialects, which eventually died or barely survive. The author highlights a third group of dialects and highlights in particular the dialect of Hamshen, which is spoken by natives of the the southern shores of the Black Sea.

In analyzing the fate of these dialects the author argues that deportation and exile have been the basic cause of the disappearance of almost all of the Western Armenian dialects and warns that the Artsakh-Karabagh dialect may face a similar destiny soon if proper measures are not taken.

ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ
20ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Վաչագան Գրիգորեան
vachik_grigoryan@mail.ru

20րդ դարի հայ գրականութեան պատմութիւնը տարաբնոյթ պարբերացումների է ենթարկուել: Բարդութիւնը նրանում է, որ Արեւմտահայաստանը եւ Արեւելահայաստանը գտնւում էին տարբեր քաղաքական, տնտեսական ծիրի մէջ: Միասնական գրականութիւն, մշակոյթ արարելու ճիգերը բախուեցին անյաղթահարելի թուացող պատնէշների: Դարասկզբի Ցեղասպանութիւնը կասեցրեց ժողովրդի զարգացման ընթացքը, յետագայ տասնամեակները յօշոտուած ֆիզիկական եւ հոգեւոր մարմինը վերականգնելու ներքին նպատակ դարձան:

Այդուհանդերձ, դժուար է պատկերացնել, թէ գրականութեան երկու ճիւղերը կայացան իրարից անկախ, դրանք մշտապէս փոխլրացուել, հարստացել են միմեանց ձեռքբերումներով: Այլ կերպ հնարաւոր էլ չէ. հայ գրականութիւնը միասնական է ներքին բովանդակութեամբ, ինչպէս որ հայ ժողովուրդը՝ իր ճակատագրով, հոգեբանութեամբ ու նպատակներով: Ներքին միասնութիւնը՝ զուտ հոգեբանական առումով, նկատելի է անգամ 1918ից յետոյ, երբ առաջին հանրապետութեան ստեղծումով սահմանագծւում է արեւմտահայ գրականութեան անցումը սփիւռքահայ գրականութեան: Հայրենիքը կորցրած հայը դարձաւ ուրիշ երկրի քաղաքացի. սկսւում էր կեանքի նոր շրջան իր նոր խնդիրներով: Բայց այս ամէնով հանդերձ, իր նպատակներով հայ գրականութիւնը էութեան մէջ նոյնն է, ինչպէս որ նոյն ազգային պատկանելութիւնն ունի աշխարհով մէկ սփռուած հայութիւնը:

Ընդունելով հայաստանեան նորագոյն գրականութեան պարբերացումը՝ հարկ է նկատել, որ դրանում կարեւորուել են հասարակական կեանքում տեղի ունեցող որոշակի իրադարձութիւնները[1], մինչդեռ գրականութիւնն իր

[1] Սովորաբար ընդունուած է հետեւեալ շրջանաբաժանումը.- ա) 1918-20՝ նախապատրաստական փուլ գրականութեան զարգացման համար, բ) 1920-30ականներ՝ գրականութիւնը կանգնեց նոր ուղու վրայ, ստացաւ նոր արծարծումներ, թեմատիկ եւ գաղափարական ընդգրկումներ, իսկ հերոսն այդ օրերի մարդն էր, գ) 1941-56 փուլում երկերի թեման պատերազմն էր, գրւում են ազգի եւ ազգայինի վերաբերեալ գործեր, դ) 1956-65՝ խռուշչովեան ձնհալի տարիներ, ե) 1965-85՝ բրեժնեւեան չյայտարարուած պաշտամունքի կամ լճացման տարիներ, զ) 1985-91՝ միջանկեալ շրջան. 1985ին ղեկավարութիւնը ստանձնեց Միխայիլ Գորբաչովը: Սա որոշակի ազատութեան փուլ էր, որի ընթացքում նոր միտումներ են նկատւում ինչպէս քաղաքական, այնպէս էլ

ներքին ուղղուածութեամբ լուծւում են աւելի լայն խնդիրներ: Նկատի ունենալով, որ մենք գրական զարգացման ընթացքի մէջ ներառում ենք դարասկզբի արեւմտահայ գրականութիւնը, հետեւաբար 20րդ դարի հայ գրականութիւնը ներկայանում է 3 հիմնական շրջափուլերով. դրանք միմեանցից տարբերւում են իրենց առջեւ դրուած խնդիրներով[2]:

Առաջինը կարելի է համարել **որոնումների, փորձարկումների շրջան**, որն ընդգրկում է դարասկզբի առաջին տասնամեակները, երբ եւրոպական գրականութեան մէջ տեւականօրէն իշխում էր խորհրդապաշտութիւնը (այն սկիզբ էր առել դեռեւս 19րդ դարի 80ականներից), դրա ազդեցութիւնն զգալի էր ինչպէս արեւմտահայ, այնպէս էլ արեւելահայ գրողների ստեղծագործութիւնների վրայ:

Երկրորդ շրջանն սկսւում է նախորդ շրջափուլում ծաւալուած որոնումների, տարաբնոյթ ստեղծագործական միաւորումների գործունէութեան կասեցմամբ եւ նոր գաղափարական պարտադրանքով: 1934ին խորհրդային գրողների միութեան առաջին համագումարում սոցիալիստական ռէալիզմը դառնում է գրականութեան համար պարտադրուած նորմ՝ աշխարհայեացքային ուղղուածութեամբ ու նաեւ ստեղծագործական մեթոդով:

Սոցիալիստական ռէալիզմն այդուհետեւ իր զարգացման ընթացքում անցնում է վերելքների ու վայրէջքների կէսդարեայ շրջան: Այն որոշակի փոփոխութեան է ենթարկւում 20րդ դարի կէսերին, բայց էութեան մէջ չի փոխում բնոյթը. նպատակը սոցիալիստական ռէալիզմը բարեփոխելն ու կատարելագործելն էր եւ ոչ թէ դրանից հրաժարուելը: Խորհրդային արուեստի այս ձեւը գոյատեւեց մինչեւ 1980ականների աւարտը:

Երրորդը յետխորհրդային շրջանն է, գրականութիւնը ձերբազատւում է գաղափարական պարտադրանքից, գրական խօսքը ծաւալւում է այլեւս «բաց համակարգ»ի պայմաններում, որտեղ միահիւսւում են տարաբնոյթ գրական ուղղութիւններ, մասնաւորաբար յետարդիական գրականութեանը բնորոշ փիլիսոփայութեամբ ու ոճերի բազմազանութեամբ:

Իսկ որո՞նք են 20րդ դարի հայ գրականութեան վրայ ներազդող հիմնական գործօնները:

Առաջին.- Գրականութեան աւանդական փորձը, եւրոպական գրականութիւնից ստացած ազդակները ուղղակի կասեցուեցին

գրական կեանքում: Մէկ այլ բաժանման համաձայն՝ 1918-40 (առաջին շրջան), 1940-1953 (երկրորդ շրջան), 1954-1985 (երրորդ շրջան):

2 Գրական երեւոյթները ուսանողների համար աւելի ընկալելի դարձնելու նպատակով *20րդ դարի հայ գրականութեան պատմութիւն* դասագրքում առաջին երկու շրջանները ներկայացուած են երկու առանձին փուլերով, որոնումների շրջան (1900-20 եւ 1920-30) երկրորդ շրջան (1934-54 եւ 1955-85) եւ երրորդ շրջան (1986-2000): Այս բաժանումը աւելի ուսուցողական նպատակ ունի:

աննախադէպ յեղաբեկումներով, դարասկզբի Ցեղասպանութիւն, յեղափոխութիւն, քաղաքացիական կռիւներ, առաջին հանրապետութեան հիմնադրում, անկում, Խորհրդային Հայաստանի ձեւաւորում, կոլեկտիւացում՝ իր հետեւանքներով ու ստալինեան բռնութիւններով:

Երկրորդ.- Գրականութեան ընթացքի վրայ ազդում էր եւ նախորդների գրական փորձը (Աբովեան, Ալիշան, Պատկանեան, Րաֆֆի, Մուրացան եւ այլք):

Հարկ է նկատի առնել, որ խօսքը ոչ այնքան առանձին անհատների ստեղծագործական հմտութեան մասին էր, այլ ուղղակի գրական ընթացքի, դրա զարգացման ներքին միտումի: Ահա նախկին ձեռքբերումների եւ նոր ընկալումների միջեւ եղած պայքարով ստեղծւում էր նոր գրականութիւն՝ երեւոյթների ընկալման նոր կերպ ու աշխարհայեացք:

Երրորդ կարեւոր հանգամանքը, որ ազդում էր գրականութեան ընթացքի վրայ, կապուած էր երկրի զարգացման ուղիների հետ: Նոյնիսկ այն պարագայում, երբ գրողներն ընդունել էին խորհրդային կարգերի կանոնները, պահանջները եւն., միեւնոյն է՝ գրականութիւնը քիչ ջանք չգործադրեց ներքին հակասութիւնները յաղթահարելու ուղղութեամբ:

20րդ դարասկիզբը հայ մշակոյթի, գրականութեան զարգացման ամէնաբարդ ու հարուստ շրջափուլերից մէկն է: Ստեղծագործում են իրապաշտները, վիպապաշտները, խորհրդապաշտները, նորվիպապաշտները, ապագայապաշտները, ակմէիստները[3], բնութենապաշտները եւ այլք: «Զուտ ռէալիզմ» կամ «զուտ ռոմանտիզմ» բաժանումները, որոնք բնորոշ էին 19րդ դարակէսի հայ գրականութեանը, այլեւս դառնում են հազուադէպ: Օրինաչափ են գեղարուեստական տարբեր մեթոդների համադրումները, դրանց ներթափանցումները: Ակնյայտ է, որ դասական իրապաշտութիւնը իր տեղը զիջում է արդիապաշտ ուղղութիւններին:

Արեւմտահայ իրականութեան մէջ իրապաշտութեան զարգացման ուղիների վերաբերեալ տարակարծութիւններ առաջ եկան: *Մասիս* շաբաթաթերթի (1900-1901) էջերում ծաւալուած բանավէճի ընթացքում ոմանք պաշտպանում էին պոլսահայ գրականութեան առաջնայնութիւնը (Ռեթէոս Պէրպէրեան եւ այլք), իսկ միւսները «գաւառական գրականութեան» կողմնակիցներն էին (Արտաշէս Յարութիւնեան, Ռուբէն Զարդարեան, Առանձար):

Արեւելահայ իրականութեան մէջ այս հակասութիւնը որոշակիօրէն յաղթահարուած էր: Ռափայէլ Պատկանեանի եւ Սմբատ Շահազիզի վիպապաշտական չափածոն այլեւս չէր ներազդում գրականութեան ընթացքի վրայ: Առաջնայինը ժողովրդի կեանքի, նրա նկարագրի

[3] Ակմէիստները դաւանում էին «արուեստը արուեստի համար» սկզբունքը:

բացայայտմամբ առաջնորդուող գրականութիւնն էր: Այս գործում բաւականաչափ մեծ էր Յովհաննէս Թումանեանի դերը:

Հարուստ եւ միաժամանակ բարդ պատկեր էին ներկայացնում գրական այն երեւոյթները, որոնք առնչւում էին **վիպապաշտութեան:**

Վիպապաշտական սկզբունքներից չհրաժարուած, սակայն միանգամայն նոր գեղարուեստական միջոցներով իրականութիւնը վերակերտող գրողներն ամբողջացնում են նորվիպապաշտական շարժումը: Խօսքը մասնաւորաբար վերաբերում է Միսաք Մեծարենցին եւ Դանիէլ Վարուժանին, որոնց գրական այս կամ այն հոսանքին պատկանելու խնդիրն իրարամերժ եզրայանգումների դուռ է բացել: Իրականում նրանք նորվիպապաշտներ են՝ միանգամայն ուրոյն գեղարուեստական աշխարհով ու դրանց կայացման ինքնատիպ միջոցների գործադրմամբ:

Մեծարենցի բանաստեղծութիւնը **տպաւորապաշտութեան** լաւագոյն արտայայտութիւնն էր մեր գրականութեան մէջ, միաժամանակ եւրոպական փորձը հայրենի աւանդների հիմքի վրայ ներկայացնելու լաւագոյն օրինակ:

Արտայայտչապաշտութիւնը (էքսպրեսիոնիզմ՝ լատին. expressio, «արտայայտում» բառից) եւրոպական արուեստում եւ գրականութեան մէջ զարգանում էր 1905-20ականներին՝ որպէս պատասխան 20րդ դարի առաջին քառորդին առաջացած ընկերային ճգնաժամի:

Այս ուղղութեան ներկայացուցիչները մերժեցին 1900ականների կրաւորականութիւնը եւ ինչ-որ իմաստով իրենց համարեցին իրականութեան պատասխանատուն: Նրանք մերժեցին որոշակին, կիսատոներով արտայայտուելը եւ կարեւորեցին **ընդհանուրը, ինչը կեանքում համարում էին աւելի կարեւոր, որ թաքնուած էր «տեսանելի» շերտի տակ**: Իրենց ասելիքը նրանք արտայայտում էին ընդհանուր վերացարկուած կերպարներով:

Վարուժանը եւս ստեղծագործում էր այս սկզբունքով. նրա *Յեղին սիրտը* ուժի, ոգեւորութեան, պայքարի եւ դառն իրականութեան հակադրութիւն էր, *Հեթանոս երգերը*, յետագայում տպագրուած *Հացին երգը* միանգամայն շօշափելիօրէն առարկայական «երկրորդ իրականութիւն» էին՝ Վարուժանի երազը, որ հակադրւում էր կործանումների դարաշրջանին:

Խորհրդապաշտների հիմնական խնդիրը «նախասկզբնական գաղափարների» վերարտադրումն էր, ինչի արդիւնքում ողջ «բնականը» դիտւում էր որպէս «երեւութականութիւն», այն չունէր ինքնուրոյն գեղարուեստական արժէք, գրական բոլոր միջոցները միտուած էին «նախնական» էութիւնը ցուցադրելու կամ արտայայտելու համար:

Հայ գրականութեան մէջ խորհրդապաշտութեան ներկայացուցիչները միմեանցից խիստ տարբեր դէմքեր էին (Սիամանթօ, Շանթ, Տէրեան, Չարենց), բայց միասնական էին աշխարհը ճանաչելու գործընթացում

անհատի ապրումների, երեւակայութեան գործադրմամբ աշխարհի անտեսանելի էութեանը հաղորդակցուելու ներքին մղումով: «Նոր պոետիկայի» կայացման հիմնական աղբիւրը ոչ թէ առարկայական իրականութիւնն էր, այլ միայն գրողի անհատական «ես»ը, այս իմաստով յիշեալ գրողներն արմատապէս տարբերւում էին վիպապաշտ արուեստագէտների սերնդից:

Այս շրջանում կարեւոր էր եւ Ստեփան Զօրեանի դերը, որ Պռօշեանի, Աղայեանի, Շիրվանզադէի հետեւորդն էր: Բայց նա խորացաւ մարդկային հոգեբանութեան գաղտնիքների մէջ:

Սկսւում է գրականութեան մէջ ծանր վերափոխման մի շրջան: Ալիշանի, Րաֆֆու, Պատկանեանի, Պեշիկթաշլեանի հայրենասիրական մարտաշունչ գրականութիւնը մնում էր անցեալում: Թումանեանի, Իսահակեանի մօտ նախկին ոգեւորութիւնը չկար ազատագրական կռիւների հանդէպ: Տէրեանը հիասթափուած էր ազատագրական պատերազմի գաղափարախօսութիւնից: Չարենցը շուտ զգաց աղէտների բերած ազդեցութիւնը: Դեռ պատանի՝ հրապուրուեց, մասնակցեց կամաւորական շարժմանը, բայց հենց դա շրջադարձային էր. նա այլեւս հաշտ չնայեց բոլոր մարտական կոչերին:

Չարենցի մաքառող գրականութիւնը դարձաւ ուղենշային: 1921-24ին գրեց *Երկիր Նայիրի* վէպը՝ բիւրեղացնելով հայրենի Կարսի անկման ողբերգութիւնը, գրողն իր խօսքն առնչեց համազգային խնդիրներին: Չարենցեան հայրենասիրական բարձր ոգու առկայութեամբ Մահարին գրեց իր *Մանկութիւն*ը (1928), *Պատանեկութիւն*ը (1929-30)[4], Վահան Թոթովենցը՝ *Կեանքը հին հռովմէական ճանապարհի վրա*ն, Ակսել Բակունցը՝ *Կյորէս*, Մկրտիչ Արմէնը՝ *Հեղնար աղբիւր* վիպակները: Բակունցը գրեց «Ծիրանի փողը», «Լառ Մարգարը» պատմուածքները:

Ծնուեց քաղաքական երգիծավէպը: Սկիզբը Օտեանն էր. *Յեղափոխութեան մակաբոյծները, Ընկեր Փանջունի* (1909): Նրա յեղափոխական գործչի տիպը տրամագծօրէն հակադիր էր Րաֆֆու իդէալին: Վիպապաշտական վէպը վերածւում է երգիծական վէպի: Այս տրամաբանութեան մէջ են Չարենցի *Երկիր Նայիրի*ն, Թոթովենցի *Դոկտոր Բուրբոնեան*ը (1921, Պոլիս) Զօրեանի *Կապիտան Երամ* երգիծական վիպակը: Այստեղ է նաեւ Լեռ Կմասարը: Նա ծաղրում է Եւրոպան, ազգային քաղաքական գործիչներին, ծաղրում է դիւանագիտութիւնը, երբ հայկական պատուիրակութիւնները յոյս ունէին ինչ-որ բան ստանալ Ազգերի Լիգայից: 1920-30ականների երգիծական գրականութեան մէջ կարեւոր է Մատթէոս Դարբինեանի «Գլուխ պահող Կիկոսը»:

---

[4] Յետագայում այս գործերը տպագրուեցին մէկ գրքով՝ *Մանկութիւն եւ պատանեկութիւն*, Երեւան, 1930:

Մահարին արձագանգում է 20-30ականների կարօտի տրամադրութիւններին: *Մանկութիւն*, *Պատանեկութիւն*, *Երիտասարդութեան սեմին* (վերջինը առաջին երկուսից 25 տարի յետոյ՝ 1955ին):

Ահա գրականութեան այս առողջ երակը ստիպուած էր յաղթահարել գաղափարական սահմանափակումներով առաջնորդուող գրագէտների դիմադրութիւնը:

Եթէ փորձենք մէկ ընդհանուր առանցքի վրայ բերել հայ գրականութեան զարգացման ընթացքը, մասնաւորապէս 1934ից յետոյ, ապա կարող ենք ասել, որ գրականութիւնը իր ամէնատարբեր ժանրատեսակներով զարգանում էր մարդասիրական գաղափարների, ազգային հոգեբանութեան եւ կեղծ գաղափարական սահմանափակումներով առաջնորդուող գրականութեան միջեւ մղուող պայքարի բովում:

Պատերազմական թեմայի իմաստաւորումը եւս պարագծուած էր քաղաքական պարտադրանքով: Թէեւ պատերազմի ընթացքում թոյլ էին տրուել ճակատագրական սխալներ, ինչի հետեւանքով կորուստները շատ մեծ էին, այդուհանդերձ իշխում էր միայն յաղթական ոգեւորութիւնը: Ոչ ոք համարձակութիւն ունէր ասելու, թէ ինչ գնով է ձեռք բերուել յաղթանակը:

Քրիստափոր Թափալցեանի *Պատերազմ* (չորս հատոր), Հրաչեայ Քոչարի *Մեծ տան զաւակները*, Սերօ Խանզադեանի *Մեր գնդի մարդիկ*, Միքայէլ Շաթիրեանի *Զինուորներ* վէպերում գաղափարական կաշկանդումներն անհնար էին դարձնում պատերազմի իրական դէմքը ներկայացնելը:

1962ին տպագրւում է Բաղիշ Յովսէփեանի *Սերմնացանները չվերադարձան* վէպը, 1963ին Մկրտիչ Սարգսեանի *Կեանքը կրակի տակ*, 1970ին՝ *Սերժանտ Կարօն* գործերը, որտեղ առաջին անգամ խօսք է գնում պատերազմի դաշտում տեղի ունեցած իրողութիւնների, խորհրդային զինուորի տառապանքների, երկրի վարած ինքնագոհ քաղաքականութեան ողբերգական հետեւանքների մասին: Այս կարգի գրականութիւնը հակադարձում էր նախորդների՝ կեանքի ճշմարտութիւնը գաղափարախօսութեանը զիջելու նկրտումներին:

Նորերը դժուարութեամբ էին յաղթահարում երեսնականների սահմանափակումները, երբ անհատական թեմաները մերժւում էին: Կեղծ պահանջների կողքին քնարերգութեան մէջ եւս ծնւում էր գեղարուեստական բարձրարժէք գրականութիւնը: 1935ին տպագրւում է Յովհաննէս Շիրազի *Գարնանամուտ* ժողովածուն: Ջահելութեան, ուժի, կեանքի սիրոյ ինքնաբուխ թեմաները նախանշում էին չափածոյի այնպիսի նշաձող, որ տասնամեակներ անց անգամ այն յաղթահարելու էր: 1946ին տպագրուած *Լիրիկայով* Շիրազը պաշտպանում էր քնարերգութեան իրաւունքը: Համօ Սահեանը, Մարօ Մարգարեանը, Հրաչեայ Յովհաննիսեանը, Վահագն Դաւթեանը, Պարոյր Սեւակը գրում էին ինչպէս

> [….] կը ներկայանամ վաճառատուներէն միոյն, Էմմանուիլիս կոչուած, որոնք սիրով կը պատրաստեն ուզածներս ու մեծ Պոլիա[28] մը կապած, յաջորդ օրն իսկ նաւ կը նստիմ ու կ'անցնիմ Փաթրասի դիմաց Մեսոլոնկի ըսուած քաղաքը, որ երեւելի եւ պատմական քաղաք մըն է Յունաստանի անկախութեան հռչակման օրերուն իր ունեցած հերոսական պայքարին համար թուրքերուն դէմ: […] Այսպէս ուրեմն, երբ ցամաք կ'ելլեմ, պտոյտ մը կ'ընեմ քաղաքին մէջ՝ գաղափար մը կազմելու համար: Յաջորդ առաւօտուն ապրանքներս կը փոխադրեմ հրապարակի մը վրայ: Յոյն փոքրիկ տղայ մը կը վարձեմ, որ կը սկսի պոռալ ու յաճախորդներ կանչել: Այս միջոցաւ քանի մը օրերու մէջ բոլոր ապրանքներս գրեթէ կը ծախեմ ու, յետոյ մաս մը սննդեղէն (կարագ, պանիր, մածուն, ձուկ) առնելով կը վերադառնամ Փաթրաս, տունիններս չափազանց կ'ուրախանան իմ առաջին յաջողութենէս, մանաւանդ բերած ուտելիքներէս: […] Առանց ժամանակ անցընելու, նոր ծրար մը կը պատրաստեմ՝ աւելի ճոխ, ու կ'անցնիմ ուրիշ վայր մը՝ Աղրինէոն: Այս քաղաքը նշանաւոր է իր ծխախոտի արտադրութեամբ. հազարաւոր բանուոր ու բանուորուհիներ կ'աշխատին ծխախոտի աշխատանոցներու մէջ: Հոս ալ միեւնոյն ձեւով ապրանքներս կը ծախեմ ու կը վերադառնամ Փաթրաս: Ալ յաջողութիւնս ապահովուած էր. բոլոր Փելոփոնէսի մեծ թերակղզիին շրջանը կ'ընեմ՝ անցնելով Այիոն, Քեփարիսիա, Ֆիլաթրա, Քալամաթա, Քորենթս ու բազմաթիւ ուրիշ քաղաքներ, նաեւ Կարկալիանօ: Այս բոլորը ծովեզերեայ քաղաքներ են՝ շատ սիրուն տեսարաններով եւ իրար կապուած երկաթուղագիծով մը[29]:

---

[27] Նոյն, էջ 303-4:

[28] *Պոլիա*, «բոխչա»՝ հագուստ-կապուստի հին աւանդական ճամպրուկ:

[29] Բարթիկեան-Ղազերեան, էջ 305-6:

Ղազերեանը, նորարարութեան վարպետ էր՝ վառ երեւակայութեամբ եւ նպատակներին հասնելու կամքով ու յամառ.

[….] Գեղամ եղբայրս վերադարձած էր արդէն, ու պէտք էր իրեն գործ մը ապահովել: Կ'որոշեմ շարժուն խանութիկ մը շինել տալ չորս անիւի վրայ ու զետեղել Փաթրասի կայարանին առջեւը:
Վաճառականիս միջամտութեամբ հրամանը կը ստանամ թաղապետութենէն ու անմիջապէս գործի կը սկսիմ: Ամիս մը վերջը արդէն պատրաստ էր գեղեցիկ ու կոկիկ շարժուն խանութը, զոր կը լեցնեմ ամէն տեսակ պէտքացու ապրանքներով ու կը գրաւեմ իմ տեղս կայարանին առջեւը: Նորութիւն մըն էր ըրածս. շուտով ուրիշներ ալ ինծի հետեւեցան: Այս շարժուն խանութը Գեղամին համար էր, որ, լաւ մը վարժուելով, սկսաւ օգտակար ըլլալ տունին: Յաջողութիւններէս քաջալերուած՝ կ'ուզեմ ընդարձակել գործս[30]:

Հարազատների հմտութիւններն ու հնարաւորութիւնները նկատի առնելով՝ նրանց ներգրաւում էր աշխատանքի մէջ.

[….] Աղաւնի քոյրս շատ լաւ մարդու շապիկ կարող էր, Թագուհին կրնար օգտակար ըլլալ իրեն, որով կարող էի շապիկի գործին սկսիլ: Պէտք էր նախ տուներնիս փոխել: Կը յաջողիմ քաղաքին կեդրոնին մօտ տուն մը գտնել ու հոն փոխադրուիլ:
Վարձքով կը գտնեմ երկու կարի մեքենայ, վաճառականէս կ'առնեմ շապիկցու զեֆիր, ու կը սկսինք գործի: Աղաւնին թուղթի վրայ կը պատրաստէ բաթրոնները, ու ես ալ կը կտրեմ: Այն ի՜նչ մեղուաջան աշխատանք. կամքս ուժեղ էր ու միշտ լաւատես: Շինել կու տամ գեղեցիկ տուփեր՝ 12 շապիկ պարունակող, կը գտնեմ *քոլա* ընող մը, տպարանէ մը թիւեր կը ճարեմ նաեւ չինական մելան[31], մէկ խօսքով՝ ամէն միջոց ի գործ կը դնեմ, որպէսզի առաջին տուփը, որ 12 շապիկ պիտի պարունակէր իբր նմուշ, անթերի դուրս գար:
Յաղթանակը տարած էի: Գեղեցիկ օր մը, մաքուր հագուած տուփը ձեռքս, կը ներկայանամ շապիկի վաճառատուն մը, կը յայտնեմ, որ Իզմիրի գաղթականներէն եմ, բազմանդամ ընտանիք մը ունենալով՝ ստիպուած եմ քիչ մը աժան տալ, որպէսզի կարենամ միշտ գործ ունենալ, ու կը բանամ տուփը: Վաճառականը կը հիանայ գործին մաքրութեան վրայ ու անմիջապէս զիս քաջալերելու համար քանի մը տուփ ապսպրանք կու տայ՝ զանազան գոյներով:

---

[30] Նոյն, էջ 306-7:

[31] *Մելան* (յուն.՝ μέλας, **μελανός-սեւ, մուգ),** գրելու համար նախատեսուած որեւէ ներկանիւթի լուծոյթ, թանաք:

ԷԹՆՈՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԱՀԱՆՋ. ԱՐՏԱԳԱՂԹԸ՝ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԳՐՈՒԱՆ

Մարդկանց ընդվզումի եւ հոգեբանական ինքնապաշտպանութեան գործիքակազմերի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ ահագնացող ու մշտական տագնապի պայմաններում մարդը, հոգեկան անդորր գտնելու ակնկալիքով, կարող է մի վայրից միւսը տեղափոխուել: Նոր վայրում, սակայն, տագնապը կարող է խորանալ՝ ստիպելով մարդուն կրկին ճանապարհ ընկնել. նոր վայրը դիտարկւում է որպէս փրկող հանգրուան: Էթնոպաշտպան այս մեխանիզմը, բաւական վտանգաւոր երեւոյթ է, մասնաւորապէս էթնիկ խմբերի համար, քանի որ անգամ ֆիզիկական բնաջնջումից փրկուելու դէպքում մէկ այլ վայրում էթնոսը կարող է ե՛ւ քանակապէս, ե՛ւ որակապէս տուժել՝ երբեմն անդառնալիօրէն կորցնելով էթնիկ կարեւոր առանձնայատկութիւններ[32]:

Յունաստանից այլ երկրներ արտագաղթի մասին է Բարթիկեանի հետեւեալ գրառումը.

> Յունաստանը բնահան եւ բռնահան հայութեան համար մի առժամանակեայ օթեւան էր, եւ առիթը ներկայանալուն, հաւաքուելով գաղթում էին մի այլ երկիր, հոգ չէ թէ որտեղ, աշխարհի որ անկիւնը: Առիթից օգտուել էին Ֆրանսայի եւ Արժանթինի գործարանատէրերը, Բրազիլիոյ ֆերմէրները: Ժողովուրդի թշուառութիւնը շահագործող շոգենաւային գործակալների համար փառաւոր մի առիթ էր ներկայացել: Ֆրանսայից եկել էին մի շարք ներկայացուցիչներ, որոնք գործավար ու գործավարուհի էին ուզում: Եւ այսպէս, կարաւաննե՛ր փոխադրուեցին Մարսիլիա, բազմաթիւ գորգագործներ, մետաքսի մասնագէտներ եւ ամէն տեսակի արհեստագէտներ տանելով իրենց հետ: Հազարաւորներ գնացին Բրազիլիա եւ Արժանթինի անմշակ հողերը մշակելու: Մեկնում էին տասնեակներով եւ հարիւրեակներով, կապիտալիստների եւ կալուածատէրերի ճորտ դառնալու [….][33]:

Յունաստանից հեռանալու որոշումը Ղազերեանը կայացնում է երկրում դրամի արժեզրկման պատճառով.

> 1923 տարուոյ գարնան էր. յունական ընտրութիւններ տեղի կ'ունենան. կառավարութիւնը կը փոխուի, կ'իյնայ նաեւ անգլիական ոսկիի արժէքը, տրախմին[34] կ'արժէքաւորուի, ու այսպէս գիներու անկում մը տեղի կ'ունենայ, բազմաթիւ սնանկութիւններ տեղի կ'ունենան, իմ 24 տրահմի գնած զեֆիրի մեթրը 8 տրահմի կ'իջնէ, ահաւոր կորուստ կ'ունենամ: Ամբողջ երազներս ջուրը ինկած էին: Զզուած այս գիներու ելեւէջէն՝ կ'որոշեմ հեռանալ Յունաստանէն: Նամակ կը գրեմ պարոն Մարտիրոս

[32] Վահանեան, էջ 102:

[33] Բարթիկեան-Ղազերեան, էջ 184-85:

[34] Յունական դրամանիշը:

Սարըեանին, որ իմ շատ մօտիկ ընկերս ու բարեկամս էր եւ որ Փարիզի մէջ կարաժ [կառատուն] մը ունէր ու թաքսի [վարձակառք] կը բանեցնէր, որ փրկէ զիս Յունաստանէն ու, պէտք եղած էֆիտեւիտը[35] հանելով, ուղարկէ անմիջապէս Փաթրաս[36]:

Ափսոսանքի ապրումներ է պարունակում Ղազերեանի հետեւեալ գրառումը.

[….] ափսոս, որ այսքան զոհողութիւններով ու աշխատանքով ձեռք ձգած յաջողութիւնս կորսնցուցած՝ ստիպուած էի թողուլ սիրելիներս՝ նորանոր զոհողութիւններով՝ Ֆրանսայի մէջ դիրք շինելու եւ իմիններուս օգտակար ըլլալու երազով: Հրաժեշտ կ'առնեմ բոլորէն[….]: Այսպէս ուրեմն, 1923 թուի Օգոստոսի տաք օր մը կը մեկնիմ Փաթրասէն՝ խոստանալով իմիններուս ժամ առաջ օգնութեան հասնիլ: Կ'անցնիմ Աթենք, ուր Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչ պարոն Ղազարեան, պաշտօնական փաստիրդ [անցագիր] մը տալով, յունական նաւով մը կը հասնիմ Մարսէյ 12 Սեպտեմբերին [….] Հոս իսկապէս կեանքը հաճելի էր. մեծ թուով հայեր արդէն եկած հաստատուած էին, օդը շատ գեղեցիկ ու կը նմանէր Իզմիրի կլիմային՝ առատ պտուղներ ամէն տեսակ ու աժան: Ցաւով կը բաժնուիմ ընկերներէս ու կը մեկնիմ Փարիզ[37]:

Միտիլինին աշխատանքի տեսակէտից խիստ սահմանափակ միջավայր համարելով, իսկ երեխաների համար կրթական տեսակէտից՝ անյարմար՝ Խաչերեանը գրում է.

[….] Մտածում եմ ձմեռը անցկացնելուց յետոյ փոխադրուել Եգիպտոս, ուր հաստատուած են բաւական թուով ազգականներ [….], ուր կարելի է ազգային կամ եւրոպական դաստիարակութիւն տալ զաւակներիս: Սակայն Եգիպտոսը, իր մի շարք առաւելութիւններով հանդերձ, իսլամական երկիր է, եւ ես այսուհետեւ, այսպիսի դառը փորձութիւններից յետոյ, չեմ փափաքում իսլամական լծի տակ մտնել [….] Դեռ վերջնական որոշում չկայացրած՝ ահա Սելանիկից Միքայէլ Նաթանեանի ստորագրութեամբ հեռագիր եմ ստանում, որով ինձ առաջարկւում է նոյն քաղաքի բարեգործականի դարմանատան բժշկութիւնը[….] հեռագրով պատասխանում եմ, թէ ընդունել եմ առաջարկուած պաշտօնը[38]:

---

[35] *Էֆիտեւիտ* (ֆրանս.՝ affidavit), հաւատարմագիր:

[36] Բարթիկեան-Ղազերեան, էջ 307-8:

[37] Նոյն, էջ 308-9:

[38] Սաքայեան, էջ 91-92:

ԿԵԱՆՔՆ ԻԲՐԵՒ ԲԱՑԱՐՁԱԿ ԱՐԺԷՔ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ

Մեր օրերում, երբ խամրել են Հայրենիքի մասին իրական պատկերացումները, դրանք վերստին վերականգնելու եւ հայրենիքն արժեւորելու լաւագոյն մեթոդը վերապրողների վկայութիւնների տողերում հայրենիքի շունչն ու ոգեղէնութիւնը զգալու ունակութեան արթնացումն է: Երբ խօսքը վերաբերում էր Հայրենիքին եւ հայրենադարձութեանը՝ Բարթիկեանի եզրայանգումներն անբեկանելի են, իսկ ձեւակերպումներում յստակ է ուղերձը՝ «Ոչ մի երկիր պայծառ հեռանկար չունէր հայութեան համար».

> Հայը Թուրքիայից դուրս էլ հանգիստ չէր: Հազարապատիկ ու բիւրապատիկ անգամներ ճաշակել էր աղին ու լեղին: Խաղալիք էր դարձել ամէն տեսակ քամու: Աշխարհի մեծ ու փոքր ազգերի արհամարհանքին էր ենթարկուել: Ռասայական ատելութիւններ, ծուռ նայուածք ու ծաղրանք, մի տեղ «սալ էտրանժէ»[39], մի ուրիշ տեղ (լաւագոյն դէպքում) «պալիո՛ արմենիս»[40] բացականչութիւնը իր հասցէին, բուրժուական երկրների ամէն մի անարգանքին էր ենթարկուել: Նոյնիսկ արդարադատութեան օրգանները կողմնակցութիւն էին անում, երբ իմանում էին, թէ հայ է: Դատարանում հայու իրաւունքը չէր պաշտպանւում: Ոստիկանատնում իրաւունքը յանցանքի էր վերածւում: Աշխատանքի, բնակութեան, երթեւեկի, կրթական եւ ամէն տեսակի ուրիշ հարցերում դժուարութեան էր հանդիպում հայը: Սեղմումներ, արժէքներ եւ իրաւունքի զրկումներ գործադրւում էին հայերի համար: Միայն մեծ խօսքեր լսւում էին չորս կողմից: Մեծաշռինդ խոստումներ, իր զգացմունքները շոյող խօսքեր, բայց դրական ոչինչ[….][41]:

Բարթիկեանը, միակ փրկութիւնը հայրենադարձութեան մէջ տեսնելով, «արեւաշող Երեւանի» ջերմութիւնը զգալով՝ գրում է.

> 1946 թուի գարնանը, ծիծեռնակների հետ բերեց եւ հայրենիք ներգաղթի խաբրիկը: Սովետական իշխանութիւնը թոյլատրում էր վտարանդի հայութեան վերադարձը իրենց օջախում՝ Սովետական Հայաստանում: Ոտքի էր կանգնել գաղթաշխարհը. ցնծութիւն, արձանագրութիւն եւ պատրաստութիւն [….][42]:

Բարթիկեանի հաղորդմամբ՝ հայրենակարօտ բազմութիւնն ամէն օր առաջնորդարանի առաջ էր խռնւում՝ շոգենաւերի ժամանման լուրը ստանալու համար.

---

[39] *Սալ էտրանժէ* (ֆր.՝ sale étranger), կեղտոտ օտար:

[40] *Պալիո՛ արմենիս* (յուն.՝ παλιό αρμενης), չար, վատ հայ:

[41] Բարթիկեան-Ղազերեան, էջ 204:

[42] Նոյն, էջ 208:

Անհամբեր էր դարձել ժողովուրդը: Նաւի յապաղումը ջղային էր դարձրել մարդկանց: Եւ մի բարի օր լուրը տարածուեց: Օգոստոսի 15ին Աթենքի նաւահանգիստ Պիրէայում ժամանել էր «Տրանսիլվանիա» նաւը, որը հայրենիք էր փոխադրելու բազմաչարչար հայութեանը: Մեկնողների դէմքի վրայ արտայայտւում է հրճուանքի ծիծաղ, իսկ մնացողների վրայ՝ տխրութիւնը: Մին ուրախութիւնից արտասւում է, իսկ միւսը կարաւանին մաս կազմած չլինելու տխրութիւնից:

Ահա մի հայրենադարձ կին: Ձեռքին մի ծրար, որ գուրգուրանքով եւ ամուր կպցրած իր կրծքին:

– Ի՞նչ է այդ, ի՞նչ ես տանում հայրենիք այդ ծրարի մէջ, – հարցնում ենք:

Վշտի եւ ուրախութեան խառն մի նայուածքով պատասխանում է. «Ամուսինս մեռնելու ժամանակ ինձ կտակեց, որ հայրենիք գնալու դէպքում, իր աճիւնը չթողնեմ այստեղ: Չէի կարող ոսկորները վերցնել, ուստի նրա գերեզմանից հող վերցրի եւ տանում եմ հայրենիք[43]:

Բարթիկեանի արձանագրած իւրաքանչիւր դրուագ պատմական արժէք ներկայացնող իրողութիւն է.

Ճանապարհին մեր նաւը, մի մաս ներգաղթողներ էլ առնելով Սելանիկից, յաջորդ առաւօտ արշալոյսին, որ Կիրակի էր, անցնում էինք Պոլսի առաջից: Օսմանեան կայսրութեան եւ իթթիհատական Թիւրքիայի մայրաքաղաքը, բնութեամբ գեղեցիկ, սակայն մտքով ոճրածին, արիւնո՜տ ոստան: Համիդի պալատները՝ «Եըլտըզ»[44], «Չրաղան»[45], «Տոլմա բաղչէ»[46], շարքով մեր տեսողութեան առաջ են՝ ուր յղացուել էին հին ու նոր Թիւրքիայի հայահալած ծրագրերը: Անցնում էինք երբեմնի հայ կուլտուրայի եւ գրականութեան բոցավառ օջախից, որի քրմերը անխնայօրէն յօշոտուեցին իթթիհատական սեւ ձեռքերից: Պոլի՜ս, հայկական կեանք ու կենդանութեան երբեմնի կենտրոն, որ այժմ լռել, մեռելական երեւոյթ է ստացել[47]:

Բարթիկեանը, զննելով վերապրող-հայրենադարձներին՝ փորձում էր ընթերցել նրանց իւրաքանչիւրի պատմութիւնն առանձին-առանձին: Դա իրենց ցաւի, բայց եւ մի ողջ ժողովրդի պատմութիւնն էր. լաւատես էր Բարթիկեանը, քանի որ համոզուած էր՝ «անտէր չէր հայը այլեւս, տէր ու պաշտպան ունէր այժմ».

---

[43] Բարթիկեան-Ղազերեան, էջ 209:

[44] *Եըլտըզ* (թուրք.՝ Yildiz Sarayi), աստղային պալատ, սուլթան Աբդուլ Համիդ Բ.ի նստավայրը Ստամբուլում (1876-1909): Այն կառուցել են Բալեանները:

[45] *Չրաղան* (թուրք.՝ Çirağan Sarayi), Չրաղանի պալատ, սուլթան Աբդուլազիզի նստավայրը (1876ից): Այն կառուցել են Բալեանները:

[46] *Տոլմա բաղչէ* (թուրք.՝ Dolmabahçe Sarayi), Դոլմաբահչէի պալատ, օսմանեան սուլթանների կեցավայր (1856ից): Այն կառուցել են Բալեանները:

[47] Բարթիկեան-Ղազերեան, էջ 209-10:

«Տրանսիլվանիա»ով գնացող իւրաքանչիւր հայ իր առանձին պատմութիւնը ունէր արիւնով գրուած: Նրանք Տէր Զօրի անապատների, Եփրատի ջրերի եւ Իզմիրի քեմալական նախճիրի՝ միլիոնաւոր զոհերի հրաշքով ազատուածներն էին, ճռաքաղը[48]՝ հայկական երբեմնի յուռթի այգուց: Դիտում էին՝ ցասումով, յիշելով իրենց զոհերը՝ թրքական բարբարոսութեան: Դիտում էին՝ գլուխնին բարձր բռնած, արհամարհանքով, որ այժմ իրենք չեն այն հայերը, որոնք անհովիւ ոչխարի հոտի նման թրքական սպանդանոցն էին տարուել [....][49]:

Բարթիկեանի համոզմամբ՝ Հայրենիքի գիրկը վերադարձողների հոգիների վրայ ճնշող ծանրութիւն չկար այլեւս, թեթեւացած էին սրտերը, «ոճրագործն» ու «անտարբերն» անցեալում էին: Վաւերագրողի յաջորդ վկայութիւնն ամէնապայծառներից է, որտեղ գործածել է «արեւաշող», «հրճուանք», «ուրախութեան արտասուք», «երանութիւն» բառերը.

«Ազատութի՛ւն: Ի՜նչ խորհրդաւոր բառ: Ազատ լինել մարդու շահագործումից, ազատ լինել ռասսայական հալածանքից, հեռու լինել սուրից եւ հուրից, որ կարող է գալ՝ Համիդից թէ Թալէաթից, Էնվէրից թէ Քեմալից, իթթիհատական թէ միլլի Թուրքիայից եւ հեռու լինել «քաղաքակիրթ» կոչուած, բայց շողոքորթ, նենգամիտ ու շահագործող երկրներից [....] Միքանի օր հանգստանալուց յետոյ, հայրենադարձները գնացքով մեկնեցան դէպի Սովետական Հայաստան եւ արեւաշող Երեւան: Դարաւոր եւ ալեհեր Արարատը դիտում էր եւ հրճւում: Ինք, որ վկան էր եղել իր զաւակների անհամար գաղթերին ու նախճիրներին, ողբերին ու արցունքներին, այս անգամ վկայ էր լինում նրանց հայրենադարձութեանը, ներգաղթին, ուրախութեան արտասուքին ու երանութեան զեղումներին[50]:

ԱՄՓՈՓՈՒՄ ԵՒ ՆՈՐ ՍԿԻԶԲ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Զմիւռնիայի հայերը տարագրութեան եւ հայրենադարձութեան խաչմերուկում, ամէնածանր ապրումներին զուգընթաց, կարողանում են ճիշտ գնահատել կատարուածի ողջ լրջութիւնը: Խաչմերուկն ինքնատիպ խորհուրդ ունի: Արտաքին հայեացքից թւում է, թէ խաչմերուկում յայտնուելով՝ կորցնում ես զգօնութիւնդ ու կողմնորոշուելու ունակութիւնդ: Սակայն խաչուղին ուղղորդում է գլուխը վեր յառած տարագրին. դա խաւարից լոյս առաջնորդող ուղին է, երբ վերապրողի կամքն ամուր է, միտքը՝ առողջ, ապրելու եւ արարելու ցանկութիւնը՝ անսասան: Վերապրողները գիտակցել են տարագրութեան եւ հայրենադարձութեան

[48] *Ճռաքաղ*, այգեկութից յետոյ մնացած ճիռերը քաղել-ժողովելը, բերքի վերջին մնացորդները հաւաքելը:

[49] Բարթիկեան-Ղազերեան, էջ 210:

[50] Նոյն, էջ 211-212:

հատուող ուղիների պատմութիւնների կարեւորութիւնը, դրանք փոխանցելու, հետեւապէս նաեւ փրկելու իրենց առաքելութիւնը: Այդ վկայութիւնները, դադարելով անձնական լինելուց, դարձել են Հայաստանի ու հայ ժողովրդի պատմութիւնը: Մեծ է եղել հայրենադարձութեան խանդավառութիւնը, եւ բազմազան՝ այն ապահովող եւ իրականացնող կազմակերպութիւնները, անհատ-բարեգործները[51]:

[51] 1926ին Հայկական բարեգործական ընդհանուր միութեան (ՀԲԸՄ)՝ Ֆիլադելֆիայում (ԱՄՆ) տեղի ունեցած հանդիպման ժամանակ որոշում է ընդունուել ֆինանսավորել ՀԽՍՀում նոր աւանի կառուցումը: Ծրագրի հիմնական նպատակը Հայոց Ցեղասպանութիւնը վերապրած հայ ընտանիքների հայրենադարձութիւնն էր: 1930 Ապրիլի 25ին Փարիզում Հայաստանի կառավարութեան եւ ՀԲԸՄ կենտրոնական վարչութեան ներկայացուցիչների միջեւ ստորագրւում է «Համաձայնագիր Նուբարաշէնի տիպար աւանի կառուցման մասին»: Դրա հիման վրայ 1930ի ամռանը ակադեմիկոս Ալեքսանդր Թամանեանի նախագծով Երեւանից 7 կլմ. հարաւ-արեւելք սկսւում է աւանի շինարարութիւնը:
Նուբարաշէնի առաջին բնակիչները հայրենադարձուել են Յունաստանից, Ֆրանսայից, Բուլղարիայից, Լիբանանից եւ Սիրիայից: 1932ին Նուբարաշէնն իր հիւրընկալ դռները բացում է առաջին հայրենադարձների առջեւ՝ շուրջ 70 ընտանիք: Յունաստանից աւանում բնակութիւն հաստատած առաջին գերդաստաններն էին՝ Քէօսեանները, Բերբերեանները, Կզլեանները, Պարունակեանները, Չիլինգիրեանները, Մուշլեանները, Թաթարեանները, Չալիկեանները, Օհանեանները, Օրուջեանները եւ այլք: Նուբարաշէնում վերաբնակեցուեցին Հայոց Ցեղասպանութիւնը վերապրած հայ ընտանիքներ, այդ թւում՝ Զմիւռնիայի հայեր: Նուբար Թադեւոսի Բերբերեանը՝ Նուբարաշէնի առաջին նորածինը, լոյս աշխարհ է եկել 1933 Յունուարի 10ին. ծնողները՝ Թադեւոս եւ Մարգարիտ Բերբերեանները, հայրենադարձուել էին 1932ին Յունաստանի Սալոնիկ քաղաքից: Նրանց է յատկացւում Նուբարաշէնում կառուցուած առաջին տունը (մեր հանդիպման ընթացքում Նուբար Բերբերեանը պատմեց ծնողների եւ մասնաւորապէս մօր՝ Զմիւռնիայի կոտորածների վերապրող Մարգարիտ Ղազարի Բերբերեանի յուզիչ պատմութիւնը):

A MICROHISTORY OF TRANSITION AND TRANSFORMATION, THE ARMENIANS OF SMYRNA: DEPORTATION TO GREECE AND REPATRIATION

(SUMMARY)

Tehmine Martoyan
tehminemartoyan@gmail.com

The paper is based on the eyewitness accounts of four individuals who were uprooted to Greece during the Smyrna affair and then were repatriated to Soviet Armenia. They are validated by articles published in the local Armenian newspaper of the time, *Nor Or*.

The accounts are memoires and diaries of Mikayel Partigian, Ohannes Ghazerian, Megerich Avedian and doctor Garabed Khacherian

The author notes that the uprooting from Smyrna to Greece and the repatriation to Armenia constitute shifts and changes in the life of these victims. However, the whole process and particularly the last phase of repatriation can be considered a transformation as they cross from statelessness to becoming members of a nation, and from instability to a stable life.

ՔԱՂԱՔԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920-1930ԱԿԱՆՆԵՐԻՆ

Խաչատուր Ստեփանեան
kh.stepanyan@gmail.com

ՆԱԽԱՄՈՒՏՔ

Հայաստանում քաղաքային կեանքի, ընկերային միջավայրի վրայ քաղաքակենտրոնացման (ուրբանիզացիայի) գործընթացների ազդման պատմական թէ՛ դրական, թէ՛ բացասական փորձի ուսումնասիրութիւնը ոչ միայն գիտական, այլեւ գործնական նպատակներ է հետապնդում: Խորհրդային ժամանակաշրջանի քաղաքային միջավայրի ձեւաւորման, նրա առանձնայատկութիւնների, փոխակերպումների վերաբերեալ վերլուծութիւնների անցկացումը աւելի կը հեշտացնի ներկայ քաղաքակենտրոնացման գործընթացների կառավարումը:

Քաղաքակենտրոնացման ուսումնասիրութիւնը համեմատաբար աւելի նոր ուղղութիւն է պատմագիտութեան մէջ: Թերեւս սրանով է պայմանաւորուած, որ թեման հայ պատմագրութեան մէջ շատ քիչ է ուսումնասիրուած[1]: Թեման որոշակիօրէն լուսաբանուած է ռուս խորհրդային եւ յետխորհրդային պատմագրութեան կողմից՝ Խորհրդային Միութեան քաղաքակենտրոնացման պատմութեանը նուիրուած հետազօտութիւններում, որտեղ ներկայացուած է ԽՍՀՄում քաղաքակենտրոնացման ընդհանուր հայեցակարգը, սոցիալիստական քաղաքի կառուցումը, քաղաքային ընկերային միջավայրը, քաղաքում ապրողների առօրէական կեանքը եւն.: Ընդ որում, հարցերը քննարկուել են

[1] Խնդրին ժողովրդագրութեան, տնտեսութեան տեսանկիւնից անդրադարձել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագէտ Վլադիմիր Խոջաբէկեանը (Վ. Խոջաբէկեան, *Հայաստանի բնակչութեան վերարտադրութիւնը եւ տեղաշարժերը XIX-XX դարերում եւ XXI դարի շէմին*, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանեանի անուան տնտեսագիտութեան ինստիտուտ, Երեւան, 2002. նաեւ նոյնի՝ *Հայաստանի բնակչութիւնը եւ նրա զբաղուածութիւնը (1828-1978)*, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, Երեւան, 1979. նաեւ նոյնի՝ *Ագրարային քաղաքականութիւնը եւ գիւղական բնակչութեան տեղաշարժերը*, «Գիտելիք», Երեւան, 1989. նաեւ նոյնի՝ *Демографические аспекты урбанизации в Армянской ССР (Հայկական ԽՍՀում քաղաքակենտրոնացման ժողովրդագրական տեսանկիւնները)*, ՀՍՍՀ ԳԱ , Երեւան, 1990. նաեւ նոյնի՝ *Демография и проблемы занятности в Армении с начала XIX веков до середины XXI века (Ժողովրդագրութիւնը եւ զբաղուածութեան հիմնախնդիրները Հայաստանում XIX դարի սկզբից մինչեւ XXI կէսերը)*, Գիտութիւն հրատ., Երեւան, 2006:

թէ՛ տնտեսական, թէ՛ ընկերաբանական, թէ՛ ժողովրդագրական, թէ՛ կրթամշակութային, թէ՛ բնապահպանական տեսանկիւններից:

Սոյն հետազօտութեան հիմնական նպատակը միջգիտակարգային վերլուծութեան հիման վրայ 1920-30ականներին Խորհրդային Հայաստանում քաղաքակենտրոնացման եւ քաղաքային ընկերային միջավայրի փոխակերպումների գործընթացի վերհանումն է:

Հետազօտութեան խնդիրներն են.- ա) ուսումնասիրել քաղաքակենտրոնացման գործընթացները Խորհրդային Հայաստանում 1920-30ականներին, բ) վեր հանել արդիւնաբերականացման ազդեցութիւնը Խորհրդային Հայաստանի քաղաքների զարգացման վրայ 1920-30ականներին, գ) համեմատական վերլուծութեան ենթարկել Խորհրդային Հայաստանի քաղաքների ընկերային-ժողովրդագրական ներուժը 1920-30ականներին, վեր հանել քաղաքների ընկերային ենթակառուցուածքների փոխակերպման շարժը եւ առանձնայատկութիւնները:

Հետազօտութեան առարկան 1920-30ականների Խորհրդային Հայաստանի քաղաքների քաղաքային միջավայրի փոխակերպումների պատմական փորձի ուսումնասիրումն է խորհրդային քաղաքակենտրոնացման պայմաններում: Հետազօտութիւնը կատարուել է Երեւան քաղաքի օրինակով: Հետազօտութեան ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1921-39 շրջանը: 1921ը որպէս սկիզբ ընդունել ենք Հայաստանում խորհրդային իշխանութեան վերջնական հաստատման եւ նոր տնտեսական քաղաքականութեանն անցնելու պարագայով պայմանաւորուած: 1939ը որպէս հետազօտութեան ժամանակագրութեան վերին սահման ընդունել ենք նախապատերազմական շրջանի վերջին մարդահամարի պարագան հաշուի առնելով: Հետազօտութեան համար որպէս սկզբնաղբիւր հանդիսացել են համապատասխան իրաւական ակտերը, հրապարակուած փաստաթղթերը, արխիւային փաստաթղթերը, տեղեկագրերը, մամուլի նիւթերը, յուշագրութիւնները: Բազմաթիւ սկզբնաղբիւրներ գիտական շրջանառութեան մէջ են դրւում առաջին անգամ:

Հետազօտութեան տեսական-մեթոդաբանական հիմքը հանդիսանում է քաղաքային ընկերային միջավայրի ուսումնասիրութեան միջգիտակարգային մօտեցումը՝ այն ներկայացնելով որպէս «մարդ-մարդ» եւ «մարդ-քաղաք» յարաբերութիւնների ամբողջութիւն: Պատմագիտական առանձնայատուկ մեթոդներից օգտագործուել են պատմատիպաբանական, պատմահամեմատական եւ հիմնախնդրա-ժամանակագրական մեթոդները:

Հետազօտութեան նորոյթը համակարգային եւ համեմատական վերլուծութեան հիման վրայ 1920-30ականներին Խորհրդային Հայաստանի քաղաքակենտրոնացման, քաղաքային ենթակառուցուածքների եւ ընկերային միջավայրի փոխակերպման առանձնայատկութիւնների վերհանումն է:

Հետազօտութիւնը լայնօրէն կը մեծացնի նմանատիպ ուսումնասիրութիւնների շրջանակը թէ՛ աշխարհագրական եւ թէ՛ ժամանակագրական առումներով: Նմանատիպ հետազօտութեամբ կարելի է ուսումնասիրել Խորհրդային Հայաստանի պատմութեան յաջորդ ժամանակաշրջանների քաղաքակենտրոնացման եւ քաղաքային կեանքի փոխակերպումները, ինչպէս նաեւ հայութեան տեղաշարժերը եւ քաղաքային կեանքի փոխակերպումները Խորհրդային Հայաստանի սահմաններից դուրս, օրինակ՝ անդրկովկասեան միւս հանրապետութիւններում, Հայոց Ցեղասպանութիւնից յետոյ առաջացած հայկական գաղթօճախներում:

ՄՈՒՏՔ

1920ին Հայաստանի Հանրապետութեան խորհրդայնացումից եւ ԽՍՀՄ կազմաւորումից յետոյ Հայաստանն ընդգրկուեց խորհրդային ընդհանուր տնտեսական համակարգի մէջ: 1920ականների սկզբին կոմունիստական կուսակցութիւնը Լենինի գլխաւորութեամբ մշակեց մէկ առանձին երկրում սոցիալիզմ կառուցելու տեսութիւնը: Դրա կարեւորագոյն բաղադրիչներն էին երկրի ճարտարարուեստականացումը, որպէս սոցիալիզմի նիւթատեխնիկական հիմքի ստեղծման կարեւորագոյն գործօն, գիւղատնտեսութեան խմբայնացումը եւ մշակութային յեղափոխութիւնը: 1925ին Խորհրդային Միութիւնը որդեգրեց ճարտարարուեստականացման ուղի, ըստ որի ԽՍՀՄը մեքենաներ եւ սարքաւորումներ ներմուծող երկրից պէտք է վերածուէր այդպիսիք արտադրող երկրի, որպէսզի ապահովուէր երկրի տնտեսական ինքնուրոյնութիւնը: Հայաստանը եւս ընդգրկուեց ճարտարարուեստականացման ծրագրի մէջ: 1925 Դեկտեմբերին ՀամԿ(բ)Կ 14րդ համագումարն առաջադրել է երկրի արդիւնաբերականացման խնդիրը[2]: Հարկ է արձանագրել, որ Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ արդիւնաբերութեան զարգացման միջին մակարդակից աւելի բարձր արդիւնքներ էր ցոյց տալիս: Եթէ 1928-40՝ ԽՍՀՄ արդիւնաբերութեան զարգացման միջին տարեկան թափը կազմեց 16, ապա ՀԽՍՀում՝ 19,9%[3]:

ՔԱՂԱՔԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խորհրդային Հայաստանում 1920-30ականներին քաղաքակենտրոնացումը սերտօրէն առնչւում էր տնտեսական վերակազմակերպումների հետ եւ պայմանաւորուած էր արդիւնաբերականացման ու խմբայնացման

---

[2] *ՍՄԿԿը համագումարների, խորհրդաժողովների եւ կենտկոմի նիստերի բանաձեւերում ու որոշումներում, հտր. 3 (1922-1925)*, ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ին-տ, Հայկ. ֆիլ., Երեւան, 1987, էջ 565:

[3] Խոջաբէկեան, *Հայաստանի բնակչութիւնը եւ նրա զբաղուածութիւնը*, էջ 285:

գործընթացներով: Հանրապետութեան արդիւնաբերական զարգացումը ընթանում էր բարձր թափերով, ունէր յատուկ մասնագիտական ուղղուածութիւն (հանքարդիւնաբերութիւն, մեքենաշինութիւն, քիմիական արդիւնաբերութիւն, թեթեւ արդիւնաբերութիւն եւն.) եւ քաղաքակենտրոնացումն էլ տեղի էր ունենում այդ տրամաբանութեամբ:

ԽՍՀՄ արդիւնաբերականացումը ենթադրում էր քաղաքային բնակչութեան թուի աւելացում, որը պէտք է ապահովուէր դէպի արդիւնաբերական կենտրոններ գիւղական բնակչութեան տեղաշարժերով: Ակնյայտ էր, որ քաղաքային կեանքի զարգացումը, քաղաքային ընկերային նոր միջավայրի ձեւաւորումը կամ փոխակերպումը անմիջական կապ ունէր քաղաքների զարգացման հետ:

Երեւանը որպէս սոցիալիստական երկրի քաղաք զարգանում եւ փոխակերպւում էր սոցիալիստական քաղաքների զարգացմանն ու փոխակերպմանը համահունչ: Այս միջավայրում ամէն ինչ արւում էր ձեւաւորելու սոցիալիստական արտադրական յարաբերութիւններ, սոցիալիստական աշխատանք ու կենցաղ: Երեւանը որպէս հանրապետութեան մայրաքաղաք պատշաճ նախադրեալներ ունէր արդիւնաբերական կենտրոն դառնալու համար: Կար համապատասխան մտաւոր ներուժ, մարդուժ: Հայաստանը հարուստ էր հանքային նիւթերով:

1924ին հաստատուեց Երեւանի նոր յատակագիծը, որը կազմել էր ակադեմիկոս Ալեքսանդր Թամանեանը: Ըստ այդ յատակագծի՝ 15-20 տարում Երեւանի բնակչութեան թիւը 30 հազարից հասնելու էր 150 հազարի[4]: Երկրորդ հնգամեակից ծրագրաւորւել է Երեւանի զարգացումը[5]: Այստեղ առաջնահերթ էր համարւում քաղաքում սոցիալիստական տնտեսութեան զարգացումն ու բանուոր դասակարգի ստեղծումը:

Քաղաքային տարածքի մշակութային միջավայրի, նրա ճարտարապետութեան եւ ընկերա-մշակութային ներուժի վրայ շեշտադրումը թոյլ տուեց այս ուղղութեան ներկայացուցիչներին ընդգծել քաղաքի մի շարք նոր գործառոյթներ, ինչպիսիք են քաղաքացիներին յատուկ ապրելակերպի ձեւաւորումը, նրանց առօրեայի վերափոխումը:

Խորհրդային Հայաստանում տեղի ունեցող ընկերային փոփոխութիւնների շարքում էր բանուոր դասակարգի ձեւաւորումը: Արդիւնաբերութեան զարգացման շնորհիւ երկրում աւելացաւ բանուորների եւ ծառայողների թուաքանակը՝ 1928ին հասնելով 50,000ի[6]: 1939ի դրութեամբ առկայ կարեւորագոյն դրական տեղաշարժերից էր

---

[4] Հայաստանի ազգային արխիւ, ֆոնդ 49, ցուցակ 1, գործ 62, թերթ 3:

[5] Ա. Սիմոնեան, *Երեւան, 1920-1967*, «Միտք», Երեւան, 1968, էջ 129:

[6] *Труд в Армянской ССР (статистический сборник)* (Աշխատանքը Հայկական ԽՍՀում (վիճակագրական ժողովածու), Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր ԿՎՎ, Երեւան, 1970, էջ 18:

հանրապետութեան բնակչութեան արագ աճը: 1926ի 881,000ի[7] դիմաց 1939ին բնակչութեան թիւը հասել էր 1,282,000ի[8]: Երեւանի քաղաքային կեանքի փոխակերպման վրայ մեծապէս ազդեց բնակչութեան թուի կտրուկ աճը: Խորհրդային Միութիւնում բնակչութեան աճի թափերով Երեւանը առաջին տեղերից մէկում էր գտնւում[9]: Երեւան քաղաքում եթէ 1922ին ապրում էր 46,642 մարդ, ապա 1926ին այդ թիւը հասաւ 64,613ի, 1931ին՝ 94,000ի, 1936ին՝ 144,300ի[10], իսկ 1939ին՝ 204.000ի[11]:

Բնակչութեան աճի այս թափերով փոխակերպումները տեղի էին ունենում երկու ուղղութեամբ՝ ընկերային եւ մշակութային: Քաղաքակենտրոնացումը արմատապէս ազդեց Երեւանի քաղաքային միջավայրի վիճակի վրայ: ճարտարարուեստականացման գործընթացների այնպիսի դրսեւորումների ազդեցութեան ներքոյ, ինչպիսիք են քաղաքում բնակչութեան, տնտեսութեան եւ մշակութային կեանքի կենտրոնացումը, տեղի ունեցաւ մշակութային հաստատութիւնների աստիճանական վերափոխում, քաղաքների ընկերա-մշակութային տարածքը փոխուեց, եւ ընկերա-մշակութային կարիքները ջնջեցին նախկին առանձնայատկութիւնները: Երեւան քաղաքի վրայ ճարտարարուեստականացումը հիմնականում դրական ազդեցութիւն ունեցաւ: Օրինակ՝ քաղաքային բնակչութեան թուի եւ խտութեան աճի առումով, բարձրացաւ քաղաքային բնակչութեան կեանքի որակը:

Երեւան քաղաքի բնակչութեան խտութիւնը ուղղակի կապուած էր ընկերային միջավայրի բարելաւման մակարդակից: Քաղաքացիների կեանքի մակարդակի եւ որակի բարձրացման կարեւոր պայման է ընկերային ենթակառուցուածքներում ընդգրկուած արդիւնաբերութիւն-ների միաւորումն ու զարգացումը:

Մարդիկ դէպի քաղաք գնում էին ոչ միայն պետական համապատասխան քաղաքականութեամբ պայմանաւորուած: Մարդկանց դէպի քաղաքներ գրաւում էին բարձր կենսամակարդակը, զարգացած ենթակառուցուածքները, մասնագիտական կրթութիւն ստանալու եւ ընկերա-մշակութային շահերն իրացնելու հնարաւորութիւնը:

Քաղաքային ընկերային միջավայրի փոփոխութիւնների վրայ ազդեցին նաեւ կրթամշակութային հաստատութիւնների, առողջապահական հիմնարկների թուի աճը:

---

[7] ՀԱԱ, ֆ. 130, ց. 5, գ. 1332, թ. 4:

[8] Նոյն, ց. 4, գ. 1553, թ. 5:

[9] Սիմոնեան, էջ 89:

[10] *Խորհրդային Հայաստանի 15 տարին թուերով*, Հայպետհրատ, Երեւան, 1935, էջ 22:

[11] Մ. Մալխասեան, *Պատմաժողովրդագրական ուսումնասիրութիւններ. գիտական յօդուածների ժողովածու*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2015, էջ 126:

Քաղաքային կեանքի որակի վրայ ազդում էր անգրագիտութեան վերացումը: 1926ի մարդահամարի տուեալներով Խորհրդային Հայաստանում բնակչութեան 38,6%ը գրագէտ էր, ընդ որում քաղաքային բնակչութեան 51%ն էր գրագէտ[12], Երեւան քաղաքում գրագէտ էր բնակչութեան 66%ը[13]: Իդէպ, քաղաքի հայ բնաչութեան 68,5%ն է եղել գրագէտ եւ միջին թիւը իջել է թուրքերի անգրագիտութեան բարձր տոկոսի պատճառով: 1926ին Երեւան քաղաքում գրագէտ էր թիւրքերի 31,5%ը[14]: 1939ի մարդահամարի տուեալներով այդ թիւը հասաւ 83%ի, քաղաքային բնակչութեանը՝ 91,9%ի[15]:

Ժամանակի ընթացքում բարձրագոյն կրթութեամբ մասնագէտ պահանջող կրթութեան ոլորտը ենթադրում էր նոր որակական դրսեւորումներ քաղաքային բնակչութեան շրջանում: Կառուցուեցին դպրոցներ, բացուեցին համալսարաններ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատութիւններ: Աշակերութեան թիւը 20 տարում բարձրացաւ 6 անգամ: Բուհերում սովորողների թիւը 1922ին 520 էր, 1928ին՝ 1603, 1932ին՝ 4526, 1935ին՝ 7032[16]: 1940-41 կրթաշրջանում Երեւանում կար 9 բուհ: Բնակչութեան 1000 մարդու հաշուով 82ը սովորում էր բուհում, 66ը տեխնիկումում[17]:

Քաղաքային կեանքի փոխակերպումներից էր նաեւ Խորհրդային մտաւորականութեան ձեւաւորումը, որը հիմնականում կենտրոնացած էր Երեւանում: Սա իւրատեսակ մշակութային միջավայր էր ստեղծում քաղաքում:

Լուրջ տեղաշարժեր նկատուեցին առողջապահութեան ոլորտում: Անհամեմատ բարելաւուեցին աշխատանքի եւ կենցաղի պայմանները, կազմակերպւում էին համապատասխան բնոյթի դասախօսութիւնները: 1930ականներին արդէն կանոնաւոր գործող հիւանդանոցներ կային[18]:

Երեւան քաղաքի փոխակերպումների մէջ առանձնանում էր նաեւ ֆիզկուլտուրան ու մարզաձեւերը: Ստեղծւում են մարզական ընկերութիւններ, որոնց շնորհիւ սպորտն ու ֆիզկուլտուրան դառնում էին զանգուածային[19]:

---

[12] Худавердян, Культурная революция, էջ 93-94:

[13] Զ. Կորկոտեան, *Երեւան քաղաքի ժողովրդագրութիւնը (հարիւրամեայ աճման պատկերը՝ 1830-1930 թթ.)*, Երեւանի գաւառագիտական ընկերութեան խորհրդի հրատ. N 1, Երեւան, 1930, էջ 65:

[14] Նոյն, էջ 63:

[15] Худавердян, Культурная революция, էջ 205:

[16] *Խորհրդային Հայաստանի 15 տարին*, էջ 10-11:

[17] Խոջաբէկեան, *Հայաստանի բնակչութիւնը եւ նրա զբաղուածութիւնը*, էջ 305:

[18] Սիմոնեան, էջ 202-3:

[19] Նոյն, էջ 206:

Առաւել ակնառու էին փոխակերպումները քաղաքաշինութեան ոլորտում, որոնք պայմանաւորուած էին քաղաքի ընկերային փոխակերպումներով: Քաղաքի բնակչութեան թուի աճը, մայրաքաղաքի հանգամանքը պարտադրում էին նոր քաղաքաշինական մօտեցումներ: Քաղաքաշինութեան ծաւալները միքանի անգամ մեծացան: Երեւանի քաղաքաշինութիւնը ուղղակի կապուած էր մարդու ընկերային պահանջներից: Կառուցւում էին լայն մայրուղիներ, հրապարակներ, բազմաբնակարան շէնքեր, բնակելի թաղամասեր, որոնք ենթադրում էին թէ՛ շինարակական, թէ՛ կենցաղային, թէ՛ փոխադրամիջոցային թէ՛ գեղագիտական լուծումներ:

Պէտք է առանձնացնել նաեւ Երեւան քաղաքում հայ կնոջ դերի փոխակերպումը: Ընդհանարպէս խորհրդահայ կինը լայնօրէն ընդգրկուեց երկրի արտադրական եւ հասարակական-քաղաքական կեանքում: Աղջկայ մուտքը հասարակական միջավայր, դարձաւ չդատապարտուող երեւոյթ: Կինը դարձաւ հասարակական-տնտեսական կեանքի գործուն մասնակից: Կինը իրեն լաւագոյնս էր դրսեւորում լուսաւորութեան, առողջապահութեան, գիտութեան, թեթեւ արդիւնաբերութեան ոլորտներում:

1920-30ականներին Երեւան քաղաքում վերացաւ ազնուականութիւնը, որը խորհրդային քաղաքականութիւն էր: 1897ի մարդահամարի տուեալներով Երեւանի բնակչութեան (29,000 մարդ) շուրջ 10%ը ազնուականներ էին[20], 1926ի մարդահամարի տուեալներով ազնուականներ չկային: Ճիշտ է այդ մարդիկ ամբողջութեամբ չվերացան, բայց խաւը, որպէս այդպիսին, դադարեց գոյութիւն ունենալ[21]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

- Խորհրդային Հայաստանում 1920-30ականների քաղաքակենտրոնացումը սերտօրէն առնչւում էր տնտեսական վերակազմակերպումների հետ եւ պայմանաւորուած էր արդիւնաբերականացման ու հաւաքայնացման գործընթացներով:
- 1920-30ականներին Խորհրդային Հայաստանի արդիւնաբերական զարգացումը ընթանում էր բարձր թափով, ունէր յատուկ մասնագիտական ուղղուածութիւն (հանքարդիւաբերութիւն, մեքենաշինութիւն, քիմիական արդիւնաբերութիւն, թեթեւ արդիւնաբերութիւն եւն.) եւ քաղաքակենտրոնացումն էլ տեղի էր ունենում այդ տրամաբանութեան մէջ:
- 1920-30ներին Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք Երեւանի ընկերային-ժողովրդագրական զարգացումը աճի բարձր թափ ունէր, որը

[20] Կորկոտեան, էջ 68:

[21] Նոյն, էջ 69:

պայմանաւորուած էր տուեալ ժամանակաշրջանում պետական քաղաքականութեան, հանրապետութիւնում եւ ամբողջ ԽՍՀՄում ժողովրդագրական տեղաշարժերի լայն ծաւալներով:

• Արագացուած խորհրդային արդիականացման պայմաններում, ինչպէս նաեւ նախախորհրդային շրջանում քաղաքային միջավայրի թոյլ զարգացածութեան համգամանքով պայմանաւորուած Երեւանը թէեւ երբեմն չէր հասցնում քաղաքային ընկերային միջավայրի զարգացման միութենական թափերին (Մոսկուա, Լենինգրադ, Կիեւ, Բաքու, Թիֆլիս եւն.), բայց այնուամենայնիւ արդիւնաբերականացումը, կրթութեան, մշակոյթի, առողջապահական համակարգի կտրուկ զարգացումը թելադրում էին քաղաքային ընկերային միջավայրի փոփոխութիւնների անխուսափելիութիւնը:

URBANIZATION AND CHARACTERISTICS OF THE TRANSFORMATIONS OF URBAN LIFE IN SOVIET ARMENIA DURING THE 1920S AND 1930S

(SUMMARY)

Khatchatur Stepanyan
kh.stepanyan@gmail.com

The paper focuses on the urbanization process in Soviet Armenia from the time of its Sovietization in 1921 until the beginning of WWII in 1939. The paper highlights the case of Yerevan as its main object of study.

The author notes that after its Sovietization, Armenia was incorporated into the pan-Soviet economic and industrial policies of the central authorities of the USSR. These policies included the eradication of the nobility, the establishment of the labor class, industrialization, and generating a Soviet/socialist culture.

As the focus of these policies was the main cities, a flow of the rural population to Yerevan was observed. The city underwent significant transformations in education, construction and industrialization. The last was to register a growth rate of 19.9% compared to the USSR average rate, which was 16%. The first city plan of Yerevan was officially endorsed in 1924, whereby the city was to be enlarged to make room for its increasing population, which was to grow from 30,000 to 150,000. Nonetheless, in 1939 Yerevan had a population of 204,000! Furthermore, Yerevan was transformed into a city of culture, sports, and education, where the literacy rate grew from 38.6% in 1926 to 83% in 1939 and the school student population grew 6-fold. There were significant improvements in the sphere of health too. The city became a large construction site, where avenues, broad streets, roundabouts, squares and parks became abundant. Among the significant developments was the outstanding change in the status of the Armenian woman, who became an active part of the city as an educator, a cultural figure, and an inseparable part of the economic cycle.

ՍՈՒՐԻԱՀԱՅԵՐՈՒ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ 1946-2010ԱԿԱՆՆԵՐՈՒՆ (Մարտահրաւէրներ եւ հնարաւորութիւններ)[1]

Անի Ֆիշենկճեան
fishenkjianani@outlook.com

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

2011 Մարտին Սուրիոյ մէջ սկիզբ առած աննախընթաց հակամարտութենէն զերծ չմնացին նաեւ Սուրիոյ հայօճախի հայաշատ քաղաքներն ու աւանները (Հալէպ, Քեսապ, Ռաքքա, Տէր Զօր, Քամիշլի, Հասիչէ եւն.): 2012ին Հալէպի մէջ սկսած թէժ մարտերը կը շարունակուին մինչեւ այսօր, հայօճախին պատճառելով նիւթական եւ մարդկային մեծ կորուստներ: Պատերազմը կասկածի տակ դրաւ հայօճախին յետագայ գոյութիւնը, վտանգուեցաւ սուրիահայութեան գոյատեւումը, տնտեսական, ընկերային, կենցաղային, առողջապահական ու անկանխատեսելի տագնապներու հետեւանքով փոխուեցան մարդկային փոխյարաբերութիւններու չափանիշերը: Ոմանք տեղափոխուեցան Սուրիոյ այլ նահանգներ, իսկ տոկոս մը՝ դէպի Լիբանան, ապա՝ Հայաստան, եւրոպական երկիրներ, ԱՄՆ, Քանատա, Աւստրալիա:

Մեր յօդուածը կ'ուսումնասիրէ Սուրիոյ մէջ յետեղեռնեան աւելի քան մէկդարեայ ուղի հարթած հայօճախի պատմութիւնը՝ նպատակ ունենալով ի մի բերել Սուրիոյ քաղաքական, ընկերային, կրթական, մշակութային եւ ժողովրդագրական յարափոփոխ իրադրութեան պատճառով հայօճախին կրած փոխակերպումները:

ՀԱՅԵՐԸ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ (ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ)

Սուրիոյ, ընկերային, քաղաքական ու տնտեսական իրավիճակին անծանօթ բռնի տեղահանուած հայ գաղթականութիւնը դէմ յանդիման պիտի գտնուէր նոր միջավայրին պարտադրած հրամայականներուն եւ ըստ այդմ պիտի ձեւաւորէր Սուրիոյ հայօճախը:

Հայերը Սուրիոյ (պատմական Ասորիք) մէջ յայտնուած են Ք.ա. առաջին դարուն, սակայն անոնց հոսքը այդ տարածք՝ յաճախակի բնոյթ կրած է ԺԶ. դարէն սկսեալ: Հայերու գաղթը Սուրիոյ շրջաններ, ի մասնաւորի Հալէպ, նշանակալի չափերու կը հասնի յատկապէս ԺԹ. դարավերջ-Ի. դարասկիզբին, հայկական կոտորածներու եւ

[1] ***Ծխ.***- Այս յօդուածը հրատարակուելէ ետք պիտի տեղադրուի www.orcid.org կայքէջ: Հեղինակին այս եւ այլ յօդուածներուն ծանօթանալու համար մատչիլ՝ վերոնշեալ կայքին, 0009-0000-0476-8816 համարի ներքոյ:

Ցեղասպանութեան տարիներուն: Այդ շրջանին Հալէպը ունէր տնտեսական բարենպաստ պայմաններ, չկար կրօնական եւ ազգային հալածանք, այլ՝ բարեացակամ վերաբերմունք հայերու հանդէպ:

Հայերու ներհոսքը Սուրիա, շարունակուեցաւ նաեւ յետցեղասպանութեան շրջանին, որով եւ աճեցաւ հայութեան թիւը այնտեղ: Այսպէս, եթէ մինչեւ 1917 հալէպահայութիւնը կը հաշուէր շուրջ 17,000, ապա 1922 Օգոստոսի տուեալներով՝ *«Սուրիոյ մէջ գտնուող տեղացի ու տարագիր հայերը հետեւեալ կերպով բաշխուած են զանազան քաղաքներու մէջ.- Հալէպ՝ 33.000, Իսկենտէրուն՝ 12.000, Պէյրութ՝ 10.000, Դամասկոս՝ 6000, Տրիպոլիս եւ Լաթաքիա 3000, ընդամէնը մօտաւորապէս 65.000»*[2]:

ՍՈՒՐԻԱՆ ԵՒ ՀԱՅՈՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ (1920-1970)

1920-40ականներուն Մերձաւոր Արեւելքի յարաբերաբար ձեւաւորուած եւ ազդեցիկ հայօճախներէն կ'առանձնանային Սուրիան եւ Լիբանանը:

Սուրիահայութեան առաջին երկու տասնամեակները՝ 1920-40, եթէ մէկ կողմէն եղան համալրման, կազմաւորման կազմակերպական տարիներ, ապա եղան նաեւ - Սուրիոյ ժողովուրդին հետ - պետականակերտման տարիներ:

Բ. աշխարհամարտի նախօրեակին արդէն ձեւաւորուած էր հայօճախը իր թեմերով (Բերիոյ եւ Դամասկոսի) եւ համապատասխան կառոյցներով, հակառակ որ սուրիահայութիւնը տակաւին միատարր չէր: Կիլիկիայէն եւ Արեւմտեան Հայաստանի տարբեր վայրերէ գաղթողները, որպէս հողագործներ ու արհեստաւորներ մեծ մասամբ կեդրոնացած էին գիւղական բնակավայրերուն մէջ, պարզելով գիւղական համայնքի պատկեր: Գաղթականներու այլ մաս մը կեդրոնանալով քաղաքներուն մէջ ձեւաւորած էր քաղաքային համայնքի պատկերը: Անդին, Սուրիոյ քաղաքական, հասարակական, տնտեսական տարբեր ոլորտներու մէջ բազմաթիւ հայ անհատ գործիչներու գոյութիւնը կը խօսէր ոչ միայն հայօճախի ներուժին, այլեւ համարկումի մասին:

1920-23՝ հայ գաղթականներու նոր ալիքը հասնելով Սուրիա, մասնաւորապէս Հալէպ, այնտեղ կանգ չառաւ: Յարմարաւէտ կեանք մը ունենալու հեռանկարով խթանուած բազմութիւններ, երկրորդ, երրորդ անգամ տեղափոխուեցան Սուրիայէն Ֆրանսա, Ամերիկա, Արժանթին[3]: Սուրիա հաստատուած հայերու արտագաղթը պայմանաւորուած էր շարք

---

[2] «Հայերի թիւը Սիւրիոյ մէջ», *Հայրենիք օրաթերթ*, 15 Օգոստոս 1922:

[3] Մ. Էպլիղաթեան, «Սփիւռքահայ կեանքի առաջին շրջանը», *Ազդակ շաբաթօրեակ*, 17 Մայիս 1970, էջ 403-4:

մը գործօններով: Ճիշտ է, Սուրիան դուրս եկած էր օսմանեան լուծէն, սակայն չէր կրցած քաղաքական անկախութիւն ձեռք բերել, անցած ըլլալով ֆրանսական հոգատարութեան տակ: Բացի երկրէն ներս տիրող անգործութեան եւ թշուառութեան, անվստահութիւնն էր, որ «*հայերը տրածում էին ֆրանսիական իմպերիալիստների նկատմամբ*», զոր ճաշակած էին Կիլիկիոյ արհաւիրքի օրերուն[4]:

1939ին բռնկած Բ. աշխարհամարտին Ֆրանսայի կրած պարտութիւնը պիտի զօրացնէր Սուրիոյ մէջ ֆրանսական իշխանութիւններուն դէմ սկսած պայքարը եւ 17 Ապրիլ 1946ին Սուրիան ձեռք պիտի բերէր անկախութիւն[5]: Երկրէն վերջնականապէս կը հեռանան օտար զօրքերը: Ֆրանսական բանակի հետ կը հեռանան նաեւ բանակին ծառայող սուրիահայ զինուորներ[6], որոնց մէկ մասին վերադարձը նորանկախ պետութիւնը կը թոյլատրէ: Այնուամենայնիւ, 1946ի եօթներորդ կարաւանով Հայաստան կը ներգաղթեն նաեւ «*Պէյրութի զանազան վարժարաններու մէջ հաստատուած հարիւրէ աւելի նախկին [սուրիահայ] զինուորականներ*»[7] իրենց ընտանիքներով[8]:

Նորանկախ երկիրի մէջ կային տեղական իրարամերժ քաղաքական հոսանքներ: Կամայ թէ ակամայ, քրիստոնեայ փոքրամասնութիւնները պիտի ներգրաւուէին երկրի ներքին վերիվայրումներուն: Պատերազմին հետեւանքով եւ ֆրանսացիներու հեռացումով կը փակուին օտար հաստատութիւնները:

Վերոյիշեալ պատճառներով ծայր առած ներքին տեղաշարժն ու արտագաղթը մեծապէս կը նուազեցնեն սուրիահայութեան թիւը: Սուրիահայ բնակավայրերու մեծ մասը կը փոխէ ազգային դիմագիծը, կը փակուին հայկական վարժարաններ, կը բացուին պետական վարժարաններ եւ մեկնած հայերու տեղը կու գան լեցնելու քիւրտեր, արաբներ, ասորիներ եւն.: Գիւղական բնակավայրերէն գաղթածներու հատուած մը կը կեդրոնանայ Սուրիոյ մեծ քաղաքներուն մէջ, իսկ ոմանք կը հեռանան Սուրիայէն:

---

[4] Յ. Խ. Թոփուզեան, *Սիրիայի եւ Լիբանանի հայկական գաղթօճախների պատմութիւնը (1841-1946)*, Հայկ. ՍՍՀ ԳԱ, Երեւան, 1986, էջ 167:

[5] https://www.academia.edu/41301770/International_Relations_of_the_MIDDLE_EAST/ Fawcett L., International Relations of the Middle East, Third Edition, Oxford University Press 2013, էջ 54:

[6] «Սուրիացի հայ զինուորները», *Ազդակ շաբաթօրեակ*, 2 Յունիս 1946: Այս թուահամարը գոյութիւն չունի

[7] «Ներգաղթի 7րդ կարաւանը», *Ազդակ շաբաթօրեակ*, 27 Սեպտեմբեր 1946:

[8] «Պէյրութի մեր թղթակիցէն հեռաձայնով», *Եփրատ օրաթերթ*, 28 Սեպտեմբեր 1946:

1940ականներու աւարտին պետութիւնը կը սեփականաշնորհէ մեծ գործարանները: Վարչապետի հաղորդագրութեան մէջ կ'ըսուի, որ այն պաշտօնեաները, որոնք կապ ունին առեւտրական ընկերութիւններու եւ թերթերու հետ, կամ անանուն ընկերութիւններու անդամ են, «պարտաւոր են խզել իրենց կապերը կամ հրաժարիլ իրենց պաշտօններէն»[9] Անդին, կ'արգիլուին ազգային կուսակցութիւններու, կազմակերպութիւններու գործունէութիւնը եւ հայերէն թերթերու, պարբերականներու, գիրքերու լոյս ընծայումը: Վարչապետ Սաատալլա պէյ Ճապրի կը յայտարարէ, թէ թերթերուն սահմանափակումը պիտի բարձրացնէ մակարդակը մամուլին[10]:

Կը փակուին կարգ մը շրջաններու հայկական վարժարաններ, որոնք չունէին սեփականութեան իրաւունք[11]:

1951ին հրապարակուած հրամանագիրով մը, պէտք էր վերանային վաճառատուներուն եւ արհեստաւորներուն ցուցատախտակներէն հայերէն արձանագրութիւնները: Կ'ակնկալուէր որ յառաջիկային աւելի խիստ ու լուրջ տնտեսական ճնշումներ յառաջանան, որուն պատճառով ալ սուրիահայ դրամագլուխը շահարկման աւելի յարմար պայմաններ ու վայրեր կը սկսի որոնել: Կարգ մը մարզական եւ երիտասարդական միութիւններ չեն կրնար վերստանալ իրենց արտօնութիւնները, իսկ թիւ 11954/22- 21 Յունուար 1952 համարակալ եւ թիւ 7719/22 համարակալ 27 Օգոստոս 1953 հրամանով կ'արգիլուին հայերէնով կատարուող դպրոցական միջոցառումները[12]:

1956ին կացութիւնը աւելի կը վատթարանայ: Հալէպի մէջ կ'այրեն ֆրանսական դպրոցներն ու եկեղեցիները, իսկ 1957ի թուրք-սուրիական սահմանին կը սկսին թրքական կեդրոնացումները: Սուրիահայերը լաւ կը գիտակցէին, որ թրքական նախայարձակումի մը առաջին զոհերը իրենք կրնան ըլլալ: *Ազդակ* կը գրէ. «*Թուրքերը գիտնալով, թէ հայերը նոյն ափեն պիտի ըլլային դիմադրողները դէպի Սուրիա իրենց*

---

[9] «Տեղական կեանք. 'Եագզա եւ հայերը', *Արեւելք*, 10 Հոկտեմբեր 1946:

[10] Նոյն:

[11] Սեփականութեան իրաւունք ստանալու համար այդ վարժարանները չէին համապատասխաներ պետութեան կողմէ շէնքային սահմանուած պայմաններուն:

[12] Բերիոյ թեմի ազգային առաջնորդարանի արխիւ (ԲԹ ԱԱԱ), դարան Դ., գ. 87, պատճէն արաբերէն նամակներու 1950-1955. նաեւ՝ Կ. Լ. Դալլաքեան, *Համկավար ազատական կուսակցության պատմություն, գիրք երկրորդ, 1930ականների վերջերից-1990ականների սկիզբը*, ՀՀ ԳԱԱ, Գիտութիւն, Երեւան 2007, էջ 187: Նոր օրէնքներուն համաձայն Ազգային միջոցառումները պէտք է կատարուէին միայն ու միայն երկրի պաշտօնական լեզուով՝ արաբերէնով:

թափանցումներուն, այդ օրերուն, Ճեզիրէի մուհաֆըզէն (նահանգապետէն) պահանջած էին հայերու հեռացումը սահմանային շրջաններէն»[13]:

1958-61՝ Եգիպտոս-Սուրիա Արաբական Միացեալ Հանրապետութեան (ԱՄՀ) օրերուն Եգիպտոսի նախագահ՝ Կամալ Ապտէլ Նասէրի վարած քաղաքականութեան հետեւանքով, յատկապէս հայերու նկատմամբ, ձերբակալութիւններ տեղի կ'ունենան, կը սրի ներկուսակցական պայքարը: 1959ին ԱՄՀ իշխանութիւնները ազգային փոքրամասնութիւններուն, «մասնաւորաբար հայոց իրաւունքները ոտնահարելուն ուղղուած միջոցներ» կը ձեռնարկեն[14]:

«Պաաս» ընկերվար կուսակցութիւնը իշխանութեան տիրանալէն ետք, 1963ի Մարտին, կը ծրագրէր պետականացնել երկրին ճարտարարուեստական եւ առեւտրական բոլոր ձեռնարկութիւնները: Հանգրուան առ հանգրուան կը պետականացուին գլխաւոր ընկերութիւնները, ապա արդիւնաբերական գործարանները: Մինչեւ 1966ի «Պաաս»ի ձախակողմեան թեւի իշխանութեան գլուխ գալը արդէն իսկ պետականացուած էին Սուրիոյ բոլոր ձեռնարկութիւնները:

1963ի յեղաշրջումը պետական նոր հրամանագիրով կը դադրեցնէր նաեւ բոլոր թերթերը, երկրէն ներս մէկ պետական թերթ հրատարակելու նպատակով[15]: Երկրէն պիտի հեռանային մտաւորականներ, խմբագիրներ եւն.:

1964էն իվեր կը ծրագրուի պետականացնել նաեւ համայնքային ու մասնաւոր կրթօճախները: «*Եթէ կը ձգձգուէր պետականացումը, պատճառը պիւտճէական մտահոգութիւնն էր, խորքին մէջ պետական հսկողութիւնը այնքան խիստ էր, որ ոմանք կարիքը չէին զգար պետականացումը փութացնել*»[16]:

---

[13] «Սուրիոյ ընկերներուն դատավարութիւնը», *Ազդակ*, 22 Մարտ 1962:

[14] *Սփիւռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները Խորհրդային գաղտնի փաստաթուղթերու մէջ (1945-1991, ընտրանի)*, աշխ.՝ Գ. Եազըճեան, Հրատ., Երեւան, 2016, էջ 197: Փոքրամասնութիւններու՝ ի մասնաւորի քրիստոնեաներու նկատմամբ Նասէրի վարած քաղաքականութիւնը կը միտէր արմատապէս տարածաշրջանէն հեռացնել բոլոր այն տարրերը, որոնք խոչընդոտ կը հանդիսանային իր ծրագիրերուն, ինչ որ պիտի խաթարէր արաբական երկիրներու անդորրութիւնը եւ նպաստէր մեծ թիւով քրիստոնեաներու, հայերու արտագաղթին (Անի Ֆիշենկճեան, *Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը 1946-1970թթ.*, «Ասողիկ» հրատ., 2018, էջ 103:

[15] Ֆիշենկճեան, էջ 107:

[16] «Հայ վարժարաններու կացութիւնը Սուրիոյ մէջ», ՄՏԿԿ ԲԹԱ, հ. 3, ց. 1, թղթ. 107, թ. 2:

Կ'արգիլուի 12-25 տարեկան պատանիներուն եւ երիտասարդներուն Սուրիայէն ելքը: Զինուորական պարտադիր ծառայութեան ահաւոր սպառնալիքը խորապէս կը մտահոգէ ծնողները[17]:

Ներքին գործօն կարելի է համարել Սուրիոյ հայաբնակ գաւառներու եւ գիւղերու հայութենէ դատարկուիլը՝ 1965-66 դէպի Հայաստան ներգաղթի եւ ներքին տեղաշարժի հետեւանքով դէպի Սուրիոյ մեծ քաղաքները՝ ուսման, կեանքի որակի բարձրացման ու բարելաւման համար[18]:

Այսպիսով, անկախութեան ձգտող Սուրիան յետանկախացման տասնամեակներուն բախեցաւ նոր իրավիճակներու, որոնք իրենց ներգործութիւնը պիտի ունենային Սուրիոյ հայօճախին վրայ: Պետականակերտման տարիներուն տեղի ունեցած իրարայաջորդ ռազմական յեղաշրջումները, պետական սահմանափակումները, նոր կրթական ծրագիրերու մշակումն ու պարտադրումը, ԱՄՀ հռչակումը, ներգաղթը, ներկուսակցական, ներհամայնքային պայքարը, Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի ծնունդէն ետք Հայրենիք-Սփիւռք կապերու սերտացումը, վաթսունական թուականներու ներգաղթը, 1967ի Սուրիա-Իսրայէլ պատերազմը, երկիրին մէջ շարունակուող պետական սահմանափակումները, տնտեսական լճացումը, քաղաքական անկայունութիւնը, կրթական համակարգի կտրուկ փոփոխութիւնները, լաւատեսական հեռանկարի բացակայութիւնը, ինչպէս նաեւ ազգային փոքրամասնութիւններու նկատմամբ իշխանութեանց վերաբերմունքը նախադրեալներ ստեղծեցին, ներքին տեղաշարժերու եւ արտագաղթի: Պէտք է ընդգծել, սակայն, որ արտագաղթի երեւոյթը յատուկ չէր սոսկ հայկական շրջանակներուն, այլ ընդհանուր բնոյթ ունէր[19]:

Պատկերը առաւել յստակ եւ առարկայօրէն ցոյց տալու համար ստորեւ կը ներկայացնենք Բերիոյ թեմի Հալէպի եւ շրջաններու բնակչութեան թուապատկերը՝ քաղուած թեմի ազգային առաջնորդարանի արխիւներէն[20]:

տարի	*հայ բնակչթ.*	տարի	*հայ բնակչթ.*	տարի	*հայ բնակչթ.*
1932	*55.246*	1940	*67.048*	1948	*47.303*
1933	*47.387*	1941	*47.349*	1949	*56.054*
1934	*48.101*	1942	*69.921*	1950	*47.108*

[17] «Հայերէնի հարցը», ՄՏԿԿ ԲԹԱ, հ. 3, ց. 1, թղթ. 107, թ. 7: Այդ ժամանակաշրջանին Սուրիան կը շարունակէր մնալ պատերազմական վիճակի մէջ Իսրայէլի հետ եւ թշնամական նոր ընդհարումներ անխուսափելի էին:

[18] Փիշենկճեան, էջ 177-79:

[19] Փիշենկճեան, էջ 305:

[20] Փիշենկճեան, էջ 37, 38, 76 ,77, 96, 97, 98, 99:

1935	*49.275*	1943	*71.323*	1951	*50.414*
1936	*49.864*	1944	*52.493*	1952	*49.200*
1937	*50.963*	1945	*49.373*	1953	*49.354*
1938	*53.639*	1946	*46.838*	1954	*49.384*
1939	*54.259*	1947	*46.061*	1955	*43.108*

Ըստ մեր քաղած ոչ-պաշտօնական մարդահամարի տուեալներուն, 1948ին Դամասկոս իր շրջաններով կը պարզէր հետեւեալ պատկերը[21].-

քաղաք	*անձ*	քաղաք	*անձ*
Դամասկոս	*5000-5500*	Հայաշէն	*10*
Հոմս	*379*	Ճեպէլ Տրուզ	*Սուեյդիա 40 հոգի, Սալխաթ՝ 36*
Համա	*40*	Հաուրան	*Տարաա 20, Էզրա 58 հայեր*
Սելիմիէ	*10*	Հաուրանի շրջաններու մէջ	*154*
		ընդհանուր	*5747 (6247)*

Իսկ 1949ին Դամասկոս իր շրջաններով ունէր շուրջ 4500-5000 հայ, Հոմս՝ 350-450:

1963ի տուեալներով, Սուրիոյ մէջ կ'ապրէր 100,000 հայ, որոնց մեծ մասը կը բնակէր Հալէպի, Քամիշլիի, Դամասկոսի, Լաթաքիոյ եւ Հոմսի մէջ: Միայն Հալէպ քաղաքի հայ բնակչութիւնը կը հաշուէր 70,000[22] (այլ տեղեկութեամբ՝ 55,000): 1964ին միայն Հալէպի մէջ շուրջ 55,000 հայ կ'ապրէր[23]: Արհեստագործութեան հիմնական ոլորտները (ինքնաշարժներու նորոգութիւն, մեքենագիտութիւն, ատաղձագործութիւն, կօշկակարութիւն, դերձակութիւն, ոսկերչական արհեստանոցներ եւ պղնձագործութիւն) հայերու ձեռքը կեդրոնացած էին: Հալէպի առեւտրականներուն մէջ մեծ տեղ կը գրաւէին հայերը. կային նաեւ մեծաթիւ հայ բժիշկներ, երկրաչափներ, գործատուններ եւ գործարաններու սեփականատէրեր[24]:

1940ականներէն ետք Սուրիոյ քաղաքական անկայունութեան եւ տնտեսական անկումին հետեւանքով, յատկապէս երիտասարդները հնարաւորութիւնը կ'ունենան սկիզբը ժամանակաւորապէս, ապա երկարաժամկէտ կայք հաստատել Ծոցի արաբական երկիրներու մէջ:

---

[21] Նոյն, էջ 95:

[22] Ա. Բադալեան, «Սիրիայում ԽՍՀՄի դեսպանատան տեղեկանքը Սիրիահայ գաղթօջախի մասին, 17 Հոկտեմբեր 1963, (Դամասկոս)», *Բանբեր հայագիտական արխիւների*, 2:2009, էջ 207, 215:

[23] Բադալեան, էջ 215. նաեւ՝ Եազըճեան, էջ 207:

[24] Բադալեան, էջ 215. նաեւ՝ Եազըճեան, էջ 207:

Կատարուած ուսումնասիրութիւններ ցոյց կու տան, որ 1960-1975՝ Սուրիայէն Լիբանան տեղափոխուած են շուրջ 30-40 հազար հայեր, որոնց զգալի մասը Լիբանանէն տեղափոխուած է այլ երկիրներ[25]: Այլ աղբիւր մը կը վկայէ, թէ Լիբանան արտագաղթած սուրիահայերու թիւը 60 հազար եղած է[26]: Իսկ 1969ին, Լիբանանի ԽՍՀՄ դեսպանութեան տեղեկանքի համաձայն՝ Լիբանան հաստատուած է 30 հազար սուրիահայ[27]:

ՍՈՒՐԻԱՀԱՅ ԿԵԱՆՔԸ 1970-2010

1970ականներուն Սուրիոյ վարչակազմի փոփոխութիւնը կրնար նոր հնարաւորութիւն ստեղծել երկրէն արտագաղթը կասեցնելու համար: Սակայն պարտադիր զինուորական ծառայութիւնը, Սուրիոյ որդեգրած արտաքին քաղաքականութիւնը դրացի պետութիւններու նկատմամբ, նոր վարչակազմի վարած քաղաքականութիւնը երկրի փոքրամասնութիւններու հանդէպ, 1979-82՝ «իսլամ եղբայրներ»ու պետութեան դէմ ծաւալած պայքարը եւն. պատճառ դարձան որ Սուրիան հետզհետէ համարուի տարածաշրջանի անկայուն երկիրներէն մէկը:

Իսրայէլի վարած յարձակողական քաղաքանութեան յարուցած վտանգին հետեւանքով տուժեց երկրի տնտեսութեան այլ ճիւղերու զարգացումը, մանաւանդ երբ արտաքին ներդրումներ չկատարուեցան:

Արեւմտեան կարգ մը պետութիւններ, ԱՄՆ եւ արաբ պահպանողական երկիրներ ճնշում բանեցուցին Սուրիոյ վրայ[28], նպատակ հետապնդելով տապալել սուրիական վարչակարգը եւ փոխարէնը «*ստեղծել իսլամական հանրապետութիւն, նպաստել մասնաւոր ձեռներէցութեան զարգացման, սեփականաշնորհել ազգայնացուած ձեռնարկութիւնները, կալուածատէրերուն վերադարձնել ... բռնագրաւուած հողերը* »եւն.[29]:

1970ականներու սկիզբի վիճակագրութեան մը համաձայն Սուրիոյ բնակչութեան ընդհանուր թիւն էր 6,294000, որուն ամէնէն մեծ հատուածը կը բնակէր քաղաքներու՝ Դամասկոսի եւ Հալէպի մէջ[30]: Դամասկոսի բնակչութիւնը, 10 տարուան ընթացքին, 530,000էն հասած էր 835,000ի, իսկ Հալէպինը՝ 426,000էն՝ 639,000ի[31]: Բնակչութեան

---

[25] Տիգրան Ղանալանեան, *Սփիւռքի ներքին տեղաշարժերը 1950-1980ական թուականներին*, հրատարակչատուն Երևան, 2016, էջ 132:

[26] Նոյն, էջ 132:

[27] Նոյն:

[28] Նիկոլայ Յովհաննիսեան, *Արաբական երկիրների պատմութիւն, հտր. Դ.*, հրատարակչատուն Երեւան, 2007, էջ 523:

[29] Յովհաննիսեան, *Արաբական երկիրների*, էջ 523:

[30] «Սուրիոյ բնակչութիւնը», *Ազդակ*, 24 Մայիս 1972:

[31] Նոյն:

ստուարացումը մեծ քաղաքներու մէջ, կ'առնչուէր գիւղական շրջաններու պարպումին՝ տնտեսական-քաղաքական, ընկերային, կրթական եւ այլ պատճառներով: Այլ խօսքով մեծ քաղաքներէն արտագաղթը դէպի այլ երկիրներ ու ներքին տեղաշարժը գիւղական շրջաններէն մեծ քաղաք պիտի փոխէր քաղաքներու բնակչութեան ժողովրդագրութիւնը: «*Մինչ Հալէպի հայը կ'երթայ հաստատուիլ Հայաստան, Լիբանան, Քանատա, Միաց[եալ] Նահանգներ եւ Աւստրալիա, հիւսիսային Սուրիոյ գիւղերէն թէ Քամիշլիէն հայ ընտանիքներ կու գան կայք հաստատելու հոն [Հալէպ]*»[32]:

1972ի տուեալներով Բերիոյ թեմը, ներառեալ հիւսիսային Սուրիոյ հայութիւնը, կը հաշուէր 115.000 անձ[33], որուն 65.000[34]ը՝ Հալէպի մէջ: Սակայն ՄՏԿ[35] կաթողիկոսութեան ազգային ընդհանուր ժողովի 1972 Հոկտեմբերի տեղեկագիրին մէջ «Բերիա-Հալէպ»ի հայութեան թիւ կը յիշատակուի 60.000, իսկ Դամասկոսի՝ 3500 հայ[36], մինչ Բիւզանդ Եղիայեան Դամասկոսի հայութեան թիւը կը յիշատակէ 7200[37]: Ըստ Հայաստանի Ազգային Արխիւի փաստաթուղթի մը, 1973-74ին Սուրիոյ մէջ ապրած է 110.000 հայ՝ տեղաբաշխուած ըստ հետեւեալ աղիւսակին[38].-

Շրջան	Բնակչութեան թիւ	Շրջան	Բնակչութեան թիւ
Դամասկոս	5000	Լաթաքիա եւ Քեսապ	7000
Հալէպ	65.000	Հոմս	1000
		Ընդհանուր՝	78.000

Մնացեալը տեղաբաշխուած էին Սուրիոյ հիւսիս արեւելեան Քամիշլի եւ շրջակայքը: Վերջիններուս մեծ մասը կը զբաղէր հողագործութեամբ[39]: Պէտք է աւելցնել, որ քննարկուող ժամանակաշրջանին Սուրիոյ քաղաքաբնակ հայերը մանր եւ միջին առեւտրականներ, արհեստաւորներ

---

[32] Յ. Պարսումեան, *«Հալէպի հայ գաղութը այսօր»*, *Հայրենիք օրաթերթ*, 6 Դեկտեմբեր 1977:

[33] Բ. Եղիայեան, *Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ. 1914-1972*, Անթիլիաս, 1975, էջ 894. նաեւ՝ Վ. եպ. Տէմիրճեան, *Գաւազանագիրք Լիբանանի եւ Սուրիոյ հայոց թեմերու առաջնորդութեանց, հտր. Ա.*, Անթիլիաս, 1980, էջ 436:

[34] Եղիայեան, էջ 894, 896. նաեւ՝ Տէմիրճեան, էջ 436:

[35] Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն (ՄՏԿ): Անի

[36] «Տեղեկագիր մեծի տանն Կիլիկիոյ ազգային քաղաքական կեդրոնական ժողովոյ, 15 Նոյեմբեր 1968-22 Հոկտ. 1972», *Ազդակ*, 26 Հոկտեմբեր 1972:

[37] Եղիայեան, էջ 894:

[38] Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), ֆոնտ /Ֆ./ 875, ցուցակ /ց./ 16, գործ /գ./ 170, թերթ /թ./ 1-2:

[39] ՀԱԱ, Ֆ. 875, ց. 16, գ. 170, թ. 2:

ու վաճառականներ էին. կար նաեւ մտաւորական որոշակի խաւ մը: Մեծ համբաւ կը վայելէին հայ ոսկերիչները[40]:Հայերու մէկ մասը ներգրաւուած էր պետական հիմնարկներէն ներս, որպէս պետական պաշտօնեաներ:

Արտագաղթի եւ ներքին տեղաշարժի գործօն հանդիսացող պատճառներ էին աճող գործազրկութիւնը, բնական աղէտները, տնտեսութեան անկայունութիւնն ու անոր յարուցած դժուարութիւնները, պատանիներուն երկրորդական ուսման եւ արհեստներու ձեռքբերման անկարելիութիւնը[41]: «*Վերջին երկու տասնեակ տարիներու ընթացքին Մերձաւոր Արեւելքի կարգ մը երկիրներու, մասնաւորապէս Եգիպտոսի եւ Սուրիոյ*»[42] ներքին քաղաքական փոփոխութիւնները կը ստիպեն, որ հազարաւոր հայեր «բախտ որոնելու» համար գաղթեն Ամերիկաները եւ Աւստրալիա: Արտագաղթի դէմ ահազանգ կը հնչեցնեն Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Տ. Խորէն Ա. վեհափառն ու հայ մամուլը՝ «*հրաւիրելով հայերը, որ չհեռանան հիւրընկալ երկիրներէն, ուր համախումբ կ'ապրին անոնք եւ անեղծ կը պահեն ազգային դիմագիծը*»[43] հայ դպրոցի եւ եկեղեցւոյ շնորհիւ:

1981 Նոյեմբերին տեղի ունեցած Սուրիոյ խորհրդարանական ընտրութիւններուն սուրիահայերը կ'ունենան մէկ ներկայացուցիչ[44]: Նոր խորհրդարանի ձեւաւորմամբ երկրի բնակչութեան մէկ հատուածը, ինչպէս նաեւ հայերը յոյս ունէին, որ տնտեսական յետագայ զարգացումը եւ ներքաղաքական կեանքի կայունացման տանող նախաձեռնութիւնները կ'արդիւնաւորուին: Սակայն պատահեցաւ անսպասելին:

Հալէպ քաղաքը կը հանդիսանար հայութեան ամէնամեծ զանգուածային համախմբման վայրը, ուր համայնքային կեանքէն ներս անորոշութիւն կը տիրէր: Մուսուլման եղբայրներու ներկայութիւնն ու տեղակայումը Հալէպի նամանաւանդ հայաշատ կեդրոններու մէջ սկսած էր վտանգ սպառնալ այդ թաղամասերու հայ եւ քրիստոնեայ

---

[40] ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 170, թ. 25:

[41] «Հալէպում ԽՍՀՄ գլխաւոր հիւպատոսութեան տեղեկանքը հալէպահայ համայնքի 1964-1973 թթ. [կացութեան] մասին» փաստաթուղթին մէջ կը յիշատակուի, որ 1973ին 140 հազար հայ բնակչութիւն ունեցող Հալէպի հայ համայնքէն «*մինչեւ 30-35 հազ. հոգի կրճատուեցաւ: Սա կը բացատրուի Սուրիոյ հայոց կեանքի մէջ յստակ հեռանկարի բացակայութեամբ* (Եազըճեան, էջ 277):

[42] *Յառաջ*, Ծ. տարի, թիւ 13.121, 26 Սեպտեմբեր 1974, Ֆրանսա:

[43] Նոյն:

[44] Այս մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Նորա Արիսեան, «Սուրիոյ խորհրդարանին հայ երեսփոխանները (ակնարկ)», *Սուրիոյ հայերը. գիտաժողովի նիւթեր (24-27 Մայիս 2015)/Armenians of Syria: Proceedings of the Conference (24-27 May 2015)*, խմբ. Ա. Տագէսեան, Հայկազեան համալսարանի հրատ., 2018, էջ 305-14:

բնակիչներուն, վարժարաններուն, ազգային կեդրոններուն եւ եկեղեցիներուն: Անոնց կողմէ կատարուած ահաբեկչական գործողութիւններու հետեւանքով, յաճախ կը փակուէին վարժարանները ինչը պատճառ կը դառնար կրթական ծրագիրերու թերաւարտ, ոչ ամբողջական իրագործման: Այս տարիներուն հայօճախը ուսումնասիրելով հարցի լրջութիւնը դրական չէզուքութիւն պահպանեց ու առանց այս կամ այն կողմի իր մասնակցութիւնը բերելու՝ շարունակեց իր համայնքային հարցերը լուծել եւ զարկ տալ մշակոյթի զարգացման:

«Իսլամ եղբայրներու» հրահրած խռովութիւնները դեռ չխամրած, Սուրիան կը յայտնուի քաղաքական նոր՝ ներընտանեկան ճգնաժամի առջեւ[45]:

Այս եւ այլ ներքաղաքական եւ արտաքին քաղաքականութեան հետ կապուած հարցեր, ութսունականներու կէսէն ետք երկիրը մատնեցին տնտեսական լճացումի[46] ինչ որ կրնար գլխաւոր պատճառներէն մէկը հանդիսանալ արտագաղթի:

1980ականներուն սկիզբ առած տնտեսական տագնապը, իսկ միւս կողմէ Ծոցի երկիրներու մէջ արհեստաւորներու կարիքը, Արեւմուտքի մէջ ճարտարագիտական ոլորտի յաջողութիւնները հրապուրած էին Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երիտասարդութիւնը, որ իր ապագան հարազատօրէն կը գտնէր այդ երկիրներուն մէջ:

Լիբանան հաստատուած սուրիահայերու մասին Ազդակ 1970ին կը գրէ . «Լիբանանի մէջ, այսօր, հազարաւոր սուրիահայեր կ'ապրին սպասողական վիճակի մէջ: Ոմանք անցագիր չունին ու անոր կը սպասեն, երբեմն անկարող ճամփորդելու, վիզա ունենալով հանդերձ: Ուրիշները վիզա կը սպասեն այն երկիրներէն, ուր կը մտադրեն գաղթել: Երկու պարագաներուն ալ սպասումը կ'երկարի ամիսներով, երբեմն տարիներով: ...Աշխատանքի արտօնագիր չունենալով, հոս գտնուող սուրիահայերը մեծ մասամբ չեն կրնար աշխատիլ օրինաւոր կերպով: Ապօրէն կերպով աշխատողներուն ալ վճարումը կ'ըլլայ ողորմելի: Իրենց հետ տրանելիք դրամին մեծ մասը հո՛ւս է որ կը սպառի» [47]:

Երկրի բարդ պայմանները, սակայն, արգելք չհանդիսացան, որ հայօճախի մշակութային կեանքը վերելք ապրի:

---

[45] Յովհաննիսեան, էջ 526-28:

[46] Յովհաննիսեան, էջ 529:

[47] Զաւարեանական, «Արտագաղթը իր զանազան երեսներով», *Ազդակ*, 25 Մարտ 1970:

1982 Մարտին, Հալէպի հայահոծ շրջանին մէջ, տեղի կ'ունենայ հիմնարկէքը Հայ Կեդրոնին[48], ծանօթ՝ Արամ Մանուկեան ժողովրդային տուն անունով: Շինարարական աշխատանքները կը շարունակուին նաեւ յետագայ տարիներուն: Վերելք կ'ապրի հայօճախին մշակութային, մարզական, բարեսիրական եւ հայրենակցական միութիւններու գործունէութիւնը: Կրթական բազմազան բարեփոխումներով հանդերձ, հայօճախին ղեկավարութիւնը ուղիներ կ'որոնէ հայակերտման կառոյցները պահպանելու, միաժամանակ անսալով կրթութեան նախարարութեան կողմէ հրապարակուած նոր հրամանագիրներուն՝ կը փորձէ պատշաճ ընթացք տալ անոնց:

Նոր թափ կը ստանայ հայ-արաբ մշակութային՝ գրական, թատերական, երաժշտական, նկարչական, համագործակցութիւնը, որուն նպատակն էր ծանօթացնել, արաբ ժողովուրդին իրազեկ դարձնել հայկական մշակոյթին եւ փոխադարձաբար հայութեան ծանօթացնել արաբ ժողովուրդին մշակոյթը:

Այսպիսով, սուրիահայ ենթօճախներու՝ փոքրաթիւ բնակավարերու նօսրացումով հետզհետէ թուային աճ պիտի արձանագրուէր երկրի գլխաւոր քաղաքներու մէջ, իսկ Սուրիայէն արտագաղթի պատճառով պիտի հզօրանային առաւելապէս ԱՄՆի, Ֆրանսայի եւ Եւրոպայի հայօճախները: Հոսքը՝ Լիբանան, եօթանասուններու երկրորդ կէսէն ետք հետզհետէ կը նուազի՝ հոն սկիզբ առած քաղաքացիական պատերազմին հետեւանքով:

ԿՐԹԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ

Սուրիոյ հանրակրթական վարժարանները իրենց ծագման օրէն օգտուած են ներքին ինքնավարութեան իրաւունքէն: Ասիկա կ'արտայայտուէր անով, որ հայկական վարժարանները առաջնորդուած էին սեփական ուսումնական ծրագիրով, իսկ ուսուցման հիմքը եղած էր հայոց լեզուն[49] (արեւմտահայերէնը):

Սուրիոյ անկախութենէն ետք, նոր իշխանութեան ձեւաւորման օրերուն, տիրող տարբեր ուժերու միջեւ տեղի ունեցած ներքաղաքական պայքարը, տնտեսական ցնցումները իրենց ազդեցութիւնը ունեցան երկրի կրթական համակարգին վրայ: Նոր վարչակազմին սահմանած օրէնքները այնքան ալ յուսադրող չէին. անոնց գործադրութիւնը յատկապէս փոքրամասնութիւններուն համար, իր բացասական ներգործութիւնը պիտի ունենար համայնքային կեանքի կրթամշակութային ոլորտին:

---

[48] Պարգեւ Տիգիճեան, «Հայ կեանք, Հալէպ. Հայ կեդրոնի հիմնարկէքի հանդիսութիւնը», *Ազդակ*, 20 Ապրիլ 1982:

[49] Փիշենկճեան, էջ 223:

Պէտք է նշել, թէ 1940-70՝ Սփիւռքի մէջ ազգային դպրոցի կազմակերպման եւ գործունէութեան առաւել վառ օրինակը հանդիսացաւ նաեւ Սուրիոյ հայ համայնքը իր կրթամշակութային եւ հասարակական-քաղաքական գործունէութեամբ:

Մինչեւ 1940ականներու կէսը Սուրիոյ հայկական վարժարաններու ուսումնակրթական ծրագիրի մէջ առաւել տեղ յատկացուած էր հայոց լեզուի եւ հայագիտական առարկաներու աւանդման: Արաբերէն լեզուի ուսուցումը հայկական կրթօճախներու մէջ նախնական էր եւ ոչ-պարտադիր: Հայագիտական առարկաներու ցուցակին մաս կը կազմէին հայոց պատմութիւնը, Հայաստանի աշխարհագրութիւնը, եկեղեցւոյ պատմութիւնը, ուսողութիւնը եւ այլ նիւթեր:

Բայց 1945-46ին սահմանուած նոր օրէնքը կը շեշտէր արաբերէն լեզուի ուսուցման եւ ընդհանրացման կարեւորութիւնը մասնաւոր դպրոցներու մէջ: Օրէնքը կը միտէր համայնքային դպրոցներու վերահսկողութեան ու տնօրինումին. «*Կրթական նախարարութիւնը որոշած է ուսումնական, առողջապահական եւ մանկավարժական հսկողութեան տակ առնել բոլոր մասնաւոր դպրոցները, կրթական քննիչները պետական վարժարաններու նման քննութիւն պիտի անցընեն վերոյիշեալ վարժարաններու մէջ*»[50]: Սահմանուած օրէնքով պետական պաշտօններէն եւ համալսարանական կրթութենէն կը զրկուէին բոլոր անոնք, որոնք վկայուած էին օտար եւ մասնաւոր վարժարաններէ[51]: Մասնաւոր վարժարանէ վկայուող աշակերտը չէր կրնար «թեկնածու ներկայանալ պետական որեւէ պաշտօնի» եւ չէր կրնար «*այդ վկայականներով մտնել պետական երկրորդական պետական վարժարաններ կամ համալսարան*»[52]: Նոր օրէնքով «*Ուսանողները, պաշտօնապէս ընդունելի վկայական ստանալու համար պէտք է ներկայանան պետական քննութեանց*»[53]: Այսպիսով Բարձրագոյն ուսման պայմանը արաբական պաքալորէայի պահանջն էր, ինչ որ կը պահանջէր հայկական դպրոցներու ուսման ծրագիրի հիմնական փոփոխութիւն:

Հակառակ ստեղծուած իրավիճակին՝ քառասունականներու վերջը կառավարութիւնը անյապաղ միջոցներ կը ձեռնարկէ հայօճախի դպրոցներու բարելաւման համար. «*Սուրիոյ Կրթական նախարարութիւնը, բացի ուսուցիչներէ, մեր վարժարաններուն կը յատկացնէ տարեկան որոշ գումար՝ կրթական նպաստ: Վերջացող տարեշրջանին Հալէպի եւ*

---

[50] «Տեղական կեանք. 'Եագզա եւ հայերը':

[51] «Տեղական կեանք. Քուաթլի կը խօսի իր եւ արաբականութեան մասին», *Արեւելք*, 24 Յուլիս 1947:

[52] Նոյն:

[53] Նոյն:

շրջաններու մեր 45 վարժարաններէն 35ին կառավարութիւնը յատկացուցած էր 16.500 սուրիական ոսկի գումար մը»[54]:

Այսպիսով, 1940ականներու երկրորդ կէսէն սկսեալ հայօճախի կրթական կեանքին մէջ կարեւոր փոփոխութիւններ տեղի ունեցան: Կրթական նոր քաղաքականութիւնը պիտի ստիպէր կամ մղէր հայկական ազգային վարժարաններու ուսման համակարգը պատշաճեցնելու տուեալ ժամանակի պահանջներուն, եւ հայ երեխաներուն ջամբել այնպիսի կրթութիւն եւ դաստիարակութիւն, որոնցմով պիտի պահպանէին ազգային ինքնագիտակցութիւնը՝ միեւնոյն ժամանակ պատրաստ ըլլային գործունէութիւն ծաւալելու Սուրիոյ մէջ, որպէս լիիրաւ քաղաքացիներ: Հետեւաբար, նախակրթարաններէն ներս յատուկ դասաժամեր պէտք է տրամադրուէին արաբերէն լեզուի եւ արաբերէնով աւանդուելիք դասանիւթերուն:

Սակայն արաբերէն լեզուն պաշտօնականացնելու առաջին իսկ օրէն հայ դպրոցը չէր կրնար արաբերէնը դիտել իբրեւ սոսկ լեզու, այլ պէտք էր հայ ուսանողին ծանօթացնել երկրի պատմութիւնն ու մշակոյթը, որոնցմով կարելի պիտի ըլլար հայ-արաբ ազգային լեզուական դժուարանցանելի պատուարը յաղթահարել: Այս առումով, Սուրիոյ կառավարութիւնը միջոցներ կը ձեռնարկէ հայկական դպրոցներուն նիւթական եւ բարոյական (արաբերէն լեզուի դասատուներ յատկացնել) օժանդակութիւն ցուցաբերելու:

Տիրող պայմաններուն առընթեր կը սկսին գործել բազմաթիւ նախակրթարաններ, միջնակարգեր եւ մշակութային այլ կառոյցներ: Անհրաժեշտութիւն կը դառնայ հայկական ազգային վարժարաններու միասնական մէկ ծրագիր-կանոնագիր ունենալը, որով պիտի պահպանուէր հայ տոհմիկ կրթական համակարգն ու գործելու եղանակը: Այդպիսի ծրագիրի մը ստեղծման անհրաժեշտութիւնը հասունցած էր նախ եւ առաջ այն պատճառով, որ պատկան մարմիններու անդամներ Սուրիան չէին դիտեր որպէս ժամանակաւոր հանգրուան, այլ երկրորդ հայրենիք, ուր պէտք էր մշտական բնակութիւն հաստատէին: Միասնական կանոնագիր-ծրագիրի ստեղծման պատճառներէն մէկը հանդիսացաւ նաեւ 1946ի Սուրիոյ նոր պետական կրթական ծրագիրի հրապարակումը, որուն հետեւանքով Սուրիոյ կրթական հաստատութիւնները աստիճանաբար սկսան ձեռնարկել երկրի պետական կրթական ծրագիրի կիրառման:

Սակայն ստեղծուած նոր ուսումնական ծրագիրը ունէր որոշ թերութիւններ, որոնք բացասաբար պիտի անդրադառնային հայ

[54] ԲԹ ԱԱԱ, դարան Դ., գործ 69, թերթ 6 («Տեղեկագիր», Սուրիահայ կրթական կեանքի մասին 1955էն 1956 դպրոցական տարեշրջանին):

երիտասարդութեան յետագայ ուսուցման վրայ: Սուրիոյ պետական կրթական ծրագիրը շատ դանդաղ կը ներմուծուէր հայկական դպրոցներ: Ուշադրութիւն կեդրոնացուած էին օտար լեզուներու, իսկ արաբերէն լեզուն - հակառակ նոր կրթական ծրագիրին, պարտադիր էր բոլոր հայկական վարժարաններու համար - դասաւանդումը կը կատարուէր մակերեսօրէն: Փաստօրէն ստեղծուած էր այնպիսի իրավիճակ, երբ հայ երիտասարդը աւելի լաւ սկսած էր տիրապետել ֆրանսերէնին եւ անգլերէնին, քան՝ արաբերէնին: Օտար լեզուի իմացութիւնը պիտի նպաստէր, որ շրջանաւարտներու մէկ մասը ուսումնառութիւնը կատարելագործելու համար մեկնի Եւրոպա կամ ԱՄՆ, ինչ որ բացասաբար կ'անդրադառնար Սուրիոյ ե՛ւ տեղական, ե՛ւ համայնքային կեանքի բարգաւաճման:

Ուսումնակրթական հիմնախնդիրներու առաջադրանքով մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հովանաւորութեամբ եւ նախաձեռնութեամբ 19 Սեպտեմբեր 1946ին պաշտօնական բացումը կը կատարուի ուսուցչական առաջին համագումարին: Այդ մտայղացումն էր ՆUOSS Գարեգին Ա. կաթողիկոս Յովսէփեանցին: Ան 26 Յունիս 1946 թուակիր շրջաբերականով թեմական առաջնորդներուն կը ծանուցէր «Առժամեայ կեդրոնական ուսումնական խորհուրդ» մը յառաջացնելու մասին՝ թեմերէն ներս որպէս կրթական հարցեր համակարգող մարմին: Խորհուրդը նկատի առնելով տարածաշրջանի պայմաններն ու կացութիւնը՝ 20 Յուլիսին կը փարի աշխատանքի, որ պիտի քննարկէր .-

Սուրիոյ եւ Լիբանանի ազատագրեալ պետութեանց կրթական նոր քաղաքականութիւնն եւ պահանջները.

Ներգաղթի հետեւանքով ստեղծուած եւ ստեղծուելիք փոխանցման շրջանը.

Թեմերու մէջ դեռ որոշ չափով տիրող ապակեդրոնացման վիճակը եւ ընդհանուր կրթական ծրագրի մը եւ կազմական կանոնագրի պակասը:

Ազգային Կեդրոնական վարչութեան նոր կացութեան հանդէպ բռնած ընթացքը[55]:

1959ին կրթական նախարարութեան համաձայնութեամբ պատրաստուած նախակրթարանի դասապահերու բաշխման ցուցակ[56].

դասեր	կարգեր					
	Ա.	Բ.	Գ.	Դ.	Ե.	Զ.
Արաբերէն լեզու						

[55] Յ. Թ., «Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերու ուսուցչական առաջին համագումարը», *Հասկ*, 9-10:1946, էջ 290-91:

[56] ՄՏԿԿ, հ. 3, ց. 1, թղթ. 106, թ. 69:

Արաբերէն պատմութիւն, Աշխարհագրութիւն եւ	12	11	10	10	8	8
քաղաքացիական կրթութիւն	-	-	1	2	5	5
Արաբերէն թուաբանութիւն	3	3	3	5	5	5
Արաբերէն գիտութիւն	1	1	1	3	3	3
Օտար լեզու	-	-	-	3	3	3
երգ	2	2	1	1	1	1
Ձեռային աշխատանք	4	4	4	3	3	3
Մարզանք	2	2	2	2	2	2
Հայերէն լեզուով աւանդելի դասեր						
Կրօն	2	2	3	3	3	3
Թուաբանութիւն	3	3	3	-	-	-
Գիտութիւն	1	1	1	-	-	-
Հայ լեզուի եւ մշակոյթի դասեր (հայ մշակոյթի դասերն են՝ Հայոց պատմութիւն եւ հայերէնով Աշխարհագրութիւն/	8	9	9	8	7	7
գումար	38	38	38	40	40	40

1967ի կիսուն, Սուրիոյ կրթական տնօրէնութիւնը յանձնարարագիրներ կ'ուղարկէ բոլոր դպրոցներու տնօրէններուն՝ «*պահանջելով կրթական նախարարութեան նախօրօք հրապարակուած օրէնքին կարգ մը ժրամադրութիւններուն անյապաղ իրագործումը*»[57]: Նոր յանձնարարագիրերով կը միտէին «*միօրինակութիւն հաստատել մասնաւոր եւ պետական դպրոցներուն միջեւ ուսումնական ծրագրի, ժամանակացոյցի, պաշտօնէութեան որակի, մակարդակի, վարձատրութեան եւ այլ կրթական երեւոյթներու տեսակէտէն*»[58]:

9 Սեպտեմբեր 1967ին Սուրիոյ կրթական նախարարութեան կողմէ վաւերացուած եւ նոյն ամսուն 11ին հրատարակուած հրամանագիրին չենթարկուած Սուրիոյ կաթողիկէ դպրոցներէն շատեր կը փակուին[59]:

---

[57] Յ. Չոլաքեան, *Յուշամատեան Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի*, հրատարակչատուն, 1997, էջ 230:

[58] ՄՏԿԿԱ, հ. 3, ց. 1, թղթ. 107, թերթ 3-7:

[59] «*Սիւրիոյ ազգային եւ միութենական բոլոր հայ վարժարանները, ինչպէս նաեւ հայ բողոքական վարժարանները վերաբացուեցան Հոկտեմբեր 9ին ... Կաթոլիկ վարժարաններ, ներառեալ հայ-կաթոլիկներ եւ մխիթարեաններ, շարունակեցին իրենց անզիջող ընթացքը: ... Սիւրիոյ պետութիւնը, գրաւումի եւ փակումի հրամանագիր հանեց 118 կաթոլիկ եւ միսիոնարական դպրոցներու դէմ, 40.000 աշակերտութիւնը կը մնան առանց դպրոցի*» (ՄՏԿԿԱ, հ. 3, ց. 1, թղթ. 55, թերթ 39): Փակուող դպրոցներուն շարքին էին Հալէպի Մխիթարեան Սուրբ Վառվառէի վարժարանը եւ Աշրաֆիէի նորակառոյց շէնքը *(Յուշամատեան*

Կաթողիկէ համայնքի 143 վարժարանները փակ մնացին. փակուեցան Քամիշլիի երկու կաթողիկէ վարժարանները[60]. փոխարէնը կը բացուի «*հին եւ նոր առաջնորդարանի սենեակներուն մէջ դպրոց մը*», որ 1975ին կ'ունենայ 370 երկսեռ աշակերտ, ուր կը դասաւանդուէր արաբերէն, ֆրանսերէն եւ հայերէն[61]:

****

1970էն ետք, հայկական դպրոցները Սուրիոյ մէջ կրցան մասնակիօրէն դուրս գալ 1960ականներու աւարտին ստեղծուած ճգնաժամային վիճակէն: Մասնակիօրէն, որովհետեւ 1973ի սահմանադրութեան 3րդ գլխու, «կրթական եւ մշակութային սկզբունքներ», 21րդ յօդուածը կը սահմանէր երկրի ազգային կրթութեան համակարգը.-

Կրթական եւ մշակութային համակարգը կը նպատակադրէ դաստիարակել արաբական, ազգային, ընկերվարական սերունդ մը՝ գիտական ուսումնառութեամբ, կառչած պատմութեան եւ հողին, հպարտ՝ իր հայրենիքով եւ մշակութային ժառանգութեամբ, պատրաստ պայքարելու ազգային միասնութեան, ազատութեան եւ ընկերվարական նպատակներու իրականացման համար[62]:

23րդ յօդուածի, համար (1)ի մէջ կ'ընդգծուէր «*Ազգային ընկերվարական կրթութեան անհրաժեշտութիւնը, որ հիմքն է միասնական արաբական ընկերվարական հասարակութեան կազմաւորման, կը շեշտէ բարոյական արժէքներու համախմբում եւ արաբ ազգի գերագոյն նպատակներու իրագործում: Պետութիւնը կ'աջակցի եւ կը պաշտպանէ կրթական այս համակարգը*[63]:

Թեմի վարժարաններուն համար հրատապ խնդիր եւ անյետաձգելի պահանջք կը մնայ կրօնի դասագիրքերու պատրաստութեան աշխատանքը: Դասագիրքերը պէտք էր պատշաճէին սուրիական «*հայրենիքին մէջ փիրող բացառիկ կացութեան: Այլ խօսքով՝ անոնք զերծ ըլլան զուտ եբրայական նկարագիր կրող մանրամասնեալ*

նուիրուած Հալէպի Մխիթարեան վարժարանի յիսնամեակին 1936-1986, Վենետիկ, էջ 171):

[60] Հայ Կաթողիկէ Անարատ յղութեանց քոյրերու աղջկանց վարժարան (1950-67), Հայ կաթողիկէ Ժողովրդապետութեան մանչերու վարժարան (1950-67)՝ Յ. Չոլաքեան, *Սուրիահայ դպրոցի պատմութիւն, Բ. հատոր,* հրատարակչատուն, Երեւան, 2021, էջ 278):

[61] *Պարբերաթերթ, հայ կաթողիկէ առաջնորդարանի*, Մայիս-Դեկտեմբեր:1975, Հալէպ, էջ 1:

[62] 1393/02/09-1973/3/13 "دستور الجمهورية العربية السورية"https://coursexamens .org/images/An_2013_2/Etude_superieure/Droit/CONST/Autres/ syrie. pdf, pg. 477:

[63] Նոյն:

պատմութիւններէ»[64] եւ ներկայացնէին Աստուածային յայտնութիւնը իրենց գլխաւոր կէտերուն մէջ, «*ցոլացնեն մեր եկեղեցւոյ ծիսական, դաւանական, եւ պատմական իւրայատուկ պատկերը, արդի մանկավարժութեան համապատասխան մեթոտներով*»[65]:

Դասագիրքերու պատրաստութիւնը կրնար հանդիպիլ բազմապիսի խոչընդոտներու՝ համապատասխան որակեալ անձերու բացակայութեան պատճառով, որովհետեւ «*... կրօնաւորներու կողմէ ըլլալիք գործ մըն է*»: Կը դիմուի ՄՏԿ կաթողիկոսութեան, որպէսզի կաթողիկոսութեան միաբանութիւնը ձեռնարկէ այս աշխատանքը, այլապէս՝ «*պիտի վտանգուի մեր վարժարաններէն ներս կրօնը հայերէնով դասաւանդելու հարցը, եւ մեզի [պիտի] պարտադրուին արաբերէնով պատրաստուած պետական դասագիրքերը*»[66]:

Կաթողիկոսութիւնը կը գնաահատէ թեմէն ներս նման ձեռնարկի պատրաստութեան առաջարկը, նկատի ունենալով համայնքի տեղի պայմաններն ու երկրի կացութիւնը, նպատակայարմար կը գտնէ ու կը թելադրէ, որ կրօնի դասագիրքերու պատրաստութեան իրենց աջակցութիւնը բերեն հայօճախին հոգեւորականներն, աշխարհական մասնագէտ ուսուցիչները Սրբազան հօր հովանաւորութեամբ, որովհետեւ անոր պատրաստութիւնը Անթիլիասի մէջ անկարելի կը գտնէ. «*տրուած ըլլալով որ մեր միաբանները մօտէն տեղեակ չեն սիւրիահայ վարժարաններու կրթական սիստէմի մանրամասնութեանց եւ այդ մարզին մէջ չունին հարկ եղած փորձառական ծանօթութիւնները եւ իրազեկ ալ չեն այն մասնաւոր պայմաններուն որոնք կը տիրեն տիրախնամ թեմիդ մէջ*»[67]: Կաթողիկոսարանը դասագիրքի տպագրութեան համար կը յայտնէ իր նիւթական աջակցութիւնը:

1972ին Բերիոյ թեմի Ուսումնական խորհուրդի նախաձեռնութեամբ Հալէպի Արեւելք տպարանէն լոյս կը տեսնեն *Կրօնի դասեր* Ա., Բ., Գ., Դ., Ե., Զ., Է., Ը. եւ Թ. գիրքերը[68]:

Արդարեւ, սուրիական իշխանութեան կողմէ հայկական՝ հայ աւետարանական, կաթոլիկ եւ ազգային վարժարաններուն համար, հայերէն լեզուի ուսուցման պետական ծրագիրի կողքին, տրամադրուած 4

---

[64] Նոյն, թերթ 34:

[65] Նոյն:

[66] ՄՏԿԿԱ, հ. 3, ց. 1, թղթ. 26, թերթ 35:

[67] ՄՏԿԿԱ, հ. 3, ց. 1, թղթ. 36, թերթ 9:

[68] Մեծի տանն Կիլիկիոյ Խորէն Ա. կաթողիկոսի թելադրութեամբ կրօնի դասագիրքերու պատրաստութեան պիտի ներգրաւուէին հայօճախին հոգեւորականներն, աշխարհական մասնագէտ ուսուցիչներ, առաջնորդ հօր հովանաւորութեամբ (ՄՏԿԿԱ, հ. 3, ց. 1, թղթ. 36, թերթ 9):

ժամ + 2 ժամ՝ կրօնի դասաժամերը համայնքի առկայ իրավիճակի համար առաջընթաց քայլ էին[69]:

Կարճատեւ դադարէ ետք, 1973-74ին փակուած հայկական դպրոցները՝ Հայ կաթողիկէ համայնքի Հալէպի Մխիթարեան, Զուարթնոց եւ միւս վարժարանները վերաբացուած էին[70] եւ հնարաւոր պայմաններով կ'իրանացնէին իրենց կրթադաստիարակչական եւ մշակութային գործունէութիւնը[71]:

1970ականներուն հայօճախի կրթական կեանքը կը սկսի վերելք ապրիլ, յատկապէս մեծ քաղաքներու, ի մասնաւորի, Հալէպի մէջ: Քաղաքի նախակրթարաններն ու երկրորդական (Քարէն Եփփէ Ազգային Ճեմարան, Լազար Նաճարեան Գալուստ Կիւլպենկեան եւ Կիլիկեան ճեմարան) աշակերտութեան թիւը աճ կ'արձանագրէ[72]: Սակայն հայերէն դասապահերու սահմանափակումն (շաբթուան 35 դասաժամերու չորսը հայոց լեզու եւ 2ը՝ կրօն - Ա.Ֆ.) ու հայերէն լեզուի մասնագիտացած մանկավարժներու կարիքը բոլոր ժամանակներու համար խիստ անհրաժեշտ կը դառնայ. «*Հայերէն լեզուի մասնագիտացած ուսուցիչ չունինք: Ամբողջ Հալէպի մէջ՝ երեք կամ չորս ուսուցիչ [կան]*»[73]:

Սուրիոյ կրթութեան նախարարութեան նոր ծրագիրով երկրէն ներս գործող բոլոր հայկական դպրոցները կը համարուէին արաբական՝ իրենց արաբական անուանումներով եւ կ'ընդգրկուէին Սուրիոյ կրթական համակարգին մէջ[74]: Հայկական դպրոցները ունէին նոյն կրթական աստիճանները, ինչ՝ Սուրիոյ պետական դպրոցները, ըստ Սուրիոյ կրթութեան մասին օրէնքին[75]: Դպրոցներէն ներս ուսուցման գործընթացը տեղի կ'ունենար արաբական պետական ծրագիրով:

Անմխիթար էր Սուրիոյ հայաբնակ գաւառներուն ներհամայնքային եւ կրթական վիճակը: Պատրաստուած ուսուցիչի կարիքը, գաւառներէն դէպի քաղաք աշխատանքի եւ յատկապէս ուսման համար տեղաշարժը, հետզհետէ հայութեան թիւի նուազումը եւ հայոց լեզուի ուսուցման խնդիրը

---

[69] Լեւոն Շառոյեան, «Ուրուագիծ Հալէպի հայկ[ական] վարժարաններու պատմութեան», *Յառաջ*, 2 Փետրուար 1988, էջ 2:

[70] Յ. Չոլաքեան, *Տարեգրութիւն հայ աւետարանական Բեթէլ վարժարանի, 1923-2013*, հրատարակչատուն, Հալէպ, 2016, էջ 367:

[71] Ն. Յարութիւնեան, *Լիբանանի եւ Սիրիայի հայկական դպրոցները*, հրատարակչատուն, Երեւան, 2002, էջ 205:

[72] «Տեսակցութիւններ. Մեթր Գրիգոր Էպլիղաթեանի հետ սուրիահայ գաղութի մասին», *Ազդակ*, 2 Նոյեմբեր 1972:

[73] Շ., «Մեր տեսակցութիւնները Անդրանիկ Խաչատուրեանի հետ (սուրիահայ պատգամաւոր)», *Ազդակ*, 10 Յունիս 1977:

[74] Յարութիւնեան, էջ 208:

[75] Յարութիւնեան, էջ 211:

առօրեայ մտահոգութիւնն էին Բերիոյ թեմի ազգային իշխանութեան. «*Կայ սակայն Ազգային Իշխանութեան համար շրջաններու կնճռոտ պարագան, որոնց պարպումին հետեւանքով հետզհետէ կը նուազի հայութեան թիւը եւ կը բազմապատկուին դպրոցներ պահելու դժուարութիւնները*»[76]:

1974ին, նախագահ Հաֆէզ Էլ-Ասատի որոշումով կը հիմնուի պետական կրտսերներու սկաուտական շարժումը[77] **(طلائع البعث)՝** նախակրթարանի առաջինէն մինչեւ վեցերորդ կարգերու համար: 1975-76՝ հայկական նախակրթարաններուն աշակերտութիւնը եւս կը միանայ այդ կազմակերպութեան, կը նշանակուին յատուկ ուսուցիչ-ուսուցչուհիներ[78]: 1970ականներու սկիզբը Սուրիոյ կրթական տնօրէնութեան որոշումով միջնակարգի եւ երկրորդական կարգերու բոլոր աշակերտները արդէն ունէին իրենց պետական համազգեստը, զոր պարտաւոր էին հագուիլ շաբթուան վեց օրերուն: «*Նախակրթարանի կրթական աստիճան ունեցող բոլոր դպրոցներն ունեն իրենց առանձին համազգեստը: Միջնակարգ եւ երկրորդական վարժարաններում պետութիւնը պարտադրում է միասնական զինուորական համազգեստ (տղայ, թէ աղջիկ)*»[79]: Կրթական ծրագիրի փոփոխմամբ, կը դադրի դասաստուգման եռամսեայ դրութիւնը. փոխարէնը տարեկան քննութիւնները կը կատարուին միայն կիսամեակին եւ տարեվերջին՝ պահելով ամսական գրաւորներու դրութիւնը[80]:

Պէտք է կարեւորութեամբ նշել, որ պետութեան կողմէ հայերէն լեզուն չէր արգիլուած, այլ արտօնուած էր: Իսկ հայերէն լեզուն կարգափոխութեան մէջ նկատի չառնելու հիմնական նպատակը միօրինակութիւն ստեղծելն էր դպրոցներէն ներս. «*Հայերէն լեզուն*

---

[76] «Ազգային ընդհ. Ժողովը գյաջողութեամբ աւարտեց իր աշխատանքները», *Ազդակ*, 27 Հոկտեմբեր 1972:

[77] Կրտսերներու պետական սկաուտական շարժումը **(طلائع البعث)՝** Սուրիոյ մանուկներու ազգային կազմակերպութիւնը, մանկավարժական կրթական կազմակերպութիւն է, որ կը ներառէր նախակրթարանի երեխաները առաջինէն մինչեւ վեցերորդ դասարան: Կազմակերպութիւնը նպատակ ունէր դաստիարակել եւ բարձրացնել երեխաներու կրթութիւնը (վերապատրաստում եւ կողմնորոշում), զարգացնել իրենց տաղանդներն եւ ունակութիւնները, դասընթացքներ կազմակերպել երկրի տարբեր կեդրոններու մէջ, ինչպիսիք էին ամառային բանակումներ (ճամբարներ), միջդպրոցական մրցաշարքեր տարբեր մարզերու մէջ (միջպետական, հանրապետական եւ նահանգային) մակարդակներու վրայ (**ar-ar. facebook.com /451171741618183/photos/-منظمة-طلائع-البعث-تعريف-المنظمةمنظمة-طلائع-البعث-المنظمة-الوطنية-للطفولة-السورية/7183489715671 2**):

[78] Յ. Չոլաքեան, *Ութսունամեակ Հալէպի ազգային Սահակեան վարժարանի*, հրատարակչատուն, Հալէպ, 2007, էջ 397:

[79] Յարութիւնեան, էջ 212:

[80] Չոլաքեան, *Յուշամատեան Քարէն Եփփէ*, էջ 250:

արփօնած ենք, ձեզի կը մնայ հետաքրքրութիւն սփեղծել, յաջողակներուն նուէր տալ», «պահերը եւս աւելցնելը անկարելի է, միջազգային օրէնքը արդէն խախտած ենք շաբաթապահերը 36ի բարձրացնելով»[81]:

Հայ դպրոցի գլխաւոր յառաջադրանքը պիտի ըլլար առաւել զարկ տալ հայեցի դաստիարակութեան եւ լեզուի ուսուցման: Սակայն, ըստ Չոլաքեանի, հայերէնի մակարդակը հեռու էր գոհացուցիչ ըլլալէ, որուն «*գլխաւոր պատճառներէն մէկը անոր նիշի (գնահատականի - Ա.Ֆ.) կարգափոխութեան մէջ դեր չունենալն է*»[82]: Ուստի հարկ կը համարուի, թեմի ուսումնական խորհուրդին կողմէ լուրջ քայլեր ձեռնարկել հայերէնի լաւագոյն ուսուցման համար: Կ'առաջարկուին՝ հետեւողականութիւն, հայերէն լեզուի ուսուցիչներու վերապատրաստում, նախակրթարանի աւարտական կարգի հայերէնի հաւաքական քննութիւն եւ յաճախակի հանդիպումներ հայերէնաւանդ ուսուցիչներու միջեւ[83]: Այս շրջանին է որ իրարու ետեւէ կը սկսին լոյս տեսնել դպրոցական պարբերականները, ուր տեղ կը գտնեն ուսումնասիրութիւններ, աշակերտի առօրեան ներկայացնող իրապաշտ տողեր, բանաստեղծութիւններ, երգիծանկարներ եւն.:

1976-77ին կրթութեան նախարարութեան թիւ 704/443 որոշումնագիրով, մանկապարտէզները կը նկատուին կրթական առանձին հանգրուան, անկախ նախակրթարաններէն եւ կ'անցնին պետական հսկողութեան տակ[84]:

1977ին Հալէպի մէջ կը գործէին 15, իսկ գաւառներուն՝ 7-8 նախակրթարաններ (որոնց մէջ կային նաեւ մանկապարտէզներ), շուրջ 15.000 աշակերտներով: Հալէպի երեք երկրորդական վարժարաններու՝ Ազգային Քարէն Եփփէ ճեմարանի, Կիլիկեան ճեմարանի եւ Լազար Նաճարեան Գալուստ Կիւլպէնկեան երկրորդական վարժարանի աշակերտութեան թիւը կը հասնէր 1500ի: Կարելի է ենթադրել, որ ողջ Սուրիոյ տարածքին հայ աշակերտութեան ընդհանուր թիւը շուրջ 20.000 էր[85]:

1981-82ին կրթական նախարարութիւնը կարգափոխութեան նոր օրէնք կը հրապարակէ, որով «*երկրորդական բաժին անցնելու պարտաստ՝ պրէօվէի յաջողակ աշակերտներուն առջեւ*»[86] տարիքային սեղմում կը դնէր: Այսպիսով «*1965ի ծնունդները 1981ին*» պիտի զրկուէին Ժ. կարգ

---

[81] Չոլաքեան, *Ութսունամեակ Հալէպի*, էջ 333:
[82] Չոլաքեան, *Յուշամատեան Քարէն Եփփէ*, էջ 251:
[83] Նոյն:
[84] Չոլաքեան, *Ութսունամեակ Հալէպի*, էջ 405:
[85] Շ.:
[86] Չոլաքեան, *Յուշամատեան Քարէն Եփփէ*, էջ 326:

անցնելու հնարաւորութենէն[87]: Կարգափոխութեան օրէնքով պիտի տուժէր մասնաւոր վարժարաններու աշակերտութիւնը: Թեմի ուսումնական խորհուրդը վերատեսութեան կ'ենթարկէ մանկապարտէզի քառամեայ ծրագիրը եւ զայն կը դարձնէ՝ եռամեայ. այլ խօսքով հայ աշակերտը մէկ տարի կանուխ պիտի սկսէր յաճախել դպրոց[88]: Սահմանուած օրէնքով նաեւ կը ճշտուէր Թ. կարգի պետական քննութեան արդիւնքներու հիման վրայ աշակերտի անցումը Ժ. կարգ: Չապահովելու պարագային անոնք չէին կրնար իրենց ուսումը շարունակել գիտական եւ գրական բաժամունքէն ներս, այլ պէտք է շարունակէին՝ արհեստից, կամ վաճառանական երկրորդական վարժարաններ: Անպատեհութիւնը այն էր, որ հայկական վարժարանները չէին օժտուած վերոյիշեալ բաժամունքներով:

Հայկական վարժարաններու ղեկավարութիւնը կը կանգնի նոր յառաջադրանքի առջեւ: Վերատեսութեան կ'ենթարկուի մանկապարտէզի քառամեայ ծրագիրը ու կը վերածու եռամեայի: Օրէնքէն տուժող աշակերտները կրնային երթալ «արհեստից վարժարաններ եւ ճարտարագիտական ուսումնարաններ»[89]: Այս իրավիճակին բարուօք լուծում տալու համար Քարէն Եփփէի խնամակալութիւնն ու ազգային իշխանութիւնը համատեղ «*պետական մարմիններու...թոյլտուութեամբ ...*»[90] կը ստեղծեն "երեկոյեան" անուան տակ ուսումնական դասընթացք, ուր կը սկսին յաճախել պրէօվէին յաջողած, բայց տարիքային պատճառով տուժած աշակերտները: «Այս դասընթացքը իր բնոյթով յար եւ նման էր առաւօտեան դասընթացքներուն»[91]: Չոլաքեան «երեկոյեան» բաժինի դասընթացքի մասին կը գրէ, որ 1981-82 կրթաշրջանին 65 ուսանողներով սկսած այս նախաձեռնութիւնը, հինգ տարի ետք, 1985-86 կրթաշրջանին, կը հաշուէր 254 ուսանող-ուսանողուհի[92]: Ճեմարանի երեկոյեան դասարաններու աշակերտներուն կը մատուցուէին հայերէն դասեր ու կը վկայուէին ցերեկայիններուն հետ, իբրեւ լիիրաւ շրջանաւարտներ: Երեկոյեան Ճեմարանը գործեց մինչեւ 1986 Դեկտեմբեր, երբ պետական

---

[87] Նոյն:

[88] Նոյն:

[89] Նոյն:

[90] Նոյն, էջ 347:

[91] Նոյն, էջ 327: Դասընթացքէն զանց առնուած էին ձեռային աշխատանքը, մարզանքը եւ զինուորական կրթութեան դասերը: Հետեւողը երեք տարի անց պետական քննութեան կրնար մասնակցիլ իր անհատական դիմումով, բայց ոչ՝ դպրոցի անունով: Այս ծրագիրին մաս կը կազմէր հայոց լեզուն, որ կը դասաւանդուէր Ճեմարանի հայերէնաւանդ ուսուցիչներու կողմէ:

[92] Չոլաքեան, *Յուշամատեան Քարէն Եփփէ*, էջ 326, 347:

օրէնքով փակուեցաւ ու աշակերտութեան մէկ մասը անցաւ ցերեկային բաժին:

1980ականներուն Սուրիոյ մէջ կը գործէին 38 հայկական ամէնօրեայ դպրոցներ (անոնցմէ 24 Հալէպ եւ շրջակայքը)[93]:

Սուրիոյ բոլոր պետական երկրորդական վարժարանները ունէին նաեւ գրական, արուեստից ու առեւտրական թեքումով բաժիններ: Մինչ հայկական երկրորդական վարժարանները ունէին գիտական բաժնի ծրագիրը միայն: Տարուէ տարի հետզհետէ կը բարձրանային համալսարանի գիտական ճիւղերու ընդունման նախապայման գնահատականները: Այս պատճառ հանդիսացաւ, որ հայ աշակերտը սկսէր ուղղուիլ գրական թեքում ունեցող վարժարաններ: Այս իրավիճակը նկատի ունենալով հայկական երկրորդական վարժարանները, յանուն ուսանողութեան հայեցի դաստիարակութեան, ջանացին յառաջացնել գրական բաժին: 1992-93 կրթաշրջանէն սկսեալ Քարէն Եփփէ ճեմարանը գիտական բաժինի կողքին նաեւ գրական բաժինի լսարան սկսաւ: Յետագային գրական բաժինով օժտուեցաւ Լազար Նաճարեան Գալուստ Կիւլպէնկեան երկրորդական վարժարանը եւս:

1993-94ին, կը հրապարկուի կրթական նոր հրամանագիր մը, որով իններորդ (պրէօվէ) կարգի աշակերտներուն տարիքային սահմանափակումէն բացի, արգելք մը եւս կը դրուէր՝ պրէօվէի պետական գնահատականին առնչուող: Նոր օրէնքով իններորդ կարգի պետական քննութեան յաջողած աշակերտը պէտք էր 200էն վեր գնահատական ունենար (ամբողջական նիշը 310 է, առանց կրօնի՝ 290 - Ա.Ֆ.), որպէսզի կարենար անցում կատարել աւագ դպրոցի առաջին լսարան (10րդ կարգ), այլապէս պիտի ստիպուէր յաճախել արհեստից վարժարան[94]:

Սակայն հայօճախը յուզող հարցերէն էր ու կը մնար հայեցի դաստիարակութեան գերխնդիրը, որ պայմանաւորուած էր հայերէնի ուսուցման անիշխանութեամբ: 1979ին կատարուած ուսումնասիրութիւնները կու գային ցոյց տալու, որ իւրաքանչիւր կրթական հաստատութիւն եւ կամ ուսուցիչ կը գործէր իրարմէ անտեղեակ եւ անկախ: Ազգային կրթօճախներէն շատեր տեղեակ չէին ազգային առաջնորդարանի կողմէ հայերէնի ուսուցման համար իրենց տրամադրուած ծրագիրի մասին: Յստակ չէր նաեւ, որ 1967էն ետք հայերէնի սահմանուած շաբաթական չորս պահերու ընթացքին հայերէնի

---

[93] Հրաչ Չիլինկիրեան, *Միջին Արեւելքի հայկական համայնքները պարտադրուած իրականութեան եւ անորոշ ապագայի միջեւ, Քաղաքակրթական եւ մշակութային հետազօտութիւնների կենտրոն, վերլուծական տեղեկագիր, № 7*, Երեւան, 2015, էջ 224:

[94] Չոլաքեան, *Յուշամատեան Քարէն Եփփէ*, էջ 397:

դասանիւթերը ի՞նչպէս կ'ուսուցանուէին: Արդեօ՞ք միեւնոյն եղանակով եւ ժամանակով թէ՞՝ ըստ ուսուցիչի հայեցողութեան:

Մամուլը եւս կ'անդրադառնայ այս երեւոյթիւն. «մայրենին ուսուցանելու լաւագոյն ծրագիրն ու փորձը կրնան արդիւնաւորել միայն զայն սերունդին փոխանցելու մեր շատ անգամ յումպէտս վատնուած ճիգերը: Երբ մէկ է սփիւռքահայ դպրոցներուն հիմնական առաքելութիւնը»[95], կը գրէ *Ազդակ*:

Նախակրթարան, միջին եւ աւագ դպրոցներու կրթութեամբ երեխան շաբաթական 21 ժամի հայերէնի փոխարէն կը լսէր միայն արաբերէն:

Ծիսական լեզուի (հայոց լեզուի) ուսուցման գծով Սուրիոյ բոլոր հայկական դպրոցները մինչեւ 1980ականներ չունէին լեզուի հմուտ մասնագէտ ուսուցիչներ, թէեւ կային երկար տարիներու փորձառութիւն ունեցողներ: 1980ականներուն անոնց կու գան աւելնալու.

- մանկավարժական բարձրագոյն կրթութիւն եւ աշխատանքային փորձ չունեցող երիտասարդ ուսուցիչներ,

- երկրորդական վարժարաններ չաւարտած (միջնակարգի վկայական ունեցող) երիտասարդներու փաղանգ, որոնք գործի հանդէպ իրենց ունեցած սիրոյ եւ նուիրումի կողքին, չունէին մասնագիտական պատրաստուածութիւն այս կամ այդ դասանիւթի վերաբերեալ, յատկապէս՝ «*հայագիտական համապատասխան գիտելիքներ, կրթական ասպիճան, դասաւանդման մեթոդիկա եւ մանկավարժական հմտութիւն ու վարպետութիւն*»[96]:

****

2003ին, պետական հրամանագիրով նախակրթարաններու վեցամեայ դրութիւնը կը փոխարինուէր իննամեայ դրութեամբ: Նոր օրէնքով, նախակրթարանի աշակերտը վեց կարգի փոխարէն, պիտի շարունակէր ուսումը մինչեւ իններորդ կարգ եւ համապատասխան պետական քննութենէ ետք կրնար ստանալ նախակրթարանի վկայական: Առաջինէն մինչեւ իններորդ կարգը կը համարուէր ուսումնակրթական հիմնական օղակը /التعليم الاساسي/: Այս օրէնքէն օգտուեցաւ հայօճախի վարժարաններուն մէկ մասը, որ վեցամեայ կրթութիւն կը հրամցնէր: Չոլաքեան կը գրէ, որ շարք մը վարժարաններ «*անմիջապէս ընդունեցին այս հնարաւորութիւնը եւ վերածուեցան իննամեայ վարժարանի...*»[97]:

---

[95] Յ. Չոլաքեան, «Կրկին հայերէնի ուսուցման մասին», *Ազդակ*, 14 Մարտ 1979:

[96] Յարութիւնեան, էջ 217:

[97] Չոլաքեան, *Տարեգրութիւն հայ աւետարանական Բեթէլ*, էջ 510-11: Պետական հրամանագիրով 2003ին Սուրիոյ մէջ նախակրթութիւնը իննամեայ դրութեան վերածուեցաւ, ուր իններորդ դասարանի աւարտին տեղի ունեցած պետական քննութեամբ շրջանաւարտը պիտի ստանար նախակրթարանի պետական վկայական: Սուրիահայ դպրոցական որոշ ցանցեր ողջունեցին, որովհետեւ

Հեղինակը կը թուարկէ այն վարժարաններուն անունները, որոնք անմիջապէս որդեգրեցին պետական այս ծրագիրը՝ Հալէպի Կրթասիրաց, հայ կաթողիկէ Զուարթնոց, Քեսապի ազգային Ուսումնասիրաց, Լաթաքիոյ ազգային Նահատակաց վարժարանները, իսկ այլ վարժարաններ հնարաւորութիւն չունենալու պատճառաւ շարունակեցին մնալ վեցամեայ դրութեամբ[98]: Վերոյիշեալ վարժարանները իննամեայ դառնալով «*անմիջապես պեղութիւնից խնդրեցին, որ իրենց տրամադրուէր լրիւ երկրորդական վարաժարան դառնալու իրաւունքը, ինչը նրանց շնորհուեց*»[99]:

Կարգ մը վարժարաններ աշակերտութեան նուազ թիւի եւ հնարաւորութիւններու անբաւարարութեան պատճառով շարունակեցին մնալ վեցամեայ նախակրթարաններու կարգավիճակով, ինչպէս՝ Եաքուպէի, Տերիքի, Րաքքայի, Թէլ Ապիատի, Հասիչէի ազգային վարժարանները: Վեցամեայ մնացին նաեւ Դամասկոսի ՀԲԸՄի Սահակեան, Քեսապի Հայ Կաթողիկէ Բարեյուսոյ վարժարանները:

Հայ աւետարանական համայնքի կրթական խորհուրդը եւս կը սերտէ իրավիճակը եւ կ'որոշէ երկու դպրոցներ՝ Հալէպի Բեթէլ վարժարանը եւ Քեսապի Նահատակաց վարժարանները վերածել միջնակարգ վարժարաններու:

2005-6 կրթաշրջանի աւարտին նորաբաց միջնակարգերը կու տան իրենց առաջին հունձքը: Հայ դպրոցականները պետական քննութեան մէջ փայլուն յաջողութիւններ ձեռք կը բերեն:

Արդարեւ, յետանկախութեան տարիներէն սկսեալ, Սուրիոյ կրթական նախարարութեան կողմէ սահմանուած կրթական փոփոխութիւնները սոսկ պատճառ չէին կրնար հանդիսանալ արտագաղթի: Ներքին գաղթի եւ արտագաղթի շարժառիթները առաւե՛լ տնտեսական էին, որոնք բացասաբար կ՛անդրադառնային հայօճախի կրթական եւ մշակութային

հայկական վեցամեայ նախակրթարանները ինքնաբերաբար կը վերածուէին իննամեայ դպրոցի, որմէ մեծապէս պիտի շահէր հայ դպրոցը: Հալէպի եւ շրջաններու օրէնքէն օգտուելու կարիք չունէին ՀԲԸՄի Լազար Նաճարեան - Գալուստ Կիւլպէնկեան վարժարանը, Կիլիկեան Ճեմարանը, Դամասկոսի եւ Գամիշլիի հայ կաթողիկէ վարժարաններըինչպէս նաեւ Հալէպի Մխիթարեանը, Դամասկոսի Թարգմանչացը, Գամիշլիի Եփրատ վարժարանը, որովհետեւ միջնակարգ-երկրորդական կամ միջնակարգ բաժիններ ունէին: Հալէպի Կրթասիրաց Միութեան Կրթասիրաց եւ Անարատ Յղութեան քերց Հայ կաթողիկէ Զուարթնոց վարժարանները անմիջապէս ընդունեցին այս հնարաւորութիւնը եւ վերածուեցան իննամեայ վարժարանի:

[98] Չոլաքեան, *Տարեգրութիւն հայ աւետարանական Բեթէլ*, էջ 511:

[99] Արաքս Փաշայեան, Լիլիթ Յարութիւնեան, *Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ*,Լուսակն, Երեւան, 2011, էջ 94:

հաստատութիւններուն վրայ: Տնտեսութեան կայունութիւնը ներշնչող ազդակ կրնար հանդիսանալ ներդրումներ կատարելու, երկիրը տարածաշրջանին մէջ աւելի ուժեղ դարձնելու, սակայն տարածաշրջանի քաղաքական անկայունութիւնը պիտի մտահոգէր անհատը եւ մերթընդմերթ պիտի մղէր արտագաղթի:

****

Արցախի ինքնորոշման իրաւունքի պայքարի եւ յատկապէս Հայաստանի անկախացումէն ետք սկսաւ սուրիահայութեան արտագաղթը դէպի հայրենիք: Ասոր մեծապէս նպաստեց սփիւռքահայերուն կեցութեան վերաբերեալ 10ամեայ ժամկէտով յատուկ անձնագրերու տրամադրումը Հայաստանի Հանրապետութեան կողմէ, ինչպէս նաեւ, աւելի ուշ, երկքաղաքացիութեան վերաբերեալ ՀՀ օրէնքի ընդունումը[100]: ՀՀ արտագաղթած սուրիահայերէն ոմանք արդիւնաւէտ գործունէութիւն ծաւալեցին հայրենիքէն ներս:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ուսումնասիրելով Սուրիահայերու 1946-2010ականներուն տեղաշարժերուն տուն տուող պատճառները. կրնանք եզրակացնել, թէ.-

- Արտագաղթը կապուած էր տարածաշրջանէն ներս տիրող քաղաքական անկայուն իրավիճակին.
- Շիի եւ Սիւննի իսլամ յարանուանութիւններու՝ քաղաքական բեմի վրայ ունեցած շարունակական խուլ մրցակցութեան,.
- Տարածաշրջանի վրայ իր ուժը պարտադրելու Իսրայէլի բացայայտ քաղաքականութեան.
- Իսլամ երկիրներու մէջ, իրենց ապագային նկատմամբ քրիստոնեայ համայնքներու անվստահութեան.
- Ռուսման պատրուակով մեկնողներ եւ չվերադարձողներ.
- Հայերու արտագաղթին նպաստող գործօններէն մէկն ալ այն էր, որ արտագաղթողները ազգականներ ունէին արտասահմանեան երկիրներու մէջ՝ ձգտում անոնց օրինակին հետեւելու.
- Արտագաղթին կը նպաստէր նաեւ իսլամ ծայրայեղականներու աշխուժացումը ո՛չ միայն Սուրիոյ մէջ, այլեւ Մերձաւոր եւ Միջին Արեւելքի շարք մը երկիրներու մէջ: Այդ պատճառով սուրիահայութեան շրջանակներէն ներս յառաջացած էր որոշակի մտավախութիւն եւ անվտանգութեան առնչուող ներքին տագնապ:

[100] Սուրիոյ օրէնսդրութեամբ չէր արգիլուեր երկքաղաքացիութիւնը:

THE DEMOGRAPHIC SHIFTS OF THE SYRIAN ARMENIANS BETWEEN 1946 AND THE 2010S (CHALLENGES AND OPTIONS IN EDUCATION)

(SUMMARY)

Ani Fishenkjian
fishenkjianani@outlook.com

During the late 20th and early 21st centuries civil wars and invasions took place in diverse countries of the Middle East (Lebanon, Iraq, Iran, Kuwait, Syria). These wars shook the peaceful life of the local Armenian communities in the traditional Armenian Diaspora, triggering instability and a quest for safe havens.

Some in these Armenian communities were indirectly forced to flee the infighting and emigrate to more peaceful countries. Others stayed but at a high price, sometimes at the cost of their lives. Eventually, these shifts led to the loss of the usual living conditions of these communities.

The paper focuses on the Syrian Armenian community and examines the domestic and foreign causes of these shifts and their consequences.

The Armenian community of Syria, which had a centuries old history, had an immense increase in its numbers due to the exile of hundreds of thousands of Armenians to Syria in the early 1900s and the settlement of a part of these remnants in Aleppo, Damascus and other parts of Syria. After this huge incoming wave, the community reshaped itself and as of the 1940s started to develop and prosper. However, the country's independence struggle, the repatriation of Armenians to Soviet Armenia, state restrictions and instability in the region forced large numbers of Syrian Armenians to leave Syria and take refuge in other countries, where they faced identity preservation concerns related to language, education, living conditions, cultural conflicts and contradictions in the social setup.

The paper highlights the challenges the Syrian Armenian community faced: the new rules and regulation policies of education in Syria and an ever-decreasing student population. This made it very hard for the Syrian Armenian schools to fit in the ever-changing curricula, the ideological inculcation and the Syrian educational policies which were meant to 'produce' Syrian Baathist-socialist generations. Without a doubt, this ran contrary to the mission of Syrian Armenian schools, which was that of preserving Armenian identity among the new generations and developing exemplary Syrian Armenian citizens.

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ Ի. Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԷՍԻՆ ԵՒ ԻԱ. ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ
(Փոխակերպման ազդեցութիւններ եւ մարտահրաւէրներ)

Վահէ Սարգսեան
Vsargsyan83@gmail.com

ՄՈՒՏՔ

Վրաստանը Հայաստանի Հանրապետութեան համար չի առանձնանում իբրեւ սոսկ հարեւան: Երկու կողմից շրջափակուած լինելով թշնամական երկրներով (Թուրքիա, Ադրբեջան)՝ ՀՀն արտաքին աշխարհի հետ կապն ապահովում է միայն Իրանի ու Վրաստանի միջոցով: Հետեւաբար, Վրաստանում ապրող հայութեան անցեալն ու ապագան չեն կարող դիտուել սոսկ համայնքային խնդիրներ: Իբրեւ մտաւոր, հոգեւոր-մշակութային, ֆինանսատնտեսական պատկառելի ներուժ ունեցող եւ Վրաստանի պատմութեան մէջ ամէնամեծ դերակատարումն ունեցած էթնիկ միաւոր՝ Վրաստանում ապրող հայութիւնը վճռորոշ ազդեցութիւն կարող է ունենալ Վրաստանի հետ կառուցուող բազմակողմ յարաբերութիւններում:

Ինչպէս ՀՀ-Վրաստան յարաբերութիւնների խորացման, Վրաստանի՝ իբրեւ ՀՀի համար կարեւորագոյն ռազմավարական նշանակութեան երկրի տեղի ու դերի, այնպէս էլ վիրահայութեան ճակատագրի շուրջ ծաւալուող քննարկումների մէջ առանցքային է Ջաւախքում (ներկայիս վարչաբաժանմամբ՝ Վրաստանի Սամցխէ-Ջաւախքի նահանգ եւ Քուեմօ Քարթլի նահանգի Ծալկայի շրջան) ապրող հայութեան գործօնը:

Երկրորդ աշխարհամարտից յետոյ Խորհրդային Վրաստանում տեղի ունեցած վարչատարածքային վերաբաժանումները, պատերազմի ընթացքում եւ յետագայում տեղի ունեցած ժողովրդագրական մեծ ու փոքր տեղաշարժերը լրջագոյն ազդեցութիւն ունեցան նաեւ Վրացական ԽՍՀի հարաւային հոծ հայաբնակ շրջանների թէ՛ վարչական բաժանումների, թէ՛ ժողովրդագրական պատկերի վրայ: Նշուած հատուածներից զանգուածօրէն տեղափոխուած մուսուլման տարրին (թուրք-մեսխէթցիներ) փոխարինելու եկաւ Իմերէթից եւ Վրաստանի տարբեր այլ մարզերից այստեղ տեղափոխուած վրացական (քարթուելական) տարրը, տեղի ունեցան նաեւ վարչական վերաբաժանումներ: Յատուկ քաղաքականութեան արդիւնքում՝ 1950-80ականներին Ջաւախքի շրջաններում հայ բնակչութիւնը չի աւելացել եւ, ընդհակառակը, ինչ-որ տեղ նուազել է, իսկ վրացիների թիւը՝ կտրուկ աւելացել: Յետխորհրդային

տարիներին եւս ջաւախահայութիւնն ապրում է «ժողովրդագրական ձմեռ», եւ հայութեան թուաքանակն ունի նուազման միտումներ:

Վերոշարադրեալից ելնելով՝ յուժ կարեւոր է ե՛ւ պաշտօնական վիճակագրութեան միջոցով ի ցոյց դնել Վրաստանի հայութեան թուապատկերը, ե՛ւ փաստերի ու իրողութիւնների յենքի վրայ ներկայացնել շարժընթացը՝ յընթացս վերլուծելով հայութեան թուի փոփոխութիւնների խորքային պատճառներն ու դրանց վրայ ազդող գործօնները եւ հետեւանքները: Սոյն աշխատանքում ԽՍՀՄ եւ Վրաստանի պաշտօնական մարդահամարների տուեալների յենքի վրայ ներկայացուած է Վրաստանի հայութեան ժողովրդագրական պատկերի փոփոխութիւնը՝ 1959--2014 ժամանակափուլում:

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ (ԱՌԱՆՑ ՋԱՒԱԽՔԻ)

Ա. Խորհրդային շրջան (1959-1989)

Երկրորդ աշխարհամարտից յետոյ ընկած ժամանակահատուածում ամբողջ Վրաստանի տարածքում ապրող հայութեան թիւն աճի փոխարէն, ընդհակառակը, ունեցաւ նուազման միտում: Այսպէս, մարդահամարների տուեալներով, 1959ին ամբողջ Վրաստանում հայութեան թիւը կազմում էր 442,900 մարդ[1], 1970ին՝ 452,300[2], 1979ին՝ 448,000[3], իսկ ահա 1989ին՝ 437,200 մարդ[4]: Հետաքրքրական է, որ այս նոյն տարիներին ադրբեջանցիների թիւը, համապատասխանաբար, կազմում էր 153,600,

---

[1] Յովհաննէս Ալեքսանեան, «Հայ ազգաբնակչութիւնը միութենական հանրապետութիւններում՝ ըստ 1959-1989 թթ. մարդահամարների տուեալների», *Սփիւռքագիտութիւն, տարեգիրք*, Երեւան, 2013, էջ 46:

[2] *Итоги Всесоюзной переписи населения 1970 года, том IV, Национальный состав населения СССР, союзных республик, краев, областей и национальных округов* (1970ի համամիութենական մարդահամարի արդիւնքներ, հատոր IV, ԽՍՀՄի, միութենական հանրապետութիւնների, երկրամասերի, մարզերի եւ ազգային շրջանների բնակչութեան ազգային կազմը. վիճակագրութիւն), Մոսկուա, «Статистика», 1973, էջ 324:

[3] Г.В. Новикова, В.И. Дашко, “Самцхе-Джавахети: в эпицентре интересов,” *Российский институт стратегических исследований, Грузия: проблемы и перспективы развития, т. 1,* (Գ.Վ. Նովիկովա, Վ.Ի. Դաշկո, «Սամցխէ-Ջաւախեթի. հետաքրքրութիւնների էպիկենտրոնում», *Ռազմավարական հետազօտութիւնների ռուսական ինստիտուտ, Վրաստան. հիմնախնդիրներ եւ զարգացման հեռանկարներ),* Մոսկուա, РИСИ, 2002, էջ 237. հմմտ.՝ Գ. Աւագեան, *Հայաստանը եւ հայերս աշխարհում*, Երեւան, 1994, էջ 109:

[4] *Национальный состав населения РСФСР по данным Всесоюзной переписи населения 1989 г.* (ՌՍՖՍՀ բնակչութեան ազգային կազմը՝ ըստ 1989ի համամիութենական մարդահամարի), Մոսկուա, Республиканский информационно-издательский центр, 1990, էջ 5:

217,800, 225,700, 307,600 մարդ, այսինքն՝ այն աճել է մօտ երկու անգամ: Ադրբեջանցիների թուի աւելացման փաստն այստեղ մեծապէս կապուած է վրացական միջավայրում կրօնական անհամատեղելիութեան, հետեւաբար՝ նաեւ ձուլման վտանգից բացարձակապէս հեռու լինելու հանգամանքի հետ:

Վրաստանում հայերի եւ ադրբեջանցիների մարդահամարները				
Տարի	1959	1970	1979	1989
Ադրբեջանցիներ	153,600	217,800	225,700	307,600
Հայեր	442,900	452,300	448,000	437,200

1959ին Վրաստանում անցկացուած մարդահամարի արդիւնքներով՝ 442,916 հայերից միայն 364,381ն են իրենց մայրենի լեզուն համարում հայերէնը, մնացած 78,535 հայերից 44,184ն իրենց մայրենի լեզուն համարել են վրացերէնը, 33,342ը՝ ռուսերէնը, 1009 հայեր իրենց մայրենի լեզուն համարել են այլ լեզուներ[5]:

Ինչպէս տեսնում ենք, տասնեակ հազարաւոր հայեր արդէն իսկ անցեալ դարակէսին կորցրել էին իրենց լեզուն, ժամանակի ընթացքում նաեւ ազգային ինքնագիտակցութիւնը եւ կանգնել ձուլման եզրին: Ինչու՞ ենք հենց առաջնահերթօրէն լեզուով պայմանաւորում վրացացման գործընթացը: Ըստ ուսումնասիրող Թ. Վարդանեանի՝ վրացացման գործընթացների կարեւորագոյն զէնքը **վրացերէն լեզուն է** (ընդգծումը՝ Վարդանեանի)՝ «*....Դա այն հզօր միջոցն է, որը, տարածուելով էթնիկ եւ կրօնական փոքրամասնութիւնների շրջանում, արագացնում է վերջիններիս ինքնութեան վերափոխումները դէպի վրացականութիւն, գործընթաց, որի հանգուցակէտը վերջնական ձուլումն է վրացական հանրոյթի մէջ*», հաւաստում է նա[6]: Հայութեան էթնոփոխակերպումը տեղի է ունեցել Վրաստանի «ստեղծած» համապատասխան միջավայրում, որը կարող ենք անուանել նաեւ պարտադրուած վրացականացում կամ քարթուելիզացում: Գործընթաց, որին մասնակցել են երկրում ապրող ինչպէս իբերակովկասեան էթնոլեզուաընտանիքի ճիւղերին պատկանող *(քարթուելական ճիւղ՝ աջարներ, մեգրէլներ, սուաններ, լազեր, աբխազաադղական ճիւղ՝ աբխազներ),* այնպէս էլ

[5] Գէորգ Խուդինեան, «Վրաստանի ազգաբնակչութիւնը, 1. Բնակչութեան էթնիկական կազմը եւ կառավարութեան ժողովրդագրական քաղաքականութիւնը մինչեւ 1950ականների վերջը», *Ազգրամարդ*, 47:1994, էջ 10-11, հմմտ.՝ В.Ш. Джаошвили, *Население Грузии, экономико-географическое исследование* (Վ.Շ. Ջաոշվիլի, Վրաստանի բնակչութիւնը. տնտեսաաշխարհագրական ուսումնասիրութիւն), Թբիլիսի, «Мецниереба», 1968, էջ 55:

[6] Թ. Վարդանեան, «Վրացացման գործընթացները Վրաստանում», http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4226 :

հնդեւրոպական *(հայեր, սլաւոնական ժողովուրդներ, յոյներ, քրդեր, եզդիներ)* եւ սեմական *(իրեաներ, ասորիներ)* ժողովուրդները: Պատահական չէ, որ, օրինակ, 1959ի ԽՍՀՄ պաշտօնական մարդահամարի տուեալներով, Վրաստանում [այդ թւում՝ Հարաւօսական Ինքնավար Մարզում (ՀԻՄ)] ապրող 141,000 օսերից 16,933 օս, որպէս մայրենի լեզու, նշել է վրացերէնը, 62,878 աբխազներից՝ 1187ը, 72,938 յոյներից՝ 1937ը, 51,582 հրեաներից՝ 35,322ը (վրացական հրեաներ) եւն.[7]: Այս ճանապարհով ԺԹ. դարի վերջին եւ Ի. դարի առաջին տասնամեակներին Կախէթում, Գորիի գաւառում եւ Վրաստանի բազմաթիւ այլ մարզերում հազարաւոր հայեր կորցրին լեզուն, իսկ խորհրդային եւ յետագայ տարիներին, նաեւ յայտնուելով պարտադրանքի տակ՝ ձուլուեցին[8]: Ուսումնասիրողները ցոյց են տուել, որ բազմաթիւ ենթաէթնոսներ պարունակող վրաց ժողովուրդը միշտ աւելացել է ոչ թէ ի հաշիւ բնական աճի, այլ՝ այլ ժողովուրդներին ձուլելու ճանապարհով[9]:

Բ. Յետխորհրդային շրջան (1989-2014)

ԽՍՀՄ փլուզումը, անկախացող Վրաստանում բռնկուած պատերազմներն ու երկրում նոր թափ ստացած այլամերժման, ազգայնամոլական ու ձուլման քաղաքականութիւնն իր ծանր հետքը թողեց Վրաստանում ապրող հայութեան թուաքանակի, ազգային գիտակցութեան եւ դիմադրողականութեան վրայ: Այսպէս, համեմատելով 1989ի եւ 2002ի Վրաստանի պաշտօնական մարդահամարի տուեալները՝ հաստատենք, որ 13 տարուայ ընթացքում կտրուկ նուազել է երկրում ապրող ազգային փոքրամասնութիւնների թուաքանակը՝ 29,9%ից հասնելով 16,2%ի[10]: Կտրուկ ընկել է հայերի թիւը, եւ, չնայած այդ

---

[7] Գէորգ Խուդինեան, «Վրաստանի ազգաբնակչութիւնը, 3. Վրաստանում ապրող ազգութիւնները», *Ազատամարտ*, թիւ 49:1994, էջ 6. նաեւ նոյնի՝ «Վրաստանի ազգաբնակչութիւնը, 4. Վրաստանում ապրող ազգութիւնները», 50:1994, էջ 13:

[8] Այս շրջանների էթնիկ հայութեան պատմական անցեալի եւ նրանց հետ տեղի ունեցածի մասին հանգամանօրէն տե՛ս՝ Ս. Կարապետեան, *Հայերը Կախէթում*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Պէյրութ, 2004. նաեւ՝ Վ. Սարգսեան, *Հայերը Գորիի գաւառում եւ սահմանակից շրջաններում, Գլոբուս յատուկ թողարկում*, 10(43):2013:

[9] Թ. Վարդանեան, «Վրաստանը միաէթնիկ հանրոյթի ձեւաւորման ճանապարհին», http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4840. նաեւ՝ Գէորգ Խուդինեան, «Վրաստանի ազգաբնակչութիւնը, 2. Էթնիկ կազմի փոփոխութիւնները եւ կառավարութեան ժողովրդագրական քաղաքականութիւնը 1960-1980ական թթ.», *Ազատամարտ*, 48:1994, էջ 8:

[10] *Საქართველოს მოსახლეობის 2002 წლის პირველი ეროვნული საყოველთაო აღწერის შედეგები, ტომი I, თბილისი, 2003 წ., III. მოსახლეობის განაწილება სქესის, ასაკის, ეროვნების, ქალაქელობის, სარწმუნოების, ქორწინებისა და განათლების მიხედვით, ცხრილი N 20, საქართველოს მუდმივი მოსახლეობა*

հանգամանքին, հայերը Վրաստանում թուաքանակով երրորդ տեղում էին (վրացիներից ու ադրբեջանցիներից յետոյ)[11]: Այստեղ պէտք է հաշուի առնել այն հանգամանքը, որ 2002ի մարդահամարը չի անցկացուել ինչպէս Աբխազիայում[12], այնպէս էլ Հարաւային Օսիայում: Աբխազիայում, ինչպէս յայտնի է, ապրում են մեծ թուով հայեր: Այսպէս, որոշ ուսումնասիրողների տուեալներով՝ 1995ին (վրաց-աբխազական արիւնալի պատերազմի աւարտից յետոյ) Աբխազիայում բնակւում էր 91,160 աբխազ, 89,900 վրացի (մեգրէլներ), 61,960 հայ, 51,560 ռուս, 3500 հազար յոյն[13]: Հայերի փոքր թուաքանակ ապրում է նաեւ Հարաւային Օսիայում, որտեղ եւս գրեթէ չի անցկացուել 2002ի մարդահամարը[14]:

ცალკეული ეროვნებების მიხედვით (2002ի Վրաստանի բնակչութեան առաջին ազգային մարդահամարի արդիւնքները, հատոր I, Թբիլիսի, 2003, III. բնակչութեան բաշխումն ըստ սեռի, տարիքի, ազգութեան, քաղաքային տարածքի, կրօնի, ամուսնութեան եւ կրթութեան, աղիւսակ թիւ 20, Վրաստանի մշտական բնակչութիւնն ըստ առանձին ազգութիւնների):

[11] *საქართველოს მოსახლეობის 2002*:

[12] Աբխազիայի տարածքում 2002ին մարդահամար է անցկացուել միայն Կոդորի կիրճում, որի վրայ մինչեւ 2008 տարածւում էին Թբիլիսիի իրաւասութիւնները: Ըստ այդ տուեալների՝ կիրճում բնակւում էր 1956 մարդ, որից վրացիներ՝ 1912, աբխազներ՝ 9, օսեր՝ 2, հայեր՝ 1, ռուսներ՝ 23, ադրբեջանցիներ՝ 6, ուկրաինացիներ՝ 2 *(საქართველოს მოსახლეობის 2002* წლის პირველი ეროვნული საყოველთაო აღწერის შედეგები, ტომი I, ცხრილი N 22, (2002ի Վրաստանի բնակչութեան առաջին ազգային մարդահամարի, աղիւսակ թիւ 22):

[13] А. Ю. Скаков, *Абхазия: Социально-демографические проблемы, экономика, политика, РИСИ, Грузия: проблемы и перспективы развития, т. 1*, (Ա. Եու. Սկակով, Աբխազիա. Սոցիալական և ժողովրդագրական խնդիրներ, տնտեսութիւն, քաղաքականութիւն, ՌՀՌԻ, Վրաստան. խնդիրներ եւ զարգացման հեռանկարներ), Մոսկուա, РИСИ, 2002, էջ 132:

[14] 1989ի ԽՍՀՄ մարդահամարի տուեալներով՝ Հարաւօսական ԻՄի 98,527 բնակչից հայերի թիւը կազմել է 984 (1,0%): 2002ին Վրաստանի պաշտօնական մարդահամարը Հարաւային Օսիայի նախկին ԻՄի տարածքում անցկացուել է միայն Ախալգորի (նախկին Լենինգորի) շրջանի արեւելեան՝ Վրաստանի կողմից վերահսկուող հատուածում, ըստ որի՝ 7703 բնակչից 6520ը վրացիներ են, 1110ը՝ օսեր, 37ը՝ հայեր, 20ը՝ ռուսներ, մնացածը՝ այլ ազգեր (საქართველოს მოსახლეობის 2002 წლის პირველი ეროვნული საყოველთაო აღწერის შედეგები, ტომი I, ცხრილი N 22): 1989ից 2015 Հարաւային Օսիայում պաշտօնական մարդահամար չէր անցկացուել: 2008ի վրաց-օսական պատերազմի արդիւնքում նախկին ինքնավար մարզի ամբողջ տարածքի վրայ վերահսկողութիւն ունենալուց, անկախութեան հռչակումից եւ մասամբ ճանաչուելուց յետոյ Հարաւային Օսիայում պաշտօնական մարդահամար անցկացուեց 2015ին, որի տուեալներով՝ Հարաւային Օսիայում բնակւում էր 378 հայ [Республика Южная Осетия, Управление государственной статистики, Итоги всеобщей переписи населения республики Южная Осетия 2015 года,

Վրաստանի բնակչութեան ազգային կազմը եւ թուաքանակը 1989ի եւ 2002ի մարդահամարների տուեալներով[15]					
	1989	2002	Բնակչութեան աճ (%)	1989, ընդհ. բնակչթեան. յրբերկցթն. (%)	2002, ընդհ. բնակչթեան. յրբերկցթն. (%)
Բնակչութեան ընդհ. թիւ	5,400,841	4,371,535	1,029,306 (80,9%)	100	100
Վրացի	3,787,393	3,661,173	-126.220 (96,7%)	70,1	83,8
Հայ	437,211	248,929	-188.282 (56,9%)	8,1	5,7
Ադրբեջանցի	307,556	284,761	-22.795 (92,6%)	5,7	6,5
Ռուսներ	341,172	67,671	-273.501 (19,8%)	6,3	1,5
Օսեր	164,055	38,028	-126,027 (23,2%)	3,0	0,9
Յոյն	100,324	15,166	-85,158 (15,1%)	1,9	0,3
Աբխազ	95,853	3527	-92,326 (3,7%)	1,8	0,1
Ուկրայնացի	52,443	7039	-45,404 (13,4%)	1,0	0,2
Այլ ազգեր	114,834	45,241	-69,593 (39,4%)	2,1	1,3


Ինչպէս երեւում է աղիւսակից, 13 տարուայ ընթացքում Վրաստանի հայութեան թիւը նուազել է 188,282ով: Եթէ նոյնիսկ հաշուի առնենք, որ աւելի քան 60-70 հազար հայեր 2002ին չեն հաշուառուել Վրաստանի վերահսկողութեան տակ չգտնուող Աբխազիայի ու Հարաւային Օսեթիայի տարածքում, ապա հայութեան թուի՝ 120-130,000ով նուազումը եւս խօսում է ժողովրդագրական լրջագոյն փոփոխութիւնների, Վրաստանի հայութեան շրջանում առկայ «ժողովրդագրական ձմռան» եւ դրանից բխող մարտահրաւէրների մասին:

2002ի մարդահամարի տուեալներով՝ Վրաստանում ապրող 248,929 հայերից մայրենի լեզուն հայերէնն են համարել 235,531ը: 5692 հայեր, որպէս մայրենի, նշել են վրացերէնը, 37ը՝ աբխազերէնը, 12ը՝ ադրբեջաներէնը, 3ը՝ օսերէնը, 7525ը՝ ռուսերէնը, 129ը՝ այլ լեզուներ[16]:

официальное издание, раздел 4. Национальный состав населения, родной язык и гражданство, 4.1. Национальный состав населения, Цхинвал, 2016, էջ 98 (Հարաւային Օսիայի Հանրապետութիւն, Վիճակագրութեան պետական վարչութիւն, Հարաւային Օսիայի Հանրապետութեան 2015ի բնակչութեան ընդհանուր մարդահամարի արդիւնքներ, պաշտօնական հրապարակում, բաժին 4. Բնակչութեան էթնիկ կազմը, մայրենի լեզուն եւ քաղաքացիութիւնը, 4.1. Բնակչութեան ազգային կազմը, Ցխինվալ)]:

[15] *საქართველოს მოსახლეობის 2002*, (աղիւսակ թիւ 20, Վրաստանի մշտական բնակչութիւնն ըստ էթնիկ խմբերի):

[16] *საქართველოს მოსახლეობის 2002* (աղիւսակ թիւ 24, Վրաստանի բնակչութեան բաշխումն ըստ էթնիկ, մայրենի եւայլ լեզուների):



Կովկաս-Այսրկովկասի էթնիկ քարտէզը 1989-2003, հեղինակ՝ Արթուր Ցուցիեւ (Աղբիւր՝ *Атлас этнополитической истории Кавказа (1774-2004)* (Կովկասի էթնոքաղաքական պատմութեան ատլաս (1774-2004), Մոսկուա, «Европа», 2006

2014 Նոյեմբերի 5-19ը Վրաստանում անցկացուած պաշտօնական մարդահամարի արդիւնքների համաձայն՝ երկրի ընդհանուր բնակչութեան թիւը կազմել է 3,713,804 [նախորդ՝ 2002ի մարդահամարի համեմատ (4,371,535 մարդ)՝ նուազել է 657,731ով կամ 15,1%ով: Պաշտօնական տուեալներով՝ հայ ազգաբնակչութիւնը կազմում է երկրի բնակչութեան 4,53%ը[17] կամ 168,100 մարդ[18]՝ կրկին զբաղեցնելով երրորդ

[17] Საქართველოს სტატისტიკის ეროვნული სამსახური, საქართველოს 2014 წლის მოსახლეობის საყოველთაო აღწერის ძირითადი შედეგები მოსახლეობის განაწილება (%) ეროვნების მიხედვით (Վրաստանի ազգային վիճակագրական ծառայութիւն, 2014ի Վրաստանի բնակչութեան մարդահամարի հիմնական արդիւնքները, գծանկար 5. Բնակչութեան բաշխուածութիւնը (%) ըստ ազգութեան), Թբիլիսի, 2018, էջ 7, 9. հմմտ.՝ 2014 წლის მოსახლეობის საყოველთაო აღწერა საქართველოში (2014ի Վրաստանի բնակչության ընդհանուր մարդահամար), էջ 2, (https://georgia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/full%20calendar_geo_0.pdf :

[18] Შერიგებისა და სამოქალაქო თანასწორობის საკითხებში საქართველოს სახელმწიფო მინისტრის აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, მოსახლეობის 2014 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, საქართველოს მოსახლეობის რაოდენობის განაწილება 10 ყველაზე მრავალრიცხოვანი ეროვნების მიხედვით (Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրաւահաւասարութեան

տեղը (վերստին զիջելով վրացիներին ու ադրբեջանցիներին): 3,713,804 բնակչից 3,224,600ը վրացիներ են (86,8%), 233,000ը՝ ադրբեջանցիներ (6,3%), 168,100ը՝ հայեր (4,5%), 26,500ը՝ ռուսներ (0,7%), 14,400ը՝ օսեր (0,4%), 12,200ը՝ եզդիներ (0,3%), 6000ը՝ ուկրայնացիներ (0,2%), 5700ը՝ քիստեր (չեչէններ) (0,2%), 5500ը՝ յոյներ (0,1%), 2400ը՝ ասորիներ (0,1%), 14,300ը՝ այլ ազգութիւններ (0,4%), 500 մարդ հրաժարուել է նշել իր ազգութիւնը[19]:

2014ի պաշտօնական վիճակագրական տուեալների համաձայն՝ Վրաստանում ապրող 168,100 հայերից 109,000ը կամ Վրաստանի ընդհանուր բնակչութեան 2,9%ը Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդ է[20], որից 29,368ը բնակւում է մայրաքաղաք Թբիլիսիում, 1082ը՝ Աջարիայի Ի.Հում, 144ը՝ Գուրիայում, 67ը՝ Իմերէթում, 182ը՝ Կախէթում, 35ը՝ Մցխէթա-Մթիանէթում, 2ը՝ Ռաճա-Լեչխումի եւ Քուեմօ Սուանէթում, 23ը՝ Սամեգրելօ-Զեմօ Սուանէթում, 64,115ը՝ Սամցխէ-Ջաւախքում, 13,926ը՝ Քուեմօ Քարթլիում, 97ը՝ Շիդա Քարթլիում[21]:

հարցերով պետնախարարի գրասենեակ, ժողովրդագրական վիճակագրութիւն, 2014ի մարդահամարի տուեալներ, Վրաստանի բնակչութեան բաշխումն ըստ 10 ամէնամեծաթիւ ազգութիւնների), https://smr.gov.ge/uploads/prev/__72a21b22.pdf :

[19] სტატისტიკის ეროვნული სამსახური (საქსტატი), მოსახლეობის 2014 წლის საყოველთაო აღწერის ძირითადი შედეგები, ზოგადი ინფორმაცია, საქართველოს მოსახლეობის რაოდენობის განაწილება 10 ყველაზე მრავალრიცხოვანი ეროვნების მიხედვით (Ազգային վիճակագրական ծառայութիւն (Սաքստատ), 2014ի մարդահամարի հիմնական արդիւնքները, ընդհանուր տեղեկութիւններ, Վրաստանի բնակչութեան բաշխումն ըստ 10 ամէնամեծաթիւ ազգութիւնների) (http://census.ge/files/results/Census%20Release_GEO.pdf :

[20] Շերիգებისა და სამოქალაქო თანასწორობის საკითხებში საქართველოს სახელმწიფო მინისტრის აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, მოსახლეობის 2014 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, საქართველოს მოსახლეობის რაოდენობის განაწილება აღმსარებლობის მიხედვით (Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրաւահաւասարութեան ...Վրաստանի բնակչութեան բաշխումն ըստ կրօնի), (https://smr.gov.ge/uploads/prev/__98482047.pdf : 3,097,600 մարդ Ուղղափառ Եկեղեցու հետեւորդ է (83,4%), 398,700ը՝ մուսուլմաններ են (10,7%), 19,200ը՝ կաթոլիկներ (0,5%), 12,400ը՝ Եհովայի վկաներ (0,3%), 8600ը՝ եզդիական կրօնի հետեւորդ (0,2%), 2500ը՝ բողոքականներ (0,1%), 1400ը՝ յուդայականներ (0,0%) եւն.:

[21] შერიგებისა და სამოქალაქო თანასწორობის საკითხებში საქართველოს სახელმწიფო მინისტრის აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, მოსახლეობის 2014 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, მოსახლეობის განაწილება რეგიონებისა და აღმსარებლობის მიხედვით (დეტალური მონაცემები) (Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրաւահաւասարութեան ...,

Վրաստանի հայութեան ազգաբաշխական պատկերը՝ 2014ի վիճակագրական տուեալների համաձայն[22]			
Մայրաքաղաք/ նահանգ	Բնակչութեան ընդհանուր թիւ	Հայ բնակչութեան թիւ (%)	Հայ բնակչութեան բացարձակ թիւ
Թբիլիսի (մայրաքաղաք)	1,108,717	4,82	53,440
Ռաճա-Լեչխումի եւ Քուեմօ Սուանէթի	32,089	0,03	10
Քուեմօ Քարթլի	423,986	5,07	21,496
Սամեգրելօ-Զեմօ Սուանէթ	330,761	0,04	132
Գուրիա	113,350	1,08	1224
Իմերէթ	533,906	0,13	694
Աջարիայի ԻՀ	333,953	1,64	5,477
Շիդա Քարթլի	263,382	0,79	2,081
Կախէթ	318,583	0,69	2198
Սամցխէ-Ջաւախք	160,504	50,52	81,087
Մցխեթա-Մթիանէթ	94,573	0,31	293

Վրաստանում ապրող 168,100 հայերից հայոց լեզուն մայրենի լեզու է նշել 144,812ը: Այսինքն՝ 23,288 հայ արդէն իսկ չի խօսում ազգային

բնակչութեան բաշխումն ըստ տարածաշրջանների եւ կրօնների (մանրամասն տուեալներ), https://smr.gov.ge/uploads/prev/_22___9e6277bd.xls :

[22] *საქართველოს სტატისტიკის ეროვნული სამსახური, საქართველოს* 2014, էջ 11-12. Վրաստանի ազգային վիճակագրական գրասենեակի սոյն՝ *«2014 թուականի Վրաստանի բնակչութեան մարդահամարի հիմնական արդիւնքները»* խորագրով ծաւալուն ժողովածուում եւս բացակայում են Վրաստանում ապրող ազգութիւնների վերաբերեալ բացարձակ թուերը. այդ ցուցանիշերը տրուած են միմիայն տոկոսների տեսքով: Աւելին՝ նշուած ժողովածուում առանձին ազգութիւնների տոկոսային յարաբերակցութիւնը ներկայացնող տասնորդական կոտորակները տրուած են տասնորդական ճշտութեամբ: Հաշուի առնելով դա՝ մենք հիմք ենք ընդունել ՄԱԿի Բնակչութեան հիմնադրամի ներկայացրած վիճակագրական փաստաթուղթը *(«Վրաստանում 2014 թուականի ընդհանուր մարդահամար»,* UNFPA / Forset, 2019, https://georgia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/full%20calendar_geo_0.pdf), որտեղ նոյն տասնորդական կոտորակները ներկայացուած են հարիւրերորդական ճշգրտութեամբ: Քանի որ մենք Վրաստանի հայ բնակչութեան ինչպէս ընդհանուր, այնպէս էլ այս կամ այն մարզի բացարձակ թիւը հաշուարկել ենք՝ հիմնուելով տոկոսային յարաբերակցութեան վրայ, ապա հարիւրերորդական ճշտութեամբ տասնորդական կոտորակների վրայ կատարուած հաշուարկներով հայ բնակչութեան թիւը ե՛ւ առաւել մօտ է իրական թուին, ե՛ւ աւելի մեծ է, քան առաջին դէպքում:

լեզուով եւ բռնել է ուծացման ուղին: 144,812 հայերից 57,316ը մայրենի լեզուի հետ տիրապետում է նաեւ վրացերէնին, 74,258ն ազատօրէն չի տիրապետում վրացերէնին, 13,238ը չի նշել՝ տիրապետու՞մ է վրացերէնին, թէ՞ ոչ: Մայրենին հայերէնը համարող 144,812 հայերից 37,500ը բնակւում է մայրաքաղաք Թբիլիսիում, 3237ը՝ Աջարիայի Ի/Հում, 998ը՝ Գուրիայում, 528ը՝ Իմերէթում, 1483ը՝ Կախէթում, 150ը՝ Մցխէթա-Մթիանէթում, 2ը՝ Ռաճա-Լեչխումի եւ Քուեմօ Սուանէթում, 117ը՝ Սամեգրելօ-Զեմօ Սուանէթում, 79,878ը՝ Սամցխէ-Ջաւախքում, 20,095ը՝ Քուեմօ Քարթլիում, 824ը՝ Շիդա Քարթլիում[23]:

Ինչպէս երեւում է աղիւսակից, 2002ի համեմատութեամբ՝ 12 տարուայ ընթացքում Վրաստանի հայութեան թիւը, համաձայն պաշտօնական տուեալների, կրճատուել է 80,829ով՝ 248,929ից դառնալով 168,100:

Աւելի մանրակրկիտ քննարկման հարց համարելով Ջաւախքից դուրս ապրող Վրաստանի հայութեան շարժընթացի խորհրդային ժամանակափուլը՝ նշենք, որ, տիրող համընդհանուր մթնոլորտին համահունչ, Խորհրդային Վրաստանի հայութեան մի ստուար հատուած իր միջնակարգ կրթութիւնն ստացաւ ռուսալեզու դպրոցներում, իսկ ահա յետխորհրդային շրջանում հակառուսական տրամադրութիւնների, պայմաններում իրար ետեւից փակուող ռուսալեզու դպրոցները հայութեան դեռեւս գոյատեւող հատուածներին եւս վերջնականօրէն նետեցին վրացական դպրոցների գիրկը: Ռուսալեզու դպրոցներ յաճախող հայութեան վերջին բեկորները եւս յայտնուեցին մշտապէս առկայ ուծացման գործընթացի վերջնահանգրուանին: Դժուար էր միանշանակօրէն ռուսալեզու դպրոցները համարել վրացականացման յորձանքի պատնէշ, այնուամենայնիւ, այն մի միջոց էր, որով սեփական լեզուին չտիրապետող հայութեան այդ հատուածը տարբերւում էր վրացիներից, որով էլ, ինչ-որ տեղ, զերծ էր մնում վերջնական տարրալուծումից: Յետխորհրդային շրջանում ռուսալեզու դպրոցների հետ մեծ թափով վերանում է նաեւ հայութեան նշեալ հատուածի այս «տարբերակիչ» գործօնը:

[23] Შერიგებისა და სამოქალაქო თანასწორობის საკითხებში საქართველოს სახელმწიფო მინისტრის აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, მოსახლეობის 2014 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, მოსახლეობის განაწილება რეგიონების, მშობლიური ენისა და ქართული ენის თავისუფლად ფლობის მიხედვით (Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրաւահաւասարութեան …, բնակչութեան բաշխումն ըստ տարածաշրջանների, մայրենի լեզուի եւ վրացերէնի սահուն իմացութեան), https://smr.gov.ge/uploads/prev/_20_1___a40096f8.xls,

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՁՈՒԼՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ

Վրաստանի հայութեան շրջանում տեղի ունեցած էթնոծուլման (փոխակերպման) գործընթացը ցոյց տանք Գորիի գաւառի օրինակով: Այսպէս՝ 2002ի մարդահամարի արդիւնքներով՝ Ստորին (Շիդա) Քարթլի նահանգի 4՝ Գորիի, Կասպի, Քառելի եւ Խաշուրի շրջանների[24] հայութեան թիւը կազմում էր ընդամէնը 3521[25]: Սա այն պայմաններում, երբ 1886-1914ին Գորիի գաւառի հայութիւնը աճել է 38,14%ով, իսկ տարեկան աճը կազմել է 1,36%[26]: Աճի առաւել մեծ թափ է գրանցել յատկապէս Գորի քաղաքի հայութիւնը՝ նոյն 1886-1914ի համար գրանցելով 140,0%, այստեղ տարեկան աճը կազմում է 5%: Ինչպէս տեսանք, Գորիի գաւառի՝ Հարաւօսական ԻՄի կազմում ներառուած տարածքներում հայութեան թիւը մեծ տոկոս չէր կազմում (1886ին՝ 750 կամ գաւառի հայ բնակչութեան 4,1%ը): Հետեւաբար՝ ԻՄի հայութեան թիւը 2002ի հաշուարկների մէջ չներառելը[27] մեզ այնքան էլ չի

---

[24] Այս 4 շրջանները ձեւաւորուել են նախկին Գորիի գաւառի մեծագոյն հատուածի վրայ, գաւառի հիւսիսային, փոքրագոյն հատուածը մտել էր Հարաւօսական ԻՄի մէջ: Յետխորհրդային շրջանում՝ 1990ականների կէսերին, Վրաստանի մարզային բաժանման արդիւնքում նշեալ՝ 4 եւ Հարաւօսական ԻՄի տարածքի մեծ մասի յենքի վրայ կազմաւորուեց Շիդա Քարթլի նահանգը: Յաւելենք նաեւ, որ Վրաստանի նշուած վարչատարածքային բաժանմամբ՝ Հարաւային Օսիայի նախկին ինքնավար մարզի տարածքները ներառուեցին 4 նորաստեղծ նահանգների մէջ. արեւելեան հատուածը ներառուեց Մցխէթա-Մթիանէթի, կենտրոնական հիմնական հատուածը՝ Շիդա Քարթլիի, արեւմտեան մի փոքր հատուած մտցուեց Իմերէթի եւ, վերջապէս, հիւսիսարեւելեան եւս մի փոքր հատուած ներառուեց Ռաջա-Լեչխումի եւ Քուեմօ Սուանեթիի նահանգների մէջ: Յաւելենք, որ մինչ օրս Վրաստանի փաստացի տիտղոսը տարածւում է միայն Գորիի, Կասպի, Քառէլի եւ Խաշուրի շրջանների վրայ:

[25] შერიგებისა და სამოქალაქო თანასწორობის საკითხებში საქართველოს სახელმწიფო მინისტრის აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, მოსახლეობის 2002 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, საქართველოს მუდმივი მოსახლეობის განაწილება სქესისა და უპირატესი ეროვნებების მიხედვით (Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական հաւասարութեան հարցերով պետնախարարի գրասենեակ, ժողովրդագրական վիճակագրութիւն, 2002ի մարդահամարի տուեալներ, Վրաստանի մշտական բնակչութեան բաշխումն ըստ սեռի եւ գերակշռող ազգութիւնների) https://smr.gov.ge/uploads/prev/__d769d8f4.pdf :

[26] Բ. Իշխանեան, *Վիճակագրական ուսումնասիրութիւն անդրկովկասեան ժողովուրդների, Ա մաս. Ժողովուրդների տերրիտորիական բաժանումները եւ նրանց աճումը Անդրկովկասում*, Բագու, 1919, էջ 226:

[27] Նշենք, որ ԻՄում տարբեր պատճառներով հայերի աճ տեղի չի ունեցել, հակառակը՝ այդ թիւը նուազել է՝ կազմելով՝ 1374 (1926), 1537 (1939), 1555 (1959), 1254 (1970), 953 (1979), 984 (1989):

խանգարում՝ պատկերացում կազմելու ժողովրդագրական այն տեղաշարժերի մասին, որոնք տեղի են ունեցել Գորիի գաւառում:

Հետաքրքրական մի փաստ եւս. 2002ի մարդահամարի արդիւնքում՝ Շիդա Քարթլիի հայ-առաքելականների թիւը նշւում է 399[28]: Էական փոքր թիւ՝ համեմատած հայութեան պաշտօնական՝ 3521 թուի հետ: Պատճառները պարզելու խնդիր այստեղ եւս կայ: 2002ի մարդահամարի արդիւնքում Վրաստանի պետական վիճակագրական գրասենեակի հրատարակած եւ Վրաստանի գիւղական ազգաբնակչութիւնը ներկայացնող ստուարածաւալ հատորում[29] տեղ գտած՝ Գորիի, Կասպի, Քառելի եւ Խաշուրի շրջանների գիւղերի շարքում բոլորովին յիշատակութիւն չկայ հայերի մասին. մեզ արդէն ծանօթ եւ մինչ Ի. դարասկիզբը երբեմնի հայաբնակ բոլոր գիւղերը ներկայացուած են որպէս մարդաշատ, 98, 99, 100%ով վրացաբնակ գիւղեր[30]: Այդպիսիներից կ'ուզենայինք առանձնացնել երբեմնի հայաբնակ **Կարալէթ**ը *(Գորիի շրջ., 4501 շունչ, 98% վրացաբնակ)*, **Տղվիաւ**ը *(Գորիի շրջ., 2845 շունչ, 99% վրացաբնակ)*, **Քվախրէլ**ը *(Գորիի շրջ., 2374 շունչ, 99% վրացաբնակ)*, **Նադարբազեւ**ը *(Գորիի շրջ., 269 շունչ, 91% վրացաբնակ)*, **Ախալքալաք**ը *(Կասպի շրջ., 1233 շունչ, 94% վրացաբնակ)*, **Դոես**ը *(Կասպի շրջ., 2818 շունչ, 9 % վրացաբնակ)*, **Ատոց**ը *(Քարելի շրջ., 311 շունչ, 99% վրացաբնակ)*, **Դիրբ**ը *(Քարելի շրջ., 3028 շունչ, 99% վրացաբնակ)*, **Ռուիս**ը *(Քարելի շրջ., 6032 շունչ, 99% վրացաբնակ)*, **Ալ**ը *(Խաշուրի շրջ., 1375 շունչ, 99% վրացաբնակ)*, **Վաղաս**ն *(Խաշուրի շրջ., 1423 շունչ, 99% վրացաբնակ)* եւ մի շարք գիւղեր ու աւաններ[31]: Թուարկուած եւ չթուարկուած՝ երբեմնի վիրախօս հայաբնակ գիւղերը, ինչպէս տեսնում ենք, ներկայումս բաւականին խոշոր վրացական գիւղեր

---

[28] Population by religious Beliefs (By Major Adminstrative-Territorial Units) (http://upload.wikimedia.org/wikipedia/commons/5/5b/POPULATION_BY_RELIGIOUS_BELIES.pdf) :

[29] *საქართველოს სტატისტიკის სახელმწიფო დეპარტამენტი, საქართველოს მოსახლეობის 2002 წლის პირველი ეროვნული საყოველთაო აღწერის ძირითადი შედეგები (საქართველოს სოფლების მოსახლეობა), ტომი II, თბილისი, 2003 წელი* (Վրաստանի վիճակագրութեան պետական գրասենեակ, Վրաստանի բնակչութեան 2002ի առաջին համապետական մարդահամարի հիմնական արդիւնքները (Վրաստանի գիւղերի բնակչութիւնը), *հատոր II*, Թբիլիսի, 2003:

[30] Շուրջ 76 գիւղեր ամբողջութեամբ կամ մասամբ օսաբնակ են:

[31] *საქართველოს სტატისტიკის სახელმწიფო დეპარტამენტი, საქართველოს მოსახლეობის 2002 წლის პირველი ეროვნული საყოველთაო აღწერის ძირითადი შედეგები (საქართველოს სოფლების მოსახლეობა), ტომი II, თბილისი, 2003 წელი,* էջ 220-240:

են, որից ենթադրելի է գորիահայութեան աճման բաւականին խոշոր թափը. այն եղել է դարասկզբի աճման ընթացքին համահունչ:

Զննելով 2002ի վիճակագրութիւնը՝ պարզորոշ նկատւում է մուսուլման տարրի, յատկապէս՝ ադրբեջանական զանգուածի առկայութիւն, սա՝ այն դէպքում, երբ, ինչպէս վկայում են մեր կողմից վկայակոչուած՝ ԺԹ. դարավերջ--Ի. դարասկզբի ժողովրդագրական պատկերը ներկայացնող աղբիւրները, այդ զանգուածն իսպառ բացակայում էր Գորիի գաւառից: Օրինակ՝ 1886ի Անդրկովկասի բնակչութեան ընտանեկան ցուցակներից քաղուած վիճակագրական տուեալների ժողովածուի՝ ազգութիւնների աղիւսակում թուրքերն ընդհանրապէս բացակայում են, իսկ թաթարներ Գորի քաղաքում յիշատակւում է 2 անձ, գաւառում՝ 3 ծուխ (17 անձ), նոյն աղբիւրի՝ կրօնական հետեւորդների բաժնում եւս Գորիի գաւառում (քաղաքով հանդերձ) յիշատակւում են ընդամէնը 10 մուսուլման սուննիներ եւ 17 մուսուլման շիաներ: Իսկ ահա Վրաստանի 2002ի մարդահամարի տուեալներով՝ Գորիի, Կասպի, Քառելի եւ Խաշուրի շրջաններում, միասին վերցրած, ադրբեջանցիների թիւը հասնում է 5768ի կամ ամբողջ նահանգի բնակչութեան 1,84%ին: Շրջանների մի շարք գիւղեր ամբողջովին կամ մասամբ բնակեցուած են ադրբեջանցիներով՝ **Լեւիտանա** *(Գորիի շրջ., 290 շունչ, ամբողջութեամբ),* **Թեդոծմինդա** *(Գորիի շրջ., 541 շունչ, կիսով չափ),* **Սաքադագիանօ** *(Կասպի շրջ., 1.095 շունչ, 62%),* **Խիդիսղուռի** *(Կասպի շրջ., 899 շունչ, ամբողջութեամբ),* **Ախալսոփել** *(Կասպի շրջ., 105 շունչ, 35%),* **Կալոուբանի** *(Կասպի շրջ., 140 շունչ, 39%),* **Ֆերմա** *(Կասպի շրջ., 1025 շունչ, 87%),* **Չանգիլարի** (Կասպի շրջ., 300 շունչ, ամբողջութեամբ)[32]:

Վրաստանի՝ Ջաւախքի շրջաններից դուրս ապրող հայութեան պատմութիւնն իր պատմափուլերով օրինաչափօրէն յար եւ նման է հայկական մի շարք գաղթօճախների անցած ուղուն՝ հիմնաւորում, ազգային, մշակութային, կրօնական, հասարակական-քաղաքական կեանքի այս կամ այն կերպ կազմակերպում, պայքար օտարախօսութեան, օտարացման, ուծացման եւ սեփական տեսակի գոյութեան վերացման դէմ եւ, իվերջոյ, պարտութիւն ու անհետացում պատմութեան ասպարէզից: Ինչու՝ օրինաչափօրէն, քանի որ հիմնականում այդպիսին է իր հայրենիքից դուրս դեգերող իւրաքանչիւր ազգի բնական ընթացքը, եւ գաղթօճախներում տարբեր ժամանակներում պայքարող հայ մտաւորականութիւնն ինչքան էլ ջանք թափէր, կարող էր ընդամէնը այս կամ այն չափով երկարացնել սեփական ազգի կեանքը, բայց փրկել այն ձուլումից իզօրու է միայն հայրենիքը:

[32] Նոյն:

Ա. Խորհրդային շրջանի վարչաժողովրդագրական պատկերը

Վրաստանում ապրող հայերի շուրջ կէսից աւելին ապրում է Ջաւախքում *(ներկայիս վարչաբաժանմամբ՝ Սամցխէ-Ջաւախք նահանգ եւ Քուեմօ Քարթլի նահանգի Ծալկայի շրջան):*

Յետպատերազմեան շրջանում՝ 1950-60ականներին, Ջաւախքում տեղի ունեցան վարչաժողովրդագրական նոր տեղաշարժեր: ԽՍՀՄ բարձրագոյն ղեկավարութեան հրամանով[33]՝ Սամցխէ–Ջաւախքի (Ախալցխայի եւ Ախալքալաքի նախկին գաւառներ) հարաւային եւ կենտրոնական շրջաններում ապրող մեծ թուով թուրք-մեսխէթցիների 1944 Նոյեմբերի 14-18ն ընկած ժամանակահատուածում, իսկ նոյն թուականի Նոյեմբերի 25-26ը Աջարիայում բնակուող թուրքերի, քրդերի եւ համշէնահայերի վերաբնակեցրին Ուզբեկական, Ղազախական եւ Կիրգիզական ԽՍՀներում, ընդհանուր թուվ՝ 92,307 մարդ (ըստ պաշտօնական տուեալների): Ուսումնասիրողները փաստում են, որ մօտ 30,000 թուրք-մեսխէթցի տղամարդ այդ պահին ծառայում էր Սովետական Բանակում, որոնք պատերազմից յետոյ Վրաստան վերադառնալուն պէս ձերբակալուեցին եւ ուղարկուեցին Միջին Ասիա[34]: Ըստ այդմ, Սամցխէ-Ջաւախքից եւ Աջարիայից տեղահանուածների ընդհանուր թիւը գերազանցել է 120,000ը: Որոշ տուեալներով՝ նրանց թում են եղել նաեւ փոքրաթիւ թերեքեմէներ: Վերջիններիս յստակ թիւը յստակ չէ, ըստ որոշ տուեալների՝ 1926ին Մեսխէթում (նախկին Ախալցխայի գաւառի հատուածում) ապրել է շուրջ 6000 թերեքեմէ:

Սամցխէ-Ջաւախքից տեղահանուածների բնակավայրերի կէսից աւելին ամայացաւ, իսկ միւս մասը՝ շուրջ 6 տասնեակի հասնող բնակավայրեր, բնակեցուեցին Իմերէթից եւ այլ վայրերից տեղափոխուած վրացիներով: Վերաբնակեցման հետեւանքով Ախալցխայի եւ Ախալքալաքի գաւառների միջեւ 1961ին ձեւաւորուեց եւս մէկ, հիմնականում՝ վրացաբնակ Ասպինձայի (Ասպնջակ) շրջանը[35]:

---

[33] Государственный Комитет Обороны, Постановление гоко N 6279, от 31 июля 1944 г., Москва, Кремль (Сов. секретно), *Турки – месхетинцы: Интеграция. Репатриация. Эмиграция* (Պաշտպանութեան Պետական Կոմիտէ, 1944 Յուլիսի 31ի թիւ 6279 որոշում, Մոսկուա, Կրեմլ (յուժ գաղտնի), Թուրքեր-մեսխէթցիներ. համարկում, հայրենադարձութիւն, արտագաղթ), Սանկտ-Պետերբուրգ, «Алетейя», 2007, էջ 439-41:

[34] Н.Ф. Бугай, *Турки из Месхетии: долгий путь к реабилитации (1944 - 1994).* (Ն.Ֆ. Բուգայ, Մեսխէթի թուրքերը. վերականգնման երկար ճանապարհ (1944-1994), Մոսկուա, «РОСС», 1994, էջ 25:

[35] Ջաւախքի 1945-91ի պատմութեան եւ ժողովրդագրական պատկերի մասին տե՛ս՝ Վ. Սարգսեան, «Հայերը ԽՍՀՄ միութենական հանրապետութիւններում, Ջաւախք եւ յարակից տարածքներ», *Հայոց պատմութիւն, հտր. IV, գիրք II,*

1961ին Վրացական ԽՍՀ-ում տեղի ունեցաւ շրջանների խոշորացում, որի հետեւանքով Ախալցխայի, Ասպինձայի, Ախալքալաքի եւ Բոգդանովկայի շրջանները միացուեցին՝ Ախալցխա կենտրոնով: Հարեւան Ծալկայի շրջանը մտցուեց Թեթրիծղարոյի շրջանի մէջ: Խոշորացումների հետեւանքով լուծարուեցին մի շարք ղեկավար հիմնարկներ (կուսշրջկոմ, շրջգործկոմ, կոմերիտշրջկոմ եւն.), փակուեցին նախկին շրջանային թերթեր: Այդ կապակցութեամբ Ջաւախքում ծայր առան դժգոհութիւններ, հեռագրեր յղուեցին խորհրդային բարձրագոյն իշխանութիւններին: Այս նոր իրավիճակը, սակայն, ունեցաւ կարճատեւ կեանք. իրեն չարդարացրած տեղական ինքնակառավարման ոլորտի այս նորամուծութիւնը վերացուեց եւ 1965 Յունուարից խոշորացուած շրջանները կրկին վերաբաժանուեցին:

Յետպատերազմեան շրջանում Ջաւախքի տարբեր շրջաններում եւս ժողովրդագրական պատկերը փոփոխուել է ոչ յօգուտ հայերի: Այսպէս.

Ջաւախքի բնակչութեան թուաքանակը եւ ազգային կազմը 1959ի դրութեամբ[36]					
Շրջան	Հայեր	Վրացիներ	Ռուսներ	Այլազգիներ	Ընդամէնը
Ադիգէն	1627 (8,4 %)	16,187 (83,31 %)	1271 (6,54 %)	344 (1.77 %)	19,429 100 %
Ախալցխա	25,753 (52,2 %)	18,878 (38,29%)	3684 (7,47 %)	984 (2,00 %)	49,299 100 %
Ասպինձա	2068 (18,4 %)	9081 (80,81 %)	60 (0,53 %)	28 (0,25 %)	11,237 100 %
Ախալքալաք	57.209 (91,0 %)	3566 (5,68 %)	1647 (2,62 %)	413 (0,66 %)	62,835 100 %
Բոգդանովկա (Ինոծմինդա)	27.090 (85,0 %)	50 (0,16 %)	4616 (14,49 %)	96 (0,30 %)	31,852 100 %
Ծալկա[37]	13.360 (29,30 %)	1415 (3,10 %)	260 (0,57 %)	յոյներ՝ 27,300 (59,87 %), այլազգիներ՝ 3.265 (7,16 %)	45,600 100 %
Ընդամէնը	127,107 (57,71 %)	49,177 (22,33 %)	11,538 (5,24 %)	32,430 (14,72%)	220,252 100 %

(Նորագոյն ժամանակաշրջան (1945-1991 թթ.)), ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2016, էջ 299-312:

[36] *Samtskhe-Javakheti: Realities and Perspectives*, UNDP, Tbilisi, 2004, էջ 59:

[37] Ռ. Աւետեան, *Իմ Ծալկան (Ծաղկան)*, «Էդիթ պրինտ», Երեւան, 2011, էջ 50:

Ջաւախքի բնակչութեան թուաքանակը եւ ազգային կազմը 1970ի դրութեամբ[38]				
Շրջանը	Հայեր	Վրացի	Այլազգի	Ընդամէնը
Ադիգէն	1466 (7,23%)	17,582 (86,73%)	ռուսներ՝ 676 (3,33%), այլազգիներ՝ 548 (2.70%)	20,272 (100%)
Ախալցխա	25,497 (49,12%)	21,436 (41,30%)	ռուսներ՝ 2849 (5,49%), այլազգիներ՝ 2.125 (4.09%)	51,907 (100%)
Ասպինձա	2421 (19,38%)	9929 (79,47%)	ռուսներ՝ 95 (0,76%), այլազգիներ՝ 49 (0.39%)	12,494 (100%)
Ախալքալաք	63,954 (91,37%)	3926 (5,61%)	ռուսներ՝ 1.297 (1,85 %), այլազգիներ՝ 815 (1,16%)	69,992 (100%)
Բոգդանովկա (Նինոծմինդա)	32,399 (86,94%)	321 (0,86%)	ռուսներ՝ 4344 (11,66%), այլազգիներ՝ 203 (0.54%)	37,267 (100%)
Ծալկա[39]	14,569 (28,36%)	1625 (3,16%)	ռուսներ՝ 260 (0,51%), յոյներ՝ 31.811 (61,93 %), այլազգիներ՝ 3.100 (6,0%)	51,365 (100%)
Ընդամէնը	140,306 (58,57%)	54,819 (22,88%)	44.432 (18,55%)	239,557 (100%)

Ջաւախքի բնակչութեան թուաքանակը եւ ազգային կազմը 1979ի դրութեամբ[40]				
Շրջանը	Հայեր	Վրացիներ	Այլազգիներ	Ընդ.
Ադիգեն	1263 (6,32%)	18.007 (90,15%)	ռուսներ՝ 424 (2.12%), այլազգիներ՝ 281 (1.41%)	19.975 (100%)
Ախալցխա	24.035 (47,74%)	21.702 (43.10%)	ռուսներ՝ 2.910 (5.78%), հրեաներ եւ այլազգիներ 1.703 (3.38%)	50.350 (100%)
Ասպինձա	2654 (21,38%)	9651 (77,76%)	ռուսներ՝ 56 (0.45%), այլազգիներ՝ 50 (0.40%)	12,411 (100%)
Ախալքալաք	63,692 (91,70%)	3067 (4,42 %)	ռուսներ՝ 1788 (2.57%), այլազգիներ՝ 908 (1.31 %)	69,455 (100%)
Բոգդանովկա Նինոծմինդա)	32,231 (87,99%)	370 (1,01%)	ռուսներ՝ 3330 (9,09%), այլազգիներ՝ 701 (1,91%),	36,632 (100%)
Ծալկա[41]	13,996 (28,39%)	1710 (3,47%)	յոյներ՝ 30.811 (62,50%) այլազգիներ՝ 2.783 (5,65 %)	49,300 (100%)
Ընդամէնը	137,871 (57,90%)	54,507 (22,89%)	45,745 (19,21%)	238,123 (100%)

[38] *Samtskhe-Javakheti: Realities*, էջ 59:

[39] Աւետեան, էջ 50:

[40] *Samtskhe-Javakheti: Realities*, էջ 59. հմմտ.՝ Ա. Դաւթեան, *Հայկական եւ հայախառը բնակավայրերը Վրաստանում*, Երեւանի համալս. հրատ., Երեւան, 1997, էջ 26, 53, 60, 68, 85:

[41] Աւետեան, էջ 50:

Ջաւախքի բնակչութեան թուաքանակը եւ ազգային կազմը 1989ի դրութեամբ[42]				
Շրջանը	Հայեր	Վրացիներ	Այլազգիներ	Ընդամէնը
Ադիգէն	1237 (5,81%)	19,491 (91,58%)	ռուսներ՝ 294 (1,38 %), այլազգիներ՝ 260 (1.2%)	21,282 (100%)
Ախալցխա	23,469 (42,81%)	25,648 (46,78%)	ռուսներ՝ 3426 (6,2%), այլազգիներ՝ 2279 (4.16%)	54,822 (100 %)
Ասպինձա	2565 (18,68%)	10,753 (78,31%)	ռուսներ՝ 45 (0,33%), այլազգիներ՝ 369 (2.69%)	13,732 (100%)
Ախալքալաք	63,092 (91,29%)	3005 (4,35%)	ռուսներ՝ 1737 (2,51%), այլազգիներ՝ 1274 (1.84%)	69,108 (100%)
Բոգդանովկա (Նինոծմինդա)	33,964 (89,63%)	454 (1,20%)	ռուսներ՝ 3161 (8,34%), այլազգիներ՝ 316 (0.83%)	37,895 (100%)
Ծալկա[43]	12,671 (28,51%)	1613 (3,63%)	յոյներ՝ 27,127 (61,04 %), ադրբեջանցիներ՝ 2281 (5,13%), այլք՝ 746 (1,68%)	44.438 (100%)
Ընդամէնը	136,998 (56,78%)	60,964 (25,27%)	43,315 (17,95%)	241,277 (100%)

Այսպիսով, եթէ 1959ին Ախալցխայի շրջանն ունէր 25,753 (52,24%) հայ եւ 18,878 (38,29%) վրացի բնակիչ, ապա նոյն շրջանը 1970ին ունեցել է 25,497 (49,1%) հայ եւ 21,436 (41,3%) վրացի բնակիչ, իսկ ահա 1989ին շրջանն ունէր 23,469 (42,81%) հայ եւ 25,648 (46,78%) վրացի բնակիչ: Նոյն օրինակը կարելի է բերել նաեւ Ադիգէնի շրջանի պարագայում. եթէ 1959ին շրջանն ունէր 1627 (8,37%) հայ եւ 165187 (83,31%) վրացի բնակիչ, ապա 1979ին շրջանն ունէր 1263 (6,3%) հայ եւ 18,007 (90,1%) վրացի բնակիչ, իսկ 1989ին՝ ընդամէնը 1237 (5,81%) հայ եւ 19,491 (91,58%) վրացի բնակիչ: Ախալցխայի շրջանում նոյնպէս վերոնշեալ թուականներին (1959-89) հայերի թիւը նուազել է 2284ով, իսկ վրացիներինը աճել 6770ով: Ասպինձայի շրջանում գրանցուել էր վրացիների թուի աճ 1672ով, իսկ հայերի՝ 497ով: Գերազանցապէս հայերով բնակեցուած Ախալքալաքի եւ Բոգդանովկայի շրջաններում բնակչութեան թիւը 1989ին հասաւ միայն 1917ի մակարդակին՝ շուրջ 100 հազար մարդու[44]:

1959-89ի ընթացքում, ընդհանուր առմամբ, նուազել է նաեւ Ծալկայի շրջանի հայութեան թուաքանակը եւ, եթէ այն 1959ին կազմել է 13,360 մարդ, աճի միտումներ դրսեւորել 1970, 1979ին եւ,

[42] *Samtskhe-Javakheti: Realities*, էջ 59:


[43] Աւետեան, էջ 50:

[44] Ա. Մելքոնեան, *Ջաւախքը 19-րդ դարում եւ 20-րդ դարի առաջին քառորդին*, «Զանգակ-97», Երեւան, 2003, էջ 230:

համապատասխանաբար, կազմել 14,569 (28,4%), 13,996 (28,4%), ապա 1989ին թիւը նուազել է՝ հասնելով 12,671ի (28,51%):

Նախկին Ախալցխայի եւ մասամբ Ախալքալաքի գաւառների յենքի վրայ համապատասխանաբար ձեւաւորուած Ադիգէնի[45] ու Ասպինձայի վարչական շրջանները, որտեղից 1944ին արտաքսուել էին թուրք-մեսխէթցիները, 1950-60ականներին բնակեցուեցին հիմնականում վրացիներով (իմերէթցիներ, աջարներ եւ այլք):

ՋԱՎԱԽՔ-ՄԵՍԽԵԹԻ ԱԶԳԱԲԱՇԽԱԿԱՆ ՔԱՐՏԵՋ. 1987 Թ.



Հայաբնակ Ջաւախքի եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ արգելապատնէշը խորացնելու նպատակով 1989ին Բոգդանովկայի[46] շրջանում փորձ կատարուեց ստեղծելու միքանի սուանաբնակ գիւղեր: Բացի դրանից՝ ռուս *դուխոբորների* լքած Սպասովկա գիւղում Վրաստանի իշխանութիւնները վերաբնակեցրին աջարների[47]: Խոշոր շինարարութիւն ծաւալուեց նաեւ Ախալքալաքի շրջանի Կոթելիա, Հոկամ, Գոգաշէն, Չունչխա եւ այլ գիւղերում: Ջաւախքում խորհրդային 70 տարիների

[45] Ադիգէնը շրջանի կարգավիճակ է ստացել եւ Ախալցխայի գաւառից առանձնացել է 1930ին: Ադիգէն եւ Ասպինձա գիւղերն աւանի կարգավիճակ են ստացել 1961ին:

[46] Բոգդանովկա գիւղը հիմնադրուել է 1841ին, Տաւրիայի նահանգից արտաքսուած աղանդաւորների՝ *դուխոբորների* կողմից: Գիւղը բուռն զարգացում է ապրել այն բանից յետոյ, երբ 1930 Յունուարին դարձել է վարչատարածքային նոր միաւորման՝ Բոգդանովկայի շրջանի կենտրոնը: 1961ին գիւղը վերածուել է աւանի, 1982ին՝ քաղաքի (*Բոգդանովկայի շրջան: Տեղեկագիրք*, կազմողներ՝ Մ. Կարախանեան, Ժ. Սնխչեան, Մ. Սեդրակեան, Մ. Ղազարեան, Մ. Եսոյեան, Մ. Վարդանեան, Ս. Երանոսեան, Բոգդանովկա, 1992, էջ 10):

[47] Новикова, Дашко, էջ 237:

ընթացքում այս ծաւալների շինարարութիւն դեռ չէր իրականացուել: Այդուհանդերձ, բնակլիմայական խիստ պայմաններին չդիմանալով, Ախալքալաքի շրջանում մնացին քիչ թուով աջարներ[48]: Աջարներով եւ սուաններով վերաբնակեցումը յաջողութեամբ պսակուեց հարեւան Ծալկայի շրջանում[49]: Վերաբնակուողները տեղաւորուեցին Յունաստան գաղթած յոյների շէներում:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ Ջաւախքում 1950-80ականներին հայ բնակչութիւնը չի աւելացել եւ, ընդհակառակը, ինչ-որ տեղ նուազել է, իսկ վրացիների թիւը՝ կտրուկ աւելացել:

Յետխորհրդային շրջանի (1989-2014) ազգաբաշխական պատկերը, ժողովրդագրական խնդիրներն ու մարտահրաւէրները

Ջաւախքի հայ եւ վրացի բնակչութեան թուաքանակը եւ ազգային կազմը 1997ի դրութեամբ[50]			
Շրջան	Հայեր	Վրացիներ	Ընդ.
Ադիգէն	1407 (5,8%)	22,222 (91,6%)	23,629
Ասպինձա	2780 (19,1%)	11,660 (80,1%)	14,440
Բորժոմ	3816 (10,0%)	29,518 (77,6%)	33,334
Ախալցխա	23,644 (42,8%)	25,688 (46,8%)	49,332
Ախալքալաք	62,814 (91,3%)	3027 (4,4%)	65,841
Նինոծմինդա (նախկին Բոգդանովկա)	34,697 (89,6%)	451 (1,2%)	35,148
Ընդամէնը	129,158 (58,25%)	92,566 (41,75%)	221.724

Ինչպէս տեսնում ենք, հայերի թիւն այս ընթացքում աճել է չնչին տոկոսով, եթէ, առանց Բորժոմի շրջանի հաշուառման, 1989ին հայերի թիւը կազմում էր 124,327 կամ 63,2%, ապա 1997ին, արդէն Բորժոմի շրջանի հայերով հանդերձ, տարածաշրջանի հայ բնակչութեան թիւը կազմում էր ընդամէնը 129,158 կամ 58,25%՝ այն դէպքում, երբ այս ընթացքում վրացիների թիւը Բորժոմի շրջանի կցումով գրանցել է մեծ աճ՝

[48] Օրինակ՝ Սպասովկա, Գորելովկա, Բալանթա, Հոկամ, Չունչխա եւ այլ գիւղերում աջարները քիչ թէ շատ հաստատուեցին:

[49] Ծալկան 1930ին ստացել է շրջանի, իսկ 1957ին քաղաքատիպ աւանի կարգավիճակ: 1936ին Ծալկայի շրջկենտրոնը Գունիա-Կալայից տեղափոխուել է Բարմաքսիզ գիւղը, որը եւ վերանուանուել է Ծալկա:

[50] Грузия, Самцхе-Джавахетия и "тюркское кольцо" вокруг Армении, демография (Վրաստան, Սամցխէ-Ջաւախքը եւ «թուրքական օղակը» Հայաստանի շուրջ, ժողովրդագրութիւն), հմմտ.՝ *Конфликты и переговоры (Հակամարտութիւններ եւ բանակցութիւններ)*, 3-4:1997: Տուալները հրապարակել է Վրաստանի նախկին նախագահի՝ Սամցխէ-Ջաւախքի լիազօր-խորհրդական Մ. Գաչեչիլաձէն (https://regnum.ru/news/polit/202173.html):

59,351 (30,2%)ից դառնալով 92,566 կամ 41,75%: Բոլորովին այլ պատկեր կ'ուրուագծուի, եթէ ներքեւում դիտենք 2002ի տուեալները:

Հաստատենք, որ խորհրդային տարիներին Վրացական ԽՍՀում ծնելիութեան ամէնաբարձր գործակիցն ունեցել է Ջաւախքի տարածաշրջանը, որը շուրջ երկու անգամ բարձր է եղել ՎԽՍՀի միւս շրջաններից: Երկրամասում բարձր ծնելիութեամբ աչքի էր ընկնում հայ ազգաբնակչութիւնը, իսկ վրացիների մօտ բնական աճը շատ դանդաղ էր ընթանում: Այդուհանդերձ, ազգային եւ տնտեսական ոլորտներում առկայ ոչ բարենպաստ պայմաններում արտագաղթի բարձր ցուցանիշերը ծանրագոյն ազդեցութիւն են ունեցել Ջաւախքի հայութեան ժողովրդագրութեան վրայ, որոնց հետեւանքով տասնամեակների ընթացքում Ջաւախքում գրեթէ տեղի չի ունեցել ժողովրդագրական աճ, իսկ յետխորհրդային տարիներին ջաւախքահայութիւնն ապրում է ժողովրդագրական ձմեռ, եւ հայութեան թուաքանակն ունի նուազման միտումներ:

Ջաւախքի բնակչութեան թուաքանակը եւ ազգային կազմը 2002ի դրութեամբ[51]					
Նահանգ/շրջան	Ամբողջը	Վրացիներ	Հայեր	Ադրբեջանցիներ	Այլ
Ջաւախք (Սամցխէ-Ջաւախք նահանգ եւ Ծալկայի շրջան)	228.486 (100%)	92.505 (40,5%)	124.831 (54,6%)	2.051 (0,9%)	8.736 (3,8%)
Ադիգէնի շրջան	20,752 (9,1%)	19,860 (95,7%)	698 (3,4%)	17 (0,1 %)	169 (0,8%)
Ախալցխայի շրջան	46,134 (20,2%)	28.473 (61,7%)	16.879 (36,6%)	13 (0%)	645 (1,4%)
Ասպինձայի շրջան	13,010 (5,7%)	10,671 (82%)	2273 (17,5%)	0 (0%)	60 (0,5%)
Բորժոմի շրջան	32,422 (14,2%)	27.301 (84,2%)	3124 (9,6%)	24 (0,1%)	1930 (6%)
Ախալքալաքի շրջան	60,975 (26,7%)	3214 (5,3%)	57,516 (94,3%)	3 (0%)	235 (0,4%)

[51] Ըստ Վրաստանում 2002ին անցկացուած մարդահամարի պաշտօնական տուեալների (შერიგებისა და სამოქალაქო თანასწორობის საკითხებში საქართველოს სახელმწიფო მინისტრის აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, მოსახლეობის 2002 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, საქართველოს მუდმივი მოსახლეობის განაწილება სქესისა და უპირატესი ეროვნებების მიხედვით (Վրաստանի հաշտեցման ..., Վրաստանի մշտական բնակչութեան բաշխումն ըստ սեռի եւ գերակշռող ազգութիւնների) https://smr.gov.ge/uploads/prev/__d769d8f4.pdf, հմմտ.՝ Սամցխე-ჯავახეთის პოლიტიკური საზოგადოების პრობლემები, ახალციხე (Սամցխէ-Ջաւախքի քաղաքական հասարակութեան խնդիրները), Ախալցխա, 2005, էջ 2:

Նինոծմինդայի (նախկին Բոգդանովկայի) շրջան	34,305 (15%)	476 (1,4%)	32.857 (95,8%)	2 (0%)	958 (2,8%)
Ծալկայի շրջան	20,888 (9,1 %)	2510 (12 %)	11,484 (55 %)	1992 (9,5%)	4739 (22,7 %)

Ինչպէս տեսնում ենք, 1997ի համեմատութեամբ, ամբողջ նահանգում եթէ վրացիները կրճատուել են ընդամէնը 2571ով, ապա հայերի մօտ տարբերութեան այդ թիւը հասնում է շուրջ 15,811ի, որն, ըստ ուսումնասիրութիւնների, ունի է՛լ աւելի աճելու միտում՝ հաշուի առնելով այն հանգամանքը, որ երկրամասից հայ բնակչութեան արտահոսքը գնալով հասնում է մեծ չափերի:

Ջաւախքի բնակչութեան թուաքանակը եւ ազգային կազմը 2014ի դրութեամբ[52]					
Նահանգ/շրջան	Ամբողջը	Վրացիներ	Հայեր	Ադրբեջանցիք	Այլ
Ջաւախք (Սամցխէ-Ջաւախք նահանգ եւ Ծալկայի շրջան)	179,353 (100%)	86,268 (48,1%)	88,397 (49,3%)	1319 (7,0%)	3367 (1,9%)
ք. Ախալցխա[53]	17,903 (10%)	12,836 (71,7%)	4780 (26,7%)	*	286 (1,6%)
Ախալցխայի շրջան	20,992 (11,7%)	13,603 (64,8%)	7242 (34,5%)	*	147 (0,7%)
Ադիգէնի շրջան	16,462 (9,2%)	15,985 (97,1%)	379 (2,3%)	*	99 (0,6%)
Ասպինձայի շրջան	10,372 (5,8%)	8961 (86,4%)	1379 (13,3%)	*	31 (0,3%)
Բորժոմի շրջան	25,214 (14,1%)	21,987 (87,2%)	2168 (8,6%)	*	1059 (4,2%)
Ախալքալաքի շրջան	45,070	3065	41,870	*	135

[52] საქართველოს სტატისტიკის ეროვნული სამსახური, საქართველოს 2014 წლის მოსახლეობის საყოველთაო აღწერის ძირითადი შედეგები, თბილისი, 2018 (Վրաստանի ազգային վիճակագրական ծառայութիւն, 2014ի Վրաստանի բնակչութեան մարդահամարի հիմնական արդիւնքները), Թբիլիսի, 2018: Վրաստանի 2014ի ընդհանուր մարդահամարի տուեալների մէջ բացարձակ թուերով չի ներկայացուած նաեւ առանձին շրջանների ազգաբաշխական պատկերը: Ըստ այդմ՝ առանձին շրջանների հայութեան բացարձակ թիւը հաշուարկել ենք՝ հիմնուելով տոկոսային յարաբերակցութեան վրայ: Ելնելով դրանից՝ առանձին շրջանների ազգային կազմը ներկայացնող կլորացուած թուերի հանրագումարը կարող է փոքր-ինչ տարբերուել այդ նոյն շրջանների՝ Վրաստանի պետական վիճակագրական մարմինների ամբողջական թուերից:

[53] Պաշտօնական աղբիւրում Ախալցխա քաղաքը, իբրեւ նահանգային կենտրոն, առանձնացուած է համանուն շրջանից [საქართველოს სტატისტიკის ეროვნული სამსახური, საქართველოს 2014 წლის მოსახლეობის საყოველთაო აღწერის ძირითადი შედეგები, თბილისი, 2018 (Վրաստանի ազգային վիճակագրական ծառայութիւն, 2014ի ...), էջ 283-84, 299, 301]:

	(25,1%)	(6,8%)	(92,9%)		(0,3%)
Նինոծմինդայի (նախկին Բոգդանովկայի) շրջան	2491 (13,7%)	1029 (4,2%)	23,266 (95,0%)	*	196 (0,8%)
Ծալկայի շրջան	18,849 (10,5%)	8802 (46,7%)	7313 (38,8%)	1319 (7,0%)	1414 (7,5%)

Վրաստանում անցկացուած երկու (2002 եւ 2014) պաշտօնական մարդահամարների տուեալների համաձայն՝ Ջաւախքի 7 շրջանների ընդհանուր բնակչութեան թիւը նուազել է 49,133ով (21,5%ով), ջաւախահայութեան թիւը նուազել է շուրջ 36,434ով (29,2%), շուրջ 2-3 անգամ ընկել է նաեւ ծնելիութեան գործակիցը: Արդիւնքում, օրինակ, Ախալքալաքի շրջանի հայութեան թիւը նուազել է 15,646ով կամ 27,2%ով՝ 57,516ից հասնելով 41,870ի (1989ի ԽՍՀՄ պաշտօնական մարդահամարի տուեալներով՝ 63,092 հայ), Նինոծմինդայինը՝ 9591ով կամ 29,2%ով՝ 32,857ից հասնելով 23,266ի (1989ի տուեալներով՝ 33,964 հայ): Նոյն կերպ նուազել է Ախալցխայի երբեմնի հայաշատ շրջանի հայութեան թուակազմը՝ 16,879ից հասնելով 12,022ի (նուազել է շուրջ 4857ով կամ 28,8%ով, 1989ի տուեալներով Ախալցխայի շրջանում ապրել է 23,469 հայ): Հայաբնակ եւ երբեմնի յունաբնակ Ծալկայի շրջանի հայութեան թիւը 11,484ից դարձել է 7313 (նուազել է շուրջ 4171ով կամ 36,3%ով, 1989ի տուեալներով Ծալկայի շրջանում ապրել է 12,671 հայ): Հաստատենք նաեւ, որ հիմնականում դէպի Յունաստան ներգաղթած յոյների բնակավայրերի վերաբնակեցման արդիւնքում Ծալկայի շրջանում կտրուկ աճել է վրացական տարրի (սուաններ, աջարներ եւն.) թիւը՝ 1613ից (1989) հասնելով 8802ի: Արդիւնքում՝ եթէ, օրինակ, Ծալկայի հայութեան տոկոսային յարաբերակցութիւնը շրջանում 2002ին եղել է 55% (բնակչութեան թուի կէսից աւելին), ապա 2014ին՝ 38,8%:

Նուազել է նաեւ ջաւախքահայութեան տեսակարար կշիռը, եւ եթէ 2002ին հայերը կազմում էին Սամցխէ-Ջաւախք նահանգի եւ Ծալկայի շրջանի ընդհանուր ազգաբնակչութեան 54,6%ը, ապա 2014ի ցուցանիշերով՝ այն չի հատում 50%ի սահմանագիծը (49,3%):

Այդուհանդերձ՝ Վրաստանի պաշտօնական վիճակագրական այս ցուցանիշերին պէտք է մօտենալ խիստ զգուշօրէն, քանի որ դեռեւս յայտնի չէ, թէ պաշտօնական վիճակագրութիւնն ինչպէս է մօտեցել Ջաւախքում բնակուող, սակայն Վրաստանի քաղաքացիութիւն չունեցող (հիմնականում ՀՀ եւ ՌԴ քաղաքացիութիւն ունեցող) անձանց թուաքանակին, իսկ այդպիսի կարգավիճակով հայութեան թիւը, ոչ պաշտօնական հաշուարկների եւ տարբեր հրապարակումների համաձայն, հասնում է տասնեակ հազարների: Այստեղ պէտք է նշել նաեւ հակառակ երեւոյթի մասին. զգալի է ջաւախքահայութեան այն մասի թիւը, որը պահպանել է Վրաստանի քաղաքացիութիւնը, հաշուառուած է իր բնակավայրերում, սակայն չի ապրում այնտեղ:



Ջաւախքի, Սամխէի եւ Թռեղքի հայերի տեղաբաշխումը ներկայումս (քարտէզը պատրաստեց՝ Գեղամ Մ. Բադալեան, համակարգչային տարբերակ՝ Վ.Ս. Դալլաքեան)

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Պատմութեան տարբեր ժամանակահատուածներում Վրաստանում տեղի են ունեցել ժողովրդագրական փոխակերպումներ: Այդուհանդերձ, իւրաքանչիւր ժամանակահատուած իրեն յատուկ ներգործութիւնն է ունեցել այդ փոխակերպումների վրայ: Աւելին, այդ փոխակերպումների վրայ ազդող գործօնները հոծ հայաբնակ շրջաններում (Ջաւախքում) այլ կերպ են արտայայտուել, մայրաքաղաքում (Թիֆլիսում) եւ մնացած մարզերում՝ բոլորովին այլ կերպ:

Երկրորդ աշխարհամարտից յետոյ ընկած ժամանակահատուածում ամբողջ Վրաստանի տարածքում ապրող հայութեան թիւն աճի փոխարէն, ընդհակառակը, ունեցաւ նուազման միտումներ՝ 1959-89ի ընթացքում 442,900 մարդուց հասնելով 437,200 մարդու (նուազել է 5700ով): Այս նոյն տարիներին ադրբեջանցիների թիւը 153,600ից հասել 307,600 հազար մարդու՝ աճելով աւելի քան երկու անգամ:

Վրաստանի հայութեան թուաքանակն առաւել կտրուկ անկում է ապրել յետխորհրդային շրջանում: 1989ի եւ 2002ի Վրաստանի պաշտօնական մարդահամարի տուեալներով՝ 13 տարուայ ընթացքում Վրաստանի հայութեան թիւը նուազել է 188,282ով: Եթէ նոյնիսկ հաշուի առնենք, որ աւելի քան 60-70,000 հայեր 2002ին չեն հաշուառուել Վրաստանի վերահսկողութեան տակ չգտնուող Աբխազիայի ու Հարաւային Օսեթիայի տարածքում, ապա հայութեան թուի՝ 120-130,000ով նուազումը եւս խօսում է ժողովրդագրական լրջագոյն փոփոխութիւնների, Վրաստանի հայութեան շրջանում առկայ «ժողովրդագրական ձմռան» եւ դրանից բխող մարտահրաւէրների մասին:

2014ի պաշտօնական մարդահամարի արդիւնքների համաձայն՝ հայ ազգաբնակչութիւնը կազմում է երկրի բնակչութեան 4,53%ը կամ 168,100

մարդ: 2002ի համեմատութեամբ՝ 12 տարուայ ընթացքում Վրաստանի հայութեան թիւը, համաձայն պաշտօնական տուեալների, կրճատուել է 80,829ով՝ 248,929ից դառնալով 168,100:

Եթէ խորհրդային–յետպատերազմեան շրջանում Վրաստանի հայութիւնն իր թուաքանակով գրաւում էր 2րդ տեղը՝ տիտղոսային ազգութիւնից՝ վրացիներից յետոյ, ապա ԽՍՀՄ փլուզումից յետոյ տեղի ունեցած որոշ «վերադասաւորումների» արդիւնքում, երբ հայութեան թիւը կտրուկ նուազեց (նուազման վրայ ազդող նախորդ գործօններին գումարուեց նաեւ Աբխազիայի եւ Հարաւային Օսիայի հայութեան թուակազմերի՝ Վրաստանի պաշտօնական վիճակագրութիւնից դուրս մնալու իրողութիւնը), Վրաստանում ապրող հայութիւնն իր թուաքանակով զբաղեցրեց արդէն 3րդ տեղը՝ զիջելով նաեւ ադրբեջանցիներին:

Խորհրդային շրջանում Վրաստանում ապրող հայութեան ժողովրդագրական փոխակերպման վրայ ազդող գործօնները պայմանաւորուած են եղել ինչպես բնական գործօններով (օտարալեզու դպրոցներ, վիրախօս միջավայր, եւն.), այնպէս էլ յատուկ քաղաքականութեամբ. ստեղծուել էր մի միջավայր, որտեղ հայութիւնը հասարակական կեանքի տարբեր ոլորտներում, ինչպէս նաեւ հանրային կառավարման օղակներում եւ այլուր առաջընթաց ունենալու համար պարտաւոր էր փոխել իր ազգանունը, հրաժարուել իր ազգութիւնից եւ «համարկուել» վրացական հանրութեանը: Այդուհանդերձ, խորհրդային շրջանում փոխակերպման գործընթացն ինչ-որ տեղ կասեցնում էր ընդհանուր՝ խորհրդային քաղաքականութիւնը, որտեղ նորածեւը ռուսականն էր, այդ թւում՝ լեզուն: Արդիւնքում՝ Խորհրդային Վրաստանի հայութեան մի ստուար հատուած իր միջնակարգ կրթութիւնն ստացաւ ռուսալեզու դպրոցներում՝ դրանով իսկ որոշակի տարբերուելով վրացախօս միջավայրում: Յետխորհրդային շրջանում ռուսալեզու ուսուցմամբ դպրոցների փակման եւ համընդհանուր վրացականացման պայմաններում փոխուեցին նաեւ հայութեան փոխակերպման վրայ ազդող գործօնները. ստեղծուած նոր միջավայրը, ցաւօք, առաւել նպաստաւոր դարձաւ փոխակերպման համար:

Լինելով ՀՀին սահմանակից ոչ միայն միակ հայաբնակ, այլեւ միակ քրիստոնէաբնակ գօտին՝ Ջաւախքը եւ այնտեղ ապրող հայութիւնը առանցքային նշանակութիւն ունեն Հայաստանի համար: Խորքի մէջ՝ Ջաւախքը ոչ պակաս կարեւոր ռազմավարական նշանակութիւն ունի նաեւ Վրաստանի համար, եթէ հաշուի առնենք Վրաստանի հարաւում (Ջաւախքի արեւմուտքում եւ արեւելքում՝ Աջարիա, Քուեմօ Քարթլի նահանգ) թիւրքական նուաճողական անթաքոյց նկրտումները: Ցաւօք, մինչ օրս չի ձեւաւորուել միասնական մօտեցում առ այն, որ Ջաւախքը պէտք է կամրջի երկու հինաւուրց քրիստոնէական քաղաքակրթութիւնների կրող երկրներին՝ ՀՀին եւ Վրաստանին:

Արդիւնքում՝ Ջաւախքն այդ կարեւոր հարթակից յաճախ վերածւում է քօղարկուած լարուածութեան կամ խուլ դիմակայութեան օջախի: Եւ դա՝ արհեստականօրէն, քանզի ջաւախահայութիւնը մշտապէս ապացուցել է, որ ամենայն յարգանքով ու անկեղծ պատկառանքով է լցուած առ վրաց պետականութիւն, պետութիւն եւ վրաց ժողովուրդ, եւ ցանկացած լարուածութիւն առաջանում է բոլորովին այլ պատճառներով: Դրանցից մէկը վրաց միջավայրում տեղի ունեցող քարթուելիզացման, միաէթնիկ հանրութիւն ձեւաւորելու, ջաւախահայութեանն այդ ամէնի մէջ ներքաշելու ցաւալի ու շարունակական գործընթացն է:

Ջաւախքում խորհրդային եւ յետխորհրդային ժամանակահատուածներում տեղի ունեցած ժողովրդագրական պատկերի փոփոխութիւնները տեղի են ունեցել թէ՛ արհեստական (վրացիների վերաբնակեցում եւն.), թէ՛ բնական եղանակով (ընկերային-տնտեսական ծանր պայմաններով եւն.ով պայմանաւորուած արտագաղթ, ծնելիութեան նուազում եւն.): Դրան գումարուել է նաեւ միաէթնիկ հանրոյթ ձեւաւորելու պետական քաղաքականութիւնը, որն աւելի ուրուագծուեց արեւմտաթուրքամէտ ուղեգիծ վերցրած Միխայիլ Սահակաշվիլու տարիներին (2003-12), երբ վրացական կողմը գործի դրեց պետական, կրօնական, կրթական, մշակութային, տնտեսական ողջ զինանոցը: Այստեղից պարզորոշ է, թէ ինչու Վրաստանում, ի տարբերութիւն աշխարհի շատ պետութիւնների, արգելուեց հայկական գրքի ներմուծումը, խոչընդոտուեց ազգային-մշակութային կեանքի զարգացումը եւն., քանի որ, կրկին ի տարբերութիւն աշխարհի շատ պետութիւնների, Վրաստանում այլ ժողովուրդների ուծացման (ժողովրդագրական փոխակերպման) գործընթացի հիմքում բնականի հետ միասին առկայ են նաեւ արհեստական գործօնները: Հաստատենք, որ այս ամէնի հետեւանքով հաւասարապէս տուժելու է նաեւ վրացական կողմը. թուլանալու է Ջաւախքում ձեւաւորուած թիւրքական դիմակայութեան գօտին, եւ յորդացող թուրանական ալիքը հիմքից ցնցելու է նաեւ վրաց պետականութիւնը (յիշենք 1918ի թուրքական արշաւանքները Ջաւախքի ուղղութեամբ եւ Վրաստանի հանդէպ ծրագրուած նկրտումները):

DYNAMICS OF THE ARMENIAN POPULATION OF GEORGIA IN 1959-2014 (ACCORDING TO OFFICIAL CENSUS DATA)

(SUMMARY)

Vahe Sarkisyan
Vsargsyan83@gmail.com

Based on statistical data gathered from official censuses held between 1959 and 2014, the paper highlights the demographic decline of the Armenians in Georgia.

In the post-WWII period (1959-1989), instead of increasing, the number of Armenians living in the entire territory of Georgia decreased from 442,900 to 437,200. During that same period, however, the number of Azeris more than doubled, from 153,600 to 307,600.

The number of Armenians in Georgia experienced a sharp decline in the post-Soviet period. According to the official census of Georgia conducted in 1989 and 2002, the number of Armenians in Georgia decreased by 188,282 in 13 years. Even if we consider that more than 60-70,000 Armenians in 2002 were not counted in the territory of Abkhazia and South Ossetia, which are not under the control of Georgia, the decrease in the number of Armenians by 120-130 thousand also speaks of the very serious demographic changes, the "demographic winter", among the Armenians of Georgia and the challenges arising from it.

In 2014 according to the official census, the Armenian population constituted 4.53% of Georgia's population or 168,100 people. In 2002 compared to 2012, according to official data, the number of Armenians in Georgia decreased by 80,829, from 248,929 to 168,100.

Though in the post-war Soviet period the Armenians of Georgia occupied the 2nd place in terms of their number, after the titular nationality (the Georgians), as a result of some administrative gerrymandering that took place after the collapse of the USSR, the Armenians living in Georgia held the 3rd position in terms of number, giving way to the Azeris.

More than half of the Armenians living in Georgia live in Javakhk (currently administratively divided into Samtskhe-Javakhk Province and Tsalka District of Kvemo Kartli Province). Administrative and territorial re-divisions, as well as large and small demographic shifts during and after WWII in Soviet Georgia had a serious impact on both the administrative divisions and the demographic picture of the heavily Armenian-populated southern regions of the Georgian SSR. The Georgian (Cartvelian) element came to replace the Muslim Turk-Meskhetis, who were massively exiled/deported from the aforementioned areas. As a result of a special policy applied between the 1950s and 1980s in the regions of Javakhk, the Armenian population did not increase and, on the contrary, it decreased while the number of Georgians increased sharply. In the post-Soviet years, the Armenians of Javakhk are experiencing a "demographic winter", and the number of Armenians shows further decreasing trends.

ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ-ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅՕՃԱԽՈՒՄ 1979-2020ԻՆ

Կարէն Մկրտչեան
k86mkrtchyan@gmail.com

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Սոյն յօդուածի շրջանակներում պէտք է անդրադառնանք Իրանի վերջին 40ամեայ անցումին, որը տեղաշարժերի ժամանակակից պատմութեան մէջ թերեւս առանձնանում է իր ինքնատիպութեամբ: Նախ՝ 1979ի իսլամական յեղափոխութիւնը եւ դրա արդիւնքում միապետական կարգերի տապալումը, ինչպէս նաեւ՝ Մերձաւոր եւ Միջին Արեւելքի տարածաշրջանը ալեկոծած Իրան-Իրաք պատերազմը խոշոր ու նոր տեղաշարժերի նախադրեալներ դարձան: Ակնյայտ է, որ իրանական եւ իրաքեան հասարակութիւնների մի անբաժանելի մասը կազմած տեղի հայկական գաղթօջախները եւս հաղորդակից դարձան եւ իրենց վրայ կրեցին բոլոր դժուարութիւնները: Յիրաւի, հենց սա էլ դիտարկել ենք մեր հետազօտութեան մէջ որպէս լուրջ փոխակերպում, որի արձագանգներն անխտիր կերպով ու առանց բացառութեան ակնյայտ դարձան Ի. դարավերջի եւ ԻԱ. դարի սկզբների հասարակական կեանքի բոլոր ոլորտներում: Այդ ոլորտներից ամէնից խոցելին ու զգայունը դարձաւ Իրանի հայօճախի կրթական բնագաւառը, որտեղ ընթացող նոր փոխակերպումները սկզբում նոյնիսկ խորթ էին տեղի հայութեանը:

Նկատենք, որ փոխակերպումները հենց կրթական ոլորտից էին սկիզբ առնում եւ տարածւում նաեւ հասարակական կեանքի միւս ոլորտները:

Իրանի հայօճախը ԻԱ. դար մուտք գործեց նախորդ դարի 80ականներին սկիզբ առած եւ դեռեւս շարունակուող արտագաղթի պայմաններում: Այն հետեւանք է այն իրողութեան, որ վերջին չորս տասնամեակները ռազմաքաղաքական եւ ընկերա-տնտեսական բարդ փորձաշրջան էին Իրանի նորաստեղծ Իսլամական Հանրապետութեան համար: 1980ականների Իրան-Իրաք պատերազմը, ապա դրան յաջորդած տասնամեակներին եւ ընդհուպ մինչեւ մեր օրերը շարունակուող Արեւմուտքի կողմից սահմանած եւ պարբերաբար խստացուող պատժամիջոցները ընկերա-տնտեսական մեծ վնաս են պատճառում Իրանի բնակչութեանն առհասարակ:

Տարածաշրջանային այդ պայմաններում է կենսագործում հայօճախը, որի թիւն աստիճանաբար նուազում է: Մարտահրաւէրներին դիմակայելը դարձել է ներկայիս իրանահայութեան գլխաւոր խնդիրը:

Ժամանակակից պարսիկ պատմաբան Խոսրով Չաքերին շեշտում է այն իրողութիւնը, որ հայերն Իրանում մահմեդական բնակչութեան ծովում կազմում են չնչին փոքրամասնութիւն, սակայն չնայած դրան, անչափ մեծ աւանդ, դերակատարութիւն ու ներդրում են ունեցել Իրանի հասարակական զարգացման, մշակութային առաջընթացի եւ առհասարակ մտաւոր ու քաղաքական կեանքի բնագաւառում[1]:

Այս առումով, հակիրճ անդրադառնանք հայօճախի ժողովրդագրական միքանի հարցերի: Այսպէս, եթէ 1851ին իրանահայերի թիւը կազմել է մօտ 20 հազար, 1890ին՝ 80 հազար[2], 1979ին՝ 200 հազար[3], 2003ին՝ 80 հազար[4], ապա ներկայումս մինչեւ 50 հազար է[5]: Յատկանշական է, որ մինչեւ Հայոց Ցեղասպանութիւնը հայրենիքից դուրս ապրող հայութեան թիւը (չհաշուած Ցարական եւ Օսմանեան կայսրութիւնների հայութիւնը) հասնում էր մօտ 200 հազարի, որից 100 հազարը բնակւում էր Իրանում, իսկ մնացածը՝ աշխարհի տարբեր երկրներում[6]: 1997ին Թեհրանի հայոց թեմում գրանցուել է 565 մկրտութիւն, 2000ին՝ 1067, 2005ին՝ 302: Աճել են մահուան ցուցանիշերը՝ 2000ին հասնելով 435ի, իսկ 2005ին՝ 545ի[7]:

Ըստ որոշ տուեալների, դեռեւս 1950ականների վերջին թեհրանահայութեան թիւը հասել էր 65 հազարի, իսկ 1970ականների վերջին՝ 120 հազարի: Ներկայումս Թեհրանում հայերը գլխաւորապէս բնակւում են Թեհրանի Մաջիդիէ, Զարքէշ, Հեշմաթիէ, Նարմաք եւ մի շարք այլ թաղամասերում: Ժողովրդագրութեան տեսանկիւնից ուշագրաւ ուղի է անցել Սպահանից հիւսիս-արեւմուտք գտնուող Փերիա գաւառը: Փերիայի հայութիւնը գաղթեցուել է Մեծ Հայքի Վասպուրական նահանգից (Վան,

---

[1] Վահան Բայբուրդեան, *Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ*, «Լուսակն» հրատ., Երեւան, 2013, էջ 9:

[2] Գառնիկ Բադալեան, *Իրան. Հանրագիտարան*, Հեղինակային հրատ., Երեւան, 2011, էջ 397:

[3] Կարլէն Դալլաքեան, *Հայ Սփիւռքի պատմութիւն*, «Զանգակ-97» հրատ., Երեւան, 2004, էջ 194:

[4] Յովհաննէս Փահլեւանեան, «Իրան», *Հայ Սփիւռք հանրագիտարան*, խմբ.՝ Յովհ. Այվազեան, Ա. Սարգսեան եւ ուրիշ., «Հայկական հանրագիտարան», Երեւան, 2003, էջ 40:

[5] «Իրանի 60 հազարանոց հայկական համայնքը իր կնիքն ունի Իրանի կեանքում», https://armenpress.am/arm/news/777670/irani-60-hazaranoc-haykakan-hamaynqy-ir-kniqn-uni-irani.html . մատչում՝ 28 Յուլիս 2022:

[6] Արման Եղիազարեան, *Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնները 1918 թուականից մինչեւ մեր օրերը*, «ԵՊՀ» հրատ., Երեւան, 2017, էջ 121:

[7] Հաղորդագրութիւն, *Լոյս*, 123:2006, էջ 4. նաեւ՝ «Հաղորդագրութիւն. դիւան ազգային առաջնորդարանի Թեհրանի հայոց թեմի», *Ալիք*, 30 Յունուար 2002, 22 Յունուար 2003, 8 Փետրուար 2004, 23 Յունուար 2005:

Արճէշ, Արծկէ): 1851ին Փերիայի[8] 19 հայաբնակ գիւղերում բնակւում էր 5600, 1918ին՝ 26 գիւղերում՝ 13,450, 1946ին 24 գիւղերում՝ 15,100 մարդ (դրանցից Հայաստան են ներգաղթել 2400 մարդ), 1965ին 17 գիւղերում՝ 10,365 մարդ: Իրանի հայաբնակ գաւառներից Փերիան հայաթափուել է վերջինը՝ 1990ականներին: 2003ին Փերիայում հայաբնակ էր միայն Բոլորան գիւղը:

Այսպիսով, հայ գաղթօջախների պատմութեան մէջ առանձնայատուկ տեղ ունեցող երբեմնի Փերիայում գրանցուել են զգալի տեղաշարժեր, որի հետեւանքով Ի. դարի ընթացքում Իրանի հայաբնակ երբեմնի գիւղական համայնքները ըստ էութեան վերացել են՝ աստիճանաբար վերածուելով քաղաքային համայնքների կամ տեղի հայութիւնը ներգաղթել է Խորհրդային Հայաստան:

Ինչ վերաբերում է յաջորդ հայահոծ նահանգին՝ Ատրպատականին, ապա պէտք է նշել, որ 1946ի մեծ ներգաղթի հետեւանքով տեղի հայ համայնքն էլ աւելի նօսրացաւ: Եթէ 1948ին Ատրպատականի (Թաւրիզ, Ուրմիա, նաեւ Սալմաստ) հայութեան թիւը կազմել է ոչ աւելի քան 15.000, ապա 2005ին՝ այն նուազել է շուրջ 7,5 անգամ՝ կազմելով ընդամէնը 2000 մարդ: Փաստօրէն, այս դէպքում տեղի է ունեցել ժողովրդագրական շեշտակի նուազում, որը նշանակում է բազմաթիւ երբեմնի հայաբնակ վայրերի զանգուածային դատարկում: Աւելին, հենց այս օրինակը բաւական է ընդգծելու համար Իրանի հայօճախում տեղաշարժերի եւ դրանց արդիւնքում դեռեւս Ի. դարի կէսերին առաջացած ընկերային-կրթական խնդիրները: Այլ կերպ ասած՝ սա լուրջ հարուած էր Իրանի հայօճախի կեանքին: Անշուշտ, միւս կողմից էլ պէտք է նշել, որ այդ գաղթի արդիւնքում զգալիօրէն դրական տեղաշարժ ապրեց Խորհրդային Հայաստանի ժողովրդագրութիւնը:

Հարկ է նշել, որ Սպահանի հայոց թեմի կազմում ներառուած Պարսից ծոցի առափնեայ Խուզիսթան նահանգի նաւթային արդիւնաբերութեան քաղաքներում (Մասջէդ Սուլէյման, Ահուազ, Անդիմեշկ, Աբադան, Խորամշահր, Բանդար Մահշահր, Աղաջարի եւն.) մինչեւ 1980 իրանա-իրաքեան պատերազմի սկսուելը եղել է բաւականին մեծ թուով հայ բնակչութիւն: Այժմ այդ վայրերում հայեր համարեայ չեն մնացել, բացառութեամբ միքանի հայ ընտանիքների եւ նաւթային ընկերութեան անհատ պաշտօնեաների[9]:

---

[8] Փերիայի 24 հայաբնակ գյուղերն են եղել՝ Նամակերտ, Ղարղուն, Սվարան, Սնկերտ, Ղարամելիք, Չիգան, Դրախտակ, Միլակերտ, Շուրիշկան, Շահբուլաղ, Խունգ, Սանգիբարան, Խոյգան, Դաջան, Հադան, Բոլորան, Մեյվստան, Աղչա, Աղգոլ, Մեյդանակ, Տաշքշան, Իսկանդարիա, Խնկիրանա եւ Հազարջրիբ: Առավել մանրամասն տե՛ս Բադալեան, Իրան. Հանրագիտարան, էջ 775-776:

[9] Բայբուրդեան, էջ 32, 36-37, 51:

1981ին Թեհրանի հայոց թեմի կազմում գտնուող Ղազուինում ապրում էր 30 հայ ընտանիք, Ռաշտում՝ 60 հայ ընտանիք (225 հոգի), Էնզելիում՝ 40 հայ ընտանիք (200 հոգի), Արաքում՝ 166 հայ ընտանիք (720 հոգի), Բաբոլսարում՝ միքանի հայ ընտանիք, Սարիում՝ 60 հայ ընտանիք (160 հոգի), Ղորողում ու շրջանի միւս գիւղերում՝ 59 հայ ընտանիք (200 հոգի), որից 2003ի դրութեամբ մնացել էր 7 ընտանիք, Մաշհադում՝ 200 հոգի, Համադանում՝ 5 հայ ընտանիք[10]:

Ներկայումս շուրջ 200-250 հոգի է հաշւում Իրանի հայ կաթողիկէ համայնքը: Անցեալում այն կազմել է շուրջ 3000 հոգի, որից աւելի քան 2700ը մեկնել է Իրանից՝ 1979ի յեղափոխութիւնից յետոյ: Ինչ վերաբերում է Իրանում հայ աւետարանական եկեղեցուն, ապա նրա հետեւորդների թիւը կազմում է 300-350 հոգի[11]:

1979ի իսլամական յեղափոխութիւնից յետոյ տիրող անկայուն կացութեան, անուղղակի խտրական վերաբերմունքի եւ այլ պատճառներով արտագաղթն ընդունեց խոշոր չափեր: Ներկայումս պաշտօնական վիճակագրութիւն՝ Իրանում հայերի թուի մասին, գոյութիւն չունի: Ոչ-պաշտօնական տեղեկութիւնների համաձայն՝ նրանց թիւը հասնում է հազիւ 50 հազարի՝ 4 անգամ պակաս, քան իսլամական յեղափոխոնութիւնից առաջ:

Հայերի կենտրոնացումը Թեհրանում պայմանաւորուած է նրանով, որ Իրանում գիւղական բնակչութեան տեսակարար կշիռը ներքին գաղթի գործընթացների հետեւանքով մշտապէս նուազում է[12]:

Այսպիսով, Ի. դարավերջին եւ ԻԱ. դարի սկզբներին Իրանի հայօճախի ժողովրդագրական տուեալները վկայում են, որ այնտեղ տեղի են ունեցել առանցքային փոփոխութիւններ եւ տեղաշարժեր: Դրանք առաջնահերթ եւ ուղղակիօրէն կապուած են եղել նախ իրանական պետութեան զարգացման, այդ երկրի ընկերա-քաղաքական գործընթացների, ինչպէս նաեւ հայ ազգային-հասարակական կեանքի ելեւէջների հետ: Այլ կերպ ասած՝ իրանական միջավայրում իր գործունէութիւնը ծաւալած եւ ծաւալող հայօճախի վրայ ազդել են բազմաթիւ գործօններ:

Իրանահայութեան արտագաղթի առանցքային պատճառներից են ընկերա-տնտեսական եւ քաղաքական անյարմարութիւնները: Իրանահայերի արտագաղթի ուղղութիւններն են ԱՄՆ, Կանադա, Աւստրալիա, Ֆրանսա, Գերմանիա, Բելգիա, Շուեդիա, Հոլանդա, Շուէյցարիա, ինչպէս նաեւ Պարսից ծոցի նաւթ արդիւնահանող երկրներ՝ Արաբական Միացեալ Էմիրութիւններ, Քուէյթ, Կատար եւ Բահրէյն:

---

[10] Լ. Ահարոնեան, *Փոթորկոտ կեանքիս օրերը, գիրք Ա.*, «Սալէս» հրատ., Թեհրան, 2010, էջ 674, 677-78, 682-83, 685-86:

[11] Բայբուրդեան, էջ 178, 186:

[12] Նոյն, էջ 33:

Փաստօրէն, ԻԱ. դարի առաջին երկու տասնամեակներին իրանահայերն արտագաղթել են տարբեր ուղղութիւններով, հարեւան ու հեռաւոր երկրներ, սակայն փաստ է, որ դրանք բոլորն էլ համեմատաբար տնտեսապէս զարգացած պետութիւններ են:

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ ԵՒ ՀԱՅՕՃԱԽԸ. ՍՊԱՍՈՒՄՆԵՐ ԵՒ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ

Միապետութեան փլուզումից յետոյ՝ 1979 Փետրուարի 2ին, այաթոլլահ Խոմէյնին 14 տարի աքսորից յետոյ մի խումբ յեղափոխականների հետ վերադարձաւ Իրան: Այդ օրը բազմամիլիոն դիմաւորողների թւում էր հայկական պատուիրակութիւնը[13]: Իսկ մինչ այդ՝ 1979 Յունուարի 6ին, Փարիզում հարցազրոյցի ընթացքում թղթակցի այն հարցին, թէ իսլամական իրաւակարգում արդեօք հայերը կը կարողանա՞ն պահել իրենց լեզուն ու դպրոցը եւ կարո՞ղ են ազատ կատարել իրենց ծիսական արարողութիւնները՝ իմամ Խոմէյնին յայտնում է. «*Հայերն ապագայում էլ կ'ունենան ազատութիւններ ու նրանց հետ կը վարուեն արդարութեամբ: Իրաւունք կ'ունենան, անշուշտ, իրաւունք կ'ունենան*»[14]:

Իրանահայութիւնը աշխուժ մասնակցութիւն է ցուցաբերել 1979ին Իրանում տեղի ունեցած իսլամական յեղափոխութեանը եւ տուել բազմաթիւ զոհեր: 1979 Մարտի 26ին Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Արտակ արքեպիսկոպոս Մանուկեանն այցելել է իսլամական յեղափոխութեան առաջնորդ իմամ Խոմէյնիին եւ շնորհաւորել նրան ու Իրանի ժողովրդին յեղափոխութեան յաղթանակի առթիւ: Այդ հանդիպման ժամանակ իմամ Խոմէյնին ասել է. «*Այս յեղափոխութեան ձեռքբերումներն իրենց դրական ազդեցութիւնը կ'ունենան նաեւ Իրանի փոքրամասնութիւնների վրայ*»[15]:

Լեւոն Ահարոնեանի խօսքով՝ յեղափոխութեան բերած առաջին բարիքը իրանահայերին Հայոց Ցեղասպանութեան յիշատակին նուիրուած քայլարշաւ կազմակերպելու իրաւունք ստանալն էր, որը շահի օրօք «Սաւաք» անունով յայտնի ոստիկանական կառոյցն արգելել էր: Շահի օրօք Թեհրանի թեմական խորհրդի ջանքերով յաջողուել էր միայն հայոց առաջնորդարանի բակում Ցեղասպանութեանը նուիրուած մի համեստ յուշակոթող կառուցելու թոյլտուութիւն ստանալ: 1979 Ապրիլի 24ին Թեհրանում կատարուած քայլարշաւը իրանահայութեան 64 տարուայ երազանքի իրականացումն էր[16]: Կարծում ենք, որ այդ նկատառումը շատ անկեղծ ու դիպուկ գնահատական էր իրողութիւնների նկատմամբ:

---

[13] Ահարոնեան, էջ 399:
[14] Նոյն, էջ 417:
[15] Բայբուրդեան, էջ 29-30:
[16] Ահարոնեան, էջ 439-40:

Փաստօրէն հայօճախը, ինչպէս միշտ, որեւէ խնդիր չի ունեցել նոր իշխանութիւնների հետ եւ ի սկզբանէ հանդէս է եկել համագործակցութեան դիրքերից:

1979ին ընդունուած իսլամական սահմանադրութիւնը եւս, հետեւելով իր նախորդի՝ 1906ին ընդունուած սահմանադրութեան օրինակին, երկրի ոչ-մահմեդական ազգային փոքրամասնութիւններին ճանաչեց որպէս կրօնական փոքրամասնութիւններ: Իսլամական Հանրապետութեան կազմաւորումից յետոյ կրթական համակարգն Իրանում որոշակի փոփոխութիւնների ենթարկուեց: Դա կապուած էր 1980 Յունիսի 13ին հռչակուած «Իսլամական մշակութային յեղափոխութեան» հետ: Մշակուեց «կրթութեան իսլամականացման» հայեցակարգ, որը բաղկացած էր երկու հիմնարար սկզբունքներից՝ ուսումնական գործընթացի ձեւի եւ ուսուցման բովանդակութեան փոփոխութիւն: Ուսումնական գործընթացի ձեւի իսլամականացման հասկացութեան մէջ մտնում էր վարքի եւ բարոյա-էթիկական նորմերի բնագաւառում իսլամի բոլոր պատուիրանների պահպանման անհրաժեշտութիւնը: Փոփոխուեցին դասագրքերի գաղափարական հիմունքները[17]:

1982 Ապրիլի 25ին կրթադաստիարակութեան նախարարութեան գերագոյն խորհուրդը շրջաբերական յղեց հայկական դպրոցներին, որում ասւում էր, որ կրօնը պէտք է դասաւանդուի պարսկերէն լեզուով: Հայ եւ միւս կրօնական փոքրամասնութիւնների կրօնի դասագիրքը եւս պէտք է լինէր պարսկերէն: Այլ կերպ ասած, հայ աշակերտը քրիստոնէութիւնը պէտք է իւրացնէր իսլամի տեսանկիւնից: Թեհրանի թեմական խորհուրդը քննարկեց այդ որոշումը եւ եկաւ այն եզրակացութեան, որ եթէ դա գործադրուի, կրօնական փոքրամասնութիւնները պէտք է ուրանան իրենց կրօնն ու ընդունեն իսլամը[18]: Նշուած որոշումը ստորագրել էր նախարար Ալիաքբար Փարվարէշը:

Միաժամանակ իշխանութիւնները սկսեցին փոխել հայոց դպրոցների տեսուչներին՝ նշանակելով այնպիսի մարդկանց, որոնք անծանօթ էին հայ ժողովրդի կրօնական ու ազգային առանձնայատկութիւններին: Նշելի է, որ յղում էր արւում սահմանադրութեան 15րդ յօդուածին, որտեղ գրուած է, որ երկրի պաշտօնական լեզուն պարսկերէնն է, ուստի բոլոր գրքերը պէտք է հրատարակուեն այդ լեզուով: Այդ որոշումը բերեց հայօճախի հակազդեցութեանը:

1982 Յունիսի 4ին իրանահայ երեք թեմերի առաջնորդների անունից բողոքագիր ներկայացուեց նախարարին: Սակայն նախարարի պատասխան նամակում կարեւորուում էր պարսկերէնը: Նմանատիպ միքանի

[17] Բայբուրդեան, էջ 75, 91-92:
[18] Ահարոնեան, էջ 708:

տասնեակ նամակներ ուղարկուեցին թեմական խորհրդի անունից պետական բազմաթիւ պաշտօնեաների, իսկ պատասխաններն էլ նոյն ոճի էին:

ԻՐԱՆԱՀԱՅ ԴՊՐՈՑԻ ՆՈՐ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ

Հարկ է նշել, որ այդ շրջանում նկատուեցին որոշ անհանդուրժողականութեան դէպքեր նորանշանակ պարսիկ տնօրէնների եւ հայ աշակերտների ու ուսուցիչների միջեւ: Այդ մասին են վկայում 1980ին «Մարի Մանուկեան» եւ «Քուշէշ» օրիորդաց դպրոցների տեսչուհիների կողմից հայերի հասցէին անվայել խօսքերի արտայայտումը եւ որպէս դրան պատասխան՝ դասադուլների սկսումը[19]:

Յետյեղափոխական Իրանում խնդիրներ էին առաջանում նաեւ պետական կառավարման որոշ ղեկավարների փոփոխութիւնների դէպքում եւս: Երբ սպանուեց կրթութեան նախարար դոկտոր Բահոնարը, նրան փոխարինեց վերը նշուած ծայրայեղ եւ մոլեռանդ աշխարհական Ալիաքբար Փարվարէշը:

Քիչ ժամանակ անց կրօնական փոքրամասնութիւնների դպրոցները միառժամանակ փակուեցին: Դա հայութեան ընդվզման պատճառ դարձաւ: Կազմակերպուեցին բողոքի ցոյցեր: Իշխանութիւնները վերանայեցին իրենց որոշումը եւ կրօնական փոքրամասնութիւնների դպրոցները կրկին սկսեցին գործել: 1980ականներին վերաբացուեցին նաեւ օտարերկրեայ դպրոցները: Փակուեց նաեւ կրօնը պարսկերէն լեզուով դասաւանդելու հարցը[20]:

1980ին Թեհրանում հայ աշակերտների թիւը կազմում էր 14.257, որից 9087ը յաճախում էր թեմական խորհրդի ենթակայութեան ներքոյ գտնուող դպրոցներ: Հայկական մանկապարտէզներում սովորում էր 320 մանուկ, եւս 1100 հոգի էլ՝ պարսկական դպրոցներում: Այսպիսով, հայ աշակերտութեան ընդհանուր թիւը կազմում էր 15.677[21]:

1981 Հոկտեմբերի 12ին կրթադաստիարակութեան նախարարութիւնն ուղարկում է 20 կէտից բաղկացած շրջաբերական, որի գործադրման դէպքում պէտք է փակուէին հայկական դրոցները եւ վերանար հայոց լեզուի դասաւանդումը[22]:

Այդ փաստաթղթի 4րդ կէտով նախատեսւում էր, որ բոլոր՝ այդ թւում՝ հայկական դպրոցների տեսուչներն անխտիր պէտք է նշանակուէին «շարիաթի»՝ իսլամական իրաւունքի, հիմունքներով: Փաստօրէն հայկական դպրոցների ղեկավարումն օրէնքի հիմնաւորմամբ անցնում էր շիա դաւանանքի կրողներին:

---

[19] Ահարոնեան, էջ 503, 735-37:
[20] Բայբուրդեան, էջ 93:
[21] Ահարոնեան, էջ 494:
[22] Նոյն, էջ 586-7, 589-604:

Նկատենք, որ այստեղ խնդիրը ոչ այնքան հայազգի տնօրէնների նշանակումն էր, որքան հայկական ինքնութեանն անծանօթ մարդկանց ներգրաւումը հայկական դպրոցների ղեկավարմանը: Ակնյայտ է, որ ամենայն յարգանք տածելով իր իրանցի հայրենակիցների մասնագիտական եւ մարդկային կարողութիւնների վրայ՝ հայօճախի հիմնական մտահոգութիւնը հիմնուած էր այն կարեւոր իրողութեան վրայ, որ իսլամադաւան գործիչները հայկական ազգային, կրօնական ու հոգեբանական առանձնայատկութիւններին չեն տիրապետում եւ ցանկութեան դէպքում անգամ ակամայից չեն կարող հաշուի առնել դրանք: Այդ մտահոգութիւնը մասամբ մեր օրերում էլ արդիական է, քանի որ իսլամական արժէհամակարգով ապրող մարդու համար այնքան էլ դիւրին չէ խորամուխ լինել քրիստոնեաների ապրելակերպին եւ յաւակնել ներկայացնելու նրանց դպրոցն իսլամական միջավայրում:

5րդ կէտով նշւում էր, որ դպրոցներն իրաւունք ունեն արձանագրելու միայն այն աշակերտներին, ովքեր բնակւում են այդ դպրոցի շրջակայքում: Այս պարագայում էլ հայութեան համար մտահոգիչ էր այն, որ երբեմն հայ աշակերտները հեռուից էին գալիս հայկական դպրոցներ, որպէսզի հաղորդակից լինեն ազգային կրթական ու մշակութային տարրերին: Այսինքն՝ բնակութեան հասցէներում դժուար էր գտնել մօտակայ հայկական դպրոց, որի համար էլ ստիպուած են որոշ ճանապարհ անցնել:

Խիստ մտահոգիչ էր 10րդ կէտը, որով կրօնական փոքրամասնութիւնների լեզուն դասաւանդելն ուսումնական ծրագրով արգելւում էր: Ակնյայտ է, որ այդ կերպ կրթական համակարգից դուրս էր մղւում հայերէնն առհասարակ:

Հայօճախի յամառ պայքարից յետոյ 1981 Նոյեմբերի 28ին դատախազ այաթոլլաի Արդեբիլի գրասենեակից տեղեկացնում են, որ դատախազութեան իրաւաբաններն այդ տխրահռչակ շրջաբերականի 20 կէտերն էլ քննարկելուց յետոյ դրանք անգործադրելի են համարել, դրանով այդ շրջաբերականը չեղեալ է համարուել[23]:

Այսպիսով, հայօճախին յաջողուեց չէզոքացնել այդ վտանգաւոր դրոյթներով փաստաթուղթը, որի համար պահանջուեց մեծ միջոցներ, միքանի տասնեակ բողոքագրեր եւն.:

ԻՐԱՆԱՀԱՅ ԴՊՐՈՑԸ ՅԵՏՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1980-81 կրթաշրջանում ոչ-հայկական դպրոցներում սովորել է ընդամէնը 835 հայ աշակերտ, որից 685ը՝ միջնակարգ, իսկ 150ը՝ տարրական եւ ուղեցոյց բաժիններում: 1981-82 կրթաշրջանում աշակերտների թիւը 437ով աւելացել է, որը պայմանաւորուած էր Իրան-Իրաք պատերազմով, քանի որ Իրանի հարաւում բնակուող հայերը, լքելով

[23] Ահարոնեան, էջ 605:

իրենց բնակավայրերը, տեղափոխուեցին Թեհրան: Սակայն յետագայ տարիներին հայ աշակերտութեան թուի աստիճանական նուազումը արտագաղթի հետեւանք էր[24]:

Իրանի հայկական դպրոցների թուային պատկերը 1980-2007ին		
N	Տարեթիւ	Աշակերտների թիւ
	1980-81	13553
	1981-82	13990
	2002-03	6875
	2003-04	5611
	2005-06	5088
	2006-07	4377

1983 Մայիսի 9ին իրանահայ գործիչներ Վագրիկ Մանուկեանը եւ Հրայր Խալաթեանը Արտակ արքեպիսկոպոս Մանուկեանի գլխաւորութեամբ հանդիպում են ԻԻՀ վարչապետ Միրհոսէին Մուսաուիի հետ: Վարչապետը հայկական դպրոցների հարցի վերաբերեալ նշում է, որ կը կարգադրի, որ օրէնքի շրջանակներում վերսկսուեն բանակցութիւնները ներքին գործերի նախարարութեան հետ: Վարչապետը համոզուած էր, որ ինչպէս ժողովրդի մեծամասնութիւնը, այնպէս էլ հայերը, կը յարգեն երկրի սահմանադրութիւնը[25]:

Ուշագրաւ է, որ այդ օրերին անուանի գործիչները հանդէս եկան բողոքներով: Հայ աւետարանական եկեղեցու իրանահայ մասնաճիւղի առաջնորդ պատուելի Թադէոս Միքայէլեանը հայօճախին մտահոգող կրթական հարցերի վերաբերեալ անգլերէնով հարցազրոյց է ունենում BBC լրատուական ծառայութեան հետ, որը տպաւորիչ է դառնում: Նա նաեւ 15 կէտից բաղկացած նամակ է յղում թեմական խորհրդին նոյն բովանդակութեամբ, որի 3րդ կէտում գրում է. «*Երբ մի ժողովրդի պարտադրում են, որ իր կրօնը սովորի մի այլ լեզուով, հեռանում են կրօնական սկզբունքներից: Ղուրանում ասուած է. «Լա էքրահ ֆի է դին», ինչը նշանակում է՝ կրօնի ընդունելը պարտադիր չպէտք է լինի: Եւ այսօրինակ վարմունքը նշանակում է կացնահարել ազգային մշակոյթն ու կրօնը*»[26]:

1983 Յունիսի 2ին Իրանի խորհրդարանում ելոյթ է ունենում Խալաթեանը: Նրա խօսքով՝ «*... Հայկական դպրոցների հարցի կապակցութեամբ դեռեւս միքանի շրջաններում դժուարութիւններ կան, ու կան պատասխանատուներ ու դպրոցների տեսուչներ, ովքեր ոչ միայն հայ*

[24] Ահարոնեան, էջ 696, 699-700:
[25] Նոյն, էջ 742:
[26] Ահարոնեան, էջ 746:

համայնքի ու հայութեան կրօնական ու մշակութային պատասխանատուների հետ չեն համագործակցում, այլեւ անընդհատ դժուարութիւններ են սրեղծում: Հայկական համայնքի կարեւոր հարցերից մէկն էլ դպրոցներում կրօնի դասաւանդումն է, որը կարելի է ասել՝ կազմում է հայութեան գոյութեան հիմքը: Պարսկերէն լեզուով կրօնի ուսուցումը հայկական դպրոցներում անընդունելի է հայութեան տեսանկիւնից»[27]: Փաստօրէն, մի կողմից հայ համայնքի տղամարդկանց մի զգալի հատուած կռւում էր ռազմաճակատում, իսկ միւս կողմից շարունակւում էր կրթական հարցում անորոշութիւնը:

1983 Մարտ ամսից նախարարութիւնը փակեց հայկական դպրոցները, բայց կրօնի քննութեան հարցը մնաց անորոշ: Տեղի ունեցաւ դպրոցների մի մասի անհիմն լուծարումը, ինչպէս՝ «Նոր Անի», «Մարիամ» (տարրական, ուղեցոյց ու միջնակարգ), «Ռոստոմ» (ուղեցոյց ու տարրական), «Քուշէշ» (ուղեցոյց) ու «Վաչէ Յովսէփեան» (տարրական) դպրոցները: Դրանց վերաբերեալ թեմական խորհուրդն իր բողոքներն է յայտնել Իրանի նախագահին ու վարչապետին[28]:

Այսպիսով, վերոնշեալ բողոքագրերի հանգամանալից ուսումնասիրութիւնից յետոյ կարող ենք եզրակացնել, որ թէեւ որոշ բարձրաստիճան պաշտօնեաներ քուլիսներում ընդունում էին, որ դասագրքերը կազմել են առանց քրիստոնեաների ղեկավարների համաձայնութեան, ու կրօնը ոչ մայրենի լեզուով սովորելու հարկադրանքը վիրաւորում է քրիստոնեաների կրօնական ու ազգային զգացմունքները, սակայն այդուհանդերձ, չէին կարողանում այդ մասին բարձրաձայնել եւ պաշտօնապէս ընդունել: Մոլեռանդ կրօնական գործիչները թոյլ չէին տալիս անկողմնակալ մտածող մարդկանց բարձրաձայնել իրենց տեսակէտերը, եւ մի տեսակ սպառնալիքի մթնոլորտ էր ստեղծուել: Կարծում ենք, որ հենց այդ պայմաններում Իրանի հայօճախում զօրացան արտագաղթի մտածումները, որը յաջորդ տարիներին ու տասնամեակներին գործնականում սկիզբ առաւ ու աստիճանաբար ծաւալուելով մեծ չափերի հասաւ: Հարկ է նշել, որ այդ ամէնի վրայ եւս ազդեց Իրաքի հետ ութամեայ պատերազմը, որի առաջնագծում կռւում էին հայերը: Այդ պատերազմին մասնակցել է 17 հազար հայ:

---

[27] Հրայր Խալաթեանի ելոյթը խորհրդարանում, «Հայութիւնը ուզում է, որ դպրոցներում կրօնի ուսուցումը կատարւի հայերէն լեզուով ու հենց Հայոց եկեղեցու սովորութիւնների համաձայն», *Ալիք*, 06 Յունիս 1983, թիւ 116 (13.253):

[28] Ահարոնեան, էջ 775:

ԻՐԱՆԱՀԱՅ ԴՊՐՈՑԸ ԻԱ. ԴԱՐՈՒՄ.
Ա. ՀԱՅԵՐԷՆԸ՝ ԾԻՍԱԿԱ՞Ն, ԹԷ՞ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԼԵԶՈՒ

Իրաւական առումով Իրանում «հայկական դպրոց» գոյութիւն չունի, քանի որ երկրի բոլոր դպրոցները *de jure* ընդգրկուած են ժողովրդական կրթութեան ընդհանուր համակարգի մէջ: Գոյութիւն ունեն միայն պետական դպրոցներ, որոնցում կազմակերպուած է հայ ընտանիքների (որպէս կրօնական փոքրամասնութիւններին պատկանող հաւաքականութեան) երեխաների ուսուցումը: Ընդ որում, հանրակրթական դասանիւթերի գծով ուսուցման ողջ գործընթացը տեղի է ունենում պարսկերէն լեզուով: Համաձայն հաստատուած պետական ծրագրի, այդ դպրոցներում շաբաթական որոշակի ժամերի քանակով աշակերտները հնարաւորութիւն ունեն սովորելու հայոց լեզու եւ գրականութիւն, հայ ժողովրդի պատմութիւն եւ կրօն: Տղաների եւ աղջիկների ուսուցումը, ինչպէս ընդունուած է ամբողջ երկրում, տեղի է ունենում անջատ, սակայն նոյն ծրագրով: Հայոց լեզուն կրթութեան բովանդակութեան մէջ ընդգրկուել է որպէս ծիսական լեզու: Ծիսական լեզուի ուսուցմանը տրուել է 4 ժամ, եւս 2 ժամ կրօնի համար: Այսինքն հայկական դպրոցներում աշակերտները հայ ժողովրդի պատմութեանը ծանօթանում են միայն կրօնի դասերի շրջանակներում[29]:

ԻԱ. դարի սկզբին իրանական հասարակութիւնն ունէր հետեւեալ տարիքային պատկերը: 2005ի դրութեամբ Իրանի բնակչութեան թիւը կազմում էր աւելի քան 72 մլն. կամ աշխարհի բնակչութեան (6,45 մլրդ.) մօտ 1%ը: Իրանի բնակչութիւնն աշխարհում ամենաերիտասարդներից է. երկրում միջին տարիքը 23,5 է: Ընդ որում՝ մինչեւ 14 տարեկան՝ 28%, 15-64՝ 67,2%, 65 եւ աւելի բարձր տարիք՝ 4,8%: Ընտանիքների 40%ը ունի 6 եւ աւել երեխաներ: Արագ երիտասարդացմանը զուգահեռ բնակչութիւնը նաեւ արագ քաղաքայնացւում է: Եթէ 1996ին քաղաքային բնակչութիւնը կազմում էր 61,5%, ապա 2005ին՝ 69%[30]:

2000 Յուլիսի 26ին ԻԻՀ ուսումնադաստիարակութեան նախարարութիւնը Արա Ֆարիադեանին պաշտօնապէս նշանակել է որպէս Թեհրանի հայոց «Ռոստոմ» տղայոց դպրոցի տեսուչ: Այդպիսով երկար տարիների ընդմիջումից եւ բազմաթիւ դիմումներից յետոյ, հայկական դպրոցներից մէկն ունեցաւ իր հայ տեսուչը պաշտօնական կերպով եւ արդիւնաւորուեց հայօճախի կրթական մարմինների, պատասխանատուների տարիների հետեւողական աշխատանքը: Հայօճախում յոյսեր առաջացան, որ սկսուած ընթացքը կը տարածուի հայկական միւս դպրոցների վրայ, սակայն նման նշանակումներն աւելի

[29] Բայբուրդեան, էջ 95:

[30] Ռաֆայել Թադեւոսեան, *Իրան (տեղեկատու)*, Հեղինակային հրատ., Երեւան, 2005, էջ 15:

շուտ դիպուածային բնոյթ են կրում եւ պայմանաւորուած են ըստ իրավիճակի յարմարութեան, թէեւ կարեւոր հանգամանք է:

Ֆարիադեանի խօսքով՝ «*…Հայերէնով վարժ գրել-կարդալը բաւարար հայեցի դաստիարակութիւն չի կարելի համարել: Պէ՛տք է փորձենք, որ մեր աշակերտը տարրական դպրոցից սկսած սովորի հայեցիօրէն մտածել եւ մօտենալ իրեն շրջապատող խնդիրներին*»: Ֆարիադեանի գնահատմամբ՝ «*Ընդհանուր կրթական վիճակը չի սահմանափակւում մեր հայոց դպրոցներով, այլ կախում ունի երկրում տիրող կրթադաստիարակչական մակարդակից, որն իջել է*» [31]:

Ուշագրաւ է, որ մասնագիտութեամբ լինելով պարսից լեզուի եւ գրականութեան ուսուցիչ, Ֆարիադեանը նկատում էր՝ հայերէն դասաւանդումը դպրոցներում միատեսակ չէ: «*Ամէն ուսուցիչ շեշտը դնում է ի՛ր նախասիրած առարկայի վրայ, մէկը՝ հայերէն ընթերցանութեան, երկրորդը՝ կրօնի եւ այդպէս: Մենք հայերէն դասաւանդող ուսուցիչների պակաս ունենք*»:

Այսպիսով, հայերենի միասնական դասավանդումը ներհամայնքային խնդիր է, քանի որ առկա է եղել նաեւ միատեսակ մոտեցման բացակայություն: Մյուս կողմից չնայած պաշտոնապես եւ իրավական ձեւակերպումներով հայերենն ունի համայնքի համար ծիսական լեզվի կարգավիճակ, եւ դպրոցներում նրան հատկացված են սահմանափակ ժամեր, այդուհանդերձ, այն ներհամայնքային կյանքում շարունակում է մնալ որպես հաղորդակցման կարեւոր միջոց: Ավելին, հենց այդ լեզվով են հրատարակվում համայնքի տպագիր մամուլը, գրքերը, ինչպես նաեւ հրապարակվում համացանցային տեղեկատվությունը:

Բ. ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ՝ ՀԱՅ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՄԲ

2000ականների սկզբներին համայնքային կառոյցների համար օրակարգային հարց է դարձել հայազգի տեսուչների նշանակումը, որը հոգեբանական դրական ազդակներ է հաղորդել հայութեանը:

Նշելի է, որ հետեւողական աշխատանքների եւ ուսումնադաստիարակութեան հիմնարկի հետ Իրանի խորհրդարանի հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Լեւոն Դաւթեանի հանդիպումների, ինչպէս նաեւ թեմի ազգային իշխանութեան ջանքերի շնորհիւ 2001 Նոյեմբերին Ուրմիայի երկսեռ տարրական եւ աղջկանց ուղեցոյց դպրոցների տեսչուհի է նշանակուել 28 տարուայ մանկավարժ Յասմիկ (Ռիմա) Ազիզեանը, տղայոց ուղեցոյց դպրոցի տեսուչ՝ 27 տարուայ

[31] «Հարցազրոյց «Ռոստոմ» տղ. տարր. դպրոցի նորանշանակ տեսուչ պրն. Արա Ֆարիադեանի հետ. հարցազրոյցը վարեց Ա. Յ.», *Ալիք*, 3 Սեպտեմբեր 2000:

մանկավարժ Արարատ Սարգսեանը, իսկ 2002 Յունուարին տարրական եւ ուղեցոյց դպրոցների փոխտեսչուհի՝ Լուսիկ Յարութիւնեանը[32]:

Այդուհանդերձ, 2002ի նոր ուսումնական տարուան ընդառաջ «Ն. Գիւլբենգեան» դպրոցի տեսուչը, փոխտեսուչը, ուսուցիչներից վեցը փոխուել են: Նախկին տեսուչ Ասադին փոխարինել է Բահմանփուրը, իսկ փոխտեսուչ Ջաֆարին՝ Սաբերովը[33]:

2003 Հոկտեմբերի 29ին Իրանի խորհրդարանում կրօնական փոքրամասնութիւնների պատգամաւորները, այդ թւում՝ հիւսիսային եւ հարաւային իրանահայութեան պատգամաւորները՝ Լեւոն Դաւթեանը եւ Ժորժիկ Աբրահամեանը, հանդիպել են Իրանի նախագահի օգնական եւ խորհրդարանի իրաւական հարցերով ներկայացուցիչ հոջաթ-օլ-էսլամ Մոհամմադալի Աբթահիի հետ[34]: Քննարկուել է ուսումնադաստիարակութեան նախարարութեան կողմից կրօնական փոքրամասնութիւնների ուսուցիչների պետականօրէն վարձուելու հարցը եւ նախագահի գրասենեակի միջոցով կրօնական փոքրամասնութիւնների մշակութային, կրօնական, կրթական եւ մարզական ծախսերի համար յատուկ ամավարկ յատկացնելու խնդիրը:

2001 Յուլիսի 26ին իսլամական խորհրդարանում հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Դաւթեանի գրասենեակը տեղեկացրել է, որ ի հետեւումն Ուրմիայի գործակալական խորհրդի Յուլիսի 10ին կատարած դիմումի, տեղի հայոց ազգային «Մասիհա» աղջկանց եւ տղոց տարրա-կան եւ ուղեցոյց դպրոցների համար հայ տեսուչ եւ փոխտեսուչ նշանա-կելու կապակցութեամբ Իրանի խորհրդարանում հիւսիսային իրանահա-յութեան պատգամաւոր Դաւթեանը Յուլիսի 17ին հանդիպել է ուսումնա-դաստիարակութեան նախարարի օգնական եւ կրօնական փոքրամասնու-թիւնների դպրոցներին հսկող յանձնաժողովի նախագահ Ասղար Նոռու-զիի հետ: Վերջինս լսելով ուրմիահայութեան մտահոգութիւնները՝ դրա-կան դիրքորոշում յայտնելով՝ խորհուրդ է տուել խնդիրը լուծելու համար:

Դաւթեանը Յուլիսի 17ին նոյն հարցով մասնակցել է Իրանի խորհրդարանում Արեւմտեան Ատրպատականի պատգամաւորների նիստին, որտեղ ներկայ է եղել նոյն նահանգի ուսումնադաստիարակութեան հիմնարկի տնօրէն Ռահմաթ Ռիազիաֆշարը: Պատգամաւորը քննարկել է խնդիրը, որ շուտափոյթ կերպով միջոցներ կիրառուեն Ուրմիայի հայոց «Մասիհա» դպրոցների 2001-02 կրթաշրջանի համար հայ տեսուչ եւ փոխտեսուչ նշանակելու

---

[32] «Ուրմիայի հայոց դպրոցներում նշանակուել են հայ տեսուչներ», *Ալիք*, 18 Ապրիլ 2002:

[33] «Գիւլբենգեան դպրոցի նորութիւնները», *Արաքս*, 30-32(113-115):2002, էջ 8:

[34] «Հոջ. Աբթահիի հետ հանդիպման ընթացքում արծարծուեց նաեւ կրօնական փոքրամասնութիւնների ուսուցիչներին պաշտօնապէս վարձելու հարցը», *Ալիք*, 5 Նոյեմբեր 2003:

առնչութեամբ[35]: Նշուած դպրոցները շուրջ 200 աշակերտով մինչեւ 1986 հայ տեսուչ եւ փոխտեսուչներ են ունեցել, իսկ 2001ի դրութեամբ միայն աղջկանց ուղեցոյց դպրոցն է ունեցել հայ փոխտեսուչ, որը հանգստի էր կոչուելու ուսումնական տարուայ սկզբում:

Թեհրանի հայոց «Գոհար» տղայոց ուղեցոյց դպրոցում տարիներ փոխտեսուչի պաշտօնում աշխատած եւ պարսկերէն գրականութեան մասնագէտ Իշխան Թորոսեանը պատկան շրջանի ուսումնադաստիարակութեան հիմնարկի կողմից արտօնագիր ստանալով՝ 2004ին զբաղեցրել է նոյն դպրոցի տեսչութեան պատասխանատուի պաշտօնը: 2004-05 կրթաշրջանում եւս 3 հայ տեսուչ է նշանակուել «Քուշէշ Դաւթեան», «Թովմասեան» եւ «Արաքս» դպրոցներում ուսումնադաստիարակութեան գերատեսչութեան հաստատումով: «Արաքս» աղջկանց ուղեցոյց դպրոցի համար աշխատանքի է հրաւիրուել փորձառու եւ նախկին «Սահակեան» աղջկանց դպրոցի տեսուչ Հերիքնազ Բաբախանեանը («Սահակեան» դպրոցը աշակերտութեան թուաքանակի պատճառով, դադարեցրել էր իր գործունէութիւնը)[36]: Իդէպ, տարրական օղակում շարունակել է պաշտօնավարել գործող տեսուչը՝ տիկին Թաղլիմին:

Այսպիսով, 2000ականների սկզբներին իրանական իշխանութիւնները հիմք ընդունելով նաեւ Թեհրանի հայոց թեմի կրթական խորհրդի առաջարկութիւնը որոշակիօրէն ընդառաջել են հայազգի տնօրէնների նշանակման հարցում: Այդ կերպ տեղի է ունեցել խորհրդանշական փոխակերպումներ, որը կարելի է երկար տարիների սպասումների կամ տարատեսակ հոգեվիճակների ինչ-որ արդյունք դիտարկել:

Խնդրոյ առարկայի վերաբերեալ խիստ կարեւորում ենք իրանական մամուլի անդրադարձը: 2005 Յունուարի 11ին *Շարղ* օրաթերթը «Հասարակութիւն» սիւնակի ներքոյ անդրադարձել է կրօնական փոքրամասնութիւնների կրթօջախների հարցերին: Ըստ թերթի՝ «*Ներկայումս կրօնական փոքրամասնութիւնների 32 դպրոցներից միմիայն երեքում են պաշտօնավարում ոչ-մուսուլման տեսուչներ*»: Մէջբերելով հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Գէորգ Վարդանեանին, թերթը գրում է. «*Ներկայ տեսուչները, թէեւ սրտացաւ ու ազնի մարդիկ են, սակայն այն ուսումնակրթական մթնոլորտն ու պայմանները, որոնք լիարժէք համընկնող լինեն հայ մշակոյթին, գոյութիւն չունեն, որոնք խիստ*

[35] «Ուրմիայի հայոց ազգային «Մասիհա» դպրոցների տեսչի նշանակման հարցով», *Ալիք*, 26 Յուլիս 2001:

[36] «'Գոհար' դպրոցը եւս օժտուեց հայ տեսչով», *Ալիք*, 22 Նոյեմբեր 2004. նաեւ՝ «Հաղորդագրութիւն», 25 Յունուար 2005, «Հայ նոր տեսուչ՝ «Արաքս» աղջ. դպրոցի ուղեցոյց օղակում», 28 Սեպտեմբեր 2004:

անհրաժեշտութիւն են մեր երիտասարդների մէջ ազգային ոգին ու ինքնութիւնը պահպանելու տեսակէտից»[37]:

Ակնյայտ է, որ իրանական կողմի այս իւրօրինակ «խոստովանութիւնը» վկայում է, որ հարցը պէտք է լուծել հայ տեսուչների նշանակման օգտին:

2004 Յունուարի 8ին «Աբրահամ Սողոմոնեան» տղայոց դպրոց է այցելել Թեհրանի ուսումնադաստիարակութեան հիմնարկի տնօրէն Ջաւահերիփուրը եւ դիմելով հայութեանը՝ ընդգծել է, որ նրանք իրաւասու են ընտրել դպրոցի տեսուչներին, «*եւ դա ցանկանում ենք տարածել բոլոր դպրոցներում, որ ծնողները մասնակից լինեն տեսուչների ընտրութեան գործին եւ տեսուչները ընտրուեն ուսուցիչների եւ ծնողների հայեցողութեամբ*»[38]: Փաստօրէն շուրջ 20 տարի անց պետական մարմինների կողմից այս դէպքում նկատուել է աջակցութիւն հայազգի տնօրէնների նշանակման հարցում, որը կարելի է համարել փոքր դիրքափոխում:

Հարկ է նշել, որ վերոնշեալ կապերի խորացմանը զուգահեռ նկատուել են նաեւ որոշ հարցեր: 2005ին Իրանի խորհրդարանի պատգամաւոր Գէորգ Վարդանեանը այցելել է Թեհրանի հայոց դպրոցներ: Պատգամաւորի՝ «Թունեան» ուղեցոյց դպրոց այցելութեան ընթացքում նրան դիմաւորել էր փոխտեսուչ Անոմէ Մեհրաբեանը: Միակ դպրոցն է եղել, որ տեսուչ Ամինին դժգոհել է եւ իր զարմանքն է յայտնել պատգամաւորի այցելութեան համար: Մինչդեռ, ըստ հայ պատգամաւորի, այցի մասին նախապէս համաձայնեցրել է դպրոցի հետ: Պատգամաւորի վկայութեամբ՝ «*Յիշեցրի նաեւ, որ որեւէ ուժ չի կարող արգելել խորհրդարանի պատգամաւորի այցելութիւնները, ցաւ յայտնեցի, որ հայոց դպրոցի տեսուչը չի ուրախանում հայ պատգամաւորի այցելութեամբ*»: Նշելի է, որ տիկին Ամինին պատճառաբանել է, որ իր մտահոգութիւնը պատգամաւորի անձի հետ կապուած նրա անվտանգութեան հարցն է՝ յստակեցնելով, թէ հայկական դպրոցում ինչ սպառնալիք կարող է լինել[39]: Պատգամաւորը մէկ այլ՝ «Մարիամ» հաստատութեան դպրոց այցի մասին էլ գրում է. «*Պրն. Դիւանբէյգին միակ տեսուչն էր, որ մեզ հիւրընկալեց իր գրասենեակի եւթեւ նստած ու մեր շարքում չնստեց: Իհարկէ, դա որեւէ բանով չազդեց առաջացած ընկերական մթնոլորտի վրայ*»[40]:

Ակնյայտ է, որ նշուած դէպքերում անձնական ու մարդկային որակները, բարքերի տարբերութիւնները երբեմն կարող են չօգնել հայօճախի եւ իրանական հանրութեան միջեւ կապերի կայունութեանը: Ահա թէ ինչու կարեւոր է հայազգի տեսուչների նշանակումը, որոնք կարող են կապող օղակ դառնալ ե՛ւ հայկական, ե՛ւ իրանական հասարակութիւնների միջեւ:

---

[37] «Պարսկերէն մամուլը՝ հայոց դպրոցների մասին», *Ալիք*, 11 Յունուար 2005:

[38] «Իրանահայ կեանք», *Ալիք*, 15 Յունուար 2004:

[39] «Այցելութիւն Թեհրանի հայոց դպրոցներ», *Ալիք*, 20 Յունուար 2005:

[40] Նոյն:

Այսպիսով, 2000ականների սկզբներին կրթադաստիարակութեան նախարարութեան եւ պետական միւս մարմինների դիրքորոշումները հայկական դպրոցների նկատմամբ որոշակիօրէն եւ փոքր քայլերով փոխուել են, սակայն մեծ հաշուով դրանցում արմատական փոփոխութիւններ չեն նկատուել:

Գ. ԱՐԴԵՕՔ ՄՐՑԱԿՑՈՒ՞Մ Է ԻՐԱՆԱՀԱՅ ԴՊՐՈՑԸ, ԹԷ՞ ՆԱՀԱՆՋՈՒՄ. ՄԵՐՕՐԵԱՅ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ

Իրանի հայօճախի կեանքում որոշակի ու նոր տեղաշարժեր առաջացան, երբ 2011ին Սիրիայում բռնկուեց քաղաքացիական պատերազմ: Դա հոգեբանական որոշակի ազդեցութիւն է ունեցել Իրանի հայօճախի տրամադրութիւնների վրայ՝ ելնելով այն հանգամանքից, որ Իրանն անուղղակիօրէն ներքաշուած է այդ հակամարտութեան մէջ: Ահա թէ ինչու իրանցիներն իրենց բախտակից են համարում սիրիացիների հետ, իսկ իրանահայերը՝ սիրիահայերի: Սկսուեց արտագաղթի նոր ալիք:

Իրանին պատուհասած համավարակի պայմաններում 2020-21 կրթաշրջանում թէեւ որոշակի դժուարութեամբ, այնուամենայնիւ, այդ վիճակից յաջողապէս դուրս եկաւ նաեւ այդ երկրի կրթական մեծ համակարգի մի մասը կազմող իրանահայ դպրոցը: Հայկական դպրոցներում կրթութեան որակը բարձրացնելու նպատակով կրթական խորհուրդն իրականացրել է որոշ ծրագրեր: Հայօճախի իրաւասու այդ մարմինը սկսել է ուշադրութիւն դարձնել ոչ-հայերէն դասանիւթերի, ինչպէս նաեւ դպրոցի պարսիկ մանկավարժների որակապէս առաւել բարելաւմանը: Սակայն հարց է առաջանում, արդեօք այդ բարելաւումը չի՞ իրականացուել ի հաշիւ հայերէնի եւ հայ ուսուցիչների: Թերեւս սա հարցի միւս կողմն է, բայց շատ կարեւոր:

Ըստ վիճակագրական տուեալների՝ նուազել է պարսկական դպրոցներ յաճախող հայ աշակերտների թիւը: Այսպէս, եթէ 2016-17 կրթաշրջանում պարսկական դպրոցներ են յաճախել 384, 2017-18ին՝ 284, 2018-19ին՝ 342, 2019-20ին՝ 296, ապա 2020-21ին՝ 200 հայ աշակերտ: Ընդ որում՝ 200 հոգուց 65ը՝ 12րդ, 59ը՝ 11րդ եւ 51ը՝ 10րդ դասարանի աշակերտներ են եղել[41]:

Փաստօրէն, հայկական դպրոցի բարձր դասարաններից նկատւում է հոսք: Ստացւում է, որ կրտսեր եւ միջին դասարաններում հայ աշակերտը պէտք է լաւագոյնս սովորի հայերէն եւ կրօն առարկաները, քանի որ դրանից յետոյ պարսկական դպրոցներում ուսումնառութիւնը շարունակելու դէպքում, դժուար թէ գտնի ժամանակ դրանք լրացուցիչ ուսումնասիրելու:

[41] Կարէն Մկրտչեան, «Արդեօք մրցակցու՞մ է իրանահայ դպրոցը, թէ՞ նահանջում», *Ազգ*, 12 Օգոստոս 2021:

Առաւել եւս բուհական ընդունելութեան քննութիւնների ընթացքում դրանց իմացութեան վերաբերեալ որեւէ քննութիւն նախատեսուած չէ:

Միւս կողմից, ակնյայտ է, որ կրթական խորհուրդը իրապէս շահագրգռուած է բարեփոխումների իրականացմամբ՝ ելնելով այն կարեւոր մտադրութիւնից, որ միայն թէ պահպանուեն հայկական անուանումով եւ հայեցի դաստիարակութեամբ, թէկուզեւ սահմանափակ հայերէն դասաժամերով դպրոցներն Իրանում: Իրականում բուհերի ընդունելութեան ժամանակ դիմորդներին անհրաժեշտ է հաւաքել բարձր միաւորներ պարսկերէնից, որի համար էլ հայ աշակերտներին հրապուրում է պարսկական դպրոցը: Ահա թէ ինչու կատարուած աշխատանքների արդիւնքում նուազել է պարսկական դպրոցներ դիմողների թիւը: Սակայն դա, բնաւ էլ չի նշանակում, որ բարձրացել են հայ աշակերտների գիտելիքները հայագիտական դասանիւթերից կամ աւելացել են դրանց դասաժամերը: Հակառակը, ըստ էութեան հայկական դպրոցներում նկատւում է պարսկերէնով ծանրաբեռնուած կրթական ծրագրերի առաւել խորացում:

Յաջորդ խնդիրն այն է, որ պարսկական դպրոցներ հիմնականում դիմում են տղաները, ուստի առաջնահերթութիւնից ելնելով բարելաւման աշխատանքները կենտրոնացուել են արական դպրոցներում: Նշուած յաջողութեան գրաւականն է նաեւ հայկական դպրոցներում պարսկերէն դասանիւթերի դասաւանդման հարցում որակեալ ուսուցիչների ներգրաւումը: Օրինակ, 2017ին «Ա. Սողոմոնեան» դպրոցը յայտնուել է փակուելու նախաշէմին, սակայն Թեհրանի հայոց թեմի պատգամաւորական ժողովի կրթական յանձնաժողովի ջանքերով եւ թեմական խորհրդի ֆինանսաւորմամբ դպրոցը համալրուել է ուսուցիչներով եւ 12րդ դասարանցիները ուսումը շարունակել են նոյն դպրոցում:

Բարեփոխումները նկատելի են նաեւ «Թունեան-Թովմասեան» աղջիկների դպրոցի պարագայում, որի միջնակարգ Բ օղակի աշակերտութեան թիւը, եթէ 2016-17 կրթաշրջանում կազմել է 40, ապա 2020-21 կրթաշրջանում հասել է 90 աշակերտի: Ներկայումս «Թունեան-Թովմասեան», «Ա. Սողոմոնեան», «Մարիամեան», «Գոհար» եւ «Մարիամ» հաստատութեան դպրոցներում գործում են միջնակարգ Ա. եւ Բ. օղակներ, «Արարատ» եւ «Արաքս» դպրոցներում միջնակարգ Ա. օղակ, իսկ «Մարի Մանուկեան» դպրոցում միայն միջնակարգ Բ. օղակ: Նշուած դպրոցները միասին ունեն մօտ 700 աշակերտ:

Հետաքրքիր է, որ 2020-21 կրթաշրջանում պարսկական դպրոցներում սովորող աշակերտների մօտ 90%ը եղել են միջնակարգ Բ. բաժնի սաներ: Սակայն տարօրինակ է, որ չնայած աշակերտները եւ նրանց ծնողները նախապատուութիւնը տալիս են ուսողական եւ փորձառական կոչուող ճիւղերին եւ որոնք առկայ են հայկական դպրոցներում, այդուհանդերձ այդ բաժիններ քիչ են դիմում եւ գնում են պարսկական դպրոցներ: Թերեւս սա էլ պէտք է դիտարկել մեր օրերի նոր, սակայն դժուարին փոխակերպում:

Ուշագրաւ է 2020ին իրանական պետական բուհեր ընդունուած հայ աշակերտների վիճակագրական տուեալները: Պետական համալսարանների ընդունելութեան քննութիւններին մասնակցել են Թեհրանի պարսկական դպրոցներից 83, իսկ հայկական դպրոցներից 61 հայ աշակերտ: Պարսկական դպրոցներ յաճախածներից 29%ն է ընդունուել բուհեր մրցոյթում, իսկ հայկական դպրոցներից՝ 32%ը: Փաստօրէն հայկական դպրոցներ յաճախած աշակերտները աւելի մեծ յաջողութիւն են արձանագրել պետական համալսարանների ընդունելութեան քննութիւններում, քան պարսկական դպրոցներ յաճախած հայ աշակերտները:

Տեղին ենք համարում համեմատել, որ 2000-4 կրթաշրջաններին միջին հաշուով իրանական բուհեր է ընդունուել շուրջ 200 հայ դիմորդ: Եւ արտագաղթի հետեւանքով այդ թիւը զգալիօրէն նուազել է: Ինչեւէ, այսօր հայերէնի եւ կրօնի սահմանափակ դասաժամերով առաջնորդուող իրանահայ դպրոցը, փաստօրէն կարողանում է իր ցուցանիշերով մրցել, տուեալ դէպքում նոյնիսկ՝ 3% տարբերութեամբ, անցնել պարսկական դպրոցին: Այդ փաստը նաեւ նշանակում է, որ իրանահայ դպրոցում իսկապէս բաւականին ամուր հիմքերի վրայ է դրուած պարսկերէնը, որը ոչ միայն չի զիջում, այլ նաեւ գերազանցում է պարսկական դպրոցին:

Սակայն հենց այդ մրցակցութեան պայմաններում հայօճախի կառոյցների համար առաջացել եւ մեծանում է մի նոր մարտահրաւէր՝ հայկական դպրոցների հայ աշակերտների հայագիտական առարկաների վերաբերեալ գիտելիքները խորացուած պարսկերէնի եւ պարսկերէնով մնացած բոլոր դասաժամերի ներքոյ յանկարծ լրջօրէն չտուժեն: Աւելորդ է խօսել պարսկական դպրոցների պարագայում, որտեղ հայ աշակերտները սովորում են լիովին պարսկական միջավայրում:


Այսպիսով, ԻԱ. դար մուտք գործած իրանահայ դպրոցը շուրջ 40ամեայ տեղաշարժերի պայմաններում կանգնած է կրթական լուրջ մարտահրաւէրների առաջ: Այդ նոր պայմաններում հայօճախի իրաւասու կառոյցները փորձում են տալ իւրօրինակ լուծումներ, այդ թւում՝ մրցակցելով նոյնիսկ իրանական դպրոցի հետ, իսկ իրականում պահպանելով ազգային դպրոցի անունը՝ նահանջում է հայագիտական առարկաների դասաժամերի յատկացման հարցում:

Վերջին 40ամեակի Իրանի քաղաքական, վարչակարգային, միջպետական իրադարձութիւնները-տեղաշարժերն իրենց ազդեցութիւնն են թողել Իրանի հայօճախի վրայ: Ակնյայտ է, որ միապետական կարգերի տապալումը եւ մեծածաւալ փոփոխութիւններով դէպի հանրապետութիւն կառուցման ճանապարհին փոխակերպումը չէր կարող իր դրոշմը չթողնել հայօճախի վրայ:


Այդ փոխակերպումն առաջնահերթ անդրադարձաւ հայօճախի ժողովրդագրական պատկերի վրայ, որը կրեց լուրջ փոփոխութիւն՝ ուղղակիօրէն ներգործութիւն ունենալով հայօճախի կրթական ցանցի վրայ:

Իրանական նոր իշխանութիւնների եւ վարչակարգի փոփոխութիւնը նոր քաղաքականութիւն առաջացրեցին երկրի կրթական համակարգում, որով փոխակերպուեց իրանահայ վարժարանի կրթադաստիարակչական առաքելութիւնը:

ԺԹ. դարավերջից մինչեւ մեր օրերը Իրանի հայօճախի ժողովրդագրական տեղաբաշխուածութեան քարտէզներ[42]



[42] Ռաֆայէլ Թադեւոսեան, *Իրան-իրանահայ համայնք, քարտէզ*, «Տիգրան Մեծ» հրատ., Երեւան, 2005: Քարտէզներում նշուած երբեմնի հայաբնակ գաւառները, գիւղերն ու աւանները, դիտարկել ենք՝ որպէս փոխակերպման գործընթացների հետեւանքով լիովին հայաթափուած եւ այլեւս պատմական նշանակութիւն ունեցող վայրեր: Փոխակերպումների ընթացքում նոյն վայրերի հայութեան մի զգալի հատուածն էլ համալրել է թեհրանահայ համայնքի շարքերը: Այդպիսով ներկայիս Իրանի հիմնականում մայրաքաղաքային հայօճախը ապրել է մեծ տեղաշարժերի պայմաններում:


ՍԱԼՄԱՍՏ - ՈՒՐՄԻԱ. XIXդ. վերջ -XXդ. սկիզբ
Մասշտաբ՝
1սմ-ում 6կմ
ՈՒՐՄԻԱ
ԼԻՃ
Խոդեր
Սուլավ
Յովադար
Լաշգիրան
Սարամերիկ
Շիդան
Վարդան
Մուխանջիկ
Դերիկ
Այան
Սիրևան
Դալասար
Փայաջուկ
ՍԱԼՄԱՍՏ
(ՔՅՈՅՆԱՀԵՅՐ)
Սավրա
ԴԻԼՄԱՆ
Ախթախանա
Քենգուրլու
Ադիսմաիլ
Դրիշկ
Հաֆթըվան
Ռեվա
Քյալաշան
Սառնա
Մահլամ
Զեյվաջուկ
Մինաս
Խանքախտ
Ղարաբաղ
Կալկաչու
Կասրի
Սիավան
(Սև վանք)
Կասիկ
Կիբլիդաղ լ.
Ահվար
Շորգյոլ
Բազիրչե
Մյուքաթել
Գերգիան
Բաղրաբադ
Մամաքան
Փարի
Թամարավա լ.
Մաստաքան
Ղուշչի
Ջամալավա
Կուրմիկ
Սյուրմենավա
Սիդան
Ջաթար
Գյաուլան
Կանիսպա
Փարաջջե
Սոֆիան(Մամերու)
Սյաքի
Քյահրիզ
Ջաբալքյանդ
Բերդուկ
Թազաքյանդ
Մարնի
Բաբան
Ղարղալար
Շիրաքադ
Սինավա
Շահ-բազիտ լ.
Իքի-Աղաջ
Խանիշան
Շմբուլաբադ
(Շումիլաբադ)
Նախչևան-թեփե
Գումբետ
(Գմբեթ)
Բադելբո
Ղարախաչ
Ալթի-
քիլիսա
Ֆանիսա
Ադա
Շեյխ-
Սարմաստ
Բերդեզա
Նազլու-չայ
Նազլու
Հիսար
Զեյնալու
Հաջիաբադ
Բաժիրգա
Բեխիկ
Մաստաք
Խոշեխան
Վարդանլի
Ուշշան
Գյարդաբադ
Քերևան
(Քարավան)
Բադաշ
Ֆակիբեկլու
Գեղմախանա
Ալյուսան
Սամսալու
Քիլիսաքենդի
Սանգյառ
Միավա
Բեզան
Չարբաշ
Արզհի
Աղջաղալա
Ռզիվա
Քամալաբադ
Ղարաղաջ
Բերդի լ.
Դասրար
Մավանա
Թասմալու
Սուլիկ
Դոստանա
Շիներ-չայ
Սիրքիլիսա
Սարաջուղ
Սարգարուդ
Դերբենդ
Սիր
Դիզաբափա
Սիրդաղ լ.
Թազաքյանդ
(Սղրաշեն)
Սարդարուդ
Բերդեսուր
Բարանդուզ
Բաղառու
Շեյխ-Մեզար
Բաղանդուզ
Բելանեճ(Բալանուշ)
Թումաքար
Քուլքիա
Ավուխ լ.
Ղասըմլու
Իսալու
Քյանիքախտ
Բերուջ
Դոլամա
Մաշքան
Խառան
Փիրալի
1 - Շեյթանավա
2 - Խոսրովա
3 - Գյուլիզան
4 - Յախվերան
5 - Յամրանավա
6 - Քյաքիկ



ՉՀԱՐՄԱՀԱԼ ԳԱՎԱՌ Մասշտաբ 1 սմ-ում 7կմ

Չհարմահալը (Սպահանից 70կմ հր-արմ) եղել է Իրանի հայշատ գավառներից մեկը: Չհարմահալի հայ բնակչությունը Իրան է գաղթեցվել Մեծ Հայքի Բասեն գավառից(Հասանկալա-Կաղզվան):Չ.գ-ի ամենահին հայաբնակ գյուղն է Վաստիգանը: 1869-72թթ. և 1918թ. Չ.գ-ի հայ բնակչությունը ի թիվս մի շարք այլ գավառների մեծապես տուժել է ահավոր սովից: 1917թ. Չ.գ-ի 9 գյուղերում բնակվում էր մոտ 4 300 հայ, 1928թ. 12 գյուղերում 620 տուն - 3 100 հայ: 1946թ. Խորհրդային Հայաստան ներգաղթեց Չհարմահալի 9 հայաբնակ գյուղերից 6 -ը Աղբուլաղ, Սինագան, Մամուռան, Լիվասիան, Ն.Քոնարք և Վ. Քոնարք- 1 144 հոգի: Չ.գ-ի վերջին 3 հայաբնակ գյուղերը (Մամուքա, Հաջիաբադ, Սիրաք - 1949թ. 836 հոգի, 1960թ. մոտ 300 հոգի) վերջնականապես հայաթափվել են 1960-ական թթ - ի վերջին. սրանց բնակչությունը հիմնականում տեղափոխվել է Թեհրան և Աբադան:

THE ARMENIAN COMMUNITY OF IRAN: THE SOCIAL AND THE EDUCATIONAL ISSUES DUE TO TRANSITIONS (1979-2020)

(SUMMARY)

Karen Mkrtchyan
k86mkrtchyan@gmail.com

Diaspora Armenian communities have various socio-educational problems due to the specific characteristics and features of each community. Naturally, these issues are expressed in a different way in the Armenian community of Iran, the oldest Armenian community in the Middle East.

It is obvious that the overthrow of the monarchic system and the transition towards the construction of a Republic could not materialize without transforming the Iranian polity, economy, educational system and governance. It seems one of the results of this transformation was the change in the demographic map of the country, including that of the Armenian community of Iran. The regime change introduced basic changes in the country's educational system, which in turn necessitated changes in the educational mission of the Iranian-Armenian school.

The paper focuses on a number of social and educational problems, which are considered to be a direct result of the emigration of members of the community, which had started in the 1950s. The wave of the outflow of members of the Armenian community directly reflects the ups and downs of the socio-economic conditions of the country. Emigration was accentuated in the early 1980s, then it decreased for a while but started anew in the 2000s.

The author links some of the basic challenges of the Armenian schools in Iran to the outflow of Iranian Armenians, which has caused a demographic transition with diverse educational, economic, social and cultural consequences/repercussions.

The paper elaborates the steps and resolutions adopted by the relevant Armenian educational authorities to address the crisis, like further elevating the quality of education in these schools, making them more competitive vis-à-vis Iranian schools, therefore compromising the allotment of class hours to Armenian studies subjects.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻՒՌՔԻ ՆԵՐՔԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄԸ ԸՍՏ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ (1945ԻՑ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ)

Տիգրան Ղանալանեան
tghanalanyan@ysu.am

Երկրորդ աշխարհամարտից յետոյ հայկական սփիւռքում տեղի ունեցան կարեւոր փոխակերպումներ: Այն տարածաշրջանները, որտեղ կային խոշոր հայկական համայնքներ յայտնուեցին քաղաքական, ընկերատնտեսական, մշակութային եւ այլ էական տեղաշարժերի առջեւ: Հենց այս իրողութիւններն էլ պատճառ դարձան խոշոր գաղթալիքների: Մասնաւորապէս Միջին Արեւելքում, Հիւսիսային Ափրիկէում, Բալկաններում, Ծայրագոյն Արեւելքում[1] քաղաքական փոփոխութիւնները, քաղաքացիական ու միջպետական պատերազմները, յեղափոխութիւններն ու յեղաշրջումները, գաղութատիրական համակարգերի փլուզումը, ընկերատնտեսական շրջադարձային փոփոխութիւնները, կրօնական ծայրայեղականութիւնն ու ազգայնական շարժումները, մշակութային-կրթական կեանքում տեղի ունեցող զարգացումները շատ դէպքերում այնքան անկիւնադարձային էին, որ ստեղծում էին միանգամայն նոր կացութիւն: Հայութեան շօշափելի զանգուածներ այդ պայմաններում նախընտրում էին լքել դեռեւս միքանի տասնամեակ առաջ իրենց ապաստան տուած երկրներն ու հեռանալ այլուր:

Անմիջապէս Երկրորդ աշխարհամարտի աւարտից յետոյ՝ 1946-49ին, մօտ 90,000 հայերի համար գաղթի ուղին Խորհրդային Հայաստանն էր: Սակայն դրա վերջնամասում տեղի ունեցաւ տեղահանուած հայերի փոխադրումն Ամերիկա (գլխաւորապէս ԱՄՆ)[2], որը սկզբունքօրէն հակասում էր հայրենադարձութեան տրամաբանութեանը: Այս նոյն ժամանակ՝ 1940ականների վերջում, արաբ–իսրայէլական

[1] Ինդոնեզիա, Չինաստան, Մյանմա, Ճապոնիա, Ֆիլիպիններ, Մալայզիա:

[2] Տեղահանուած հայերը (displaced person) մաս էին կազմում խորհրդային տեղահանուած բնակչութեանը: Նրանց մեծամասնութիւնը հայրենադարձուեց, սակայն միքանի հազարը հրաժարուեց վերադառնալ Խորհրդային Միութիւն: Խորհրդային տեղահանուած բնակչութեան վերադարձի մասին տե՛ս В. Н. Земсков, *Возвращение советских перемещенных лиц в СССР (1944-1952)*, Москва, Блок-Принт, 2023, իսկ տեղահանուած հայերի, ինչպես նաեւ ԱՆՉԱի (ANCHA, American National Committee to Aid Homeless Armenians) մասին տե՛ս՝ H. Zadoian, *Our Brothers' Keepers: The American National Committee to Aid homeless Armenians (ANCHA)*, New York, SIS Publications, 2012. նաեւ՝ S. Ղանալանեան, «Տեղահանուած հայերի փոխադրումը Ամերիկա երկրորդ աշխարհամարտից յետոյ», *Էջմիածին*, ԺԲ:2015, էջ 69-89:

հակամարտութեան պատճառով, Պաղեստինի հայերի զգալի մասը փոխադրուեց Յորդանան: Գաղութատիրական–մանդատային համակարգերի փլուզումը մղեց Միջին Արեւելքի ու Ծայրագոյն Արեւելքի երկրներում ապրող հայերին լքել դրանք ու հեռանալ ամերիկեան, եւրոպական երկրներ, նաեւ Աւստրալիա: Մեծ թուով հայեր արտագաղթեցին նաեւ Բալկաններից:

Սոյն յօդուածով առաջարկւում է հայկական սփիւռքի ներքին տեղաշարժերի պարբերացումը կատարել հիմքում դնելով ժողովրդագրական ու գաղթականական ոլորտներում տեղի ունեցած զարգացումները: Դրանք ուղղակիօրէն ազդում էին հայկական սփիւռքի քաղաքական, հասարակական, տնտեսական, ինքնութենական, հաստատութենական, համարկման, սեռատարիքային փոխակերպումների վրայ:

Որպէս առաջին նախափուլ առանձնացւում է 1915-1945 շրջանը: Այս ժամանակաընթացքում նախկինում գոյութիւն ունեցող գաղթաշխարհը փոխակերւում է հայկական սփիւռքի: Չնայած Սփիւռք եզրը, որպէս diasporaի համարժէք կարելի է կիրառել նաեւ նախաեղեռնեան շրջանի վերաբերեալ, սակայն հայկական պատմագիտութեան մէջ առաւել ընդունուած է այն օգտագործել Ցեղասպանութեանը յաջորդող շրջանի վերաբերեալ: Յամենայնդէպս, Հայոց Ցեղասպանութիւնը սկզբունքային նշանակութիւն ունեցաւ հայկական սփիւռքի փոխակերպման վրայ, հետեւաբար անկախ դրան նախորդող շրջանը սփիւռք որակելուց, այն հանդիսանում է պատմափուլերի միջեւ սահմանաբաժան: Ցեղասպանութեանը յաջորդող երկու–երեք տասնամեակներին ընթանում էր Սփիւռքի կազմաւորումը: Այս շրջանում տեղի ունեցած ներքին տեղաշարժերը (Սուրիայից ու Լիբանանից, Յունաստանից արտագաղթ Լատինական Ամերիկա, Ֆրանսա եւն.) դժուար է անջատել հենց բուն Սփիւռքի ձեւաւորման գործընթացից: Քանզի յաճախ այդ կրկնագաղթերը տեղի էին ունենում ելքի երկրներում շատ կարճ ժամանակ ապրելու պայմաններում: Այստեղ էական է նաեւ ինքնութեան հանգամանքը: Դիցուք 1921-22ին Սուրիայում հաստատուած ու 1925-26ին Արգենտինա տեղափոխուած հային դժուար է որակել սուրիահայ: Հենց դրա համար այս շրջանն առանձնացնում ենք որպէս նախափուլ:

Խօսելով յաջորդ փուլերի մասին՝ հարկ է նկատել, որ պարբերացման հիմքում անհնար է դնել միայն մէկ-երկու գործօն: Գաղթերը տեղի են ունեցել տարբեր պատճառներով. երբեմն վճռական է եղել քաղաքական, երբեմն անվտանգային-ապահովական, իսկ երբեմն քաղաքակրթական-մշակութային, ինչպէս նաեւ այլ գործօններ: Հետեւաբար, Սփիւռքի ներքին տեղաշարժերի 1945ից մինչեւ մեր օրերը ընկած ժամանակահատուածի փուլաբաժանումն առաջարկում ենք իրականացնել հիմքում դնելով մի շարք գործօններ՝ անվտանգային-ապահովական, քաղաքական,

քաղաքակրթական, ընկերային, տնտեսական, մշակութային, կրթական, հարազատների վերամիաւորման եւն.: Նաեւ հարկ է առանձնացնել գաղթի ծաւալների հանգամանքը. ո՞ր շրջանում են եղել մեծածաւալ արտագաղթեր այս կամ այն տարածաշրջանից, ե՞րբ են Սփիւռքի ներքին տեղաշարժերը եղել աւելի մեծաթիւ քան արտագաղթը հայրենիքից:

Ասուածի հիման վրայ առաջարկւում է 1945ից մինչեւ մեր օրերը ընկած ժամանակահատուածը բաժանել երեք փուլերի.

ա) 1945-1975,

բ) 1975-1988,

գ) 1988ից մինչեւ մեր օրերը:

Ա. ՓՈԽԼ, 1945-1975

Առաջին փուլում մեծածաւալ է արտագաղթն Արեւելեան Եւրոպայի երկրներից: Յունաստանում քաղաքացիական պատերազմի ու ընկերատնտեսական անբարենպաստ պայմանների հետեւանքով մեծ թուով մարդիկ գաղթեցին: Նրանց թւում քիչ չէին նաեւ հայերը: Կոմունիստական վարչակարգերի հաստատումը Բուլղարիայում եւ Ռումինիայում եւս պատճառ դարձաւ հայերի գաղթի համար: Բացի ընկերաքաղաքական ընդհանուր ճնշումներից՝ նոր իշխանութիւններն էապէս սահմանափակեցին նաեւ հայկական համայնքային կառոյցների գործունէութիւնը: Եթէ Յունաստանի պարագայում 1940ականների վերջ-1950ականների սկզբում հիմնական ուղղութիւնը Արգենտինան էր, ապա շուտով գերակշռող դարձաւ Կանադա արտագաղթը: Ռումինահայերի ու բուլղարահայերի դէպքում բացարձակ մեծամասնութիւնը նախընտրում էր հաստատուել ԱՄՆում: Սա նաեւ հետաքրքիր ցուցիչ է՝ եթէ հաշուի առնենք սառը պատերազմի իրողութիւնները:

Այս փուլում կայ ներհոսք դէպի Հարաւային Ամերիկա, որը յետոյ գրեթէ դադարում է: Ընդհանրապէս Սփիւռքի ներքին տեղաշարժերի համապատկերում լատինամերիկեան տարածաշրջանը քիչ թէ շատ եռանդուն դերակատարում ունի հենց առաջին փուլում: Այս ժամանակաշրջանում են արտագաղթում Կուբայի ու Մեքսիկայի հայերը (դէպի ԱՄՆ), ինչպէս նաեւ կայ ներհոսք դէպի Արգենտինա, Բրազիլիա: Հենց Բալկաններից ու Միջին Արեւելքի երկրներից եկած հայերի ջանքերով համայնքներ են կազմաւորւում Վենեսուելայում եւ Չիլիում: Դրանից յետոյ հարաւամերիկեան երկրները համալրուել են շատ փոքր թուով հայերով (երրորդ փուլում՝ միքանի հազար հայաստանցիներ են տեղափոխուել Արգենտինա), ինչը բացասաբար է անդրադարձել տեղի համայնքների կենսագործունէութեան վրայ, քանի որ ի տարբերութիւն հիւսիսամերիկեան ու եւրոպական համայնքների շատ աւելի քիչ թիւ են կազմել համայնքային գործիչները մերձարեւելեան երկրներից: Միաժամանակ սա է նաեւ հայախօսութեան բաւական անմխիթար

վիճակում լինելու պատճառներից մէկը: Իսկ առաջարկուող պարբերացման երկրորդ ու նաեւ երրորդ փուլերում նկատւում է ոչ մեծաթիւ արտագաղթ այն երկրներից (Արգենտինայից, Վենեսուելայից դէպի ԱՄՆ), որտեղ հայերը տեղափոխւում էին առաջին փուլում:

Այս փուլում էական է ԱՆՉԱ կազմակերպութեան դերը՝ նախ տեղահանուած հայերի, ապա Պաղեստինից, Բալկաններից ու Միջին Արեւելքից արտագաղթի խնդրում: Հենց այս փուլն է աչքի ընկնում նաեւ արտագաղթի ընդգծուած քաղաքականացմամբ՝ հաշուի առնելով թէ՛ սառը պատերազմի իրողութիւնները, թէ՛ ներհայկական կուսակցական պայքարը: Մասնաւորապէս ՀՅԴն, որը համագործակցում էր սառը պատերազմի արեւմտեան բեւեռի հետ՝ մասնակցում, խրախուսում կամ առնուազն չէր դատապարտում ներքին տեղաշարժերը: Միւս քաղաքական դերակատարները հանդէս էին գալիս արտագաղթերի դէմ[3]:

Ընդ որում քաղաքական կուսակցութիւնները, որոնք դէմ էին արտագաղթին առաջարկում էին այլընտրանք՝ հայրենադարձութիւն: Խորհրդային տարիների հայրենադարձութեան պատմութեան ուսումնասիրութիւնը եւս գալիս է հաստատելու առաջարկուող փուլաբաժանումը: Մասնաւորապէս շօշափելի ծաւալների հայրենադարձութիւն տեղի է ունեցել առաջին փուլում (1946-49 եւ 1962ից յետոյ), այնինչ 1975ից յետոյ դրա ծաւալները էապէս նուազում են: Հենց այդ թուականից սկսած ներգաղթողների տարեկան թիւը չի հասել հազարի:

Այս փուլում քաղաքական պայքարը սրւում էր նաեւ հենց առկայ երկընտրանքի[4] հետեւանքով՝ հայրենադարձուե՞լ, թէ՞ արտագաղթել:

Բ. ՓՈԽԼ, 1975-1988

Երկրորդ փուլում Սփիւռքի ներքին տեղաշարժերը ստանում են չափազանց մեծ ծաւալներ: Ընդ որում դրան զուգահեռ գրեթէ դադարում է հայրենադարձութիւնը: Միաժամանակ՝ Խորհրդային Հայաստանից արտագաղթը գերազանցում է ներգաղթողների թուին: Այս ընթացքում աննախադէպ (միքանի տարում արտագաղթեցին տասնեակ հազարաւոր հայեր) էր արտագաղթը երկու կարեւորագոյն հայօճախներից՝ Լիբանանից ու Իրանից: Հենց 1975ին սկսուեց Լիբանանի քաղաքացիական պատերազմը, որը կարեւորութիւն ունեցաւ ոչ միայն լիբանահայութեան, այլեւ ողջ Սփիւռքի համար: Աւելի քան 200 հազարանոց ծաղկուն

[3] Տե՛ս օրինակ՝ Տ. Ղանալանեան, *Սփիւռքի ներքին տեղաշարժերը*, Երեւան, «Նորավանք» ԳԿՀ, 2016, էջ 57, 91-92, 98-99, 129. նաեւ նոյնի՝ «Հայերի արտագաղթը Եգիպտոսից 1950-70ականներին եւ հետեւանքները ներսում ու դրսում», *Եգիպտոսի, Սուրանի եւ Եթովպիոյ հայերը/1 – Գիտաժողովի նիւթեր (12-13 ապրիլ եւ 29-30 մայիս 2018)* խմբ.՝ Ա. Տագէսեան, Պէյրութ, 2022, էջ 379-81, 384:

[4] Այն, սակայն 1949-62ին գրեթէ բացակայում էր: Չնայած դրան, մօտ 4000 հայեր անհատական դիմումներով հայրենադարձուել են:

հայօճախը սկսեց արագ դատարկուել: Միաժամանակ հարկ է ընդգծել, որ առաջին փուլում Լիբանանը Միջին Արեւելքի այն եզակի երկներից էր, որտեղ աւելի շատ հայեր ներգաղթում էին քան արտագաղթում: Բացի թուական անկումից՝ Բէյրութը մեծապէս կորցրեց իր համահայկական նշանակութիւնը: Չնայած այսօր էլ այն Սփիւռքի ամէնակարեւոր կենտրոններից է, սակայն հայօճախի ունեցած կորուստներն անդառնալի եղան[5]: Իրանից եւս հայերը, արտագաղթում էին մինչ 1979ի Իսլամական յեղափոխութիւնը, սակայն դրանից յետոյ արտագաղթը ստացաւ չափազանց մեծ ընդգրկում: Ընդ որում արտագաղթի ծաւալները էապէս մեծանում են 1970ականների երկրորդ կէսում՝ դեռեւս մինչեւ 1979: Այս փաստը եւս խօսում է որպէս փուլաբաժանման թուական 1975ը ընտրելու օգտին:

Կարեւոր է նկատել, որ այս փուլում փոփոխութիւններ են արձանագրւում միքանի երկրների պարագայում: Եթէ առաջին փուլում դրանց մի մասից կար մեծածաւալ արտագաղթ, ապա երկրորդում նկատւում է հակառակ գործընթացը՝ ներգաղթ: Այսպիսի երկրների թւում են Յունաստանը, Կիպրոսը, Սուրիան: Մի շարք երկրների պարագայում նախորդ փուլում ծաւալուած արտագաղթը գրեթէ դադարում է (օրինակ Եգիպտոս, Ռումինիա, Բուլղարիա, Ծայրագոյն Արեւելք):

Էական փոփոխութիւն է տեղի ունենում հայկական քաղաքական կուսակցութիւնների դիրքորոշումներում: Եթէ առաջին փուլում ՀՅԴն առնուազն դէմ չէր արտագաղթերին, ապա այսժամ ընդգծուած հակադիր դիրքորոշում է որդեգրում: Արտագաղթերը (յատկապէս Միջին Արեւելքից) կուսակցութիւնների ու այլ կառոյցների համար ակնյայտ էին դարձնում, որ իրենց դիրքերը թուլանում են, քանզի ելքի երկրներում նրանց ազդեցութիւնը շատ աւելի մեծ էր, քան ամերիկեան ու եւրոպական պետութիւններում: Վերջիններում շատ հայեր ընդհանրապէս որեւէ առնչութիւն չէին ունենում համայնքային կառոյցների հետ:

Այս փուլում աւելի ընդգծուած է դառնում միջինարեւելեան երկրներից գաղթածների խոշոր դերակատարումը նոր համայնքների ազգային կառոյցներում: Նոյնիսկ կարելի է ասել, որ եւրոպական ու ամերիկեան երկրներում նրանք աստիճանաբար իրենց ձեռքն են վերցնում համայնքային կեանքի ղեկավարումը՝ զբաղեցնելով կարեւոր պաշտօններ ոչ միայն ղեկավար օղակներում, այլեւ փաստացի գործարկելով գործող հայկական հաստատութիւնների մեծամասնութիւնը:

Այս պատմափուլում արդէն յստակ կարելի է խօսել տեղական հայութեան խմբերից բացի ենթաէթնիկ տարբեր խմբերի գոյութեան մասին ԱՄՆում (սուրիահայեր, լիբանահայեր, իրանահայեր, պոլսահայեր, ռումինահայեր, Խորհրդային Հայաստանից արտագաղթածներ եւն.),

[5] Մանրամասն տե՛ս՝ Ղանալանեան, *Սփիւռքի ներքին տեղաշարժերը*, էջ 86-117:

Ֆրանսայում (պոլսահայեր, լիբանահայեր, սուրիահայեր), Կանադայում (եգիպտահայեր, յունահայեր, պոլսահայեր, լիբանահայեր, իրանահայեր), Գերմանիայում (պոլսահայեր, լիբանահայեր, իրանահայեր), Մեծն Բրիտանիայում (կիպրահայեր, հնդկահայեր, իրանահայեր, իրաքահայեր, լիբանահայեր) եւն.:

Գ. ՓՈԽԼ, 1988ԻՑ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Գ. Երրորդ փուլում արտագաղթը Միջին Արեւելքից շարունակւում է, սակայն հիմնական գաղթը ոչ թէ Սփիւռքի ներքին տեղաշարժերն են, այլ զանգուածային արտագաղթը Հայաստանից: Միաժամանակ այս փուլում կարեւորագոյն նշանակութիւն են ստանում նաեւ տեղաշարժերը խորհրդային/յետխորհրդային հանրապետութիւնների տարածքում: Հենց այս ընթացքում տեղի է ունենում ադրբեջանահայերի բռնագաղթը: Մեծածաւալ էր արտագաղթը Վրաստանից: Միաժամանակ անկասելիօրէն մեծանում է հայերի թիւը Ռուսաստանում, նաեւ Ուկրայնայում:

Հենց այս փուլում Հայաստանի հարեւան երեք երկրներից հայերի շօշափելի մասը հեռացաւ այլ պետութիւններ: Եթէ Ադրբեջանի պարագայում այն բացատրւում էր արցախեան շարժմամբ ու ապա շարունակուող հակամարտութեամբ, ապա Վրաստանի դէպքում գերազանցապէս պայմանաւորուած էր այդ երկրի ընդհանուր ընկերատնտեսական կացութեամբ ու բոլոր ազգութիւնների գաղթով: Այս երկու հարաւկովկասեան պետութիւններից արտագաղթող հայերի մեծագոյն մասը փոխադրուեց Ռուսաստանի Դաշնութիւն: Ադրբեջանահայերի մի մասը անցաւ Ուկրայնա, ԱՄՆ: Հայաստանի միւս հարեւան Իրանից հայերը զանգուածայնօրէն սկսել էին արտագաղթել նախորդ՝ երկրորդ փուլում, սակայն երրորդ փուլում գործընթացը շարունակուեց, եւ եթէ մօտաւոր թուերով կարող ենք ասել, որ երկրորդ փուլում արտագաղթեց իրանահայերի շուրջ կէսը, ապա երրորդ փուլում էլ արտագաղթեց մնացած հայերի մօտ կէսը եւ այսօր համայնքի թիւը չի գերազանցում 50 հազարը, այնինչ 1970ականներին այն 200,000ից աւելի էր: Այլ է պարագան Թուրքիայի Հանրապետութեան: Չնայած բոլոր փուլերում այստեղից կար շօշափելի արտագաղթ, ինչպէս նաեւ ներքին գաւառներից գաղթ դէպի Ստամբուլ, ապա երրորդ փուլում աւելացաւ մէկ այլ միտում: Հենց Հայաստանի անկախացման շրջանում տասնեակ հազարաւոր հայեր փոխադրուեցին Թուրքիա (գլխաւորապէս Ստամբուլ):

Այս փուլում հայաստանցիները դարձան կարեւորագոյն ենթաէթնիկ խմբերից մէկը նաեւ ամերիկեան ու եւրոպական երկրներում: Ընդ որում նրանք դժուարութեամբ են համարկւում տեղական հայ համայնքներին: Չունենալով մերձարեւելեան ու բալկանեան երկրներից գաղթածների պէս համայնքային գործունէութեան փորձառութիւն՝ նրանց մասնակցութիւնը նոր երկրների ազգային կեանքին շատ աւելի սահմանափակ է:

Այնուամենայնիւ աստիճանաբար որոշ երկրներում նկատւում են արդիւնաւէտ համագործակցութեան փորձեր:

Երրորդ փուլում արտագաղթին ու Սփիւռքի ներքին տեղաշարժերին զուգահեռ գոյութիւն ունի հայրենադարձութիւն, սակայն դրա ծաւալները անհամեմատելի են առաջին երկու գործընթացներում ներգրաւուած մարդկանց թուի հետ: Ադրբեջանահայերի ներհոսքին ԻԱ. դարում եկան յաջորդելու իրաքահայերը, սուրիահայերը, ինչպէս նաեւ լիբանահայերն ու իրանահայերը: Ներգաղթողների թւում են նաեւ ռուսահայեր, ամերիկահայեր (մի մասը անկախութեան տարիներին արտագաղթածներ, բայց ոչ միայն) եւն.: (Փակագծի մէջ նշենք նաեւ, թէ 2023ին Արցախի հայերի բռնագաղթը, սակայն չի կարելի դիտարկել հայրենադարձության համատեքստում, որը վերաբերելի է նաև 1980ականների վերջ-1990ականների սկզբում Հիւսիսային Արցախից ՀՀ տեղափոխուած հայերին:)

Երրորդ փուլի մասին խօսելիս նաեւ հարկ է նկատել, որ Սփիւռքի ներքին տեղաշարժերը այն վերածել են անհամամետ աւելի տարրասեռ երեւոյթի քան էր երկրորդ, առաւել եւս՝ առաջին փուլերում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով հայկական սփիւռքի ներքին տեղաշարժերը 1945ից մինչեւ մեր օրերը առաջարկում ենք բաժանել երեք փուլերի՝ 1.- 1945-1975, 2.- 1975-1988, 3.- 1988ից մինչեւ մեր օրերը: Դրանցից առաջինն աչքի է ընկնում խիստ քաղաքականացուածությամբ ու ներքին տեղաշարժերի վերաբերեալ հայկական կուսակցութիւնների հակադիր դիրքորոշումներով: Երկրորդ փուլի համար բնութագրական է հայկական բոլոր դերակատարների կողմից գործընթացի դատապարտումը, սակայն, այս միասնական քննադատութեան հետ միասին հենց այս պատմափուլում են գրանցւում յատկապէս Միջին Արեւելքի երկրներից հայերի արտագաղթի աննախադէպ ծաւալներ, երբ շուրջ մէկուկէս տասնամեակի ընթացքում արտագաղթում են մօտ 100 հազարական հայեր Լիբանանից ու Իրանից: Արդիւնքում փոխւում է ընդհանրապէս Միջին Արեւելքի դերը հայկական սփիւռքում: Երրորդ փուլում, չնայած Սփիւռքի ներքին տեղաշարժերի շարունակմանը (յատկապես Միջին Արեւելքի երկրներից) անհամեմատ աւելի մեծածաւալ գաղթային գործընթաց է դառնում արտագաղթը Հայաստանից: Միաժամանակ խոշոր գաղթային տեղաշարժեր են տեղի ունենում յետխորհրդային հայկական սփիւռքի տարածքում:

Հայկական սփիւռքի ներքին տեղաշարժերը յանգեցնում են դրա սկզբունքային փոխակերպմանը: Այն, սակայն պայմանաւորուած չէր միայն գաղթի գործօնով, այլ դրա կողքին կային քաղաքական ու քաղաքակրթական, ինքնութենական, սերնդափոխութեան,

համաշխարհայնացման, հայրենքի հետ յարաբերութիւնների ու բազմաթիւ այլ էական հանգամանքներ: Սփիւռքի ներքին տեղաշարժերի պարբերացումը հնարաւորութիւն է տալիս առաւել համակողմանիօրէն հասկանալ հայկական սփիւռքի փոխակերպման անընդհատական գործընթացը, ինչպես նաեւ աւելի հիմնաւոր կերպով ուսումնասիրել դրա առանձին պատմափուլերը թէ՛ ընդհանրական առումով, թէ՛ ըստ առանձին համայնքների:

ARMENIAN DIASPORA TRANSFORMATION WITH REFERENCE TO ITS DEMOGRAPHIC SHIFTS BETWEEN 1945 AND 2020

(SUMMARY)

Tigran Ghanalanyan
tghanalanyan@ysu.am

The period from 1945 to the present day is to be divided into three phases, with the initial phase (1915-1945) being distinguished as a preliminary period. The three phases are as follows: a) 1945-1975, b) 1975-1988, and c) 1988 to the present.

The initial phase is characterized by strong politicization and opposing positions of Armenian political parties regarding internal movements. The second phase is characterized by the condemnation of the process by all Armenian actors; however, along with this unified criticism, it is during this historical period that unprecedented volumes of Armenian emigration are recorded, particularly from Middle Eastern countries, when approximately 100,000 Armenians emigrated from each of Lebanon and Iran over about a decade and a half. Consequently, the role of the Middle East in the Armenian diaspora undergoes a complete transformation. In the third phase, despite the continuation of internal movements within the diaspora, particularly from Middle Eastern countries, emigration from Armenia becomes a much larger-scale migration process. Concurrently, major migratory movements take place within the post-Soviet Armenian diaspora.

ՀԱՅ ԱԽԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ (Դիտարկումներ)

Վեր. Փոլ Հայտոսթեան
Paul.Haidostian@haigazian.edu.lb

Հայ Աւետարանական Եկեղեցին, 1 Յուլիս 1846ին պաշտօնապէս հիմնուած Պոլսոյ մէջ որպէս Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցի, ծանօթ դարձած է նաեւ - նամանաւանդ իր առաջին դարուն ընթացքին - որպէս «Հայ Աւետարանական Շարժում»:

"Շարժում" նշանակած է գործել որպէս մնայուն բարեկարգութեան կոչուած մէկ մասնիկը Քրիստոսի տիեզերական մարմնին մէջ, եւ ինքնագիտակից մէկ անկախ բաժինը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ենթահողին մէջ, զոր Հայ Աւետարանական Եկեղեցին, իր առաջին օրերէն իսկ կոչած է Մայր Եկեղեցի: "Հայաստանեայց"ի օգտագործումը նպատակադրած է պահպանելու ազգային հարազատութիւնը, "Աւետարանական"ի օգտագործումը ապահոված է աստուածաբանական հիմքը աստուածաշունչին վրայ որպէս եկեղեցւոյ հաւատքին միակ հեղենակութիւնը, իսկ "Եկեղեցի" ըլլալու փաստը ապահոված է կրօնական եւ եկեղեցաբանական հանգամանք՝ ի դիմաց այլ համաշխարհային եկեղեցիներու: Միւս կողմէ, աւետարանականներու սրտին հարազատ "Շարժում" եզրոյթը նշանակած է քարացած աւանդական հաստատութիւն դառնալու վտանգէն հեռացում՝ դէպի մշտանորոգ հոգեւոր կալուածք, գէթ՝ իբրեւ իտէալ: Եղած են պահեր, երբ գրեթէ երկու դար տարիք ունեցող այդ "շարժում"ը թերագնահատուած է պարզապէս շարժումներու ժամանակաւոր ըլլալու իրականութեամբ, միաժամանակ, սակայն, ան արդարօրէն իր ուրոյն, ազդու եւ մնայուն տեղը գրաւած է եկեղեցական ընդհանուր ցանցին մէջ:

ՀԱՅ ԱԽԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԵԱՆՔԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՈՒՆ ԵՒ ՏԵՂԱՇԱՐԺԵՐՈՒՆ ՎԵՑ ՀԱՆԳՐՈՒԱՆՆԵՐԸ

Հայ Աւետարանական Եկեղեցւոյ պատմական ուղին կարելի է բաժնել վեց հիմնական հանգրուաններու՝ նկատի ունենալով անոր տեղաշարժերու եւ փոխակերպումներու լայնածաւալ բնոյթը: Այս հանգրուանները կը սահմանեն ոչ միայն եկեղեցւոյ ներքին կազմաւորման հանգրուանները, այլեւ անոր տարածումն ու վերակազմակերպումը՝ ի տես ազգային եւ համաշխարհային մեծ իրադարձութիւններու:

Ա. Սկզբնաւորութիւններ եւ բարեկարգութեան ջանքեր (1821-1846)

Այս շրջանը կը բնորոշուի Հայ Առաքելական Եկեղեցւոյ ներքին բարեկարգութեան ձգտումներով եւ հոգեւոր զարթօնքով: Հիմնական զարգացումները ընդգրկեցին Աստուածաշունչի եւ հոգեւոր գրականութեան թարգմանութիւնները, բարեկարգութեան գաղափարներու տարածումը պոլսահայ միջավայրի մէջ, եւ արեւմտեան միսիոնարներու որոշիչ ազդեցութիւնը:

Այս ժամանակաշրջանի կարեւոր թուականներէն են.-

- **1821**՝ Վանականութենէ դէպի աւետարանական շարժում Երուսաղէմի մէջ,
- **1829**՝ Բանադրանք եւ Պոլսոյ Պատրիարքութեան արձագանգ,
- **1834**՝ «Բարեպաշտից Միութեան» հիմնադրութիւն,
- **1846**՝ Յստակ եկեղեցական ձեւաւորում եւ կազմակերպում՝ «Առաջին Քառասուններ»ու հիմնադիր հայ աւետարանականներու միջոցով:

Բ. Հիմնադրումէն տարածում եւ կազմակերպում (1846-1909)

1846ին տեղի ունեցած պաշտօնական հիմնադրութենէն ետք, Հայ Աւետարանական Եկեղեցին ապրեցաւ յարաբերաբար արագ թուային աճ, դիմագրաւեց համայնքային ճնշումներ եւ ունեցաւ պաշտօնական ճանաչում: 1850ի Օսմանեան հրովարտակը (*ֆիրման*) Եկեղեցին որպէս *միլլէթ* ճանչցաւ, պատրաստելով դաշտ՝ մանաւանդ կրթական, գրական, բարեսիրական ու առողջապահական գործունէութեան: Այս շրջանը նաեւ Եկեղեցւոյ միութիւններու, այսինքն շրջանային եկեղեցական հեղինակութիւններու ձեւաւորման շրջանն է:

- Կարեւոր ուղենիշեր կրնան նկատուիլ.- ա) Զմիւռնիոյ *Շտեմարան պիտանի գիտելեաց* (1839) պարբերականը եւ անոր նմանները, բ) առաջին եկեղեցիներու հայազգի աւետարանական հովիւներու ծառայութիւնը (1846), արագօրէն անկախացումը՝ օտար միսիոնարներու առաջնորդութենէն, գ) առաջին քարաշէն եկեղեցական շէնքի կառուցումը (Այնթապ, 1855): Հայ աւետարանական կրթական ցանցը - ուղղակի նեցուկովը արեւմտեան միսիոնարութեանց - կարեւորագոյն առաքելութիւնը կը սեպուէր: Արդէն իսկ 1850ին Այնթապի մէջ կը հիմնուէր փրոֆ. Ալեքսան Պէզճեանի վարժարանը, եւ դարձեալ Այնթապի մէջ 1860ին՝ աղջկանց առաջին երկրորդական վարժարանը
- Տարածում՝ Պոլիսէն մինչեւ Էրզրում, Շուշի, Քեսապ, Հալէպ, Քիլիս, Մարաշ, Ատանա, Խարբերդ, Կեսարիա, Մարզուան եւ զանազան այլ շրջաններ: 1846-56 տասնամեակին արդէն հիմնուած էին աւելի քան 20 հայ աւետարանական եկեղեցիներ: 1873ին եկեղեցիներուն թիւը հասած էր 74ի: Այդ նոյն օրերուն եկեղեցիներուն մէջ կը ծառայէին 47 հոգեւոր հովիւներ եւ 56 քարոզիչներ: Կիրակի օրուան պաշտամունքներու ներկայ գտնուող հայ հաւատացեալներու թիւը կը հասնէր 14,000ի:

- Եկեղեցական Միութիւններու հաստատում, ինչպէս՝ Բիւթանական Միութիւն (1864), Կիլիկիոյ Միութիւն (1864), Արեւելեան Միութիւն (1866), Կեդրոնական Շրջանի Միութիւն (1868):

Վերոյիշեալ Միութիւն կոչուած տարածաշրջանները միաւորող եկեղեցական կառոյցները կը հետեւէին ժողովական եկեղեցական ընբռնումին, ուր նուիրապետական չէր հեղինակութիւնը, այլ՝ տեղական եկեղեցական ներկայացուցիչներու եւ հոգեւոր հովիւներու հաւաքական կամքի դրսեւորումը: Տեղական եկեղեցւոյ կեանքն ու կամքը կը սեպուէին հիմնականը, իսկ տեղական եկեղեցիներու միաւորումը կը կոչուէր «Միութիւն»: Միւս կողմէ, մինչ իւրաքանչիւր Միութիւն ունէր իր անկախութիւնը մնացեալ եւ նոյնանման Միութիւններէն, սակայն բոլորը կը գործէին որպէս մէկ եկեղեցական հաղորդակցութիւն եւ կը ճանչնային հայ աւետարանական մէկ ինքնութիւն: Իւրաքանչիւր Միութեան տարածաշրջանին մէջ կը գործէին մեծաթիւ դպրոցներ, Պոլիսէն մինչեւ Վան, Պիթլիս, Ատապազար, Հաճըն, Ուրֆա, Մարտին, Պարտիզակ, Աֆիոն Գարահիսար եւ ամէն տեղ՝ ուր կը գործէին կամ կը հաստատուէին հայ աւետարանական եկեղեցիներ կամ հովիւներ:

Գ. Աղէտներու եւ քայքայման ժամանակաշրջան (1909-1922)

1909ի Ատանայի կոտորածէն մինչեւ 1922ի Զմիւռնիոյ աղէտը, Հայ Աւետարանական Եկեղեցին դիմագրաւեց կործանարար կորուստներ: Ցեղասպանութեան ընթացքին անհետացան եկեղեցական բազմաթիւ հաստատութիւններ, զոհուեցան հովիւներ: 1915ին կը գործէին 137 կազմակերպեալ եկեղեցիներ, իսկ աւետարանականներու ընդհանուր թիւը 51,000 անձ կը հաշուէր:

- **1909ին,** Ատանայի կոտորածի օրերուն, Կիլիկիոյ Հայ Աւետարանական Միութեան հոգեւոր եւ աշխարհական ղեկավարութեան գրեթէ կէսը նահատակուեցաւ:
- **1915ին** ծայր առած Ցեղասպանութենէն մինչեւ 1922ի Զմիւռնիոյ աղէտ, Եղեռնին զոհ դարձաւ հայ աւետարանականութեան երկու երրորդը:
- **1914-1927ին**՝ Այրարատեան Հայ Աւետարանական Եկեղեցական Միութիւնը ունեցաւ ծանր կորուստներ. գործող 15 եկեղեցիներ, որոնք Խորհրդային Հայաստանի կողմէ ճանչցուած ըլլալով հանդերձ, մեծ մասամբ ստիպուեցան դադրիլ իրենց առաքելութենէն, իսկ կարգ մը եկեղեցականներ աքսորուեցան:
- **1918ին**՝ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան (ԱՀԱԸ) հիմնադրութիւն՝ Միացեալ Նահանգներու մէջ, որպէս պատասխան՝ հայ ժողովուրդի կոտորածներուն, տեղահանութեան, եւ սատար՝ վերակառուցման, հոն ուր հայեր պիտի հաստատուէին:

- **1922**՝ Պոլսոյ մէջ վերակազմաւորման փորձեր, երբ զանազան հայ աւետարանական հովիւներ ջանացին վերականգնել եկեղեցական կառոյցը, սակայն յաջողութիւնը եղաւ սահմանափակ:



Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու համաժողովին մասնակիցները, Քեսապ, 1929

Դ. Վերածնունդ եւ սփիւռքեան վերակազմաւորում (1922–1946)

Ցեղասպանութենէն ետք - նամանաւանդ Մերձաւոր Արեւելքի, Յունաստանի, Ֆրանսայի եւ Միացեալ Նահանգներու մէջ - տեղի ունեցաւ Հայ Աւետարանական համայնքներու վերակազմաւորում: Եկեղեցիներու հիմնադրութեան զուգահեռ, հիմնուեցան դպրոցներ, յաճախ՝ նոյն կարեւորութեամբ ու խնամքով: Յատկապէս որբախնամ ու դաստիարակչական գործունէութիւնները լիցքաւորող դեր խաղացին համայնքային վերակենդանացման գործընթացին:

- Ոչնչացածներու փոխարէն նորաստեղծ Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութիւններ՝
  - Ֆրանսայի Միութիւն (1923)
  - Մերձաւոր Արեւելքի Միութիւն (1924)
  - Հիւսիսային Ամերիկայի Միութիւն (1901 եւ յետեղեռնեան աշխուժացում, իսկ 1971ին՝ միաձուլում Ամերիկայի երկու ափերուն վրայ գործող եկեղեցիներու)
- Զօրեղ մամուլ, հրատարակութիւններ, կրթական ցանց, եւ աշխուժ ընկերային ծառայութիւններ:

Ե. Սփիւռքեան եւ համաշխարհային հաստատում (1946-1991)

Սփիւռքեան հայ աւետարանական կառոյցները այս ժամանակաշրջանին բարգաւաճեցան եւ ունեցան բարձր աստիճանի նիւթական եւ բարոյական անկախութիւն: Եկեղեցին դարձաւ գործօն մասնակից միջեկեղեցական շարժումներու: Կարեւոր թուականներ եւ իրադարձութիւններ եղան.-

- **1948ը**՝ Գործօն մասնակցութիւն Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի հիմնադրութեան,
- **1955ը**՝ Հայկազեան Համալսարանի հիմնադրութիւն (Պէյրութ),
- **1978ը**՝ Կեդրոնական դերակատարութիւն՝ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի հաստատման մէջ,
- **1978ը**՝ Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի հիմնադրութիւն,
- Խորհրդային Հայաստան՝ սահմանափակ ներկայութիւն՝ Երեւանի, Գիւմրիի, Ստեփանաւանի եւ Վանաձորի մէջ,
- Միջազգային կրօնական ցանցի եւ համաշխարհային եկեղեցական եւ բարեսիրական կազմակերպութիւններու հետ յարաբերութիւններու ամրապնդում, իսկ օտար միսիոնարներու բացակայութեան լոյսին տակ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան բարերար եւ գործօն դերի զարգացում:

Զ. Հայաստանամէտ նուիրուածութեան եւ ինքնութիւններու ներքին տարբերութիւններ (1991-2020)

Հայաստանի Հանրապետութեան անկախացումէն ետք, նոյիսկ 1988ի երկրաշարժի օրերէն սկսեալ, Հայ Աւետարանական Եկեղեցիները ռազմավարական մտքով սկսան ուղղել իրենց ուշադրութիւնը հայրենիք: Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդը, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը, Մերձաւոր Արեւելքի, Ֆրանսայի եւ Հիւսիսային Ամերիկայի միութիւնները մեծ ծրագիրներ նախաձեռնեցին, հետեւեալ ուղղութիւններով.-

- Հայաստանեան համայնքներու վերստեղծում,
- Մանկական, երիտասարդական ծրագրեր, բժշկական եւ կրթական ծառայութիւններ,
- Նուիրուածութիւն՝ ի տես Արցախեան պատերազմներու եւ մարդասիրական հարցերու,
- Քննարկում, վերամշակում եւ այժմէականացում հոգեւոր հովիւի ինքնութեան եւ եկեղեցական կառոյցի առաքելութեան,
- Նոր եկեղեցական Միութիւններ որոնք միացան Հայ Աւետարանական Համաշխարհային Միութեան՝
  - Հայաստանի Միութիւն (1995),
  - Եւրասիոյ Միութիւն (1995):

Լայնածաւալ տեղաշարժերու եւ փոխակերպումներու տարիներուն եւ անոնցմէ ետք, ծանր հարուած ստացած այս Եկեղեցին, ցուցաբերած է կարգ մը արժանիքներ որոնք ուսանելի են.-

- Հայ Աւետարանական Եկեղեցւոյ ժողովական դրութիւնը ապահոված է հաւատացեալներու ներգրաւուածութիւնը համայնքային կեանքին: Եկեղեցիի իւրաքանչիւր անդամ գիտակցած է թէ ինք ունի ձայն ու կարծիք, հիմնուած՝ իր համոզումներուն վրայ, ուստի եւ որոշ չափով ազդեցութիւն՝ իր տեղական համայնքին վրայ:
- Հայ Աւետարանական Եկեղեցւոյ ապակեդրոնացեալ դրութիւնը - իր թերութիւններովը հանդերձ - ստեղծած է որոշակի ճկունութիւն, փոխելու եւ տեղական ջանքով հաւաքական կեանքն ու գործունէութիւնը վերսկսելու:
- Հայ Աւետարանական Եկեղեցւոյ համաշխարհային միջեկեղեցական աշխուժութիւնը ապահոված է նեցուկը շատերու, երբ հայը մատնուած էր անել կացութեան կամ աղէտի:
- Հայ Աւետարանական Եկեղեցւոյ կողմէ հայկականի եւ ազգի միասնութեան ուսուցումը, նաեւ՝ վաղ օրերէն իսկ անոր անկախացումը, ապահոված են ինքնութեան կերտում եւ վերակերտում՝ փոփոխական բոլր կացութիւններու մէջ, ի տարբերութիւն - զոր օրինակ - արաբ աւետարանականներու, որոնք երկար ժամանակ կախեալ մնացած են օտար միսիոնարութիւններէ:
- Կրթութեան, դաստիարակութեան եւ բարեսիրութեան շեշտը դրուած է նախ անհատի կարիքներուն վրայ եւ ոչ միայն՝ զանգուածի ընդհանուր բարօրութեան վրայ, ինչ որ եղած է աւետարանական առաւելութիւն:
- Կղերակեդրոն ըլլալէ աւելի հաւատացեալակեդրոն ըլլալը արտօնած է որ անդամ հաւատացեալը զգայ որ իր անձնական կեանքը արժեւորուած է: Այս յատկանիշը արտօնած է որ յարաբերաբար փոքր թիւ կազմող եկեղեցիներ կազմակերուին կրթական կամ երիտասարդական ծրագիրերու շուրջ, որոնց մէջ աշխարհականը գործօն դեր խաղացած է, սեպելով հաստատութիւնը իսկապէս իրը:

Հայ Աւետարանական Եկեղեցւոյ վերականգնման կարողականութիւնը եւ վերակազմաւորման փորձը պայմանաւորուած է վերոյիշեալ կէտերով: Միւս կողմէն, Հայ աւետարանական ապակեդրոնացեալ դրութիւնը յաճախ վտանգած է փոքր գաղութներու իր գոյութիւնը: Տեղ տեղ՝ համայնքներ օտարացած են հայ աւետարանական պատմութենէն, իսկ նուիրապետութեան յարաբերական բացակայութիւնը պատճառ դարձած է որ չպահպանուի առաքելութիւնը:

Ընդհանրապէս, սակայն, Հայ աւետարանական պատմական փորձը ուսանելի պէտք է ըլլայ բոլորին:

Օգտագործուած սկզբնաղբիւրներ

Վեր. Կ. Պ. Ատանալեան, *Յուշարձան Հայ Աւետարանականաց եւ Աւետարանական Եկեղեցւոյ (քննական ծանօթութիւններով),* Crown Printing Co., Ֆրեզնօ-Քալիֆորնիա, 1952:

Տիգրան Ճ. Խրլոբեան, *Ոսկեմատեան, պատմութիւն Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական միութեան, հտր. Ա.,* Հրատ.՝ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական միութեան, տպ. Շնորհօքեան եւ Ա. Տէր-Սահակեան, Պէյրութ, 1950:

Տիգրան Ճ. Խրլոբեան, *Ոսկեմատեան, պատմութիւն Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական միութեան, ներկայացուած վիճակագրական եւ պատմական ծանօթութիւններով, կենսագրական ուրուագիծերով եւ նկարներով, հտր. Բ.,*Հրատ.՝ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական միութեան, տպ. Շնորհօքեան եւ Ա. Տէր-Սահակեան, Պէյրութ, 1951:

THE TRANSFORMATIONS OF THE ARMENIAN EVANGELICAL CHURCH (OBSERVATIONS)

(SUMMARY)

Rev. Paul Haidostian

Paul.Haidostian@haigazian.edu.lb

The paper elaborates on the historical periods and transformations of the Armenian Evangelical Church, starting with the very first reformative steps (1821–1846), prior to the *firman* of the Sultan that recognized the Armenian Protestant Church as a separate millet. The second period (1846–1909) is considered the era of organization and expansion. The third is the period of catastrophes and deterioration, which began with the Adana Massacres (1909), culminated in the Armenian Genocide, and ended with the Smyrna affair (1922). The fourth period marks the era of revival and diasporization (1922–1946); the fifth is known as the era of diasporic and international consolidation (1946–1991); and the most recent stage (1991–2020) is regarded as a period of Pro-Armenia dedication and emerging differences in identity.

The author identifies a set of unique characteristics of the Armenian Evangelical Church, such as its congregational nature, decentralized structure, international and inter-church vitality, independence, distinct identity, and evangelical-oriented values. Its individual-based support system and other features have given it the flexibility and agility to adapt, transform, and grow as a dynamic component of both the Armenian nation and the Church.

ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ 1920-1930ԱԿԱՆՆԵՐԻՆ. ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ, ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ եւ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ

Էդգար Յովհաննիսեան
hovhannisyanedgar16@aspu.am

ՄՈՒՏՔ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան պատմութիւնը կարելի բաժանել երկու մեծ ժամանակաշրջանների՝ *կիլիկեան շրջան*, որը ժամանակագրական առումով ընդգրկում է հիմնադրումից մինչեւ 1921ը, եւ *սփիւռքեան շրջան*, որն սկսում է 1921ից եւ շարունակւում մինչ օրս:

1921 Հոկտեմբերի 20ի Անկարայի ֆրանս-թուրքական պայմանագրով[1] սկսուեց Կիլիկիայի վերջնական հայաթափման գործընթացը: Նոյն թուականի վերջին, շուրջ 150,000 հայերի հետ տարագրութեան ճանապարհը բռնեց նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան գահակալ Սահակ Բ. Խապայեան կաթողիկոսը:

Տարագրութիւնից յետոյ, յայտնուելով աստանդական վիճակում, առանց մշտական նստավայրի, գոյատեւման համար անհրաժեշտ նիւթական միջոցների ու միաբանութեան ցիրուցան եղած անդամներով, չափազանցրած չենք լինի, եթէ ասենք, որ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը հասել էր կործանման եզրին: Սակայն Կիլիկիոյ ալեզարդ գահակալ Սահակ Բ. Խապայեանը չէր պատրաստւում համակերպուել ստեղծուած իրավիճակին: Սիսի պատմական աթոռանիստը լքելուց անմիջապէս յետոյ վերջինս ձեռնամուխ եղաւ Կիլիկիոյ աթոռի վերակազմութեան գործին: Շատերը չէին հաւատում, որ հնարաւոր կը լինի վերակազմաւորել կաթողիկոսական աթոռը, իսկ հայ հասարակական-քաղաքական որոշ շրջանակներ անգամ նպատակայարմար չէին գտնում Կիլիկիոյ կաթողիկոսութեան յետագայ գոյութիւնը: Սակայն տարագիր Սահակ վեհափառի յամառ ջանքերի շնորհիւ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը կարողացաւ վերակազմաւորուել նոր պայմաններում եւ շարունակել իր գոյութիւնը:

* * *

Կիլիկիոյ կաթողիկոսութեան պատմութեան սփիւռքեան շրջանի առաջին փուլը՝ 1920-30ականները, կարելի է համարել վերկազմութեան եւ

[1] William Hale, *Turkish Foreign Policy since 1774*, New York, 2013, էջ 37. նաեւ՝ Ա. Մարտիրոսեան, *Ֆրանս-թուրքական յարաբերութիւնները 1920-1939 թուականներին*, Երեւան, 2021, էջ 53-55:

«սփիւռքացման» շրջան, որն իր հետ բերեց նոր պայմաններում Կիլիկիոյ կաթողիկոսութեան փոխակերպումների գործընթացի մեկնարկին:

Կիլիկիոյ կաթողիկոսութեան սփիւռքեան շրջանի գործունէութեան գլխաւոր առաքելութիւններից մէկը միայն տարագիր հայութեան համար հոգեւոր-կրօնական ծառայութիւններ մատուցելը չէր: Կաթողիկոսութեան գլխաւոր խնդիրներից էր դառնալ առանցք հայ գաղթականների համայնքային կեանքը կազմակերպելու եւ ինքնութիւնը պահպանելու առումով: Սակայն այս ամէնի համար նախ անհրաժեշտ էր վերակազմաւորել Հայոց եկեղեցու այդ նուիրապետական աթոռը: Կիլիկիոյ կաթողիկոսութեան վերակազմութեան գործընթացը տեւեց շուրջ մէկուկէս տասնամեակ:

Նոր պայմաններում կաթողիկոսական աթոռի յետագայ գոյութեան ապահովման եւ վերակազմութեան համար անհրաժեշտ էր լուծել հետեւեալ կարեւոր խնդիրները.-

1. ստանալ պաշտօնական կարգավիճակ,
2. ձեռք բերել նոր թեմեր,
3. լուծել Կիլիկիոյ յաջորդ գահակալի ընտրութեան հարցը,
4. գտնել նոր հիմնական կաթողիկոսական նստավայր:

1920-30աններին յամառ ջանքերի շնորհիւ քայլ առ քայլ լուծուեցին վերը նշուած խնդիրները:

Յատկապէս կարեւոր էր Կիլիկիոյ կաթողիկոսութեան կարգավիճակի յստակեցումը նոր պայմաններում: Տարագրութիւնից յետոյ Կիլիկիոյ կաթողիկոսը որեւէ պաշտօնական կարգավիճակ չունէր եւ կաթողիկոսական աթոռի յետագայ վերակազմութեան համար վճռական նշանակութիւն կարող էր ունենալ Սիրիայի եւ Լիբանանի ֆրանսական մանդատային իշխանութիւնների կողմից նրա պաշտօնական ճանաչումը ու իրաւական կարգավիճակի յստակեցումը: 1924 Մարտի 18ին Սահակ կաթողիկոսը, ի պատասխան իր կատարած հայցմանը, ստանում է Սիրիայում ֆրանսական բարձր յանձնակատար զորավար Վէյկանի գրութիւնը, որով Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը ֆրանսական իշխանութիւնների կողմից պաշտօնապէս ճանաչւում է Սիրիայի եւ Լիբանանի հայ բնակչութեան հոգեւոր պետ[2], «*…տեղական հպատակութիւնը վայելող կազմակերպութիւն մը*»[3]: Սրան յաջորդում են 1924 Օգոստոսի 30ի եւ 1925 Յունուարի 19ի հրավորտակները, որով ֆրանսական բարձր կոմիսարութիւնը Սիրիայում եւ Լիբանանում բնակուող

[2] Բ. Եղիայեան, *Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972*, Անթիլիաս, 1975, էջ 297-98:

[3] *Սիւրիոյ երուսաղէմապատկան թեմերուն Կիլիկիոյ կաթողիկոսութեան փոխանցումը*, Երուսաղէմ, 1930, էջ 25:

հայութեանը տալիս է հպատակութեան իրաւունք[4]: Այս հանգամանքը էականօրէն փոխեց իրերի դրութիւնը. գաղթական հայութիւնն այլեւս ունէր քաղաքացիութեան կարգավիճակ, իսկ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը պաշտօնապէս ճանաչւում էր որպէս տեղի առաքելական հայութեան հոգեւոր իշխանութիւն: Սա Կիլիկիոյ կաթողիկոսութեան վերակազմութեան գործընթացում առաջին կարեւոր քայլն էր, որով փաստօրէն հիմք դրուեց Հայոց Եկեղեցու նուիրապետական այդ աթոռի փոխակերպման գործընթացին:

Կիլիկիոյ կաթողիկոսութեան վերակազմութեան համար յաջորդ կարեւոր խնդիրը նոր թեմերի ձեռքբերումն էր: Յայտնի է, որ կաթողիկոսութիւնը տարագրութիւնից յետոյ կորցրել էր նախկինում իրեն պատկանող բոլոր թեմերը, բացի մէկից՝ Հալէպի թեմից: Կաթողիկոսութիւնը չէր կարող նոր պայմաններում գոյատեւել, եթէ իր ենթակայութեան տակ չունենար նոր թեմեր առնուազը այն տարածքներում որտեղ հաստատուել էր նախկինում իր հօտի անդամ հանդիսացող Կիլիկիայի հայերի հիմնական մասը - խօսքը վերաբերում է յատկապէս Սիրիային եւ Լիբանանին:

1920ականների սկզբներից Սահակ կաթողիկոսը սկսեց իր յամառ ջանքերն այդ ուղղութեամբ: Միքանի տարի տեւած հետապնդումներից յետոյ 1920ականների կէսերին Կիլիկիոյ կաթողիկոսութեան իրաւասութեան տակ անցաւ Կիպրոսի հայոց թեմը[5]:

Սակայն օրախնդիր էր մնում Սիրիայի եւ Լիբանանի տարածքում հոգեւոր իշխանութեան հարցը: Այստեղ, փաստօրէն, ձեւաւորուել էր ինքնատիպ հոգեւոր «երկիշխանութիւն»: Մի կողմից այդ տարածքները գտնւում էին Երուսաղէմի հայոց պատրիարքութեան հոգեւոր վարչական իշխանութեան ներքոյ, միւս կողմից այդտեղ հաստատուած հայութեան գերակշիռ մասը նախկինում՝ մինչ տեղահանութիւնը, գտնուել էր Կիլիկիոյ կաթողիկոսութեան հոգեւոր իշխանութեան ներքոյ: Տարագրուած կիլիկիահայերը տեղահանութիւնից յետոյ էլ նախընտրում էին Կիլիկիոյ կաթողիկոսի հոգեւոր առաջնորդութիւնը: Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնը Սիրիայի եւ Լիբանանի տարածքում ունէր իրեն ենթակայ հոգեւոր տեսչութիւններ: Սահակ կաթողիկոսը ձգտում էր, որ դրանք փոխանցուեն Կիլիկիոյ կաթողիկոսութեանը, որոնց հիման վրայ կը ձեւաւորուէին նոր թեմեր: Ստեղծուած հոգեւոր «երկիշխանութիւնը» յղի էր բազմաթիւ վտանգներով, որը կարող էր հերթական լարուածութիւնը բերել Հայոց Եկեղեցու ներսում: Նոյն տարածքում երկու նուիրապետական աթոռների ներկայացուածութիւնը կարող էր որոշակի մրցակցութիւն

[4] Եղիայեան, էջ 298:

[5] Է. Յովհաննիսեան, *Կիպրոսի թեմի վերակազմութիւնը եւ կիպրահայութիւնը (1920-1940թթ.). Պետրոս արքեպիսկոպոս Սարաճեան*, Հեղ. Հրատ., Երեւան, 2021:

առաջացնել երկու աթոռների միջեւ՝ դրանով աւելացնելով այն խնդիրների թիւը, որոնց առջեւ կանգնած էր տարագիր հայութիւնը. «*Այս կերպով երեւան կու գար ժողովրդեան հոգեւոր մատակարարութեան գործին մէջ ակամայ մրցակցութեան եւ երկուութեան պարագայ մը*»[6]՝ գրում էր Սահակ Բ.ն Երուսաղէմի հայոց պատրիարք Եղիշէ արք. Դուրեանին, խնդրի վերաբերեալ: Ստեղծուած իրավիճակը ենթադրում էր խելամիտ մօտեցում՝ խուսափելու համար հնարաւոր ցնցումներից:

Մօտ մէկ տասնամեակ տեւած ջանքներից յետոյ, վերջիվերջոյ, հարցը լուծուեց 1929ին, երբ Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնը Սիրիայի եւ Լիբանանի իրեն պատկանող հոգեւոր տեսչութիւնները փոխանցեց Կիլիկիոյ կաթողիկոսութեանը: Դրանց հիման վրայ ձեւաւորուեցին երեք նոր թեմեր՝ Բէյրութի, Դամասկոսի եւ Անտիոքի թեմերը[7]: Այսպիսով, Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերի թիւը, Հալէպի եւ Կիպրոսի թեմերի հետ միասին, հասաւ հինգի:

Տարագրութիւնից յետոյ նոր թեմերի ստեղծումը խիստ կարեւոր յենք էր Կիլիկիոյ կաթողիկոսութեան վերակազմութեան համար: Սա Կիլիկիոյ կաթողիկոսութեան նոր պայմաններում փոխակերպման հերթական դրսեւորումն էր:

Կիլիկիոյ կաթողիկոսութեան վերակազմութեան հարցում խիստ կարեւոր նշանակութիւն ունեցաւ մի կարեւոր փաստաթղթի հրապարակումը: Խօսքը 1928 Փետրուարի 29ին Հալէպում Սահակ կաթողիկոսի կողմից հրապարակուած իր յայտնի «Կտակ»ի[8] մասին է: Այն մի ինքնատիպ դիմում էր ուղղուած ողջ հայութեանը՝ Կիլիկիոյ կաթողիկոսութեան յետագայ ճակատագրի վերաբերեալ: Իր «Կտակ»ով կաթողիկոսը ցանկանում էր նախ եւ առաջ, ինչպէս նշուած էր «Կտակ»ում. «*ազգային նուիրապետութեան էական եւ կենսական հարցը իբրեւ կտակ՝ ողջամիտ, անցեալին եւ ներկային իրազեկ եւ ապագային խորաթափանց պայծառատեսութեամբ կանխագուշակող ազգայնոց*»[9] ուշադրութեանը յանձնել: Եղիայեանի բնութագրմամբ այդ «շարջաբերական»ի[10] հրապարակումը, ըստ էութեան, տագնապի ազդանշան էր ուղղուած համայն հայութեանը, միաժամանակ երկխօսութեան եւ համատեղ գործելու հրաւէր՝ յանուն Հայոց Եկեղեցու նուիրապետական աթոռներից մէկի՝

---

[6] *Սիւրիոյ երուսաղէմապատկան թեմերուն*, էջ 5:

[7] Է. Յովհաննիսեան, Բ. Կովաչ, «Սիրիայի եւ Լիբանանի երուսաղէմապատկան թեմերի փոխանցումը Կիլիկիոյ կաթողիկոսութեանը եւ դրա նշանակութիւնը», *Կիլիկիոյ հայոց կաթողիկոսութիւնը պատմութեան քառուղիներում. Սիսից մինչեւ Անթիլիաս հանրապետական գիտաժողովի յօդուածների ժողովածու, 2022թ. Սեպտեմբերի 8-9*, Երեւան, էջ 225-61:

[8] Սահակ Բ. Կաթողիկոս Կիլիկիոյ, *Կտակ*, Հալէպ, 1928:

[9] Նոյն, էջ 3:

[10] Եղիայեան, էջ 291:

Կիլիկիոյ կաթողիկոսութեան ապագայի: Կիլիկիոյ ապագայ աթոռակից կաթողիկոս Բաբկէն Կիւլեսէրեանի բնութագրմամբ «Կտակ»ի «*նիւթը կտակ մը ըլլալէ աւելի Կիլիկիոյ կաթողիկոսութեան տեւականութեան մղձաւանջն էր*» եւ դիմելով հայութեան աշխարհիկ ու հոգեւոր շրջանակներին՝ ալեզարդ վեհափառը ցանկանում էր նրանց կարծիքն ու խորհուրդն ստանալ. «*որպէս զի հանրութեան ձայնին հետեւի ու ապագայի սերունդին առջեւ պատասխանատու չմնայ պարտազանց հանդէպ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան*»[11]: «Կտակ»ով Կիլիկիոյ կաթողիկոսութեան պահպանման հարցը դարձաւ օրակարգային՝ հայ հասարակական տարբեր շրջանակների համար:

«Կտակ»ի հրապարակումից շատ չանցած հայութեան տարբեր շրջանակներ սկսեցին արձագանգել Սահակ Բ.ի հիմնական հարցադրմանը՝ «*Ի՞նչ պիտի ըլլայ ութնդարեայ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը*»: Հնչեցուած տեսակէտերը տարբեր էին, յաճախ հակասական ու իրարամերժ[12]: Սակայն մեծամասնութիւնը, այս կամ այն կերպ, կողմ էր արտայայտւում կաթողիկոսութեան պահպանմանը: 1928 Մայիսին կաթողիկոսը իր նամակներից մէկում գրում է. «*Մինչեւ հիմա զանազաններէ «Կտակ»ի առթիւ երեսունէ աւելի պատասխաններ առած եմք, ամէնքն ալ Կիլիկիոյ կաթողիկոսութեան պահպանութեան պէտքը հրամայական կը համարին...*»[13]:

Փաստօրէն, հայ հասարակական շրջանակները, ինչպէս նաեւ Հայոց Եկեղեցու միւս նուիրապետական աթոռները, այդ թւում Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը, կողմ արտայայտուեցին Կիլիկիոյ կաթողիկոսութեան պահպանման օգտին[14]: «Կտակ»ին ի պատասխան, փաստօրէն, ինչ-որ իմաստով համազգային համախոհութիւն ձեւաւորուեց Կիլիկիոյ կաթողիկոսութեան վերակազմութեան եւ պահպանման հարցում:

Յաջորդ կենսական հարցը Սփիւռքում յայտնուած կաթողիկոսութեան վերջնական վերակազմութեան համար մշտական նստավայի խնդիրն էր:

---

[11] Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, *Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը)*, Անթիլիաս, 1939, էջ 994-95:

[12] *Թղթակցութիւն Սահակ Բ. եւ Բաբգէն Ա. Կաթողիկոսներու*, «Կիլիկիոյ կաթողիկոսութեան արխիւներ», թիւ 1, խմբ.՝ Գ. Շահինեան, Անթիլիաս, 1999, էջ 117-18:

[13] *Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի*, «Կիլիկիոյ կաթողիկոսութեան արխիւներ», թիւ 4, խմբ.՝ Վարուժան արքեպիսկոպոս, Նիկոսիա-Կիպրոս, 2010, էջ 240:

[14] Է. Յովհաննիսեան, «Կիլիկիոյ կաթողիկոսութեան պահպանման հարցը եւ Հայոց Եկեղեցու նուիրապետական աթոռների դիրքորոշումը», *Հայ հասարակական-քաղաքական միտքը 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի առաջին կէսին. պատմութիւն եւ արդիականութիւն, գիտաժողովի նիւթերի ժողովածու*, Երեւան, 2023, էջ 167-191:

Սիսը լքելուց մօտ մէկ տասնամեակ անց կաթողիկոսութիւնը դեռ չունէր մշտական հանգրուան: Սահակ կաթողիկոսը մի քաղաքից միւսը, մի հանգրուանից միւսը անցնելով՝ չէր կորցրել կաթողիկոսական մշտական նստավայր ունենալու յոյսը: Շուտով, սակայն, կաթողիկոսութեան աստանդական կեանքը մօտենալու էր իր աւարտին եւ փոխակերպումներ ապրող Կիլիկիոյ աթոռը հանգրուանելու էր Բէյրութից ոչ-հեռու գտնուող Անթիլիաս աւանում:

1930ին Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան նպաստամատոյց կոմիտէն Անթիլիասում գտնուող շինութիւնները, որտեղ նախկինում տեղակայուած էին իր հովանու ներքոյ գործող որբանոցները, որոշում է անյատոյց, խորհրդանշական ամերիկեան 1 դոլար վարձակալութեամբ, յանձնել Կիլիկիոյ կաթողիկոսութեանը[15]: 1930 Ապրիլի 7ին Ամերիկեան նպաստամատոյցի ընդհանուր քարտուղար Բ. Աչիսոնի եւ Կիլիկիոյ կաթողիկոս Սահակ Բ.ի միջեւ կնքւում է վարձակալութեան պայմանագիր[16], որով նշուած կալուածքները հինգ տարի ժամկէտով տրամադրւում են Կիլիկիոյ կաթողիկոսութեան, որը որպէս վարձակալ, «*...կալուածը պիտի օգտագործէ իբր վարժարան՝ եկեղեցականներու եւ ուսուցիչներու պատրաստութեան համար*»[17]: Շուտով կնքուած պայմանագրի համաձայն Անթիլիասում բացւում է Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքը, որը կարեւոր դերակատարում է ունենում Սիրիայի եւ Լիբանանի հայութեան կրթական կեանքում եւ հայկական սփիւռքի համար հոգեւորականներ պատրաստելու գործում[18]:

Հինգ տարի անց, վարձակալութեան պայմանագրով նախատեսուած ժամկէտն աւարտուելուց յետոյ, Նպաստամատոյցը վաճառքի է հանում իրեն պատկանող կալուածքները: Կրկին վտանգուած էր Կիլիկիոյ կաթողիկոսութեան նստավայր ունենալու հարցը, քանի որ կաթողիկոսութիւնը չունէր համապատասխան միջոցներ՝ կալուածքները գնելու համար: Որոշւում է խնդիրը լուծել հանգանակութեան միջոցով, սակայն գործընթացը դանդաղում է եւ բաւարար միջոցներ չեն հաւաքւում: Խնդիրը, վերջիվերջոյ, լուծւում է խոշոր նուիրատուութեան շնորհիւ: 1937 Մայիսին կալուածքների գնման համար Կահիրէում բնակուող պոլսեցի տէր եւ տիկին Սիմոն եւ Մաթիլդ Գայըգճեանները «*ինքնայօժար, ինքնամատոյց ժեսթով,*

[15] Բաբգէն Ա., էջ 1007:

[16] Եղիայեան, էջ 332:

[17] ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4470, թ. 3, շրջերես:

[18] Է. Յովհաննիսեան, «Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքի հիմնումը եւ նրա դերը Սիրիա-Լիբանանի հայկական համայնքների կրթական կեանքում», *ՎԷՄ» համահայկական հանդէս*, 2 (70):2020, էջ 217-34:

առանց թելադրութեան, առանց խնդրանքի եւ առանց միջնորդի»[19] Կիլիկիոյ կաթողիկոսութեանն են նուիրաբերում 4000 անգլիական ոսկի[20]:

Այս նուիրատուութեան շնորհիւ 1937 Հոկտեմբերին Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը վերջնականապէս գնում է Անթիլիասի կալուածքները[21]: Սա կարեւոր ձեռքբերում էր կաթողիկոսութեան վերակազմութեան եւ Անթիլիասում վերջնական հաստատման համար: Աւելի քան 700 տարի պատմական Սիսի կաթողիկոսական աթոռանիստից յետոյ Անթիլիասը դարձաւ Կիլիկիոյ կաթողիկոսների յաջորդ կայուն նստավայրը: Այլեւս Կիլիկիոյ կաթողիկոսութեան սփիւռքեան շրջանի գործունէութիւնը կը կապուի Անթիլիասի հետ, որտեղ կը կառուցուեն Ս.Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, կաթողիկոսարանը եւ այլ անհրաժեշտ շինութիւններ:

Այսպիսով, Լիբանանի Անթիլիաս աւանի նոր կաթողիկոսարանը դառնում է ոչ միայն Հայոց Եկեղեցու նուիրապետական աթոռներից՝ մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան աթոռանիստը, այլ նաեւ կարեւոր հոգեւոր-կրօնական կենտրոն սփիւռքահայութեան համար:

Իր լուծումը ստացաւ նաեւ մէկ այլ կարեւոր հարց՝ կաթողիկոսի իրաւայաջորդի հարցը: Յաջորդ գահակալի եւ առհասարակ նոր պայմաններում կաթողիկոսական ընտրութեան կազմակերպման հարցի կարգաւորումը, մեր կարծիքով, կաթողիկոսութիւնը յետագայ ցնցումներից զերծ պահելու համար ունէր էական նշանակութիւն: Ուստի, Սահակ կաթողիկոսը խնդրի լուծման համար գտաւ բաւականին արդիւնաւէտ եւ ինքնատիպ լուծում: Վերջինս որոշեց իր կենդանութեան օրօք ընտրել տալ աթոռակից կաթողիկոս, ով իր մահից յետոյ կը փոխարինէր իրեն՝ կաթողիկոսական աթոռին: Այս երեւոյթը նոր չէր Հայոց Եկեղեցու պատմութեան մէջ: Նախորդ հարիւրամեակներում աթոռակից կաթողիկոսների ընտրութեան միքանի դէպքեր արդէն տեղի էին ունեցել[22]:

Որպէս աթոռակից կաթողիկոսի թեկնածու Սահակ վեհափառի ընտրութիւնը կանգնեց Երուսաղէմի հայոց պատրիարքութեան միաբան Բաբկէն եպիսկոպոս Կիլեսէրեանի վրայ: Այս հարցը Սահակ կաթողիկոսը վճռել էր դեռեւս 1928ին[23], սակայն Բաբկէն սրբազանը համաձայնուել էր ստանձնել իր նոր պաշտօնը Երուսաղէմում Պատրիկ Կիլպենկեանի հովանաւորութեամբ բացուած ընծայարանի սաներին իրենց ուսման աւարտին հասցնելուց յետոյ, որը պէտք է տեղի ունենար 1930ին: Բաբկէն սրբազանը իր խոստման համաձայն, աւարտելով աշխատանքները

---

[19] Պետրոս արք. Սարաճեան, «Հաաճելի պատմութիւն մը», *Հասկ*, 5:1937, էջ 60:

[20] Նոյն, էջ 53:

[21] Եղիայեան, էջ 467-78:

[22] Եզնիկ քահ. Պետրոսեան, *Հայ Եկեղեցու պատմութիւն, Մաս Ա*, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1990, էջ 80-81:

[23] Բաբգէն Ա., էջ 1034:

Երուսաղէմում, 1930 Օգոստոսի կէսերին ժամանում է Անթիլիաս՝ արդէն անմիջականօրէն լծուելով կաթողիկոսութեան վերակազմութեան գործին:

Իր աթոռակից եւ Կիլիկիոյ յաջորդ կաթողիկոս Բաբկէն եպ. Կիւլեսէրեանի ընտրութեանը օրինական տեսք տալու եւ յետագայ խնդիրներից խուսափելու համար, հեռատես կաթողիկոսն որոշում է չսահմանափակուել միայն սեփական որոշումով: Նախ, 1931 Մարտի 26ին վեհափառը Բաբկէն սրբազանին շնորհում է արքութեան տիտղոս[24]: Այնուհետեւ «Օրինաւորապէս զայն ընտրելու» համար հրաւիրում է Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերի ներկայացուցչական ժողով: Ժողովին իր բացման խօսքում կաթողիկոսը նշում է. «*...մեր կամքին թողուած էր ընդհանուրին արտայայտած փափաքով ինքնին ընտրել մեր Աթոռակիցը եւ մեր ձեռքով օծել, պարտք համարեցի Պատկ. Ժողովոյդ փոխանցել այդ իրաւունքը, օրինականացնելու համար ազգին փափաքն ու կամքը, որպէսզի կարենայ լիովին կատարել իւր Աթոռակցի պաշտօնը*»[25]: Փորձառու եւ հեռատես հայրապետը այս քայլով ցանկանում էր յետագայ հնարաւոր խնդիրները, որոնք կարող էին իր մահից յետոյ առաջանալ յաջորդ կաթողիկոսի ընտրութեան հարցում, չէզոքացնել: Թեմական պատգամաւորական ժողովը հրաւիրւում է Հալէպի Ս. Քառասուն Մանկանց եկեղեցում 1931 Ապրիլի 25ին: Աթոռակից կաթողիկոսի ընտրութեան եւ օծման վայրը պատահաբար չէին ընտրուել: Այս եկեղեցին դարեր շարունակ հանդիսացել էր Սիսի պատմական Ս. Սոֆիային հաւասար կաթողիկոսանիստ եկեղեցի: Ս. Քառասուն Մանկանց եկեղեցում նախկինում եւս տեղի էին ունեցել կաթողիկոսական ձեռնադրութիւններ, Հալէպը դարեր շարունակ եղել էր Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմը եւ, վերջապէս, այն կիլիկեան շրջանից մնացած միակ պատմական թեմն էր:

Ժողովին բացման խօսքով հանդէս է գալիս Սահակ վեհափառը եւ ներկայացնում «Կտակ»ի հրապարակումից յետոյ ստացուած արձագանգները եւ կաթողիկոսութեան վերակազմութեան ուղղութեամբ իրականացուած ջանքերը: Անդրադառնալով աթոռակից կաթողիկոս ընտրելու անհրաժեշտութեանը՝ նա մատնանշում է, որ Սփիւռքի տարբեր շարջանակներից ստացուած «Կտակ»ի արձագանգների մէջ շատերը Սահակ վեհափառին յորդորում էին իր կենդանութեան ընտրել աթոռակից կաթողիկոս[26]:

Աթոռակից կաթողիկոսի ընտրութեամբ, կարծես թէ, ամբողջացան այն հիմնական ձեռնարկները, որոնք միտուած էին տարագրութիւնից յետոյ Կիլիկիոյ կաթողիկոսութեան վերակազմութեանը:

* * *

[24] *Թղթակցութիւն Սահակ Բ. եւ Բաբգէն Ա. Կաթողիկոսներու*, էջ 314:
[25] Բաբգէն Ա., էջ 1013:
[26] Բաբգէն Ա., էջ 1006-14:

Այսպիսով, Կիլիկիայից տարագրութիւնից յետոյ շուրջ մէկուկէս տասնամեակի ընթացքում, հետեւողական ջանքերի արդիւնքում հնարաւոր եղաւ ապահովել Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «սփիւռքացումը» եւ այն վերակազմակերպել նոր պայմաններում: Այս ընթացքում Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը ենթարկուեց մի շարք փոխակերպումների, որոնք ստեղծուած պայմաններում անխուսափելի էին եւ միտուած էին կաթողիկոսութեան յարմարեցմանը նոր իրողութիւններին, ինչպէս նաեւ դիմակայելու նոր մատահրաւէրներին: Նախ յաջողուեց վերացնել կաթողիկոսութեան «հիւրի» կարգավիճակը եւ փրկել այն կործանումից, ինչպէս նաեւ դրուեց վերջինիս սփիւռքեան շրջանի գործունէութեան հիմքը: Հայոց Եկեղեցու նուիրապետական այս աթոռի համար մեկնարկում է գործունէութեան նոր՝ «սփիւռքեան» ժամանակշրջանը: Փոխակերպման գորընթացների արդիւնքում Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը փոխեց իր գործունէութեան շրջանակը՝ աստիճանաբար դառնալով սփիւռքացման գործընթացներ ապրող տարագիր հայութեան հոգեւոր-կրօնական կարեւոր կենտրոններից մէկը, որը պէտք է ոչ միայն բաւարարէր տարագիր հայութեան հոգեւոր-եկեղեցական կարիքները, այլ նաեւ պատասխանատուութիւն ստանձնէր հայապահպանութեան եւ տեղական համայնքների կազմակերպման գործում:

Փոխակերպումների արդիւնքում փոխուեց նաեւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան հոգեւոր վարչաիրաւական իշխանութեան շրջանակն ու տարածքային ընդգրկումը: Այս ամէնի արդիւնքում աստիճանաբար աճեց նաեւ կաթողիկոսութեան ազդեցութիւնը: Եթէ նախկինում վերջինիս ազդեցութիւնը ընդգրկում էր միայն Կիլիկիան եւ նրա յարակից որոշ շրջաններ, ապա «սփիւռքեան» շրջանում այն աստիճանաբար աւելի ընդլայնուեց՝ աստիճանաբար ներառելով Սփիւռքի տարբեր համայնքներ:

Փոխակերպումների ենթարկուեցին նաեւ Էջմիածին-Անթիլիաս յարաբերութիւններն, ինչպէս նաեւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան յարաբերութիւնները միւս նուիրապետական աթոռների հետ: Մասնաւորապէս Էջմիածին-Անթիլիաս յարաբերութիւնները բաւականին ջերմացան 1920-1930ականներին, որոնք իրենց կառուցողական բնոյթով դրականօրէն տարբերւում էին դրան նախորդած փուլերից:

Նշենք, որ Կիլիկիոյ կաթողիկոսութեան 1920-1930ականների փոխակերպումները կարելի է համարել այդ գործընթացի առաջին փուլը: Գործընթացը շարունակուեց նաեւ յետագայ տասնամեակներում:

Ելնելով վերը շարադրուածից՝ կարող ենք ասել, որ հայոց պատմութեան մէջ առաջին անգամ տեղի ունեցաւ կաթողիկոսական աթոռի «արտագաղթ» դէպի Սփիւռք կամ հայկական-հոգեւոր կրօնական կառոյցի «սփիւռքացում»:

THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA IN 1920-1930S: EXILE, RESTORATION AND TRANSFORMATION

(SUMMARY)

Edgar Hovhannisyan
hovhannisyanedgar16@aspu.am

The history of one of the Hierarchical Sees of the Armenian Church, the Catholicosate of the Great House of Cilicia, is divided into two historical periods: "Cilician" and "Diasporian". The "Diasporian" period of its history started in 1921 after the exile of the Catholicosate from Cilicia. In that period the Catholicosate of Cilicia faced many obstacles and challenges. It had to be able to overcome those problems for the restoration of the See under new circumstances.

In order to ensure the further existence and restoration of the Cilician See, it was necessary to solve the following important problems:

1. obtain official status,
2. obtain new dioceses,
3. resolve the issue of the election of the next Catholicos,
4. find a new permanent seat.

In the 1920s-1930s, thanks to persistent efforts, these problems were solved step-by-step. During that historical period, the Catholicosate underwent a number of transformations which brought many changes to it. The process of the restoration and transformation of the Catholicosate of Cilicia lasted about a decade and a half. It further gradually transformed into an important spiritual center for the Armenian Diaspora and played an important role in the lives of the Armenians of Syria and Lebanon.

This article focuses on the first phase of the "Diasporian" period of the Catholicosate of the Great House of Cilicia and the process of its restoration and transformation in the 1920s–1930s.

TRANSFORMATIONS IN THE ARMENIAN RELIGIOUS SPACE

Raffi Zohrab Gergian
r.gergian@gmail.com

INTRODUCTION

By neglecting the significance and symbolism of vital elements of the liturgy, the worship space risks losing its initial role: conveying the mystical presence of the Lord. The secularization of the sacred space and its environment appears to be a confusing act for the faithful who want to be, like their ancestors, in a communion of faith in order to continue transmitting the message of God and His Church.

The current problems related to inappropriate interventions in places of worship directly affect the faithful in their faith, the ecclesial space in its function, and the Church in its Christian mission. The major concern we want to express is the attachment of the faithful to their Church through the importance they place on the design of the place of worship in terms of "quality", as it appears to them to be the vector of all "filial" relationships between man and his creator. It is generated by a favorable atmosphere that leads to the path of divine filiation. But this desire for closeness is sometimes disrupted when the religious atmosphere no longer arouses any interest or promote humility and sobriety in contemplation.

During our research, we found that interventions and modifications made during restoration or reorganization work on historic or modern religious monuments have radically altered the initial design and affected its liturgical function as well as the order of worship services. While some view this as a process of modernization, others see it as disfigurement and devastation. Justifying or rejecting the results has required us to conduct a thorough investigation based on theological sources, conciliar documents, Church constitutions, and the development of their liturgies. Changes made to ecclesial space often affect the manner and quality of the faithful's participation in liturgical life and their communion with everything around them, including God.

Going back to the biblical foundation of the liturgy and the rules adopted for the design of sacred space was a preliminary and essential step that highlights the spiritual truth of this endeavor, which the first builders of religious constructions invested in and which makes the dogmatic symbolism of the design present in the consciousness of Christian communities. Similarly, it was important to analyze the texts written by the Church Fathers who paid special attention to this question.

The result of our investigation is shocking because it shows that the majority of those responsible for restoration and renovation do not give the necessary importance to the place of worship but rather to the gathering of the community. Their primary concern is to ensure better participation in the celebration of the Mass, even if it is based on rather architectural and decorative conceptions. Therefore, before undertaking any intervention, comprehensive documentation of the history, evolution, and symbols of the monument and its surroundings seems essential to preserve the authenticity of the place of worship and the design of its interior space. Without this preliminary study, inappropriate changes can uproot the faithful from our past as well as disfigure the role of sacred space and the function of liturgical celebration.

SPECIFICITIES OF THE ARMENIAN RITE

It was Catholicos Sahak Partev who, at the end of the 4th century, organized the Armenian liturgy at the same time as Armenian Christian literature. He drew inspiration, in particular, from Jerusalem for the calendar and lectionary, but it is difficult to date the elements that date back to the origins because Armenian liturgy has undergone, at several times, the influence of Byzantium and Rome.

If the Armenian Church is considered a "traditional" Church, it is because it still preserves most of its ancient traditions. Its liturgy is divided, as in the Churches of the first centuries, into three parts: preparatory liturgy, liturgy of the catechumens, and liturgy of the faithful.[1] It possesses a great wealth of formulas, prayers, and sung hymns, some of which date back to Saint Basil and Saint John Chrysostom. Later on, Armenian Church fathers added hymns and sacred poetry to enrich the splendor of the services.[2]

During the Christianization of Armenia, the Armenian Church, under the influence of surrounding cultures, endeavored to create its own liturgy by borrowing certain parts from the two existing liturgies: the Syriac Church in the southern part of the country and the Byzantine Church in the western part. According to Father Antranik Granian, the process of Armenian liturgy assimilation characterizes the Armenians as having "*extraordinary ecumenical*

---

[1] Armenian liturgy has often been presented in five parts: preparatory prayers in the sacristy, preparatory prayers in the sanctuary, preparation and consecration of the offerings, liturgy of the catechumens, and finally, liturgy of the faithful, whose culmination is communion. Currently, it is presented in four parts: preparation rites, including preparatory prayers, preparation and consecration of the offerings; liturgy of the catechumens; liturgy of the faithful and dismissal.

[2] Kévork Aslan, *Etudes Historiques sur le Peuple Arménien*, 2nd ed., Geuthner, Paris, 1928, p. 229.


openness, a remarkable capacity to choose among several heterogeneous elements and to assemble them into a harmonious synthesis while imprinting their own genius on them".[3]

Due to Armenia's proximity to the Roman Empire, Christianity spread in the area, particularly through Syria and Cappadocia. After being under the authority of the Archbishop of Caesarea, the Armenian Church declared itself independent in the late 4th century. Initially, its liturgy was likely in Greek in the vicinity of Cappadocia and in Syriac in the south.

However, under Sahag, or Isaac the Great, (387-438) the Armenian language replaced foreign languages in worship, and a particular liturgy was developed. Catholicos Sahag left a vigorous imprint on his church. The invention, or at least the diffusion, of a national alphabet by Mesrob, and the translation of the Holy Books into Armenian, initiated under the direction of Sahag and Mesrob, ensured that this Church had significant independence from the Greeks and the Syrians.

THE LITURGICAL SPACE IN ARMENIAN CHURCHES

Regardless of the type of worship space where believers gather, be it a cathedral, a small church, or a town or village chapel, the Christian assembly is always located in a liturgical space composed of several parts and equipped with arrangements specific to the celebrated liturgy. This liturgical space is not only defined by the dimensions of the church, but also by how the building is used for the celebrations by the clergy and the assembly.



Plan of an Armenian church in a manuscript copied by Avedik Paghishetsi in 1814 (Matenadaran, MS 9758)

Regarding the interior design of a place of worship, it should be noted that, depending on the era and variations in the celebration, a liturgical space can be distinguished by four arrangements:

[3] Father Antranig Granian, *Hay tzisagan bashdamoonke* (*Armenian Liturgical Worship*), Beirut, 2001, p. 47.

The altar table: It constitutes the focal point around which all the other elements are distributed, and symbolizes the altar of sacrifice and the table of the sacrificial meal; it has always been recommended to be "solid, stable, noble, and worthy".
The bishop's or officiant's seat: It indicates that the assembly is always presided over.
The ambo, the second core of the liturgy, reflects the importance of the Word and listening to it. It is designed like the altar table with solid materials to make the proclaimed Word resonate.
The seats of the assembly that bring together the faithful in a group of "brothers" as announced in the Acts of the Apostles (Ac 1, 15) to manifest the faith of each of them.

The visible arrangement, in accordance with the requirements of the liturgy, allows for the revelation of the action of the invisible Lord, who calls the assembly together.

For the Armenian Church, ecclesiastical architecture has a dual requirement: the arrangement of the baptistery and spaces intended for catechumens or penitents.[4] Later on, a dedicated worship space was developed, giving rise to a national religious architecture with elements possessing symbolism that connects the faithful simultaneously to their creator and their nation. Thus, the altar table and the dome, with their own particularities, became the two poles of attraction towards which all other elements converge.

THE VESTIBULE OR GAVIT

2020ի պատերազմի ընթացքում տարածում ստացաւ այսպէս կոչուած վիրտուալ կամ ֆէյսբուքային հայրենասիրութիւնը, որը բնորոշ չէր 1990ականների պատերազմին: Տարբեր նպատակներով մեր հետազօտութիւններին մասնակցած 3000 անձանց 84%ը ընկերական տարբեր ցանցերում իրենց էջերում կիսուել են ՀՀի եւ ԱՀի տարբեր գերատեսչութիւնների, պաշտօնեաների առանձին գրառումներով, տեսանիւթերով: Վերջիններս հիմնականում վերաբերել են ՀՀի եւ ԱՀի ԶՈՒԻ յաղթական դրսեւորումներին, յաջողութիւններին, հիացել են դրանցով, ոգեւորուել, իրենք են հայրենասիրական, ոգեկոչող գրառումներ կատարել, հանդէս եկել տարբեր լրատուամիջոցներով միաւորուելու, բանակին օգնելու, Արցախ գնալու կոչերով, սակայն գործնականում, հանրութեան մի մեծ զանգուած Արցախում կամ ՀՀում որեւէ զինուորական ստորաբաժանման, որեւէ հիւանդանոցի, զինուորական հիւանդանոցի, որեւէ զինուորի, որեւէ վիրաւորի չեն օգնել: Աւելին, հարցմանը մասնակցածների շարքում շատ են մարդիկ, որոնք իրենց գործունէութեան բերումով տարիներ շարունակ քարոզել են հայրենասիրութիւն, սակայն գործնականում ոչինչ չեն արել: Այնինչ, «*Հայրենասիրութիւնը ենթադրում է ակտիւ գործողութիւններ ուղղուած սեփական պետութեան շահերի պաշտպանութեանը. սեփական*

քաղաքացիական պարտքը կատարելու պատրաստակամութիւն, Հայրենիքի նկատմամբ սիրոյ դրսեւորում անձնուրաց աշխատանքի կամ հերոսական սխրանքի միջոցով»[2]:

Յաջորդ դիտարկումը նախորդի շարունակութիւնն է: Հայ հասարակութեան մէջ 2020ից յետոյ նկատուեց պաշտպանական հոգեբանական փոխհատուցման, ինքնարդարացման մեխանիզմների դրսեւորում: Բազմաթիւ մեր հայրենակիցներ իրենց անգործութիւնը, չմասնակցութիւնը Արցախում որեւէ ռազմական կամ մարդասիրական գործունէութեան փորձում էին փոխհատուցել դրամական, նիւթական տարբեր օգնութիւններով, որոնք շատ դէպքերում նոյնիսկ անհրաժեշտ չէին:

Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների մէկ այլ դրսեւորում էր Արցախ գնալն ու «տեղ չհասնելը»: Միքանի անգամ Գորիսում հանդիպեցինք հայ տղամարդկանց զանգուածների, որոնք Արցախի սահմանը չէին հատում, սակայն օրերով ապրում էին Գորիսի հիւրանոցներում, ժամանակ անցկացնում սրճարաններում, աւելին՝ զինուորական համազգեստ էին կրում, իսկ նրանց ընտանիքի անդամները, ընկերները վստահ էին, որ իրենց տղամարդիկ Արցախում են, աջակցում են բանակին: Այսպիսի վարքագիծը պայմանաւորուած էր այն հանգամանքով, որ ֆիզիկապէս մօտ գտնուելով սահմանին, Արցախին, տեսնելով ռազմական մեքենաների, զինուժի տեղաշարժերը, հանդիպելով սահմանից վերադարձող կամ գնացող զինծառայողների, կամաւորների, պահեստազօրայինների եւ զրուցելով նրանց հետ, հոգեբանօրէն հաղորդակից էին դառնում այդ գործընթացներին, դառնում դրանց մի մասը, փոխհատուցում էին իրենց չմասնակցութիւնը իրական ռազմական գործողութիւններին, սահմանների պաշտպանութեանը: Այս մեխանիզմը դրսեւորւում էր նաեւ 2020ի Նոյեմբեր-Դեկտեմբեր ամիսներին հոծ զանգուածների այցով Քարվաճառ, մասնաւորապէս Դադիվանք, «հրաժեշտ տալու» Ադրբեջանի վերահսկողութեանը տարածքը յանձնելուց առաջ: Միքանի տասնեակ տղամարդկանց, որոնք եւս այդ զանգուածների մաս էի կազմել, հարցրել ենք, թէ արդեօք պատերազմի օրերին այցելել էին Արցախ, մասնաւորապէս՝ Քարվաճառ, մասնակցել էին սահմանների պաշտպանութեանը, մարդասիրական գործընթացներին: Բնականաբար, պատասխանները եղել են բացասական:

---

[2] М.С. Инкижекова, "Категории 'национальная идентичность' и 'патриотизм' в современном образовательном пространстве", *Знание, Понимание, Умение* (Մ.Ս. Ինկիժեկովա, «'Ազգային ինքնութիւն' եւ 'հայրենասիրութիւն' եզրոյթները ժամանակակից կրթական տարածքում», *Գիտելիք: Հասկացում: Կարողութիւն*), 4:2017, էջ 35:

Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների մէկ այլ դրսեւորում էր զոհուած զինծառայողների հոգեհանգստի, յուղարկաւորութեան արարողութիւններին «պարտաճանաչ» մասնակցելը: Այստեղ եւս, հանդիպելով պատերազմի հետեւանքները արտայայտող տեսարանների, իրենք առերեսւում էին իրականութեանը, մօտ էին գտնւում իրենց վախերին, ցրում անորոշութիւնը՝ փորձելով յաղթահարել վերջիններիս ազդեցութիւնն իրենց հոգեկանի վրայ: Տեսնելով զոհուածի հարազատների վիշտը՝ պատկերացնում էին իրենց ընտանիքի անդամներին նման իրավիճակում, երբ իրենք «զոհուեն», եւ իրենք իրենց արդարացնում էին՝ կիրառելով ինքնարդարացման հոգեբանական պաշտպանական մեխանիզմ, որ չեն ուզում վիշտ պատճառել իրենց հարազատներին, ընտանիքի անդամներին, որ իրենց երեխաները առանց հօր կը մնան, որ իրենց ընտանիքի կարգավիճակը, պատմութիւնը իւրայատուկ է, եւ այդ պատճառով չէին մեկնում առաջնագիծ: Միւս կողմից, վստահ էին, որ հայրենանուէր գործ են անում՝ մասնակցելով զոհուած զինծառայողների հոգեհանգստի, յուղարկաւորութեան արարողութիւններին: Այստեղ գործ ունենք նաեւ փոխհատուցման հոգեբանական պաշտպանական մեխանիզմի դրսեւորման հետ:

«Հայրենասիրութեան» մէկ այլ դրսեւորում էր պատերազմի օրերին սրճարաններում, ռեստորաններում կերուխումներին, խնջոյքներին մասնակցութեան ընթացքում առաջին կենացները սահման պահող, կռուող տղաների, զոհուածների համար «լուրջ, մտահոգ դէմքերով» խմելը: Երեւոյթի հոգեբանական խնդիրն աւելի էր ընդգծւում, երբ այդ «հայրենասէրներն» անմիջապէս ռազմական գործողութիւնների տարածքում տեղակայուած բնակավայրերի բնակիչներ էին եւ հեռացել էին այնտեղից:

Վերոնշեալ ընկերա-հոգեբանական մեխանիզմների, պաշտպանական հակազդումների ուսումնասիրութիւնը մեզ յանգեցնում այն զրակացութեան, որ հայրենասիրութեան ձեւաւորումանը զուգահեռ կարեւոր է ազգային ինքնագիտակցութեան ձեւաւորումը, որը «*ընկերայնացման գործընթացում ձեւաւորուող պատկանելութեան գիտակցութեան էութիւնն է, անհատի վերագրուելիութիւնն է որոշակի պետութեան (ազգի)» քաղաքացիներին: Ազգային ինքնագիտակցութեան ձեւաւորման կարեւոր հոգեբանական մեխանիզմներ հանդէս են գալիս ազգային նոյնականացումը եւ ռեֆլեքսիան որպէս մարդու կողմից ինքն իրեն ճանաչողութեան աղբիւր*»[3]:

Մեր հետազօտութեան ընթացքում դիտարկեցինք նաեւ հայրենասիրութեան սխալ ընկալման դէպքեր: Այն թիւրիմացաբար ընկալւում է որպէս գործնական կարողունակութիւններ չենթադրող, «ոչ-

[3] Նոյն, էջ 37:

շօշափելի», վերացական երեւոյթ: Մեր հասարակութեան ընկալումներում գրեթէ նոյնացուում են հայրենասիրութիւնն ու ռազմահայրենասիրութիւնը: Երբ ասում ենք ռազմահայրենասէր, նկատի ունենք, որ անձը ոչ միայն խօսքային մակարդակում, իր մտքերում, զգացողութիւններում է սիրում իր հայրենիքը, պետութիւնը, այլ անկախ իր մասնագիտութիւնից, զբաղուածութեան ոլորտից, նաեւ ունի զինուորական պատրաստութեան որոշակի մակարդակ, ֆիզիկական որակներ, դիմացկունութիւն, տիրապետում է զէնքին, մարտավարութեան, մարտարուեստի որոշ հնարքներին, ինքնագոյատեւման, առաջին բուժօգնութեան կարողութիւններին: Եւ այս ամէնի հետ միասին հոգեբանօրէն իրեն պատրաստ է համարում հայրենիքի զինուած պաշտպանութեանը եւ այդ ուղղութեամբ իրականացնում է նպատակաուղղուած, ծրագրուած, համակարգուած որոշակի գործողութիւններ: «*Հայրենասիրութեան կառուցուածքում կարելի է առանձնացնել 3 բաղադրիչ. 1) իմացական (գիտելիքներ), 2) յուզական բաղադրիչ (յուզական գնահատականներ), 3) բեղմնաւոր բաղադրիչ (գործելու պատրաստակամութիւն)*»[4]:

Հայրենասիրութեան ընկալման ընկերա-հոգեբանական փոխակերպումների յաջորդ դրսեւորումը «կեղծ հայրենասիրութիւնն էր»: Տարբեր մակարդակներում՝ ընկերական միջավայրում, աշխատանքային խմբում, ընկերական ցանցերում, հանրային միջոցառումներում բազմաթիւ անձինք, նոյնիսկ հանրային դէմքեր, ելոյթներում, զրոյցներում, կենացներում իրենց ներկայացնում են որպէս հայրենասէրներ: Աւելին, հանրային, քաղաքական կեանքում «+»ներ էին հաւաքում՝ ընկերական ցանցերում տարածելով համազգեստով լուսանկարներ թիկունքային զօրամասերում, առաջնագծից հեռու գտնուող յենակէտերում, խաղաղ բնակավայրերում շրջում էին թանկարժէք կտորից կարուած զինուորական համազգեստով, քննարկում միմեանց հետ ստեղծուած իրավիճակը սրճարաններում որպէս ազգի, պետութեան ճակատագրով մտահոգ անձինք: Ընդ որում, հոգեբանական պաշտպանական մեխանիզմների դրսեւորման հիմնական առանձնայատկութիւնն այն է, որ դրանք ենթագիտակցական են, եւ այդ անձինք հիմնականում չեն գիտակցում, որ կատարում են ինքնարդարացումներ, փոխհատուցումներ:

«Ի՞նչ է Ձեր համար հայրենասիրութիւնը» բաց հարցին 500 աշակերտներից ստացել ենք հետեւեալ պատասխանները.

---

[4] С.В. Мещерякова, “Патриотизм как ценностно-смысловое образование в структуре личности российского предпринимателя” (Ս.Վ. Մեշչերիակովա, «Հայրենասիրութիւնը որպէս արժէքա-իմաստային կառոյց ռուսաստանեան ձեռնարկատիրոջ անձի կառուցուածքում», հոգ. գիտ. թեկն. ատենախօսութեան սեղմագիր, Տամբով, 2008:

երբ պաշտպանում ես հայրենիքդ՝ հայրենասիրութիւն է՝ 94,
սիրում ես հայրենիքդ՝ 19,
բարձրացնում ես եռագոյնը՝ 25,
գնում ես բանակ ծառայելու՝ 189,
չես ուզում գնալ այլ երկրում ապրելու՝ 18,
ծառ ես տնկում՝ 4,
սիրում ես քո բնակավայրը, տունը՝ 28,
սիրում ես մայրենի լեզուն՝ 18,
լաւ ես սովորում դպրոցում՝ 24,
պատրաստ ես ծառայել եւ կեանքդ զոհել հայրենիքի համար՝ 66,
դժուարանում եմ պատասխանել՝ 15:

«Նշուածներից ո՞ր պետութիւններն էք համարում թշնամի» բաց հարցին 500 աշակերտներ պատասխանել են հետեւեալ կերպ.

Իրան	Վրաստան	ԱՄՆ	Ռուսաստան	Ադրբեջան	Թուրքիա
		24	25	331	120

«Ձեզ պատրաստ համարու՞մ էք բանակում ծառայութեան համար» հարցին տրուել են հետեւեալ պատասխանները (500 աշակերտ).

Այո	ոչ	Դժուարանում եմ պատասխանել	Հրաժարւում եմ պատասխանել
288	93	116	3

«Թուարկէք ՀՀ ազգային հերոսներին» առաջադրանքին 500 աշակերտ տուել են հետեւեալ պատասխանները.-

Մոնթէ Մելքոնեան՝ 185, Վազգէն Սարգսեան՝ 201, Սասունցի Դաւիթ՝ 4, Անդրանիկ Օզանեան՝ 58, Կարէն Դեմիրճեան՝ 26, Վահագն Ասատրեան՝ 12, Արկադի ՏէրԹադեւոսեան՝ 10, Քըրգ Քըրգորեան՝ 6, Շարլ Ազնաւուր՝ 34, Թաթուլ Կրպէեան՝ 29, մարշալ Բաղրամեան՝ 17:

«Եթէ հնարաւորութիւն ունենայիք չծառայել բանակում, կ'օգտուէի՞ք այդ հնարաւորութիւնից» հարցին 500 աշակերտներից ստացուել են հետեւեալ պատասխանները.-

Այո, առանց երկար բարակ մտածելու	Աւելի շատ՝ այո	Ոչ, մտքովս էլ չէր անցնի	Աւելի շատ՝ ոչ	Դժուարանում եմ պատասխանել	Հրաժարւում եմ պատասխանել
29	36	91	137	175	32

Այստեղ առկայ են բաւականին մտահոգիչ տուեալներ. թէեւ չի ցանկանում պարտադիր ժամկէտային զինուորական ծառայութեան անցնել հարցուածների 13%ը, այնուամենայնիւ՝ 41,4%ը դժուարացել է դրական կամ ընդհանրապէս, որեւէ դիրքորոշում յայտնել: Կարծում ենք, որ անհրաժեշտ է իրականացնել գիտական հաւաստի հետազօտութիւն

նախազօրակոչային, զօրակոչային տարիքի դեռահասների, պատանիների շրջանում, բացայայտել նման անհանգստացնող դիրքորոշումների պատճառները եւ իրականացնել նպատակաուղղուած ընկերա-հոգեբանական, մանկավարժական աշխատանքներ:

«Կը ցանկանա՞ք, որ Ձեր որդին ծառայի բանակում» հարցին 400 հարցուողներից ստացուել են հետեւեալ պատասխանները.-

Այո	ոչ	Դժուարանում եմ պատասխանել	Հրաժարւում եմ պատասխանել
257	135	84	24

Առաջին հայեացքից 400 հարցուողների 64,25%ը՝ 257 հոգին դրական են պատասխանել հարցին: Սակայն որակական հարցազրոյցի ընթացքում նշում էին, որ իրենց դրական պատասխանը պայմանաւորուած է որոշակի պայմաններով. սահմանները պէտք է լաւ ամրացուած լինեն, նորագոյն ռազմական սպառազինութիւն, զէնք պէտք է լինի, գրագէտ, արհեստավարժ հրամանատարներ լինեն, բոլորի որդիները հաւասար ծառայեն, հակառակ դէպքում մտավախութիւն ունեն՝ արդեօ՞ք իմաստ ունի ուղարկել իրենց որդիներին զնուորական ծառայութեան:

«Ի՞նչ կը տայ Ձեզ բանակում ծառայելը» հարցին 500 աշակերտներից ստացուել են հետեւեալ պատասխանները.-


Կեանքի փորձ	Առնկնթն.	Մնգիտթն.	Ոչինչ	Հասնթն.	Հայրենիքը պաշտպանելու հնարաւորթն.	Ընկեր ներ
184	31	86	131	78	92	87

Իսկ ահա ժամկէտային պարտադիր զինուորական ծառայութիւն կրող 2000 ժամկէտայիններից արդէն՝ «Ի՞նչ տուեց Ձեզ բանակում ծառայելը» հարցին ստացուել են հետեւեալ պատասխանները.- Կեանքի փորձ՝ 475, ինքնավստահութիւն՝ 257, մասնագիտութիւն՝ 191, հասունութիւն՝ 112, Հայրենիքը պաշտպանելու հնարաւորութիւն՝ 81, ընկերներ՝ 59, դիմացկունութիւն՝ 132, ինքնուրոյն խնդիրները լուծելու հնարաւորութիւն՝ 654, ինքնաճանաչման հնարաւորութիւն՝ 289, վատ յոյզեր՝ 243, ոչինչ՝ 241, դժուարանում եմ ասել՝ 44, ժամանակի անիմաստ վատնում՝ 73:

Աշակերտների եւ զինծառայողների պատասխանների համեմատութիւնը մեզ հնարաւորութիւն է տալիս եզրակացնելու, որ զինուորական ծառայութեան ընթացքում, յատկապէս, երբ տղաները մասնակցում են մարտական հերթապահութեան, մարտական գործողութիւնների, որակական առումով փոխւում են զինուորական ծառայութեան իմաստի, կարեւորութեան, նշանակութեան մասին պատկերացումները, աւելանում է իրականութիւնը, դրա վրայ առաջացած յոյզերը: Այսպէս, մինչեւ զօրակոչուելը հարցուածների 26,2%ը կարծում է, որ բանակը, զինուորական ծառայութիւնը իրենց ոչինչ չի տայ, սակայն

զինուորական ծառայութեան անցնելուց յետոյ այդ թիւը նուազում է՝ դառնալով հարցուածների 12,05%: Այս փաստը եւս վկայում է, որ կարեւորւում է զինուորական ծառայութեանը նախազօրակոչային տաիքում պատանիների հոգեբանական պարաստութեան գործընթացը:

«Ի՞նչ պլաններ ունէք զօրացրուելուց յետոյ» հարցին 2000 ժամկէտայիններից ստացուել են հետեւեալ պատասխանները.-



ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Հանրակրթական դպրոցների աշակերտների հետ իրականացուած հետազօտութիւնների արդիւնքում գալիս ենք եզրայանգումների, որ դեռեւս մշակուած, ներդրուած չեն դպրոցականների՝ հանրակրթութեան պետական չափորոշչով սահմանուած հայրենասիրութեան, անձնային այլ որակների ձեւաւորուածութեան մակարդակի գնահատման մեխանիզմներ, գործիքակազմ, չափելի ցուցիչներ, չափանիշեր՝ ի տարբերութիւն գիտելիքների: Յիրաւի, հանրակրթական դպրոցներում շեշտադրումն իրականացւում է հիմնականում առանձին առարկաներից մնացորդային գիտելիքների մակարդակի ապահովման, որոշակիօրէն նաեւ մտածողութեան գործառնութիւնների զարգացման վրայ:

Հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ թէեւ դպրոցներում իրականացւում են հայրենասիրական բովանդակութեամբ տարբեր միջոցառումներ, սակայն որեւէ դպրոցում որակական ցուցիչներով չի գնահատւում դրանց արդիւնաւէտութիւնը, ակնկալուող վերջնարդիւնքների ձեռքբերման մակարդակը, դրանց համապատասխանութիւնը հանրակրթական պետական չափորոշչով սահմանուած համապատասխան կրթական վերջնարդիւնքներին:

Ըստ մեր դիտարկումների վերլուծութեան՝ հայրենասիրութեան դաստիարակութեանը վերաբերող միջոցառումները, հայագիտական առարկաները չեն ապահովում կամ դժուարութեամբ են ապահովում հայրենիքի զինուած պաշտպանութեանը, ժամկէտային պարտադիր զինուորական ծառայութեանը պատրաստակամութեան ձեւաւորումը:

«Նախնական զինուորական պատրաստութիւն» առարկայի 8-12րդ դասարանների չափորոշչում հիմնական (միջին) ծրագրում սահմանուած նպատակում եւս հայրենասիրութեան, հայրենիքի զինուած պաշպանութեան մասին խօսք չկայ[5]: Ողջունելի է, որ միջնակարգ (աւագ) ծրագրի նպատակում առանձնացուում են նաեւ հայրենիքի զինուած պաշտպանութեան, տարբեր բաժինների եւ թեմաների համար որպէս հիմնական գաղափարներ հայրենասիրական դաստիարակութեան վերաբերեալ ձեւակերպումներ, ռազմամարզական ճամբարների գաղափարը: Սակայն այստեղ առկայ է անհամապատասխանութիւն միջնակարգ (աւագ) ծրագրի նպատակի եւ վերջնարդիւնքների միջեւ: Առարկայի վերջնարդիւնքներում հայրենիքի զինուած պաշտպանութեան պատրաստակամութեան, հայրենասիրութեան մասին ձեւակերպում չկայ:

Ելնելով վերոնշեալից՝ առաջարկում ենք մշակել հայրենասիրութեան գնահատման որոշակի չափանիշեր, ցուցիչներ, որոնք կը լինեն առարկայական, չափելի, որոնց կ'անդրադառնանք այլ յօդուածներում:

ԼՈՒԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Ամփոփելով կատարուած հետազօտական աշխատանքի արդիւնքները, բացայայտուած խնդիրները, առաջարկում ենք լուծման հոգեբանական, ընկերա-մանկավարժական հետեւեալ ուղիները.-

1. Հրատապ անհրաժեշտութիւն է դարձել ազգային գաղափարախօսութեան, երիտասարդների ազգային դաստիարակութեան հայեցակարգի մշակումը: Այդ գործընթացներում անհրաժեշտ է հաշուի առնել եւ անդրադառնալ հետեւեալ հարցերին.

- Ո՞վ է հայը (էթնոհոգեբանական, պատմագիտական վերլուծութիւն).
- Ի՞նչպիսին է եւ ի՞նչպիսին պէտք է դառնայ ԻԱ. դարի եւ ապագայի հայ քաղաքացին, ի՞նչպիսի արժէքների (նաեւ կրօնադաւանաբանական) կրող է, անկախ նրանից, թէ որ երկրում է ապրում.
- Ո՞վ է հայ երիտասարդը, ի՞նչ առաքելութիւն ունի (ազգային, պետական նշանակութեան).
- Ո՞րը պէտք է լինի հայ երիտասարդի գաղափարաբանութիւնը.
- Ի՞նչպիսին պէտք է լինի հայ երիտասարդի հոգեբանական, էթնոհոգեբանական նկարագիրը, կերպարը.

[5] ՀՀ ԿԳՄՍ նախարարի 30.04.2021ի 17-Լ հրաման «2021-2022 ուսումնական տարում ՀՀ Տաւուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատութիւններում փորձարկելու նպատակով «Նախնական զինուորական պատրաստութիւն» առարկայի փորձնական չափորոշիչը եւ ծրագրերը (8-12րդ դասարաններ)» հաստատելու մասին:

- Որո՞նք են անձնային եւ փոխանցելի՝ ընդհանրական այն հիմնական խումբ-որակները, ճարտարութիւնները, որոնց պէտք է տիրապետի ժամանակակից հայ երիտասարդը:

2. Ստեղծուելիք փաստաթուղթը պէտք է ունենայ հանրութեան բոլոր խմբերի համար մատչելի, ընկալելի ձեւակերպումներ, աւելին՝ կարելի է քննարկել հարց ու պատասխանի ձեւով ներկայացնելու նպատակայարմարութիւնը:

3. Անհրաժեշտ է ստեղծել աշխատանքային խումբ, որում ընդգրկուած լինեն ՀՀ տարբեր գերատեսչութիւնների համապատասխան ստորաբաժանումների, Սփիւռքի ներկայացուցիչներ, բուհերի համապատասխան ամբիոնների մասնագէտներ, կրթութեան, մշակոյթի, ռազմական, հոգեւոր դասի առանձին գործիչներ, գիտնականներ, հոգեբաններ, ինչպէս նաեւ հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչներ, որոնք կը մշակեն ազգային գաղափարախօսութեան, երիտասարդների դաստիարակութեան ազգային հայեցակարգի նախագիծ:

4. Ազգային գաղափարախօսութեան, երիտասարդների դաստիարակութեան ազգային հայեցակարգի հաստատումից յետոյ վերանայել հանրակրթութեան չափորոշիչները, դրանցում ռազմահայրենասէր ազգային քաղաքացուն բնութագրող կրթական ելքային արդիւնքները բխեցնել ստեղծուած վերոնշեալ փաստաթղթերի բովանդակութիւնից:

5. Անհրաժեշտ է մշակել եւ ներդնել դպրոցականների՝ հանրակրթութեան պետական չափորոշչով սահմանուած հայրենասիրութեան, ինչպէս նաեւ անձնային այլ որակների ձեւաւորուածութեան մակարդակի գնահատման մեխանիզմներ, գործիքակազմ, չափելի ցուցիչներ, չափանիշեր:

6. Դպրոցական դասագրքերի գնահատման չափանիշերում կարեւորել ազգային կրթութեան, հայրենասիրական դաստիարակութեան բաղադրիչը:

7. Կարեւորում ենք, որ հանրակրթական դպրոցում սովորողների հայրենասիրութեան դաստիարակութեան գործընթացում նպատակաուղղուած ձեւով շեշտադրել էթնիկական նոյնականացման, էթնիկական ընկերայնացման անհրաժեշտութիւնը, նախատեսել այդ նպատակների ձեռքբերման համար որոշակի գործընթացներ, գործողութիւններ:

8. Վերոնշեալ առաջարկների իրագործման որոշումների, գործընթացների, գործողութիւնների համար բոլոր փուլերում հիմք դարձնել գիտական, չափելի, յուսալի, փորձառական հետազօտութիւնների արդիւնքները:

THE SOCIO-PSYCHOLOGICAL SHIFTS IN THE PERCEPTION AND MANIFESTATIONS OF PATRIOTISM IN POST-WAR ARMENIA

(SUMMARY)

Hagop Tatiossian
tadevosyanhakob40@aspu.am

The study focuses on the socio-psychological shifts in the perception and manifestation of patriotism in post-war Armenia and proposes ways to address the identified problems.

The paper examines the results of the research the author conducted towards identifying socio-psychological shifts in the perception and manifestations of patriotism in the Republic of Armenia from the first Artsakh War to the present day, two and a half years after the 2020 war. The survey covered a wide variety of groups including secondary school students, university students, prospective conscripts as well as those who have completed their military service, and parents of soldiers who were killed during the Artsakh wars.

Based on the results of the survey, the paper concludes that modifications and improvements should be implemented in various categories of education, like general education, professional educational programs, personal competence courses. The author argues that these changes are necessary for the shaping of the individual person's ethnic identification and ethnic socialization, which eventually lead to consolidating civic citizenship in the country.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ 1878-1923ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՄԲ (1991-2022)

Լիլիթ Յովհաննիսեան
lilithovannisian@yahoo.com

Հայկական Հարցի ուսումնասիրումը եղել եւ մնում է հայ պատմագիտութեան ամենաարդիական ու բազմաշերտ հիմնահարցերից մէկը: Դրա վկայութիւնը հիմնահարցին նուիրուած մեծաթիւ ուսումնասիրութիւններն են՝ կատարուած թէ՛ Սփիւռքում եւ թէ՛ Հայաստանում՝ 3 հանրապետութիւնների տարիներին: Հաշուի առնելով խնդրի ծաւալը, ինչպէս նաեւ մէկ զեկուցման մէջ նշուած ուղղութիւններով եւ ժամանակային սահմաններում այն ամբողջութեամբ ներկայացնելու անհնարինութիւնը՝ սոյն զեկուցմամբ կը ներկայացուի եւ կը գնահատուի 1991-2022ի ընթացքում Հայաստանի երրորդ հանրապետութեան պատմագիտութեան մէջ կատարուած աշխատանքը Հայկական Հարցի դիւանագիտական բովանդակութեան 1878-1923ի փոխակերպումները լուսաբանելու ուղղութեամբ:

Աշխատանքում որպէս մեկնակէտ դիտարկուում է 1991ին Հայաստանի անկախութեան վերականգնումը, քանի որ այն հայ պատմագիտութեան առջեւ բացեց զարգացման լայն հնարաւորութիւններ՝ գաղափարաքաղաքական կապանքներից ազատ, անկաշկանդ եւ ազգային շահերի յենքի վրայ հետազօտելու եւ վերարժեւորելու հայ ժողովրդի անցեալը, դրանից ժառանգուած հիմնահարցերը: Նոր պայմաններում խորհրդահայ պատմագիտութեան մշակած մի շարք մօտեցումներ հիմք հանդիսացան առաւել հիմնարար, համապարփակ հետազօտութիւնների համար: Միեւնոյն ժամանակ նախադրեալներ ստեղծուեցին մինչ այդ մասնակիօրէն կամ միակողմանիօրէն ուսումնասիրուած հարցերը համակողմանիօրէն հետազօտելու, Հայկական Հարցի դիւանագիտական բովանդակութեանը վերաբերող պատմական փաստերն ու երեւոյթները վերագնահատելու, անաչառ եզրայանգումներ կատարելու համար:

Հայկական Հարցի արդի հայաստանեան պատմագրութեան զարգացման ընթացքը գնահատելու տեսանկիւնից կարեւոր է նրան նախորդած, այսինքն՝ խորհրդային, ժամանակաշրջանի գիտական արդիւնքի արժեւորումը: Ուշագրաւ է, որ կոմունիստական գաղափարաքաղաքական պարտադրանքի պայմաններում Հայկական Հարցի պատմութիւնը եղել է հայ պատմաբանների ուշադրութեան կենտրոնում: Հիմնահարցի վերաբերեալ հիմնարար աշխատութիւնների հեղինակ են՝ Առաքել Բաբախանեանը

(Լէօ)[1], Բագրատ Բորեանը[2], Ջոն Կիրակոսեանը[3], Մակիչ Արզումանեանը[4], Մկրտիչ Ներսիսեանը[5], Երուանդ Սարգսեանը[6]:

Պատմագիտական աշխատութիւններում, մասնաւորապէս, Հայկական ՍՍՀ գիտութիւնների ակադեմիայի հրատարակած *Հայ ժողովրդի պատմութիւն* ութհատորեակում Հայկական Հարցը սահմանուած է որպէս թուրքական լծից արեւմտահայութեան եւ Արեւմտեան Հայաստանի ազատագ-

---

[1] Լէօ, *Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հտր. Ա*, «Շաղիկ», Երեւան, 1994 (առաջին հրատ.՝ Փարիզ, տպագրութիւն Պահրի եղբարց, 1934):

[2] Б. А. Борьян, *Армения, международная дипломатия и СССР*, Ч. I; II (Հայաստանը, միջազգային դիւանագիտութիւնը եւ ՍՍՀՄը, մաս I; II), «ГИЗ», Մոսկուա-Լենինգրադ, 1928 եւ 1929:

[3] Ջ. Ս. Կիրակոսեան, *Առաջին համաշխարհային պատերազմը եւ արեւմտահայութիւնը 1914–1916 թթ.*, «Հայաստան», Երեւան, 1965 (2րդ լրացուած հրատ.՝ 1967). նաեւ նոյնի՝ *Հայաստանը միջազգային դիւանագիտութեան եւ սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում (1828–1923)*, խմբ.՝ պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսեան, «Հայաստան», Երեւան, 1972. նաեւ նոյնի՝ *Բուրժուական դիւանագիտութիւնը եւ Հայաստանը (XIX դարի 70ական թթ.)*, «Հայաստան», Երեւան, 1978. նաեւ նոյնի՝ *Բուրժուական դիւանագիտութիւնը եւ Հայաստանը (XIX դարի 80ական թթ.)*, «Հայաստան», Երեւան, 1980. նաեւ նոյնի՝ *Երիտթուրքերը պատմութեան դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ.-1914 թ.)*, գիրք Ա. եւ Բ., «Հայաստան», Երեւան, 1982 եւ 1983:

[4] Մ. Վ. Արզումանեան, *Հայաստան 1914-1917 թթ.*, «Հայաստան», Երեւան, 1969:

[5] *Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов* (Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում. փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, խմբ.՝ Մ. Գ. Ներսիսեան, կազմ.՝ Մ. Գ. Ներսիսեան, Ռ. Գ. Սահակեան), «Հայաստան», Երեւան, 1983 (գիրքն առաջին անգամ հրատարակուել է 1966ին՝ ռուսերէն եւ վերահրատարակուել 1982ին), նաեւ՝ *Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում. փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու*, կազմ.՝ Մ. Գ. Ներսիսեան, Ռ. Գ. Սահակեան, խմբ.՝ Մ. Գ. Ներսիսեան, «Հայաստան», Երեւան, 1991:

[6] Ե. Սարգսեան, Ռ. Սահակեան, *Հայ ժողովրդի նոր շրջանի պատմութեան նենգափոխումը թուրք պատմագրութեան մէջ*, «Հայպետհրատ», Երեւան, 1963. նաեւ՝ Ե. Կ. Սարգսեան, *Թուրքիան եւ նրա նուաճողական քաղաքականութիւնը Անդրկովկասում, 1914-1918 թթ.*, «Հայաստան», Երեւան, 1964. նաեւ Է. Ք. Саркисян, *Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны* (Օսմանեան կայսրութեան նուաճողական քաղաքականութիւնը Անդրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի նախօրէին եւ տարիներին), ԳԱ հայկ. ՍՍՀ, Երեւան, 1962. նաեւ նոյնի՝ *Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв.* (Օսմանեան կառավարութեան քաղաքականութիւնը Արեւմտեան Հայաստանում եւ տէրութիւնները ԺԹ. դարի վերջին քառորդին եւ Ի. դարի սկզբին), ԳԱ հայկ. ՍՍՀ, Երեւան, 1972:

րման, հայ ժողովրդի ինքնորոշման ու հայկական պետականութեան վերականգնման հարց, որը միջազգայնացուել է 1877–1878՝ ռուս–թուրքական պատերազմից յետոյ՝ 1878ին Սան Ստեֆանոյի հաշտութեան ռուս–թուրքական նախնական պայմանագրով եւ վեց մեծ տէրութիւնների ու Օսմանեան Թուրքիայի միջեւ ստորագրուած Բեռլինի միջազգային պայմանագրով: Ընդ որում, նշելով, որ ցարիզմն Օսմանեան կայսրութեան դէմ պատերազմները վարում էր յօգուտ իր երկրի տիրող դասակարգի շահերի, խորհրդահայ պատմագիտական աշխատութիւններում շեշտւում էր, որ իրենց առարկայական հետեւանքներով դրանք կրում էին առաջադիմական բնոյթ, քանի որ արագացնում էին սուլթանական բռնութիւնից բալկանեան ժողովուրդների, հայերի եւ միւս ճնշուած ժողովուրդների ազատագրումը:

Հայկական Հարցի խորհրդահայ պատմագրութեան գնահատմամբ, եւրոպական կայսերապաշտների համար Հայկական Հարցը սոսկ միջոց էր միջամտելու Օսմանեան կայսրութեան (որը ԺԹ. դարավերջին վերածուել էր կայսերապաշտ տէրութիւնների կիսագաղութի) ներքին գործերին եւ ճնշում գործադրելու նրա վրայ՝ նոր զիջումներ ու շահոյթներ կորզելու համար: Նշւում էր, որ մեծ տէրութիւնների միջեւ եղած հակասութիւնների ու դրանց միջեւ հմտօրէն խուսանաւելու՝ սուլթան Աբդուլ Համիդ Բ.ի դիւանագիտութեան հետեւանքով է, որ չիրագործուեցին ինչպէս 1895ի մայիսեան բարենորոգումների ծրագիրը, այնպէս էլ 1913ի Արեւմտեան Հայաստանում բարենորոգումների ռուս-գերմանական փոխզիջումային ծրագիրը: Աւելին, 1895-1896ի սուլթանական, 1915-1918ի երիտթուրքական, իսկ 1920-1922ի քեմալական կառավարութիւնների անմիջական պատասխանատուութեամբ հայ ժողովուրդը ենթարկուեց ցեղասպանութեան: Խորհրդահայ պատմագրութեան գնահատմամբ, Անկախ եւ Միացեալ հայկական պետութեան ստեղծման փոխարէն 1921-1923ին Լոնդոնի, Քէ-Դ'Օրսէի եւ Լոզանի միջազգային խորհրդաժողովների որոշումները Թուրքիայում հայկական «ազգային օջախ» ստեղծելու, ապա այն հայ ազգային փոքրամասնութեան իրաւունքների հարցով փոխարինելու վերաբերեալ ոչ այլ ինչ էին, քան մեծ տէրութիւնների կողմից Հայկական Հարցը վերջնականապէս լքելու եւ «փակելու» վկայութիւն:

Կաշկանդուած լինելով կոմունիստական գաղափարախօսութեան եւ կապանքներով՝ խորհրդահայ պատմագիտութիւնը հպանցիկ եւ սովետական քաղաքական հաշիւներով բացառապէս քննադատական տեսանկիւնից է անդրադարձել ինչպէս 1915-16ի Ասիական Թուրքիայի մասնատման վերաբերեալ անգլօ-ֆրանս-ռուսական գաղտնի բանակցութիւններին եւ համաձայնագրերին, այնպէս էլ 1919-20ի Փարիզի հաշտութեան միջազգային վեհաժողովում Հայկական Հարցի դիւանագիտական քննարկումներին եւ 1920 Օգոստոսի 10ի Սեւրի հաշտութեան պայմանագրում Հայաստանին ու հայ ժողովրդին վերաբերող յօդուածներին, Ռուսաստանի

Ժամանակաւոր կառավարութեան վարած քաղաքականութեանը Հայկական Հարցում: Դրան հակառակ, հանգամանօրէն ներկայացուել եւ գերագնահատուել է Խորհրդային Ռուսաստանի դերը թուրք ազգայնականների նոր հարուածներից հայ ժողովրդին պաշտպանելու, Խորհրդային Հայաստանն աշխարհասփիւռ հայերի ազգահաւաքման կենտրոն դարձնելու գործում: Մասնաւորապէս՝ այդ տեսանկիւնից են գնահատուել 1917 Դեկտեմբերի 29ին Ժողովրդական կոմիսարների խորհրդի ընդունած «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը, 1918 Մարտի 3ի Բրեստ-Լիտովսկի հաշտութեան պայմանագիրը Խորհրդային Ռուսաստանի ու Քառեակ միութեան պետութիւնների միջեւ, 1921 Մարտի 16ի Մոսկուայի ռուս-թուրքական պայմանագիրը «բարեկամութեան եւ եղբայրութեան վերաբերեալ»: Այս մօտեցման հետեւանքով հնարաւոր չէր անաչառ գնահատել Հայկական Հարցում մեծ տէրութիւններից իւրաքանչիւրի վարած քաղաքականութեան, դրանց հիմքում ընկած պետական շահերի եւ հետաքրքրութիւնների ընդհանրութիւնները, տարբերութիւններն ու փոխազդեցութիւնը վերհանել եւ արժեւորել Հայկական Հարցի դիւանագիտական բովանդակութեան աստիճանական փոփոխութիւններն ու դրանց պատճառահետեւանքային կապերը, կատարել գիտագործնական եզրակացութիւններ եւ առաջարկներ: Նաեւ հարկ է նշել, որ խորհրդային ժամանակաշրջանում Հայկական Հարցը գլխաւորապէս ներկայացուել է որպէս Հայոց Ցեղասպանութեան թուրքական քաղաքականութեան եւ թուրքական տիրապետութեան դէմ հայ ժողովրդի ազատագրական պայքարի հարց, իսկ այդ հարցում մեծ տէրութիւնների քաղաքականութիւնը հետազօտուել է առանձին-առանձին ու բացառապէս քննադատական հարթութեան վրայ:

1991ին Հայաստանի անկախութեան վերականգնումից հետո անհրաժեշտաբար վերարժեւորւում է Հայկական Հարցի պատմութեան վերաբերեալ պատմաքաղաքական ու կուսակցական բնոյթի այն հսկայական գրականութիւնը, որ ստեղծել էր խորհրդային պատմագիտութիւնն իր գոյութեան 70 տարիների ընթացքում: Յայտնի է, որ այդ գրականութեան նպատակը ոչ միայն եւ ոչ այնքան պատմական ճշմարտութեան վերհանումն է եղել, որքան գաղափարախօսական ճակատում հակախորհրդային-հակակոմունիստական ուժերի դէմ պայքարելը: Ըստ այդմ, խորհրդահայ պատմագիտութեան քննադատութեան գլխաւոր թիրախը եղել է ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին հայ իրականութեան մէջ ամենաազդեցիկ ազգային կուսակցութիւնը՝ Հայ յեղափոխական դաշնակցութիւնը (ՀՅԴ), իր գործունէութեան հետ կապուած ազգային հիմնահարցերով հանդերձ: «*Խորհրդահայ հեղինակներն աշխատութիւններ են գրել պատմութեան դաշնակցական նենգափոխումների ու խեղաթիւրումների վերաբերեալ, սակայն իրականում տարուելով* գաղափարաքաղաքական կոյր քննադատութեամբ՝ աւելի յաճախ հենց իրենք են աղաւաղել ու ծուռ հայե-

լու մէջ ներկայացրել հայոց քաղաքական պատմութեան շատ հիմնահարցեր: Միւս կողմից գիտական անաչառութիւնը պահանջում է նշել, որ Սփիւռքի հեղինակները եւս երբեմն շրջանցել են իրենց կուսակցութիւնների անցեալին վերաբերող ոչ հաճելի փաստերը եւ փորձել են գունազարդել դրանց պատմութիւնը: Այստեղից հետեւում է, որ կուսակցական-հատուածական նեղ շահերը եւ գաղափարաքաղաքական անհանդուրժողականութիւնը երբեք չեն կարող նպաստել պատմագիտութեան զարգացմանը, անցեալի պատմական ճշմարտութեան վերհանմանը»[7՝] նկատում է պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Արարատ Յակոբեանը՝ արտայայտելով հայաստանեան գիտական շրջանակների մտահոգութիւնը:

ՀՀ անկախութեան երեսուներկու տարիների ընթացքում Հայկական Հարցի պատմագրութեան զարգացմանը մեծապէս նպաստել եւ նպաստում են՝ Հայաստանի Հանրապետութեան եւ Սփիւռքի գիտական հաստատութիւնների ու պատմաբանների միջեւ գործակցութեան ամրապնդումը[8], տարբեր երկրների ազգային արխիւային ֆոնդերում հայկական

---

[7] Ա. Յակոբեան, «Ալեքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի պայմանագրերի լուսաբանումը հայ պատմագրութեան մէջ», *Պատմաբանասիրական հանդէս*, 3:2006, էջ 36:

[8] Հայկական Հարցի եւ Հայոց ցեղասպանութեան հիմնախնդիրների ուսումնասիրութեան ոլորտում Հայաստանի ու Սփիւռքի գիտնականների միջեւ գործակցութեան ամրապնդմանն է միտուած Հայաստանի Հանրապետութիւնում սփիւռքահայ յայտնի մասնագէտների գիտական վաստակի արժեւորումը, նրանց աշխատութիւնների թարգմանութիւնը, հրատարակութիւնը, նաեւ վերահրատարակութիւնը հայերէն ու ռուսերէն լեզուներով: Այսպէս, դեռեւս 1990ին, ՀՍԽՀ ԳԱ արտասահմանեան անդամի պատուաւոր կոչմանն է արժանացել Լոս Անջելըսի Կալիֆորնիայի համալսարանի Հայաստանի պատմութեան ամբիոնի ղեկավար, պրոֆեսոր Ռիչարդ Յովհաննիսեանը: Նրա «*Հայաստանի Հանրապետութիւն* անգլերէն քառահատոր կոթողային աշխատութիւնը 2005–16ին թարգմանուել է հայերէն, իսկ *1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետութեան միջազգային յարաբերութիւնները* մենագրութիւնը 2007ին՝ ռուսերէն: Հայերէն թարգմանուել կամ ՀՀ ԳԱԱի, ՀՀ ԳԱԱ Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի աջակցութեամբ տպագրուել են նաեւ ընկերաբան ու իրաւագէտ, Նիւ Եորքի համալսարանի ընկերաբանութեան պրոֆեսոր, Հայոց Ցեղասպանութեան հիմնախնդրի գիտակ Վահագն Տատրեանի (1926–2019), ՀՀ ԳԱԱ արտասահմանեան անդամ եւ պատուաւոր դոկտոր (1997) արգենտինահայ պատմաբան ու իրաւաբան Պասկալ Օհանեանի (1932–2018), ՀՀ ԳԱԱ պատուաւոր դոկտոր (2001), Վիեննայի համալսարանի դոկտոր Արտեմ Օհանջանեանի, բանասէր, պատմաբան, գրականագէտ, ՀՀ ԳԱԱ արտասահմանեան անդամ (2011), Օքսֆորդի եւ Միչիգանի համալսարանների պրոֆեսոր, ԱՄՆի հայագէտների ընկերակցութեան նախագահ Գէորգ Բարդակչեանի, Սորբոնի միջազգային յարաբերութիւնների ինստիտուտի անդամ Արթուր Բէյլերեանի (1925–2005) աշխատութիւնները: 2014ին ՀՀ ԳԱԱ արտասահմանեան անդամ է

Հարցի եւ Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ նորայայտ փաստաթղթերը գիտական շրջանառութեան մէջ դնելը, հայաստանեան գիտահետազօտական հաստատութիւններում հիմնահարցի համակողմանի ուսումնասիրման ուղղութեամբ տարուող կազմակերպական հմուտ աշխատանքը՝ ներառեալ Հայկական Հարցի պատմութեան տարբեր հիմնահարցերի նպատակային ընտրութիւնն ու երիտասարդ կադրերի ներգրաւումը դրանց հետազօտութիւններում:

ընտրուել նաեւ լիբանահայ պատմաբան, Զաւէն Մսըրլեանը: Միեւնոյն ժամանակ սփիւռքահայ պատմաբաններն ընդգրկւում են Հայաստանի Հանրապետութիւնում իրականացուող հայագիտական հիմնարար հետազօտութիւններում, նրանց աշխատութիւններն օգտագործւում են հայաստանեան պատմաբանների կողմից՝ լրացնելով ու ամբողջացնելով ՀՀում Հայկական Հարցի վերաբերեալ գիտամեթոդական ուսումնասիրութիւնները (Ռ. Գ. Յովհաննիսեան, *Հայաստանի Հանրապետութիւն, հտր. I-IV,* խմբ.՝ Ա. Ա. Խառատեան, «Տիգրան Մեծ», Երեւան, 2005-16. նաեւ՝ Р. А. Ованнисян, *Международные отношения Республики Армения, 1918–1920 гг.* (Հայաստանի Հանրապետութեան միջազգային յարաբերութիւնները, 1918-1920 թթ.), թարգմ. անգլերէնից՝ Գ. Գ. Մախմուրեան. «Տիգրան Մեծ», Երեւան, 2007. նաեւ՝ В. Дадрян, *История Армянского геноцида: этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа* (Հայոց ցեղասպանութեան պատմութիւն. էթնիկ բախում Բալկաններից մինչեւ Անատոլիա եւ Կովկաս), թարգմ. անգլերէնից՝ Ս. Դ. Յովհաննիսեան, գիտ. խմբ.՝ Հ. Վ. Յակոբեան, «Նոյեան տապան», Երեւան, 2007. նաեւ՝ Վ. Տատրեան, *Հայոց Ցեղասպանութիւնը՝ ազգային եւ միջազգային իրաւունքի երկակի հիմնախնդիր*, անգլ. թարգմ.՝ Ա. Բեժանեան, ԵՊՀ հրատ., Երեւան, 2012. նաեւ՝ C. P. Ohanian, *La Cuestión Armenia y las Relaciones Internacionales, t. 5* (1919), Director L. Barseghian, Buenos Aires: Akian Gráfica Editora, 2005, t. 6 (1920), Buenos Aires: Akian Gráfica Editora, 2010. նաեւ՝ *Աւստրօ-Հունգարիայի դիւանագէտների հաղորդագրութիւնները Հայոց ցեղասպանութեան մասին (1915–1918 թթ.). (փաստաթղթերի ժողովածու)*, կազմ. եւ առաջ.՝ Ա. Օհանջանեան, գերմ. թարգմ.՝ Վ. Մարտիրոսեան, խմբ.՝ Լ. Բարսեղեան, մատենաշար «Հայոց Ցեղասպանութիւնը եւ միջազգային հանրութիւնը», թիւ 3, «Նահապետ», Երեւան, 2004. նաեւ՝ A. Ohanjanian, *Österreich-Armenien 1872–1936: Faksimilesammlung diplomatischer Aktenstücke*, herausgegeben und eingeleitet von Artem Ohanjanian. Bände 1-12, Ohandjanian Eigenverlag, Wien, 1995. նաեւ՝ *Österrich-Ungarn und Armenien 1912–1918: Sammlung diplomatischer Aktenstücke*, Zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. A. Ohanjanian, Institut-Museum für Armenischen Genozid der Akademie der Wissenschaften Armeniens, Jerewan, 2005. նաեւ նոյնի՝ *Die Armenische Frage und die Rolle Österreich-Ungarns und Deutschland*, Jerewan, 2005. նաեւ՝ Գ. Պ. Բարդակչեան, *Հիտլէրը եւ Հայոց Ցեղասպանութիւնը (Հիտլէրի ճառը 1939 թ. Օգոստոսի 22ին)*, անգլ. թարգմ.՝ Շ. Ս. Ալթունեան, «Նշանակ», Երեւան, 2005. նաեւ՝ Ա. Պէյլերեան, *Մեծ փէրութիւնները, Օսմանեան կայսրութիւնը եւ հայերը ֆրանսական արխիւներում (1914–1918), հտր. I եւ II*, առաջ.՝ Ժան-Բատիստ Դիւրոզէլ, թարգմ.՝ ֆրանս. Վ. Պօղոսեան, «Հայաստան» («Գրական հայրենիք»), Երեւան, 2005:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ 1878-1923Ի ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔՈՒՄ ԱՌԱՋ ՔԱՇՈՒԱԾ ՆՈՐ ՀԻՄՆԱԴՐՈՅԹՆԵՐԸ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՓՈՒԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱՆԿԻՒՆԻՑ

Հանրայայտ է, որ Հայկական Հարցը, որպէս միջազգային դիւանագիտութեան հարց, քննարկումների առարկայ է հանդիսացել 1878ին Սան Ստեֆանոյի ռուս–թուրքական բանակցութիւններում եւ հաշտութեան նախնական պայմանագրում, Բեռլինի միջազգային վեհաժողովում եւ դրա արդիւնքում ստորագրուած պայմանագրում, արտացոլուել 1880 Յունիսի 11ին մեծ տէրութիւնների կողմից օսմանեան կառավարութեանն ուղղուած բողոքի յայտագրում, ապա Սեպտեմբերի 7ի նրանց համատեղ յայտագրում: Ապա Հայկական Հարցը քննարկուել է 1881 Սեպտեմբերի 9ին Կոստանդնուպոլսում մեծ տէրութիւնների դեսպանների խորհրդաժողովում, ներկայացուել 1895 Մայիսի 11ին Բ. Դռանը ներկայացուած բարենորոգումների անգլօ–ֆրանս–ռուսական մայիսեան ծրագրում, այնուհետեւ՝ 1913 Յուլիսի 3–24ին Կոստանդնուպոլսում մեծ տէրութիւնների ներկայացուցիչների դեսպանների Ենի Քէօյի խորհրդաժողովում, 1913 Սեպտեմբերի 10ի ռուս–գերմանական փոխզիջումային համաձայնագրում եւ 1914 Յունուարի 26ի (Փետրուարի 8) ռուս–թուրքական համաձայնագրում ու դրանց յարակից դիւանագիտական հեռագրերում, նամակներում, շրջաբերականներում, հաշուետուութիւններում: Խորհրդահայ պատմագիտութիւնը, Հայկական Հարցը գնահատելով որպէս Արեւելեան Հարցի բաղկացուցիչ մասը, բաւարարուել է, նշելով, որ այն աշխարհի վերաբաժանմանը նախապատրաստուող գաղութատիրական երկրներին հնարաւորութիւն էր ընձեռում ցանկացած ձեւով միջամտելու Թուրքիայի ներքին գործերին[9]: Ըստ այդմ, խորհրդային տարիներին պատմաբանների ճնշող մեծամասնութիւնն ուշադրութեան կենտրոնում պահել է լոկ Սան Ստեֆանոյի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող 16րդ յօդուածը: Անտեսուել է դրա նկատմամբ եւրոպական տէրութիւնների անհանգստութեան խորքային պատճառը. Սան Ստեֆանոյի պայմանագիրն ամբողջութեամբ Ռուսաստանին դարձնելու էր գերիշխող պետութիւն թէ՛ Բալկանեան թերակղզում, թէ՛ Սեւ ու Միջերկրական ծովերում: Եւ եթէ Արեւմտեան Հայաստանը եւս անցնէր Ռուսաստանի ազդեցութեան ոլորտը, այդ դէպքում տարածաշրջանում նա չէր ունենալու իր մրցակիցը: Ահա թէ ինչու եւրոպական տէրութիւնները Սան Ստեֆանոյի նախնական

[9] *Հայ ժողովրդի պատմութիւն, հտր. VI,* ՀՍՍՀ ԳԱ պատմ. ինստ., խմբ. խորհ.՝ Ծ. Պ. Աղայեան, Ա. Գ. Յովհաննիսեան, Մ. Գ. Ներսիսեան, Գ. Ա. Գալոյեան եւ ուրիշ., ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1981, էջ 109:

հաշտութիւնը դիտում էին որպէս իրենց շահերի դէմ ուղղուած պայմանագիր եւ պահանջում էին Ռուսաստանից վերանայել այն:

Հանդէս գալով հայկական շահի դիրքից եւ զարգացնելով վերոնշեալ գնահատականը՝ յետխորհրդահայ պատմագիտութեան մէջ Սան Ստեֆանոյի պայմանագիրը կարեւորուած է որպէս միջազգային առաջին փաստաթուղթ, որով Հայկական Հարցը դարձել է միջազգային յարաբերութիւնների եւ միջազգային իրաւունքի հարց, իսկ Թուրքիան ընդունել է «Հայաստան» աշխարհագրական եւ պատմական տարածքի գոյութիւնն իր նուաճած երկրների շարքում[10]: Աւելին, հայաստանեան պատմագիտութեան մէջ ներկայումս իշխող է այն տեսակէտը, որ պատճառահետեւանքային կապերով միմեանց կապուած վերոնշեալ դիւանագիտական փաստաթղթերով 1878–1914 ժամանակահատուածը հանդիսանում է Հայկական Հարցի պատմութեան առանձին փուլ: Այդ փուլում Հայկական Հարցի դիւանագիտական բովանդակութիւնը յանգում էր Արեւմտեան Հայաստանում մեծ տէրութիւնների համատեղ վերահսկողութեան ներքոյ բարենորոգումների անցկացմանը՝ երկրամասն Օսմանեան կայսրութեան կազմում պահպանելով հանդերձ:

Պատմաբան Գալուստ Գալոեանի (1927–2003) գնահատմամբ, այդ փուլում Հայկական Հարցում մեծ տէրութիւնների քաղաքականութիւնը պայմանաւորուած էր Մերձաւոր Արեւելքում եւրոպական տէրութիւնների եւ Ռուսաստանի շահերի բախմամբ, ինչի արդիւնքում միջազգային դիւանագիտութիւնը չկարողացաւ խուսափել Արեւմտեան Հայաստանը որպէս միջազգային իրաւունքի կողմէ գործող ուժ ճանաչելուց: Միեւնոյն ժամանակ Հայկական Հարցի լուծման վերաբերեալ բոլոր նախագծերի ու ծրագրերի հիմքում Բեռլինի պայմանագրի 61րդ յօդուածն էր, որը բխում էր ԺԹ. դարի վերջին գործող միջազգային իրաւունքի նորմերից ու սկզբունքներից: Իսկ միջազգային իրաւունքը, ընդհուպ առաջին աշխարհամարտը, ճնշուած ժողովուրդների ճակատագիրը դիտարկում էր գլխաւորապէս իշխող պետութեան սահմաններում նրանց ֆիզիկական անվտանգութեան ապահովման, այդ նպատակով մարդասիրական միջամտութեան, տուեալ ազգային խմբի անդամների անձնական եւ ունեցուածքային իրաւունքների պաշտպանութեան տեսանկիւնից: Դա հաւասարազօր էր ինքնակառավարման կամ տարածքային ինքնավարութեան: Չէր կարեւորւում ճնշուած ժողովրդի ինքնորոշման

[10] Գ. Գալոյեան, *Հայաստանը մեծ տէրութիւնների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.)*, խմբ.՝ Է. Դանիէլեան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2004, էջ 266, 268. նաեւ՝ Է. Կոստանդեան, Ռ. Յովհաննիսեան, «Հայկական Հարցի միջազգայնացումը», *Հայոց պատմութիւն», հտր. III [Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կէս–1918 թ.)], գիրք I (XVII դարի երկրորդ կէս – XIX դարի վերջ)*, խմբ.՝ Ա. Ա. Մելքոնեան եւ ուրիշ., «Զանգակ-97», Երեւան, 2010, էջ 429-47:

իրաւունքը, բացառութեամբ այն դէպքերի, երբ այդ իրաւունքն իրացւում էր հարկադրանքի ուժով, այսինքն՝ օտարի տիրապետութեան դէմ ազատագրական զինուած պայքարի միջոցով, ինչպէս որ տեղի էր ունեցել Անգլիայի հիւսիսամերիկեան գաղութների, Յունաստանի կամ բալկանեան սլաւոնական ժողովուրդների պարագայում[11]: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ իրաւագիտութեան դոկտոր, միջազգային իրաւունքի պրոֆեսոր Եուրի Բարսեղովն իրաւացիօրէն նշում է. «*Օսմանեան կայսրութեան պատասխանատուութիւնը ժողովուրդների կոտորածների համար թէ՛ վերջիններիս կառավարման ձեւի բարեփոխման, թէ՛ ցեղասպան պետութեան տիրապետութիւնից նրանց ազատագրման պահանջի ձեւով առաջացել է բնաւ ոչ Հայկական Հարցի կապակցութեամբ, այլ՝ կապուած միւս թուրքահպատակ ժողովուրդների՝ յոյների, բուլղարների, սերբերի, ռումինների խնդիրների հետ*»[12]:

Ինչ վերաբերում է Հայկական Հարցով շահագրգռուած մեծ տէրութիւնների շահերին, նպատակներին ու հակասութիւններին, ապա հարկ է նշել, որ Օսմանեան կայսրութեան տարածքային ամբողջականութեան եւ անձեռնմխելիութեան պահպանման դիւանագիտական սկզբունքը նրանց համար ամենայարմարն էր՝ ապահովելու բազմազգ կայսրութեան նկատմամբ բոլոր մեծ տէրութիւնների շահերի հաւասարակշռութիւնը, թոյլ չտալու, որ իրենցից որեւէ մէկը բացարձակ գերիշխանութեան հասնէր «հիւանդ մարդու» նկատմամբ: Նոյնիսկ Ռուսաստանը, որը դեռեւս Ղրիմի 1853-56ի պատերազմի նախօրէին բացայայտում էր արտայայտում էր Օսմանեան կայսրութեան թուրքահպատակ քրիստոնեայ ժողովուրդների հովանաւորը լինելու իր մտադրութիւնը, այնուամենայնիւ, գիտակցում էր, որ status quoի քաղաքականութիւնը բխում էր նաեւ իր շահերից. այն պաշտպանում էր Ռուսաստանը մրցակից տէրութիւնների հզօր հակազդեցութիւնից: Այս տեսանկիւնից եւրոպական տէրութիւնները չէին կարող թոյլ տալ Հայկական Հարցի որեւէ այլ ձեւակերպում, արեւմտահայերի անձնական եւ գոյքային իրաւունքների պաշտպանութեանն ուղղուած բարենորոգումներից

---

[11] Լ. Յովհաննիսեան, «Արեւմտեան Հայաստանում բարենորոգումների վերաբերեալ 1914 թ. ռուս-թուրքական համաձայնագրի նշանակութիւնը 1895 թ. մայիսեան ծրագրի հետ համեմատութեան լոյսի ներքոյ», *Հայոց պատմութեան հարցեր*, 14:2013, խմբ. խորհ.՝ Ա. Մելքոնեան, Ա. Խառատեան եւ ուրիշներ, պատմութեան ինստիտուտ, Երեւան, էջ 119-20:

[12] *Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, в 2 томах* (Հայերի ցեղասպանութիւնը. Թուրքիայի պատասխանատուութիւնը եւ միջազգային հանրութեան պարտաւորութիւնները. փաստաթղթեր եւ մեկնաբանութիւններ, 2 հատորով), կազմ., պատ. խմբ., ներած. եւ մեկնաբ. հեղ.՝ իրաւ. գիտ. դոկտ., պրոֆ. Եու. Գ. Բարսեղով, հտր 2, մաս 2, «Гардарики», Մոսկուա, 2005, էջ 70:

բացի: Պատահական չէ, որ մեծ տէրութիւնները Բեռլինի պայմանագրով Ռուսաստանին թողել էին ռուս-թուրքական պատերազմում տարածքային ձեռքբերումների նուազագոյնը՝ Կարս քաղաքն իր յարակից տարածքով, իսկ Հայկական Հարցի լուծումը դրուել էր միջազգային վերահսկողութեան ներքոյ[13]: Նշենք, որ վերոնշեալ հանգամանքները ծայրաստիճան սրեցին հակահայկական տրամադրութիւններն Օսմանեան կայսրութիւնում եւ հանդիսացան այն նշաձողը, որից յետոյ թուրքական իշխանութիւնները ջանադրաբար մշակեցին ու հետեւողականօրէն իրագործեցին արեւմտահայերի ցեղասպանութիւնը[14]:

Պատմաբանների ուսումնասիրութիւններում միանշանակ չէ Արեւմտեան Հայաստանում բարենորոգումների վերաբերեալ 1914 Յունուարի 26ի ռուս-թուրքական համաձայնագրին տրուած գնահատականը: Նրա նշանակութիւնը կա՛մ գերագնահատուել է՝ տուրք տալով 1912-14՝ Հայկական Հարցում Ռուսաստանի վարած քաղաքականութեան նախաձեռնողական բնոյթին եւ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշմանը, կա՛մ թերագնահատուել է՝ ելնելով Հայկական Հարցում մեծ տէրութիւնների եւ մասնաւորապէս Մերձաւոր Արեւելքում Ռուսաստանի վարած քաղաքականութեան շահադիտական մղումներից ու հակահայկական դրսեւորումներից: Եւ միայն վերջին երեսնամեակի ընթացքում լոյս տեսած պատմագիտական աշխատութիւններում տրուած է Արեւմտեան Հայաստանում բարենորոգումների վերաբերեալ այդ համաձայնագրի պատմաիրաւական գնահատականը: Շեշտուած է, որ համաձայնագիրը հանդիսանում էր մեծ տէրութիւնների եւ թուրքական պետութեան միջեւ Բեռլինի վեհաժողովում սկսուած եւ մօտ 40 տարի տեւած դիւանագիտական պայքարի հանգուցալուծումը: Համաձայնագիրը հայերի դէմ ցեղասպանութեան գործողութիւնների կանխմանն ուղղուած միջազգային իրաւական փաստաթուղթ էր եւ իրագործման դէպքում, անշուշտ, կ'ունենար այդ նշանակութիւնը: Նրանում բարենորոգումների 1895ի մայիսեան ծրագրի համեմատ էապէս խոցելի ու քննադատելի կողմը, թերեւս, հայկական մէկ նահանգի փոխարէն երկու առանձին վարչական միաւորների ստեղծում նախատեսող դրոյթն էր: Համաձայնագիրն էլ աւելի առաջադիմական կը լինէր, եթէ դրա հիմքում դրուէր ռուսական սկզբնական նախագիծն առանց այն որեւէ փոփոխութեան ենթարկելու: Այդ դէպքում հայկական վիլայէթներից կը ստեղծուէր մէկ միասնական վարչական միաւոր, այն վերջապէս կ'ունենար ազգային ժողով, մահմեդականներով խիտ բնակեցուած տարածք-

[13] Յովհաննիսեան, «Արեւմտեան Հայաստանում բարենորոգումների վերաբերեալ 1914», էջ 121-122:

[14] Գ. Գալոյեան, *Հայաստանը մեծ տէրութիւնների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.)*, էջ 311–12. նաեւ՝ Յովհաննիսեան, «Արեւմտեան Հայաստանում բարենորոգումների վերաբերեալ 1914», էջ 122-23:

ները չէին միացուի հայկական վարչական միաւորին, նահանգում բոլոր պաշտօնների, օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւն իրականացնող մարմինների բաշխման, ինչպէս նաեւ ոստիկանութեան ու ժանդարմերիայի կազմակերպման հիմքում կը դրուէր ոչ թէ համամասնութեան, այլ հաւասարութեան սկզբունքը, կ'արձակուէր քրդական «համիդիէ» հեծելազօրը, վերջ կը դրուէր մուհաջիրների վերաբնակեցմանը հայկական նահանգում, հողային հարցը կը լուծուէր ընդհանուր նահանգապետի ու յատուկ յանձնաժողովի կողմից հայերից խլուած հողերը նրանց վերադարձնելու միջոցով[15]:

Առաջին աշխարհամարտի բռնկումը եւ Օսմանեան կայսրութեան մուտքը պատերազմ՝ որպէս կայզերական Գերմանիայի դաշնակից, ցրեցին Անտանտի տէրութիւնների վերջին յոյսերն անգամ Օսմանեան կայսրութեան չէզոքութիւնն ապահովելու մասին: Վերջիններս առանց յապաղելու հրաժարուեցին Օսմանեան կայսրութեան տարածքային ամբողջականութեան պահպանման քաղաքականութիւնից, ինչը բեկումնային նշանակութիւն ունեցաւ Հայկական Հարցի միջազգային իրաւական բովանդակութեան համար. անցում կատարուեց Արեւմտեան Հայաստանում բարենորոգումների անցկացումից դէպի իրենց հայրենիքում արեւմտահայերի ինքնորոշման իրաւունքի պաշտպանութիւն: Այնուամենայնիւ, Հայկական Հարցի միջազգային բնոյթը պահպանուեց՝ դառնալով նրա միջազգային դիւանագիտական քննարկումների ողջ յետագայ ընթացքի վրա էապէս ազդող գործօն: 1914 Սեպտեմբեր-Նոյեմբերին առաջ քաշուեց օսմանեան «ժառանգութեան», այսինքն՝ կայսրութեան ոչ թուրքական տիրոյթների բաժանման խնդիրը, որի բաղկացուցիչ մասերից մէկն էլ Արեւմտեան Հայաստանի ու Կիլիկիայի ապագայի հարցն էր: Այդպիսով, Հայկական Հարցի դիւանագիտական պատմութեան մէջ սկսուեց նոր փուլ:

1915 Մարտ-Ապրիլին յուշագրերի փոխանակմամբ, ապա Ապրիլի 26ին Լոնդոնի գաղտնի համաձայնագրի ստորագրումով Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսայի կառավարութիւնները յստակ ձեւակերպեցին ոչ միայն Կոստանդնուպոլսի ու սեւծովեան նեղուցների կարգավիճակը, այլեւ՝ Օսմանեան կայսրութեան ոչ թուրքական տիրոյթները մասնատելու իրենց մտադրութիւնը: Արեւմտեան Հայաստանն անցնելու էր Ռուսաստանին, Կիլիկիան՝ Ֆրանսային: 1916 Յունուարի 3ին կայացաւ անգլօ-ֆրանսական համաձայնութիւնը, որը նախագծի հեղինակներ՝

[15] Լ. Յովհաննիսեան, «Հայկական Հարցի ուսումնասիրութեան արդիւնքները հայաստանեան պատմագիտութեան մէջ (1991-2021 թթ.)», *Հիմնարար եւ կիրառական գիտական հետազօտութիւններ. արդիական խնդիրներ եւ ձեռքբերումներ. միջազգային գիտաժողով, 31 Մայիսի, 2022, գիտական յօդուածների ժողովածու*, խմբ.՝ Ն. Յակոբեան, «Տիր», Երեւան, 2022, էջ 474-75:

բրիտանական կառավարութեան արտակարգ լիազօր ներկայացուցիչ, Մերձաւոր Արեւելքի փորձագէտ Մարկ Սայքսի եւ Պէյրութի ֆրանսական նախկին գլխաւոր հիւպատոս Ֆրանսուա Ժորժ Պիկոյի անուններով կոչուեց՝ Սայքս-Պիկոյի համաձայնութիւն: Այնուհետեւ այն փոխանցուեց Ռուսաստանի արտգործնախարարութեանը՝ ստանալու վերջինիս համաձայնութիւնը: Ռուսաստանի արտգործնախարար Սերգէյ Սազոնովի հետ երկարատեւ ու լարուած բանակցութիւնների արդիւնքում բրիտանական ու ֆրանսական կողմերը ստիպուած էին զիջումների գնալ եւ Ռուսաստանին յանձնել Ուրմիա լճի հիւսիսային առափնեայ տարածքն ու Բիթլիսի լեռնանցքները: 1916 Ապրիլի 13 (26)ին, Մայիսի 9–16ին եւ Մայիսի 10 (23)–Օգոստոսի 19 (Սեպտեմբերի 1)ին յուշագրերի փոխանակմամբ ստորագրուեցին համապատասխանաբար ռուս-ֆրանսական, անգլօ-ֆրանսական եւ ռուս-անգլիական համաձայնագրերը՝ Օսմանեան կայսրութեան ոչ թուրքական տիրոյթները միմեանց միջեւ բաժանելու վերաբերեալ: 1917 Ապրիլի 20ին օսմանեան «ժառանգութեան» բաժանման ծրագրին միացաւ նաեւ Իտալիան՝ իր տարածքային պահանջներն ամրագրելով Սէն-Ժան-դէ Մորիէնի անգլօ-ֆրանս-իտալական գաղտնի համաձայնագրում[16]:

Ի տարբերութիւն խորհրդահայ պատմագրութեան, յետխորհրդահայ պատմագրութեան մէջ օսմանեան «ժառանգութեան» բաժանման վերաբերեալ անգլօ-ֆրանս-ռուս-իտալական համաձայնագրերին տրուած է ոչ միայն պատմագիտական, այլեւ՝ միջազգային-իրաւական գնահատական: Ինչ խօսք, Անտանտի տէրութիւնների մշակած ծրագիրն որեւէ ընդհանուր բան չունէր Հայկական Հարցի բովանդակութեան հետ: Աւելին, այն վկայում էր Անտանտի տէրութիւնների քաղաքականութեան նուաճողական, գաղութատիրական էութեան մասին. Հայաստանը բաժանուելու էր երկու մասի՝ Ռուսաստանի եւ Ֆրանսայի միջեւ: Հայկական անկախ պետութիւն հիմնելու հարցը չէր քննարկւում: «Հայերի կեանքում պարզապէս տեղի էր ունենում արմատական փոփոխութիւն. Թուրքիայի տիրապետութեան տակ գտնուող տարածքները անցնում էին Ռուսաստանին եւ Ֆրանսային»[17]՝ նշում է Լենդրուշ Խուրշուդեանը: Այդուհանդերձ, կարեւոր է, որ Անտանտի տէրութիւնների համաձայնագրերով ճանաչւում էր Անտանտի տէրութիւնների կողմից զինագրաւելու միջոցով Արեւմտեան Հայաստանը ցեղասպան օսմանեան պետութեան իշխանութիւնից ազատելու անհրաժեշտութիւնը, ինչն արդէն 1916ին իր արտայայ-

---

[16] Լ. Յովհաննիսեան, *Հայկական Հարցը եւ մեծ տէրութիւնները 1914–1917 թուականներին,* «Զանգակ–97», Երեւան, 2002, էջ 98:

[17] Լ. Խուրշուդեան, *Հայկական Հարցը. բովանդակութիւնը, ծագումը, պատմութեան հիմնական փուլերը,* «Համազգային հայ կրթական եւ մշակութային միութիւն», Երեւան, 1995, էջ 41:

տութիւնը գտաւ պատերազմի նպատակների, ճնշուած ժողովուրդների ազատագրութեան եւ ինքնորոշման մասին Անտանտի դաշնակից երկրների կառավարութիւնների, արտաքին գերատեսչութիւնների ղեկավարների հրապարակային ելոյթներում ու պաշտօնական ուղերձներում[18]: Իսկ առաջին համաշխարհային պատերազմի աւարտից յետոյ ճնշուած ժողովուրդների ազատագրութեան եւ կարգավիճակի հարցերը դրուեցին Օսմանեան կայսրութեան հետ հաշտութեան պայմանագրի հիմքում: Հայ պատմաբանների աշխատութիւններում ուշադրութիւն է դարձւում նաեւ այն հանգամանքին, որ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայ հասարակական-քաղաքական շրջանակներում Հայկական Հարցի արդար լուծումը կապւում էր հենց Մեծ Բրիտանիայի, Ֆրանսայի, Ռուսաստանի հետ: Եւ դա պատահական չէր. Գերմանիայի, Օսմանեան կայսրութեան ու նրանց դաշնակիցների դէմ մղուող պատերազմում Անտանտի տէրութիւններն առաջնորդւում էին թուրքահպատակ ժողովուրդների ազատագրութեան սկզբունքով: Թէեւ վերջինս աւելի շուտ շահարկւում էր, քան՝ իրագործւում, այնուամենայնիւ, արեւմտահայերի շահերի տեսանկիւնից օսմանեան «ժառանգութեան» բաժանման վերաբերեալ ստորագրուած անգլօ-ֆրանս-ռուսական համաձայնագրերը գերադասելի էին թուրքական բռնակալութիւնից:

Փաստօրէն, յետխորհրդահայ պատմաբանների աշխատութիւններում հիմնաւորւում է 1915–16ի անգլօ-ֆրանս-ռուսական գաղտնի բանակցութիւններով եւ դրանց արդիւնքում ստորագրուած համաձայնագրերով միջազգային դիւանագիտութեան մէջ քաղաքական նոր մօտեցման սկզբնաւորումը, որը նախադրեալներ էր ստեղծում թուրքական տիրապետութիւնից հպատակ ժողովուրդների ազատագրման համար: Հայկական Հարցը լուծուելու էր ոչ թէ Օսմանեան կայսրութեան սահմաններում հայկական վեց վիլայէթները բարենորոգելու կամ դրանց ինքնավար կարգավիճակ տալու, այլ՝ Արեւմտեան Հայաստանի նկատմամբ օսմանեան պետութեան գերիշխանութիւնը դադարեցնելու եւ միջազգային վերահսկողութեան ներքոյ ինքնավար Հայաստան հիմնելու միջոցով: Հայկական Հարցի նկատմամբ Անտանտի տէրութիւնների որդեգրած այս նոր քաղաքական մօտեցումը դարձաւ այն միջազգային-իրաւական հիմքը, որի վրայ առաջին համաշխարհային պատերազմի աւարտական փուլում առաջադրուեց Հայաստանի ինքնորոշման եւ անկախութեան պահանջը:

Բացի այն, որ 1915–16ին Անտանտի տէրութիւնները որոշակիացնում էին իրենց շահերն ու հետաքրքրութիւններն Օսմանեան կայսրութեան ոչ թուրքական տիրոյթներում, այդ տարիները նաեւ առանձնանում են որպէս

[18] Այդ մասին տե՛ս՝ *Геноцид армян: ответственность Турции, History. 2, մաս 2*, էջ 225–26:

Հայկական Հարցը հայերի ցեղասպանութեամբ լուծելու թուրքական քաղաքականութեան բարձրակէտ: Ուստի, Հայաստանի Հանրապետութեան պատմագրութեան մէջ չէին կարող անտեսուել կամ շրջանցուել Արեւմտեան Հայաստանի եւ արեւմտահայերի նկատմամբ երիտթուրքական կառավարութեան դիրքորոշման, Հայկական Հարցում թուրք-գերմանական գործակցութեան հարցերը:

Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանութեան հիմնախնդիրներն ուսումնասիրող յետխորհրդահայ պատմաբանների աշխատութիւններում զարգացուեց սուլթանական եւ երիտթուրքական կառավարութիւնների հակահայկական քաղաքականութեանը տրուող գիտական գնահատականը՝ դրանում կարեւորելով այն հանգամանքը, որ հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման թուրքական քաղաքականութիւնը, անկախ պետական վարչակարգի փոփոխութիւնից, շարունակական էր: Այն իր էութեամբ ոչ միայն ազգային էր, այլեւ՝ արտաքին քաղաքական: Դրա գործադրման ծաւալները, ձեւերն ու մեթոդներն աստիճանաբար կատարելագործւում էին՝ թուրքական վարչակարգերի նուաճողական նկրտումներին համապատասխան: Աւելին, համաշխարհային պատերազմի ընթացքում նուաճած կամ նուաճելիք տարածքների բաժանման ու կառավարման հեռանկարները, այդ թւում Հայաստանի ու հայ ժողովրդի ճակատագրի հարցերը նախապէս քննարկւում եւ դրանց լուծման նախագծեր մշակւում էին ոչ միայն Անտանտի տէրութիւնների գաղտնի դիւանագիտական բանակցութիւններում, այլեւ՝ Օսմանեան կայսրութեան ու կայզէրական Գերմանիայի կառավարողների քննարկումներում: Պատմագիտական աշխատութիւններում նշւում է, որ արդէն ԺԹ. դարավերջին թուրքական կառավարող շրջանակներում հետեւողականօրէն արմատաւորուած օսմանիզմի գաղափարախօսութիւնը՝ ազգակից ժողովուրդներին Ջիբրալթարից մինչեւ Չինաստան Օսմանեան կայսրութեան մէջ միաւորելու ձգտումը, Հայկական Հարցը Հայաստանի հայաթափման, հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման միջոցով լուծելու գաղափարաքաղաքական հիմքն էր: Մշակւում էր հայկական կենդանի «պատնէշի» վերացման պետական ծրագիր: Այն պաշտօնապէս ձեւակերպուեց Բեռլինի միջազգային վեհաժողովից յետոյ՝ մեծ վեզիր Քիամիլ փաշայի հրապարակած հրահանգով[19]: Ըստ այդմ, մի կողմից փորձ էր արւում հայերին, բուլղարներին, սերբերին, յոյներին ներկայացնելու՝ իբրեւ «թուրքական քրիստոնեաներ», միւս կողմից էլ այդ ժողովուրդների դէմ գործի էր դրւում ջիհադի՝ «անհաւատների դէմ սրբազան պատերազմի»

[19] Հ. Աւետիսեան, *Հայկական Հարցը 1918 թուականին,* «Բարձրագոյն դպրոց», Երեւան, 1997, էջ 3-4. նաեւ՝ Լ. Յովհաննիսեան, *Հայկական Հարցը եւ մեծ տէրութիւնները 1914,* էջ 37-39:

գաղափարը: Երկու դէպքում էլ հայերին, ի թիւս թուրքահպատակ այլ ժողովուրդների, սպառնում էր բնաջնջման, իսկ Հայաստանին՝ հայաթափման մռայլ հեռանկարը:

Երիտթուրքական վարչակարգի ազգայնամոլական, հակահայկական քաղաքականութեանը համահունչ էին Մերձաւոր Արեւելքում համագերմանիզմի շահերը: Դրանք թելադրում էին Օսմանեան կայսրութիւնը դիտել ե՛ւ որպէս փորձադաշտ հպատակ ժողովուրդների շահագործման, ձուլման եւ ֆիզիկական ոչնչացման հակամարդկային գաղափարներն իրագործելու համար, ե՛ւ որպէս հումքի աղբիւր ու ապրանքների արտահանման եկամտաբեր շուկայ, ե՛ւ որպէս Արեւելքի հետ կապող կարեւոր օղակ: Գերմանիայի տնտեսական ու ռազմաքաղաքական ծրագրերի հիմնական զարկերակը պէտք է լինէր Հայաստանով անցնող բաղդադեան երկաթուղին: Համագերմանիզմի տեսաբանները եւ համաթրքութեան գաղափարախօսները համակարծիք էին, որ Օսմանեան կայսրութեան թուրքերն ամէն կերպ պէտք է մօտենան Կովկասում ապրող իրենց ազգակից մահմեդականներին, կազմեն համատարած ազգային զանգուած: Այդ ծրագրի իրագործմանը խոչընդոտող հայերին պէտք էր դուրս մղել իրենց բնակավայրերից, տեղափոխել Միջագետք՝ բաղդադեան երկաթուղու կառոյցում որպէս էժան բանուորական ուժ օգտագործելու համար: Նախատեսւում էր Հայաստան՝ հայերի բնակավայրեր, տեղափոխել մահմեդականներ արաբական երկրներից, Թրակիայից եւ Ռուսաստանից: Այսպէս ծնուեց Արեւմտեան Հայաստանում «կոմպակտ մուսուլմանական մեծամասնութիւն» ապահովելու գաղափարը[20]: Որպէս դրա վկայութիւն, Հրանտ Աւետիսեանը մէջբերում է կատարում գերմանական աշխարհաքաղաքականութեան խոշոր տեսաբան, 1914 Յունիսին Բեռլինում ստեղծուած Գերմանահայկական ընկերութեան փոխնախագահ Պաուլ Ռոհրբախի՝ պատերազմի նախօրեակին գրած *Պատերազմը եւ գերմանական քաղաքականութիւնը* գրքոյկից. «…Առաջ քաշելով «Ի՞նչ կը լինի, եթե Անտանտի պետութիւնները միմեանց մէջ բաժանեն մի կողմից Բոսֆորի եւ Պարսից ծոցի, միւս կողմից՝ Սուէզի ջրանցքից մինչեւ Արարատի միջեւ ընկած տարածքը» հարցը, Ռոհրբախը պատասխանում է. «Դա կը լինի Գերմանիայի վախճանը, որպէս համաշխարհային տէրութիւն, առաջնակարգ տէրութիւնների շարքից Գերմանիայի դուրս մղում, քանզի Գերմանիայի ապագան Անատոլիայում է, Փոքր Ասիայում, Սիրիայում, Միջագետքում, Պաղեստինում: …Եւ քանի որ քաղաքական անհրաժեշտութիւնից ելնելով մենք պէտք է պահպանենք Թուրքիան,

[20] Այս մասին մանրամասն տե՛ս՝ Յովհաննիսեան, *Հայկական Հարցը եւ մեծ փէրութիւնները 1914,* էջ 39-49:

մինչեւ վերջին ծայրայեղութիւն, ապա մենք չպէտք է թոյլ տանք, որպէսզի Հայաստանը անցնի Ռուսաստանին»»[21]:

Հայաստանեան պատմագրութեան մէջ, ի թիւս այլ հարցերի, ներկայացուած է նաեւ Օսմանեան կայսրութեան ու Գերմանիայի յաղթանակի դէպքում նրանց տնօրինութեանն անցնելիք տարածքների քաղաքական կարգավիճակի եւ վարչական կառուցուածքի վերաբերեալ նախագիծը, որում կարեւոր տեղ էին գրաւում Կովկասի ապագայ վարչաքաղաքական կառուցուածքում հայկական տարածքների ճակատագրին ու Կովկասի էթնիկական բազմազանութեան մէջ հայերի ապագային վերաբերող հարցերը: 1915ի վերջերին երիտթուրքական կառավարութեան եւ Կովկասի մահմեդականութեան հասարակական-քաղաքական շրջանակների նախաձեռնութեամբ հրապարակ բերուած այդ նախագիծը պատմագիտական աշխատութիւններում գնահատւում է որպէս Հայկական Հարցն Արեւմտեան Հայաստանի հայաթափման, հայերի տեղահանման եւ բնաջնջման միջոցով լուծելու թուրք-գերմանական տարբերակի տրամաբանական շարունակութիւն, քանի որ այն նախատեսում էր «ազգային-կրօնական առումով միատարր» Օսմանեան կայսրութեան հովանաւորութեամբ «անկախ, քաղաքականապէս միաւորուած, առանց ազգային եւ դաւանական խտրականութեան Կովկաս»ի կամ «Կովկասեան ընդհանուր տան» ստեղծում: Փաստօրէն, Կովկասը վերածուելու էր պատնէշի Օսմանեան կայսրութեան եւ Ռուսաստանի միջեւ: Նշենք, որ միջազգային դիւանագիտութեան մէջ այդ գաղափարն առաջ էր քաշել անգլիական վարչապետ Հ. Պալմըրսթոնը դեռեւս 1853–56ի Ղրիմի (Արեւելեան) պատերազմի ժամանակ՝ Ռուսաստանը թուլացնելու եւ նրա ազդեցութեան ոլորտները նեղացնելու նպատակով: Սակայն Կովկասը Օսմանեան կայսրութեան ու Ռուսաստանի միջեւ պատնէշի վերածելու գաղափարի զարգացումը եւ յստակ ձեւակերպումը կապուած են «Կովկասեան ընդհանուր տան» թուրքական, իսկ այնուհետեւ Կոստանդնուպոլիս-Անդրկովկաս միասնական հովանաւորութեան ամերիկեան ծրագրերի հետ: Դրանցից առաջինը մշակուել է առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, իսկ երկրորդը՝ դրա աւարտից անմիջապէս յետոյ:

Օսմանեան կայսրութեան կառավարող շրջանակների հեռահար ծրագրերն ամբողջացուեցին, երբ 1916ին Ցիւրիխում գերմաներէն, ֆրանսերէն եւ անգլերէն հրատարակուեց ազգութեամբ վրացու վերագրուող *Վրաստանը եւ պատերազմը* գրքոյկը «Կովկասեան ընդհանուր տուն» կամ համադաշնութիւն հիմնելու վերաբերեալ[22]: Գրքոյկի հեղինակը լիայոյս էր, որ

[21] Քաղուածքն ըստ Աւետիսեանի՝ էջ 7-8:

[22] Գրքոյկի հիմնական դրոյթները Յովի. Յակոբեանի թարգմանութեամբ եւ վերլուծութեամբ տպագրուել են *Մշակ* թերթի 1917ի 197–204 համարներում:

Կովկասի բոլոր ժողովուրդները կը համախմբուէին ռուսներին երկրամասից վտարելու համար, որ Վրաստանը միայն Օսմանեան կայսրութեան ու նրա դաշնակիցների օգնութեամբ կարող էր վերականգնել աւելի քան մէկ դար առաջ կորցրած անկախութիւնը: Ապա օրինաչափ էր համարւում Կովկասում իրեն յարակից հողերի մի մասի բռնակցումը Թուրքիային՝ որպէս հատուցում մղած պատերազմում նրա ռազմական ծախսերի: Ուշագրաւ է, որ Բրեստ-Լիտովսկի հաշտութեան բանակցութիւններում թուրքական պատուիրակութիւնը հենց այդպիսի հիմնաւորմամբ եւ 1914ի ռուս-թուրքական սահմանի վերականգնման պահանջին զուգահեռ բարձրացրեց նաեւ Կարսի, Արդահանի ու Բաթումի մարզերը Օսմանեան կայսրութեանը վերադարձնելու հարցը: «Կովկասեան ընդհանուր տան» սահմաններում Հայաստանը որպէս վարչաքաղաքական եւ աշխարհագրական հասկացութիւն վերացուելու էր, հայկական տարածքները տարրալուծուելու էին վրացական ու թաթարական գաւառների կազմում, իսկ հայերին դրանց սահմաններում տրուելու էր միայն ազգային եկեղեցական-մշակութային ինքնուրոյնութիւն[23]:

«Կովկասեան ընդհանուր տան» գաղափարն, ըստ հայ պատմաբանների, յատկանշական էր Կովկասում ոչ միայն Թուրքիայի, այլ նաեւ կայզէրական Գերմանիայի ռազմաքաղաքական շահերի տեսանկիւնից: Գերմանիայի Արեւելեան քաղաքականութեան մէջ արդէն ձեւաւորւում էր Օսմանեան կայսրութեան եւ Ռուսաստանի սահմանին մի շարք մանր պետութիւններ ստեղծելու գաղափարը, որով գերմանական դիւանագէտներն առաջնորդուելու էին նաեւ Գերմանիայի ու Ռուսաստանի միջեւ ընկած սահմանային գօտու կարգաւորման հարցում: Փաստօրէն, Արեւմտեան Հայաստանը հայաթափելուց եւ նրա վրայով Կովկաս մտնելուց յետոյ թուրքերը վերացնելու էին նաեւ Արեւելեան Հայաստանը, իսկ հայ բնակչութեանը տարրալուծելու Կովկասում ստեղծուելիք պետական միաւորների մէջ: Նշանակում է, որ առաջին աշխարհամարտում Գերմանիայի, Օսմանեան կայսրութեան ու նրանց դաշնակիցների յաղթանակի դէպքում արեւելահայութեանը սպառնալու էր ձուլման ու կոտորածների վտանգը:

Այսպիսով, յետխորհրդահայ պատմաբանները Հայկական Հարցի 1915–16ի պատմութեան ուսումնասիրութիւնն ամբողջացրել են երկու իմաստով. նախ՝ ցոյց է տրուել, որ Հայաստանը եւ հայ ժողովուրդը վարչաքաղաքական վերաբաժանման էին ենթարկուելու անկախ այն բանից, թէ ո՛ր ռազմաքաղաքական խմբաւորումը՝ Անտա՞նտը, թէ՞ Քառեակ միութիւնը, կը յաղթէր համաշխարհային պատերազմում, քանի որ նրանցից իւրաքանչիւրի մշակած յետպատերազմեան կարգաւորման ծրագրում էլ ներառուած էին արեւմտահայկական տարածքների

[23] Աւետիսեան, էջ 9. նաեւ՝ Յովհաննիսեան, *Հայկական Հարցը եւ մեծ փէրութիւնները 1914,* էջ 102-3:

պատկանելութեան, սահմանների, կարգավիճակի եւ հայ բնակչութեան ճակատագրի հարցերը: Այնուհետեւ, Օսմանեան կայսրութեան ոչ թուրքական տիրոյթների բաժանման անգլօ-ֆրանս-ռուսական եւ Կովկասեան համադաշնութեան կամ «Կովկասեան ընդհանուր տան» թուրք-գերմանական ծրագրերի պատմահամեմատական վերլուծութեան շնորհիւ հիմնաւորուել է այն տեսակէտը, որ, չնայած իր զաւթողական էութեանը, այնուամենայնիւ, անգլօ-ֆրանս-ռուսական ծրագիրը նախընտրելի էր թուրք-գերմանականից, քանի որ դրանում չէր դրւում հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման հարց, աւելին, կարեւորւում էր Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ թուրքական գերիշխանութեան դադարեցման անհրաժեշտութիւնը:

Իր գագաթնակէտին հասած Հայոց Ցեղասպանութեան թուրքական պետական քաղաքականութեան ու Անտանտի կամ Եռեակ համաձայնութեան տէրութիւնների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի ռազմաքաղաքական նպատակների ու հռչակած դիւանագիտական սկզբունքների ազդեցութեամբ առաջ քաշուեցին Արեւմտեան Հայաստանը թուրքական տիրապետութիւնից ազատագրելու, հայրենազրկուած հայերի համար հայրենիք վերադառնալու միջազգային իրաւական նախադրեալներ ու հնարաւորութիւններ ստեղծելու, միջազգային վերահսկողութեան կամ մեծ տէրութիւններից որեւէ մէկի հովանաւորութեան ներքոյ Հայաստանի ինքնավարութեան եւ անկախութեան, հայ ժողովրդի նկատմամբ ոճրագործութիւնների համար թուրքական պետութեան պատասխանատուութեան հարցերը:

«Արեւմտահայաստանի հայաթափումից յետոյ խնդիրն այլեւս Հայկական Հարց կոչելն անիմաստ էր: Այն հայութեան կողմից այդուհետ ընկալւում էր որպէս բռնազաւթուած հայրենիքը վերադարձնելու, Հայոց Ցեղասպանութիւնը դատապարտելու, տարածքային, նիւթական ու բարոյական հատուցման հասնելու խնդիր: Ուստի ամբողջապէս արդարութեան համար հայ ժողովրդի մղած այդ պայքարը ստացաւ Հայ Դատ խորհրդանշական անուանումը»[24]՝ նշեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնեանը 2015 Հոկտեմբերի 15ին «Հայոց ցեղասպանութիւն–100: Ճանաչումից՝ հատուցում» խորագրով երեւանեան միջազգային գիտաժողովում հնչեցուած «Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը եւ հատուցման հիմնախնդիրը» թեմայով իր զեկուցման մէջ: Աւելին, զարգացնելով իր միտքը, պատմաբանն առանձնացրեց Հայոց Ցեղասպանութիւնից յետոյ Հայ Դատի համար մղուած 100ամեայ պայքա-

[24] Ա. Ա. Մելքոնեան, «Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը եւ հատուցման հիմնախնդիրը», *Ցեղասպանութիւն եւ հայրենազրկում: Ճանաչումից՝ հատուցում (յօդուածներ եւ հարցազրոյցներ)*, «Զանգակ», Երեւան, 2015, էջ 157:

րի պատմութեան չորս շրջափուլ՝ 1915-23, 1923-1945, 1945-1965 եւ 1965–2015՝ հիմք ընդունելով պատմական իւրաքանչիւր ժամանակահատուածում խնդրի նկատմամբ միջազգային ասպարէզում առկայ վերաբերմունքի սկզբունքային տարբերութիւնները՝ Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչումից մինչեւ դրա հետեւանքների յաղթահարման ու հատուցման պահանջի ձեւակերպում[25]: Ըստ այդմ, առաջին շրջափուլն ընդգրկում է բուն ցեղասպանութեան տարիները, երբ աշխարհի մի շարք պետութիւններ եւ միջազգային կազմակերպութիւններ ոչ միայն դատապարտեցին հայերի ֆիզիկական բնաջնջման ու հայրենազրկման թուրքական քաղաքականութիւնը, այլեւ որպէս դրա հետեւանքների վերացման եղանակ առաջարկեցին անկախ եւ միացեալ Հայաստանի ստեղծման ծրագիրը[26]:

Նորայայտ բազմալեզու արխիւային փաստաթղթերի հիման վրայ պատմաբանները համակողմանիօրէն ներկայացրել են Արեւմտեան Հայաստանի հարցի դիւանագիտական քննարկումները 1917–1918ի Խորհրդային Ռուսաստանի եւ Քառեակ միութեան պետութիւնների միջեւ Բրեստ-Լիտովսկի հաշտութեան բանակցութիւններում, 1918ի Տրապիզոնի թուրք-անդրկովկասեան համաժողովում եւ Հայաստանի Հանրապետութեան ու Օսմանեան Թուրքիայի միջեւ Բաթումի հաշտութեան բանակցութիւններում[27]: 1917–1918՝ Հայկական Հարցում մեծ տէրութիւնների ռազմաքաղաքական շահերը, նաեւ Արեւմտեան ու Արեւելեան Հայաստանի նկատմամբ Օսմանեան Թուրքիայի զաւթողական ծրագրերը լուսաբանուել են սեփական հայրենիքում՝ Արեւմտեան Հայաստանում հայերի ազգային ինքնորոշման իրաւունքի տեսանկիւնից[28]: Նաեւ վերանայուել են 1917ին Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի «Թուրքահայաստանի մասին» հրովարտակին, Բրեստ-

---

[25] Նոյն, էջ 158–163:

[26] Նոյն, էջ 158:

[27] Այս մասին մանրամասն տե՛ս՝ Աւետիսեան:

[28] Նոյն, էջ 51-53. նաեւ՝ Վ. Հ. Մելիքեան, *Փետրուարեան յեղափոխութիւնը եւ Հայաստանը (1917 թ. Մարտ–Հոկտեմբեր),* պատ. խմբ.՝ Վ. Ղազախէցեան, «Մխիթար Գօշ», Երեւան, 1997. նաեւ՝ Ստ. Պօղոսեան, Կ. Պօղոսեան, *Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանութեան պատմութիւն, հտր. III, գիրք I, մաս Ա. Հայկական Հարցը 1917 թ. երկրորդ կէսից մինչեւ ՀՀ ստեղծումը*, «Հայաստան», Երեւան, 2004. նաեւ՝ А. Марукян, *Армянский вопрос и политика России (1915-1917 гг.)* (Հայկական Հարցը եւ Ռուսաստանի քաղաքականութիւնը (1915-1917), պատ. խմբ.՝ Վ. Թունեան, Ռ. Բաղդասարեան, ՀՑԹԻ հրատ., Երեւան, 2003. նաեւ՝ Ս. Պօղոսեան, «Միացեալ Հայաստանի խնդիրը 1917–1918 թթ.», *Պատմութիւն եւ հասարակագիտութիւն,* 2:2016, էջ 8-23. նաեւ՝ Հ. Վ. Յակոբեան, *Տարագիր հայութեան հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրաւական հիմքերը,* խմբ.՝ Վ. Բայբուրդեան, «Ասողիկ», Երեւան, 2002, 277-304:

Լիտովսկի ու Բաթումի պայմանագրերին տրուած պատմաիրաւական եւ քաղաքական գնահատականները[29]:

Վահան Մելիքեանի դիտարկմամբ՝ արդէն 1916ի կէսերին եւ 1917ի սկզբին, երբ ռուսական բանակն աւարտել էր Արեւմտեան Հայաստանի զինագրաւումը, Հայկական Հարցը չունէր իր պատմութեան նախորդ ժամանակաշրջաններին բնորոշ միջազգային, դիւանագիտական բնոյթ. այն դարձել էր ազգային բարդ ու հակասական խնդիրներով պայմանաւորուած ներքին՝ հայոց հարց[30]: Յղում կատարելով դիւանագիտական փաստաթղթերին՝ պատմագիտական աշխատութիւններում նշում է, որ հայ ազգային-քաղաքական շրջանակներում Հայկական Հարցի լաւագոյն լուծում էր ընդունւում թուրքական տիրապետութիւնից ազատագրուած Արեւմտեան Հայաստանի բռնակցումը Դաշնակիցների կողմից[31]: Փաստացիօրէն, դա ռուսական բռնակցումն էր, քանի որ Արեւմտեան Հայաստանը զինագրաւուած էր ռուսական պետութեան կողմից: Սակայն պէտք է հաշուի առնել, որ Ժամանակաւոր կառավարութիւնը մի կողմից՝ բռնակցման գաղափարին դէմ լինելու եւ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը պաշտպանելու, միւս կողմից զինագրաւումները շարունակելու եւ Արեւմտեան Հայաստանի ինքնավարութեան երաշխիքների

---

[29] Աւետիսեան, էջ 72-3. նաեւ՝ Պօղոսեան եւ Պօղոսեան, էջ 56. նաեւ՝ Մարկեան, էջ 396-99. նաեւ՝ Խուրշուդեան, էջ 44. նաեւ՝ Հ. Կարապետեան, *Սեւրի պայմանագիրը հայոց ճակատագրում,* խմբ.՝ Ա. Հարութիւնեան, «Հայաստանի ազգային արխիւ», Երեւան, 2004, էջ 10-11. նաեւ՝ Գ. Գալոյեան, *Հայաստանը եւ մեծ փէրութիւնները 1917–1923 թթ.,* խմբ.՝ Վ. Միքայէլեան, «Գիտութիւն», Երեւան, 1999, էջ 20-22. նաեւ՝ Ա. Մելքոնեան, *Հայոց պատմութիւն. դասախօսութիւնների ձեռնարկ,* «Հայագիտակ», Երեւան, 1998, էջ 191. նաեւ՝ Է. Լ. Դանիէլեան, Ա. Ա. Մելքոնեան, *Հայոց պատմութիւն. հնագոյն ժամանակներից մինչեւ մեր օրերը,* «Զանգակ–97», Երեւան, 2008, էջ 271. նաեւ՝, Ա. Մարուքեան, *Հայոց Ցեղասպանութեան հետեւանքների յաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրաւական հիմնաւորումները,* խմբ.՝ Ա. Մելքոնեան, Վ. Վարդանեան, «Պատմութեան ինստիտուտ», Երեւան, 2014, էջ 89-93. նաեւ՝ Գ. Պետրոսեան, *Անդրկովկասը դիւանագիտական յորձանուտում. հայոց անկախ պետականութեան կերտումը (1917 թ. Փետրուար-1918 թ. Յունիս),* «ԵՊՀ հրատ.», Երեւան, 2018, էջ 201-43:

[30] Վ. Հ. Մելիքեան, *Փետրուարեան յեղափոխութիւնը եւ Հայաստանը (1917 թ. Մարտ–Հոկտեմբեր),* էջ 156-57. նաեւ նոյնի՝ «Հայաստանը 1917 թ. Փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ», *Հայոց պատմութիւն, հտր. III,* էջ 555-56:

[31] Անտանտի կամ Եռեակ համաձայնութեան տէրութիւնները՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսան, Ռուսաստանը եւ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում նրանց միացած 22 պետութիւնները, այդ թւում՝ Իտալիան, Ճապոնիան ու ԱՄՆը:

կայունացումից խուսափելու իր քաղաքականութեամբ վստահութիւն չէր ներշնչում հայ ազգային-քաղաքական շրջանակներում: Պատահական չէ, որ Հայկական Հարցը եւրոպական կառավարող շրջանակներում բարձրացնելու նպատակով դեռեւս 1912ին կազմուած Ազգային պատուիրակութեան ղեկավար Պօղոս Նուբարը շրջանառութեան մէջ դրեց Թուրքիայի հայկական բոլոր հողերը Կովկասից մինչեւ Միջերկրական ծով միաւորելու, մէկ պետութեան կամ համաեւրոպական համագործակցութեան՝ հայկական պետութեան ներքին կեանքին սահմանափակ միջամտութիւն ենթադրող ժամանակաւոր հովանաւորութեան ներքոյ ինքնավար, այնուհետեւ Անկախ եւ Միացեալ Հայաստան ստեղծելու գաղափարը: Դա համապատասխանում էր արեւմտահայկական տարածքների իրաւական կարգավիճակի հարցն Արեւելեան Հայաստանի հարցից առանձին քննարկելու՝ հայ հասարակական-քաղաքական ուժերի սկզբունքային դիրքորոշմանը[32]: Միաժամանակ, Պօղոս Նուբարի ծրագրում ընդգծւում էր արեւմտահայկական հողերի միասնութիւնը՝ ի հակադրութիւն անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերի, որոնք նախատեսում էին Արեւմտեան Հայաստանի բաժանում Ռուսաստանի եւ Ֆրանսայի միջեւ[33]: Գայիանէ Մախմուրեանի իրաւացի դիտարկմամբ՝ այս ծրագիրը որոշակի վտանգներ էր պարունակում, քանի որ միջազգային առեւտրում եւ համագործակցութեան մէջ կապող օղակ լինելու փոխարէն ինքնավար Հայաստանը դառնալու էր բախման թատերաբեմ Ռուսաստանի, Թուրքիայի, Պարսկաստանի, Միջագետքի ու Սիրիայի միջեւ[34]:

1917ի փետրուարեան յեղափոխութեան յաղթանակը Ռուսաստանում եւ ապա նոյն թուականի Ապրիլին ԱՄՆի մուտքը համաշխարհային պատերազմ, նաեւ փոքր ու ճնշուած ազգերի քաղաքական իրաւունքների պաշտպանութեան վերաբերեալ նախագահ Վուտրօ Ուիլսոնի յայտարարութիւնները պատմական նշանակալի իրադարձութիւններ էին,

---

[32] Մելիքեան, *Փետրուարեան յեղափոխութիւնը,* էջ 177-80. նաեւ՝ Աւետիսեան, *նշվ. աշխ.,* էջ 40. նաեւ՝ Ստ. Պօղոսեան, Կ. Պօղոսեան, *Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանութեան պատմութիւն, հտր. III, գիրք I, մաս Ա.* Հայկական Հարցը 1917 թ. երկրորդ կէսից մինչեւ ՀՀ ստեղծումը, «Հայաստան», Երեւան, 2004, էջ 44-45. նաեւ՝ Գալոյեան, *Հայաստանը եւ մեծ տէրութիւնները,* էջ 15-16. նաեւ՝ Ս. Պողոսեան, «Միացեալ Հայաստանի խնդիրը 1917–1918 թթ.», *Պատմութիւն եւ հասարակագիտութիւն,* 2:2016, էջ 8-23:

[33] Г. Г. Махмурян, *Армения в политике США 1917–1923 гг.* (Հայաստանը ԱՄՆ քաղաքականութեան մէջ 1917-1923), խմբ.՝ Ա. Վ. Ղամբարեան, «ՀՀ ԳԱԱ ՊԻ», Երեւան, 2018, էջ 27-28. նաեւ՝ Լ. Յովհաննիսեան, «Արեւմտեան Հայաստանի ինքնավարութեան հարցը 1917 թվականին», *Հայոց պատմութեան հարցեր (գիտական յօդուածների ժողովածու 11),* Երեւան, 2010, էջ 252-53:

[34] Махмурян, *Армения в политике,* էջ 28:

որոնք Անտանտի երկրների քաղաքական օրակարգ բերեցին բռնազաւթումների սկզբունքից հրաժարուելու եւ մեծ տէրութիւնների կողմից ճնշուած ժողովուրդների ինքնորոշման իրաւունքը յարգելու անհրաժեշտութիւնը[35]: Դրանով լուրջ հարուած էր հասցւում 1915-16ին Օսմանեան կայսրութեան ասիական տիրոյթների մասնատման վերաբերեալ անգլօ-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերին, ինչը նշանակում էր, որ Հայկական Հարցի լուծման դիւանագիտական սկզբունքները ենթարկուելու էին վերանայման:

Աստիճանաբար փոխւում էին նաեւ Արեւմտեան Հայաստանի հարցի լուծման գործում վճռորոշ դերակատարում ունեցող աշխարհաքաղաքական դերակատարները. Մեծ Բրիտանիան եւ Ֆրանսան Ռուսաստանից անթաքոյց կերպով շրջւում էին դէպի պատերազմի մէջ մտած ԱՄՆը, որի արտաքին քաղաքականութեան ուղղուածութիւնն ու աշխուժութիւնը պատերազմի ցանկալի աւարտ եւ արդիւնքներ էին խոստանում նրանց համար[36]:

Փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ Ռուսաստանն աստիճանաբար կորցնում էր իր ազդեցիկ դերն Արեւմտեան Հայաստանի իրաւական կարգավիճակի վերաբերեալ որոշումներ կայացնելու գործում, ինչի առաջին վկայութիւնը 1917 Ապրիլի 20ին (Մայիսի 3ին) Սէն-Ժան-դէ Մորիէնի անգլօ-ֆրանս-իտալական համաձայնագրի կնքումն էր առանց Ռուսաստանի մասնակցութեան[37]: Աւելին, դաշնակիցները սպառնում էին Ռուսաստանին դուրս թողնել յետպատերազմեան աշխարհակարգի ձեւաւորմանն ուղղուած ռազմաքաղաքական «խաղից», եթէ վերջինս չվերանայէր իր գործողութիւնների աշխուժութիւնը ռազմաճակատներում: Այս պայմանների ազդեցութեամբ է, որ Ռուսաստանի Ժամանակաւոր կառավարութիւնը Լեհաստանի, Լիտվայի, Լատուիայի, Ալզաս-Լոթարինգիայի եւ Արեւմտեան Հայաստանի հարցում որդեգրեց

---

[35] *Հայաստանի ազգային արխիւ* (*ՀԱԱ*), ֆ. 57, ց. 1, գ. 151, թ. 12-13, 20-21:

[36] Դեռեւս 1916 Փետրուարի 14ին ԱՄՆի եւ Մեծ Բրիտանիայի միջեւ ստորագրուել էր այսպէս կոչուած «անորսալի համաձայնագիրը» Օսմանեան կայսրութեան վերաբերեալ, ըստ որի, ԱՄՆը իր մասնաբաժինը պէտք է ստանար Մերձաւոր Արեւելքում: Աւելին, Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ա. Բալֆուրի միջոցով ԱՄՆ նախագահ Ուիլսընը քաջատեղեակ էր Ասիական Թուրքիայի բաժանման վերաբերեալ անգլօ-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերին (Գայիանէ Մախմուրեան, «Հայաստանն ու Հայկական Հարցը ԱՄՆի 1917–1918 թթ. քաղաքականութեան ոլորտում», *Առաջին աշխարհամարտը եւ հայ ժողովուրդը (պատմութիւն եւ արդիական խնդիրներ), միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու*, «ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ.», Երեւան, 2015, էջ 160-61:

[37] Այս մասին տե՛ս՝ Յովհաննիսեան, *Հայկական Հարցը եւ մեծ տէրութիւնները 1914–1917*, էջ 98. նաեւ՝ Գալոյեան, *Հայաստանը մեծ տէրութիւնների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.)*, էջ 692-93:

«հաշտութիւն՝ առանց զինագրաւումների ու ռազմատուգանքների՝ ժողովուրդների ինքնորոշման հիման վրայ» զգուշաւոր մօտեցումը՝ նպատակ ունենալով նշուած տարածքները վերածել կամ բախման թատերաբեմի, կամ անվտանգութեան գօտիների Գերմանիայի ու Ռուսաստանի, Գերմանիայի ու Ֆրանսայի միջեւ: Արեւմտեան Հայաստանն այդ նոյն դերը կարող էր կատարել Ռուսաստանի եւ Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսայի ազդեցութեան գօտիների միջեւ՝ 1915–16ի անգլօ–ֆրանս–ռուսական գաղտնի համաձայնագրերի իրագործման դէպքում, իսկ Կոստանդնուպոլիսն ու սեւծովեան նեղուցները Ռուսաստանին չտրուելու դէպքում Արեւմտեան Հայաստանը կը ծառայէր իբրեւ պատնէշ նրա ու Թուրքիայի միջեւ[38]: Դա նշանակում էր Ռուսաստանի վերադարձ Օսմանեան կայսրութեան տարածքային ամբողջականութեան քաղաքականութեանն այն հաշուով, որ վերջինիս դաշնակից տէրութիւններն էլ չկարողանային Ասիական Թուրքիայում իրենց հետաքրքրող տարածքների համար պահանջել աւելին, քան դրանց ինքնավարութիւնը կայսրութեան սահմաններում այնքան ժամանակ, քանի դեռ լուծուած չէր Կոստանդնուպոլսի եւ սեւծովեան նեղուցների հարցը[39]: Դրանով Ժամանակաւոր կառավարութիւնն, ըստ էութեան, ակնարկում էր, որ առանց ստանալու Ռուսաստանի տնտեսութեան զարգացման եւ արտաքին անվտանգութեան ամրապնդման տեսանկիւնից կարեւոր այդ տարածքները, իմաստ չէր տեսնում պահելու Արեւմտեան Հայաստանը[40]: 1915–16ի անգլօ–ֆրանս–ռուսական համաձայնագրերով նախատեսուած արեւմտահայկական տարածքները Ռուսաստանի կողմից պահպանելու դէպքում Արեւմտեան Հայաստանում կ'իրացուէր բնիկների՝ հայերի ինքնորոշման իրաւունքը, Հայկական Հարցը կը լուծուէր հայ ազգային շահերին ու ակնկալիքներին համահունչ. Արեւմտեան Հայաստանը կը ստանար ինքնավարութիւն Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ: Մինչդեռ հակառակ դէպքում ԱՄՆը, Մեծ Բրիտանիան եւ Ֆրանսան մերժելու էին Արեւմտեան Հայաստանի ինքնավարութեան գաղափարը եւ Ռուսաստանին զրկելու այդ տարածքից: Թէեւ ԱՄՆը մինչեւ համաշխարհային պատերազմի աւարտը չէզոքութիւն պահպանեց Օսմանեան կայսրութեան հանդէպ, այնուամենայնիւ, հայ ազգային-քաղաքական շրջանակներում գերիշխող

[38] Марукян, էջ 325-99:

[39] Ըստ ամերիկեան դիւանագիտական փաստաթղթերի, 1917 կէսերին Մեծ Բրիտանիան, Ֆրանսան եւ Ռուսաստանը, նահանջելով 1915–16ի գաղտնի համաձայնագրերի դիրքերից, կրկին առաջարկում էին Արեւմտեան Հայաստանը թողնել օսմանեան պետութեան սահմաններում՝ նրան տալով ինքնավարութիւն՝ առանց արտաքին վերահսկողութեան (Махмурян, *Армения в политике США*, էջ 28-29):

[40] Марукян, էջ 376:

էր այն տեսակէտը, որ «ԱՄՆը կարող է իր առանձին դիրքի շնորհիւ խոշոր դեր խաղալ թուրքա-Հայկական Հարցի վերջնական վճռի խնդրում»[41]:

Սակայն 1917ի հոկտեմբերեան յեղաշրջումը եւ Ռուսաստանից Անդրկովկասի անջատումը նոր ու էական շտկումներ մտցրին Հայաստանի սահմանների եւ իրաւաքաղաքական կարգավիճակի վերաբերեալ տէրութիւնների դիրքորոշումներում: Նշենք, որ հոկտեմբերեան յեղաշրջումից մինչեւ առաջին աշխարհամարտի աւարտն ընկած ժամանակահատուածը հայաստանեան պատմագրութեան մէջ դիտարկւում է որպէս Հայկական Հարցի պատմութեան առանձին փուլ, որն իր բովանդակութեամբ տարբերւում է հիմնախնդրի պատմութեան նախորդ ու յաջորդ ժամանակահատուածներից[42]: Վերոնշեալ պատմական իրադարձութիւններն ուղղակիօրէն ազդեցին Հայկական Հարցի դիւանագիտական քննարկումների ընթացքի վրայ, իսկ վերջիններիս արդիւնքները որոշիչ եղան Արեւմտեան Հայաստանի ու հայ ժողովրդի արեւմտեան հատուածի ճակատագրում: Ժամանակաւոր կառավարութեան տապալումն արմատապէս փոխեց Ռուսաստանի վերաբերմունքը թէ՛ Արեւմտեան Հայաստանի, թէ՛ կովկասեան ռազմաճակատի եւ թէ՛ Դաշնակիցների նկատմամբ, ինչի հետեւանքով ձախողուեց Հայկական Հարցի լուծումը[43]: Գիտական այս մօտեցումը հիմնաւորւում է նրանով, որ բոլշեւիկեան յեղաշրջման յաղթանակը ոչ միայն շեղեց ռուսական բազմազգ պետութիւնն իր պատմական զարգացման բնականոն ընթացքից, այլեւ էապէս ազդեց թէ՛ միջազգային յարաբերութիւնների նոր՝ Վերսալեան համակարգի ձեւաւորման եւ թէ՛ նրա գոյութեան ժամանակաշրջանում ծաւալուող միջազգային յարաբերութիւնների վրայ: 1918 Մարտի 3ին Խորհրդային Ռուսաստանի եւ Քառեակ միութեան պետութիւնների միջեւ ստորագրուած Բրեստ Լիտովսկի հաշտութեան պայմանագրով Օսմանեան կայսրութեանը վերադարձուեց Արեւմտեան Հայաստանը՝ ներառեալ Կարսը եւ Արդահանը: Այդպիսով, Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ

---

[41] *ՀԱԱ,* ֆ. 57, ց. 5, գ. 154, թ. 1: Նշենք, որ ԱՄՆը Օսմանեան կայսրութեանը ոչ միայն պատերազմ չէր յայտարարել, այլեւ երկու պետութիւնների միջեւ դիւանագիտական յարաբերութիւնները խզողը թուրքական կողմն էր (*Papers relating to the foreign relations of the United States. 1917 Supplement 1, The World War*, US Government Printing Office, Washington, D. C., 1931, էջ 603):

[42] Լ. Յովհաննիսեան, «Հայկական Հարցի պատմութեան 1917–1918 թթ. հիմնախնդիրների լուսաբանումը Հայաստանի պատմագրութեան մէջ (1991–2018 թթ.)», *Պատմաբանասիրական հանդէս,* 1:2019, էջ 112–13:

[43] Խուրշուդեան, էջ 41. նաեւ՝ Հ. Կարապետեան, *Սեւրի պայմանագիրը հայոց ճակատագրում,* խմբ.՝ Ա. Յարութիւնեան, «Հայաստանի ազգային արխիւ», Երեւան, 2004, էջ 8-9:

վերականգնուեց 1877ի պետական սահմանագիծը: Արդէն հայաթափուած Արեւմտեան Հայաստանին վերատիրացած Թուրքիայի առջեւ բացուեց դէպի Արեւելեան Հայաստան տանող ճանապարհը: Աւելին, թուրքական գործօնն աստիճանաբար ազդեցիկ նշանակութիւն ստացաւ տարածաշրջանային հարցերի լուծման մէջ թէ՛ Ռուսաստանի եւ թէ՛ արեւմտաեւրոպական պետութիւնների համար:

Առաջին աշխարհամարտի աւարտական փուլում մշակուեցին յետպատերազմեան աշխարհակարգի հիմնական սկզբունքները, որոնք իրենց արտացոլումը գտան ԱՄՆ նախագահ Ուիլսոնի՝ 1917ի վերջերին արուած յայտարարութիւններում եւ Դեկտեմբերի 29ին Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհի ընդունած «Թուրքահայաստանի մասին» հրովարտակում, 1918 Յունուարի 5ին Մեծ Բրիտանիայի վարչապետ Դէյվիդ Լոյդ Ջորջի՝ համայնքների պալատում ունեցած հիմնարար ելոյթում, ապա Յունուարի 8ին ԱՄՆ նախագահ Ուիլսոնի՝ կոնգրէսի երկու պալատների համատեղ նիստում ներկայացուած «14 կետեր»ում ու Հոկտեմբերի 14ին հրապարակուած դրանց պաշտօնական մէկնաբանութիւններում: Ըստ դրանց, հայ ժողովրդի անվտանգութեան երաշխիք համարւում էր անկախ պետականութիւնը, ճանաչւում էին հայերի օրինական իրաւունքներն իրենց հայրենիքի՝ Արեւմտեան Հայաստանի նկատմամբ[44]: Այսպէս սկիզբ դրուեց Հայկական Հարցի լուծման սեւրեան գործընթացին, որի գագաթնակէտը դարձան 1920 Օգոստոսի 10ի Սեւրի հաշտութեան պայմանագիրը եւ Նոյեմբերի 22ին Ուիլսոնի ստորագրած իրաւարար վճիռը, իսկ եզրափակիչ ակտը՝ 1923 Յուլիսի 24ին կնքուած Լոզանի միջազգային պայմանագիրը: Հայկական Հարցի պատմութեան այս շրջափուլում դրա դիւանագիտական բովանդակութիւնը հայ ժողովրդի ինքնորոշումից եւ Միացեալ ու Անկախ Հայաստանից գլխիվայր շրջուեց դէպի Թուրքիայի տարածքում Հայկական «ազգային օջախի» ստեղծում, ապա հայ ազգային եւ կրօնական փոքրամասնութեան իրաւունքների պաշտպանութիւն:

---

[44] Մելքոնեան, *Հայոց պատմութիւն. դասախօսութիւնների ձեռնարկ,* էջ 191. նաեւ՝ Դանիէլեան եւ Մելքոնեան, էջ 271. նաեւ՝ *Архив полковника Хауза* (Գնդապետ Հաուզի արխիւը), հտր. IV, «Политиздат», Մոսկուա, 1944, էջ 148-57. նաեւ՝ *Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, հտր. 1* (Հայերի Ցեղասպանութիւնը. Թուրքիայի պատասխանատուութիւնը եւ միջազգային հանրութեան պարտաւորութիւնները. փաստաթղթեր եւ մեկնաբանութիւններ, 2 հատորով), «Гардарики», Մոսկուա, 2002, փաստ. № 311, էջ 307, փաստ. № 314-317, էջ 308-10. նաեւ՝ *Armenia in documents of the U.S. Department of State, 1917-1920,* compiled and translated by Gayane Makhmourian, ed. V. R. Aglyan, Institute of History NAS of Armenia, Yerevan, 2020, փաստ. № 12, էջ 17-18:

Հայաստանեան պատմաբանների (Աւետիսեան, Մելիքեան, Մախմուրեան) գնահատմամբ, դրա պատճառներն էին՝

1. Հայկական Հարցում առանցքային դերակատարում ունեցող ԱՄՆ նախագահ Ուիլսոնի հակասութիւնները կոնգրէսի եւ Ֆրանսայի վարչապետ Ժորժ Կլեմանսոյի հետ, ինչպէս նաեւ Մեծ Բրիտանիայի վարչապետ Լոյդ Ջորջից ունեցած կախուածութիւնը[45],

2. Փարիզի հաշտութեան միջազգային վեհաժողովում քննարկման առարկայ դարձած Կոստանդնուպոլսից մինչեւ Անդրկովկաս միասնական հովանաւորութեան ամերիկեան նախագծի անուղղակի կապը թուրքական կառավարութեան համաթուրքական նուաճողական ծրագրերի հետ[46],

3. Բրիտանական կառավարութեան հակուածութիւնը լուծելու Հայկական Հարցը թուրքական պետութեան տարածքային ամբողջականութեան եւ ինքնիշխանութեան պահպանման պայմաններում, որպէս այլընտրանք ԱՄՆի աշխարհաքաղաքական յաւակնութիւններին[47],

4. Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան թուլութիւնը. ՀՀ սահմանները ձեւաւորվում էին ոչ թէ «ներսում»՝ պետութեան շահերին ու հնարաւորութիւններին համապատասխան, այլ այդ հարցի լուծումն ակնկալւում էր «դրսից»՝ Դաշնակից տէրութիւններից[48], ինչն էլ հայ ժողովրդի ու նրա անկախ

---

[45] Լ. Յովհաննիսեան, *Հայկական Հարցի 1915–1923 թթ. պատմութեան հիմնահարցերի լուսաբանումը հայաստանեան պատմագիտութեան մէջ (1991-2015 թթ.),* խմբ.՝ Գ. Մախմուրեան, «Պատմութեան ինստիտուտ», Երեւան, 2020, էջ 163–64:

[46] Նոյն, էջ 164–69, 171–73. նաեւ՝ Աւետիսեան, էջ 330, 335-36. նաեւ նոյնի՝ «Կոստանդնուպոլսից մինչեւ Անդրկովկաս ամերիկեան միասնական մանդատի հարցի շուրջ (1919–20)», *Հայկական Հարց. Հայկական Հարցի միջազգայնացման 120ամեակին նուիրուած գիտաժողովի նիւթեր,* Երեւանի «Հրաչեայ Աճառեան» համալսարան, խմբ.՝ Ստ. Պօղոսեան, Հ. Աւետիսեան եւ ուրիշներ, «Արտագերս», Երեւան, 2000, էջ 24–31:

[47] Г. Г. Махмурян, *Политика Великобритании в Армении и Закавказье в 1918–1920 гг. Бремя белого человека* (Մեծ Բրիտանիայի քաղաքականութիւնը Հայաստանում եւ Անդրկովկասում 1918-1920), խմբ.՝ Ս. Ս. Ստեփանեան, «Լուսակն», Երեւան, 2002, էջ 29-30, 39; 97-100, 162-67. նաե՝ նոյնի՝ *Лига наций, Армянский вопрос и Республика Армения* (Ազգերի լիգան, Հայկական Հարցը եւ Հայաստանի Հանրապետութիւնը), «Արտագերս», Երեւան, 1999, էջ 37, 76. նաեւ՝ Վ. Մելիքեան, *Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական Հարցի փուլերը 1917–1923 թթ.*, «Զանգակ-97», Երեւան, 2007, էջ 25. նաեւ՝ Լ. Յովհաննիսեան, *Հայկական Հարցի 1915–1923,* էջ 171-75:

[48] Դաշնակից տէրութիւնները բաժանուած էին երկու խմբի՝ գլխաւոր դաշնակից տէրութիւնների եւ Դաշնակից տէրութիւնների: Գլխաւոր դաշնակից տէրութիւններն էին՝ Բրիտանական կայսրութիւնը, ԱՄՆը, Ֆրանսան, Իտալիան,

հանրապետութեան համար ծնում էր անորոշ ու սպասողական իրավիճակ՝ կաշկանդելով եւ կասեցնելով հայկական պետականութեան համար կենսական նշանակութիւն ունեցող բազմաթիւ հարցերի լուծումը[49],

5. մեծ տէրութիւնների մրցակցութիւնն ու հակասութիւնները, որոնց դրսեւորումը ՀՀին ռազմական, դիւանագիտական, տնտեսական ու ֆինանսական օգնութիւն տրամադրելու վերաբերեալ խոստումների շռայլութեան համապատկերում նշուած ուղղութիւններով նրանց ժլատ, թերի ու աննշան գործողութիւններն էին, իսկ անմիջական հետեւանքը՝ թուրքական գործօնի աստիճանական ուժեղացումը Մերձաւոր Արեւելքում եւ Այսրկովկասում[50],

6. հայ իրականութեանը բնորոշ հատուածականութիւնը եւ դրա առանցքային դրսեւորումը՝ արեւմտահայ եւ արեւելահայ առճակատումը, որը խոչընդոտում էր ՀՀ կողմից ազգային խնդիրներն ու նպատակները միջազգային ասպարէզում հիմնաւոր եւ ընդունելի ներկայացնելուն[51]:

Պատմաբաններ Մելքոնեանի[52], Գալոեանի[53], Հրաչիկ Սիմոնեանի[54], Էդիկ Զօհրաբեանի[55], Խուրշուդեանի[56], Մախմուրեանի[57], Յակոբեանի[58],

---

Ճապոնիան, իսկ Դաշնակից տէրութիւնները՝ Պորտուգալիան, Բելգիան, Յունաստանը, Լեհաստանը, Ռումինիան, Սերբա-խորվաթա-սլովէնական պետութիւնը, Չեխոսլովակիան, Հայաստանը, Հիջազը (*Հայաստանը միջազգային դիւանագիտութեան եւ սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում (1828–1923),* խմբ.՝ պրոֆ. Զ. Ս. Կիրակոսեան, «Հայաստան», Երեւան, 1972, փաստ. № 338, էջ 676):

[49] Վ. Մելիքեան, *Արեւմտահայերի համագումարները,* էջ 43. նաեւ՝ Махмурян, *Лига наций,* 42-43. նաեւ՝ Յովհաննիսեան, *Հայկական Հարցի 1915–1923,* էջ 176-77:

[50] Մելիքեան, *Արեւմտահայերի համագումարները,* էջ 25. նաեւ՝ Махмурян, *Лига наций,* էջ 51, 56, 98. նաեւ՝ Յովհաննիսեան, *Հայկական Հարցի 1915–1923,* էջ 178-80:

[51] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 31, թ. 1-17, *Համահայկական խորհրդակցութիւններ (1912-1920 թթ.). փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու*, պատ. խմբ.՝ Ա. Վիրաբեան, ՀԱԱ հրատ., Երեւան, 2004, էջ 333-504. նաեւ՝ Մելիքեան, *Արեւմտահայերի համագումարները,* էջ 5-9, 11-12, 20, 23-24, 28. նաեւ՝ Ս. Պօղոսեան, *Պօղոս Նուբար փաշա. ազգային գործիչը,* գիտ. խմբ.՝ Մ. Կարապետեան, Ս. Դանիէլեան, «Զանգակ-97», Երեւան, 2004, էջ 164-70. նաեւ՝ Ա. Յարութիւնեան, *Սեւրի պայմանագիրը եւ հայ հասարակական-քաղաքական միտքը,* խմբ.՝ Վ. Ղազախէցեան, «Գիտութիւն», Երեւան, 2004, էջ 67-114. նաեւ՝ Махмурян, *Лига наций,* էջ 36, 61, 64-67:

[52] Դանիելեան եւ Մելքոնեան. նաեւ՝ Մելքոնեան, *Հայոց պատմութիւն. դասախօսութիւնների ձեռնարկ.* նաեւ նոյնի՝ *Յեղասպանութիւն եւ հայրենազրկում: Ճանաչումից՝ հատուցում (յօդուածներ եւ հարցազրոյցներ),* «Զանգակ», Երեւան, 2015. նաեւ նոյնի՝ *Հայաստանի պատմութեան եւ ժողովրդագրութեան հիմնահարցեր (յօդուածների ժողովածու),* «Միտք» վերլուծական կենտրոն, Երեւան, 2011. նաեւ նոյնի՝ *Հայոց պատմութեան դասերն*

Արմէն Մարուքեանի[59], Ա. Պապեանի[60], Մելիքեանի[61] վերլուծութիւններն ու եզրայանգումները գիտական ծանրակշիռ հիմք են ապահովում միջազգային իրաւունքի տեսանկիւնից Հայոց Ցեղասպանութեան հետեւանքների յաղթահարման եւ հայոց պահանջատիրութեան հիմնահարցերը մշակելու համար: Հիմնաւորուած է 1920 Օգոստոսի 10ին ստորագրուած Սեւրի հաշտութեան պայմանագրի Հայաստանին ու հայ ժողովրդին վերաբերող յօդուածների, նոյն թուականի Նոյեմբերի 22ին Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ սահմանի վերաբերեալ ԱՄՆ նախագահ Ուիլսոնի իրաւարար վճռի[62] վաւերականութիւնն ու արդիականութիւնը:

Գիտական եւ քաղաքական հրատապութիւն ունեն 1921-23ի դիւանագիտական բանակցութիւններում ու միջազգային պայմանագրերում Հայկական Հարցի արծարծումների, մասնաւորապէս՝ 1921ո Մոսկուայի եւ Կարսի պայմանագրերի վերլուծութեանն ու վերարժեւորմանը նուիրուած

ու պատգամները, «Գիտութիւն», Երեւան, 2013. նաեւ նոյնի՝ *Պատմագիտական հետազօտութիւններ,* Պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2021:

[53] Գալոյեան, *Հայաստանը եւ մեծ փէրութիւնները 1917–1923 թթ.:*

[54] Հր. Սիմոնեան, *Թուրք-հայկական յարաբերութիւնների պատմութիւնից*, «Հայաստան», Երեւան, 1991:

[55] Է. Զոհրաբեան, *Նախիջեւանեան հիմնահարցը եւ Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր-1920 թ. ապրիլ),* ա. հ., Երեւան, 2002:

[56] Լ. Խուրշուդեան, *Հայկական Հարցը. բովանդակութիւնը.* նաեւ նոյնի՝ *Հայաստանի բաժանումը 1920 թուականին,* ԵՊՀ հրատ., Երեւան, 2002:

[57] Махмурян, *Армения в политике США.* նաեւ նոյնի՝ *Лига наций.* նաեւ նոյնի՝ *Политика Великобритании в Армении:*

[58] Ա. Յակոբեան, *Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920 թթ.,* խմբ.՝ Գ. Խուդինեան, «Լուսակն», Երեւան, 2018. նաեւ նոյնի՝ *Միացեալ եւ անկախ Հայաստանի գաղափարը հայոց պատմութեան հոլովոյթում,* խմբ.՝ Խ. Ստեփանեան, «Լուսակն», Երեւան, 2020. նաեւ նոյնի՝ Յակոբեան, *Հայաստանի Հանրապետութեան ռազմաքաղաքական դրութիւնը 1920 թ.,* պատ. խմբ.՝ Դ. Գասպարեան, Հ. Գրիգորեան, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2022:

[59] Մարուքեան, *Հայոց Ցեղասպանութեան հետեւանքների յաղթահարման:*

[60] Ա. Պապեան, *Հայրենատիրութիւն. հայոց պահանջատիրութեան իրաւական հիմունքները եւ յարակից հարցեր (յօդուածների ժողովածու),* «Ասողիկ», Երեւան, 2012:

[61] Վ. Մելիքեան, *Հայկական պահանջատիրութիւն. հայութեան ինքնակազմակերպման խնդիրը եւ Արեւմտահայերի 3րդ համագումարի անհրաժեշտութիւնը,* «Զանգակ-97», Երեւան, 2010:

[62] Տե՛ս *Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson. Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary Between Turkey and Armenia. Washington, November 22nd, 1920.* Prepared with an introduction by A. Papian, Asoghik Publishing House, Yerevan, 2011. նաեւ՝ *Геноцид армян: ответственность Турции, Кн. 1,* փաստ. № 473, էջ 557:

աշխատանքները: Դրանցում կենտրոնականը նշուած պայմանագրերի՝ միջազգային իրաւունքին համապատասխանութեան հարցերն են: Պատմաբանների գնահատմամբ, Մոսկուայի եւ Կարսի պայմանագրերով Թուրքիան եւ Ռուսաստանը ամենակոպիտ կերպով խախտել են հայ ժողովրդի ինքնորոշման իրաւունքը: Այդ պայմանագրերը հակաօրինական են, թէեւ մինչ օրս դրանցով են կարգաւորւում հայ-թուրքական սահմանային յարաբերութիւնները[63]:

Այսպիսով, 1988ին Արցախեան շարժմամբ պայմանաւորուած եւ 1991ին հռչակուած Հայաստանի անկախութիւնը պատմական հզօր տեղաշարժ է հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կեանքում: Դրա շնորհիւ էական փոփոխութիւններ են կատարուել համազգային հոգեբանութեան մէջ եւ մտածելակերպում, ինչի վկայութիւնն ազգային պատմութեան հիմնահարցերի անկաշկանդ ուսումնասիրումն ու վերագնահատումն է ազգային-պետական շահերի տեսանկիւնից: Մասնաւորաբար, 1878–1923ին Հայկական Հարցի պատմութեանը նուիրուած ուսումնասիրութիւնները վերհանում են Հայկական Հարցի դիւանագիտական փոխակերպման աստիճանական ընթացքը Օսմանեան կայսրութեան սահմաններում Արեւմտեան Հայաստանի բարենորոգումներից եւ ինքնավարութիւնից մինչեւ Միացեալ Հայաստանի անկախութեան ճանաչում: Դրանով իսկ վերջին 32 տարիներին հիմնահարցի վերաբերեալ լոյս տեսած հիմնարար աշխատութիւնները ոչ միայն նոր խօսք են հայ պատմագիտութեան մէջ, այլեւ ունեն գործնական նշանակութիւն Թուրքիայի կողմից խլուած Արեւմտեան Հայաստանի, Կարսի եւ Արդահանի նկատմամբ հայ ժողովրդի իրաւունքները պաշտպանելու տեսանկիւնից: Բացի այդ, անցեալի խորքային իմացութիւնը նպաստում է ներկայ իրադրութեան առանձնայատկութիւնները գնահատելուն, ապագայի վերաբերեալ

---

[63] Ա. Акопян *Московский и Карсский договоры в судьбе армянского народа (по поводу 100-летия заключения договоров)* (Մոսկուայի եւ Կարսի պայմանագրերը հայ ժողովրդի ճակատագրում (պայմանագրերի 100ամեակի առիթով)), պատ. խմբ.՝ Խ. Ռ. Ստեփանեան, «Գիտութիւն», Երեւան, 2021. նաեւ՝ Ա. Марукян, «Историко-правовой анализ советско-турецкого Московского договора 1921 года «О дружбе и братстве»» («1921 թուականի «Բարեկամութեան եւ եղբայրութեան մասին» Մոսկուայի խորհրդա-թուրքական պայմանագրի պատմահրաւական վերլուծութիւն»), *Պատմաբանասիրական հանդէս* 1:2021, էջ 3-19. նաեւ՝ Լ. Յովհաննիսեան, Ռուս-թուրքական գործակցութիւնը եւ 1921 թ. Մարտի 16ի Մոսկուայի պայմանագիրը հայաստանեան պատմագիտութեան գնահատմամբ (1991-2020), *Պատմաբանասիրական հանդէս*, 1:2021, էջ 20-46. նաեւ՝ Ա. Մարուքեան, «Կարսի 1921 թ. Հոկտեմբերի 13ի պայմանագրի գործադրման ընթացակարգերը», *Վէմ համահայկական հանդէս*, 4:2021, էջ 301-18. նաեւ՝ Լ. Յովհաննիսեան, «1921 թ. Հոկտեմբերի 13ի Կարսի պայմանագիրը հայաստանեան արդի պատմագիտութեան գնահատմամբ (1991-2021 թթ.)», *Վէմ համահայկական հանդէս*, 4:2021, էջ 319-37:

հիմնաւոր կանխատեսումներ կատարելուն: Մասնաւորապէս, անհնար է չնկատել, որ մեր օրերում Արցախի եւ Հայաստանի երրորդ Հանրապետութեան անվտանգութեան, իրաւական կարգավիճակի եւ ապագայի հարցերը եւս դարձել են Հայկական Հարցի մաս:

Հայկական Հարցի հիմնախնդիրների նորովի ուսումնասիրումը փաստական եւ վերլուծական ծանրակշիռ հիմք է հայ ժողովրդի ու հայկական անկախ պետութեան համար՝ ազգային խնդիրների լուծման գործում արտաքին քաղաքական ուժերի ազդեցութեան ու աջակցութեան վրայ յենուելու, միեւնոյն ժամանակ դրանցով չտարուելու, միջազգային իրադրութեան փոփոխութիւններից շահեկանօրէն օգտուելու կարողութիւն մշակելու տեսանկիւնից: Մասնաւորապէս, Հայ Դատի պատմական ընթացքի, դրան վերաբերող միջազգային իրաւական փաստաթղթերի ուսումնասիրման արդիւնքում հայ հասարակութեան եւ նրա շահերը ներկայացնող իշխանութիւնների համար այլեւս անառարկելի է, որ Թուրքիայի ու Հայաստանի միջեւ դիւանագիտական յարաբերութիւնների վերականգնումը հնարաւոր է միայն Հայաստանին ներկայացուած նախապայմաններից Թուրքիայի հրաժարման դէպքում՝ օրակարգում պահելով մեր բռնազաւթուած հայրենիքի վերադարձի խնդիրը:

THE TRANSFORMATION OF THE DIPLOMATIC CONTENT OF THE ARMENIAN QUESTION BETWEEN 1878 AND 1923 ACCORDING TO THE STUDIES OF ARMENIAN HISTORIOGRAPHERS IN ARMENIA BETWEEN 1991 AND 2022

(SUMMARY)

Lilit Hovannisian
lilithovannisian@yahoo.com

The proclamation of Armenian independence in September 1999 gave Armenian historiographers the broad opportunity for a free, unrestrained and multifaceted study of Armenian historical isues which had complicated and multilayered features. One of the most significant among these isues is that of the Armenian Cause.

The paper focuses on the achievements of the historiogrpahers of the Third Armenian Republic regarding their novel approaches in analysing and assessing diverse aspects of the Armenian Cause.

The paper notes that notwithstanding the fact that this new research is based to a certain extent on outstanding Soviet studies, it is being complemented with newly publicized diplomatic documents, as well as the new publications of Diaspora and foreign historiographers that shed new light on the issues of the reform, autonomy and independence of Western Armenia and shed further light on the politics and policies of the big powers of the time regarding the Armenian Question.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԵՒ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Վիլէն Մնացականեան
mnatsakanyanvilen@gmail.com

ՄՈՒՏՔ

Հայաստանը վերջին հարիւրամեակում վերապրել է մի շարք խոշոր եւ շրջադարձային ճգնաժամեր, որոնք խորապէս վերափոխել են թէ՛ տնտեսութեան կառուցուածքը, թէ՛ վերաիմաստաւորել նոր իրողութիւններին համարժէք տնտեսական քաղաքականութեան անհրաժեշտութիւնը: Սոյն հետազօտութիւնը ուղղուած է հասկանալու նշուած ժամանակաշրջանում Հայաստանի տնտեսութեան փոփոխութիւնների բնոյթն ու ընթացքը, ինչպէս նաեւ պարզելու դրանից բխող տնտեսական քաղաքականութեան վերափոխումների արդիւնաւէտութիւնն ու հեռանկարները: Վերոգրեալից ելնելով՝ հետազօտութիւնը բաղկացած է ցարական Ռուսաստանի կազմում Հայաստանի տնտեսականկ իրավիճակի, Հայաստանի Առաջին Հանրապետութեան տնտեսական կայացման, Խորհրդային Հայաստանի արմատական վերափոխումների եւ Հայաստանի Երրորդ Հանրապետութեան տնտեսական քաղաքականութեան վերլուծութիւններից. ամէն նկարագրուած բաժին ջանում է յստակեցնել այդ փուլին բնորոշ տնտեսական իրողութիւնները եւ հիմնական ազդակները եւ գնահատել ժամանակի իշխանութիւնների կողմից ընտրուած տնտեսական քաղաքականութեան օգտակարութիւնն ու արդիւնաւէտութիւնը:

Ա. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ

Ա. Հանրապետութեան շրջանի Հայաստանի տնտեսական կառուցուածքի ամբողջական ընկալման համար հարկաւոր է վերլուծութիւնը սկսել Ի. դարի առաջին տասնամեակներից: 1900ի դրութեամբ Արեւելեան Հայաստանի տարածքը, ինչպէս նաեւ Կարսի շրջանը մտնում էին Ռուսական կայսրութեան կազմի մէջ: Այնուամենայնիւ, պէտք է ընդգծել, որ ցարական Ռուսաստանի վարչական բաժանումը զգալիօրէն տարբերւում էր Հայաստանի ժամանակակից կառուցուածքից: Հետեւաբար, մինչեւ Հայաստանի Ա. Հանրապետութեան ձեւաւորումը Հայաստանի տնտեսական կառուցուածքի դիտարկումը անհրաժեշտ է բաժանել երկու մասի՝ նախապատերազմական (1900-13) եւ առաջին աշխարհամարտի շրջան (1914-17):

1900-13. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

1900ի դրութեամբ Հայաստանը աւատատիրական-հողագործական տնտեսութիւն էր: ԺԹ. դարի ընթացքում իրականացուած հողային բարենորոգումները չէին տուել զգալի արդիւնքներ. արդարեւ, շարունակում էին գործել դեռեւս ղաջարական Պարսկաստանի ներքոյ գործող հողային փոխյարաբերութիւնները: 1900ի Մայիսի մէկից ուժի մէջ մտած նոր հողային օրէնքով գիւղացիութիւնը բաժանուեց պետական եւ կալուածատիրական հողերի վրայ բնակուողների (վերջիններիս յարաբերակցութիւնը կազմում էր 70% եւ 30%):

Հայաստանում ցարական Ռուսաստանի տնտեսական քաղաքականութիւնը ունէր մի շարք հիմնական ուղղութիւններ: Դրանցից առաջինը ռուսական բնակչութեան՝ Հայաստանի տարածքում վերաբնակեցման քաղաքականութիւնն էր, որը նպատակ ունէր այս տարածքում բնակչութեան ազգային կազմը փոխել եւ հնարաւոր ազգային համախմբման ռիսկերը նուազեցնել[1]: Այսպէս՝ Սեւանի աւազանի տարածքում պետական հողերի վրայ բնակուող հայերին տրամադրւում էր 1 դեսիատին (1.09 հեկտար) հող, իսկ ռուս գիւղացիներին՝ 1.8 դեսիատին: 1915ին Կարսի շրջանի հայ բնակիչներին հասնում էր 1.8 դեսիատին, իսկ ռուսներին՝ 5: Ուստի, կարելի է արձանագրել, որ գործում էր ցանքատարածութիւնների տրամադրման տարբերակուած մօտեցում: Նաեւ՝ ռուսական բնակավայրերը տեղակայուած էին խոշոր քաղաքները կապող ճանապարհների վրայ, ինչպէս նաեւ երկաթուղու մօտ՝ դրանով իսկ Հայաստանի ռուս բնակչութեանը լրացուցիչ եկամուտ ստանալու հնարաւորութիւն տալով: Բացի այդ, թէեւ Ռուսաստանի ներքին գաւառներում հողի գինն ու դրանից ստացուող վարձավճարը աւելի բարձր էին, քան Հայաստանում, վերջիններիս մօտ հողի հարկի դրոյքաչափերը, այնուամենայնիւ, անհամեմատ բարձր էին: Գիւղացիական բանկի պաշտօնական տուեալների համաձայն, կալուածատէրերին պատկանող հողի մէկ դեսիատինի միջին գինը Տաւրիդայի նահանգում (ներկայիս Ուկրաինայի հարաւային շրջաններ) կազմում էր 175 ռուբլի, իսկ Երեւանի նահանգում՝ 120 ռուբլի, իսկ մէկ դեսիատինի համար պետական տուրքը՝ համապատասխանաբար 4/5 կոպէկ եւ 18 կոպէկ[2]:

Կարեւոր ուղղութիւն էր նաեւ Ռուսաստանի հարկային քաղաքականութիւնը Հայաստանի տարածքում. վերոնկարագրեալ հողային բաժանումը՝ պետականի եւ կալուածատիրականի, փոխում էր

---

[1] Ա. Հայթեան, “Անդրկովկասում ռուսական բնակավայրերի հիմնադրման պատմութիւնից”, ԵՊՀ հրատ., Երեւան, էջ 66,
URL: http://www.old.ysu.am/files/06A_Haytyan.pdf

[2] Դ. Իսմայիլ-զադէ, Ռուսական բնակատեղերը Անդրկովկասում 19րդ դարի 30-80ականներ (Русские поселения в Закавказье в 30-х-80-х годах XIX века), *Պատմության հարցեր*, 11:1976:

նաեւ դրանց վրայ կիրառուող հարկային միջոցները: Պետական հողերի վրայ բնակուողները վճարում էին հարկերը միայն գումարի տեսքով, իսկ կալուածատիրական հողերի վրայ ապրողները՝ թէ՛ փողային, թէ՛ բնամթերքի տեսքով: Գործում էր հարկի երեք տեսակ. ծխահարկ, դրամական բահրա (հողի հարկ), ծխական կամ զեմստուային տուրքեր: 1901-3ի դրութեամբ պետական հողերի վրայ ապրող գիւղացիներն իրենց եկամտի 20,4%ը վճարում էին երկրի գանձարան: Կալուածատիրական հողերի վրայ ապրող գիւղացիները վճարում էին հողից ստացուած մաքուր եկամտի 10,4%ը, ինչպէս նաեւ հողատէրերին վճարում էին բերքի 2/15ը՝ արդիւնքում իրենց պահելով մաքուր եկամտի 1/3ը: Այսպիսով՝ հարկային քաղաքականութեան այս ձեւաչափը ընկերային հաւասարութեան գործիքի դեր չէր խաղում:

Ռուսաստանի արդիւնաբերական քաղաքականութիւնը դիտարկում էր Հայաստանը որպէս սեփական հումքային վայր: Չնայած այն հանգամանքին, որ Ռուսաստանում սկսեց զարգանալ դրամատիրութիւնը, Երեւանի նահանգի տնտեսութեան կառուցուածքը առանձնապէս չփոխուեց. արդիւնաբերութեան տեսակարար կշիռը 1900ին կազմում էր 24,8%, գիւղատնտեսութեանը՝ 75,2%, իսկ 1913ին առաջինի բաժինը կազմում էր 36,3%, երկրորդի՝ 63,7%: Արդիւնաբերութեան զարգացման առումով Հայաստանը զիջում էր Ռուսաստանի միջին մակարդակին. եթէ ամբողջ կայսրութիւնում 1913ին արդիւնաբերութեան տեսակարար կշիռը կազմում էր 42%, ապա Հայաստանում՝ 36,3%: Երեւանի նահանգի տնտեսութիւնը տիպիկ գաղութային էր: Ռուս եւ եւրոպացի դրամատէրերը շահագործում էին Հայաստանի արժէքաւոր բնական պաշարները: Երկրում հիմնականում զարգանում էր հանքարդիւնաբերական եւ գիւղատնտեսական հումքի նախնական մշակումը՝ պղնձի, գինու-կոնիակի, բամբակի արդիւնաբերութեան տեսքով:

ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

1914ին Հայաստանն անմիջապէս դարձաւ պատերազմական գօտի եւ այդ պատճառով պատերազմի կործանարար ազդեցութիւնը նրա տնտեսութեան վրայ աւելի ուժեղ եղաւ: Եթէ ցարական կայսրութիւնում բանակ զօրակոչուողները կազմում էին ընդհանուր բնակչութեան 8%ը, ապա Հայաստանում այդ տոկոսը հասնում էր մօտաւորապէս 10%ի: Գիւղացիներից առգրաւուեցին մեծ քանակութեամբ անասուններ, հիմնականում՝ ձիեր: Պատերազմը մեծ վնաս հասցրեց Հայաստանի պղնձի, գինու, կոնիակի արդիւնաբերութեանը: Պղնձի արտադրութեան նուազման պատճառներն էին արտադրութեան իրացման անհնարինութիւնը, վառելիքի ընդհատուող մատակարարումները եւ աշխատողների պակասը: Ռուսաստանի ներքին գաւառների հետ կապող

երկաթգիծը ծանրաբեռնուած էր կովկասեան ռազմաճակատի համար զէնքի մատակարարմամբ: Այս հանգամանքով է բացատրւում նաեւ այն փաստը, որ արտադրուած պղինձը չի մատակարարուել գործարաններին եւ կուտակուել է Հայաստանի պահեստներում (1916ին Ալաւերդու արտադրութեան միայն 27%ն է ուղարկուել գործարաններ): Պատերազմի տարիներին նուազել է նաեւ գինու եւ կոնիակի արտադրութիւնը: Դրա հիմնական պատճառներից մէկը իրացման դժուարութիւններն էին: Տարէցտարի նուազում էր նաեւ երկրի տնտեսութեան հիմնական ճիւղի՝ գիւղատնտեսութեան արտադրութիւնը: Համառուսաստանեան գիւղատնտեսական մարդահամարի տուեալներով, Երեւանի գաւառում գիւղատնտեսական մշակաբոյսերի ցանքատարածութիւնը 1916ին՝ 1913ի համեմատ նուազել էր 30,5%ով: Այս դժուարին իրավիճակը սրւում էր բարձր գնաճի պատճառով:

Այսպիսով, Ռուսական կայսրութիւնը Հայաստանում վարում էր խտրական տնտեսական քաղաքականութիւն՝ թուլացնելով հայ վաճառականների դիրքերը եւ նրանց փոխարինելով ռուս եւ եւրոպացի դրամատէրերով, օգտագործելով Հայաստանի աղբիւրները եւ միեւնոյն ժամանակ չստեղծելով աւելացուած արժէք յառաջացնող վերամշակող արդիւնաբերութեան ձեռնարկութիւններ, որոնք կը նպաստէին բնակչութեան բարեկեցութեան բարձրացմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի Առաջին Հանրապետութեան տնտեսական քաղաքականութեան դիտարկման առումով կարեւոր է նշել այն տնտեսական վիճակն ու խնդիրները, որոնք ժառանգել է Առաջին Հանրապետութիւնը եւ որոնցից բխում է այս շրջանի տնտեսական քաղաքականութիւնը: Արդարեւ, 1918 Մայիսի վերջից մինչեւ 1919ի գարունը կարելի է դիտարկել՝ որպէս Առաջին Հանրապետութեան տնտեսական քաղաքականութեան առաջին փուլ: Այս շրջանը ճգնաժամային էր, քանի որ հանրապետութեան տարածքում կային թուրքական գրաւող զօրքեր, Արեւմտեան Հայաստանից եկել էին մեծ թուով փախստականներ (մօտ 300,000), քաղաքական գործօնի (փետրուարեան եւ հոկտեմբերեան յեղափոխութիւններ) պատճառով հիմնական գործընկերոջ՝ Ռուսաստանի հետ խզուած էր տնտեսական կապը, Վրաստանի տարածքով Հայաստանը աշխարհի հետ կապող միակ ճանապարհը փակուել էր վրացական իշխանութիւնների կողմից: Երկրում տարածուել էր սովը եւ ժանտատենդի եւ մաղձախտի համաճարակը: Այս ճգնաժամային շրջանի համար, հաշուի առնելով Հայաստանի տնտեսութեան հողագործական կառուցուածքը՝

1. Կառավարութիւնը կատարում է հողային բարենորոգում. ամբողջ հողերը ազգայնացւում են եւ ստեղծւում է հողային կոմիտէ: Հողը փոխանցուեց տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնք իրենց հերթին իրաւունք ունէին այն վարձակալութեամբ տալ մշակողներին:

2. Արտահանման հիմնական ապրանքների (բամբակ, ցորեն, աղ, խմիչքներ, գետնախնձոր) վրայ տարածուեց պետական մենաշնորհային քաղաքականութիւն: Շուստովի Երեւանի կոնիակի գործարանը ազգայնացուեց:

3. 1918 Հոկտեմբերին 1 միլիոն ռուբլի է յատկացւում փախստականներին օգնելու համար:

Այսպիսով, այս ընթացքում պետական ամավարկի զգալի մասն ուղղուել է որբերի եւ փախստականների ապահովմանը եւ զինուած ուժերին ու սահմանների պաշտպանութեանը:

Երկրորդ փուլն ընդգրկում է 1919ի գարնանից մինչեւ 1920 Դեկտեմբերը, որը կարելի է բնութագրել որպէս դանդաղ զարգացման շրջան: Առաջին հերթին դա կապուած է ԱՄՆից մարդասիրական օգնութեան տրամադրման հետ (1,3 մլն. փութ[3] (569 վագոն) ալիւր, 257 հազար փութ ցորեն, 90 մլն. ռուբլու յատկացում 15,000 որբերի համար)[4]: Տնտեսական քաղաքականութիւնն ուղղուած էր գիւղատնտեսութեան եւ արդիւնաբերութեան վերականգնմանը: Կարսի մարզում կառուցւում են օրինակելի ագարակներ եւ նոր ջրանցքներ՝ հողատարածքները ոռոգելու համար: Բացւում են օճառի, կաշուի վերամշակման, յախճապակու եւ ծխախոտի արտադրութեան փոքր գործարաններ (մինչեւ 1919՝ գործել է 5 գործարան), Դիլիջանում եւ Սարիղամիշում հիմնւում են սղոցարաններ, իսկ Կողբում՝ աղի արտադրութիւններ: 1920ին ձեւաւորւում է նաեւ դրամավարկային քաղաքականութիւնը. 1918 Սեպտեմբերից մինչեւ 1920 Յունուարը հաւաքուել է 30 միլիոն ռուբլու հարկ, չնայած նոյն ժամանակահատուածում միջին ամսական ծախսը կազմել է 17,5 միլիոն ռուբլի: Այսպիսով, դրամավարկային քաղաքականութիւնը սկսեց գումարների յաւելեալ թողարկում՝ դրանով իսկ առաջացնելով գնաճ. 1920ին գնաճը կազմում էր 15500%: Մարդուժի զարգացման համար իրականացուել է գրագիտութեան բարձրացման քաղաքականութիւն. եթէ 1918-19ին կար 133 տարրական դպրոց՝ 11,136 աշակերտով, ապա 1919-20ին արդէն կար 456 տարրական դպրոց՝ 41,188 աշակերտով: 1919 Մայիսի 16ին որոշում է կայացւում բացել համալսարանը: Այն բացւում է 1920 Յունուարի 31ին: Աշխատանքային պայմանները բարելաւելու նպատակով սահմանուել է ութժամեայ աշխատանքային ժամանակացոյց:

---

[3] Փութը ծանրութեան ռուսական չափման միաւոր էր. մէկ փութը հաւասար էր 16.3 կիլոգրամի:

[4] Ս. Վրացեան, *Հայաստանի Հանրապետութիւն*, ՏՊ. Մշակ, Պէյրութ, 1958, էջ 242:

Այսպիսով, Առաջին Հանրապետութեան տնտեսական քաղաքականութիւնը, չնայած դրամատիրական համակարգի ժառանգորդը լինելուն, դրա ձեւաւորման սկզբնական տարիներին օգտագործեց պետական մենաշնորհի գործիքը տնտեսութեան առաջատար ճիւղերի վրայ: Այս քաղաքականութիւնն արդարացուած էր երկրում ստեղծուած ծանր ընկերատնտեսական եւ քաղաքական իրավիճակով: Երկրորդ շրջանում, չնայած ընկերատնտեսական չլուծուած խնդիրներին, պետութիւնը տնտեսական քաղաքականութիւն է վարում արդիւնաբերութեան զարգացման եւ գիւղատնտեսութեան արդիականացման, ինչպէս նաեւ մարդուժի զարգացման ուղղութեամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

Հայաստանում խորհրդային իշխանութեան հաստատումից յետոյ տնտեսական քաղաքականութիւնը զգալի փոփոխութիւնների ենթարկուեց՝ դրամատիրական սկզբունքներից անցնելով ծրագրային տնտեսութեան: Սա նշանակում էր, որ պետութիւնը կենտրոնական վերահսկողութիւն ունէր տնտեսական որոշումների կայացման գործընթացների վրայ, ներառեալ՝ աղբիւրների բաշխումը, արտադրութեան չափաբաժինները եւ գնագոյացումը: Նպատակն էր հասնել տնտեսական հաւասարութեան եւ խրախուսել խմբային սեփականութիւնը, այլ ոչ թէ անհատական շահոյթը: Սակայն այս տնտեսական քաղաքականութիւնը նոյնպէս փոփոխութիւնների ենթարկուեց: 1920 Դեկտեմբերից մինչեւ 1921 Ապրիլը կիրառուել է պատերազմական կոմունիզմի քաղաքականութիւն՝ առանց հաշուի առնելու Հայաստանի տնտեսական առանձնայատկութիւնները: Այս քաղաքականութեան բնութագրիչներն էին.- 1) միջին եւ խոշոր արդիւնաբերութեան ազգայնացումը, 2) պարենային բռնակալութիւնը, 3) քաղաքի եւ գիւղի միջեւ ուղիղ փոխանակումը, 4) ապրանքների բաշխման կտրօնային համակարգը: Սակայն, պատերազմական կոմունիզմը Հայաստանում դրական արդիւնքներ չտուեց. 1913ի համեմատ 1920-21ին երկրի ՀՆԱն անկում կրեց 7,4 անգամ, արդիւնաբերութիւնը՝ 12, գիւղատնտեսութիւնը՝ մօտ 6 անգամ:

Ի. դարի 20ականներին պատերազմական կոմունիզմը փոխարինուեց նոր տնտեսական քաղաքականութեամբ (ՆՏՔ): ՆՏՔի յատկանիշեր էին.-

1) Համատեղ ձեռնարկութիւնների, վարձակալութեան եւ աշխատուժ վարձելու միջոցով արդիւնաբերութիւն մասնաւոր դրամագլուխ ներգրաւելու թոյլտուութիւն.

2) Հանուեց աղքատութեան հարկը, թոյլատրւում էր հողի վարձակալութիւնը եւ վարձու աշխատուժը.

3) Առեւտրի ազատութիւն, անվճար ծառայութիւնների վերացում.

4) Խառը տնտեսութեան տարրեր՝ համակցուած պետական սեփականութեան հետ.

5) Բոլոր գնումները կատարւում են ազատ գներով.

6) Դրամավարկային քաղաքականութիւն եւ գնաճի կանխարգելում.

7) Տնտեսական մեթոդների կիրառում, տարբեր ձեռնարկութիւնների կազմուած արտադրական համալիրների զարգացում.

8) Աշխատանքի համար տնտեսական խթանների ներդրում:

Հարկ է նշել, որ ՆՏՔն, ի տարբերութիւն պատերազմական կոմունիզմի, տարբեր կիրառութիւն ունէր՝ կախուած տարածաշրջանից: Հայաստանում ՆՏՔի առանձնայատկութիւններն էին.

1) Մանր բուրժուազիայի, մտաւորականութեան եւ, մասնաւորապէս, գիւղացիների նկատմամբ առաւել զգուշաւոր եւ փոխզիջումային վերաբերմունքի դրսեւորում.

2) Էլեկտրականացման եւ ջրանցքների կառուցման ծրագրերի իրականացում. առաջինի իրականացումը թոյլ կը տար վերականգնել ու զարգացնել արդիւնաբերութիւնը, իսկ երկրորդինը՝ գիւղատնտեսութիւնը.

3) Պարսկաստանի հետ արտաքին առեւտրի զարգացում.

4) Հայաստանում ՆՏՔն իրականացւում էր գիւղատնտեսական հողերի սակաւութեան պայմաններում, եւ այդ պատճառով շեշտը դրւում էր թեթեւ եւ սննդի արդիւնաբերութեան զարգացման վրայ.

5) 1921 Ապրիլի 10ի եւ 16ի որոշումներով արգելւում էին տարատեսակ բռնագրաւումներն ու խուզարկութիւնները, ցանելիք սերմացուն ազատւում էր բռնագրաւումից, ցանքսերից ստացուած բերքը ամբողջովին պատկանում էր ցանողին եւ պարենհարկը մուծելուց յետոյ աւելցուկը նա կարող էր ազատ վաճառել[5]:

Ամփոփելով, կարելի է ասել, որ ՆՏՔն Հայաստանում յանգեցրեց գիւղատնտեսութեան զարգացման համար առաւել բարենպաստ պայմանների ստեղծմանը եւ հիմքեր ստեղծեց արդիւնաբերութեան զարգացման համար. վերականգնուեցին գինու եւ կոնիակի արտադրութիւնը եւ պղնձի արդիւնահանումը, որոնց բաժին էր ընկել 1927ի արտադրութեան 84%ը՝ 15,5 մլն. ռուբլի[6]:

ԽՄԲԱՅՆԱՑՈՒՄՆ ՈՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Յետագայ տարիների տնտեսական քաղաքականութիւնը պէտք է բնութագրել որպէս արդիւնաբերականացման, խմբայնացման եւ արտադրական աղբիւրների ընկերվարական սկզբունքով բաշխման

---

[5] *ԽՍՀՄ դեկրետների եւ հրամանների ժողովածու*, Էջմիածին, 1921, էջ 12-13:

[6] Մ. Ս. Կարապետեան, Է. Գ. Գէորգեան, *Խորհրդային Հայաստանը 1920-1991 թուականներին*, Երեւան, 2007,
URL: http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/karapetyan-Hayastan.pdf :

շրջան: Ճարտարարուեստականացման քաղաքականութիւնը, ի տարբերութիւն դրամատիրական համակարգի, առաջնահերթութիւն էր տալիս ծանր արդիւնաբերութեան զարգացմանը. ճարտարարուեստականացումը սկսուեց մետաղամշակման, մեքենաշինութեան, քիմիայի եւ ելեկտրականացման ոլորտներից: Ժողովրդական տնտեսութեան մակարդակը 1927/1940ի յարաբերակցութեամբ աճել է 3,4 անգամ: Նաեւ, եթէ 1927ին արդիւնաբերութեան տեսակարար կշիռը կազմում էր 22,7%, ապա 1940ին այն արդէն 30,6% էր, որում թեթեւ արդիւնաբերութիւնը աճել էր 16,2, իսկ ծանրը՝ 24,3 անգամ: 1928-32ին կատարուել են 2,5 անգամ աւելի ներդրումներ, քան առաջին հնգամեայ ծրագրում[7]:

Ուժանիւթի զարգացումը հնարաւորութիւն ընձեռեց արդիւնաբերութեան յետագայ զարգացման եւ ուժանիւթի անկախութեան՝ հարեւան հանրապետութիւններից: Խմբայնացումը նպատակ ունէր կապել փոքր գիւղատնտեսական միաւորները խոշոր ընկերվարական տնտեսութեան հետ: Գիւղմթերքի իրացման խնդիրը լուծելու համար կիրառուեց պայմանագրային քաղաքականութիւն: Գիւղական աղքատ տնային տնտեսութիւնների համար ստեղծուեց երկարաժամկէտ վարկային հիմնադրամ: Արդիւնքում ոռոգելի հողատարածքների մակերեսը 1937ին՝ 1932ի համեմատ աճել է 40%ով, կազմելով 160,6 հազար հեկտար: Պտղի բերքը 1940ին՝ 1913ի համեմատ աճել է 3,2 անգամ, բամբակի բերքը՝ 2 անգամ, իսկ ընդհանուր առմամբ գիւղատնտեսութեան համախառն արտադրանքը նոյն տարիներին աճել է 56%ով[8]:

ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Բ. համաշխարհայինի ժամանակաշրջանը (1941-45) որոշակի փոփոխութիւն մտցրեց Խորհրդային Հայաստանի տնտեսական քաղաքականութեան մէջ. արդիւնաբերութեան ճիւղերը, որոնք կարեւոր դեր են խաղում պաշտպանական ոլորտում, ինչպիսիք էին պղնձի, քիմիական, հիւսուածեղէնի արդիւնաբերութիւնը, մետաղագործութիւնը, պահածոյացումը եւն., աւելացրին իրենց արտադրութեան ծաւալները՝ զինուորականների կարիքները բաւարարելու համար: Յետպատերազմեան քաղաքականութիւնն նոյնպէս ուղղուած էր արդիւնաբերութեան աճի թափի պահպանմանը. 1956ի դրութեամբ Հայաստանի ողջ արդիւնաբերութեան արտադրութեան ծաւալը 1940ի համեմատութեամբ աճել էր 5,2 անգամ, որից ծանր արդիւնաբերութիւնն աճել էր 10,3 անգամ, իսկ մեքենաշինութիւնը՝ 21 անգամ,

[7] Վլ. Ղազարեան, *Հայաստանը 1920-1940* , Երեւան, 2006, էջ 350:

[8] Կարապետեան-Գէորգեան:

ելեկտրաուժանիւթի արտադրութիւնը՝ 6 անգամ, թեթեւ արդիւնաբերութիւնը՝ 4,5 անգամ, իսկ սննդի արդիւնաբերութիւնը՝ 2 անգամ: Խմբայնացման քաղաքականութեան եւ գիւղատնտեսական արտադրութեան կտրուկ աճի եւ գիւղատնտեսական ապրանքների մթերման եւ գնման գների բարձրացման պայմաններում խմբային տնտեսութիւնների ֆինանսական բարեկեցութեան զգալի բարելաւում է նկատւում. 1955/1940 յարաբերակցութեամբ խմբային տնտեսութիւնների հասոյթը աճել է 3 անգամ:

Յետպատերազմեան տարիները պէտք է բնութագրուեն նաեւ հայրենադարձութեան քաղաքականութեամբ, ինչը ուղղուած էր վերականգնելու երկրի տնտեսապէս աշխուժ բնակչութեան ծաւալը, հայրենադարձների բարձր որակաւորում ունեցող աշխատուժի օգտագործմանը երկրի տնտեսութեան առաջադէմ ճիւղերի զարգացման համար: Հայրենադարձութիւնը ծաւալուեց մեծ չափերով, յատկապէս Սուրիայում եւ Լիբանանում. Հալէպում հայրենադարձուել ցանկացող քանակը կազմել է 75,000 մարդ, իսկ 1946ի տուեալներով՝ 14 հազար ընտանիք կամ լիբանահայերի 90 տոկոսը գրանցուած է եղել հայրենադարձման համար[9]: 1946 Յունիսի 23ին Բէյրութի նաւահանգստից Բաթումի նաւահանգիստ մեկնեց առաջին շոգենաւը՝ տեղափոխելով 1806 մարդ: 1946-49ին Սփիւռքից ժամանեց 89,750 հայ[10]:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ԽՍՀՄ ԱՆԿՈՒՄ

Այսպիսով, ճարտարարուեստականացման քաղաքականութիւնը յանգեցրեց նրան, որ 1970ին Խորհրդային Հայաստանի արդիւնաբերութեան բաժինը կազմում էր տնտեսութեան 67%ը: Այս տարիների տնտեսական քաղաքականութիւնն ուղղուած էր մեքենաշինութեան, ռադիոտեխնիկայի, էլեկտրոնիկայի եւ արհեստագիտութեան զարգացմանը: Կառուցուել է 70 նոր արդիւնաբերական գործարան, սկսեց աշխատել Մեծամորի ատոմակայանը: Զարգացում է նկատւում նաեւ ենթակառուցուածքների առումով. շահագործման է յանձնուել Սեւան-Շորժա-Զօդ, Երեւան-Նուռնուս երկաթուղին, կառուցուել եւ վերանորոգուել է 370 կմ ճանապարհ, սկսուեց Երեւանի մեթրոյի շինարարութիւնը:

Սակայն 1970ականներից սկսած ԽՍՀՄ տնտեսութեան աճի թափը սկսեց նուազել, ինչը շարունակուեց 1980ականներին (Աղիւսակ 1): Սա

[9] Յ. Ու. Մելիքսէթեան, *Հայրենիք-Սփիւռք առնչութիւնները եւ հայրենադարձութիւնը 1920-1980 թթ,* Երեւանի Համալսարանի հրատ., 1985, էջ 204-5:

[10] Նոյն, էջ 242:

հիմնականում պայմանաւորուած էր ծրագրաւորման եւ կառավարման խնդիրներով:

Աղիւսակ 1. ԽՍՀՄ հիմնական ցուցանիշերի աճի թափը (1976-89)			
	1976-80	1981-85	1986-89
Համախառն հանրային արդիւնք	7.1%	5.3%	3.3%
Նիւթական արտադրութեան ճեռնարկութիւնների զուտ արտադրանքը	7%	5.8%	2.6%
Արտադրուած ազգային եկամուտը	7.5%	5.5%	2.1%
Արդիւնաբերութեան արտադրանքը	7.9%	6%	-0.2%
Գիւղատնտեսական արտադրանքը	4.4%	2.6%	-2.4%

1980ականների կէսերին Հայկական ԽՍՀն իր տնտեսութեան մէջ բախուեց կառուցուածքային խնդիրների, ինչպիսիք էին անարդիւնաւէտութիւնը, անբաւարար ենթակառուցուածքը եւ գերկախուածութիւնը ԽՍՀՄ այլ հանրապետութիւններից, որոնց արտադրանքը մի շարք գործօնների պատճառով ունէին բարձր գործարքային ծախսեր: Այսպէս, 1980ի համեմատ արդիւնաբերութեան տեսակարար կշիռը 1988ին նուազել է 0,3%ով՝ կազմելով 67,8%, իսկ 1988ի երկրաշարժից յետոյ 1989ին՝ 60% (Աղիւսակ 2):

Աղիւսակ 2. ՀԽՍՀ տնտեսութեան կառուցուածքը (1980-89)						
	1980	1985	1986	1987	1988	1989
Արդիւնաբերութիւն	68.1%	67.1%	68.0%	68.2%	67.2%	60.0%
Գիւղատնտեսութիւն	11.20%	12.6%	12.50%	12.3%	12.7%	9.9%
Շինարարութիւն	10.10%	11.2%	10.4%	10.5%	9.7%	20.6%
Փոխադրամիջոց եւ կապ	2.20%	2.6%	2.7%	2.8%	3.2%	2.9%
Առեւտուր	8.4%	6.5%	6.3%	6.2%	6.6%	6.6%

Արդիւնաբերութեան ոլորտում բնակչութեան եկամուտները 1988/1980ի յարաբերակցութեամբ նուազել են 2,8 տոկոսով՝ կազմելով 54,6, իսկ 1988ի երկրաշարժից յետոյ՝ 47,9 տոկոս: Տոկոսային արտայայտութեամբ գիւղատնտեսութիւնից եկամուտը 1980ին 15,1%ից աճել է մինչեւ 18,5%ը 1988ին (Աղիւսակ 3)[11]:

[11] Հայաստանի Հանրապետութեան վիճակագրական կոմիտէ, *Հայկական ԽՍՀ ժողովրդական տնտեսութիւնը 1989 թուականին, վիճակագրական տարեգիրք*, Երեւան, Հայաստան, 1991, URL: https://www.armstat.am/file/doc/99507078.pdf

Աղիւսակ 3. ՀԽՍՀ բնակչութեան եկամուտների կառուցուածքը (1980-89)						
	1980	1985	1986	1987	1988	1989
Արդիւնաբերութիւն	57.4%	54.6%	55.9%	55.5%	54.6%	47.9%
Գիւղատնտեսութիւն	15.1%	18.1%	18.1%	18.3%	18.5%	14.6%
Շինարարութիւն	10.0%	12.5%	11.3%	11.3%	10.8%	21.5%
Փոխադրամիջոց եւ կապ	2.3%	2.9%	3.0%	3.3%	4.1%	3.6%
Առեւտուր	15.2%	11.8%	12.0%	11.7%	11.9%	12.2%

Արդիւնքում տնտեսական աճի շարունակական անկումը, ինչպէս նաեւ կառուցուածքային խնդիրները, որոնք ուղեկցւում էին արդիւնաբերութիւնից եւ առեւտրից բնակչութեան եկամուտների նուազմամբ եւ հակառակը՝ գիւղատնտեսութիւնից եկամտի աճով, յանգեցրին ապաճարտարարուեստականացման:


Վերը նշուած խնդիրները կանխելու համար 1986-90ին որդեգրուեց նոր քաղաքականութիւն (վերակառուցում), որը ենթադրում էր.-

1. Արագացուած տնտեսական աճ.
2. Գիտաարհեստագիտական արտադրութեան թափերի արագացում.
3. Արտադրութեան արդիականացում.
4. Արտադրութեան ներքին ներուժի արդիւնաւէտ օգտագործում.
5. Հրաժարում արտաքին առեւտրում մենաշնորհից.
6. Շուկայական գործիքակազմերի ներդրում ծրագրային տնտեսութեան մէջ.
7. Առեւտրային բանկերի ստեղծում:

1980ականների տնտեսական քաղաքականութիւնը հիմնականում ուղղուած էր.

1. Առաջին անհրաժեշտութեան ապրանքների արտադրութեան աւելացումին.
2. Արտադրութեան արդիւնաւէտութեան բարձրացումին.
3. Գիտաարհեստագիտական հիմքի վրայ կազմուած արտադրանքի որակի բարելաւումին:

Սակայն այն չտուեց սպասուած արդիւնքները եւ աւարտուեց ԽՍՀՄ փլուզմամբ: Եթէ դիտարկենք ԽՍՀՄ փլուզումը, ապա այս իրադարձութեան տնտեսական գործօններից առաջինը պէտք է ընդգծել հումքի արտահանումից կախուածութիւնը. 1970ականների նաֆթային ճգնաժամից յետոյ նաֆթի գները զգալիօրէն բարձրացան (Գծապատկեր 1), ինչը զգալիօրէն աւելացրեց ԽՍՀՄ ամավարկի եկամուտները եւ է՛լ աւելի մեծացրեց նրա կախուածութիւնը: Գների անկումը 1985ին յանգեցրեց պետական եկամուտների կտրուկ նուազմանը: Այս իրողութիւնը բերեց նաեւ նրան, որ ԽՍՀՄը սկսեց աւելացնել արտաքին ֆինանսաւորմամբ պետական պարտքը:



Գծապատկեր 1. Նաֆթի միջազգային գները, ԱՄՆ դոլարով (1970-90)

Միւս պատճառն այն էր, որ տնտեսութեան կարողութիւններն ուղղուեցին ռազմարդիւնաբերական համալիր. ԽՍՀՄՆ աւելացրեց սպառազինութիւնների մրցավազքի ծրագրերի ֆինանսաւորման ծախսերը եւ սկսեց մեծածաւալ ֆինանսական եւ մարդկային միջոցներ ծախսել Աֆղանստանի պատերազմում: Կարեւոր է նաեւ ընդգծել, որ տնտեսական աճի արագացման փորձը յաջողութեամբ չպսակուեց, քանի որ 1985ին փորձ արուեց ներդրումներ կատարել արտադրական գոյքի եւ հաստոցների թարմացման եւ արդիականացուած սարքաւորումների ձեռքբերման մէջ, սակայն, ներդրումները էական ազդեցութիւն չունեցան երկրի զարգացման վրայ:

Բացասական ազդեցութիւն ունեցաւ նաեւ կամաւոր տնտեսական միաւորումների (կոոպերատիւների) ստեղծումը, որով սկիզբ դրուեց պետական գոյքի սեփականաշնորհմանը եւ ստուերային շուկայի օրինականացմանը: Արտաքին առեւտրի պետական մենաշնորհի վերացումը նպաստեց արտաքին առեւտրի բացասական հաշուեկշռի ստեղծմանը. եկամուտներն աւելացնելու համար բնակչութիւնը սկսեց ներմուծել պակասուրդային ապրանքներ, իսկ արտահանման ուղղութեամբ զգալի դժուարութիւններ կային, քանի որ ԽՍՀՄը յաճախ արտադրում էր ապրանքներ, որոնք պահանջարկ չունէին արտասահմանում: Սա է՛լ աւելի մեծացրեց արտարժոյթի պահանջարկը եւ արագացրեց արտաքին պարտքի աճը: ԽՍՀՄի փլուզման վերջին տնտեսական գործօնը հակաալկոհոլային արշաւն էր. բիւջէի 10%ը կազմում էր այդ ապրանքների արտադրութիւնից ստացուած եկամուտը[12]:

[12] М. Ю. Алексеев, *Экономические реформы в СССР в 80-90-х годах XX века: попытка переосмысления главных моментов и построения основной сюжетной линии* (Մ. Եու. Ալեքսէեւ, "Տնտեսական բարեփոխումները ԽՍՀՄում XX դարի 80-90ականներին. գլխաւոր հանգամանքների վերաիմաստաւորման եւ հիմնական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԸ. ՃԳՆԱԺԱՄԻ ՅԱՂԹԱՀԱՐՈՒՄՆ ՈՒ ՀԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հայաստանի երրորդ Հանրապետութիւնը ձեւաւորուեց վերոնկարագրեալ խնդիրների սրացման պայմաններում: Դրանց զուգահեռ առաջացան նաեւ նոր մարտահրաւէրներ՝ Սպիտակի երկրաշարժը, Ադրբեջանի ցեղասպան քաղաքականութեան պատճառով աւելի քան 300,000 փախստականի ներգաղթը, արցախեան առաջին պատերազմը: Յաւելեալ դժուարութիւններ էին առաջացնում բարձր որակաւորում ունեցող մասնագէտների արտագաղթը եւ հարեւան երկրների հետ ճանապարհային կապերի բացակայութիւնը (նման կապերի խզումը յատկապէս խնդրայարոյց էր Ռուսաստանի հետ, քանզի հայկական տնտեսութիւնների փոխկապակցուածութիւնը ԽՍՀՄ շրջանում կազմում էր 95%[13]):

Այսպիսով, հաշուի առնելով այս իրողութիւնները, **ծրագրային տնտեսութիւնից շուկայական տնտեսութիւն փոխելու «ցնցումային բուժումը»** (shock therapy) չափազանց բարդացաւ. Համաշխարհային բանկի 1996ի ուսումնասիրութիւնը պնդում է, որ շուկայական համակարգին արագ եւ կտրուկ անցումը նախընտրելի է եւ այն պէտք է իրականացնել հետեւեալ հիմնական ուղղութիւններով.- ա) գների եւ շուկայի ազատականացում, բ) մակրոտնտեսական կայունացում, գ) պետական ծախսերի սահմանափակում, դ) սեփականաշնորհում, ե) տնտեսութեան բացում[14]:

Ծրագրայինից շուկայականին անցնելու ընթացքում նկատուած զգալի անկման հիմնական պատճառը, հաւանաբար, առաջարկի ցնցումն է: Զարգացող շուկայի գործիքակազմերն ու հիմնարկները բաւականաչափ զարգացած եւ ճկուն չեն՝ տարբեր ոլորտների միջեւ աղբիւրների վերաբաշխումը արդիւնաւէտ կառավարելու եւ աշխատուժի ու դրամագլխի տեղաշարժի խոչընդոտները վերացնելու համար: Այսպիսով, Հայաստանի ղեկավարութիւնը, ընտրելով «ցնցումային բուժումը» ուղին, մինչեւ 90ականների կէսերը ծրագրային համակարգից շուկայական արմատական անցման բարեփոխումներ իրականացրեց. 5 տարում

դիպաշարի ձեւաւորման փորձ”), 2020, էջ 48, URL: https://cyberleninka.ru/article/n/ekonomicheskie-reformy-v-sssr-v-80-90-h-godah-xx-veka-popytka-pereosmysleniya-glavnyh-momentov-i-postroeniya-osnovnoy-syuzhetnoy/viewer :

[13] Ա. Մանուկեան, *Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը եւ ազգրական բարեփոխումները*, Ֆրիդրիխ Նաումանի «Յանուն Ազատութեան» հիմնադրամ, 2021, էջ 17, URL: https://haygirk.nla.am/upload/1941-/hhankakhutyun_azatakan_2021.pdf :

[14] World Bank, *World Development Report 1996: From Plan to Market*, 1996:

գերագոյն խորհրդի ընդունած 1169 որոշումների 1/3ը վերաբերում էր հենց տնտեսական ազատականացմանը:

Այս ժամանակահատուածը պէտք է բաժանել 3 մասի.

1. 1991ից մինչեւ 1993 Նոյեմբեր, երբ Հայաստանի տնտեսութեան կտրուկ անկման ֆոնին տեղի ունեցաւ «ցնցումային բուժումի» հիմնական մասը.

2. 1993 Նոյեմբերինց մինչեւ 1994, երբ ռուբլիին փոխարինեց նոր ազգային արժոյթը՝ դրամը, եւ ձեւաւորուեց դրամավարկային քաղաքականութիւն: Այս ընթացքում պետութեան տնտեսութիւնը յենւում էր ներքին աղբիւրների եւ մարդասիրական օգնութեան վրայ, իսկ տնտեսական քաղաքականութեան նպատակը տնտեսական անկումը կանգնեցնելը եւ գնաճի դէմ պայքարն էր.

3. սկսած 1994ից, երբ կառավարութիւնը Արժոյթի միջազգային հիմնադրամի հետ միասին մշակեց մակրոտնտեսական կայունութեան եւ տնտեսական զարգացման վերականգնման ծրագիր՝ ըստ էութեան այս ժամանակահատուածը վերածելով յետճգնաժամային վերականգնման փուլի:

Ծրագրային տնտեսութիւնից շուկայական գործիքակազմերի անցման դիտարկման շրջանակներում արժէ աւելի մանրամասն անդրադառնալ ազատական քաղաքականութեան իրականացման փուլերին եւ դրա արդիւնքներին: Շուկայական համակարգի հիմնարար գործօններից է **մասնաւոր սեփականութեան ինստիտուտը**: Դրա ստեղծման համար սկսուեց պետական գոյքի մասնաւորեցման իրականացումը: Պետութեան տնտեսական քաղաքականութեան հիմնական գաղափարախօսութիւնը կրում էր փուլային բնոյթ. հողի սեփականաշնորհում, առեւտրի վայրերի սեփականաշնորհում, սննդի եւ թեթեւ արդիւնաբերութեան, խոշոր արդիւնաբերութեան սեփականաշնորհում: Ըստ Աշոտ Մարկոսեանի, այս մօտեցումը հնարաւորութիւն տուեց սեփականաշնորհմանը յաջորդող տարիներին խուսափել սեփականաշնորհուած ոլորտների անկումից:

Պետական սեփականութիւնից շուկայականի անցումը իրականացուել է 3 համապետական ծրագրերով՝ հողի եւ գիւղատնտեսական մեքենաների սեփականաշնորհում, բնակարանային ֆոնդի մասնաւորեցում եւ պետական գոյքի մասնաւորեցում: Պետական ձեռնարկութիւնների սեփականաշնորհման գերակշռող մեթոդը բաժնային սեփականութիւնն էր, ինչը յանգեցրեց հանրապետութեան բազմաթիւ միջին եւ խոշոր ձեռնարկութիւնների վերափոխմանը բաժնետիրական ընկերութիւնների: Այս մօտեցումը նպատակ ունէր վերադարձնել դրամագուխը ժողովրդին՝ նպաստելով Հայաստանում «ժողովրդական դրամատիրութեան» ձեւաւորմանը: Յատկանշական է, որ մինչեւ 2000ը Հայաստանի Հանրապետութիւնում յայտնուեցին տպաւորիչ թուով սեփականատէրեր՝ գերազանցելով 1,4 միլիոնը: Բաժնետիրական ընկերութիւնների

ստեղծումը պէտք է նաեւ ձեւաւորէր Հայաստանի արժեթղթերի շուկան, սակայն միքանի հոգու ձեռքում բաժնետոմսերի յետագայ կենտրոնացման պատճառով այս քաղաքականութիւնն իրեն չարդարացրեց:

Պետական գոյքի մասնաւորեցման քաղաքականութիւնն ուղղուած էր շուկայական յարաբերութիւնների «անտեսանելի ձեռքի» տրամաբանութեամբ այդ ձեռնարկութիւնների աւելի արդիւնաւէտ կառավարմանը. եթէ 1990ին մասնաւոր հատուածն ապահովում էր Հայաստանի ՀՆԱի 10%ը, ապա 1994ին այն կազմում էր աւելի քան 50%ը[15]:

Մասնաւորեցման առումով, անհրաժեշտ է առանձին ուշադրութիւն դարձնել **հողի մասնաւորեցմանը**, քանի որ այս փուլը նշանակալից էր գիւղատնտեսութեան մասնաւոր հատուածի ձեւաւորման գործում, որը տնտեսութեան ազդեցիկ ուղղութիւն դարձաւ 90ականներին: Հողի սեփականաշնորհման քաղաքականութիւնն ուղղուած էր.-

1. հողի սեփականութեան պետական մենաշնորհի վերացմանն ու ամբողջ համակարգում սեփականութեան ինստիտուտի ստեղծմամբ դրա հետ կապուած արմատական փոփոխութեանը.
2. Հայաստանի քաղաքացիներին հողի սեփականութեան իրաւունքի տրամադրմանը.
3. Հողի սեփականութեան իրաւունքի պահպանմանը միայն այն հողերի համար, որոնք ունեն ազգային յատուկ նշանակութիւն:

Տնտեսական տեսակէտից այս բարեփոխման նպատակներն էին.

1. գիւղական բնակչութեան շրջանում գործազրկութեան կրճատումը
2. եկամուտների անհաւասար բաշխման նուազեցումը
3. ներքին աղբիւրների միջոցով պարենային ճգնաժամը լուծելու հնարաւորութեան ստեղծումը
4. արտագաղթի բացասական հոսքի կրճատումը:

Հարկ է նշել նաեւ, որ այս տարիներին գնաճի բարձր թափերը (Աղիւսակ 4) նպաստել են, որ մասնաւորեցումն իրականացուի խորհրդանշական գումարով: Արդիւնքում՝ մինչեւ 1991՝ Հայաստանում կար 860 խմբային տնտեսութիւն եւ խորհրդային տնտեսութիւն (սովխոզ), որոնք տնօրինել են 697,6 հազար հա գիւղատնտեսական նշանակութեան հողեր (առանց արօտավայրերի), 489,400 հա վարելահող եւ 134,000 հեկտար արօտավայր[16]:

---

[15] Մանուկեան, էջ 14:

[16] Հ. Բագրատեան, *Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը եւ ազատական բարեփոխումները,* Ֆրիդրիխ Նաումանի «Յանուն Ազատութեան» հիմնադրամ, 2021, էջ 50, URL: https://haygirk.nla.am/upload/1941-/hhankakhutyun_azatakan_2021.pdf :

Աղիւսակ 4. Գնաճը Հայաստանում (1991-98)								
	1991	1992	1992	1994	1995	1996	1997	1998
Գնաճ, (տարեկան %)	79.4	568.8	1391.2	4107.3	161.2	19.6	17.7	10.7

11 ամսում լուծարուել են խորհրդային տնտեսութիւնների 713 ձեւեր եւ ստեղծուել են 164,542 գիւղացիական եւ 11,559 հաւաքական տնտեսութիւն, որոնց տրուել է գիւղատնտեսական նշանակութեան հողերի 49,4%ը: Հրանտ Բագրատեանի կարծիքով՝ գիւղատնտեսութեան ոլորտում մասնաւոր հատուածի տեսակարար կշիռը կազմել է 67-67,5%: 1997 Յունուար 1ի դրութեամբ պետական սեփականութիւն էին մնում.-

1) վարելահողերի մօտ 30%ը, հիմնականում պետական պահուստային հողերը, որոնք նախատեսուած էին յետագայում երիտասարդ ընտանիքներին յատկացնելու համար.

2) արօտավայրերի մօտ 55%ը, որոնց սեփականաշնորհումը հողային բարեփոխումների սկզբնական փուլում անհրաժեշտ չէր.

3) արօտավայրեր, որոնց սեփականաշնորհումը սոյն բարեփոխմամբ նախատեսուած չէր:

Այնուամենայնիւ, հարկ է նշել, որ հողերի սեփականաշնորհման քաղաքականութեան իրականացման ընթացքում թոյլ են տրուել մի շարք սխալներ.-

1) հաշուի չեն առնուել կլիմայական գօտիների առանձնայատկութիւնները.

2) յաճախ մասնաւոր հողի սեփականատէրերը եղել են մարդիկ, ովքեր ոչ միշտ են մասնակցել տնտեսութեան այս հատուածում.

3) հողային աղբիւրի չափից շատ մասնատուածութիւնը, ինչը բերեց տարածքում գիւղատնտեսական փոքր հողերի առկայութեանը. այս իրողութիւնը յանգեցրել է նրան, որ անարդիւնաւէտ է դարձել ժամանակակից արտադրական միջոցների կիրառումը, իսկ մասշտաբի էֆեկտի նուազումը յանգեցրել է գործարքային ծախսերի աւելացման:

Նոր սեփականաշնորհուած ձեռնարկութիւնների գործունէութիւնը ապահովելու, տնտեսութեան պատշաճ գործունէութեան, ինչպէս նաեւ դրա էական զարգացման համար անհրաժեշտ է ունենալ **զարգացած դրամատնային համակարգ եւ դրամավարկային քաղաքականութիւն**: Այսպիսով, անկախութեան առաջին տարիները այս առումով բաւականին խնդրայարոյց էին, քանի որ, նախ, ԽՍՀՄում ամբողջ դրամատնային գործունէութիւնը իրականացւում էր պետական բանկի կողմից, իսկ գործառոյթների զգալի մասը՝ Մոսկուայից, եւ երկրորդ՝ ռուբլու կիրառումը

հնարաւորութիւն չէր տալիս ձեւաւորել արդիւնաւէտ եւ անկախ դրամավարկային քաղաքականութիւն եւ իրականացնել արտաքին առեւտրային քաղաքականութիւն: ՀՀ կենտրոնական դրամատան գործունէութիւնը չունէր կարգաւորիչ դեր ինչպէս իրաւական, այնպէս էլ գործնական առումով. արտօնագրման թոյլ վերահսկողութեան պատճառով՝ 1991-93ին Հայաստանում դրամատների թիւն աւելացել է 5 անգամ[17]: Փոխարժէքը կարգաւորելու հնարաւորութեան բացակայութեան պատճառով պաշտօնական փոխարժէքը տարբերուել է սեւ շուկայի փոխարժէքից (մինչեւ 20%[18]), ինչը նպաստել է դրամատնային համակարգից դուրս գործարքների աճին: Այս խնդիրների լուծումը դարձաւ 1993 Նոյեմբերի 22ին ազգային արժոյթի ներդրումը: Այս իրողութիւնը հիմնարար էր երկրի դրամատնային եւ ֆինանսական համակարգի ազատականացման համար: Մինչեւ 1995 արդէն գործում էին Բազէլի կոմիտէ հիմնական սկզբունքները, որոնք պատասխանատու են դրամատնային գործունէութիւնը կարգաւորելու եւ վերահսկելու համար:

Դրամատնային համակարգի բարեփոխումներին եւ դրամավարկային քաղաքականութեան ձեւաւորմանը զուգընթաց արժէ դիտարկել **հարկային համակարգի ձեւաւորումը,** քանի որ դրա վրայ է հիմնուած հարկաբիւջէտային քաղաքականութիւնը: Հարկային նոր քաղաքականութեան իրականացումը դարձաւ շուկայական յարաբերութիւնների կարգաւորման հիմնական գործիքներից մէկը: Այսպէս, 1992ին 15 ենթաօրէնսդրական ակտերով սահմանուել են Հայաստանի տարածքում գործող հարկերի տեսակները, իրաւայարաբերութիւնները եւ կարգաւորումը: Ձեւաւորման տարիներին Հայաստանի հարկային քաղաքականութեան առանձնայատկութիւնները ներառում էին.-

1. Նմանութիւն Ռուսաստանի Դաշնութեան հարկային համակարգի հետ (մասնաւորապէս, աւելացուած արժէքի հարկի մասով, որը հաշուարկւում է ըստ ծագման երկրի).
2. Մեծ թուով ենթաօրէնսդրական ակտերի ընդունում, ինչը յանգեցնում էր հակասութիւնների, որի հետեւանքով կարող էին տեղի ունենալ հարկերի թերավճարումներ.
3. Հարկատուների իրազեկուածութեան բարձրացում.
4. Հարկային բեռի նուազեցում (եկամտահարկը 30%ից իջեցուել է 20%ի, իսկ ԱԱՀն՝ 28%ից 20%ի).

---

[17] Բ. Ասատրեան, "*Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը եւ ազատական բարեփոխումները*", Ֆրիդրիխ Նաումանի «Յանուն Ազատութեան» հիմնադրամ, 2021, էջ 92, URL: https://haygirk.nla.am/upload/1941-/hhankakhutyun_azatakan_2021.pdf :

[18] Նոյն, էջ 93:

5. Կրկնակի հարկման վերացում եւ կայուն ու կանխատեսելի հարկային դաշտի ստեղծում:

Այսպիսով, մասնաւոր սեփականութեան, դրամավարկային եւ հարկաբիւջետային քաղաքականութեան ինստիտուտը ձեւաւորելիս պէտք է դիտարկել նաեւ **արտաքին առեւտրի ազատականացման** բարեփոխումները: Հայաստանի համար այս քաղաքականութեան իրականացման սկզբնական փուլերում կային մի շարք խնդիրներ.- ա) մնացած աշխարհի հետ անկախ արտաքին առեւտրային քաղաքականութեան բացակայութիւնը (այլ երկրների կողմից ԽՍՀՄ շրջանում ցանկացած յարաբերութիւն միշտ դիտւում էր Ռուսաստանի խորքում), բ) թերզարգացած ենթակառուցուածքները սահմանակից երկու երկրների՝ Իրանի եւ Թուրքիայի հետ, գ) Ադրբեջանի եւ յետագայում Թուրքիայի կողմից տնտեսական շրջափակումը, դ) աբխազա-վրացական հակամարտութիւնը, որի պատճառով ընդհատուեց երկաթուղային կապը Հայաստանի հիմնական առեւտրային գործընկեր Ռուսաստանի հետ, ե) Հայաստանի թերզարգացած ճանապարհային եւ երկաթուղային ցանցը: Այնուամենայնիւ, այս հարցում կային նաեւ դրական կողմեր. նախ՝ Հայաստանի համար Սփիւռքի առկայութիւնը նուազեցրեց տեղեկատուութեան եւ գործընկերների որոնման ծախսերը, ինչպէս նաեւ հնարաւորութիւն տուեց առաւել արդիւնաւէտ առեւտրային յարաբերութիւններ հաստատել այն երկրների հետ, որտեղ գոյութիւն ունէր տնտեսապէս աշխուժ հայօճախ, եւ երկրորդը՝ պատժամիջոցների ենթարկուած Իրանի համար անկախ Հայաստանը հնարաւորութիւն տուեց այլընտրանքային ճանապարհ ստեղծել դէպի Սեւ ծով եւ Եւրոպա: Այսպիսով, այս քաղաքականութեան արդիւնքը եղաւ այն, որ եթէ 1993ին այլ երկրների հետ առեւտուրը կազմում էր 28%, ապա 1998ին այն կազմեց 73%: Արտաքին առեւտրի քաղաքականութեան մէջ էական դեր է խաղացել նաեւ վերը նշուած սեփականաշնորհումը. մասնաւոր հատուածի մասնաբաժինը արտահանման գծով 1998ին կազմել է 68,5% (1995ին՝ 33,7%), իսկ ներմուծման մասով համապատասխան տարիներին՝ 71% եւ 46,8%: Այսպիսով, ակնյայտ է, որ մասնաւոր հատուածի բացակայութեան դէպքում արտաքին առեւտրի իրականացման բեռը ընկնելու էր պետութեան վրայ, ինչը տնտեսական տեսանկիւնից արդիւնաւէտ չէ:

Շուկայի ազատականացման զուտ տնտեսական գործիքներից ոչ պակաս կարեւոր է բարեփոխումներ իրականացնել առողջապահութեան եւ կրթութեան ոլորտում: **Առողջապահութեան բարեփոխումները** համակարգի ազատականացման միջոցով ենթադրում էին առողջապահութեան իրաւունքի ապահովում, բժշկական օգնութիւն տրամադրող ընտրելու իրաւունքի ապահովում, առողջապահական ծառայութիւններ մատուցողների սեփականութեան ձեւերի բազմազանութիւն, բժշկական օգնութիւն եւ ծառայութիւններ

մատուցողների միջեւ մրցակցութեան ապահովում, ֆինանսաւորման աղբիւրների բազմազանութիւն, ծառայութիւնների որակի ապահովում, բժշկական օգնութեան մատչելիութիւն: Բարեփոխումների է ենթարկուել նաեւ առողջապահութեան ֆինանսական համակարգը, որի սկզբունքներն են՝ ֆինանսաւորման աղբիւրների այլազանեցման ներդրում, բուժաշխատողների վարձատրութեան վերափոխում, պետական ծրագրերի ֆինանսաւորման կարգաւորում:

Կարեւոր է ընդգծել **հանրակրթական համակարգի**, ազատականացմանն ուղղուած բարեփոխումները: Այս միջոցառումները ներառում են դպրոցի ինքնավարութեան ամրապնդումը, դասագրքերի ընտրութեան իրաւունքի տրամադրումը, ծնողներին իրենց դպրոցն ընտրելու հնարաւորութիւնը եւ այլընտրանքային մանկավարժական մօտեցումների խրախուսումն ու արժեւորումը: Այս բոլոր նախաձեռնութիւնները օգնեցին այդ ժամանակահատուածում հանրակրթական համակարգում ստեղծել նորարարութեան մթնոլորտ, ինչը թոյլ տուեց զգալի առաջընթաց ունենալ՝ չնայած սահմանափակ միջոցներին: Այսպէս, օրինակ, բարձրագոյն կրթութեան ծառայութիւնների մատուցման ոլորտում մասնաւոր բուհերը սկսեցին գործել 1995ից, իսկ 3 տարում՝ մինչեւ 1998, դրանց թիւն աւելացաւ 2,2 անգամ՝ կազմելով 87: Այսպիսով, այս ոլորտում օրէնսդրական կարգաւորման բացակայութիւնը զգալիօրէն նուազեցրել են որակեալ կրթական ծառայութիւնները եւ զգալի դեր են ունեցել բարձրագոյն կրթութեան իմաստը փոխելու գործում:

Բարեփոխումների արդիւնաւէտութեան գնահատման համար անհրաժեշտ է դիտարկել հիմնական տնտեսական ցուցանիշերի փոփոխութիւնը այս ժամանակահատուածում: ՀՆԱի աճ նկատուել է միայն 1994ից (Աղիւսակ 5) եւ մինչեւ 1998 հասել է 1990ի մակարդակի 61%ի:

Աղիւսակ 5. ՀՆԱ աճը Հայաստանում (1991-1998)

	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998
ՀՆԱի աճ (%)	-11.7	-41.8	-8.8	5.4	6.9	5.9	3.3	7.3

Մինչեւ 1994 նկատւում է արտադրութեան զգալի անկում՝ զուգորդուած բարձր գնաճով: Այս փուլում ստեղծւում են գործիքակազմեր, օրէնքներ, որոնք ապագայում կ'ապահովեն անցումը ծրագրային տնտեսութիւնից շուկայական տնտեսութեան: Երկրորդ շրջանը կարելի է դիտարկել որպէս ՀՆԱի աճ. 1998ին ՀՆԱի 82%ն ապահովում էին 5 հիմնական ոլորտներ՝ արդիւնաբերութիւնը, գիւղատնտեսութիւնը, շինարարութիւնը, առեւտուրը եւ փոխադրամիջոցները: Սակայն սրընթաց սեփականաշնորհումը զգալի բացասական ազդեցութիւն ունեցաւ նաեւ Հայաստանի ՀՆԱ կառուցուածքի վրայ. 1993ին գիւղատնտեսութեան տեսակարար կշիռը ՀՆԱում կազմում էր 50,7%, իսկ մինչեւ 1996 այն 40%ից չէր նուազում:


Այսպիսով, Հայաստանի տնտեսութիւնը, կարելի է ասել, 70 տարի ետ շպրտուեց՝ ստանալով հողագործական տեսք: 1995ից սկսած հարկային կարգաւորման բարեփոխումների հաշուին գրանցուեց հարկային եկամուտների աճ. 1998ի աճը 1994ի համեմատ կազմել է 3 անգամ: Այս հանգամանքը ցոյց է տալիս զգալի առաջընթաց հարկային նոր համակարգի ստեղծման գործում:

Արժէ դիտարկել նաեւ աշխատուժի փոխակերպումն ըստ տնտեսութեան ոլորտների, քանի որ կիրառուող քաղաքականութիւնն ուղղակիօրէն ազդում է դրա վրայ. գործազուրկների տոկոսը 1992ից 1998 գրանցել է աճ 5,2 անգամ եւ կազմել 9,3%[19]: Հայաստանում 90ականների աշխատաշուկայի առանձնայատուկ տարբերութիւնն այն է, որ զբաղուածութեան անկումը եւ գործազրկութեան աճը թափերով աւելի դանդաղ էին, քան հիմնական մակրոտնտեսական ցուցանիշերի անկումը: Սակայն հարկ է նշել, որ սեփականաշնորհման գործընթացը խոշոր ձեռնարկութիւնների խնդիրը չլուծեց. 100ից աւելի աշխատող ունեցող ձեռնարկութիւններում աշխատողների 95%ը աշխատում էր կէս դրոյքով, իսկ 81%ը գտնւում էր հարկադիր վարչական արձակուրդում: Հակառակ պատկերը նկատւում է փոքր ձեռնարկութիւններում (մինչեւ 100 մարդ), որտեղ նկատելիօրէն բարձր է ազատ աշխատուժի՝ աշխատանքային գործընթացում ներառուածութեան մակարդակը: Այսպիսով կարելի է եզրակացնել, որ հենց փոքր բիզնէսն էր նոր աշխատատեղեր ստեղծողը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ 21ՐԴ ԴԱՐՈՒՄ. ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐ, ՆՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ


Հայաստանում ազատականացման եւ շուկայական գործիքակազմերին անցնելու գործընթացը կարելի է 90ականների վերջով աւարտուած համարել: Հենց 20րդ դարի վերջին տասնամեակներում իրականացուած բարեփոխումներն էլ հիմք հանդիսացան 2000ականներին երկրի զարգացման համար: Արդարեւ, Հայաստանի ՀՆԱն 2000ին կազմել է 1,91 մլրդ դոլար, իսկ 2002ին այն անցնել է 1990ի ցուցանիշից՝ կազմելով 2,38 մլրդ դոլար, իսկ 2008ին՝ 11,6 մլրդ դոլար: ՀՆԱի միջին աճի թափը տուեալ ժամանակահատուածում կազմել է 11,2% (Գծապատկեր 2):

[19] Տնտեսական բարեփոխումների առանձնայատկութիւններն ու փուլերը Հայաստանում 1991-1998թթ., էջ 23, www.armstat.am :



Գծապատկեր 2. ՀՀ ՀՆԱ եւ ՀՆԱ աճի թափը (1990-21)


Տնտեսութեան արագ զարգացման հիմնական շարժիչ ուժը շինարարութեան ոլորտն էր. եթէ 2000ին նրա մասնաբաժինը ՀՆԱում կազմում էր 11,1%, ապա 2008ին այն կազմում էր 25,3% (Գծապատկեր 3):



Գծապատկեր 3. ՀՀ ՀՆԱ կառուցուածքը (1990-2021)

Տնտեսութեան այս հատուածի զգալի աճը կարելի է պայմանաւորել տնտեսական բարենպաստ պայմաններով, որոնք մեծացրել են հիմնականում Ռուսաստանում եւ ԱՊՀ այլ երկրներում բնակուող հայերի ֆինանսական միջոցների հաշուին կատարուած ներդրումների արդիւնաւէտութիւնը: Կապիտալի այս աւելցուկը պահանջում էր արդիւնաւէտ օգտագործում, ինչը յանգեցրեց հայրենիքում անշարժ գոյքի վրայ ներդրումներ կատարելու Սփիւռքի հետաքրքրութեան աճին: Մասնաւորապէս, բնակարանաշինութեանը բաժին է ընկել ընդհանուր շինարարութեան 61%ը, ինչը համարժէք է երկրի ՀՆԱի 16,4%ին, իսկ զգալի

մասը ֆինանսաւորուել է մասնաւոր ներդրումների հաշուին[20]: Միաժամանակ, 2008ին՝ 2000ի համեմատ արդիւնաբերութեան տեսակարար կշիռը 23,7%ից նուազել է մինչեւ 13,3%, ծառայութիւնների տեսակարար կշիռը՝ 39,8%ից մինչեւ 35,5%, գիւղատնտեսութեան տեսակարար կշիռը՝ 25,2%ից մինչեւ 16,3%: Այսպիսով, շեշտը դրուեց երկարաժամկէտ տնտեսական զարգացումը չխթանող ներդրումների վրայ, ինչը Հայաստանի տնտեսութիւնն աւելի խոցելի դարձրեց արտաքին ցնցումների նկատմամբ, եւ նպաստեց 2008-9ի ճգնաժամի ընթացքում Կենտրոնական Եւրոպայի եւ Բալթեան երկրների, Մերձաւոր Արեւելքի եւ Հիւսիսային Ափրիկէի երկրների նոյն ցուցանիշի եւ համաշխարհային միջին ցուցանիշի համեմատ Հայաստանի աւելի խորը անկմանը (Գծապատկեր 4):




Գծապատկեր 4. Տնտեսական աճի թափը աշխարհում եւ Հայաստանում (2000-14)

Ճգնաժամը արագ յաղթահարելու համար պետութիւնը որոշեց փոխել մօտեցումներն ու տնտեսութեան կառուցուածքը. ազատ շուկայական կարգաւորումները պէտք է լրացուէին իրական հատուածում պետական արդիւնաւէտ միջամտութեամբ: Անգամ չափաւոր պետական աջակցութեան քաղաքականութեան պայմաններում Հայաստանի ՀՆԱն 2014ն կազմել է 2008ի ՀՆԱի 99,5%ը՝ տարեկան 4,2% միջին աճով եւ կարողացել է գերազանցել այդ ցուցանիշը միայն 2018ին (Գծապատկեր 2)՝ կազմելով 12,4 միլիարդ ԱՄՆ դոլար:


[20] Л.Б. Вардомский, А.Г. Пылин, М.Ю. Ильина, *Экономика Армении: идеи, модели и результаты развития* (Լ. Բ. Վարդոմսկի, Ա. Գ. Պիլին, Մ. Եու. Իլյինա, Հայաստանի տնտեսութիւնը. գաղափարներ, կառուցուածքի տեսական տարբերակներ, զարգացման արդիւնքներ"), գիտական զեկոյց, խմբ.՝ Լ. Բ. Վարդոմսկի, Մոսկուա, Ռուսաստանի գիտութիւնների ակադեմիա, Տնտեսագիտութեան ինստիտուտ, 2016:

Հայաստանի տնտեսութիւնը եւս մէկ ցնցում ապրեց 2014ին, երբ դրամը դոլարի նկատմամբ ռուբլու արժեզրկումից յետոյ նոյնպէս արժեզրկուեց (Գծապատկեր 5), եւ այդպիսով ռուբլու արժեզրկման հետեւանքով տուժեցին Ռուսաստան հայ արտահանողները[21]:



Գծապատկեր 5. Ռուբլու եւ դրամի փոխարժեքը դոլարի նկատմամբ (2014-15)

Սակայն Հայաստանի տնտեսութիւնը աճ է գրանցել ինչպէս 2014ին, այնպէս էլ 2015ին (համապատասխանաբար 3,6% եւ 3,2%): Զգալիօրէն նուազել է նաեւ Ռուսաստանից ուղղակի օտարերկրեայ ներդրումների (ՕՆ) տեսակարար կշիռը. Եթէ 2007ին ՕՆը կազմել է 293,212 մլն դրամ, ապա 2014ին՝ 42,647 մլն դրամ (75% անկում) (Գծապատկեր 6):



Գծապատկեր 6. Ուղղակի օտարերկրեայ ներդրումները դէպի ՀՀ (1992-2021)

[21] Գ. Մակարեան, *Հայաստան. արտահանման ծաւալի նուազում», «Ճգնաժամը Ռուսաստանում եւ դրա հետեւանքները. ազդեցութիւնը Արեւելեան գործընկերութեան եւ Կենտրոնական Ասիայի երկրների վրայ*, Ֆրիդրիխ Էբերտի անուան հիմնադրամի հետազօտութիւն, 2015, էջ 6, URL: https://library.fes.de/pdf-files/id-moe/11599.pdf :

2014ից իվեր ՕՆի կտրուկ անկումը փոխկապակցուած է Ռուսաստանի տնտեսական վիճակի հետ, եւ այդպիսով Ռուսաստանի մասնաբաժինը Հայաստանում ՕՆի կառուցուածքում նկատելիօրէն նուազում է՝ 2007ի 50%ից մինչեւ 2014ի 26%ի:

Յաջորդ ճգնաժամը COVID-19 համաճարակն էր, որի արդիւնքում երկրի ՀՆԱն ընկաւ 7,2%ով: Սակայն հարկ է նշել, որ այս ճգնաժամի դէպքում եւս պետութիւնն իր ձեռքը վերցրեց տնտեսութեան վերականգնումը, եւ այսպիսով, 2021ին տնտեսական աճը կազմեց 5,7% (13,8 մլրդ ԱՄՆ դոլար):

Կառուցուածքային փոփոխութիւնների առումով ընդհանուր առմամբ, 2008ի համեմատ, 2019ին Հայաստանի ՀՆԱում արդիւնաբերութեան տեսակարար կշիռն աճել է 6.8%, կազմելով 20.1%, ծառայութիւնների տեսակարար կշիռն աճել է 17.4%, կազմելով 52.9%, գիւղատնտեսութեան տեսակարար կշիռը նուազել է 5%ով՝ կազմելով 11.3%, իսկ շինարարութեան մասնաբաժինը նուազել է 18.8%ով՝ կազմելով 6.5% (Գծապատկեր 3): Այսպիսով, կառուցուածքային փոփոխութիւնը արդիւնաբերութեան եւ ծառայութիւնների մասնաբաժնի աւելացման գծով, ինչպէս նաեւ գիւղատնտեսութեան եւ շինարարութեան մասնաբաժնի նուազումը դրական միտում է, բայց այն իր թափերով այնքան էլ արագ չէ եւ ունի բաւականաչափ թերութիւններ:


ՀՆԱի կառուցուածքի փոփոխութեան առումով, SS ոլորտի զարգացումը եւ պետութեան դերն այս գործընթացում շատ կարեւոր են: 2008ին հաստատուել է մինչեւ 2018 Տեղեկատուական արհեստագիտամիջոցների զարգացման հայեցակարգը, իսկ 2015ին ուժի մէջ է մտել «Տեղեկատուական տեխնոլոգիաների ոլորտին պետական աջակցութեան մասին» օրէնքը: Այսպիսով, այս խթանը օգնեց 5,2 անգամ բարձրացնել բարձր արհեստագիտական արտադրանքի մասնաբաժինը արդիւնաբերական արտահանման մէջ՝ 2007ի 1,14%ից 2021ին հասնելով 5,96%ի: Եւս մէկ դրական ցնցում տեղի ունեցաւ 2022ին, երբ Հայաստանի տնտեսութիւնը ցոյց տուեց 12,6% աճ: Սակայն այս գործօնը ապագայում կարող է դառնալ հոլանդական հիւանդութիւն[22] տնտեսութեան համար:

2000ականներին գրանցուել է նաեւ մէկ շնչին ընկնող ՀՆԱի աճ. 2000ին այդ ցուցանիշը կազմել է 603 ԱՄՆ դոլար, իսկ արդէն 2008ին՝ 3910 ԱՄՆ դոլար (Գծապատկեր 7):

2008-9ի ճգնաժամը ցուցանիշը նուազեցրեց 13,5 տոկոսով՝ 2008ի նշագծին վերադառնալով միայն 2014ին: ՀՆԱի նկատմամբ այս արագ


[22] «Հոլանդական հիւանդութիւնը» (Գրոնինգէնի էֆեկտը) ակնյայտ պատճառահետեւանքային կապն է տնտեսութեան որոշակի հատուածի տնտեսական զարգացման խթանման (օրինակ՝ բնական աղբիւրներ) եւ միւս հատուածների (ինչպէս գիւղատնտեսութիւնը կամ թեթեւ արդիւնաբերութիւնը) թուլացման միջեւ:

վերականգնումը հետեւանք է արտագաղթի բաւականին բարձր թափերի. 2008-14ին զուտ արտագաղթը կազմել է -209,778 մարդ: Այնուամենայնիւ, 2020ին զուտ արտագաղթի ուժականութիւնը թուլացաւ (մասնաւորապէս՝ COVID-19 համաճարակի պատճառով սահմանների փակման պատճառով) եւ ցածր մնաց ինչպէս 2021ին, այնպէս էլ 2022ին:



Գծապատկեր 7. Մէկ շնչին ընկնող ՀՆԱ Հայաստանում (1990-2021)

Հայաստանի բնակչութեան աճը 90ականներից սկսած բացասական ուժականութիւն է ունեցել, նոյնիսկ 2000ականների տնտեսական աճի դէպքում (Գծապատկեր 8):




Գծապատկեր 8. Բանկչութիւնը Հայաստանում (1990-2021)

Արտագաղթի բարձր թափերի հետ միաժամանակ նուազել է նաեւ զաւակաբերութեան ցուցանիշը՝ 1990ի 2.7ից 2021ին հասնելով 1.5ի, ինչը նշանակում է, որ բնական աճը տարէցտարի նուազում է՝ չլրացնելով արտագաղթի ձեւաւորած պակասը: Հարկ է նաեւ նշել, որ բնակչութեան արտագաղթը նաեւ կառուցուածքային տեղաշարժեր է առաջացրել. եթէ


դիտարկենք երիտասարդների մասնաբաժինը տնտեսապէս աշխուժ բնակչութեան մէջ, ապա 1990ին տոկոսային յարաբերութեամբ այդ թիւը կազմում էր 46,7%, իսկ 2021ին՝ 30,5%: Այսպիսով, տնտեսապէս աշխուժ բնակչութեան մէջ երիտասարդ բնակչութեան մասնաբաժնի զգալի նուազումը վկայում է աշխատանքային արտագաղթի առկայութեան մասին, աւելացնում է բեռը Հայաստանի մնացած երիտասարդ բնակչութեան վրայ եւ բացասական ազդեցութիւն է ունենում երկրի միջին եւ երկարաժամկէտ տնտեսական զարգացման վրայ:

Զգալիօրէն բարելաւուել է **բնակչութեան զուտ խնայողութիւնների** յարաբերակցութիւնը ՀՆԱին (Գծապատկեր 9): Հարկ է նշել, որ տնտեսական տեսակէտից խնայողութիւնները էական դեր են խաղում ապագայ ներդրումների ձեւաւորման գործում:



Գծապատկեր 9. Զուտ խնայողութիւնների յարաբերակցութիւնը ՀՆԱին (1993-2021)


1990ականների անկումը այս ցուցանիշի գծով յաղթահարուեց 2000ականներին թէ՛ տնտեսական աճի, թէ՛ Հայաստան դրամական փոխանցումների միջոցով: Սակայն փոխանցումների դերն այնքան էլ մեծ չէր, քանի որ դրսից ուղարկուող գումարները ծախսւում էին սպառման, այլ ոչ թէ խնայողութիւնների կամ ներդրումների վրայ: Այս հանգամանքն օգնեց յաղթահարել ընկերային ուժեղ լարուածութիւնը եւ ինչ-որ կերպ թեթեւացնել պետութեան ընկերային բեռը: Այնուամենայնիւ, պետութեան ընկերային քաղաքականութեան առումով հարկ է նշել, որ 2008-21ին աղքատութեան առումով էական առաջընթաց չի գրանցուել (Գծապատկեր 10). 2008 եւ 2021ի ցուցանիշերը գրեթէ նոյնն են:



Գծապատկեր 10. Աղքատութեան մակարդակը Հայաստանում (2008-21)

Չնայած բաւականին արագ տնտեսական աճի ժամանակաշրջանին, **գործազրկութեան մակարդակը** (որը մեծապէս աճեց 1990ականների ճգնաժամից) չկրճատուեց. եթէ 2000ին այն կազմում էր 11,1%, ապա 2008ին՝ 10%: Գործազրկութեան աճի ուժականութիւնը շարունակուել է նաեւ յետագայ տարիներին՝ 2018ին կազմելով 13,2%, իսկ 2022ին՝ 12,6%: Ջինիի գործակիցը 1999ի համեմատ նուազել է 8,3 կէտով՝ 2021ին կազմելով 27,9: Այս դէպքում արժէքը յուշում է եկամուտների բաշխման որոշակի անհաւասարութեան մասին, սակայն այն չափազանց բարձր չէ: Սա վկայում է եկամուտների անհաւասարութեան չափաւոր մակարդակի մասին, որտեղ որոշ անհատներ կամ խմբեր ունեն աւելի բարձր եկամուտներ, քան միւսները: Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ 20 տարուայ ընթացքում եկամուտների բաշխման գծում կառուցուածքային փոփոխութիւն չի եղել:

2000-7ին **գնաճը** եղել է ցածր մակարդակի վրայ (2000ին այն եղել է (-0,8%), 2002ին՝ 1,1%, 2006ին՝ 2,9%), սակայն 2008ին աճել է մինչեւ 8,9% (Գծապատկեր 11)՝ միջազգային շուկաներում պարենային ապրանքների գների աճի եւ գիւղատնտեսական արտադրանքի կրճատման պատճառով:




Գծապատկեր 11. Գնաճը Հայաստանում (1999-2021)

Գնաճը նուազել է 2014ին՝ կազմելով 3 տոկոս, սակայն տարածաշրջանային ճգնաժամի պատճառով տարուայ որոշակի ժամանակահատուածներում գների աճ է գրանցուել: Յաջորդ տարիներին կենտրոնական դրամատան կոշտ քաղաքականութեան պատճառով գնաճի մակարդակը ցածր էր, ինչն առաջացնում է ռիսկեր.-

1. երբ գնաճը ցածր է կամ գնանկում է տեղի ունենում, սպառողները կարող են ակնկալել է՛լ աւելի մեծ գնանկում եւ յետաձգել իրենց գնումները: Սա կը կրճատի սպառողական ընդհանուր ծախսերը, որոնք տնտեսական աճի կարեւոր գործօն են.
2. ցածր գնաճը կարող է խոչընդոտել ներդրումների ներգրաւմանը, քանի որ այն նուազեցնում է ներդրումների վերադարձը.
3. ցածր գնաճի պայմաններում գործատուները կարող են աւելի քիչ կարիք ունենալ բարձրացնելու իրենց աշխատավարձերը: Սա կարող է յանգեցնել աշխատողների աշխատավարձի լճացման կամ դանդաղեցման.
4. երբ գնաճը մշտապէս ցածր է, այն կարող է սահմանափակել աւանդական դրամավարկային քաղաքականութեան գործիքների արդիւնաւէտութիւնը: Կենտրոնական դրամատները կարող են աւելի քիչ հնարաւորութիւններ ունենալ տոկոսադրոյքների իջեցման համար՝ փոխառութիւններ եւ ներդրումներ ներգրաւելու համար, ինչը կարող է զսպել տնտեսական աճը:

Պետական պարտքի գծով հարկ է նշել, որ տնտեսական աճի տարիներին երկրի ՀՆԱի նկատմամբ տոկոսային յարաբերութիւնը հասցուել է 14,2 տոկոսի, սակայն 2008-9ի ճգնաժամից յետոյ պետական պարտքը կտրուկ աճել է՝ 2009ին կազմելով 34,1 տոկոս (Գծապատկեր 12):




Գծապատկեր 12. Պետական պարտք/ՀՆԱ յարաբերակցութիւնը Հայաստանում (1996-2021)

Չնայած ՀՆԱի նկատմամբ պետական պարտքի մասնաբաժնի տոկոսային աճին, հարկ է նկատել, որ եթէ 2009ին արտաքին աղբիւրներին բաժին է ընկել 85,4%, իսկ ներքին աղբիւրներին՝ 14,6%, ապա 2022ին այդ ցուցանիշերը կազմել են համապատասխանաբար 62,7% եւ 37,3%: Ներքին աղբիւրների հաշուին մասնաբաժնի աւելացման այս հանգամանքը կարեւոր է, քանի որ այն նուազեցնում է խոցելիութիւնը արտաքին ցնցումների դէպքում (տոկոսադրոյքների փոփոխութիւն, արտարժոյթի փոխարժէքի տատանում եւն.):

Հայաստանում բուռն տնտեսական աճի ժամանակաշրջանն ուղեկցուել է անհամաչափութիւնների ի յայտ գալով, որոնք ամբողջութեամբ դրսեւորուել են ճգնաժամային 2009ին. երկրում արտարժոյթի շարունակական ներհոսք է գրանցուել, մինչդեռ ազգային արժոյթը՝ դրամը, մնացել է համեմատաբար կայուն: Այս իրավիճակը յանգեցրեց **ազգային արժոյթի արժեւորմանը:** Օրինակ՝ 2003ին միջին տարեկան փոխարժէքը մէկ դոլարի դիմաց կազմում էր 579 դրամ, իսկ 2008ին այն արժեւորուել էր մինչեւ 306 դրամ մէկ դոլարի դիմաց: Դրամի այս զգալի արժեւորումը բացասաբար է ազդել արտահանման վրայ, սակայն խթանել է ներմուծումը, ինչը յանգեցրել է ներմուծման հնգապատիկ աճի 2000-8ին: Արդիւնքում 2008ին արտաքին առեւտրի բացասական հաշուեկշիռը 5,4 անգամ գերազանցել է 2004ի մակարդակը: Հայաստանի համար **արտահանման-ներմուծման յարաբերութիւնների** միւս խնդիրն էր գործընկերների, ինչպէս նաեւ ապրանքների գծով բարձր կենտրոնացուածութիւնը: Արդարեւ, 2008ին Հայաստանից արտահանման առաջատար 5 երկրների մասնաբաժինը կազմում էր ամբողջ արտահանման 65,7%ը, իսկ առաջատար 10 երկրներինը՝ 85,2%ը, իսկ 2021ին արտահանման այդ ցուցանիշերը համապատասխանաբար կազմում էին 62,7% եւ 83,6%: Ներմուծման մասով 2008ին առաջին 5 երկրներին բաժին է ընկել Հայաստանի ամբողջ ներմուծման 46,8%ը, իսկ առաջատար 10 երկրներինը՝ 67,4%ը, նոյն ցուցանիշերը 2021ին կազմել են համապատասխանաբար 41,2% եւ 76,5%: Այս թուերը ցոյց են տալիս, որ արտահանման ուղղութեամբ քաղաքականութիւնը կենտրոնացուածութեան մակարդակը չի թուլացրել, իսկ ներմուծման գծում, ընդհակառակը, աւելի մեծ կենտրոնացուածութիւն է դրսեւորուել առաջատար 10 գործընկերների մասով: Այս պատկերը կապում է Հայաստանի ձեռքերը որակեալ արտաքին առեւտրային քաղաքականութիւն վարելու հարցում: Հարկ է նաեւ ընդգծել, որ այս ցուցանիշի աճն անկասկած կապուած է Հայաստանի՝ ԵԱՏՄ մտնելու հետ: Հարկ է նշել նաեւ, որ եթէ դէպի ԵՄ արտահանման մէջ մեծ մասնաբաժին ունէին մետաղների եւ դրանցից ստացուած արտադրանքի խումբը եւ հանքային արտադրանքի խումբը, այսինքն հումքային մասը (2015ին այս երկու խմբերը կազմում էին Հայաստանից ԵՄ երկրներ արտահանման

70,9%ը), ապա 2015ի տուեալներով Ռուսաստան արտահանման մեծ՝ 71,5%ը կազմում էին պարենային ապրանքները եւ գիւղմթերքը: Այս հանգամանքը յստակ ցոյց է տալիս, թէ ինչ օգուտներ ունի Հայաստանը ԵԱՏՄի շրջանակներում՝ տնտեսութեան զարգացման համար:

Սակայն արժէ ընդգծել ոչ միայն գործընկեր երկրների կենտրոնացուածութիւնը արտահանում-ներմուծում յարաբերութիւններում, այլեւ հասկանալ Հայաստանի ներմուծման ու արտահանման կառուցուածքը: Հայաստանի նման փոքր տնտեսութիւն ունեցող երկրների համար էականօրէն կարեւոր է արտահանման քաղաքականութիւն ունենալը, իսկ արտահանում/ՀՆԱ յարաբերակցութիւնը պէտք է լինի առնուազն 50%՝ միեւնոյն ժամանակ հաշուի առնելով այն, որ արտահանման կառուցուածքը պէտք է պարունակի բարձր աւելացուած արժէքով արտադրանք[23]: Արտահանման մասով այս ցուցանիշը 2021ին կազմել է 35,3%՝ 2008ի 14,2%ի դիմաց (Գծապատկեր 13):



Գծապատկեր 13. Ներմուծման եւ արտահանման յարաբերակցութիւնը ՀՆԱին, (1990-2020)

Սակայն ՀՆԱի նկատմամբ արտահանման աճը յաջող արտահանման քաղաքականութեան իրականացման պայմաններից միայն մէկն է: Դիտարկենք երկրորդ գործօնը՝ կառուցուածքայինը. դիտարկելով 2002ից արտահանման եւ ներմուծման կառուցուածքի տուեալները՝ կարելի է եզրակացնել, որ արտահանման գծում կենտրոնացուած է եղել երկնիշ ապրանքային անուանացանկի 71 խումբը (թանկարժէք քարեր եւ մետաղներ), որը 2002ին կազմել է արտահանման 54%ը, իսկ մինչեւ 2021՝ շեշտը դրուել է 25-27 ապրանքային խմբի վրայ (հանածոներ), որոնք

[23] Ա. Ա. Թաւադեան, “Տնտեսութեան անորոշութեան շերտերը”, էջ 57, URL: http://www.noravank.am/upload/pdf/Ashot_A.Tavadyan_Intervals_of_Uncertainty_of_Economy.pdf :

կազմում են ընդհանուր արտահանման 32,5%ը: Այսպիսով, ըստ էութեան, հումքի տեսակների գծով շեշտադրումը փոխուել է: 01-24 ապրանքախմբի (պարենամթերք եւ գիւղատնտեսական ապրանքներ) գծով արտահանումը 2021-22ին 2,5 անգամ աճել է՝ կազմելով 30,5 տոկոս: Այնուամենայնիւ, պէտք է նշել, որ կենտրոնացուածութեան խնդիրը բնորոշ է նաեւ բուն ապրանքախմբին. հիմնական մասնաբաժինը բաժին է ընկնում խմիչքներին եւ ծխախոտին (2002ին այդ ապրանքների մասնաբաժինը 01-24 ապրանքային երկնիշ անուանացանկում կազմել է 78,3%, իսկ 2021ին՝ 58,6%): Այսպիսով, չնայած պատրաստի արտադրանքի արտահանման աճին՝ զգալի մասը բաժին է ընկնում 2 ապրանքատեսակների: Ներմուծման մասով նոյնպէս առկայ է կենտրոնացուածութիւն փոխադրամիջոցների եւ սարքաւորումների, ինչպէս նաեւ պարենային ապրանքների գծով: 2021ի դրութեամբ երկնիշ ապրանքային անուանացանկի 71 խմբի (թանկարժէք քարեր եւ մետաղներ) տեսակարար կշիռը ներմուծման մէջ 2002ի նկատմամբ զգալիօրէն նուազել է (16,5%ով), այդպիսով զգալիօրէն նուազեցնելով Հայաստանում աւելացուած արժէքի ստեղծման հնարաւորութիւնը (ադամանդները բերւում էին ափրիկեան երկրներից Հայաստան, որտեղ վերամշակւում էին եւ արտահանւում ԵՄ երկրներ): Արդիւնքում՝ գործընկերների կենտրոնացուածութիւնը ե՛ւ արտահանման, ե՛ւ ներմուծման գծերում, ե՛ւ կառուցուածքի կենտրոնացուածութիւնը մեծացնում են աշխարհաքաղաքական գործընթացների, այդ երկրներում որոշակի ապրանքների պահանջարկի փոփոխութեան հետ կապուած ռիսկերը: Փաստօրէն՝ արտահանման քաղաքականութիւնը չի կարողանում Հայաստանի արտահանումը հանել հումքային ասեղից:

Հայաստանի տնտեսութեան աճը հաշուի չի առնում նաեւ **մարզերի համաչափ զարգացում**ը: Մարզերի անհամաչափ զարգացումը Հայաստանում բարդ խնդիր է, որի վրայ ազդում են բազմաթիւ գործօններ, այդ թւում՝ պատմական, աշխարհագրական, տնտեսական եւ քաղաքական: Պատմականօրէն Հայաստանի որոշ շրջաններ աւելի զարգացած են եղել, քան միւսները՝ իրենց ռազմավարական դիրքի, բնական պաշարների եւ մշակութային նշանակութեան պատճառով: Օրինակ, Արարատեան դաշտը, որը ներառում է Հայաստանի մայրաքաղաք Երեւանը, վաղուց եղել է գիւղատնտեսական եւ արդիւնաբերական արտադրութեան կենտրոն, մինչդեռ այլ մարզեր, ինչպիսիք են Շիրակը, Սիւնիքը եւ Տաւուշը, աւելի մեկուսացուած եւ աւելի քիչ զարգացած էին: Հայաստանի աշխարհագրօրէն խորդուբորդ տեղանքը եւ լեռնային լանդշաֆտը նոյնպէս նպաստել են նրա շրջանների անհաւասար զարգացմանը: Շատ հեռաւոր եւ լեռնային շրջաններ դժուար հասանելի են, ինչը դժուարացնում է ենթակառուցուածքների եւ փոխադրացանցերի զարգացումը: Մանուկեանի ուսումնասիրութիւնը ցոյց

է տալիս, որ հիմնական զարգացումը տեղի է ունեցել մայրաքաղաքում, եւ 2021ին հենց Երեւանում է ստեղծուել Հայաստանի ՀՆԱի 58,4%ը[24]:

Արտագաղթի հոսքերի դիտարկումը ցոյց է տալիս, որ 2009ի ճգնաժամից յետոյ արագացուած արտագաղթի թափը մինչ օրս չի յաղթահարուել. կառավարութեան կողմից տրամադրուող միջոցները չեն ստեղծել սեփական բնակավայրում աշխատելու եւ ապրելու հնարաւորութիւնը, ինչը ստիպել է մարզաբնակ քաղաքացիներին տեղափոխուել կա՛մ Երեւան, կա՛մ այլ երկիր[25]: Ծախսերի մարզային բաշխուածութեան վերլուծութիւնը ցոյց է տուել, որ այս պահին տեղական ինքնակառավարման մարմիններն սեփական միջոցներով ապահովում են անհրաժեշտ ծախսերի միայն 20%ը. կենտրոնական ամավարկը լրավճարների եւ այլ դրամաշնորհների տրամադրմամբ ստեղծում է տեղական ինքնակառավարման՝ կենտրոնական իշխանութիւնից կախուածութեան իրավիճակ: Միեւնոյն ժամանակ, հաշուի առնելով լրավճարների նպատակային չլինելու հանգամանքը, այդ միջոցները չեն նպաստում հիմնական նպատակի իրականացմանը՝ տարածքային զարգացման թափերի հաւասարեցմանը:

Եթէ դիտարկենք ՀՆԱում պետական ծախսերի կառուցուածքը, ապա կարելի է տեսնել, որ **Հայաստանի ամավարկի** ծախսերի հիմնական խումբը ընկերային պաշտպանութեան ուղղութիւնն է: Ծախսերի երկրորդ խումբը ընդհանուր բնոյթի հանրային ծառայութիւնների ուղղութիւնն է, իսկ երրորդը՝ պաշտպանութիւնը: Այս երեք խմբերը միասին կազմում են ընդհանուր պետական ծախսերի գրեթէ երկու երրորդը: Թէեւ բացարձակ առումով 2010ից մինչեւ 2022 ընկած ժամանակահատուածում ընկերային պաշտպանութեան ծախսերն անշեղօրէն աճել են, դրանց մասնաբաժինը ամավարկի ընդհանուր կառուցուածքում շարունակում է մնալ 26ից 30 տոկոսի միջակայքում, ինչը ցոյց է տալիս, որ ամավարկի կառուցուածքում էական վերափոխումներ չեն լինում: Եթէ դիտարկենք ընկերային պաշտպանութեան ծախսերի կառուցուածքը, ապա կարող ենք նշել, որ ծախսերի հիմնական ենթակէտը կենսաթոշակային վճարներն են, որոնք միջին հաշուով կազմել են այս ուղղութեամբ բոլոր ծախսերի մօտաւորապէս 70%ը: Դրանով է բացատրւում նաեւ ընկերային ամավարկի պահպանուող կառուցուածքը. կառավարութիւնն այս ոլորտում այլ կարիքների համար միջոցներ ազատելու նպատակով խուսանաւելու քիչ հնարաւորութիւններ ունի: Միեւնոյն ժամանակ, հարկ է նշել, որ այս ընկերային բլոկի ծախսերի

[24] Hakob Manukyan, “Analysis of Regional Development in RA in the Context of A Subvention Programs of the State Budget”, 2021, p. 139, URL: http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2022_4_136_143.pdf

[25] Hakob Manukyan, “Analysis of Regional Development in RA in the Context of A Subvention Programs of the State Budget”, 2021, p. 141, URL: http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2022_4_136_143.pdf

կառուցուածքում բնակչութեան կենսամակարդակի երկարաժամկէտ, որակական փոփոխութեանն ուղղուած ծախսերի մասնաբաժինը շատ ցածր է, ինչը պէտք է լինէր ընկերային քաղաքականութեան արդիւնաւէտութեան հասնելու հիմնական նպատակը:

Յաջորդ բաժինը ընդհանուր բնոյթի հանրային ծառայութիւններն են, որոնք բացարձակ արտայայտութեամբ ցոյց են տուել բաւականին նշանակալի աճ: Սակայն այս դէպքում եւս պահպանւում է այդ ծախսերի մասնաբաժինը ՀՀ ընդհանուր ծախսերի կառուցուածքում. տուեալ գծով ծախսերը տատանւում են 15-19 տոկոսի սահմաններում: Նկատուած աճը կարելի է բացատրել ընդհանուր բնոյթի հանրային ծառայութիւնների գծով ծախսերի կառուցուածքը դիտարկելով. վերջին տարիներին զգալիօրէն աւելացել է տոկոսավճարների մասնաբաժինը, ինչը կապուած է պետական պարտքի աւելացման հետ: Մինչդեռ հանրային ծառայութիւնների կառուցուածքում գիտահետազօտական աշխատանքները մնացել են անփոփոխ. այս ուղղութեամբ ֆինանսաւորումը չի աւելացել, ինչը երկարաժամկէտ հեռանկարում կարող էր դրական ազդեցութիւն ունենալ մատուցուող ծառայութիւնների վրայ:

ՀՀ պետական ամավարկի ծախսերի յաջորդ յօդուածը պաշտպանութիւնն է. այս յօդուածը ցոյց է տալիս աճ ինչպէս բացարձակ արտայայտութեամբ, այնպէս էլ պետական ամավարկում մասնաբաժնի առումով: Հիմնական աճը տեղի է ունեցել 2016ից յետոյ, իսկ 2020ին իրականացուել են արցախեան երկրորդ պատերազմի հետ կապուած անհրաժեշտ ծախսերը: 2022ին այս ծախսերն ամէնաբարձրն են եղել ուսումնասիրուող ողջ ժամանակահատուածում եւ նոյնիսկ շրջանցել են ընդհանուր բնոյթի հանրային ծառայութիւնների ծախսերի ցուցանիշը: Այս խմբում ծախսերի մեծ մասն ուղղւում է ռազմական պաշտպանութեանը, սակայն պէտք է ընդգծել, որ այս պարագայում եւս կրճատուել են պաշտպանական ոլորտում գիտահետազօտական աշխատանքների ծախսերը:

Ստորեւ կը քննարկուեն **երկարաժամկէտ դրական տնտեսական էֆեկտին վերաբերող ծախսեր**ի յօդուածները: Դրանցից առաջինը տնտեսական յարաբերութիւններին ուղղուող ծախսերն են. 2010ի 11,78% ցուցանիշից այն 2022ին ընկել է մինչեւ 7,84%: Եթէ դիտարկենք այս ուղղութեամբ ծախսերի կառուցուածքը, ապա կարող ենք նշել, որ հիմնական ծախսերն ուղղւում են փոխադրամիջոցների եւ գիւղատնտեսութեան ոլորտներին. այս կատեգորիաները միասին ունեն տնտեսական յարաբերութիւնների գծով բոլոր ծախսերի մօտաւորապէս 80 տոկոսը: Միեւնոյն ժամանակ, գիտահետազօտական աշխատանքների ծախսերը զգալիօրէն կրճատուել են՝ դրանով իսկ նեղացնելով երկարաժամկէտ տնտեսական զարգացման վրայ ազդելու հնարաւորութիւնները: Կարելի է արձանագրել, որ երկարաժամկէտ

տնտեսական աճի վրայ ուղղակի ազդեցութիւն ունեցող գծով առկայ է մի իրավիճակ, երբ հիմնական աղբիւրներն ուղղուած են ճանապարհների մասնակի, կարճաժամկէտ կամ միջնաժամկէտ վերանորոգման ծրագրերի իրականացմանը եւ գիւղատնտեսութեանը աջակցելուն՝ դրանով իսկ հնարաւորութիւն չտալով որեւէ երկարաժամկէտ զարգացման: Երկարաժամկէտ հեռանկարում կարեւոր նշանակութիւն ունի շրջակայ միջավայրի պաշտպանութիւնը: Այս ցուցանիշը միակն է յօդուածների շարքում, որ ցոյց է տուել բացարձակ արտայայտութեամբ որեւէ աճի բացակայութիւն. ծախսերը մնում են միջինը նոյն մակարդակի վրայ՝ նոյնիսկ չհասնելով 2012ի նշագծին: Դա յանգեցնում է ընդհանուր կառուցուածքում դրա մասնաբաժնի կրճատմանը. եթէ 2012ին շրջակայ միջավայրի պաշտպանութիւնը 0,7% էր, ապա 2022ին այդ ցուցանիշը նուազել է մինչեւ 0,3%: Այս գծով ծախսերի կառուցուածքի դիտարկումը ցոյց է տալիս, որ միջոցները հիմնական ենթախմբից հոսել են մնացորդային, ինչը նշանակում է, որ այս ոլորտում բացակայում է ծախսերի իրականացման յստակ քաղաքականութիւն. տարէց տարի դրանք ուղղւում են տարբեր նպատակների:

Հումքային հարստութիւնից զուրկ երկրի համար շատ կարեւոր է **մարդուժի զարգացումը**: Այս աղբիւրի որակական զարգացման համար կարեւոր է ունենալ նպատակաուղղուած քաղաքականութիւն կրթութեան եւ առողջապահութեան ոլորտներում: Առողջապահութեան դէպքում արձանագրուել է ծախսերի մասնաբաժնի կայունութիւն. եթէ հաշուի չառնենք 2020-21ը, երբ իրականացուել են այդ ոլորտում անհրաժեշտ լրացուցիչ միջոցների ներարկումներ, առողջապահական ծախսերի ցուցանիշը տատանւում է ընդհանուր ծախսերի 6 տոկոսի սահմաններում: Առողջապահական ծախսերի վրայ կորոնավիրուսային համաճարակի ազդեցութեան վերաբերեալ թեզը հաստատւում է նաեւ այս ոլորտում ծախսերի կառուցուածքի դիտարկմամբ. 2020-21ին եղել է հանրային առողջապահական ծառայութիւնների ծախսերի մասնաբաժնի կտրուկ աճ, որն արդէն 2022ին գրանցել է կտրուկ անկում: Այս առումով, աւանդաբար, առողջապահական ծախսերի հիմնական ուղղութիւնը հիւանդանոցային ծառայութիւններն են: Մարդուժի զարգացման տեսանկիւնից պէտք է ընդգծել, որ անհրաժեշտ է զարգացնել հենց առողջապահական ծառայութիւնների առաջնային շրջանակը, ինչը զգալիօրէն կը նուազեցնի հիւանդանոցային ծառայութիւնների վրայ միջոցների ծախսման յետագայ անհրաժեշտութիւնը: Սակայն, հաշուի առնելով հանրային առողջապահութեան ոլորտի անկումը, ՀՀ կառավարութիւնը չի մշակում վերոնշեալ խնդրի լուծմանն ուղղուած երկարաժամկէտ ռազմավարութիւն:

Ծախսերի վերջին խումբը կրթութիւնն է. թէեւ նկատւում է կրթութեան համար բիւջէտային ծախսերի բացարձակ մեծութեան աճ, սակայն հաշուի առնելով այլ ուղղութիւններով ծախսերի աւելի արագ աճի փաստը՝

կրթութեան ծախսերի մասնաբաժինը նուազել է: Կրթութեան ծախսերի կառուցուածքը ցոյց է տալիս, որ առաջնային են մնում պարտադիր կրթութեան, այսինքն՝ տարրական եւ միջնակարգ ընդհանուր կրթութեան ծախսերը: Ինչ վերաբերում է բարձրագոյն եւ միջին մասնագիտական կրթութեանը, որոնք ձեւաւորում են մարդուժը եւ կարող են ազդեցութիւն ունենալ երկարաժամկէտ տնտեսական աճի վրայ, ապա այս ուղղութեամբ մասնաբաժնի նուազում է տեղի ունենում: Այսպիսով, այս դէպքում եւս պետութիւնը, կրթութեան անհրաժեշտ մակարդակի ապահովման պարտաւորութիւններից դուրս, չի մշակում մարդուժի մակարդակի բարձրացման գործիքակազմեր եւ ուղիներ:

Այսպիսով, ամփոփելով պետական ծախսերի քաղաքականութեան դիտարկումը, կարելի է ասել, որ, ի տարբերութիւն ընկերային ծախսերի, տնտեսական ծախսերը կա՛մ չեն փոխուել, կա՛մ գրանցել են անկում: Անգամ ընկերային ծախսերի ներսում առաջնային են դառնում կառավարութեան պարտականութիւնների հետ կապուած կամ կարճաժամկէտ ազդեցութիւն ունեցող ծախսերը. գիտական հետազօտութիւնները, կեանքի որակի բարձրացման համար նպաստաւոր միջավայրի մշակման եւ բարելաւման ծախսերը զգալիօրէն նուազել են: Հետեւաբար, կարելի է հաստատել, որ պետական ամավարկի ներկայիս կառուցուածքը չունի խթանող գործառոյթներ, իսկ ընկերային մասը բնակչութեան բարեկեցութեան մակարդակի եւ կեանքի որակի երկարաժամկէտ բարելաւման նախադրեալներ չի ստեղծում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամփոփելով, կարելի է արձանագրել, որ 20րդ եւ 21րդ դարերի ընթացքում Հայաստանի տնտեսութեան կառուցուածքն ու տնտեսական քաղաքականութիւնը բազմիցս ենթարկուել են խորքային փոփոխութիւնների՝ փոխակերպումների:

Տնտեսութեան կառուցուածքի փոփոխութիւնների մասով պէտք է ընդգծել թէ՛ զգալի արտաքին, թէ՛ ներքին ազդակների ազդեցութիւնը: Տնտեսութեան վերափոխումը վերջին հարիւր տարում ունէր հիմնարար արտաքին պատճառ՝ համաշխարհային տնտեսութեան սրընթաց վերակազմաւորումը. գիւղատնտեսութեան վրայ հիմնուած տնտեսական կառուցուածքը, որը դեռ բնորոշ էր Հայաստանին, 19րդ դարի վերջում փոխակերպուեց արդիւնաբերականի, իսկ 20րդ դարի վերջին էլ յետարդիւնաբերականի, այսինքն ծառայութիւնների վրայ հիմնուած տնտեսութեան, ինչը աշխարհի ցանկացած պետութեան տնտեսական վերափոխման աւանդական ուղեծիրն է: Միեւնոյն ժամանակ առանձին տեղային հանգամանքներ ունէին գործընթացը արագացնող կամ դանդաղեցնող ազդեցութիւն. օրինակ՝ խորհրդայնացումը արագացրեց տնտեսութեան անցումը գիւղատնտեսական-հողագործական

տարբերակից բարձր արդիւնաբերականացման առկայութեամբ տնտեսութեան, իսկ, օրինակ, 20րդ դարում տեղի ունեցած երկու աշխարհամարտերը եւ ԽՍՀՄ փլուզումը զգալի յետընթաց բերեցին՝ մի դէպքում վերափոխելով տնտեսութիւնը ռազմական նպատակների իրականացման պատճառով, միւս դէպքում՝ բնականօրէն վերադարձնելով հողագործութեան հաշուին տնտեսական արդիւնք ստեղծելու ժամանակաշրջանին: Որպէս արդիւնք՝ 21րդ դարում Հայաստանը արդէն յետարդիւնաբերական տարբերակի փոքր բաց տնտեսութիւն է, որի հիմնական բաղադրիչն է դարձել ծառայութիւնների ոլորտը: Միաժամանակ պէտք է նշել, որ տնտեսութիւնում հիմնականը հանդիսացող ծառայութիւնների առկայ կառուցուածքը չի ունենում երկարաժամկէտ տնտեսական ազդեցութիւն եւ չի ապահովում տնտեսական զարգացման կայուն հիմքեր:

Ինչ վերաբերում է վերոնկարագրեալ տնտեսական վերափոխումների վրայ հիմնուած տնտեսական քաղաքականութեան փոփոխութիւններին, ապա պէտք է ասել, որ եթէ ցարական Ռուսաստանի շրջանում քաղաքականութեան մէջ բացակայում էր ազգային բաղադրիչը, իսկ հիմնական ծրագրերը ուղղուած էին բնակչութեան ազգային կազմի փոփոխութեանը եւ տարածաշրջանի աղբիւրների օգտագործմամբ կայսրութեան այլ հատուածներում պատրաստի արտադրանքի ստեղծմանը, ապա Հայաստանի առաջին Հանրապետութեան համար առաջնային խնդիր էր անվտանգութեան եւ ընկերային նուազագոյն բարեկեցութեան ապահովումը: Ցարական իշխանութիւնների վարած քաղաքականութիւնը, առաջին աշխարհամարտը եւ Հայոց Ցեղասպանութիւնը դարձան այն արտաքին հանգամանքները, որոնց բերումով Հայաստանի տնտեսութիւնը Ի. դարի առաջին տասնամեակներում ունէր հողագործական բնոյթ, հիմնական աղբիւրները արտահանւում էին առանց վերամշակման, իսկ արդիւնաբերութիւնից զարգանում էին միայն թեթեւ եւ սննդի արդիւնաբերութիւնը: Գաղութային քաղաքականութեանը փոխարինման եկած Առաջին Հանրապետութեան քաղաքականութիւնը սկզբնական շրջանում հեռու էր շուկայական լինելուց. տնտեսական աղբիւրի մեծ մասը պետականացուեց: Նման քաղաքականութիւնը ուղղուած էր ստեղծուած անկայուն իրավիճակի ռիսկերի նուազեցմանը: Հարկ է նկատել, որ արդէն 1919ից տնտեսութեան կառուցուածքի վերափոխումը մեծապէս ուղղւում է մարդուժի եւ արդիւնաբերական հնարաւորութիւնների զարգացմանը: Այս ուղղութիւնները դառնում են նաեւ Խորհրդային Հայաստանի առաջնահերթութիւնները: Չնայած նման նպատակներին՝ դրանց հասնելու գործիքակազմերի հարցում տեղի են ունենում զգալի տեղաշարժեր. Առաջին Հնարապետութեան գոյութեան երկրորդ կէսում ի յայտ եկած

շուկայական գործիքակազմերը արագ փոխւում են պետական, պլանային համակարգով:

Որոշակի վերափոխումներից յետոյ խորհդրային համակարգը ամբողջանում է՝ որպէս լիարժէք պլանային տնտեսութիւն՝ ուղղուած ճարտարարուեստականացմանը եւ խմբայնացմանը: Նման մեխանիզմը, երբ միջոցները հաւաքւում են մէկ դերակատարի ձեռքում, զգալիօրէն աւելացնում են աղբիւրների օգտագործման արդիւնաւէտութիւնը. որպէս արդիւնք Հայաստանում զարգանում է ծանր արդիւնաբերութիւնը, էլեկտրաուժանիւթի արտադրութիւնը, վերակառուցւում են ճանապարհներ եւ երկաթուղային գծեր: Սակայն նման համակարգերի հիմնական խնդիրը ճգնաժամային իրավիճակներում ճկունութեան դրսեւորման ցածր հնարաւորութիւններն էին. 1980ականներին նաֆթի միջազգային գների անկումը բերեց ԽՍՀՄ տնտեսութեան մէջ զգալի խնդիրների: Հումքային արտահանումից կախուածութիւնը, որը առաջացել էր ընկերվարական գաղափարախօսութեան շրջանակներում վարուող ոչ-արդիւնաւէտ տնտեսական քաղաքականութեան հետեւանքում ոչ-մրցակցային պատրաստի արտադրանքի առկայութեան պատճառով, դարձաւ Խորհրդային միութեան փլուզման հիմնական պատճառներից մէկը: Դրան աւելացան նաեւ 1980ականներին տնտեսութեան բարեփոխմանն ուղղուած քայլերի թերի եւ ոչ-հետեւողական իրականացումը. մասնաւոր սեփականութեան ձեւաւորումը առանց համարժէք վերահսկողութեան բերեց ստուերային շուկայի առաջացման, արտաքին տնտեսական յարաբերութիւնների մենաշնորհի վերացումը աւելացրեց ներկրումը, չազդելով արտահանման ծաւալների վրայ, ինչով էլ աւելի մեծացրեց դոլարի պահանջարկն ու արտաքին պարտքի անհրաժեշտութիւնը:

Հայաստանի երրորդ Հանրապետութիւնը ստեղծուեց վերոնկարագրեալ տնտեսական պայմաններում, որին աւելանում են նաեւ արցախեան պատերազմը եւ Սպիտակի երկրաշարժի հետեւանքները: Տնտեսութեան կառուցուածքը խորհրդային միւս հանրապետութիւնների հետ սերտաճած արդադրական շղթայ էր: Այդ շղթան ԽՍՀՄ փլուզումից յետոյ անմիջապէս քանդուեց: Անկախութեան առաջին տասնամեակում իրականացուած «ցնցումային բուժումը», թէեւ միջազգային գործընկերների կարծիքով ամէնաարդիւնաւէտ գործիքակազմն էր, այնուամենայնիւ շատ հարցերում ունեցաւ բացասական արդիւնք. արդիւնաբերական հիմնական շղթաները չվերականգնուեցին, իսկ գիւղատնտեսութիւնը դարձաւ ՀՆԱի հիմնական բաղկացուցիչը, Հայաստանը փաստացի ետ շպրտուեց 70 տարով՝ կրկին վերածուելով հողային տնտեսութեան:

Միեւնոյն ժամանակ սեփականաշնորհման շնորհիւ արդէն 2000ականներին սկսուեց տնտեսութեան բուռն աճը: Այդ շրջանում տնտեսութեան կառուցուածքը եւս մէկ անգամ ենթարկուեց զգալի

փոփոխութեան. շինարարութիւնը դարձաւ տնտեսութեան շարժիչ ուժը: Անհրաժեշտ է ընդգծել, որ արդիւանբերութեան եւ ծառայութիւնների անկման եւ մեծամասաբ սպառողական, այլ ոչ թէ արտադրական նպատակներով շինարարութեան ֆոնին տրամաբանական էր տնտեսութեան ճկունութեան եւ երկարաժամկէտ զարգացման հնարաւորութիւնների նուազման հեռանկարը: Այս իրողութիւնը տեղի ունեցաւ 2008-9ի ճգնաժամի շրջանում, երբ Հայաստանի տնտեսական անկումը զգալիօրէն գերազանցեց տարածաշրջանի բոլոր երկրների անկումը: Այս ճգնաժամից յետոյ տեղի ունեցաւ Հայաստանի տնտեսական կառուցուածքի եւս մէկ հիմնարար փոփոխութիւն. հիմնական շեշտը որոշուեց դնել արտահանման ուղղութիւնների զարգացման եւ մարդուժի ուժեղացման վրայ: Սակայն անարդիւնաւէտ պետական քաղաքականութեան պատճառով 2008ի ցուցանիշերին Հայաստանը հասաւ միայն 2018ին:

Այս պահի դրութեամբ Հայաստանի տնտեսական քաղաքականութիւնը շարունակում է պահպանել վերոնկարագրեալ ուղղութիւնը. տնտեսութեան կառուցուածքում գերակշռում է ծառայութիւնների ոլորտը, բարձր արհեստագիտական արդիւնաբերութիւնը ստանում է յաւելեալ պետական աջակցութիւն: Սակայն պէտք է արձանագրել, որ հաշուի առնելով բնակչութեան մշտական անկումը, արտագաղթի բարձր մակարդակը, բարձրագոյն կրթութեան որակի անկումը՝ մարդուժի զարգացման հեռնկարները նուազում են: Միւս կողմից դրամի զգալի արժեւորումը, կենտրոնական բանկի կողմից վարուող քաղաքականութիւնը, արտահանման կենտրոնացուածութեան առկայ մակարդակը զգալի խնդիրներ են ստեղծում նաեւ այս ուղղութեան զարգացման համար:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետութիւնը՝ որպէս փոքր ներքին շուկայ ունեցող պետութիւն, պէտք է փորձի է՛լ աւելի մեծ ներգրաւուածութիւն ունենալ միջազգային շուկաներում. կարեւոր է յիշել, որ մասշտաբի էֆեկտի ձեւաւորման անհնարինութեան պտճառով չի կարելի դիտարկել մեծ արտադրական ծաւալ պահանջող ուղղութիւնները, որոնց արդիւնաւէտութիւնը հասանելի է միայն հսկայածաւալ արտադրական գործընթացների գործարկման դէպքում: Այս առումով պէտք է է՛լ աւելի մեծ ուշադրութիւն դարձնել ժամանակակից գիտելիքների վրայ հիմնուած արդիւնաբերութեան եւ նոր գաղափարների շուկայահանմանն ուղղուած ծրագրերի մշակմանը: Ցաւօք, պէտք է արձանագրել, որ պետական ամավարկի վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ այս պահին պետական քաղաքականութիւնը մեծապէս ուղղուած է ընկերային կարճաժամկէտ հարցերի կարգաւորմանը, իսկ տնտեսութեան երկարաժամկէտ զարգացման ուղղութեամբ ծախսերը զգալիօրէն նուազել են:

Այս պայմաններում անհրաժեշտ է վերանայել Հայաստանի Հանարպետութեան ամավարկի եւ տնտեսական քաղաքականութիւնը՝

մեծացնելով մարդկային դրամագլխի եւ ժամանակից գիտելիքների վրայ հիմնուած, արտահանմանն ուղղուած արդիւնաբերութեան զարգացմանն ուղղուած ջանքերն ու ծրագրերը: Արտաքին տնտեսական յարաբերութիւնները պէտք է ունենան զարգացման միասնական, ռազմավարական մօտեցում, որի շրջանակներում առանձին դիտարկման պէտք է արժանանայ հարեւան երկրների հետ յարաբերութիւնների հեռանկարը: Մասնաւորապէս Թուրքիայի հետ տնտեսական յարաբերութիւնների դէպքում անհրաժեշտ է մշակել համարժէք քայլերի յաջորդականութիւն, որը թոյլ կը տայ պահպանել հայրենական արտադրողների մասնակցութիւնը Հայաստանի շուկաներում, թոյլ չտալով տնտեսութեան ռազմավարական ուղղութիւնների կախուածութիւնը Թուրքիայից:

Այս առումով, ամբողջացնելով առաջարկութիւնների ներկայացումը, կարծում ենք, որ տնտեսութեան կառուցուածքի արդիւնաւէտ վերափոխման եւ երկարաժամկէտ զարգացման համար առաջնային է զարգացման ռազմավարութեան մշակումը, որը պիտի ներառի առկայ հնարաւորութիւնների օգտագործման լաւագոյն տարբերակները՝ հաշուի առնելով արտաքին տնտեսական եւ քաղաքական գործօնների ազդեցութիւնը եւ հիմնուելով Հայաստանի Հանարպետութեան առկայ ներուժի (կապուած թէ՛ ոչ լիարժէք օգտագործուող մարդուժի, թէ՛ անարդիւնաւէտօրէն օգտագործուող արտադրական աղբիւրների հետ) իրացման եւ Սփիւռքի հետ հնարաւոր գործընկերային միջավայրից բխող նոր տնտեսական համակարգերի ձեւաւորման վրայ:

THE TRANSFORMATION OF ECONOMIC POLICY IN ARMENIA DURING THE TRANSITION FROM PLANNED TO MARKET ECONOMY

(SUMMARY)

Vilen Mnatsakanyan
mnatsakanyanvilen@gmail.com

The paper focuses on the deep and radical changes that took place in the basic charactersitics of the Armenian economy from Tasrist Russia to the post-Corona Virus period. The paper observes that during Tsarist Russia Armenia did not have an independent economic policy and whatever was being implemented was meant to serve the political intentions of the authorities of tsarist Russia (for instance the changes in the demographic features of the region). During the first Republic of Armenia the state had an independent and free economic policy, which was, however, constrained due to the difficult economic conditions in the country. The Soviet era, on the other hand, is singled out due to the shift in the philosophy of its economic policy, which led to significant economic growth. As of the 1960s, alongside pan-Soviet economic problems, the economic growth of Soviet Armenia slowed. After the collapse of the Soviet Union the Republic of Armenia underwent a few phases of economic reform. In conclusion the author notes that there is a need to deeply reassess the domestic and foreign economic policy of the country based on better utilization of resources and the establishment of a new model of economic partnership and cooperation with the Diaspora.

Համառօտ կենսագրական յօդուածագիրներու

Փրոֆեսոր Վաչագան Գրիգորեան **vachik_grigoryan@mail.ru**
Ծնած է Կոտայքի մարզի Քաղսի գիւղը: 1983ին աւարտած է ԵՊՀ բանասիրական ֆակուլտէտը: 1988ին պաշտպանած է թեկնածուական, իսկ 2003ին՝ դոկտորական, 2008ին դարձած է փրոֆեսոր: 2010էն վարիչն է Գաւառի պետական համալսարանի հայոց լեզուի եւ գրականութեան ամբիոնին: 1991ին ընտրուած է Հրազդանի շրջանային ժողկրթբաժնի վարիչ, 1995-99՝ եղած է Կոտայքի մարզի կրթութեան վարչութեան պետի տեղակալ:
Ունի մենագրութիւններ Հրանտ Մաթեւոսեանի եւ Լեւոն Շանթի մասին: Հեղինակ է դասագիրքերու, օժանդակ ձեռնարկներու: 2013ին արժանացած է «Հրանտ Մաթեւոսեան» մրցանակին:

Տիգրան Եկաւեան **Tyegavian@gmail.com**
Ծնած է Փարիզ, ապրած է Փորթուկալ, Զուիցերիա, Սուրիա, Լիբանան եւ Թուրքիա: Համեմատական քաղաքականութեան մագիստրականը ստացած է Փարիզի քաղաքական հետազօտութիւններու հիմնարկէն (Sciences PO), իսկ արաբերէնի բակալաւրի վկայականը՝ INALCOէն: Կը դասաւանդէ Շիլլէրի միջազգային համալսարանի միջազգային յարաբերութիւններու ազատ հիմնարկին մէջ (ILERI): Անդամ է *Conflicts*ի խմբագրական խորհուրդին: Մասնագէտ է Միջին Արեւելքի, Սփիւռքի եւ քրիստոնեայ փոքրամասնութիւններու: Կ'աշխատակցի *Le Monde Diplomatique, EVN Report, France Arménie* եւ այլ թերթերու: Հեղինակն է *Արեւելքի փոքրամասնութիւնները, պատմութեան մոռացուածները* (ֆրանսերէն՝ 2019, հայերէն՝ 2021), *Հայաստանի աշխարհաքաղաքականութիւն* (2022, 2023) հատորներուն:
Ներկայիս՝ Փարիզի արեւելեան քրիստոնէական հիմնարկի գիտաշխատող է, ուր կը պատրաստէ իր դոկտորականը՝ Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի քաղաքականութեան վերաբերեալ: Ան միաժամանակ կը պատրաստէ իր դոկորականը՝ Լիոն 2 համալսարանին մէջ:

Դոկտոր Յակոբ Թադեւոսեան **tadevosyanhakob@mail.ru**
2004ին՝ Խ. Աբովեանի անուան Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) մէջ պաշտպանած է թեկնածուական՝ «Առանձնայատուկ (մասնաւորաբար զինուորական) խմբաւորումները եւ դրանց դաստիարակչական հնարաւորութիւնները» նիւթով: 2008ին ստացած է դոցենտի կոչում, մանկավարժութեան մասնագիտութեամբ: 2018ին աւարտած է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կեդրոնի մագիստրականը: 2012-14՝ համատեղութեամբ

աշխատած է որպէս ՀՊՄՀի կրթութեան, հոգեբանութեան եւ ընկերաբանութեան ֆակուլտէտի դեկանի գիտութեան եւ յետբուհական կրթութեան տեղակալ, 2022էն՝ ռեկտորի խորհրդական:
ՀՀ կրթութեան, պաշտպանութեան եւ ընկերային պաշտպանութեան նիւթերու վերաբերեալ իր հետազօտութիւնները օգտագործուած են ՀՀ կառավարութեան կողմէ: 2016ի եւ 2020ի արցախեան պատերազմներուն ընթացքին եւ յետպատերազմեան շրջանին համակարգած է վիրաւորներու եւ զոհուած զինծառայողներու ընտանիքներու հոգեբանական աջակցութեան եւ վերականգնողական աշխատանքները, որոնց արդիւնքները վերլուծուած, համակարգուած եւ հիմք դարձած են տարբեր որոշումներու: Հեղինակ եւ համահեղինակ է մեթոդական, ուսումնական ձեռնարկներու եւ 60 գիտական յօդուածներու:

Եղիա Թաշճեան **yeghia.tash@gmail.com**
Ծնած է Պէյրութ: 2013ին աւարտած է Հայկազեան համալսարանի քաղաքական գիտութիւններու բաժինը, իսկ 2022ին՝ Պէյրութի Ամերիկեան համալսարանի քաղաքական գիտութիւններու բաժնի մագիստրականը, պաշտպանելով "Strategic Leadership in Global Societal Security Program" նիւթը, ուր ծանրացած է Չինաստանի՝ Միջին Արեւելքի մէջ ունեցած ուժանիւթի աշխարհառազմավարական քաղաքականութեան վրայ՝ Swedish Defense Universityէն:
Համադրողն է Պէյրութի Ամերիկեան համալսարանի Իսամ ֆարէսի անուան հանրային քաղաքականութեան հիմնարկին:Նախապէս օգնական-գիտաշխատող էր Հայկազեան համալսարանի Հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնին մէջ: Ներկայիս կ'ուսումնասիրէ Միջին Արեւելք-Հիւսիսային Ափրիկէ-Կովկասի շրջանի մէջ թուրք-ռուսական գործամրցակցութիւնը եւ Ռուսաստանի հիւիս-հարաւ տնտեսական ճանապարհի խնդրիրները: Կ'աշխատակցի տեղական եւ շրջանային թերթերու, սիւնակագիր է *Armenian Weekly*ի եւ կը դասաւանդէ Ամերիկեան համալսարանին մէջ:

Վերապ. դոկտ. Փոլ Հայտոսթեան **Paul.Haidostian@haigazian.edu.lb**
2002էն իվեր նախագահն է Հայկազեան համալսարանին: Համալսարանական ուսումը ստացած է Հայկազեան համալսարանի եւ Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական ճեմարանին մէջ, իսկ հովուական աստուածաբանութեան դոկտորականը՝ Փրինսթընի Աստուածաբանական ճեմարանէն: Կրթական, եկեղեցական, տեղական եւ միջազգային պատասխանատու դիրքերու կողքին, ան դասախօս է, ունի բազմաթիւ ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ՝ Մերձաւոր Արեւելքի քրիստոնէութեան, հայ ինքնութեան, միջեկեղեցական, կրթութեան,

ընկերային հարցերու եւ հովուական աստուածաբանութեան հիմնախնդիրներու շուրջ:
Ներկայիս ան Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական եկեղեցիներու միութեան նախագահի տեղապահն է եւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու խորհուրդի համանախագահը:

ՊԳԹ Տիգրան Ղանալանեան tghanalanian@yahoo.com
Ծնած է Երեւան, 1990ին: 2016ին ԵՊՀ հայոց պատմութեան ամբիոնէն պաշտպանած է թեկնածուական՝ «Սփիւռքի ներքին տեղաշարժերը 1945-88 թուականներին» նիւթով: 2008-16՝ իբրեւ փորձագէտ պաշտօնավարած է «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հայագիտական կեդրոնը: 2014էն դասախօս է ԵՊՀ պատմութեան հիմնարկի հայոց պատմութեան ամբիոնին: Հեղինակ է գիտական յօդուածներու, մենագրութեան, համահեղինակ՝ այլ գիրքերու: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կը կ'ընդգրկէ Սփիւռքի պատմութեան եւ ընդհանրապէս սփիւռքագիտութեան շուրջ:

ՊԳԹ Թեհմինէ Մարտոյեան tehminemartoyan@gmail.com
Ծնած է Երեւան, 1977ին: 2007ին պաշտպանած է թեկնածուական՝ ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան հիմնարկի, Իրանի բաժնին մէջ՝ «Կարմէլեանների տարեգրութիւնը՝ որպէս Իրանի 17-18րդ դարերի պատմագիտական աղբիւր» նիւթով: 2012էն դասախօս է Երեւանի տնտեսահրաւագիտական համալսարանին մէջ, 2015էն նախագահն է «Լազարեան ինստիտուտ» գիտակրթական հիմնարկին: 2019էն Հայոց Ցեղասպանութեան զոհերի ու վերապրողների փաստագրման եւ ուսումնասիրութեան բաժնի աւագ գիտաշխատող է Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտին մէջ: 2023էն կը դասաւանդէ նաեւ Երեւանի Գլաձոր համալսարանին մէջ:
Հրատարակած է ուսումնասիրութիւններ ջուղահայերու, Շահ Աբասի, Զմիւռնիոյ աղէտին, Հայոց Ցեղասպանութեան հաւաքական յիշողութեան, սուրիահայերու Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններ համարկումի նիւթերով: Համահեղինակ է եւ թարգմանիչ: Իր վերջին գիրքն է *Ցեղասպանութեան քաղաքականութեան շարունակութիւնը Զմիւռնիայում (1922)* (2024):

Հայկանուշ Մեսրոպեան mesropyanhaykanush@gmail.com
Ծնած է Կիրովական (այժմ Վանաձոր): 1975ին աւարտած է ԵՊՀ բանասիրութեան ֆակուլտէտի հայոց լեզուի եւ գրականութեան բաժանմունքը: 1995-97՝ Էջմիածնի քրիստոնէական դաստիարակութեան կեդրոնը: 1978էն իվեր գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի հիմնարկին մէջ: Արեւմտահայերէնին շուրջ դաշտային

ուսումնասիրութիւններ կատարած է Սուրիա եւ Թուրքիա: Հեղինակ է ուսումնասիրական հատորներու, վերջինը՝ *Կրօնաեկեղեցական բառապաշարը հայերէնի բարբառներում* (2016):

ՊԳԹ Կարէն Մկրտչեան k86mkrtchyan@gmail.com
2014ին ստացած է պատմական գիտութիւններու թեկնածուի աստիճան՝ ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտէն՝ «Հայ-իրանական յարաբերութիւնները 1991-2005 թթ.» նիւթով:
ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի հայ գաղթօճախների եւ Սփիւռքի պատմութեան բաժնի գիտաշխատող է: Անդամ է «Օտար/պատմական սկզբնաղբիւրները հայկական գաղթավայրերի մասին» ամէնամեայ միջազգային գիտաժողովի նիւթերու ժողովածուի խմբագրական խորհուրդի: Այդ առիթով կազմակերպած է գիտաժողովներ:
Գիտական հետաքրքրութիւններն են՝ հայ-իրանական քաղաքական, տնտեսական եւ գիտամշակութային յարաբերութիւնները, Իրանի հայ գաղթօջախի արդի ժողովրդագրութեան, ընկերային, կրթական եւ այլ հարցերը: Հեղինակ է մէկ մենագրութեան եւ 30 գիտական յօդուածներու:

Վիլէն Մնացականեան mnatsakanyanvilen@gmail.com
Աւարտած է Հայաստանի Հայ-Ռուսական համալսարանի տնտեսագիտութեան եւ *պիզնըս*ի հիմնարկի տնտեսագիտութեան բաժինը: 2024էն կ'աշխատի թեկնածուականին վրայ՝ «Միջազգային տնտեսագիտութիւն» նիւթով: Կը դասաւանդէ է «ՀՀ տնտեսութիւն», «Միջազգային տնտեսագիտութիւն» եւ «Արտասահմանեան երկրների տնտեսութիւն» նիւթերը: Աշխատած է գործադիր եւ օրէնսդիր մարմիններու փորձագիտական խումբերու մէջ: Հեղինակ է երկու գիրքի, վերջինը՝ *Ինտեգրացիոն գործընթացների ազդեցութիւնը միգրացիոն հոսքերի վրայ* (2020):
Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ միջազգային տնտեսական յարաբերութիւնները, համարկումի գործընթացները եւ անոնց ազդեցութիւնը զարգացող երկիրներու վրայ, պետութեան հարկային ամավարկի կարգաւորումը, աշխարհատնտեսական գործընթացները եւ իսլամական ֆինանսական համակարգը:

Փրոֆեսոր Քլոտ Արմէն Մութաֆեան claude.mutafian@wanadoo.fr
Ծնած է Փարիզի մերձակայքը՝ 1915ի Հայոց Ցեղասպանութենէն մազապուրծ ծնողքէ: Մասնագիտանալով ուսողութեան մէջ, զանազան համալսարաններ դասաւանդած է այդ նիւթը: Այդուհանդերձ իր սէրը՝ պատմութեան (մանաւանդ միջնադարու) հանդէպ, զինք մղած է աշակերտելու հայոց պատմութեան, եւ դոկտորական պաշտպանելու

2002ին՝ հայ-խաչակիրներ՝ դիւանագիտական յարաբերութիւններուն վերաբերեալ:
Հեղինակած է շարք մը հատորներ, ինչպէս՝ *La Cilicie au carrefour des empires* (երկհատորեակ, 1988), *Historical Atlas of Armenia* (2001), *L'Arménie du Levant* (երկհատորեակ, 2012), *La Saga des Arméniens de l'Ararat aux Carpates* (2018), *Jérusalem et les Arméniens* (2022): Կազմակերպած է բազմաթիւ ցուցահանդէսներ, ինչպէս՝ «Հռոմ-Հայաստան» (1999), «Հայաստան, գրչութեան կախարդանքը» (2007):

ՊԳԹ Էդգար Յովհաննիսեան hovhannisyanedgar16@aspu.am
Պատմական գիտութիւններու թեկնածու, դոցենտ: 2015էն վարիչն է ՀՊՄՀի պատմութեան եւ հասարակագիտութեան ֆակուլտէտին: Դասաւանդած է նոյն ֆակուլտէտի հայոց պատմութեան ամբիոնին մէջ: Դասաւանդած է նաեւ արտասահմանեան շարք մը հայագիտական եւ պատմագիտական կեդրոններու մէջ: Հեղինակ է գիտամեթոդական աշխատութիւններու: Իր վերջին հեղինակութիւնն է՝ *Կիպրոսի թեմի վերակազմութիւնը եւ կիպրահայութիւնը (1920-1940թթ.). Պետրոս արքեպիսկոպոս Սարաճեան* (2021) մենագրութիւնը: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Սփիւռքը, հայ եկեղեցւոյ պատմութիւնը, մասնաւորապէս մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան պատմութեան հարցերը:

ՊԳԹ Լիլիթ Յովհաննիսեան lilithovannisian@yahoo.com
Ծնած է 1972ին, Երեւան: 1998ին պաշտպանած է թեկնածուական՝ «Հայկական Հարցը եւ մեծ տէրութիւնները 1914-1917թթ.» նիւթով: 2005էն իվեր ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանութեան բաժնի աւագ գիտաշխատող է: Գիտական գործունէութեան զուգահեռ, կը դասաւանդէ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կեդրոնին եւ ԵՊՀ Իջեւանի մասնաճիւղին մէջ: Հեղինակ է գիտամեթոդական ձեռնարկներու, յօդուածներու եւ մենագրութիւններու, որոնց վերջինը՝ *Հայկական Հարցի 1915-1923 թթ. պատմութեան հիմնահարցերի լուսաբանումը հայաստանեան պատմագիտութեան մէջ (1991-2015 թթ.)* (2020):
Գիտական հետաքրքրութիւններն են՝ Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանութեան պատմութեան ու պատմագրութեան հիմնահարցերը:

Փրոֆեսոր Վահրամ Շէմմասեան vahram.shemmassian@csun.edu
Վկայուած է University of California Los Angelesէն, պաշտպանելով "The Armenian Villagers of Musa Dagh: A Historical-Ethnographic Study, 1840-1915" դոկտորականը: Վարիչն է California State University, Northridgeի ժամանակակից եւ դասական լեզուներու եւ գրականութեան բաժանմունքի

հայագիտութեան բաժնին: Հեղինակն է *The Musa Dagh Armenians: A Socioeconomic and Cultural History, 1919-1939* (2015) եւ *The Armenians of Musa Dagh: From Obscurity to Genocide Resistance and Fame 1840-1915* (2020) հատորներուն: Պարգեւատրուած է ՀՀ Սփիւռքի նախարարութեան Ուիլիըմ Սարոյեան շքանշանով՝ Սփիւռքի մէջ հայագիտութեան եւ հայ մշակոյթին զարգացման բերած նպաստին համար: Արժանացած է Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան թանգարան-հիմնարկի Ֆրանց Վերֆէլ պատուանշանին՝ առ ի գնահատանք Մուսա Լեռան մասին իր գիտաշխատութիւններուն:

Դոկտ. Ռաֆֆի Չերչեան **r.gergian@gmail.com**
Ճարտարապետ, հնագէտ, պատմական կառոյցներու եւ հնագիտական վայրերու վերականգնող, Լիբանանի Պեքաայի հնագիտական վայրերու տարածաշրջանային տնօրէն, Այնճարի միջնադարեան Օմայեան խալիֆայութեան համաշխարհային ժառանգութեան տեղավայրի պահպանող եւ Պէյրութի պեղումներու պատասխանատու՝ մշակոյթի նախարարութեան-հնութիւններու ընդհանուր տնօրէնութեան մէջ: Դասախօս է Լիբանանեան եւ Սէն Ժոզէֆ համալսարաններուն մէջ: 2017ին պաշտպանած է դոկտորականը՝ Լիբանանի Սէն Ժոզէֆ համալսարանին մէջ, (կրօնագիտութեան մասնագիտութեամբ): Հեղինակ է *Լիբանանի հայկական եկեղեցիները* ֆրանսերէն գիրքին (2011): Ունի յօդուածներ՝ հին խճանկարներու եւ կնքուած (stu)c) ծիսական արուեստի պահպանման համար, նաեւ՝ Պուրճ Համուտի հիմնադրման ընթացքին համայնքային փոխգործակցութեանց շուրջ: Գործակցած է միջազգային կազմակերպութիւններու հետ՝ խճանկարներով օժտուած հնագիտական վայրերու պահպանման համար (ICCM, MOSAICON): Ներկայիս հետազօտութիւններ կը կատարէ Կիլիկիոյ հայկական մշակութային ժառանգութեան առանձնայատկութիւններուն շուրջ:

Դոկտոր Յակոբ Չոլաքեան **hagopcholakian@hotmail.com**
Ծնած է 1947ին, Քեսապի շրջանի Գարատուրան գիւղը, Սուրիա: 2016ին ստացած է դոկտորի կոչում: Եղած է հայերէնի եւ հայ գրականութեան ուսուցիչ Այնճարի ու Պէյրութի մէջ, 1996-2012՝ հայերէնի դասախօս Հալէպի Համազգայինի հայագիտական հիմնարկին:
2014ին կը տեղափոխուի Երեւան: Գլխաւոր գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտին մէջ, շրջան մը համատեղութեամբ աշխատած է Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի հիմնարկը ու իբրեւ դասախօս՝ ԵՊՀ բանասիրական ֆակուլտէտի մէջ: Զբաղած է բանահաւաքչութեամբ, Սուրիոյ հայօճախի, քեսապահայութեան եւ շրջանի, Սփիւռքի դպրոցներու պատմագրութեամբ, պատմադարանի եւ միջնակարգ-երկրորդականի դասագիրքերու պատրաստութեամբ:

Պատրաստած է դպրոցական դասագիրքեր, հրատարակած գիտական յօդուածներ եւ շարք մը գիրքեր, իսկ թղթային եւ առցանց մամուլի մէջ՝ աւելի քան 200 պատմուածք ու գեղարուեստական ակնարկ: Հրատարակած վերջին գիրքերն են՝ *Պատմական Անփոքի եւ շրջակայից բնիկ հայերը եւ միւս հաւաքականութիւնները* (2023), *Փլող դպրոցները* (2024) եւ *Լեզուական հնհնուքներ* (2025):

Դոկտ. Հիլտա Պայրամեան **hilda.bairamian@haigazian.edu.lb**
Դոկտորականը պաշտպանած է Ֆրանսայի Պորտօ քաղաքի Մոնթեսքիէօ համալսարանին մէջ, տնտեսական օրէնսգիտութեան մէջ: Դասախօս է շուկայաբանութեան եւ տնտեսական կառավարման մէջ, խորացած է նաեւ Լիբանանի բարձրագոյն կրթական հաստատութիւններու առեւտրական վարչագիտութեան եւ կառավարման դասաւանդմանց ծրագրերու մշակման եւ գործադրման գործընթացներուն մէջ: Հիմնադիրն է «Ադամանդ» միջազգային խորհրդատուական եւ՝ «Kay Kapacity Builders» ընկերութեանց: Մասնակցած է Հայաստանի Հանրապետութեան տնտեսութեան շուկայական անցման խորհրդակցական եւ խորհրդատուական ժողովներուն: Աշխուժ գործունէութիւն կը վարէ Լիբանանի հայօճախին ընկերային եւ կրթական մարզերուն մէջ:
Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ ոչ-կառավարական կազմակերպութիւններու կառավարման, ինչպէս նաեւ ընտանեկան *պիզնըս*ին հարցերը:

ՊԳԹ Վահէ Սարգսեան **vsargsyan83@gmail.com**
Ծնած է Ջաւախքի Ղադօ գիւղը, 1983ին: 2007ին աւարտած է ԵՊՀ Պատմութեան ֆակուլտէտի մագիստրականը, եւ 2010ին պաշտպանած է թեկնածուական: 2017էն՝ ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի Սփիւռքի եւ հայ գաղթօջախների պատմութեան բաժնի գիտաշխատող է: Հեղինակ է *Սամցխէ-Ջաւախք-Թռեղքը հայ-վրացական յարաբերութիւնների հոլովոյթում (1980-ական թթ. վերջ-1990ական թթ.)* (2006) գիրքին եւ աւելի քան 30 յօդուածի: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Վրաստանի հայութեան, մասնաւորապէս՝ ջաւախահայութեան հիմնախնդիրները Հայաստան-Վրաստան յարաբերութիւնները, Վրաստանի տեղաբնիկ ժողովուրդներու եւ ազգային փոքրամասնութիւններու խնդիրները:

Յարութ Սասունեան **sassoun@pacbell.net**
Ծնած է 1950ին, Հալէպ: Ամերիկահայ գրող, հասարակական գործիչ, *The California Courier* թերթի գլխաւոր խմբագիր եւ հրատարակիչ, նախագահ Հայաստան-Արցախ հիմնադրամի: Միջազգային յարաբերութիւններու մագիստրականը ստացած է Նիւ Եորքի Քոլումպիա համալսարանէն, իսկ

MBAը՝ Փեփըրտայն Համալսարանէն: Տասնամեակ մը Ժընեւի մէջ եղած է մարդկային իրաւանց հարցերով հասարակական պատուիրակ ՄԱԿի: Հեղինակն է *The Armenian Genocide: The World Speaks Out, 1915-2015, Documents & Declarations* (2015) հատորին:
Սասունեան արժանացած է Անանիա Շիրակացիի շքանշանին, «Հայրենիքին մատուցած ծառայութիւններու համար»՝ Հայաստանի Հանրապետութեան առաջին աստիճանի շքանշանին եւ Հայաստանի լրագրողներու միութեան «Ոսկէ գրիչ» մրցանակին:

Շանթ Ստեփան **Shant.Estepan@haigazian.edu.lb**
Աւարտելէ ետք Հայկազեան համալսարանի Համակարգչային գիտութեան մասնագիտութիւնը: 2008էն իվեր ան գործէ իբրեւ երէց վերլուծաբան՝ Հայկազեան համալսարանի, եւ փորձագէտ՝ տեղեկատուական արհեստագիտութեան (ՏԱ) ծրագրերու մշակման եւ գործադրման: 2012էն իվեր ան մասնակի ժամանակով կը դասաւանդէ համալսարանին մէջ: Ներկայիս ան կ'աւարտէ դոկտորականի իր թեզը՝ Պէյրութի Սէն Ժոզէֆ համալսարանին մէջ, ՏԱի բնագաւառին մէջ: Անդամ Լիբանանի հայոց ազգային առաջնորդարանի կրթական խորհուրդին:

Փրոֆեսոր Խաչատուր Ստեփանեան **kh.stepanyan@gmail.com**
Ծնած է 1976ին, Ջաւախք: Վարիչն է ՀՊՄՀի Համաշխարհային պատմութեան եւ անոր դասաւանդման մեթոտաբանութեան ամբիոնին:
Հրատարակած է գիտական եւ գիտամեթոդական յօդուածներ, հեղինակ եւ համահեղինակ է բուհական, ուսումնական ձեռնարկ-դասագիրքերու, ունի մենագրութիւններ, որոնց վերջինը՝ *Հայաստանում խորհրդային իշխանութեան հաստատման հիմնահարցը սփիւռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (1920-1930ականներ)* (2021): Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ԺԹ. դարավերջ-Ի. դարասկիզբի հայ ազգային-ազատագրական շարժման, Հայաստանի Ա. Հանրապետութեան, հայ-վրացական փոխյարաբերութիւններու, 1920-30ականներու սփիւռքահայ հասարակական-քաղաքական միտքի, հայութեան տեղաշարժերու եւ փոխակերպումներու, Խորհրդային Հայաստանի եւ Անդրկովկասի պատմութեան, սովետագիտութեան հարցերը:

ՊԳԹ Անի Ֆիշենկճեան **fishenkjianani@outlook.com**
Ծնած է 1961ին, Հալէպ: 2004ին պաշտպանած է թեկնածուական՝ ՀՀ ԳԱԱ պատմութեան հիմնարկին մէջ՝ «Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը 1946-71» նիւթով: 2016էն ՀՀ ԳԱԱ Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի հիմնարկի արեւմտահայերէնի բաժինի գիտաշխատող է, իսկ 2017էն՝ ՀՀ ԳԱԱ պատմութեան հիմնարկի Սփիւռքի եւ հայկական գաղթավայրերու

պատմութեան բաժինի գիտաշխատող: 2014էն արեւմտահերէնի դասախօս է Սեւանի Վազգէնեան հոգեւոր դպրանոցին: 2023-25՝ արեւմտահայերէնի դասախօս՝ ԵՊՀ հայոց պատմութեան ամպիոնի, սփիւռքագիտութեան եւ հայագիտութեան բաժամունքներու:
Հեղինակ է շարք մը գիրքերու, վերջինը՝ *Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը (1946-1970)* (2018): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Սուրիոյ եւ Քուէյթի հայօճախի պատմութիւնը, սփիւռքահայ քերականութեան դասագիրքերու պատմաբանասիրական-զուգադրական քննութիւնը:

Ջոյգ Գիտաժողովներուն Մամլոյ Հաղորդագրութիւնը

Ա. Գիտաժողով

2022 թ. Յունիսի 29-30ին Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի (Հայաստան) եւ Հայկազեան համալսարանի (Լիբանան) համատեղ նախաձեռնութեամբ Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ գիտխորհրդի դահլիճում տեղի ունեցաւ «Հայութեան տեղաշարժերը եւ հասարակական-քաղաքական փոխակերպումները 20րդ դարում եւ 21րդ դարու սկիզբին» խորագրով միջազգային գիտաժողով:

Գիտաժողովի ընթացքում քննարկուեցին 20րդ դարի եւ 21րդ դարի սկզբի հայ ժողովրդի պատմութեան առանցքային գործընթացների (հայրենազրկման եւ ցեղասպանութեան, Սփիւռքի ձեւաւորման, հայրենադարձութեան, ներհայկական պառակտումների, Միջին Արեւելքի հայ օջախների հզօրացման ապա եւ թուլացման, սերնդափոխութիւնների, այնպէս էլ պետականութեան կերտման, Հայաստանի Գ. Հանրապետութեան հռչակման, Արցախի ինքնորոշման պայքարի ու Արցախի Հանրապետութեան հռչակման, հայրենակերտման, ու ազգային զարթօնքի շրջան) հիմնահարցերը տեղաշարժերի եւ հասարակական-քաղաքական փոխակերպումների համատեքստում:

Գիտաժողովին զեկուցումով են հանդէս եկել 21 գիտնական Հայաստանի Հանրապետութիւնից (Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ, ՀՀ ԳԱԱ Պատմութեան իսնտիտուտի, ՀՀ ԳԱԱ ԱզգագրութըԻ, ՀՀ ԳԱԱ ՀԱեան ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Լեզուի ինստիտուտի, Երեւանի պետական համալսարանի), Արցախի Հանրապետութիւնից (Արցախի պետական համալսարան), Լիբանանից (Հայկազեան համալսարան), Հունգարիայից (Պիտէր Պազմանի կաթոլիկ համալսարան):

Նախատեսվում է 2023 թուականին նոյն խորագրով գիտաժողով անցկացնել Բէյրութում:

Բ. Գիտաժողով

Երեքշաբթի, 27 Յունիս 2023ի երեկոյեան ընթացք առաւ Հայկազեան համալսարանի եւ Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) գործակցութեան արդիւնք «Հայութեան տեղաշարժերը եւ փոխակերպումները 20րդ դարուն եւ 21րդ դարու սկիզբին» գիտաժողովը, Հայկազեան համալսարանին մէջ:



Բարիգալուստի բացման խօսքին մէջ, Հայկական սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի տնօրէն դոկտ. Անդրանիկ Տագէսեան ընդգծեց, որ «այս գիտաժողովը կը նպատակադրէ ... հայագիտութեան տարբեր մարզերու մշակները հրաւիրել որ նորովի դիտարկեն, վերջին երեսնամեակի հայ քաղաքական իրականութեան վերածնունդին՝ Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններու հռչակումին ելակէտէն դիտեն մեր մօտիկ անցեալի 120 տարին, ըստ այդմ ուղեգիծեր ճշտեն եւ նորատեսակ ընթացք առնէ հայութեան կենսագործունէութիւնը»:

Գիտաժողովին պիտի մասնակցէր նաեւ 2022 Ապրիլէն Արցախի Հանրապետութեան պետական նախարարի տեղեահանուածներու եւ փախստականներու, ընկերային աշխատանքի, Կարմիր խաչի միջազգային կոմիտէի հետ համագործակցութեան հարցերով խորհրդական Էլինա Մխիթարեանը: Դժբախտաբար, սակայն Ազրպէյճանի ապօրէն շրջափակումը Արցախի Հանրապետութեան, անկարելի դարձուց տիկ. Մխիթարեանի ժամանումը Պէյրութ: Փոխարէնը ան հեռակայ, կարճառօտ ելոյթ ունեցաւ, ուր շեշտեց թուրք ազրպէյճանական առանցքին կողմէ Արցախի բնակչութեան բարօր զարգացման միջազգային իրաւունքի բռնաբարումը՝ «*գոյաբանական եւ անվտանգային բազմակողմ սպառնալիքների տակ...նպատակ ունենալով ... Արցախի բնիկ ազգաբնակչութեանը, հասցնել ինքնակամ գաղթի: ...1988ին Արցախեան շարժումը պատմութեան քառուղիներում շատերիս առկայութիւնը դարձրեց ներկայութիւն...: Արցախեան առաջին պատերազմում տարած յաղթանակը հայի ինքնութեան արժանապատուութեան դրսեւորումն էր: Սակայն ...2020ին պարտուեցինք բոլորով:... Կը ցանկանամ գիտաժողովի ողջ ընթացքում բոլորի մօտ եւ իւրաքանչիւրի մտքում առանձին առկախ լինի մի հարց. ի՞նչպէս, յստակ*

ո՞ր քայլերով պէտք է փրկել հայրենիքը: Աւելի շօշափելի քան Ցեղասպանութիւնից մազապուրծ սփիւռքահայը... ոչ ոք չի գիտակցում հայրենիքի կորստի ցաւը...: Արցախցիները պատրա՛ստ են իրենց երեխաներին պահել կիսաքաղց ու թշնամի դիպուկահարների հարուածի տակ: Բայց նպատակը, նպատակը պէտք է յստակ լինի աշխարհի բոլոր երկրների հայերի համար: Վայրկեան առաջ թօթափել թմբիրը, անտարբերութիւնը, այլապէս անդառնալի իրավիճակի պիտի հասնենք ...հայոց պետականութեան եւ հայութեան ոչնչացման սպառնալիքը պարտադրում է գործելու, անյապա՛ղ գործելու... Արցախը սեւ չարիքի զսպաշապիկն է, Արցախը կործանման շղթայի տոմինոյի առաջին քարն է միայն ...կոչ եմ անում բոլորին փրկե՛նք Արցախը»:

Ողջոյնի իր գիրին մէջ, զոր ընթերցեց դոկտ. Էտկար Յովհաննիսեան, ՀՊՄՀ րեկտոր, փրոֆեսոր Սրբուհի Գէորգեան ընդգծեց, որ «քննարկուղ հարցերի շրջանակը ոչ միայն ակադեմիական հետաքրքրութիւն է առաջացնում, այլեւ մի շարք հիմնախնդիրների կիրառական լուծումներ կարող է առաջադրել: ...Հայ եկեղեցու, համահայկական բազմաթիւ այլ հասարակական-քաղաքական կառոյցների, հայկական մշակոյթի, հայ ինքնութեան, հայութեան աշխարհընկալման, հայոց ցեղասպանութեան եւ հայկական պետականութեան հանդէպ մեր ընկալումների յարափոփոխ ընթացքի ուսումնասիրութիւնն ու դրա գնահատումը ե՛ւ արդիական է ե՛ւ գնահատելի: Յոյս ունենք, որ հարցերի այս շրջանակի քննարկումը մեզ հնարաւորութիւն կը տայ առաւել պատրաստ դիմագրաւել գալիք փոխակերպումներին»:

Գիտաժողովի պաշտօնական բացման հիւր բանախօս դոկտ. փրոֆեսոր Խաչատուր Ստեփանեան իր՝ «Ի. դարում տեղաշարժերով պայմանաւորուած հայութեան փոխակերպման գործընթացի փուլերը» զեկոյցին մէջ հայկական փոխակերպման գործընթացները բաժնեց երեք տարբեր փուլերու, եւ ներկայացուց հայութեան՝ այդ փուլերուն ընթացքով տեղի ունեցած կենցաղային, ընկերային, լեզուամշակութային եւ այլ հիմնական փոխակերպումները:

Պաշտօնական բացման նիստի փակման իր խօսքին մէջ, Հայկազեան համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեան հարց բարձրացուց թէ՝ «մեր ազգային պետական կամ ոչ-պետական իրականութեան մէջ, որու՞ պարտականութիւնն է բիւրեղացնել այնպիսի ռազմավարութիւն մը որ պիտի նպաստէ հայկական ապահովութեան-անվտանգութեան, ազգային, կրթա-դաստիարակչական, ռազմական, զինուորական, լեզուական, բարոյակրօնական, ընկերային, տնտեսական, կենսոլորտային, cyber, եւ այլ ոլորտներուն» եւ նկատեց՝ «Սփիւռքեան լայն տարածքին վրայ, կենսական է որ ռազմավարութիւնները ունենան

պատմական, գիտական, քաղաքական, դիւանագիտական եւ մշակութային խորք, որ կը հասնի Երեւանէն շատ անդին եւ կը կարգաւորէ ընդհանրական հայկականութեան գոյութիւնը»:

Գիտաժողովի յաջորդող երկու օրերուն՝ Չորեքշաբթի 28 եւ Հինգշաբթի 29 Յունիսին սահիկաշարերով (powert point) ներկայացուեցան 17 զեկոյցներ: Փրոֆեսոր Վաչագան Գրիգորեան վերլուծեց Ի. դարու հայ արձակի փոխակերպումները, դոկտ. Յակոբ Չոլաքեան մանրամասնեց արեւմտահայերէնի փոխակերպումները, փրոֆ. Քլոտ Արմէն Մութաֆեան կատարեց պատումը Կարպատեան Եւրոպայի հայերուն՝ 1900էն իվեր, փրոֆ. Վահրամ Շէմմասեան (հեռակայ)՝ լուսաբանեց Մուսա լեռան հայերու փոխակերպումները, դոկտ. Լուսինէ Սահակեան՝ համշէնահայերու Ի. դարու արտագաղթերու հետեւանք ինքնութենական փոխակերպումներու մարտահրաւէրները, դոկտ. Կարէն Մկրտչեան քննարկեց Իրանի հայօճախի 1979-2020 շրջանի տեղաշարժերուն հետեւանքով յառաջացած ընկերային-կրթական խնդիրները, դոկտ. Անի Ֆիշենկճեան խօսեցաւ սուրիահայերու 1946-2010 շրջանի տեղաշարժերուն եւ ասոնց հետեւանք՝ փոխակերպման մարտահրաւէրներուն մասին, վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեան լուսարձակի տակ առաւ Հայ Աւետարանական Եկեղեցիին փոխակերպումները, դոկտ. Հրաչ Չիլինկիրեան գնահատումը կատարեց Հայ Եկեղեցւոյ հաստատութենական աշխարհիկացման՝ ԺԹ.-ԻԱ. դարերուն, դոկտ. Ռաֆֆի Չերչեան քննեց հայ կրօնական ճարտարապետութեան մէջ յառաջացած փոխակերպումները, դոկտ. Էտկար Յովհաննիսեան կեդրոնացաւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան 1920-30ականներուն ապրած տարագրութեան եւ փոխակերպումի դրուագներուն վրայ, դոկտ. Լիլիթ Յովհաննիսեան լուսաբանեց յետ-անկախական հայրենի պատմագրութեան փոխակերպումները՝ Հայկական Հարցի 1878–1923 շրջանի դիւանագիտական երեսակներու լուսաբանման առնչութեամբ, Վիլէն Մնացականեան մանրամասնեց Հայաստանի Հանրապետութեան տնտեսական քաղաքականութեան փոխակերպումը՝ ծրագրային եւ շուկայական տնտեսութեան ժամանակաշրջաններուն, դոկտ. Խաչիկ Մուրատեան բացայայտեց Հայոց Ցեղասպանութեան ուսուցման փոխակերպումները՝ անցեալ, ներկայ եւ նոր ուղղութիւններու համապատկերին մէջ, դոկտ. Յակոբ Թադէոսեան վերլուծեց հայրենասիրութեան ընկալման եւ դրսեւորումներու ընկերահոգեբանական փոխակերպումները, տիար Յարութ Սասունեան արծարծեց Սփիւռքի ներկայացուցչականութեան փոխակերպումները եւ սփիւռքահայ խորհրդարանի մեկնարկման ծրագիրը, իսկ Տիգրան Եկաւեան քննարկեց Հայաստանի Հանրապետութիւն-Սփիւռք փոխյարաբերութիւններու փոխակերպումները:

Գիտաժողովի առաջին օրուան Բ. նիստին տեղի ունեցաւ փրոֆ. Մութաֆեանի նորագոյն՝ *Jérusalem et les Arméniens jusqu'à la conquête ottomane (1516)* գիրքին շնորհանդէսը, ուր դոկտ. Տագէսեան ներկայացուց անխոնջ եւ բեղուն գիտնականին վաստակը, իսկ հեղինակը ներկայացուց հատորը եւ հատորին ընդմէջէն՝ հայութիւնը Երուսաղէմի մէջ մինչեւ ԺԶ. դարասկիզբ:

Գիտաժողովի ութ նիստերը վարեցին դոկտք. Վաչագան Գրիգորեան, Արմէն Իւրնէշլեան, Խաչիկ Մուրատեան, Էտկար Յովհաննիսեան, Խաչատուր Ստեփանեան, Անդրանիկ Տագէսեան, եւ Եղիա Թաշճեան:

Զեկուցողներէն իւրաքանչիւրին յատկացուած էր կէս ժամ, որպէսզի կարելի ըլլայ աւելի խորքային-վերլուծական-քննական ու գործնական յառաջադրանքներ ներկայացնել:

Գիտաժողովին մէջ յատկանշական էին զուգահեռները՝ Մուսա լեռան, Համշէնի եւ Կարպատեան Եւրոպայի հայկական, ինչպէս նաեւ Իրանի ու Սորիոյ հայօճախներու ենթախումբերուն միջեւ: Համապատկերային բնոյթ կը կրէին լեզուի եւ գրականութեան գիտական մեկնաբանութիւնները: Հաստատութենական առումով ուշագրաւ էին Կիլիկիոյ կաթողիկոսութեան, Հայ Աւետարանական եւ Առաքելական Եկեղեցիներուն նուիրուած քննարկումները: Յղացք-հասկացութենական (conceptual) առումով շահեկան էին հայրենասիրութեան, պատմագրական մեկնաբանութեան, ճարտարապետական վերլուծութեամբ մեկնաբանուած զեկոյցները: Կարեւոր նորութիւն էր տնտեսական բնագաւառին եւ հոգեբանութեան ելակէտէ մեկնած նիւթերուն ընդգրկումը. ասոնք կենսական այլ երեսակներ աւելցուցին գիտաժողովին եւ զայն դարձուցին առաւել ընդգրկուն: Եւ անշուշտ ընդգծելի էին հայութեան եռամիասնութեան՝ Հայաստան-Արցախ-Սփիւռք կառոյցներու կառավարման-ներկայացուցչականութեան եւ փոխգործակցութեան նուիրուած տեսլական եւ քննական զեկոյցները:

Աննախընթաց գիտաժողով մը եղաւ այս մէկը, ուր շեշտը դրուած էր հայութեան վերջին 120ամեայ իրականութեանց, նորագոյն այս հանգրուանի խնդիրներու քննարկման եւ դէպի ապագայ նայելու հրամայականին, ելակէտ ունենալով պետականութեան փաստը:

Գիտաժողովի ընթացքին նկատելի դարձան Հայաստան-Սփիւռք թիւրիմացութիւններու առկայութեան նուազումը, երիտասարդ սերունդ եւ աւանդական մօտեցումներ բախումը, բայց մանաւանդ հայ իրականութեան վարումի, ապագայի ծրագրաւորումի խնդիրներուն հրատապութեան զգացողութիւն-գիտակցութիւնը եւ լուծումներու անհրաժեշտութիւնը:

Գիտաժողովին ընթացքին յառաջացաւ ջերմ, ազատ, անմիջական միջավայր մը: Նորատեսակ այս հարթակին նախանձախնդիր, երկար քննարկումներուն եւ վերլուծումներուն, միտքերու բախումին, որոնումներուն, յղկումին, բիւրեղացումին մասնակցեցան գիտաժողովին ներկայ եղած հիւրեր, երիտասարդներ, որով գիտաժողովին բարձրաձայնուած խնդիրները հանրայնացուեցան եւ քայլ մը եւս առնուեցաւ հանրութիւնը առաւել մասնակից դարձնելու նման հրատապ հարցերու արծարծման:

Տեղին է նշել, թէ գիտաժողովին առաջին հանգրուանը տեղի ունեցած էր 29-30 Յունիս 2022ին, ՀՊՄՀի մէջ: Այս երկրորդ գիտաժողովը որոշակիօրէն յստակ դարձուց հայ իրականութեան անելիքներուն ծիրը եւ խթան կը հանդիսանայ որ շարքին երրորդը աւելի նպատակաուղղուած յառաջադրանքներով կիրառելիութեան գործիքակազմեր եւ գործընթացներ առաջարկէ յօգուտ հայ իրականութեան աւելի բարենպաստ ապագայի: